

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



ՍՅՈՒՆԻՔԻ
ԲԱՆԱՐՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

Նվիրվում է պերսական և ռազմական գործիչ
Գարեգին Նժդեհի
հիշարարակին

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է
ՀՀ ԿԳՄՄՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏՐԱՄԱԴԻՐԱԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՍԲ՝
18T-6F194 ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ИССЛЕДОВАНИЕ ВЫПОЛНЕНО ПРИ ФИНАНСОВОЙ ПОДДЕРЖКЕ КОМИТЕТА
ПО НАУКЕ МОНКС РА В РАМКАХ НАУЧНОГО ПРОЕКТА 18T-6F194

THIS WORK WAS SUPPORTED BY THE RA MESCS COMMITTEE OF SCIENCE,
IN FRAME OF THE RESEARCH PROJECT 18T-6F194

«Սյունիքի բանահյուսությունը» գրքի թեմատիկ աշխատանքային խումբն իր խորին շնորհակալությունն է հայտնում ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրինությանը, ՀՀ Գիտության կոմիտեին, որոնց գործուն աջակցությամբ լույս տեսավ Սյունիքի բանավոր ավանդությանը նվիրված սույն ամբողջական ու համակարգված աշխատությունը:

Մեծապես շնորհակալ ենք Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի գիտաշխատողներ պ. գ. դ. Կարեն Մաթևոսյանին (№ XVII, XVIII, XIX) և ք. գ. թ. Թամարա Մինասյանին (№ XX)՝ Սյունիքին վերաբերող համապատասխան մանրանկարները սիրահոժար տրամադրելու համար:

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ФОЛЬКЛОР СЮНИКА

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

FOLKLORE OF SYUNIK

ИЗДАТЕЛЬСТВО ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
ЕРЕВАН 2020
PUBLISHING HOUSE OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY
YEREVAN 2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍՅՈՒՆԻՔԻ
ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ



ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2020

*Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ*

Խմբագրական խորհուրդ՝

Պ. Ս. Ավետիսյան, Լ. Հ. Աբրահամյան, Թ. Լ. Հայրապետյան, Ս. Գ. Հոբոսյան

Պատասխանատու խմբագիր՝

Բանասիրական գիտությունների դոկտոր Թ. Լ. Հայրապետյան

Կազմողներ՝

Թ. Լ. Հայրապետյան (գիտական ղեկավար),

Գ. Է. Մելիքյան, Ս. Շ. Առաքելյան, Ա. Ս. Կիրակոսյան

Ս 637 **Սյունիքի բանահյուսությունը** / Կազմ.՝ Թ. Լ. Հայրապետյան, Գ. Է. Մելիքյան, Ս. Շ. Առաքելյան, Ա. Ս. Կիրակոսյան – Եր.: ՀԱԻ հրատ., 2020.–384 էջ:

Մույն աշխատությունն ընդգրկում է Մեծ Հայքի իններորդ նահանգի՝ Սյունիքի ոչ նյութական մշակութային ժառանգության բանահյուսական տարաբնույթ ժանրերը՝ արձակ-վիպական, չափածո քնարական, բանաձևային-ասույթաբանական:

Բանահյուսական նյութերը գրանցվել, դասակարգվել և անձնագրավորվել են ըստ ժանրերի և բնույթի՝ ժամանակագրական տարբեր ընդգրկումներով, որոնց ապագա ուսումնասիրությունը կնպաստի, որպեսզի Սյունիքի մարզը գիտական հանրությանը ներկայանա որպես մեկ ամբողջական բանահյուսական մշակութային տարածք:

Աշխատությունը նախատեսվում է բանագետ-բանասերների, ազգագրագետների, մշակութաբանների և հայագիտությամբ հետաքրքրվող ընթերցող լայն շրջանների համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	13
ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ	30
ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ	36
ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐ	41
ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐ	
1.(1) Թաքավերին իրեք ախճիկը	41
2.(2) Լավութունը օցն ալ ա հսկանում	42
3.(3) Էս կլիսան, թա էն կլիսան	43
4.(4) Գյաբա կյործողը	45
5.(5) Մենակյացն ու քամին	46
6.(6) Օվչի օղլին	48
7.(7) Մազբանդը	49
8.(8) Կտրիչ տղան	50
9.(9) Թաքավորի տղան	54
10.(10) Ուսկե խնձորուն նաղըլը	60
ԻՐԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐ	
1.(11) Փող ունես, սոթըթ անց կկենա	70
2.(12) Դուրգյար Հասուն	71
3.(13) Ըշխարքի տերը	73
4.(14) Թագավորը, այգեպանն ու օձը	73
5.(15) Քաչալը, իր հայրն ու խանը	75
6.(16) Հարուստ խաբերան և աղքատ ճշտախոսը	76
7.(17) Չտես ճամփորդներն ու կրիան	77
8.(18) Կառապանն ու տերը	77
9.(19) Անհյուրասեր հեր ու տղան և խորամանկ հյուրը	77
10.(20) Ավետարանն ու մարդը	77
11.(21) Տերտերն ու բանիմաց մարդը	78
12.(22) Հիմար տերտերն ու արջը	79
13.(23) Սոված հյուրը և ժլատ տանտերը	79
14.(24) Գրազը	80
15.(25) Երկու եղբայրներ	80
16.(26) Հիմար տերտերը	82
17.(27) Փեսաներ ընտրելը	82
18.(28) Թագավորն ու աղքատը	83
19.(29) Թոկը կքաշեմ	84
20.(30) Տերտերը	85
21.(31) Կույրերն ու առողջը	87
22.(32) Քնսիբն ու գոռեմ	88
23.(33) Իմաստուն թաքավորը	89

ԿԵՆԴԱՆԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԾՆԵՐ

1.(34) Աշկին լյուսը	93
2.(35) Հլիվերն ա լպագտրակը	95
3.(36) Արագիլն ու սագը	95
4.(37) Այգեպանը, իր որդին ու օձը	96
5.(38) Ֆերմանավոր ուղտն ու աղքատ պառավը	96
6.(39) Գայլը, աղվեսը և ուղտը	97
7.(40) Էշը, ձին և կովը	97
8.(41) Կաքավը և աղվեսը	97
9.(42) Սարից եկող թաքան	98
10.(43) Աղվեսը՝ եկեղեցի շինող	98
11.(44) Ամենատուժեղը	98
12.(45) Չորանն ա առյուծին ճոտը	100
13.(46) Ամանատուժեղը	101
14.(47) Աղքատն ու արջը	101
15.(48) Վռագ կոռծի վերջը էս ա	102

ԱՌԱԿՆԵՐ

1.(49) Ուղտն ու ճանապարհորդը	103
2.(50) Ուղտի պատասխանը	103
3.(51) Ուղտի պատասխանը	103
4.(52) Կածքարը	103
5.(53) Թամբալ ու դոչաղ կնանեքը	104
6.(54) Վերչը ընի պարի	104
7.(55) Հլիվերը	104
8.(56) Նրանց շնհին օգում չըմ	105
9.(57) Իմ կնգանաս լնվը կա վեչ	105
10.(58) Ինչպե՛ս էր ծաղկանոցը	105
11.(59) Կնեգյս բարութ ա	106
12.(60) Աղվեսն ու որցակը	106
13.(61) Կելի աշկիցը սըվորա	106

ԶՐՈՒՅՑՆԵՐ

1.(62) Հայր ու որդի	107
2.(63) Լողացող ծերունին և աղջիկները	107
3.(64) Պելը և կուժը	107
4.(65) Տերտերի կամքը	108
5.(66) Էշն ու տերը	108
6.(67) Մարդ ու կին	108
7.(68) Մակիչը	109
8.(69) Շատակեր ճամփորդն ու աղքատ այրին	109
9.(70) Աղքատի ու հարուստի կոիվը	109
10.(71) Երեցն ու կատակաբանը	110
11.(72) Տերտերն ու առակ ասողը	110
12.(73) Հայրարժան որդին	110
13.(74) Շատակեր հյուրը	110
14.(75) Հյուրընկալ մարդն ու կինը և աչքածակ հյուրը	110
15.(76) Տերտերն ու անեծքը	111

16 .(77) Հյուրի հարգանքը	111
17 .(78) Մոլլան ու հովիվը	112
18.(79) Օձի թույնը	112
19.(80) Բժիշկն ու հիվանդը	113
20.(81) Մուղղուսունց Մադու գեղական ատամնաբուժարան	113
21.(82) Քառասուն ըսկեսուր	114
22.(83) Թամամը քյնաց սանատորիա	115
23.(84) Խասսփուշ աղերը	116

ՄՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.(85) Զանգեզուր	117
2.(86–101) Զանգեզուր	117
3.(102) Տաթև	118
4.(103) Տաթև	118
5.(104) Նախկորգան	119
6.(105) Մարանդ	119
7.(106) Գորիս	119
8.(107) Քահանայի առու կամ Քեշիշ արդ	119
9.(108) Շաքարաջուր	120
10.(109) Շըռռան	120
11.(110) Շաքի	120
12.(111) Կաքավի աղբյուր	121
13.(112) Ագռավի աղբյուր	121
14.(113) Ջրով թոնիրը	121
15.(114–115) Սև լիճ կամ Ղարա-գյոլ	121
16.(116) Լձեն	122
17.(117) Սվարանց	122
18.(118) Ղոշուն-դաշ	123
19.(119) Բոլու կալը	123
20.(120–121) Դատ-Մելիք	123
21.(122) Նվազածության նախահայրը	124
22.(123) Դարբնության նախահայրը	124
23.(124) Նախկին հյուն	124
24.(125–126) Էշ	125
25.(127) Կատու	125
26.(128) Չղջիկը	125
27.(129) Չղջիկը	126
28.(130–131) Կաչաղակ	126
29.(132) Չըփրթձակի	127
30.(133) Հավ	127

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.(134–135) Գավազան-սյուն	128
2.(136–137) Հովհան Որոտնեցու գերեզմանը	128
3.(138) Բարդուղիմեոս առաքյալ	129
4.(139) Շաղատի եկեղեցի	129
5.(140) Կապանի ավերումն ու Բաղաց թագավորության անկումը	130
6.(141) Վարթերը պուք չի տաք	130

7.(142) Խազալ կապի աղբյուրը	131
8.(143) Յայջի	131
9.(144) Դավիթ-Բեկի գերեզման	131
10.(145) Շուն-Ֆրանգյուլի գերեզման	132
11.(146) Անձնագրի եղբայրների գերեզմանը	132
12.(147) Աղուղիի մահարձանը	132
13.(148–150) Դավիթ-Բեկ	133
14.(151) Տավիթ Բեգին նաղլը	134
15.(152) Մխիթար Սպարապետի սպանությունը	135

ԿՐՈՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.(153) Քրիստոս՝ ներկարարի աշակերտ	136
2.(154) Քրիստոս՝ դուզարի աշակերտ	136
3.(155) Քրիստոսի հրաշագործությունը	136
4.(156) Քրիստոս օրհնում է եռնջի արմատը	137
5.(157) Սողոմոն Իմաստուն	137
6.(158) Հովհան Որոտնեցի	139
7.(159) Գրիգոր Տաթևացի	139
8.(160) Քրիստոսի խաչափայտի մասունքը	140
9.(161) Երիցակ մետրոպոլիտ	141
10.(162) Տիրոտ քահանա	141
11.(163) Տաթևի Պողոս-Պետրոս եկեղեցին	142
12.(164) Կնեվանք	143
13.(165) Առվույտ	143
14.(166–167) Կատու	144

ՎԱՐՔԱԲԱՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.(168) Երիցակ մետրոպոլիտ	144
2.(169) Հայր Գյուտ և Քրիստոսասեր	145
3.(170) Ստեփանոս Սյունեցի	146
4.(171) Շահանդուխտ	148

ՄՐԱՎԱՅՐԵՐ

1.(172) Պանտալեոն բժշկի մատուղը	149
2.(173) Լոր	150
3.(174) Եզնախաչի մատուռ	150
4.(175) Սուրբ Վարդան	150
5.(176) Ագռավախաչ	150

ԶՎԱՐՃԱՊԱՏՈՒՄՆԵՐ

1.(177) Մանգապարտեզ	151
2.(178) Պաղասխան	151
3.(179) Նալերը	151
4.(180) Կյողը	151
5.(181) Տիփ ուշացալ ըք	152
6.(182) Հաչան շոնը	152
7.(183) Թագա կնեկը	152
8.(184) Անգինա	152
9.(185) Նվիրատվություն	153
10.(186) Քեթ ծիք տալու ամես ա	153

11. (187) Կյունաշը	153
12. (188) Վերն ա լավ	153
13. (189) Առուտուր	153
14. (190) Հավին մաղթը	153
15. (191) Հացկերույթ	154
16. (192) Պետը	154
17. (193) Ա՛յի աշկը	154
18. (194) Տերտերն ու աղքատը	154
19. (195) Պժիշկին քշտին	155
20. (196) Իվանը	155
21. (197) Համփերությունը գյանք ա	155
22. (198) Հնգերը	155
23. (199) Մադրասեցին	156
24. (200) Սարյակին խրատը	156
25. (201) Չեշմակը	156
26. (202) Մանգեղ շինիլը	157
27. (203) Խոխան հորը խրատում ա	157
28. (204) Լավ ա, չէ՛	157
29. (205) Տղամարթին խոսկը մին կրնի	158
30. (206)	158
31. (207)	158
32. (208)	158
33. (209) Շան օրհնանքը	158
34. (210)	159
35. (211) Գողերը	159
36. (212) Պըլը Պուղին	159
37. (213)	160
38. (214)	160
39. (215)	160
40. (216)	161
41. (217)	161
42. (218)	161
43. (219)	162
44. (220)	162
45. (221)	162
46. (222) Էշը հու կնրոնճուրը	162
47. (223) Անվճարունակության հիվանդություն	162
48. (224) Ամերիկյան պետություն	163
49. (225) Արշակ պապի բողոքը	163
50. (226) Երրորդ ընտրություն չկա	163
51. (227) Ասորվա երեք վախերը	163
52. (228) Ախպերաբաժին	164
53. (229) Նավողչիկ Մուկուչի առօրյայից	164
54. (230) Խղճով դիրեկտորը	164
55. (231) Փաղ պիրող դիրեկտորի վրեժը	164
56. (232) Մարդասիրական նահանջ	165
57. (233) Բթանյուղեր	165

58.(234) Քթատերը	165
59.(235) Թան չի տեռնալ	165
60.(236) Պեղ Զինասն	166
61.(237) Քամուն ըոխումը	166
62.(238) Մարդ տեռնող չի	166
63.(239) Հավասարակշռություն	166
64.(240) Հինգն ու էրկուսը	166
65.(241) Դըփընցոց լուգուն	166
66.(242) Ճղուպուրի բաժինը	167
67.(243) Ծանդը հիվանդ	167
68.(244) Ռուսերենն ու հայերենը	167
69.(245) Մտով հոնձը	167
70.(246) Շըքըռավիճակ	168
71.(247) Ներվային աղջիկը	168
72.(248) Ամենալավ պաշտպանը	168
73.(249) Մոքի ուժը	168
74.(250) Երդում	168
75.(251) Առողջարար ուրախություն	169
76.(252)	169
77.(253)	169
78.(254)	169
79.(255)	169
80.(256)	170

ՀՈՒՇԱՊԱՏՈՒՄ

1.(257)	170
2.(258) Հորս վրեժը	171
3.(259) Առաջաձորի պաշտամունքը	171
4.(260) Շիշկերտեցի Հարությունը	171
5.(261) Արարատը	172
6.(262) Արմեներեն	173

ՔՆԱՐԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՐԳԵՐ

1-16(263-278) Հորովելներ	174
17.(279) Կթելու երգ	180
18.(280) Խնոցու երգ	180

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ

1.(281) Օրորոցի երգ	181
---------------------	-----

ԵՐԳԵՐ, ԽԱՂԻԿՆԵՐ

1.(282) Պարերգ (խմբով)	182
2.(283) Պարերգ (մենակ)	182
3.(284) Հարսանյաց կատակ-երգ	182
4.(285) Կատակ-երգ	182
5.(286) Դարիքի երգ	183
6-58(287-344) Խաղիկներ	184

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ	
1-110 (345-454)	188
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆՈՐ ԵՐԳԵՐ	
1-6. (455-460)	195
7. (461) Կոլխոզական	196
8. (462)	196
9. (463)	197
10. (464)	197
ՎԻՃԱԿԻ ԵՐԳԵՐ	
1-60 (465-524)	198
ՄԻՐԵՐԳԵՐ	
1. (525) Ախչի՛, էսօր մեծ պասս ա	202
2. (526) Ա՛յ, հեա, ջանս	202
3. (527)	203
4. (528)	203
5. (529) Յարս	203
6. (530)	203
7. (531)	204
8. (532)	204
9. (533)	204
10. (534) Յարս	204
ՄԳԵՐԳԵՐ	205
1-7 (535-541)	205
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՔԱՌՅԱԿՆԵՐ	
1-22 (542-563)	208
23-46 (564-587) Կապանի բարբառով	209
47-70 (588-611) Գորիսի բարբառով	211
ԱՍՈՒՅԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	
ԱՌԱԾ-ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ	
1-132 (612-742) (Գորիս)	213
133-1047 (743-1677) (Կապան)	217
1048-1122 (1678-1752) (Սիսիան)	244
ՕՐՀՆԱՆՔՆԵՐ	
1-28 (1753-1780)	246
ԱՆԵԾՔՆԵՐ	
1-58 (1781-1838)	247
ԱՂՈԹՔՆԵՐ	
1. (1839-1844) Չար աչքի	249
2. (1845-1846) Սըրտըմայի	251
3. (1847) Միզկապի	251
4. (1848) Միրտ չափելու	252
5. (1849) Նազար բոնելը	252
6. (1850) Միրտ չափել	252

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ	
1-108 (1851-1958)	253
ԽՐԱԽՃԱՆԱԿԱՆՆԵՐ	
1-7 (1959-1965)	263
ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻՆ ՈՒՂԵԿՑՈՂ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ	
1. (1966) Աննա խաթուն	265
2. (1967) Հիտլերն ու պատերազմը	265
3-7 (1968-1972)	266
ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿ	
1-23 (1973-1995)	267
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ	
1. (1996) Հիվանդություն և բժշկություն	269
2. (1997) Ժողովրդական դեղեր	272
Սյունիքի մարզի Տեղ գյուղի մասին (1998)	277
Տեղ գյուղի ավանդական կերակուրները	282
(1999) Շփոթ	282
(2000) Խաշիլ	282
(2001) Թանապուր	282
(2002) Պիւտ	283
(2003) Տիպ	283
(2004) Կունչուլ	283
(2005) Ավելուկով տապակա	283
ՄՅՈՒՆԻՔԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ	
Ամփոփում (հայերեն)	284
Ամփոփում (անգլերեն)	286
Ամփոփում (ռուսերեն)	288
ՀԱՎԵԼՎԱԾ I	
Հեքիաթների՝ Սյունիքի բարբառի գիտական տառադարձությամբ նմուշներ	290
ՀԱՎԵԼՎԱԾ II	
Ասացողների և բանահավաքների վերաբերյալ տեղեկություններ	302
1. Ասացողներ	302
2. Բանահավաքներ	303
ՄՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ	308
ԾԱՆՈԹ-ԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	311
ԲԱՌԱՐԱՆ	341
ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿԸ՝ ԸՍՏ ԾԱԳՄԱՆ ՎԱՅՐԻ, ԲԱՆԱՄԱՑԻ, ԳՐԱՌՈՂԻ	347
ԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ	
Անձնանուններ, հատուկ անուններ	359
ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	364
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	364
ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ	367
ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ	369

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Մյունիքի բանահյուսությունը» վերնագրով առաջադրված թեման տասնամյակներ շարունակ եղել է թեմատիկ խմբի ղեկավար Թամար Հայրապետյանի ուշադրության կենտրոնում: Հստակ պատկերացնելով խնդրո առարկա թեմայի դրվածքը՝ նա պարբերաբար գործուն օժանդակություն է ցույց տվել Մյունիքի հայագիտական կենտրոնի աշխատանքներին, ուսումնասիրել է Մյունիքի ոչ նյութական մշակութային ժառանգության ժամանակային փոփոխություններով պայմանավորված բնականոն գործընթացները, և մի շարք հոդվածներ է հրատարակել տարածաշրջանի բանավոր ավանդության վերաբերյալ¹:

Վերոնշյալ ուսումնասիրությունները հետաքրքրություն և աշխուժություն են առաջացրել թե՛ Մյունիքում և թե՛ գիտական շրջանակներում՝ խթան հանդիսանալով «Մյունիքի բանահյուսությունը» թեմայի առաջադրման համար: Խմբի ղեկավարը հեղինակ է բանագիտական երկու մենագրության², ավելի քան հարյուր հոդվածների, որոնք լույս են տեսել Հայաստանում և արտերկրում, որոնց գիտական արդյունքը ներկայացվել է թվով 50 միջազգային գիտաժողովներում: Հրատարակված գրքերի և հոդվածների առավել ամբողջական ցանկը տես. www.sci.academia.edu/TamarHayrapetyan

XIX դարի վերջի և XX դարի սկզբի որոշ պարբերականներում և արխիվների առանձին հավաքածուներում ցրված են Մյունիքի բանահյուսության տարբեր ժանրերի նյութեր: Վերոնշյալ նյութերը սակավ տպաքանակի և ֆիզիկական մաշվածության պատճառով գտնվում էին վտանգի տակ: Անհրաժեշտ էր դրանց բնագրերը որոնել, ընտրել, դասակարգել և հրատարակել նախատեսվող ժողովածուի համապատասխան բաժիններում, ինչին ձեռնամուխ է եղել թեմատիկ մեր խումբը³:

- ¹ Թ. Հայրապետյան, «Սասունցի Դավիթ» հերոսավեպի զուգադիր մոտիվների համեմատության շուրջ (ըստ XX դարի 2-րդ կեսի գրառումների)//Մյունիքի հայագիտական հանդես, Գորիս, 2010, № 2, էջ 99–109; Թ. Հայրապետյան, «Ջանգեզուրի բանահյուսությունը Սերո Խանգաղյանի գրառումներում»//Մյունիք. Հայագիտության հանդես, Գորիս, 2017, № 1 (9), էջ 43–50; Թ. Հայրապետյան, «Մյունիքի վիպական բանահյուսությունը. «Սասունցի Դավիթ» և հրաշապատում հեքիաթների մոտիվների զուգադրման շուրջ»//Մյունիք. Հայագիտության հանդես, Գորիս, 2017, № 2(10), էջ 29–35); Թ. Հայրապետյան, Բանահյուսական նյութերի հավաքման և հրատարակման պատկերը Ջանգեզուրում՝ ըստ XIX դարի վերջի և XX դարի գրառումների//Մյունիքը կրթության և մշակույթի օջախ, Գորիսի պետական համալսարանի հիմնադրման 50-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2019, էջ 117–127:
- ² Կոնստանդին Մելիք-Շահնազարյան (Տմբլաշի Խաչան). կյանքն ու գործը, Երևան, 2007, ՀՀ ԳԱԱ, «Գիտություն» հրատ., 120 էջ; Արքեպիսկոպոսի հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ, Երևան, 2016, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 462 էջ:
- ³ Արքայիկ, Ղափանի ավանդություններից//Ազգագրական հանդես (այսուհետ՝ ԱՀ), գիրք XVIII, № 2, 1908, Թիֆլիս, էջ 106–108; Արքայիկ, Ղափանի ավանդություններից. Կրօնական ավանդություններից//ԱՀ, գիրք XIX, № 1, Թիֆլիս, 1910, էջ 90–94; Արքայիկ, Ղափանի բանառո գրականությունից. Ջանգելիումներ և աղօթքներ, ԱՀ, գիրք XX, № 2, Թիֆլիս, 1910, էջ 112–115:

«Մյունիքի բանահյուսությունը» թեմայի նպատակն էր հետազոտական խմբարշավի միջոցով վերոնշյալ գրքում մեկտեղել ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում⁴ պահվող, առանձին ժանրային համահավաք ժողովածուներում⁵ գետեղված և մերօրյա բանահավաքչական դաշտային աշխատանքների արդյունքում գրառված՝ Մյունիքի մարզի շրջանների (Գորիս, Միսիան, Կապան, Մեղրի) ու համապատասխան բնակավայրերի անտիպ ու հնատիպ բանահյուսական ժառանգությունը:

Իրականացված ծրագրի շրջանակներում թեմատիկ մեր խումբը 2019 թ. դաշտային աշխատանքների արդյունքում գրանցել է Մյունիքի մարզի բանահյուսության ներկա վիճակը, ժամանակի մեջ բանավոր մշակույթի կրած փոփոխությունները (տրանսֆորմացիան), որոնք թե՛ անցյալում և թե՛ այժմ տարածաշրջանում կենցաղավարել և կենցաղավարում են տարբեր ժանրերով:

1. Վիպական բանահյուսություն (հրաշապատում, իրապատում, կենդանապատում հեքիաթներ, առակներ, անեկդոտ-զվարճապատումներ, տեղագրական, բացատրական, վարքաբանական, ստուգաբանական, կրոնական ավանդագրույցներ, գրույցներ, պատմական տարբեր իրադարձությունների արձագանքներ, հուշապատումներ):

2. Քնարական բանահյուսություն (սիրո, հարսանեկան, աշխատանքային (հորովել), սգո, պանդխտության, ռազմի երգեր, քառյակներ, ծիսական երգեր ու խաղիկներ (ջանգյուլումներ):

3. Բանաձևային-ասույթաբանական բանահյուսություն (առած-ասացվածքներ, անեծք-օրհնանքներ, աղոթքներ, հանելուկներ, շուտասելուկներ, խրախճանականներ):

* * *

Մեծ Հայքի իններորդ նահանգը՝ Մյունիքը (Զանգեզուրի ազգագրական շրջան), հայկական մի ինքնատիպ շրջան է, որտեղ կենցաղավարում են բանահյուսական ժառանգության անկրկնելի արժեքներ, որոնք, ցավոք, բավարար չափով ուշադրության չեն արժանացել և դուրս են մնացել ուսումնասիրողների տեսադաշտից՝ նյութական միջոցների բացակայության, սոցիալ-տնտեսական դժվարությունների և այլ պատճառներով: Բավական է նշել, որ 1970-ից մինչև 2009 թթ. լույս տեսած «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի (այսուհետ՝ ՀԱԲ) 26 հատորներից ոչ մեկը նվիրված չէ Մյունիքին:

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի (այսուհետ՝ ՀԱԻ) բանահյուսության բաժինը վերջին անգամ Մյունիքում դաշտային աշխատանքներ է կատարել 1960-ական թվականներին և տարածաշրջանի հարուստ բանահյուսական ժառանգությունից գրառված ընդամենը 74 միավոր հեքիաթ է տպագրվել 1979 թ. լույս տեսած «Հայ ժողովրդական հեքիաթների» գիտական հրատա-

⁴ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ (այսուհետ՝ ՀԱԻԲԱ):

⁵ Հայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետ՝ ՀԺՀ), հ. VII, Երևան, 1979, էջ 395–671; Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 13–14, 49–50, 55–57, 92–93, 149, 169–172, 204–205, 230–233, 261–263, 285, 295, 322–323:

րակության VII հատորում⁶: Որոշ ստուգաբանական ավանդագրույցներ էլ հրատարակվել են Ա.Ղանալանյանի՝ 1969 թ. լույս տեսած «Ավանդապատում» գրքում:

Ներկայիս գիտատեխնիկական առաջընթացի և անընդհատ փոփոխվող աշխարհի մարտահրավերներում կարևորվում է Սյունիքի բանահյուսական ժառանգության անձնագրավորումը՝ կենցաղավարող նյութի գրառումը, ըստ ժանրերի և բնույթի դասակարգումը, ժամանակի ընթացքում կրած փոփոխությունների գրանցումը:

XIX դարի երկրորդ կեսին հայ հանրային միտքը գործուն հետաքրքրություն է ցուցաբերում ժողովրդի ոչ նյութական մշակութային ժառանգության նկատմամբ և նոր թափ են առնում ժողովրդական բանահյուսության նմուշների ինչպես հայտնաբերման ու գրառման, այնպես էլ հրատարակման և ուսումնասիրման աշխատանքները: Սյունիքից գրառված բանահյուսական անտիպ ժառանգությունը խմբավորված է ՀԱԻԲԱ համապատասխան ֆոնդերում, որոնք ցայսօր դուրս են մնացել գիտական լայն շրջանառությունից:

Դեռևս XIX դարի 80-ական թվականներին Կովկասյան ուսումնական շրջանի վարչությունը մանրակրկիտ մշակված ուղեցույցներով կրթության ոլորտի աշխատակիցներին հանձնարարել է բազմակողմանիորեն նկարագրել տարածաշրջանի բնակավայրերի և էթնիկ խմբերի անցյալ ու ներկա կենսընթացի փոփոխությունները՝ ուշադրություն դարձնելով ժողովրդական բանահյուսության գրառմանը:

Հավաքված նյութերը՝ Ջանգեզուրի բանահյուսական տարբեր ժանրերի սողծագործություններ՝ անեկդոտներ, օրհնանքներ, անեծքներ, ավանդություններ և կյանք ու կենցաղին նվիրված նյութեր լույս են տեսել վարչության հրատարակած «Сборник материалов для описания местностей и племен Кавказа» մատենաշարի տարբեր հատորներում (այսուհետ՝ СМОМПК, Выпуск XIII, отд. I, Тифлис, 1892, с. 59–125; Выпуск XVII, отд. II, Тифлис, 1893, с. 193–201; Выпуск XIX, отд. II, Тифлис, 1894, с. 220–226; Выпуск XXV, отд. II, Тифлис, 1898, с. 1–58; Выпуск XXXIV, Отдел III, Тифлис, 1904, с. 91–124) և այլն:

Ջանգեզուրի ժողովրդագիտական նյութերի համակարգված հավաքումը շարունակել է վաստակաշատ բանահավաք Երվանդ Լալայանը՝ նյութեր գրանելով Միսիանի ու Ջանգեզուրի ժողովրդական կենցաղի ու բանահյուսության մասին, որոնք հետագայում լույս են տեսել «Ազգագրական հանդեսի» Գ և Դ հատորներում⁷: Այդ նյութերը, ինչպես նաև Ստ. Օրբելյանի «Սյունիքի պատմության» մեջ զետեղված պատմական, կրոնական, վարքաբանական ավանդությունները համալրել են «Սյունիքի բանահյուսությունը» ժողովածուն:

1920–30-ական թվականներին Ջանգեզուրի հասարակական ու մասնավոր կենցաղին վերաբերող հարուստ ազգագրական նյութեր է հավաքել Ստեփան

⁶ Հայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետ՝ ՀԺՀ), հ. VII, Երևան, 1979: Հատորն ընդգրկում է 246 միավոր հեքիաթ, որից 172-ը գրառված է Արցախից, 74-ը՝ Սյունիքից:

⁷ Ե. Լալայան, Միսիան // Ազգագրական հանդես, գիրք Գ, № 1, Թիֆլիս, 1898, էջ 105–272; Ե. Լալայան, Ջանգեզուր // Ազգագրական հանդես, գիրք Դ, № 2, Թիֆլիս, 1898, էջ 7–116:

Լիսիցյանը, որոնք հրատարակվել են «Զանգեզուրի հայերը» գրքում (Երևան, 1969, 334 էջ): Սակայն այն բացառապես ազգագրական բնույթի ժողովածու է, բանահյուսական նյութեր չկան:

Խորհրդային շրջանում Սյունիքից գրառված ոչ նյութական մշակութային ժառանգությունը կարելի է ներկայացնել ժամանակագրական չորս շրջափուլով՝ 1920–1930 թթ., 1936–1947 թթ., 1963–1964 թթ., 1967–1972 թթ.:

Սյունիքից գրառված ժողովրդական բանահյուսությունը բազմաժանր ու բազմաբնույթ է. հեքիաթներ, ավանդություններ, զրույցներ, հուշապատումներ, առած-ասացվածքներ, անեծք-օրհնանքներ, հանելուկներ, շուտասելուկներ, հորովելներ, աշխատանքային, օրորոցային, հարսանեկան, սգո երգեր, խաղիկներ, ջանգլուումներ, որոնք պատմել են բանասացներ Հովհաննես Մկրտչյան-Ջաքարյանը, Անուշ Լալայանը, Վարսենիկ Մանուկյանը, Գուրգեն Օրոյանը, Գուսան Աշոտը (Աշոտ Դադայան), Աշուղ Աթան այլք: Զանգեզուրի բանահյուսությունը գրառել են անվանի բանահավաքներ Սերո Խանգաղյանը, Միքայել Առաքելյանը, Մուշեղ Գևորգյանը, Ջարեհ Տեր-Մինասյանը և այլք:

Մեղրիի հեքիաթները գրի է առել Ջարեհ Տեր-Մինասյանը 1963–1964 թվականներին, Երևանում՝ վերհիշելով իր հորաքույրների՝ Եղիսաբեթի, Շողակաթի և հորեղբոր աղջկա՝ Փեփրոնե Տեր-Մինասյանի պատմածները: Հատկապես ուշագրավ է «Ուսկե խմինձնիրուն նաղըը» հեքիաթը: Բանահավաքը մանրամասն տեղեկություններ է հաղորդում նաև հայրենի գյուղի միջավայրի, մեղրեցիների կենցաղի և հեքիաթների կենցաղավարման հանգամանքների վերաբերյալ:

Սյունիքից գրառված ժողովրդական նյութերի գերակշիռ մասը պատկանում է Սերո Խանգաղյանի գրչին՝ կատարված 1936–1947 թվականներին:

Ս. Խանգաղյանի գրառած բանահյուսական նյութերի ձեռագիր հավաքածուից (շուրջ 1500 միավոր) ՀԺՀ VII հատորում տպագրվել են ընդամենը 22 միավոր հեքիաթներ:

Վաղ տարիքից տատի՝ Նանախանում զիգայի պատմություններով տպավորված՝ Ս. Խանգաղյանը առանձնակի հետաքրքրություն է ցուցաբերում ժողովրդական բառուբանի նկատմամբ: Այդ մասին է վկայում ՀԱԻԲԱ-ի 1946 թ. մարտի 19-ին Ս. Խանգաղյանի հայտնած հետևյալ մտահոգությունը. «Զանգեզուրի լեռներում դեռ պահպանվում են մեր հնադարյան ֆոլկլորի հրաշալի բեկորները, որոնց գրի առնելն անհրաժեշտ են համարում մոտակա տարիներին ավարտել, այլապես ուշ կլինի»⁸:

Ս. Խանգաղյանի ձեռագիր հավաքածուի գերակշիռ մասը (Ս. Խանգաղյանի Ֆոնդ FFII) զանգեզուրյան ավանդական կյանք ու կենցաղի, բառ ու բանի մասին պատմող նյութերն են՝ գրառված Գորիսում ու նրա շրջակա Շինուհայր, Քարահունջ, Խնձորեսկ, Բոռն, Խոտ, Ղափանի՝ Ծավ, Արծվանիկ, Սիսիանի՝ Դարբաս, Շաղաթ, Ուզ-Ույծ գյուղերից:

Ս. Խանգաղյանը 11 բանասացներից գրառել է 22 հեքիաթ, որոնցից միայն մեկն էր կին բանասաց (Անուշ Լալայան, ծագումով Խանաձախ գյուղից, 63 տա-

⁸ ՀԱԻԲԱ, Ս. Խանգաղյանի ֆոնդ, FFII 5259:

րեկան, պատմել է «Կտրիչ տղան»⁹, «Թաքավորի տղան»¹⁰ հեքիաթները, որոնք լսել է հորից՝ Մինասից)։ Այդ հեքիաթների դիպաշարերը, որ սիրված են Սյունիքում, ներառել ենք ժողովածուի վիպական բանահյուսության բաժնում։

«Սյունիքի բանահյուսությունը» վերնագրով ամբողջական ու համակարգված աշխատությունը տարբեր ժանրերով և մոտիվային բազմազան զուգահեռներով ներկայացնում է տարածաշրջանի **տպագիր** և **անտիպ** բանահյուսական հարուստ ժառանգությունը։

Քանի որ «Հայ ժողովրդական հեքիաթների» գիտական հրատարակության VII հատորում գետնդրված Սյունիքի հեքիաթները ինչպես կառուցվածքային և բովանդակային, այնպես էլ բարբառային և քերականական առումով գրեթե անթերի են, մենք նպատակահարմար ենք գտել դրանցից առավել ուշագրավները ներառել մեր կազմած ժողովածուի տպագիր բաժնի մեջ։

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Միքայել Ավյանի FF XII ֆոնդում պահվող «Խրախճանականներ» կոչվող թվաբանական ու տրամաբանական խնդիր-հանելուկները, որոնք ժողովածուում լույս են տեսնում առաջին անգամ։

Բանահյուսական տարբեր ժանրերով հարուստ է նաև ՀԱԻԲԱ-ի Արամ Մարգարյանի մեծապես անտիպ մշակված FFVIII ֆոնդը, ինչպես նաև չմշակված ֆոնդը։ Ա. Մարգարյանը գրառումներ է կատարել երկու փուլով։ Առաջին փուլի (1948–1972թթ.) գրառումները կատարվել են Բեգլար Միրզոյանից (Տաթև), Մաշինկա Մարգարյանից (Քաջարան), Մխիթար Ալեքսանյանից (Ղափան), Սերգեյ Խաչատրյանից (Ղափան), Ռոմիկ Ավետիսյանից (Ղափան), Լևոն Դանիելյանից (Խնձորեսկ)։ Հեքիաթների մեծ մասը Ա. Մարգարյանը լսել է հորից՝ Արտեմից, բայց գրատել է 1972թ.-ին, Բաքվում՝ քրոջ՝ Ծաղկավարդ Գևորգյանի վերապատմությամբ։ Երկրորդ փուլի (1979–1982թթ.) բանասացներն էին՝ Փառանձեմ Մովսիսյանը (Մխիթանի շրջանի Բարձրավան), Լուսիկ Մովսիսյանը (Գորիսի շրջանի Տանձատափ), Անուշավան Մարգարյանը (Կապանի շրջանի Անտառաշատ)։

Արամ Մարգարյանի գրառած անտիպ հեքիաթներից ուշագրավ են «Թաքավորին իրեք ախճիկը»¹¹, «Լավությունը օցն ալ ա հսկանում»¹², «Էս կլխան, թա էն կլխան»¹³, «Գյաբա կյործողը»¹⁴ և այլն։

ՀԱԻԲԱ-ում գերակշռող են բանահյուսության բաժնի նախկին աշխատակից, բանահավաք Միքայել Առաքելյանի գրառումները, որոնք նա կատարել է 1964 թվականին, Գորիսում։ Մ. Առաքելյանի գրառումներից ՀԺՀ VII հատորում տպագրվել է ընդամենը 16 հեքիաթ, իսկ նրա բազմաթանր հավաքածուն՝ ավանդություններ, առակներ, անեկդոտներ, հորովելներ և այլն մնացել էր անտիպ

⁹ ՀԺՀ, հ. VII, էջ 411–416։ Հեքիաթի ձեռագիրը՝ ՀԱԻԲԱ, Ս. Խանզաղյանի ֆոնդ, FFII 6101–6118։

¹⁰ ՀԺՀ, հ. VII, էջ 417–424։ Հեքիաթի ձեռագիրը՝ ՀԱԻԲԱ, Ս. Խանզաղյանի ֆոնդ, FFII 6119–6141։

¹¹ ՀԱԻԲԱ, Ա. Մարգարյանի չմշակված ֆոնդ։

¹² ՀԱԻԲԱ, նույն տեղում։

¹³ ՀԱԻԲԱ, նույն տեղում։

¹⁴ ՀԱԻԲԱ, նույն տեղում։

(FFV ֆոնդ), որոնցից ուշագրավները նույնպես իրենց արժանի տեղն են գտել ժողովածուում:

Գրառումները կատարվել են 70 և ավելի տարիք ունեցող տղամարդ բանասացներից: Նրանցից միայն երկուսը՝ Գուրգեն Աղամյանը (2 հեքիաթ) և Թևան Միրզոյանը (2 հեքիաթ), 54 տարեկան էին: Միայն 80-ամյա ասացող Վարդանի (1 հեքիաթ) ազգանունն է մնացել անհայտ:

Զանգեզուրի հարուստ բանահյուսության մի զգալի մասը նախկին զինվորական Մուշեղ Գևորգյանի գրառումներն են (FFVII ֆոնդ), որ նա կատարել է 1967–1969թթ., որոնցից միայն 10 միավոր հեքիաթ է տպագրվել ՀՏՀ VII հատորում, մնացած անտիպ բնագրերից նույնպես զետեղվել են ժողովածուի համապատասխան բաժիններում: Մ.Գևորգյանի բանասացներից են Վարսենիկ Մանուկյանը (Վարսեն-աքերը՝ 81 տարեկան)¹⁵ և Սուլթան Գևորգյանը (Սուլթան-բաջին՝ 50 տարեկան)¹⁶:

Մուշեղ Գևորգյանը Զանգեզուրից գրառել է ավելի քան 1400 միավոր բանահյուսական նյութ, մեծ թվով առակներ և անեկդոտներ¹⁷, ինչպես նաև կազմել է բարբառային բառերի բացատրական բառարան¹⁸, «Հիշողություններ ժամանակի իրադարձություններից. Անդրանիկ փաշայի գործունեությունը Գորիսում»¹⁹, որոնք գրառել է ասացող Ասատուր Տեր-Գևորգյանից, որը բանահավաք Մուշեղ Գևորգյանի հորեղբայրն էր և բանասաց Սուլթան Գևորգյանի (Սուլթան-բաջին) ամուսինը: Ակսել Բակունցը իր նշանավոր «Կյորեսը» սկսում էր այսպես. «Քաղաքն ուներ երկու անուն՝ Գորիս և Կյորես: Երրորդ անունը՝ Կորիս,-տալիս էր միայն մի մարդ՝ ղեղավաճառ Քյալլն Ծատուրը, որը քաղաքում հոչակված էր որպես փիլիսոփա և հին գրքերի սիրահար»²⁰: «Բակունցի Քյալլն Ծատուրը հենց ինքը Ասատուր Տեր-Գևորգյանն էր, որին մենք Ծատուր ամի էինք կոչում», — կարդում ենք բանահավաք Մուշեղ Գևորգյանի արխիվում²¹:

1967 թ. ՀԱԻ գիտաշխատողներից կազմված Զանգեզուրի բանահյուսական խմբարշավը նշանավոր բանագետ Արտաշես Նազինյանի գլխավորությամբ (անդամներ՝ Սարգիս Հարությունյան, Վեներա Սահակյան, Ժենյա Խաչատրյան) մեկնել է Զանգեզուր (Գորիս քաղաք, Գորիսի շրջանի Վերիշեն, Խնձորեսկ, Քարահունջ, Սիսիանի շրջանի Շաղաթ, Անգեղակոթ գյուղերը)՝ գրառելու տարածաշրջա-

¹⁵ Վարսեն տատին ծնվել է 1888 թ. Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղում: Իր իմացած հեքիաթների մեծ մասը մանկության տարիներին լսել է տատից՝ Շահանից և նրա եղբայր Աղաջանից: Վարսենն իր լսած հեքիաթները պատմել է իր երեխաներին, հետո թոռներին և ծոռներին (ՀԱԻԲԱ, Մ. Գևորգյանի ֆոնդ, FFV 6687–6698):

¹⁶ Բանասաց Սուլթան բաջին ծնվել է 1870 թ. Գորիսի գավառում: Սուլթան բաջին շնորհալի կին էր, Գորիսի բառուբանի հրաշալի կրող, իմացել և պատմել է շատ հեքիաթներ: (ՀԱԻԲԱ, Մ. Գևորգյանի ֆոնդ, FFV 6543–6565):

¹⁷ ՀԱԻԲԱ, Մ. Գևորգյանի ֆոնդ FFV 6959–7011:

¹⁸ ՀԱԻԲԱ, Մ. Գևորգյանի ֆոնդ FFV 6675–6685:

¹⁹ ՀԱԻԲԱ, Մ. Գևորգյանի ֆոնդ FFV 6823–6847:

²⁰ Ա. Բակունց, Երկեր, Երևան, 1986, էջ 361:

²¹ ՀԱԻԲԱ, Մ. Գևորգյանի ֆոնդ FFV 6669–6671:

նի բանահյուսական մշակույթը, որոնցից միայն 17 միավոր հեքիաթ տպագրվել է ՀԺՀ VII հատորում, մնացած գրառումները մնացել են անտիպ (FFVII ֆոնդ):

Սյունիքի հեքիաթասացներն առանց բացառության բնիկներ են (Զանգեզուր, Մեղրի, Սիսիան, Խնձորեսկ, Յայջի, Շինուհար, Տեղ, Խսանաձախ, Քարաշեն, Վերիշեն, Գորիս, Շաղաթ): Նրանց մասնագիտական կազմը բազմաշերտ է՝ արհեստավորներ, հողագործներ, աշուղներ, երաժիշտներ և այլն. նրանք օժտված են հեքիաթային սյուժեների ու մոտիվների լայն իմացությամբ:

Ժողովածուի տեղ են գտել Զանգեզուրի բանահյուսական խմբարշավի գրառած նյութերը՝ հիվանդության և բուժման առասպելային, բուժման ծիսահմայական կենսաֆիզիկական, բուսական և կենդանական ծագմամբ դեղանյութերի կիրառությունների մասին, որոնք ընդհանրություններ են դրսևորում Հայաստանի ազգագրական տարբեր շրջաններից գրառած նույնանման դիպաշարերի համատեքստում: Այդ առակատիպ հեքիաթ-գրույցների մի խումբը առնչվում է միջնադարյան առասպելական բժիշկ և իմաստուն Լոխմանի գործունեությանը և հայտնի է նրա անունով՝ «Բժիշկ Լոխման»²² (Չարսանճագ), «Լոզմանն ու հասարակ մարթը»²³ (Տուրի-Հաղրութ) և այլն: Դրանց մի խումբն էլ առնչվում է այլ անուններով հայտնի կամ պարզապես անանուն բժիշկ-իմաստունների գործունեությանը՝ «Դալի Սելիմ», «Ճուկո և Ճեյրան», «Շահ Մարան» և այլն²⁴: Խմբարշավի նյութերում իմաստուն բժիշկը անանուն է, բայց բանահյուսական դիպաշարերի ուսումնասիրությամբ պարզվում է, որ խոսքը նույն բժշկապետ Լոխմանի մասին է: Ա. Նազիյանի և Վ. Սահակյանի գրառած «Օձի թոյնը»²⁵, «Բժիշկն ու հիվանդը»²⁶ անտիպ դիպաշարերում բժիշկը հիվանդ մարդուն ապրելու ընդամենը մի քանի օր է տալիս, ճիշտ այնպես, ինչպես Արցախի Դաշբուլաղ գյուղից գրառված «Դանրդեն նհետ դանրմանն էլ կա»²⁷, Կարինից գրառված «Ախիկն ու օձը»²⁸ հեքիաթները և այլն: Լոխմանը զննում է հիվանդին. «Մին ռեցեպտ ա կյիրում, թա՛ քյինա, մինչև մին շերաթը մըռնելու ըս»²⁹: Մտահոգ մարդը, որ էլ ոչինչ չունեի փրկելու, սար ու ձոր է ընկնում և քաղցելով՝ չոբանից կաթ է խնդրում: Չոբանը մի սև ոչխար է բռնում և հիվանդի խնդրանքով կթում է գետնին ընկած մարդկային գանգի («կարկաժ») մեջ, որտեղ փսխել էր օձը: Խմբարշավի գրառած «Օձի թոյնը»³⁰ հեքիաթ-առակում հիվանդը դիմում է իր

²² Էմինեան ազգագրական ժողովածու (այսուհետ՝ ԷԱԺ), հ. Բ, Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 267–276:

²³ Բաբվի հայոց բանահյուսությունը, կազմել, ներածությունը գրել և ծանոթագրել են Ա. Ղազիյանը, Ս. Վարդանյանը, Երևան, 2004, էջ 156–158:

²⁴ Այդ մասին մանրամասն տե՛ս Թ. Հայրապետյան, Արքեպիսկոպիտի հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ, Երևան 2016, էջ 65:

²⁵ ՀԱԻԲԱ, Զանգեզուրի բանահյուսական խմբարշավ (այսուհետ՝ ԶԲԽ), Սիսիան, FFVII 6465–6469:

²⁶ ՀԱԻԲԱ, ԶԲԽ, FFVII 6475–6477:

²⁷ ՀԺՀ, հ. VII, էջ 202:

²⁸ ՀԺՀ, հ. IX, Երևան, 1968, էջ 540–541:

²⁹ Բաբվի հայոց բանահյուսությունը, էջ 157:

³⁰ ՀԱԻԲԱ, ԶԲԽ, FFVII 6465–6469:

ծառային. «Դե որ պժշկություն չկա, արի տու ինձ էս քշեր տար իմ ոչխարի արխաջը (փարախ) թող քիշերը վերջին անգամ իմ ոչխարների մոտ քնեն, որ մեռնելու են»³¹: Հիվանդը պատվիրում է, որ սև ոչխարի կաթից մածուն պատրաստեն իր համար: «Կշերվա մի ժամանակ, ծառան զարթուն էր, տեսավ, որ մի օձ եկավ, մածունը կերավ, էլի հետ տվեց ամանի մեջ: Ծառան էս պանը տեսավ, մտածեց. «Լավ էլավ, թոյնավորեց, թող աղան ուտի, մեռնի: Ի՛նչ ա, ես էլ շատ տանջվում եմ»³²: Փաստորեն անբուժելի հիվանդը փրկվում է սև ոչխարի կաթից մերած մածունով, որի մեջ իր թոյնն էր թափել օձը: Իսկ «Բժիշկն ու հիվանդը»³³ դիպաշարում հիվանդին փրկում է կաղամբը («հում քյալամ»), որի օգտակար հատկությունները լայնորեն տարածված են ժողովրդական բժշկության մեջ: Զարեհ Տեր-Մինասյանի՝ Մեղրիից գրառած «Զօբանա նաղը»³⁴ հեքիաթը նույնպես տեղ է գտել ժողովածում, որտեղ բուժումը իրականացվում է ծխահմայական բժշկության մեջ հայտնի խաչակնքված ջրի մաքրագործող գործությամբ:

Ս. Խանգաղյանն իր գրառումներին կցած ծանոթագրություններից մեկում դիտարկում է վիպական բանահյուսության տարբեր ժանրերի՝ էպոսի ու հեքիաթի համանման սյուժեների ու մոտիվների աղերսները. ««Կտրիչ տղան»³⁵ հեքիաթը նման է «Սասնա ծռեր» էպոսի վարիանտներից մի քանիսին... Ծովի Ջալալ, Խաթուն խանում, ձիու ծովից հանելը, խորթ հոր պատմությունը և այլն՝ նմանություններ են էպոսին»³⁶:

«Կտրիչ տղան» հեքիաթի սյուժեն համապատասխանում է Հանս-Յորգ Ութերի (ATU) «Միջագային հեքիաթների տիպերը» նշագանկի 552 թվահամարին³⁷ և շարունակում է խորքային ընդհանրություններ դրսևորել «Սասնա ծռերի» տարբեր ճյուղերի հետ. «Կտրիչը ըրագումը ուրան հորն ա տեսնում, հերն ասում ա. — Վերթի, ծովի Ջալալ ծին հետա կոխկիտ, եր կաց կոխկիտ մեծ քարին տական ընդա յիհար-ջիլավը տոնս կալ, տիր յիրան, ջիլավը ըռելսը քցի, նստի, ըշտեղ օգես, կտանի հըսցնի»³⁸:

«Սասնա ծռերի» հետ որոշ աղերսներ ունի նաև Զարեհ Տեր-Մինասյանի՝ Մեղրիից գրառած «Ուսկե խոնձորոնն նաղըը»³⁹ հեքիաթը, որտեղ պատվը հերոսին պատմում է, որ ջրարգել վիշապի պատճառով երկիրը ծարավի է մատն-

³¹ Նույն տեղում:

³² Նույն տեղում:

³³ Նույն տեղում, FFVII 6475–6477:

³⁴ ՀԺՀ, հ. VII, էջ 654–658:

³⁵ ՀԺՀ, հ. VII, էջ 411–416:

³⁶ ՀԱԻԲԱ, Ս. Խանգաղյանի ֆոնդ, FFII 6099:

³⁷ H.-J. Uther. The Types of International Folktales. A Classification and Bibliography, I, FF Communications. Helsinki, Academia Scientiarum Fennica, 2011, p.322. Բանագիտության մեջ Հանս-Յորգ Ութերի «Միջագային հեքիաթների տիպերը» նշագանկը ընդունված է հակիրճ հղել ATU (Աարնե-Թոմսոն-Ութեր), քանի որ Ութերի առավել արդիականացած նշագանկի հիմքում ընկած է Աարնե-Թոմսոնի նշագանկը – Ծ. Կ.:

³⁸ ՀԱԻԲԱ, Ս. Խանգաղյանի ֆոնդ, FFII 6099:

³⁹ ՀԺՀ, հ. VII, էջ 585–597: Հեքիաթի ձեռագիրը՝ ՀԱԻԲԱ, Զարեհ Տեր-Մինասյանի ֆոնդ, FFIV 1929–1954:

վել: Պատա՛սն ասում է. «Հէսէ տասը տարեվ ի մին տըսներկու գըլխանէ վիշապ նըստած ա մեր ջրի գոլը, մեզ ջնոր չի ննս, հու հոր խընդրիս ի ջնոր տանի մետիլ մին ախչիկ տա: Մեր քաղաքամը ալ ախչիկ չի մնացալ, նստոր նլ մեր թաքավօրը ինրէն մին ճարը մաղար ախչիկի տընըլասկան ա տա ննդնոր, հոր ջնոր վիր առի, թնն չէ գօրքը ծարավ կուտուրվիլ ի»⁴⁰:

Վերոհիշյալ հեքիաթի հերոսը խանչալի մի հարվածով կտրում է տասներկու գլխանի վիշապի ինը գլուխները, և այդ ծանրությունը քարշ չտալու համար վերջինիս տասներկու լեզուները կտրելով՝ պահում է թաշկինակի մեջ:

Հնագույն պատկերացումների համաձայն՝ հերոսի վարկը ժողովրդի աչքում բարձրանում է այն ժամանակ, երբ նա իբրև ապացույց բերում է իր գոհի մարմնի մի մասը՝ գլուխը, ծնոտը, ատամները, քիթը, ականջները⁴¹, մեզ հետաքրքրող նյութի պարագայում՝ վիշապի լեզուները՝ հեքիաթում⁴² և Կոզբաղի-նի ատամներն ու շրթունքները՝ «Սասունցի Դավիթ» էպոսում⁴³:

Թագավորի նագիրը, նենգափոխելով փաստերը, իբր ինքն է սպանել վիշապին, հրապարակում հավաքված ժողովրդին ի ցույց՝ շուտ է տալիս սայլը, որտեղից թափվում են վիշապի տասներկու գլուխները: Հենց այդ ժամանակ հայտնվում է վիշապասպան հերոսը և իրավամբ իր հարցն է ուղղում կեղծարարին. «Պա նդ վիշափուն լիւզնի չի օնի»: Նագիրն իրեն չի կորցնում և պատասխանում է. «Վիշափը վխելուց լիւզնն կօլ ա տըվալ»⁴⁴: Հեքիաթի հերոսը բացում է թաշկինակը և վիշապի տասներկու լեզուները, իբրև իրեղեն ապացույց, տեղադրում գլուխների մեջ: Նագիրն արժանի պատիժ է ստանում, իսկ տղան դառնում է թագավոր:

«Թաքավորի տղան» հեքիաթի տողատակում արված ձեռագիր գրառումից պարզ է դառնում, որ բանահավաք Ս. Խանզադյանը ծանոթ է նաև տվյալ հեքիաթի միջազգային՝ մասնավորապես՝ հնդկական գուգահեռին⁴⁵:

Ուսուցիչ եղած ժամանակ Ս. Խանզադյանը Յայջի, Վերիշեն, Խանաձախ գյուղերում ոչ միայն բազմաժանր բանահյուսական նյութեր է գրառել⁴⁶, այլև ստեղծել է ժողովրդական հեքիաթների գրական լեզվով պատումներ՝ («Թագավորը, այգեպանն ու օձը»⁴⁷, «Երկու եղբայրներ»⁴⁸) և զանգեզուրյան բարբերն ու

⁴⁰ ՀԺՀ, հ. VII, էջ 590:

⁴¹ Լայպեան Ե., Ծիսական կարգերը հայոց մեջ // Ազգագրական հանդէս, XXI գիրք, Թիֆլիս, 1911, էջ 179–181: Հայ մատենագրության մեջ ևս տեղեկություններ կան նմանատիպ փաստերի վերաբերյալ (Փաստոսի Բիզանդացոյ Պատմութիւն Հայոց, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Սալխայանցի, Երևան, 1987, Հինգերորդ դպրություն, գլուխ Դ, էջ 305, գլուխ Ե, էջ 309, գլուխ Զ, էջ 315, գլուխ ԽԳ, էջ 387, Հովհան Մամիկոնյան, Տարոնի Պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Վ. Վարդանյանի, Երևան, 1989, Պատճեն երկրորդ, էջ 89, Պատճեն երրորդ, էջ 99):

⁴² ՀԺՀ, հ. VII, էջ 591:

⁴³ Սասունցի Դավիթ. Հայ ժողովրդական հերոսավեպ, Երևան, 1981, էջ 206:

⁴⁴ ՀԺՀ, հ. VII, էջ 592:

⁴⁵ ՀԱԻԲԱ, Ս. Խանզադյանի ֆոնդ, FFII 6119:

⁴⁶ ՀԱԻԲԱ, նույն տեղում, FFII 4655–4725; 4757–4761; 5053–5071; 4769–4773; 4847–4851; 4861–4875:

⁴⁷ ՀԱԻԲԱ, նույն տեղում, FFII 4907–4908:

⁴⁸ ՀԱԻԲԱ, նույն տեղում, FFII 4981–4987:

սովորությունները խտացնող ժողովածուներ՝ «Կարմիր շուշաններ»⁴⁹, «Ավանդատուն»⁵⁰, Ինչո՞ւ, ինչո՞ւ»⁵¹ և այլն:

2019 թ.-ին թեմատիկ մեր խումբը գրառել է Սյունիքում կենցաղավարող ոչ նյութական մշակութային ժառանգության բանահյուսական բազմաժանր նյութեր, որոնք զետեղված են սույն ժողովածուում և հնարավորություն կընձեռեն հետագա ուսումնասիրողների համար վերլուծելու բանավոր խոսքի՝ տարածաժամանակային փոփոխություններով պայմանավորված տեղաշարժերի բնական գործընթացները:

Հետաքրքիր է նկատել, որ համեմատաբար ուշ շրջանի գրառումներում նույնպես պահպանվում են պատմական այս կամ այն դեպքի մասին, մեծ աշխարհի հայտնի մարդկանց անվան շուրջը հյուսված գրույցներ, որոնք հանգում են դիպուկ ու անակնկալ լուծումների: «Վարթերը պուճ չի տաք» ավանդության մեջ, երբ Լենկ-Թեմուրը արշավում է Պարսկաստանի վրա, պարսիկ մեծ բանաստեղծ Հաֆեզը աղ ու հացով և հպատակության խնդրանքով դիմավորում է նրան: «Լենկ Թեմուրը ասում ա.

— Տու հուվ էն:

— Ես Հաֆիզն եմ:

— Ես հունց գիդամ, վեր տո՛ւ Հաֆիզն ես:

Հաֆիզն ասում ա.

— Կանչի թոռանըս, հըլըհարցում ըրա, իմ կիրածնես անկյիր գյուղում ա, քրզետն կասե՛ն):

Հաֆեզի թոռնիկը՝ շատ փոքրիկ ու սիրուն մի աղջնակ, կանգնում է և հուզմունքով սկսում արտասանել. «Վարթերը պուճ չի տաք...»⁵²:

«Լենկ Թեմուրը եշում ա, եշում, սերտը կըկըղում ա, ասում ա, լյավ Հաֆիզ, ես ծեր քրդաքեն վնաս չեմ տալ: Թ-ն ես ըշխարքես մեծ տերն ու տիրակալն եմ, տո՛ւ էլ մեծ բանաստեղծն ես, Շիրազը քեզ եմ բաշխում»⁵³:

Զանգեզուրը մաքառումներով և պատմական իրադարձություններով հարուստ բնաշխարհ է և պատահական չէ, որ ավանդապատումը Զանգեզուրում սիրված բանահյուսական ժանր է, քանի որ հնարավորություն է տալիս սրբացնելու ժողովրդի անկախության և ինքնության համար մարտնչող հերոսներին: Սերո Խանգաղյանի վերոնշյալ ֆոնդում⁵⁴ պահպանվում են մեծ թվով տեղագրական կամ ստուգաբանական, բացատրական, վարքաբանական ավանդություններ՝ Դավիթ Բեկի⁵⁵, Մխիթար Սպարապետի⁵⁶, Հովհան Որոտնեցու⁵⁷,

⁴⁹ Ս. Խանգաղյան, Երկերի ժողովածու հինգ հատորով, հատոր չորրորդ, Երևան, 1968, 522 էջ:

⁵⁰ Ս. Խանգաղյան, Ավանդատուն, Երևան, 1986, 283 էջ:

⁵¹ Ս. Խանգաղյան, Ինչո՞ւ, ինչո՞ւ, Երևան, 1970, 158 էջ:

⁵² Թ. Հայրապետյանի Դաշտային բանահյուսական նյութեր (ԴԲՆ), 2011 թ., տետր № 1:

⁵³ Նույն տեղում:

⁵⁴ ՀԱԻԲԱ, նույն տեղում, FFII 5305–5307; 5313–5323; 5407–5411; 5413–5419; 5424–5439; 5471–5479; 6223–6227:

⁵⁵ ՀԱԻԲԱ, նույն տեղում, FFII 5481; 6209–6211:

⁵⁶ ՀԱԻԲԱ, նույն տեղում, FFII 6213–6215:

⁵⁷ ՀԱԻԲԱ, նույն տեղում, FFII 6165:

Սուրբ Վարդանի⁵⁸, Զանգեզուրի⁵⁹, Գորիսի⁶⁰, Ագոստի աղբյուրի⁶¹, Կաքավի աղբյուրի⁶², Զրով թոնրի⁶³ և այլնի վերաբերյալ, որոնք դասակարգել ենք ըստ Արամ Ղանալանյանի «Ավանդապատում» գրքի առաջաբանում խմբավորված սկզբունքների:

Հնարավոր է, որ որոշ դեպքերում պատմությունն ու ավանդությունը համախոս լինեն, սակայն նախապես ասենք, որ ավանդությունը, մեծավ մասամբ, ժողովրդի վիպաառասպելաբանական պատկերացումների արդյունք է, որը կարող է նաև իրականին խառնված մտացածին ու զգայական տեղեկություններ ու միջադեպեր հաղորդել: Զորթիսակ՝ Ս. Խանգաղյանի գրառած «Գորիս» ավանդապատումի համաձայն՝ «Հին ժամանակ Կորիսից տիյեր եղել են վեղի միջի շինած տներ: Թուրքերը էտ տընըտեղերիտ ասալ են Գյավուրիստան, այսինքն՝ գյավուրների՝ հայ քրիստոնյաների տեղ: Էտ անունիցտ էլ առաջացալ ա Գյավրուս, Գյորուս, Գորիս»⁶⁴:

Գորիս և Զանգեզուր տեղանունների մասին բազում ավանդություններ կան, որոնք ժողովրդական ստուգաբանություններ լինելով հանդերձ, չեն կարող հավակնել պատմաաշխարհագրական, լեզվաբանական կամ աշխարհաքաղաքական այս կամ այն խնդրի լուծմանը: Սակայն չի բացառվում նաև, որ ժողովրդական ավանդությունը կարող է նպաստել լուծման ճիշտ բանալին գտնելուն:

Անդրանիկի և Նժդեհի մասին մեր գրառումներում ասացողները գերադասում են գրական խոսքը, ինչը, ամենայն հավանականությամբ, սիրելի հերոսների մասին հյուսված հեղինակային երգերի ազդեցության արդյունք է, զորթինակ.

*Հեռավոր Բալկանյան ճակատում,
Նժդեհ-Անդրանիկ մարտի են կանչում
Ջարդ փվին դաժան թուրքերի զորքին
Մեր կորիճները Ղարաքիլիսում*⁶⁵:

Կամ՝

*Խոսարուփա լանջն ես հսկում
Մեր փանջված ախպեր Նժդեհ,
Ցավը պահած քո հոգում
Մեր հերոս արծիվ Նժդեհ:
Անցել ա էսքան փարի
Շուն թուրքից պրծում չկա*

⁵⁸ ՀԱԻԲԱ, նույն տեղում, FFII 5541:

⁵⁹ ՀԱԻԲԱ, նույն տեղում, FFII 5423; 5427:

⁶⁰ ՀԱԻԲԱ, նույն տեղում, FFII 6291:

⁶¹ ՀԱԻԲԱ, նույն տեղում, FFII 5549–5551:

⁶² ՀԱԻԲԱ, նույն տեղում, FFII 5489:

⁶³ ՀԱԻԲԱ, նույն տեղում, FFII 5621:

⁶⁴ ՀԱԻԲԱ, Ս. Խանգաղյանի ֆոնդ, FFII 6291:

⁶⁵ Թ. Հայրապետյան, ԴԲՆ, Տեղ գյուղ, 2019 թ., Ժողովրդական նոր երգեր, տե՛ս №8–10:

*Քու հոգին թող սավառնի
Մեր անվախ հողի վիրա*⁶⁶:

Մեր հերոսների մասին կան նաև բարբառով հյուսված երգեր.

*Անդրանիկը հրաալա Ջարուղ կյերին,
Լոխունքըդ եկաք թորքին վային:
Կեծական ուժեղ ա Անդրանիկ փաշան
Մուս ան մինչի Մարքիզ թորքը հոգի յա փամ:
Անդրանիկին անա լըղեն ճյուր փառած,
Խանչալն ա մաուզերը քուչումը յեր փառած,
Էփ շփեղ ա՛ փահւճում վըխլըկոյր թորքը,
Առաջը Ջարուղն ա, քամակը՝ փժոխկը*⁶⁷:

Սյունեցիների կենսընթացում բանաձևային խոսքը առօրյա կիրառություն ունի: Ընտանիքի ներսում կենցաղային-իրավական փոխհարաբերությունների վերապրուկների մասին է վկայում Սյունիքում կենցաղավարող ասացվածքը՝ գերդաստանի ավագ անդամի կարևոր դերակատարության մասին. «Տանը վեր մեծ չինի, տեղը քյոթուկ կը տինեն»⁶⁸: Մոցիալ-փիլիսոփայական ընդհանրացումների տեսանկյունից ուշագրավ է հետևյալ ասացվածքը. «Բյասիբ մարթին սերտն ա լեն, հըրուստին՝ տեղը»⁶⁹:

Մեր գրառած նյութերում սյունեցին շարունակում է արժևորել համուռոտով, բանաձևային ենթատեքստերով հարուստ, սեղմ ու բովանդակալից ժողովրդական խոսքի կարևորությունը. «Չաթվին (պարան) էրգյանն ա լյավ, անա գրուցին՝ կարճը»⁷⁰: Այդ նույն «չաթուն» շատ խորհրդանշական է. «Չաթուն շտեղ վեր պիրակում ա, ընդեղ էլ կըտըրվում ա»⁷¹՝ ակնարկելով դիպուկ խոսքի արժեքն ու մարդկային համբերության սահմանների ընդհատությունը:

Հայ ժողովրդական բանահյուսության դասակարգումն ըստ տեղագրական և ազգագրական հատկանիշների բխում է մեր ժողովրդի պատմական կյանքի որոշ հանգամանքներից: Բանահյուսական նյութերի խմբավորման այս սկզբունքի շնորհիվ ի հայտ են գալիս տվյալ խմբի, կոնկրետ դեպքում՝ Սյունիք-Ջանգեզուրի բանավոր մշակույթը միավորող աշխարհագրական, լեզվաբարբառային, սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները, սովորությունները, կյանք ու կենցաղի բնորոշ գծերը: Սյունիքից գրառված բանահյուսության գերակշիռ մասը ավանդական սյուժեներ են, որոնք պատկանում են ժանրի հնագույն տիպին և գալիս են հազարամյակների խորքից:

Ջանգեզուրի բանահյուսությունը Հայաստանի տարբեր շրջաններից գրառված ազգային երկացանկի բաղկացուցիչ մասն է կազմում և մոտիվային բազ-

⁶⁶ Նույն տեղում:

⁶⁷ Նույն տեղում:

⁶⁸ Թ. Հայրապետյան, ԴԲՆ, Տեղ գյուղ, 2019 թ., Առած-ասացվածքներ, № 1113:

⁶⁹ Նույն տեղում, № 1120:

⁷⁰ Նույն տեղում, № 1104:

⁷¹ Նույն տեղում, № 1105:

մագան գուգահեռներով, վառ երևակայությամբ, էթնոմշակութային ինքնատիպ լուծումներով պատմաճանաչողական մեծ արժեք է ներկայացնում:

Սյունիքից գրառված հեքիաթների թեմատիկ ու մոտիվային փոխառնչությունները, որպես համաշխարհային բանահյուսական մշակույթի բաղկացուցիչ մաս, ծանոթագրություններում ինդեքսավորվել են ըստ Հանս-Յորգ Ութերի (ATU) «Միջազգային հեքիաթների տիպերը» եռամաս նշացանկի, որով ներկայումս առաջնորդվում են հեքիաթագիտական միջազգային շրջանակները, և որի արդիականացած սկզբունքներով այժմ Հայաստանում ԳԱԱ ՀԱԻ բանահյուսության տեքստաբանության բաժինը դասակարգում է հայկական հեքիաթների բանահյուսական ժառանգությունը (ղեկավար և համակարգող՝ Բ.Գ.Պ. Թամար Հայրապետյան):

«Սյունիքի բանահյուսությունը» վերնագրով աշխատության մեջ համակարգվել է Սյունիքի բանավոր ավանդության՝ վիպական, քնարական, ասույթաբանական ողջ ժառանգությունը, որով էլ Սյունիքի մարզը գիտական հանրությանն է ներկայանում և հանրահռչակվում որպես մեկ ամբողջական բանահյուսական մշակութային տարածք:

«Սյունիքի բանահյուսությունը» ժողովածուն կազմելիս հետևել ենք տեքստաբանական հետևյալ սկզբունքներին և կանոններին.

Ժողովածուի նյութերի լեզուն բարբառն է, որը բնագրային փոփոխության, խմբագրման, վերանայման ենթակա չէ: Քանի որ բնագրերը գրառվել են տարբեր բանահավաքների կողմից, տարբեր ժամանակաշրջաններում, ուստի միօրինակ դարձնելու նպատակով կիրառվել է նոր ուղղագրություն և կետադրություն: Պատահում են դեպքեր, երբ որոշ բանասացներ այնքան էլ հետևողական չեն բարբառը պահպանելու հարցում: Այս դեպքում ունենք գրականախառը գրառումներ, որոնք վկայում են ժամանակի մեջ նյութի կրած փոխակերպումների մասին: Բնագրերի մեջ ասացողի, բանահավաքի, կազմողի բացատրությունները առանձնացվում է բուն բնագրից, դրվում տողատակին, նշելով՝ Ծ.Ա. (ծանոթություն ասացողի), Ծ. Բ. (ծանոթություն բանահավաքի), Ծ. Կ. (ծանոթություն կազմողի):

Մի քանի խոսք ժողովածուի բաժինների և կառուցվածքի մասին:

«Սյունիքի բանահյուսությունը» ժողովածուն բաղկացած է հետևյալ բաժիններից.

1. Վիպական բանահյուսություն
2. Քնարական բանահյուսություն
3. Բանաձևային-ասույթաբանական բանահյուսություն

Ժողովածուն ունի.

ա) Ներածություն, բ) հիմնական բնագրեր, գ) հավելված I, գիտական տառադարձությամբ նմուշներ դ) հավելված II, բանասացների և բանահավաքների վերաբերյալ տեղեկություններ, ե) ծանոթագրություններ, զ) բառարան, է) բանահյուսական նյութերի ցանկ՝ ըստ ծագման վայրի, բանասացի, գրառողի, ը) հատուկ անունների՝ անձնանունների և տեղանունների ցանկեր, թ) համառո-

տագրություններ և օգտագործված գրականության ցանկ, ժ) ռուսերեն, անգլերեն ամփոփումներ:

Ներածական մասում պատկերացում է տրվում «Սյունիքի բանահյուսությունը» թեմայի ընտրության, քննվող խնդիրների էության և բովանդակության, ժամանակագրական տարբեր ընդգրկումներով դրանց գրանցման, դասակարգման, անձնագրավորման աշխատանքների կարևորության մասին: Անդրադարձ է կատարվել Գորիսի բարբառի հնչյունական և ձևաբանական առանձնահատկություններին, շարադրվել է պատմաաշխարհագրական համառոտ ակնարկ՝ Մեծ Հայքի իններորդ նահանգի՝ Սյունիք-Զանգեզուրի մասին:

1. Հիմնական բնագրեր, որտեղ ներկայացված են բոլոր այն բանահյուսական նյութերը, որոնք կառուցվածքով, բովանդակության ամբողջականության և ժանրային-գեղարվեստական տեսակետից հնարավորինս անխաթար են:
2. Հավելված I, որտեղ ներկայացված են «Քրոնասուն ըսկեսուր», «Խաշփուշ աղերը», «Սոլլան ու կյողերը», «Ուսկէ խոնձորոն նաղըլը» բնագրերը՝ Գորիսի բարբառի գիտական տառադարձությամբ:
3. Հավելված II, որտեղ ներկայացված են բանասացների և բանահավաքների վերաբերյալ տեղեկություններ:
4. Ծանոթագրություններ, որտեղ հերթականությամբ տեղեկություններ են հաղորդվում բանահյուսական նյութերի գրառման հանգամանքների՝ ասացողի, տեղի, ժամանակի, հրատարակությունների մասին:
5. Բանահյուսական նյութերի ցանկ՝ ըստ ծագման վայրի, բանասացի և գրառողի:

Բառարան, որտեղ ընդգրկված են ժողովածուում հանդիպող բարբառային ու փոխառյալ դժվարըմբռնելի բառերի իմաստներն ու նշանակությունները: Բառերի ու դարձվածքների բացատրության ժամանակ նկատի է առնված սույն ժողովածուի տեքստերում պարունակող իմաստն ու առումը: Բառարանում օգտագործված են նաև բնագրերի էջատակերին դրված բանահավաքների բացատրությունները՝ հարկ եղած դեպքում ճշտելով ու լրացնելով դրանք: Սույն բառարանը պատրաստելիս օգտագործել ենք Սահակ վարդապետ Ամատունու «Հայոց բառ ու բանը» (Վաղարշապատ, 1912), Հրայր Աճառյանի «Հայերեն գավառական բառարանը» (Թիֆլիս, 1913), Կոստանդին Մելիք-Շահնազարյանի «Զուռնասմբլա» (Վաղարշապատ, 1907) գրքին կցված բարբառային բառերի բացատրական բառարանը, ինչպես նաև տաճկերեն-հայերեն, պարսկերեն-հայերեն բառարաններ ու բառացանկեր:

6. Հատուկ անունների ցանկեր, որոնցում ներկայացված են պատմական նշանավոր դեմքերի, սովորական անձնանունների, հեքիաթային-առասպելական արարածների, կենդանիների, իրերի գործիքների անունները, որոնք բանահյուսական նյութերում հանդես են գալիս որպես հերոսներ:

Մարդկանց ու կենդանիների հատկանիշները բնութագրող մակդիրներն ու մականունները նույնպես ընկալվում են իբրև հատուկ անուններ, եթե գրվում են մեծատառով: Տեղանունների ցանկը ընդգրկում է հեքիաթներում տեղ գտած պատմական ու հեքիաթային-առասպելական վայրերի անուններն ու անվանումները:

«Մյունիքի բանահյուսությունը» ժողովածուի նյութերը ինչպես լեզվաբարբառային, այնպես էլ գրառման մակարդակի ու վիճակի տեսակետից իրարից բավական տարբերվում են: Դա բացատրվում է բազմադարյան կոիվներով, մաքառումներով, ավերածություններով պայմանավորված տեղահանումներով, գաղթերով՝ ինչպես դեպի Մյունյաց երկիրը, այնպես էլ Մյունյաց երկրից դեպի հեռավոր վայրեր, ինչն էլ ազդելով բարբառի ընդհանուր վիճակի վրա՝ ավել կամ նվազ չափով տեղաշարժեր է առաջ բերել նրա մեջ: Այս բոլորով հանդերձ Մյունիքի հայությունը հերոսաբար մաքառել է օտար գավթիչների դեմ՝ պահպանելով իր գոյությունը և դրա հետ միասին նաև իր լեզվի անաղարտությունը, որն իբրև ինքնուրույն տեղական բարբառ գոյություն է ունեցել դեռևս հնագույն ժամանակներից, ինչի մասին վկայում են V դ. պատմիչ Կորյունը և VIII դ. մեծ քերական Ստեփանոս Մյունեցին:

Քանի որ ժողովածուն ամբողջապես նվիրված է Մյունիքի բանահյուսությանը, ուստի ստորև տրվում են Մյունիքի բարբառի առանձնահատկություններ՝ ըստ լեզվաբան Ալ. Մարգարյանի⁷², որը ներկայացնում է բարբառին բնորոշ լեզվաբանական մի շարք իրողություններ՝ հնչյունի հավելումը, անկումը, կրկնությունը, դրափոխությունը, տարբեր ժամանակաձևերի դրսևորումները, եղանակների կազմությունը:

Գորիսի բարբառի հնչյունական և ձևաբանական առանձնահատկությունները

Գորիսի (իմա՝ Մյունիքի) բարբառը պատկանում է *ում* ճյուղին և հայերենի՝ նեկայուն կենդանի ու մեծ հանրություն ընդգրկող բարբառներից է. խոսվում է ՀՀ Գորիսի շրջանի բոլոր գյուղերում ու Գորիս քաղաքում, ինչպես նաև հարևան՝ Միսիանի ու Ղափանի շրջանների սահմանամերձ որոշ գյուղերում: Հետևաբար՝ Գորիսի բարբառը խիստ տեղայնացված բարբառ է ու գտնվում է որոշակի աշխարհագրական միջավայրում: Այն համընկնում է պատմական Մյունյաց աշխարհի Հաբանդ գավառին՝ ներառելով նաև այնպիսի բնակավայրեր, որոնք պատկանել են մերձակա՝ Ծղուկ(ք) կամ Բաղք գավառներին: Այդ մասին մեզ հավաստի տեղեկություններ է հաղորդում XIII դ. պատմիչ Ստեփանոս Օրբելյանը⁷³: Մյունիքը, ինչպես հայտնի է, տարբեր ժամանակներում տարբեր տարածությունների ընդգրկմամբ սահմանակցվել է Այրարատ, Վասպուրական, Արցախ, Ուտիք և Գուգարք աշխարհներին: Բայց թե՛ աշխարհագրորեն և թե՛ տնտեսական-հասարակական կյանքի տեսակետից նա առավել սերտ ու անմիջական

⁷² Ալ. Մարգարյան, Գորիսի բարբառը, Երևան, 1975, էջ 3–10:

⁷³ Ստ. Օրբելյան, Պատմություն նահանգին Միսական, Թիֆլիս, 1910, էջ 516–517:

կապեր ու շփումներ է ունեցել Այրարատի և հատկապես Արցախի (Ղարաբաղի) հետ: Այս հանգամանքով են պայմանավորված, անշուշտ, մի կողմից՝ Արցախի (Ղարաբաղ), մյուս կողմից՝ Այրարատյան բարբառների նկատմամբ Գորիսի բարբառի երևան հանած լեզվական այն բազմաբնույթ ընդհանրություններն ու աղերսները, որ արտահայտված ենք տեսնում նրանց թե՛ հնչյունական, թե՛ ձևաբանական և թե՛ բառապաշարային համակարգերի մեջ: Վերոնշյալ ընդհանրությունների հիման վրա Գորիսի բարբառը Ղարաբաղի բարբառի մեջ է առնվել և դիտվել է իբրև դրա ենթաբարբառներից մեկը: Իրականում այս երկու բարբառները սերում են մի միասնական մայր բարբառից և այլ բան չեն, քան նրա երկու առանձին ճյուղերը, որոնք իրենց պատմական զարգացման ընթացքում ձեռք են բերել միմյանցից տարբեր առանձնահատկություններ և ինքնորոշվել իբրև ինքնուրույն և անկախ բարբառներ: Իսկ Գորիսի շրջանի գյուղերի խոսվածքները, մի ընդհանուր ամբողջություն կազմելով հանդերձ, մասնավոր դեպքերում միմյանց նկատմամբ երևան են հանում որոշակի տարբերություններ:

Գորիսի և Ղարաբաղի բարբառները՝ իրարից ամենից առաջ տարբերվում են հնչյունական-հնչյութաբանական մի շարք իրողություններով.

ա) Ղարաբաղի բարբառը ունի 10–14 ձայնավոր հնչյուններ, իսկ Գորիսի բարբառը՝ 9-ը:

բ) Ղարաբաղի բարբառում կան երկբարբառներ, որոնց թիվը 3-ից (*էյ, օյ, ուս*) հասցվում է 7-ի, (*ըէ//ըէ, ըհ, ըօ, ուէ, ուի, ու, օր*), մինչդեռ Գորիսի բարբառում դրանք իսպառ բացակայում են:

գ) Ղարաբաղի բարբառը հարուստ է քմային՝ *գ՛, կ՛, ք՛, հ՛, դ՛, լ՛, ծ՛* բաղաձայն հնչյուններով (օր.՝ *կ՛ծղ<գող, կ՛ալ<գալ, ծի՛լի<ածիլի, հանդ՛<անդ, իրիք՛նակ<արեգակն, լ՛իո<լու և այլն*), այնինչ Գորիսի բարբառում դրանցից առկա են և իբրև ինքնուրույն հնչույթներ են ըմբռնվում միայն *գ՛-ն, կ՛-ն, ք՛-ն*, որոնք գործածության նեղ ոլորտներ են ընդգրկում:

դ) Չայնավորները հաճախ կրում են տարբեր տեսակի փոփոխություններ, հմմտ.՝ *պէն-պինն (<բան), պանըէր-պանիր (<պանիր), խընամըէ-խընամի (<խընամի), վէգ-վիգ (<վիգ)* և այլն:

Գորիսի բարբառը Ղարաբաղի բարբառից տարբերվում է նաև ձևաբանական մի շարք իրողություններով.

ա) Եթե Ղարաբաղի բարբառում եզակի սեռական և տրական հոլովները կազմվում են ըէ վերջավորությամբ, որը սերում է գրաբարի *ի* ձևից և հատուկ է բուն դարաբաղի բարբառին (օր.՝ *փաղըէ, ըիկատըէ*), ապա Գորիսի բարբառը հիմնականում անփոփոխ է պահում այդ *ի* վերջավորությունը:

բ) Եթե Ղարաբաղի բարբառում անորոշ դերբայը և մի շարք այլ բառեր սեռական-տրական հոլովներում ստանում են *ու* վերջավորությունը (օր.՝ *ծիու, պըհէլու, մօկնու*), ապա Գորիսի բարբառում դրանք հոլովվում են *ի* հոլովմամբ:

գ) Եթե Ղարաբաղի բարբառում «*ություն*»-ով վերջացող վերացական բառերի սեռական-տրական հոլովը կազմվում է դարձյալ *ու* մասնիկով (օր.՝ *խըընքոթունու, մըծըթունու*), ապա Գորիսի բարբառում նման բառերը *ու*-ի դիմաց նույնպես *ի* են ունենում:

դ) Եթե Ղարաբաղի բարբառը ունի «ակասն»-ով ապառնի դերբայ, որով և կազմվում են սահմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակները (օր.՝ կ'իրըլական ըմ..., կ'իրըլական ի...), ապա Գորիսի բարբառում գործ է ածվում սովորական ապառնի դերբայը՝ խոսալու վէմ, խոսալու վի և այլն:

ե) Եթե Ղարաբաղի բարբառում «եմ» օժանդակ բայը սովորաբար ըմ, ըս, ա, ընք, ըք, ըն, ի, իր, ար, ինքյ, իքյ, ին, ապա Գորիսի բարբառում սովորաբար են, էս, ա//ւն, է (ն) ք, էք, էն, ի, իր, էր, ի (ն) ք, իք, ին ձևերով է հանդես գալիս:

զ) Եթե Ղարաբաղի բարբառում հարկադրական եղանակը հաճախ կազմվում է պիտի (<պիտի) եղանակիչի նաև *բեդմա//պեդրմա*, *պեդմա* ձևերով, ապա Գորիսի բարբառում այն ընդհանրապես կազմվում է կամ *պիտի//պեդի*, կամ *պեդեմ, պեդես, պեդի-պեդե(ն)ք, պեդեք, պեդեն, պիտի...պեդի(ն)ք...* եղանակիչներով:

է) Եթե Ղարաբաղի բարբառը արգելական հրամայականի համար գործածում է ետադաս *մըր-մըրք* (օր.՝ *մըռանալ մըր-մըռանալ մըրք*) և այլն, ապա Գորիսի բարբառը դրանց փոխարեն իր արգելական հրամայականը կազմում է գուտ (*մ)իլ-(մ)իք* ձևերով, ինչպես՝ *խոսու միլ-խոսու միք* և այլն:

Թե՛ն Ղարաբաղի և թե՛ն Գորիսի բարբառներում ամենաշատ տարածված ընդհանրություններից է *նան* համադասական շաղկապի գործածությունը, որը համապատասխանում է և, ու շաղկապներին և կապակցում է համադաս անդամներն ու նախադասությունները (օր.՝ Ասլան բալան *նան* Կարենը):

Ավելորդ չենք համարում մեջբերել Ակսել Բակունցի «Կյորես» վիպակի վերջաբանը, որը Գորիսի բարբառին ձոնված մի չքնաղ ներբող է. «Այնքան գեղեցիկ և հնչեղ էր Կյորեսի լեզուն: Նա մի չքնաղ գորգ էր՝ նախշերով և վարդ ծաղիկներով մի հին գորգ, ինչպես Մինայի աղջիկ ժամանակ գործած գորգը, որ փոված էր Հաստ Ներսես բեյի դահլիճում: Ինչքան հնանում և մաշվում էր, այնքան շքեղանում էին գորգի գույները և պատահում էր, որ Մինան, երբ այդ հին գորգը տանում էր գետը և լվանում էր, – Մինան լաց էր լինում և նրա հետ լաց էր լինում Կյորեսի լեզուն...»⁷⁴:

«Մյունիքի բանահյուսությունը» ժողովածուում առաջին անգամ ժամանակագրական տարբեր ընդգրկումներով, տպագիր և անտիպ ժանրերով մեկտեղվել և բանագիտության արդի չափանիշներով համակարգվել է տարածաշրջանի բանավոր ավանդությունը, որն իր զուգահեռներն ունի Հայաստանի ազգագրական տարբեր շրջանների բանահյուսության հետ և մեր ժողովրդի բանավոր ավանդության անբավ հարստության անքակտելի մասն է:

Մյունիքում կենցաղավարող բանահյուսության գրառումը, պահպանումը, հետագա ուսումնասիրությունն ու հանրահռչակումը հնարավորություն կընձեռի նաև Մյունիքի ոչ նյութական մշակութային ժառանգությունը ներկայացնել որպես միջազգային բանահյուսական մշակույթի անբաժանելի և օրգանական մաս:

Թամար Հայրապետյան

⁷⁴ Ակսել Բակունց, Երկեր, Երևան, 1986, էջ 423:

* * *

«Սյունիքի բանահյուսությունը» գրքի վրա աշխատել են Թ.Լ. Հայրապետյանը (ներածություն, պատմաաշխարհագրական ակնարկ, Սյունիքի պատմության հիշարժան տարեվեր, հեքիաթների միջազգային տիպերը՝ ըստ Հանս Յորգ Ութերի (ATU), Գ.Է. Մելիքյանը (ռուսերեն, անգլերեն ամփոփումներ), Ս.Շ. Առաքելյանը (բառարան, ծանոթագրություններ, անձնանունների և տեղանունների ցանկեր, բանահյուսական նյութերի ցանկ՝ ըստ ծագման վայրի, բանասացի, գրատողի), Ա.Ս. Կիրակոսյանը (բանահյուսական նյութերի մուտքագրում, բանասացների և բանահավաքների վերաբերյալ տեղեկություններ, համառոտագրություններ, օգտագործված գրականության ցանկ): Բանահյուսական նյութերը գրառելու, բնագրերը որոնելու, ընտրելու, դաս դասելու, համակարգելու և ժողովածուն կազմելու աշխատանքներն իրականացվել են թեմատիկ խմբի կողմից՝ Թ.Լ. Հայրապետյանի ղեկավարությամբ:

ՊԱՏՄԱԸՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ⁷⁵

Մեծ Հայքի իններորդ նահանգը՝ Սյունիքը (նաև՝ Սյունյաց աշխարհ, Սիսական, Ջանգեզուր), արևմուտքում և հյուսիս-արևմուտքում սահմանակցում էր Այրարատին, հյուսիս-արևելքում և արևելքում՝ Արցախին, հարավում և հարավ-արևելքում՝ Վասպուրականին: Ընդգրկում էր Սևանա լճի ավազանը, Արփա գետի ավազանի մեծ մասը, Որոտան և Հագարու գետերի ավազանները, Նախճավան և Երնջակ գետերի վերին հոսանքների շրջանները (մեծամասամբ մտնում է ներկայիս ՀՀ տարածքի մեջ):

Սյունիքի հնագույն պատմության «սկզբնաղբյուրների մեջ առանձնահատուկ տեղ են գրավում 5000–7000 տարի առաջ ստեղծված ժայռապատկերները: Դրանք հայտնաբերվել են 1966 թ. և գիտական պատշաճ մեկնաբանություններով ու լուսանկարներով հրապարակվել Գ. Հ. Կարախանյանի և Պ. Գ. Սաֆյանի կողմից 1970 թ.:

Հ. Ա. Մարտիրոսյանի և Հ. Ռ. Իսրայելյանի աշխատասիրությամբ 1971 թ. լույս ընծայվեցին Սյունիքի Գեղարքունիք գավառի ժայռապատկերները: Քարաքեկորների վրա հնադարյան մարդու գծած պատկերների թվացյալ պարզունակությանն ու մատչելիությանը հակառակ, գիտնականները գտնում են, որ դրանցում իմաստավորված են խորհրդանշական, տակավին անբացատրելի շատ գաղտնիքներ և կարոտ են շարունակական ուսումնասիրման»⁷⁶:

⁷⁵ Շարադրվել է ըստ Ստ. Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական», Թիֆլիս, 1910, Ղ. Ալիշանի «Սիսական», Տեղագրութիւն Սիւնաց աշխարհի» Վենետիկ, 1893, Ս. Տ. Երեմյանի «Ашхарацуйц» (Армянская география VII века) – выдающийся памятник географии и картографии древнего мира, Լրաբեր հասարակական գիտությունների, 1968, № 5, էջ 43–60, Թ. Հակոբյանի «Սյունիքի թագավորությունը», Երևան, 1966, Գր. Գրիգորյանի և Ս. Հախվերդյանի «Սյունիքի պատմություն», Երևան, 2001 աշխատությունների և «Հայկական սովետական հանրագիտարանի» 10-րդ հատորի, Երևան, 1984:

⁷⁶ Գր. Գրիգորյան, Ս. Հախվերդյան, Սյունիքի պատմություն, էջ 5:

Միսիանից շուրջ 3 կմ հեռավորության վրա է գտնվում ժողովրդի կողմից Ջորաց քարեր կոչվող մի վայր, որը մ.թ.ա. 2-րդ հազարամյակի մեգալիթյան հնավայր է, ուր պահպանվել են պարիսպների ու կացարանների մնացորդներ: Պատմական հուշարձանը հաճախ համեմատվում է անգլիական հանրահայտ Սթոունհենջի հետ: Այն դեռևս լիովին չի ուսումնասիրվել⁷⁷:

Ըստ հին հայկական «Աշխարհացոյցի», Սյունիքի գավառներն են՝ Երնջակը, Ճահուկը, Վայոց ձորը, Գեղաքունիքը (Գեղարքունիք), Սողքը, Աղահեճքը, Ծղուկը (Ծղուկք), Հաբանդը, Բաղքը, Չորքը, Արևիքը, Կովսականը: Որպես Մեծ Հայքի սահմանային «աշխարհ», ունեցել է բազմաթիվ բերդեր ու ամրոցներ, որոնցից նշանավոր էին՝ Բաղաբերդը, Բաղակու քարը, Երնջակը, Հայրաբերդը, Գրիամը, Մայրին, Շլորուտը, Կքերերդը (Կաքավաբերդ), Բարկուշատան, Անդուկաբերդը, Բղենոն, Հանբաղան (կամ՝ Չագենձորի), Քաշաթաղին, Վանդաբերդը, Խոժոռաբերդը, Որոտսը, Սյունյացը, Շահապոնքը, Հալիձորը և այլն:

Մ.թ.ա. I հազարամյակում Սյունիքի տարածքում բնակվել են բազմաթիվ ցեղեր, որոնք մ.թ.ա. VIII դ. սկզբից աստիճանաբար ներառնվել են Ուրարտու պետության քաղաքական ազդեցության ոլորտը: Ուրարտուի արքաները Սյունիքի տարածքում ծավալել են շինարարական աշխատանքներ, հիմնել բերդեր, քաղաքներ, ջրանցքներ: Մ.թ.ա. VI դ. սկզբից Սյունիքի տարածքը մտել է Երվանդունիների հայկական թագավորության, իսկ մ.թ.ա. V–IV դդ.՝ Աքեմենյան Պարսկաստանի 18-րդ սատրապության մեջ: Մ.թ.ա. IV դ. վերջին քառորդին՝ հունա-մակեդոնական արշավանքներից և Աքեմենյան աշխարհակալության քայքայումից հետո, Սյունիքի տարածքն ընդգրկվել է անկախությունը վերականգնած Երվանդունիների հայկական թագավորության, իսկ մ.թ.ա. 189 թ.-ից՝ Մեծ Հայքի Արտաշեսյանների թագավորության կազմում:

Մեծ Հայքում Արշակունիների հաստատումից հետո, երբ Տրդատ Ա (54–88 թթ.) թագավորը երկիրը ենթարկել է նոր վարչական (ըստ «աշխարհների») բաժանման, ձևավորվել է Սյունիքը:

Սյունիքի իշխանությունը եղել է Մեծ Հայքի ամենահզոր նախարարությունը. ըստ *Ջորանամակի*՝ մարտադաշտ է դուրս բերել մինչև 19400 հեծյալ, իսկ ըստ սահակյան *Գահնամակի*՝ Սյունիքի իշխանն զբաղեցրել է առաջին գահը: Սյունիքի իշխանները վարել են կարևոր պաշտոններ, եղել Հայոց բանակի արևելյան զորաթևի հրամանատարներ, առժամանակ զբաղեցրել Աղձնիքի բղեշխական պառոտը:

Մեծ Հայքի թագավորության 387 թ.-ի բաժանումից հետո Սյունիքը ենթարկվել է Սասանյան Պարսկաստանի գերիշխանությանը, հայ Արշակունիների թագավորության անկումից (428 թ.) հետո մտել է Մարգապանական Հայաստանի կազմի մեջ: 440-ական թթ. Սյունիքի իշխան Վասակ Սյունին նշանակվել է Հայոց մարզպան: Չնայած վերջինս Վարդան Մամիկոնյանի ապստամբության ժամանակ համագործակցել է Պարսից արքունիքի հետ, սակայն Սյունիքի բնակչության մեծ մասը մասնակցել է ազատագրական պայքարին: 571 թ.-ին Սյունիքը

⁷⁷ Նույն տեղում, էջ 7:

հանվել է Հայաստանի մարզպանության կազմից և, որպես առանձին շահիր, մտցվել Ատրապատականի մեջ: Վարչական այս կացությունը գոյատևել է մինչև արաբական արշավանքները (640-ական թթ.):

Սյունիքը եղել է միջնադարյան Հայաստանի մշակութային խոշոր կենտրոն: IV դ. վերջին Սյունիքի Երնջակ գավառում իր աշակերտների հետ ճգնել է Մեսրոպ Մաշտոցը: Վերջինս Սյունիքի արևմուտքում և Գողթնի շրջանում ծավալել է քարոզչական աշխատանք, իսկ հայոց նոր գրերի ստեղծումից հետո՝ բուռն լուսավորական գործունեություն, Վաղինակ և Վասակ Սյունի իշխանների աջակցությամբ բացել դպրոցներ: V դ. սկզբին նշանավոր էր Սյունիքի եպիսկոպոս Անանիան (Անանիա Թարգմանիչ), VI դ.՝ Պետրոս Սյունեցին, VII դ. սկզբին՝ Մաթուսաղա քերթողը, VIII դ.՝ Ստեփանոս Սյունեցի Բ-ն և ուրիշներ: Հայոց եկեղեցու կյանքում կարևոր դեր է խաղացել Սյունիքի եպիսկոպոսական թեմը, որը կաթողիկոս Ներսես Ա Մեծից IV դ. կեսին ստացել է մետրոպոլիտության իրավունք, ենթակայության տակ ունենալով 12 եպիսկոպոսություն:

VIII դ. սկզբից՝ արաբական տիրապետության ներքո, Սյունիքը մտել է Արմինիա երկրամասի կազմի մեջ: Արաբական տիրապետության շրջանում (VIII–IX դդ.) Սյունիքի իշխանությունը կարողացել է պահպանել գոյությունը, նույնիսկ զգալիորեն ուժեղացել, զարգացել են ավատատիրական հարաբերությունները:

Սյունյաց տոհմի սեպուհները, տիրելով այս կամ այն գավառը, դարձել են ժառանգատեր իշխաններ, կոչվել գահակալ: Իսկ նախարարը, որ պահպանել էր մյուսների նկատմամբ քաղաքական իշխանությունը՝ ստացել է գահերեց անվանումը:

821 թ.-ին Սյունիքի մեծ մասը պատկանել է Վասակ Սյունի իշխանին: Նույն թվականին Սյունիքը ենթարկվել է արաբական զորքերի հարձակմանը, սակայն Վասակ Սյունի իշխանը Խուրամյան շարժման առաջնորդ Բաբեկի օգնությամբ դուրս է քշել նրանց: Վասակ Սյունու մահից հետո նրա ավագ որդին՝ Փիլիպպեն, դարձել է գահերեց իշխան, իսկ կրտսերը՝ Սահակը, հիմք դրել նոր գահակալ իշխանության, որ հայտնի է «Հայկագուն» անունով: 826–827 թթ.-ին խուրամյան զորամասերն ահավոր ավերածության են ենթարկել Բաղքն ու Գեղարքունիքը, կոտորել բնակչությունը:

Հայ Բագրատունիների թագավորության ստեղծումից (885 թ.) հետո Սյունիքի իշխանությունները մտել են նրա կազմի մեջ: X դ. սկզբին Սյունիքի գահերեց իշխանները պայքարել են՝ Նախճավան գավառն իրենց տիրույթներին միացնելու համար, 903 թ.-ին նույնիսկ ապստամբել Հայոց թագավոր Սմբատ Ա (890–914 թթ.) Բագրատունու դեմ: 905 թ.-ից հետո, հզորացող Արծրունիներին թուլացնելու նպատակով, Սմբատ Ա Բագրատունին Նախճավանը վերադարձրել է Սյունիքի իշխանությանը: X դ. 70–80-ական թթ. Սյունիքի քաղաքական կենտրոնն աստիճանաբար տեղափոխվել է հարավ և գահերեցությունն անցել է Բաղքի գահակալ Սմբատ Ա-ին, որն օգտվելով Բագրատունիների Հայոց թագավորության թուլացումից՝ 987 թ.-ին Սյունիքը հռչակել է թագավորություն: 1103 թ.-ին սելջուկյան թուրքերը ավերել են Սյունիքի Կապան մայրաքաղաքը: 1170 թ.-ին

գրավել և ավերել են Բաղաբերդը, ոչնչացրել կամ ավարի մատնել հարստությունները, այդ թվում՝ 10 հազար ձեռագիր մատյան: Բաղաբերդի անկումով վերացել է նաև Սյունիքի թագավորությունը:

XIII դ. սկզբին, Զաքարյանների գլխավորությամբ, Սյունիքը ազատագրվել է սելջուկյան տիրապետությունից: Սյունիքում հաստատվել են երկու նոր իշխանական ընտանիքներ՝ Օրբելյանները և Խաղբակյանները: 1230-ական թթ. նրանք ճանաչել են մոնղոլական գերիշխանությունը:

IX դարից Սյունիքն ապրել է մշակութային վերելք: 895 թ.-ին հիմնադրվել է Տաթևի վարդապետարանը, որը X–XII դդ. դարձել է համահայկական մշակութային կենտրոն: Այստեղ դասավանդվել են աստվածաբանություն, փիլիսոփայություն, քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն, աստղաբաշխություն, տոմարագիտություն, երկրաչափություն, թվաբանություն, երաժշտություն: Հռչակավոր է եղել նաև 1280-ական թթ. հիմնադրված Գլաձորի համալսարանը (անվանել են «Երկրորդ Աթենք»), որն ունեցել է 3 ուսումնարան կամ մասնաճյուղ (երաժշտության, գրչության արվեստի, հասարակական-քնական գիտությունների): Գլաձորի համալսարանի սաներից էին՝ պատմիչ Ստեփանոս Օրբելյանը, Մոմիկ վարդապետը, Տիրատուրը, Թորոս Տարոնացին, Ավագը և այլք: Գլաձորի համալսարանի սան Հովհան Որոտնեցին 1373 թ.-ին հիմնել է Տաթևի համալսարանը, որին մեծ փառք են բերել հենց ինքը և Գրիգոր Տաթևացին: Միջնադարում հայտնի են եղել նաև Մաքենյաց, Ցախաց քարի, Սպիտակավորի, Աստվածածնի, Նորավանքի, Բոլորաբերդի, Եղեգիսի և այլ գրչության կենտրոնները: Սյունիքի ճարտարապետական հուշարձաններից նշանավոր են՝ Տաթևի Վանքը, Նորավանքը, Վահանավանքը, Ցախաց քարի, Մաքենյաց, Շողվազա, Սևանա կղզու, Սյունի, Արատեսի վանքերը, Սուլեմա կաթվանատունը և այլն:

1385 թ.-ին Սյունիքը ասպատակել են Ոսկե Հորդայի Թողթամիշ խանի զորքերը, 1387 թ.-ին՝ Լենկթեմուրի հրոսակները: 1403 թ.-ին Սմբատ և Բուրթել Օրբելյանները, նրանց եղբորորդի Տարսայիճը ձերբակալվել են և ուղարկվել Սամարղանդ, սակայն շուտով ազատվել և վերահաստատվել են իրենց տիրույթներում: 1410 թ.-ին կարակոյունլու թուրքմենների առաջնորդ Կարա-Յուսուֆը բռնագրավել է Սմբատ Օրբելյանի տիրույթները: Սմբատ Օրբելյանի թոռը՝ Բեշքենի որդի Ռուստամը, կարակոյունլու Իսքանդարի արքունիքում հասել է պետական բարձր պաշտոնների, վերականգնել Օրբելյանների իշխանության տարածքային ամբողջությունը: Սակայն Լենկթեմուրի որդի Շահռուխի երրորդ արշավանքի (1435 թ.) ժամանակ Սյունիքը ավերվել է:

1555 թ.-ի Ամասիայի պայմանագրով Սյունիքը անցել է Սեֆյան Պարսկաստանին, 1590 թ.-ի հաշտությամբ՝ Օսմանյան կայսրությանը, 1639 թ.-ի Կասրե-Շիրինի պայմանագրով՝ կրկին Սեֆյան Պարսկաստանին: XVI–XVII դդ., չնայած Սեֆյան ծանր տիրապետությանը և հաստատված մահմեդական տարրին, Սյունիքում գոյացել և ամրապնդվել են հայ ավատատիրական մանր իշխանություններ: Նշանավոր էին Մելիք-Շահնազարի իշխանությունը՝ Գեղարքունիքում, Մելիք-Հայկազինը՝ Քաշաթաղում, Մելիք-Սաֆրազինը՝ Անգեղակոթում և այլն:

Սյունիքի մելիքները մասնակցել են Էջմիածնի 1677 թ.-ի ժողովին, իսկ Մելիք-Իսրայելի որդի Իսրայել Օրին ազատագրական գործունեություն է ծավալել, եղել է Արևմտյան Եվրոպայում և Ռուսաստանում, հիմք դրել հայ-ռուսական հարաբերություններին:

1720-ական թթ. Սյունիքի հայությունը ապստամբել է պարսկական տիրապետության դեմ: Ապստամբության գլուխ անցած Դավիթ Բեկը ազատագրել է հարավային Սյունիքը (Կապանը) և հիմք դրել ինքնուրույն իշխանության: Նա հաջող կռիվներ է մղել նաև օսմանյան թուրքերի դեմ, որոնք 1725–1727 թթ.-ին փորձել են գրավել Սյունիքը: Այդ կռիվներում աչքի է ընկել հատկապես Դավիթ Բեկի իշխանության կենտրոն Հալիձոր ամրոցը: Դավիթ Բեկի ազատագրական պայքարի ընթացքում (1722–1730 թթ.) Սյունյաց իշխանության կենտրոններ են դառնում Շինուհայրը՝ Գորիսում, ապա Հալիձորը՝ Կապանում, իսկ Մխիթար Սպարապետի օրոք Խնձորեսկը՝ կրկին Գորիսում: 1730 թ.-ին սյունեցիների շարժումը անկում է ապրում:

Սյունիքի տարածքը XVII դ. և XVIII դ. կեսին եղել է տարբեր վարչական միավորումների կազմում:

1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո Սյունիքի ամբողջ տարածքը՝ Արևելյան Հայաստանի հետ, միացվել է Ռուսաստանին: 1830-ական թթ. Սյունիքի արևմտյան շրջանները (Գեղաքունիք, Սողք, Վայոց ձոր, Ճահուկ, Շահապոնք, Երնջակ) մտել են *Հայկական մարզի*, արևելյան շրջանները (Ծղուկք, Աղահեճք, Հաբանդ, Ձորք, Բաղք, Արևիք)՝ Ղարաբաղի պրովինցիայի մեջ: 1849 թ., երբ ստեղծվել է Երևանի նահանգը, նրա մեջ են մտել Սյունիքի Գեղաքունիք, Սողք, Վայոց ձոր, Ճահուկ, Շահապոնք, Երնջակ, Ձորք, Բաղք, Արևիք գավառները և Կովսականի մի մասը: Ծղուկքը, Աղահեճքը, Հաբանդը և Կովսականի մյուս մասը մտել են Շամախու նահանգի մեջ: XIX դ. վերջին և XX դ. սկզբին Սյունյաց լեռներից արևմուտք գտնվող գավառները մտել են Երևանի նահանգի, իսկ արևելք ընկածները՝ Ելիզավետպոլի նահանգի մեջ: Արևելյան Հայաստանի մյուս երկրամասերի հետ Սյունիքը նույնպես ապրել է տնտեսական և մշակութային վերելք:

Հին Գորիսը, Կյորեսը⁷⁸ գյուղ է, որը գտնվում է Սյունիքի Հաբանդ գավառում, Գորիս գետի միջին հոսանքի ձախ ափին, Լաստի կալ (Խուրթ) լեռան հյուսիս-արևմտյան լանջերն ակոսող ձորում: Գորիսը որոշ ուսումնասիրողներ կապում են Ս. Օրբելյանի (XIII դ.) հիշատակած Գորու և Գորայք գյուղերի անունների, ոմանք էլ՝ այժմյան Գորիսից 2 կմ արևմուտք գտնվող Կյուփեր կոչված վայրի անվան հետ: Մինչև 1841 թ.-ը Գորիսը մտնում էր Տաթևի մահալի մեջ, այնուհետև դարձավ նրա արևելյան հատվածի գյուղերից կազմված՝ Գորիսի գավառամասի կենտրոնը: 1868 թ. վարչական բաժանմամբ Գորիսը դարձավ Ելիզավետպոլի նահանգի Ջանգեզուրի գավառի կենտրոնը: Սակայն ձորի սահմանափակ

⁷⁸ Այս մասին մանրամասն տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 3, Երևան, 1977, էջ 166–167: Տե՛ս նաև՝ Գր. Գրիգորյան, Ս. Հախվերդյան, Սյունիքի պատմություն, Երևան, 2001, էջ 18–19:

տարածքը խոչընդոտում էր նրա զարգացմանը, և 1870 թ.-ին գյուղի դիմաց, գետի աջ կողմի հարթավայրում հիմնվեց Գորիս քաղաքը, որը և ստանձնեց Գորիսի վարչական դերը: Ներկայումս Գորիսը մտնում է քաղաքի շրջագծի մեջ:

1921–1930 թթ. Գորիսը եղել է ՀՍՍՀ Զանգեզուրի գավառի, ապա Գորիսի շրջանի վարչական կենտրոնը: Մինչև 1970 թ.-ը եղել է շրջանային, այնուհետև հանրապետական ենթակայության քաղաք: Բարձրաբերձ ժայռերը, բրգաձև գագաթները, կիրճերը, ապառաժ քարափները, քարայրերն ու քարանձավները, Շորին, Թանգուն, Ղաթրինի, Չոփչուն, Դրնգանի անուններով խոր ձորերը յուրօրինակ, անկրկնելի տեսք են տալիս ռելիեֆին:

Մարդկային կյանքը Գորիսի հովտում կազմավորվել է շատ վաղ: Այդ են վկայում պեղումների ժամանակ հայտնաբերված բնակավայրերը, գործիքները, իրերը: Հնադարյան դամբարաններ ու կացարաններ են պեղվել Խանաձախ, Ակներ, Տեղ, Խոտ, Հարժիս գյուղերում, ինչպես նաև Գորիս քաղաքի շրջակայքում: Տեղ գյուղի պեղումների շնորհիվ Գորիսի թանգարանն առաջին անգամ ձեռք է բերել վանակատե (օբսիդիան) նետասլաքներ և քերիչ: Հնագույն բնակավայրերից է Գորիսից հյուսիս ընկած՝ «Գյավուրի բներ» անունով վայրը: Տարբեր ժամանակներում բնակատեղի են եղել նաև Խաչեր, Ենգիջին ձոր, Մունդարա, Չըռ-Չըռ և այլ վայրեր: Սակայն քաղաքի ներկայիս տարածքում դարեր շարունակ անընդմեջ պահպանված բնակավայրը Գորիս գյուղը կամ Հին Գորիսն է, որն իր անունը փոխանցեց XIX դ. 70–80-ական թթ. բարձրացող Զանգեզուրի գավառական կենտրոնին:

Զանգեզուր տեղանունն ավանդաբար ստուգաբանել են՝ կապելով հայկական Չագիկ նահապետի տիրույթ Չագեճորի կամ Չագկաճորի անվան ձևափոխումների կամ հինավուրց մի վանքի վիթխարի զանգի ուժեղ ձայնի ստեղծած տպավորության հետ: Զանգեզուրը համարվել է նաև մ. թ. ա. VII դ. այստեղ ներխուժած սկյութացիների (սակերի) անվան փոփոխված ձև (սակ-ձագ-Չագեճոր-Զանգեզուր):

Ավանդության համաձայն՝ *Զանգեզուր* անվանումն սկսել է օգտագործվել Լենկ-Թեմուրի արշավանքներից հետո: Մեհրի անունով մի հայ իշխան Լենկ-Թեմուրին առաջարկում է իր օգնությունը՝ ասելով, թե նա չի կարողանա գրավել Սյունիքը, քանի դեռ Խոտ գյուղում կա մեծ զանգը, որով վտանգի դեպքում զգուշացնում են մարդկանց: Լենկ-Թեմուրը ոսկի ու իշխանություն է խոստանում դավաճանին, եթե նա լռեցնի զանգը: Մեհրին ու իր մարդիկ գիշերը զանգի տակ կրակ են վառում ու կտրում նրա ձայնը: Առավոտյան Լենկ-Թեմուրի զորքերն անցնում են Արաքսը և ներխուժում Սյունիք: Զանգի միջոցով հնարավոր չի լինում զգուշացնել մարդկանց, և Լենկ-Թեմուրը մեկ օրվա ընթացքում գրավում է Սյունիքը: Մարդիկ հետո հարցնում են, թե ինչ էր եղել զանգին: Նրանց պատասխանում են. «Զանգը զուր է, զանգը զուր է...»: Դրանից հետո տեղանքը սկսել են կոչել Զանգեզուր⁷⁹:

⁷⁹ Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, № 386, էջ 149 (տարբերակներ՝ էջ 149–150):

Զանգեզուրը գտնվում է ՀՀ հարավ-արևելյան մասում, Որոտան, Ողջի և Մեղրի գետերի ավազանում: Արևմտյան մասով, մոտ 30 կմ երկարությամբ, ձգվում է Զանգեզուրի լեռնաշղթան, որի ամենաբարձր գագաթը Կապուտջուղն է (3906 մ): Այս լեռնաշղթայից արևելք գտնվում է Սյունիքի բարձրավանդակը, որը տարածվում է մինչև Ղարաբաղի լեռնաշղթան: Սա ոչ միայն ՀՀ, այլև Անդրկովկասի ամենաբարձր սարահարթն է (միջին բարձրությունը՝ մոտ 2500 մ), որտեղ կան հանգած հրաբուխներ (Մեծ Իշխանասար՝ 3552 մ, Ծղուկ, Գյուլի Ձազենձորի, Բազենք): Բարձրավանդակը խիստ մասնատված է, գետերն ու գետակները կտրատելով լավային ծածկույթը՝ առաջացրել են կիրճեր և ձորեր: Նշանավոր է Հալիձորի կիրճը: Տաթև գյուղի մոտակայքում է գտնվում «Սատանի կամուրջը»:

Գորիսը եղել է նաև Գարեգին Նժդեհի հռչակած անկախ Լեռնահայաստանի մայրաքաղաքը: Խորհրդային իշխանության առաջին տարիներին (1920–1930 թթ.) ևս մարզերի թվում ստեղծվել է Սյունիքի մարզը՝ Կապան մարզկենտրոնով: Մարզի մեջ մտնում են Գորիսի, Սիսիանի, Կապանի և Մեղրու նախկին շրջանները: Պատմական Սյունիքից անջատվել և առանձին մարզեր են դարձել Գեղարքունիքը և Վայոց ձորը: ՀՀ Սյունիքի մարզն ընդգրկում է 4505 կմ² տարածք, ուր ներկայումս ապրում է 162000 մարդ:

ՍՅՈՒՆՅԱՅ ԱՇԽԱՐՀ⁸⁰

«Սյունիք»-«Միսական» բառերը էթնիկական ծագմամբ են բացատրել Դր Լագարդը, Հ. Հյուբշմանը, Ն. Ադոնցը, Ն. Մառը, Գ. Ղափանցյանը, Ար. Ղարիբյանը և ուրիշներ: Ըստ ուսումնասիրողների, «Միսական» եզրույթը կազմված է ՄԻՍ-SIS բառահիմքից և ԱԿԱՆ հավաքական իմաստ արտահայտող պարսկերեն ձևույթից: Վերջին ուսումնասիրողներից Ս. Ումառյանը ՄԻՍ-ը բխեցնում է ԾԵՍ կամ ԶՈՀ հայասերեն բառից: Նա գրում է. «... Սիունի (Միսիունի) Միսիան, Միսական և սիս արմատով մյուս տեղանունները նախնական ծագումով արտահայտել են մեկ իմաստ՝ ծիսարան կամ զոհարան»:

Մեծանուն հայագետ Ղ. Ալիշանը ՄԻԻՆԻ-ն մակաբերում է ՍԵԻՈՒՆԻ բառից՝ այն կապելով Սևորոյաց աշխարհի հետ (Հյուսիսային Հայաստան): Ժողովրդական պարզ ստուգաբանությամբ՝ ՄԻԻՆԻՔ անունը ծագել է «սին» բառից՝ հոգնակիակերտ Ք ածանցով, այսինքն՝ նշանակում է սյուներ: Բայց, այս դեպքում պետք է լիներ ՄԻԻՆՔ և ոչ ՄԻԻՆԻ+Ք: Ուրեմն՝ բառի նախասկզբնական ձևը եղել է սինի, ինչպես մեզ ավանդվել են ՏԵՂԻ, ՊԱՏԱՄԽԱՆԻ, ԱՐԾՈՒԻ բառերը:

Մեպազիր (ուրարտական) արձանագրություններում հանդիպում է «Սուինա» ձևը՝ արևկող երկիր նշանակությամբ, որից և ծագում է «Սևանը»՝ արևային լիճ, ծով:

⁸⁰ Շարադրանքը՝ ըստ Գր. Գրիգորյանի և Ս. Հախվերդյանի «Սյունիքի պատմություն» գրքի, էջ 10–17:

Գր. Գրիգորյանն ու Ս. Հախվերդյանը հակված չեն կարծելու, թե «Սյունիքը» առաջացել է Սյունի կոչվող առանձին ցեղախմբի անունից: Ըստ նրանց՝ ընդունելի մոտեցում չէ, երբ ամեն մի դեռևս անբացատրելի բառ մեկնաբանում են «էթնիկական ծագմամբ»: Պետք է ուսումնասիրել բարբառների, ենթաբարբառների, տեղական խոսվածքների մթամած շերտերը: Օրինակ՝ մինչև վերջերս Կապանի շրջանի Աչաղու գյուղանունը կարծում էին առաջացել է թուրքերենից, սակայն ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դա հայերեն բառ է՝ Աչաղու, որ նշանակել է ԲԱՐԻ, ՄԵՂՄ ԱԶՔ և այլն:

Մեծ Հայքի Սյունիք նահանգի գավառները՝ «Աշխարհացոյցի» հերթակա- նությամբ.

1. ԵՐՆՋԱԿ

Այս գավառը տարածվում էր Երնջակ (այժմ՝ Նախիջևանի ԻՀ-ում) գետի ավազանում: Սահմանակից էր Գողթն, Ծղուկ, Ճահուկ գավառներին և Նախիջևանին: Գավառի հարավային սահմանը հասնում էր մինչև Արաքս գետը: Հայտնի էր Երնջակ բերդը, որը եղել է Սյունյաց իշխանների գլխավոր ամրոցներից մեկը: Տեղադրությամբ համապատասխանում է Նախիջևանի ԻՀ Ջուլֆայի շրջանին: Ուներ 600 կմ² տարածք, 30 բնակավայր և Տաթևի վանքին վճարում էր 360 դահեկան տասնորդ հարկ:

2. ՃԱՀՈՒԿ

Գավառն ընկած էր Ճահուկ (այժմ՝ Ջահրի) և Շահապոնք (այժմ՝ Շահբուզ) գետերի հովիտներում: Տարածքը կազմում էր 1130 կմ² և տեղադրությամբ համապատասխանում է Նախիջևանի ԻՀ Շահբուզի շրջանին: Սահմանակից էր Վայոց ձորին, Ծղուկին, Երնջակին, Նախիջևանին և Այրարատին: Հայտնի էր տակավին 6-րդ դարում կառուցված Շահապոնիք բերդը, որի ավերակները գտնվում են Նախիջևանի ԻՀ Շահբուզ բնակավայրի մոտ: Գավառն ուներ 48 հարկատու գյուղ և Տաթևի վանքին վճարում էր 543 դահեկան հարկ:

3. ՎԱՅՈՑ ՁՈՐ

Սյունիքի առավել նշանավոր ու ընդարձակ գավառներից էր: Ըստ պատմիչ- ներ Մովսես Կաղանկատվացու և Ստեփանոս Օրբելյանի, Վայոց ձոր անունն առաջացել է 735 թ. հուլիսի 21-ին այս տարածքում տեղի ունեցած կործանարար երկրաշարժից, երբ Մոզ քաղաքն իր 10000 բնակիչներով անցավ գետնի տակ: Այժմ էլ Մոզի ավերակները դիտվում են Մալիշկա գյուղից մինչև Վայքի շրջկենտրոն ձգվող մայրուղու երկու կողմերին: Այս վարկածը գիտական հենք չունի, քանզի Վայոց ձոր անունը հիշատակվում է դեռևս 5-րդ դարից: Գրավում էր 2350 կմ² տարածք և ընդգրկում Արփա գետի վերին ու միջին հոսանքները: Սյունիքի տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքում խաղացել է խոշոր դեր: Վայոց ձորի Եղեգիս ավանը 9–13-րդ դարերում եղել է Սյունյաց իշխանների նստավայր-մայրաքաղաքը: Վանական համալիրներից հայտնի են Գնդեվանքը, Գլաձորը, Թանահատը և հատկապես Ամաղուի Նորավանքը, որ թաղված է Ստ. Օրբելյանը: Գավառն ուներ 92 բնակավայր (ըստ Ղևոնդ Ալիշանի՝ 90), Տաթևի վանքին վճարում էր 837 դահեկան հարկ:

4. ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ

Ընդգրկում էր Գեղամա կամ Սևանա լճի ավազանի գերակշիռ մասը, ուներ 1735 կմ² տարածք: Այդ տարածքի մեջ մտնում են ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի (Կամո), Մարտունու շրջանները և Սևանի շրջանի մի մասը: Սահմանակից էր Այրարատին, Գուգարքին, Ուտիքին, Սոթքին: Հայտնի էր Սևանա կղզին՝ վանքով և ամրոցով: Միջնադարում գավառին տիրում են նախ Բագրատունիները, ապա՝ Զաքարյան, իսկ հետո՝ Դովիյան իշխանները: Հայտնի են Հավուց թառ և Մաքենյաց վանքերը: Ուներ 47 գյուղ և Տաթևին վճարում էր 509 դահեկան հարկ:

5. ՍՈՌԹՔ

Սյունիքի ծայրամասային գավառներից էր, համապատասխանում էր ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի շրջանին: Գավառանունից է ծագում Զողը, որը հայտնի է ոսկու հանքերով: Կլիման այստեղ խիստ է, և ըստ Օրբելյանի, գավառանունն առաջացել է դաժան ճմեռային ցրտերի պատճառով՝ «Ի դառնաշունչ բքմանէ գաւառս կոչեցաւ Սողք»: Ուներ 55 բնակավայր և Տաթևին վճարում էր 594 դահեկան հարկ:

6. ԱՂԱՀԵՃՔ

Զբաղեցնում էր Աղավառ գետի վերին հոսանքին հարակից շրջանները: Տարածքը, որ կազմում էր 1402 կմ², համապատասխանում էր Ադրբեջանի հանրապետության նախկին Լաչինի՝ ներկայումս ԼՂՀ Քաշաթաղի շրջանին: Տաթևի եկեղեցական հարկացուցակում նշված է 43 հարկատու գյուղ: Այստեղ է գտնվում նշանավոր Ծիծեռնավանքը: Հայտնի է Խոժոռաբերդ ամրոցը: Սահմանակից էր Ծղուկ, Հաբանդ և Արցախի Ծար գավառներին: Տաթևի վանքին վճարում էր 389 դահեկան հարկ:

7. ԾՂՈՒԿ

Սյունիքի կենտրոնական մասում գտնվող ամենահայտնի գավառներից է: Գրավել է 1950 կմ² տարածք: Ընդգրկում է ՀՀ Սյունիքի մարզի Միսիանի շրջանը և Գորիսի շրջանի արևմտյան մասը: Օրբելյանի գավառացուցակում հիշատակված է իբրև առաջին իշխանանիստ և եպիսկոպոսանիստ կենտրոն: 4–9-րդ դարերում Ծղուկի Շաղատ քաղաքավանը եղել է Սյունիքի մայրաքաղաքը և հոգևոր գահանիստը, ուր գործել է նաև վարդապետարան: Պատմական նշանավոր վայրերն են Որոտնավանքը և բերդը, Սյունի վանքը և բերդը, Տաթևը: Ունեցել է 75 բնակավայր ու վճարել 643 դահեկան հարկ:

8. ՀԱԲԱՆԻ

Գտնվում էր Սյունիքի կենտրոնում և սահմանակից էր Ծղուկ, Աղահեճք, Բաղք գավառներին և Արցախին: Հարավային սահմանը հասնում էր մինչև Արաքս գետը: Զբաղեցնում էր 1325 կմ² տարածք, որի մի մասը համընկնում է ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի շրջանին: Օրբելյանի հավաստմամբ, Միսակի սերնդից Ջազ նահապետը այստեղ հիմնել է նշանավոր Ջազեճորի կամ Հաբանդա բեր-

դը, որը եղել է Վարարակն գետի վերին հոսանքում: Հաբանդն ուներ 59 բնակավայր, վճարել է 618 դահեկան հարկ: Հայտնի բնակավայրերից են Հալիձորը, Շինուհայրը, Խնձորեսկը, Գորայք-Գորիսը: 14–15-րդ դարերում Հաբանդ գավառանունը փոխարինվում է Ձագեձորով, որն էլ հնչյունափոխվելով՝ դառնում է Զանգեզուր:

9. ԲԱՂԲ

Զբաղեցրել է 925 կմ² տարածք: Սահմանակից էր Կովսականին, Ծղուկին, Հաբանդին, Ձորքին: Եկեղեցական հարկացուցակում գավառը բաժանվում է երկու մասի, նշվում է մյուս Բաղքը կամ Քաշունիքը: Տարածքն ընդգրկում էր ՀՀ Սյունիքի մարզի Կապանի շրջանը: Կապանի թագավորությունը կոչվել է նաև Բաղաց թագավորություն: Ունեցել է հայտնի բերդեր՝ Անդոկա, Պահու և այլն: Նշանավոր հոգևոր կենտրոնն էր Բղենո Նորավանքը՝ կառուցված 936 թ.: Ուներ 41 բնակավայր, վճարում էր 444 դահեկան հարկ:

10. ՁՈՐԲ

Սյունիքի ամենափոքր գավառն էր՝ 525 կմ² տարածքով: Զբաղեցնում էր Ողջի գետի վերին հոսանքը՝ Գեղվա ձորը ներառյալ: 11-րդ դարից սկսեց կոչվել Կապան: Սյունիքի միջնադարյան թագավորության ոստանն էր: Այստեղ էր գտնվում մայրաքաղաք Կապանը, որն ապավինել է նշանավոր Բաղաբերդ ամրոցին: Հոգևոր կենտրոնն էր Վահանավանքը, որը դարձել է Սյունյաց թագավորների և իշխանների հավերժական հանգստավայրը: Գավառն ուներ հարկատու 16 բնակավայր և վճարում էր 148 դահեկան հարկ: Ըստ ուսումնասիրողների, այստեղ է գտնվել Շիրուտ ամրոցը:

11. ԱՐԵՎԻԲ

Արևիքը Սյունիքի ամենահարավային գավառն էր՝ Արաքս գետի ձախ ափին: Ուներ 625 կմ² տարածք և ընդգրկում էր Մեղրի գետի ավազանը: Նախկինում մտել է Գողթնի մեջ: Հետագայում կոչվել է Տաշտուն և Մեղրի: Հայտնի են Կաքավաբերդը և Մեղրու բերդը: Գավառն ուներ 24 բնակավայր և վճարում էր 262 դահեկան հարկ: Այժմյան Հայաստանի հարավային դուռն է դեպի Իրան:

12. ԿՈՎՍԱԿԱՆ

Նույնպես ոչ մեծ գավառ էր՝ 625 կմ² տարածքով: Համպատասխանում է Ադրբեջանի հանրապետության նախկին Զանգեղանի շրջանին և որոշ չափով ՀՀ Սյունիքի մարզի Կապանի շրջանին (Ծավ գետի շրջակայքը): Գլխավոր բերդն էր Գրիհամը՝ Ողջի գետի ձախ կողմում: Ուներ 52 բնակավայր, Տաթևի վանքին վճարում էր 439 դահեկան հարկ: Անհիմն է այն վարկածը, ըստ որի, Կովսական գավառի անունն առաջացել է կովս ցեղի անունից: Իրականում Կովսական բառ-եզրույթը ծագում է կով+ս+ական ածանցավոր բառից և նշանակել է կովերի արոտավայր: Կով արմատը կա նաև Կովկաս բառի մեջ:

«Սյունիքի պատմություն» գրքի համահեղինակներ Գր. Գրիգորյանի և Ս. Հախվերդյանի եզրահանգմամբ՝ պատմական փաստագրված իրողությունը

վկայում է, որ Սյունիքը մշտապես բնակեցված է եղել Հայկ-Սիսական գարնի շառավիղներով, որոնք առ այսօր պահպանել են իրենց ազգային դիմագիծն ու հոգեբանական կերտվածքը: Հայկական լեռնաշխարհի այս տարածքը իբրև քաղաքակրթության օրրաններից մեկը, խոշոր դեր է կատարել:

Գրերի գյուտից հետո Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը Սյունյաց (Շաղատի) վարդապետարանին վստահեցին Սուրբ Գրքի՝ Աստվածաշնչի թարգմանությունը, որն իր կատարելությամբ կոչվեց «Թագուհի թարգմանութեանց»:

Սյունիքը, աննշան բացառությամբ, միշտ գոյություն է ունեցել Հայկական միասնական պետության կազմում: Նրա երբեմնի անջատական ձգտումները պայմանավորված են եղել ոչ թե երկրամասի էթնիկական առանձնահատկությամբ, ինչպես անհիմն կերպով ջանում են մեկնաբանել մի խումբ պատմաբաններ (Զ. Բունիաթով, Դ. Ախունդով, Ֆ. Մամեդովա և այլք), այլ՝ ռազմաքաղաքական հզորությամբ: Որպես Մեծ Հայքի ընդարձակ նահանգներից մեկը, Սյունիքը երբեք չի եղել «Կովկասյան Ալքանիայի» կազմում և երբեք էլ չի կոչվել «ալքանական ծայրամաս»: Այդ մտացածին տեսությունները և անլուրջ վարկածները, ակներևաբար, ներմուծված են արտաքուստ՝ պանթուրքական արդի քաղաքականության տարածքային հավակնությունները տեսականորեն ամրապնդելու և կովկասագիտության մեջ գիտակցաբար խառնաշփոթ ստեղծելու նպատակով:

Անառարկելի իրողություն է, որ քաղաքակրթված բոլոր ժողովուրդների պատմություններում ավատատիրությունը բնութագրվում է հակադրությունների խորացման, կենտրոնախույս միտումների ցայտուն արտահայտմամբ: Նույն երևույթը տեսնում ենք նաև հայկական միջնադարում: Ժամանակակից ադրբեջանական պատմագրության մեջ ոմանց կողմից, բացարձակապես անհիմն կերպով, հայազգի մի շարք նշանավոր մտավորականներ՝ Մովսես Կաղանկատվացի, Մխիթար Գոշ, Կիրակոս Գանձակեցի և այլք, հորջորջված են ոչ հայեր լով այն պատճառով, որ նրանք ծնվել են Պատմական հայաստանի Արցախ նահանգում կամ՝ Գանձակում: Այդ հավակնոտ և շինծու «տեսությունները» զուրկ են պատմական որևէ փաստից և գիտության հետ որևէ աղերս չունեն: Սյունիքի պատմությունը նույն հայ ժողովրդի պատմության բաղկացուցիչ մասն է: Այդ են վկայում քաղաքական-տնտեսական, իրավական, մշակութային բազմաթիվ սկզբնաղբյուրները՝ մագաղաթյա մատյանները, հիշատակարանները, հազարավոր վիճագրությունները, որոնցով, ինչպես հավաստում են «Սյունիքի պատմություն» գրքի հեղինակներ Գր. Գրիգորյանն ու Ս. Հախվերդյանը, իրավունք ունի հպարտանալու յուրաքանչյուր քաղաքակիրթ ժողովուրդ⁸¹:

⁸¹ Նույն տեղում, էջ 233–234:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐ

ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐ

1. (1) ԹԱԶԱՎԵՐԻՆ ԻՐԵՔ ԱԽՃԻԿԸ

Ըլըմա չի ըլըմ, մի թագավոր: Դա ունենում ա միսակ մի ախճիկ: Ախճիկը մեծանում ա, հասնըմ ա փսակվելու ժամանակը, մի քանի երկրներից փեսաներ են կյալիս: Խեղճ հերը չի իմանում թե ախճկան ում տա: Ընդամենը ջոկում ա իրեք փեսա: Իրեքին էլ ասում ա, որ էգուց կկնք խնամախոսության: Իրիզունը քնելիս թաքավորը մտածում ա. «Ա՛յ, Աստված, ինչ կլեր, որ ինձ իրեք ախճիկ տայիր»:

Առավոտը ըլըմ ա, տեսնում՝ իրեք ախճիկ ունի: Էթում ա գումը մտնում, տեսնում ա ձին էստեղ չի, էթում ա բակը, տեսնում ա շունը չկա: Ցերեկով կյալիս են խնամիները խոսք են առնում, այնուհետև յոթ օր, յոթ գիշեր հարսանիք անում: Հա, մեկ էլ ասեմ, որ էդ իրեք քուրերը իրար շատ նման են ըլըմ, որ թագավորը չի իմանում, թե իսկական ախճիկը որն է: Ամիսներ են անցնում, մի օր թագավորը մտքի մեջ մտածում ա, թե. «Վերի կենամ էթամ, տեսնամ՝ ախճիկներս ոնց են ապրում»:

Հաջորդ օրը թագավորը վեր ա կենըմ, էթում ա մտնում ա մեկի տունը, նրանք իրեն լավ հյուրասիրում են, հետո թագավորը հարցնում ա, թե իրեն ախճիկը ոնց ա, հո չեն նեղացնում:

Պատասխան են տալիս, թե, որ.— Հարսի ծերքերը ոսկի ա, խոսք չկա, ամեն ինչ անըմ ա, խոսք ետ չի դարձնում: Մենակ մի բանն ա վատ: Եթե մեկը փորձի մեր բակից կամ տնից մի բան տանի, քիչ ա մնում պատառ-պատառ անի:

Թագավորը մտածում ա. «Ասես թե դրանց ձեռքին իմ շունն է ընկել»։ Այնուհետև ցտեսություն ա ասում ու հեռանում: Գնում է գնում, մտնում ա երկրորդ ախճկա տունը: Ըտեղ էլ նույնպես հյուրասիրում են, այնուհետև նա հարց է տալիս, թե՛ ախճիկը ոնց է: Նրանք պատասխանում են, որ ոսկի ձեռքեր ունի, խոսք չունեն դրա մասին, մենակ մի վատ բան ունի, եթե կողքին ընկավ, ինչքան էլ բզե-բզե տեղեն վեր չի կենալ: Թագավորը մտածում ա, որ. «Էս կարող ա իմ ձին ըլի, որովհետև նրա կողը հաստ էր»։ Ըլըմ ա ցտեսություն ա ասում ու թողըմ էթում: Էթում ա էթում, հասնում ա երրորդ ախճկա տունը: Ըտեղ էլ են իրեն հյուրասիրում: Թագավորը հարցնում ա, թե՛ ոնց ա իրան ախճիկը: Ըստեղ ախճկա ամուսինը ասում ա, որ շատ ուրախ եմ, որ քո ախճիկը իմ հարսն է, ինչքան խոսք ասես, պերանը չի պացի պատասխան տա, դե ձեռքերն էլ ոսկի են: Էդ ժամանակ թագավորը հասկանում ա, որ դա իր իսկական ախճիկն ա: Աշխարհի գործերի վրա զարմանալով, թողում ա գնում իր երկիրը:

2.(2) ԼԱՎՈՒԹՈՒՆԸ ԾՅՆ ԱԼ Ա ՀՍԿԱՆՈՒՄ

Ըլում ա չըլում ա, մի թաքավեր: Էթ թաքավերըթ օխտը հարուստի ախճիկ ա օգում, համալ վըեչ մինից խոխա չի ըլում: Էթ թաքավերիթ հույսերը կտրված, տանան տյուս ա կյալիս: Շատ ա քյընում, քիչ, էթ ինքն ա գյուդում, մին ալ մի Աստոծ: Ճնըպի մի ծառի տակի նստում ա, վըեր դընջանա: Մի իմաստուն հլիվեր ա պտահում, տա թաքավերին անա հրցնում ա, թե՛ հինչիյ ա քյընում: Թաքավերը սրտին դառողը պատմում ա:

Իմաստուն հլիվերն ասում ա.— Զուր տեղան ես հարուստի ախճիկ օգում: Ետ տան, քյընա տոն, մի քյասիբի ախճիկ ճարի, քեզ հետի ապրի:

Թաքավերը էթ հլիվերիթ խորհրթավը ետ ա տաննում, կյամ տոն, ուրաց չորանին ըխճկանը նհետ վսակվում: Մի խիլա վախտ վըեր անց ա կենում, տրանց մի տղայ ա ծնվում: Էթ խոխիթ աշկի լուսի ման են պահում: Տղան կուճի-կուճի մըծանում ա: Ըտրա վըեչ մի տեղ պնց չեն թողում: Մի օր տղան հորը խնթրում ա, վըեր ուրան ալ տանի վեռսի: Հերը դայիլ ա կենում: Թաքավերը նազիր-վեզիրին նհետ քյընում են քուլը: Վեռս անիլը վըեր պրծում են, մի օբայ են շինում, միչին պրանում: Թաքավերը մի առանձին օբա յալ տղին հետի յա շինել տալիս: Մի երկու ժամ վըեր դընջանում են, թաքավերը քյընում ա տղին անավ զիրավ հնցնի, տենում ա, մի գորբա օց տղին կոխկավը մեկնված: Թաքավերին սեռտը ահ ա ընգյում, գյուդում չի օցին հունց հեռացնի: Մին ալ խելքը կտրում ա, վըումանին թայը հանում ա, մեչը ճուր ածում տընում օցին ըռըչին: Օցը վըեր սկսում ա ճուր խմիլը, տղին ըզադում են, տառնում քյընում տոն: Թաքավերին կընեզը մերծամահի յա ըլում: Տղին կանչում ա կոշտը, վասյաթ անում, վըեր ուրան մեռնիլան էդը տանան տյուս կյա, քյընա օրիշ քաղաք: Մերը վըեր մեռնում ա, տղան թենց ալ անում ա: Հղու ա լիւմ օրիշ քաղաք: Տրան ճնըպի մի հնգեր ա ռուջահ ըլում: Նոր քաղաքումըթ հնգերը գործի յա նումտում, իսկ թաքավերին տղին թողում ա տանը, վեր տանը գործերն անի, կերակուրը եփի: Շատ վեր մնում են, թաքավերին տղան ձանձրանում ա, ասում ա՛ ես ալ տյուս կյամ քաղաք, տենամ՝ հինչ կա, հինչ չկա: Մեհետ մի պալատի քշտավ անց կենալիս, եշում ա, տեսում, մի գեղեցիկ ախճիկ բալկոնումը կազնած: Էտ տղաթ սիրահարվում ա էթ ըխճկանըթ վըրա: Քյընում ա հնգերին պատմում, վըեր մի լնվ ախճիկ ա ճարալ:

Հնգերը կլիսի յա ընգյում, վեր ախճիկը քաղաքի թաքավերին ախճիկն ա, ասում ա.— Շատ լավ, ես կքյընամ հոր նհետ խոսամ:

Տա վըեր քյընում ա, թաքավերը մերժում ա, ասում ա.— Տա հինչ տղայ ա, մի հավի պուն ալ չունի, վըեր միչին ապրի:

Թաքավերին տղին գիտնական հնգերը քյոնագ ա անում, պալատնիյ են շինում: Թաքավերը վըեր տըրաց դոչադոթունը տեսնում ա, ես դոնում դայիլ ա կենում: Պուրում ա ախճիկն ալ տամ, ուրան հարստությունն կեսն ալ: Թաքավերին տղան ուրան կընգանը, մին ալ հնգերին նհետ ուրաց քյոչը պեռնում են, հղու լիւմ բիդա իւրնց երկիրը:

Վեր կյամ են հսնում ուրաց պտահած տեղը, շտեղ վըեր մտերմացալ են,

հնգերն ասումա. — Դէ՛ն, ես պիտի քզանա բաժանվեմ, հարստությունը երկու տեղ պեր կես անենք:

Թաքավերին տղան միջան հալալ կես ա անում:

Հնգերն ասում ա. — Պիտի ըխճկանն ալ կես անենք:

Թաքավերին տղան մընում ա փշըքաղված: Հնգերին դաչանք ա անում, թա՛ հիշ կա հարստությունը եր կալ, մինակ ախճիկը թող սաղ մնա:

Հնգերն ասում ա. — Լնվ, ըխճկանը ծերք չեմ տալ: Ախճիկն ալ քեզ, հարստությունն ալ: Ես քեզ պիտի խայթեյի: Ես է՛ն օցն եմ, վըեր քու հեր ուրան վըրմանալը ինձ ճուր ա տվալ: Ես քո հոր խաթրա էսքան քեզ լավոթուն ըրեցի:

Ասում ա, հու նորից օց տննում: Թաքավերին տղան ըշկերին հվատում չի: Թենց զըրմացած հսնում ա տոն: Օխտը օր, օխտը քիշեր հրսանիք են անում, առոք-փատոք ապրում:

Ընդաք հսան ուրաց մուրազին, տուք ալ հսներ ձեր մուրազին:

3. (3) ԷՍ ԿԼԽԱՆ, ԹԱ ԷՆ ԿԼԽԱՆ

Ըլում ա չըլում, մի մարթ, մի կընեկ: Տրանց երկու խոխա յա ըլում, տրանք շատ լյնվ են ապրում, շատ սերավ: Մեհետ մարթը քինում ա կյումը, վըեր ապրանքը հըրվաշարի, տեսնում ա մի հլիվեր մարթ կյումի միջին կաղնած: Էթ մարթը շատ ա զըրմանում:

Հլիվերը տրան հըրցնում ա. — Տի՛ն ջահելուց ես օգում լնվ ապրել, թա՛ պոավուց:

Մարթը չաշմիշ ա իլում, գիդում չի հինչ ջողաք տա, ասում ա. — Տիմաց քիսամ կընգանըս հըրցնեմ, ետավ կյամ քեզ պադասխանեմ:

Հլիվերն ասում ա. — Լնվ:

Մարթը քինում ա տոն, համալ մըտան թըռնում ա, վըեր կնգաննանա հըրցնի:

Երկրորդ օրը մարթը կընգանն ասում ա. — Բա սաիլ չես, մի հլիվեր մարթ մեր կյումի միջին ինձ ասալ ա, թն՛ օգում ես ջահելուց լնվ ապրես, թա պոավուց, էս կըլխան, թն՛ է՛ն կըլխան: Գյուդում չեմ հինչ ջողաք տամ:

Կնեկն ասում ա. — Ա՛յ մարթ, մեհեկ հնլն ջահիլ ենք, մի թահրավ յուլա կքիսանք: Քիսի հլիվերին սաի, վըեր է՛ն կլխից ենք օգում լնվ ապրենք, այսինքն՝ պոավուց:

Մարթը քինում ա հլիվերին ասում կընկանը օգածը: Հլիվերը դաստի աշկան հեռանում ա: Օսքերը կախ կյամ ա տոն, կընգանը պատմում: Կնեկը պատառ սիրտ ա տամ, դե ճարը հինչ: Է՛ն մին օրը քինում ա տեսնում՝ է՛ն մի կոճի ալ սատկած: Տրանց օրը խավար ա տննում. օրեկան մի շառ ա պտահում, ծին, վեխճարնին թամուզ կտորվում են:

Կնեկն ասում ա. — Ա՛յ մարթ, է՛ն հլիվերը սովորկան մարթ չի իլալ, երևի կախարթ ա իլալ: Իզուր ընդա խոսքին լսեցիր, վըեր օգում ենք է՛ն կլխան լնվ ապրենք: Տեսար, մեզ աղքատացրեց:

Տոն-տեղ հիշ կա ծախում են, ծըխծըխտտում, սկսում փայ հվաքիլը: Համոթից քնչում են օրիշ երգիր, վըեր իրանց ճանչող չինի: Իրանց խոխեքը յոր են

ունում, հրդե ինում: Շատ են քինում, թա քիչ, օրը մթնում ա: Մի պնց դաշտում կրակ են վառում, կողքին նստում: Էթ վախտըթ մի վաճառական, ուրան քնրվանը ըստեղ դինջանում էր: Կրակը վրեր տեսնում են, իւրանց մարթկանց մինի դարկում են, վրեր կրակ պիրի: Վաճառականի օքնականը քինում ա տեսնում մի մարթուկնեկ են, մին ալ երկու խոխա: Ըտա կնեկն ալ շատ նախշուն կնեկ ա ինում: Էթ օգնականը մնում ա տրա իրեսին յեշիլիս: Տա վրեր կրակը ծերքին քինում ա, վաճառականը կըզնվում ա, թա՝ խն՝ ես ուշացալ:

Տա ասում ա. — Վրեր տո՞ւ ալ իլեիր, ետ կընգեյիր: Մի մարթուկնեկ են, երկու խոխա, կնեկն էլ մի հյուրի փերի յա:

Վաճառականն ասում ա. — Դե վրեր ըթենց ա, կարում ես, քինա ընդրա կընկանը խափի, պեր ըստեղ: Քինի ասի, վրեր խագեիսի կնեկը խոխայ ա պիրում, մեր քշտին կընեկ չկա, խնթրում եք կյաս քոմննգ անես, ինչ վրեր հարկըն ա մուք կտաք:

Կնեկը դայիլ չի կենում, համալ մարթըն ասում ա. — Ա՛ կնեկ, մեխկ են, քինա քյոմագ ըրա: Մի այան կտան, կպիրես խոխեքը կօտեն:

Կնեկը յերա կենում, քինում: Հունց վրեր հընում են վաճառականի կոշտը, էթ կընկանը ծերքերը կպոտում են, յոր օնում, ըտաղատ փախշում: Մարթը մինչև լուսանալը եշում ա, համալ կընկանը պիրում չեն: Տա սկսում ա ծընգները եր թակիլը, ինքն ալ, խոխեքն ալ լյաց են իլում: Խոխոցը յոր ա ունում, ըտաղատ հզու իլում: Կետավը անց կընալիս խոխի մինը ընգնում ա կետը, քշում ա տանում, իսկ էն մին խոխին ալ կելն ա տանում, էթ մարթը կետի դրաղին նստում ա, սկսում լյաց իլիլը: Վրեր հուշը հվաքում ա կլոխը, ճընապան շարունակում ա: Քինում ա հընում մի քաղաք: Տեսնում ա էս քաղաքի ժողովուրթը հըվաքված, ուրանց մհար թաքավեր են ընտրում: Տա քինում ա տրանց քշտին կաղնում: Հունց վրեր իմաստուն դուշը պնց են թողում, կյալիս ա նստում էթ քյասիքիթ կըլիսին: Էթ մարթիթ փոնում են քցում մի տոն, տուռը փակում: Էթ դուշըթ նլլն կյամ ա տրան ճարում, կլիսին վենը կենում: Երբորդ անգամ են դուշին պնց թողնում, նլլն կյալիս ա տրա կըլիսին կաղնում: Պիրում են էթ մարթիթ տինում թաքավեր:

Անց ա կենում միառ ժամանակ, քաղաքի հարուստնին, մին ալ վաճառականին նվերներավ քինում են թաքավերին տեսության: Տրանց մեչ ա իլում մին ալ էն վաճառականը, վրերը ուրան կընգանը կյողացած ա իլալ: Էս վաճառականը թայդի ա ընգում, վրեր քինա, թաքավերն ասումա՝ խն՝ ես վոագում, հնլլն նստի գրուց անենք:

Վաճառականն ասում ա. — Թաքավերն ապրած կենա, կնեկս տանը մինակ ա, վախում եմ մի պնն պըտահի:

Թաքավերը նագիր-վնգիրին ասում ա. — Երկու ծառա դարկեցեք, թող քինան վաճառականին կընգանը եշեն, մինչև ուրան քինալը:

Թաքավերի երկու ծառաներին դարկում են վաճառականի տոնը: Էթ նոքարնիթ քինում են ակուշկի տակին նստում, սկսում տեսան-տեսան խոսալը:

Ընդանա մինը ասում ա. — Եք մեր կլիսավը անցկացածը պատմենք, վրեր ժամանակը շուտ անց կենա:

Տա սկսում ա.—Մուք շատ հարուստ ապրուստ ունեինք: Հերս լնվ մարթ ա իլալ: Մերս ալ չտեսնված գեղեցիկ կնեկ ա իլալ: Մեհետ մի կախարթ հիվեր իրանց հրըցնում ա թա՝ ջահելուց եք օգում լյավ ապրեք, թա՝ պոավուց: Տրանք ասում են՝ էն կլխից, պոավուց: Եղավ աղքատության մեչ ենք ընգյում: Մեր երգիրը թողում ենք, քոչում օրիշ երգիր: Մի հանդում կրակ ենք անում, վաճառականին կյալիս են կրակ տանում, եղավ խափում են՝ մեր մորն ալ տանում: Ախպորս կետը քշում ա, ինձ ալ կլելն ա տանում: Բայց չորանի շները հարձակվում են կելի վրա, ինձ ըզադում: Չորանը ինձ շինում ա ձորանն տղա, թեկուզ թաքավերի պալատումն եմ ծառայում:

Էն մի տղան ուրախությունան գյուդում չի, թան հինչ անի, ասում ա.—Ես ալ քու ախպերըք եմ: Ինձ ճյուրը տանում ա քցում ճեղացին դոնգրզլղը, ճղացպանը ըզադում ա, շինում ձորանն տղան: Մեկ ալ ծառայում եմ թաքավերի պալատումը:

Տրանք վրեր պատմում են, տըրանց գրուցը մերը լսում ա: Տոտը պյաց ա անում, վազ տամ, սկսում տրանց պրչպրչորում: Տանում ա տոն, տրանց անա վրեր կարոտն առնի: Խնքնըրը տանում են վաճառականին, վրեր կնեկըք հենա երկու ծառաների նեհտ քեֆ ա անում: Թաքավերը էթ պանըրթ վրեր լսում ա, աջըրը կյամ ա, հրամայում ա վրեր ծառաներին ալ, վաճառականին կընգանն ալ պիրեն ուրան կոշտը, որ նրանց դատը անի: Տրանց պիրում են թաքավերին կոշտը: Տեսնում ա մի հասակավեր կնեկ, մին ալ երկու ջահիլ տղերք են: Սկսում ա հարցաքննիլը: Կնեկը հինչ կըլխավըն անցա կացալ, մին-մին պատմում ա: Վաճառականն օգում ա, թան փախնի, թաքավերը թուդում չի. թաքավերը կլխի յա ինգյում, վրեր տա ձորանն կնեկն ա և ձորանն տղերքն են: Տա շատ ա ուրախում, սկսում ա տրանց պրչպրչորիլը: Ննգիր-վնգիրին կանչում ա, վրեր տանեն վաճառականին պատժեն: Նոր-նոր տրանք սկսում են ուրախ, երջանիկ ապրիլը:

Կնեկն ասում ա.—Ա՛յ մարթ, տեսմր, վրեր լյավ ապրուստը մեկեա հարկավեր, եթե պառավ վախտը ձորանն կորցնինք, ալ ճարելու չիք:

Ընդանք հրսան ուրաց մուրագին, տուք ալ հըսնիք ծեր մուրագին:

4.(4) ԳՅԱԲԱ ԿՅՈՐԾՈՂԸ

Մի գյաբա կյործող ա ըլում: Նա գոռավ-գոռավ մի գյաբա յա կյործում: Օրերան մի օր տրա գյաբա կյործիլի գործիքը կոտրում ա: Կացինը յոր ա ունում, քըրնում քոլը, վրեր փեղ պիրի, մի թագա գործիք շինի: Քոլումը մի հարմար ծառ ա ճարում, կացնավը մի երկու հետ վրեր թխում ա, ծառին փըչական:

Մի դուշ ա տյոնս կյամ, մարթկային լիուզու առած ասում.—Ա՛յ բարի մարթ, խնթրում եմ՝ ծառը կտրես վեչ, հինչ վրեր օգես, ես քու դիլակըք կկատարեն:

Էթ մարթըթ մտում ա մաթալ, թա էս դուշս ինձ հինչ լավթուն կանի: Շատ մտըծելուն էդը ասում ա.—Ա՛յ դուշ, ես քու պունըթ քանդիլ չեմ, մինակ տըմնց քըրնամ տոն, կնգանըս նեհտ մսըրհաթ անիմ, եղավ կյամ սրտիս օգածը ասեմ:

Դուշը դայիլ ա կենում: Էթ մարթըթ հողով ա լում բիդա տոն: Ճընըպի տա հանդիպում ա մի հնգերի:

Հնգերն ասում ա. — Էթ շտանդան ես կյալիս, պատմի տեսնամ՝ հինչ կա, հինչ չկա:

Գյարա կյործողը սկսում ա կլխին եկածը պատմիլը, ասում ա. — Բա ապի չես, քընացի քոլը, վըեր մի ծառ կտրեն, մի դուշ ինձ ասեց՝ կտրու մի, հինչ լավություն օգես՝ քեզ կանես:

Հնգերը ըստեղ ուրախանում ա, ասում ա. — Ա՛յ հնգեր, բախտըթ կտրալ ա, տա կախարթ դուշ ա: Քընա ապի՝ թող քեզ շինի թաքավեր, ես ալ կտառնամ քու օքնականըթ:

Գյարա կյործողը ուրխանում ա, հնգերին խոսկ ա տալիս, վըեր ուրան կտնի օքնական: Ուրախ-ուրախ հղուվ ա լում բիդա տոն:

Կնեկը տեսնում ա, վըեր մարթը տնտունկ, կացինը ծերքին եկավ, ասում ա. — Ա՛յ մարթ, քեզ դարկալ եք քոլը, վըեր փեղ պիրես, թա՛ տատոակ ետ տառնաս:

Մարթը կլխաժն անցկածը պատմում ա, վըեր. — Էն դուշին դառդան ծառը կտրալ չեմ, դուշն ասալ ա՝ հինչ օգես՝ քեզ տալուվ եմ: Էդալ ճըլպի հնգերս ա պտահալ, ասեց՝ վըեր տա կախարդ դուշն ա, քընա ապի, թող քեզ թաքավեր տընի, ինձ ալ օքնական: Ա՛յ կնեկ, դե ապի, քընամ դուշին հինչ ասեմ:

Կնեկն ասում ա. — Թաքավեր տառնսլը մեզ հարկավեր չի: Թաքավերնին միշտ մինակ են ըլում, ես օգում չեմ, վըեր մութ մինակ ըլեք: Քընա դուշին ապի, թող քեզ մի գյարա կյործիլ գործիք տա, ընդանալ յուլա կքընաք:

Էթ մարթըթ քընում ա դուշին կոշտը, կնգանը ասածը պատմում:

Դուշն ասում ա. — Աշկիկս վըրա, քընա տոն, մի թագա գործիք կունենաս:

Էթ մարթըթ քընում ա տոն, տեսնում տանը մի թագա գործիք: Էթ մարթըթ մինչև օրս ալ գյարա յա կյործում:

5.(5) ՄԵՆԱԿՅԱՑՆ ՈՒ ՔԱՄԻՆ

Մի մենակյաց քառասուն տարի մի տեղ ճգնված է լինում և ապրում իր համար: Մի օր էլ դուրս է գալիս իր քարանձավի բակն ու ինքն իրենով պարծենում, թե ես այլևս վախ չունեմ ոչնչից, բացի Աստծուց: Հանկարծ նա տեսնում է, որ իր առաջ խաղում է մի թեթև պտտահողմ: Նա զարմանքով տեսնում է, որ պտտահողմը լեզու առավ և սկսեց խոսել:

— Ո՛վ մարդ, ասաց քամին, — դու ասում ես, որ մենակ Աստծուց վախ ունես, իսկ ուրիշ բանից չունես:

— Ո՛չ, քամի՛, միայն Աստծուց ունեմ, — պատասխանում է Մենակյացը:

— Լավ, — ասում է քամին և թռչում ուրիշ տեղեր:

Մյուս առավոտը մենակյացը քաղաք է իջնում այն մտադրությամբ, որ վերջին անգամ տեսնի քաղաքն ու ետ՝ դեպի իր քարանձավը վերադառնա: Մի մսագործի խանութի առաջ կանգնում է ու դիտում ներսը: Մսագործը սրա աղքատ ու պատռոտված հագուստներից եզրակացնում է, որ սա մուրացկան է ու ոչխարի մի գլուխ ու ոտներ է տալիս Մենակեցին: Սա ոտներն ու գլուխն առնում է այն մտադրությամբ, որ մի աղքատ կպատահի և կտա նրան: Սակայն մինչև իր ան-

ձավը գալը ոչ մի աղքատ չի պատահում և ստիպված ոտքերն ու գլուխը ձեռքին մտնում է իր բնակարանը:

Մյուս առավոտը, երբ գնում է մոտակա առվից ջուր բերելու, գալիս տեսնում է իր քարանձավի առաջ արքայական զինվորներ, ամենը ձիեր հեծած, նրան են ման գալիս: Մենակյացին իսկույն ձերբակալում են, ձեռքերը կապում ու քշում թագավորի մոտ:

Դու մի ասիր, հենց էդ գիշեր թագավորի ավագ գանձապահի գլուխը կտրել են ու գանձերը տարել, և թագավորը հրամայել է գտնել իր հավատարիմ գանձապահի գլուխը: Ման գալով եկել են Մենակյացի քարանձավում գտել գանձապահի գլուխը:

Մարդասպանին տանում են թագավորի մոտ: Թագավորը սպառնագին հարց ու փորձ է անում, թե դու ինչ մարդ ես, և ինչպես ես սպանել գանձապահին, այժմ որտեղ են գանձերը: Մենակյացն ընկնում է թագավորի ոտները, աղաչում, պաղատում, թե ես մի խեղճ ճգնավոր եմ և ոչ թե մարդասպան:

Թագավորը հրամայում է բերել և ցույց տալ գանձապահի գլուխը: Կից սեւյակից, որտեղ լինում են միայն գլխատված մարդկանց գլուխները, դուրս են հանում գանձապահի գլուխն ու զորապետը հայտնում է թագավորին, որ այս գտել ենք այս Մենակեցի քարանձավում, որ դա ոչ թե մենակյաց է, այլ մի սուկալի չարագործ-ավագակ:

Մենակեցը դարձյալ աղաչում-պաղատում է, որ ինքը չի արել այդ: Թագավորը հրամայում է բանտ դնել, որ առավոտը պիտի դրան գլխատեն: Մենակեցին բանտ են տանում: Ճանապարհին երևում է նույն քամին: Դեռ քամին չտեսած՝ ճգնավորը մրմնջում է. «Ո՛վ Աստված, քո խոնարհ ծառան եմ, միայն դու կարող ես ինձ փրկել»:

— Ո՛չ, միայն ես կարող եմ քեզ փրկել, — ասում է պտտաքամին:

Մենակյացը ճանաչում է իր վաղեմի հողմը և լուռ գնում: Հողմը թոչում է ուրիշ տեղ:

Առավոտ, մինչև գլխատելը, թագավորն իր մոտ է կանչում մարդասպանին՝ վերջին քննության: Եվ այստեղ Մենակյացը աղերսագին պատմում է, որ ինքը մի ոչխարի գլուխ ու ոտներ է ունեցել, որն իրեն է տվել մսագործը և մանրամասն հայտնում է գլխի նշանները: Թագավորը հրամայում է բերել գանձապահի գլուխը: Բերում են, դուրս է գալիս ոչխարի գլուխ՝ Մենակյացի հայտնած նշաններով:

Հենց այդ ժամանակ ներս է մտնում մունետիկը և հայտնում.

— Տեր թագավոր, գտնված է գանձապահի գլուխն ու ողջ գանձերը, և չարագործին բերում են:

Մենակյացին նվերներով ազատում են:

Սա ոտները քաշ տալով իր բնակարանի դուռն է հասնում և մի քարի նստում մրմնջալով. «Տեր Աստված, ո՛ր մասց քո զորությունը, հիմա քեզնից վախենամ, թե այդ գիժ հողմից»:

6.(6) ՕՎԶԻ ՕՂԼԻՆ

Մի որսկան է լինում, սա ունենում է մի տղա: Երբ տղան դառնում է յոթ-ութ տարեկան, հայրը մեռնում է: Մեռնելուց առաջ խիստ պատվիրում է կնկանը, որ նետ ու աղեղը չտա տղին, տղին որսկան չանի:

Տղան շատ ճարպիկ է լինում, իր ընկերների հետ կոճի խաղալիս բոլորի կոճիները տանում է, ընկերները կանչում են. — Որսկանի՛ տղա, բոլ չի՛, մեզ խայտառակ արի:

Տղան կոճերը հետ է տալիս ընկերներին և վազելվազ գալիս է մոր մոտ, ասում. — Ա՛յ մերս, ել, հանի հորս նետ-աղեղը, հերս որսկան է եղել, ես էլ որսկան պիտի դառնամ:

— Ա՛յ որդի, — պատասխանում է մերը, — քո հոր մահից հետո նետ-աղեղը ծախել հացի եմ եմ տվել, կերել ենք, ինչ ես ուզում:

Որդին չի լսում մորը, վեր է կենում ճրագ անում, տան քյունջ-պուճախը ակը տալի, հոր նետ ու աղեղը գտնում, գնում որսկան դառնում:

Մի օր պատահում է մի սիրուն աղվեսի, նետ ու աղեղը լարում է, որ վեր գցի, Աստծու հրամանով աղվեսը լեզուն է առնում և պատասխանում. — Ա՛յ Օվչի Օղլի, ինձ մի սպանիր, ես քեզ հացի կտիրացնեմ:

— Մեկ չլինենք, երկու լինենք, — ասում է տղան, նետ-աղեղը հետ պահում և աղվեսի հետ ճամպա գնում:

Շատ են գնում, թե քիչ, պատահում են մի գելի: Էս Գելն էլ էսպես ախպերանում է Օվչի Օղլուն և Աղվեսին, հետո էլ ախպերանում է մի Արջ և մի Զմրուխտ դուշ: Անտառում տուն են շինում և հնգով միասին ապրում:

Մի օր էլ աղվեսն ասում է. — Օվչի՛ ախպեր, մենք քեզ համար գնում ենք հարսնացու բերենք:

Տղին թողնում են տանը, իրենք գնում դեպի թագավորի գեղը: Գեղի մոտ Աղվեսը մի լուծ է դնում Գելի և Արջի վզին, ինքը մաճկալ դառնում ու հորովել տալով քշում, գյուղ մտնում: Թագավորի աղջիկը, որ օխտը տարի բերդից դուրս չէր եկել, տեսնում է սաղ ժողովուրդը թափվել են հրապարակ և դիտում են ինչ-որ մի հետաքրքիր տեսարան: Դե թագավորի աղջիկն էլ մարդ է, սիրտն ուզում է թամաշա անի, ծառաների հետ դուրս է գալիս իր բերդի ոսկեղեն պատշգամբը և դիտում: Էս մոմենտին վրա է հասնում Զմրուխտ դուշը, աղջկանն առնում իր թևերին ու փախչում: Աղվեսը, Արջն ու Գելն էլ լուծը դեն են շարտում ու դեպի անտառ:

Թագավորի աղջիկը մինչև օրս էլ Օվչի Օղլու ծոցումն է՝ խոր անտառի մեջ, և Աղվեսը, Գելը, Արջն ու Զմրուխտ դուշը հսկում են նրանց:

7.(7) ՄԱԶԲԱՆԴԸ

Մի քաղաքում ապրում էր մի աղքատ, շատ աղքատ մազբանդ, որը հազիվ մազի թոկ ծախելով մի քանի կոպեկ էր վաստակում և միայն ու միայն չոր հացով կերակրում իր երեխաներին ու կնոջը: Մի օր էլ առևտուրը հաջող չի լինում, երեխաները հոր թևը բռնած փողոցում հաց են աղերսում: Էդ ժամանակ փողոցով անցնում էին երեք երիտասարդ՝ անծանոթ աշխարհից: Էդ սրտաճնլիկ տեսարանը տեսնելով՝ հանում են ու տասը ոսկի տալիս էդ մարդուն, թե՛ տար ու երեխոցդ համար հաց գնիր: Սա փողերը դնում է փափախի կարկատանի մեջ և ուրախ տուն վազում կնոջն աչքալուսանք: Էս պահին մի սև անգղ թռչում, գալիս է նրա մորթե փափախն առնում ու ետ-ետ իր ամպերը թռչում: Մազբանդը գժվածի պես դես ու դեն է ընկնում, ոչինչ անել չի կարողանում, երեխաների հետ լավով տուն է հասնում ու գլխին եկածը կնոջը պատմում:

Կինը շատ է թոք ու թոհմաթ անում, թե ինչու փողը գրպանում չի բերել, մարդն էլ ասում է. — Ա՛յ կնիկ, մեզ երևի դամաթ չէր, թե չէ որ դամաթ լիներ, չէր կորչի: Քամու բերածը քամին էլ կտանի:

Ու էսպես էլ մոռանում են ու անցնում իրենց սև օրին: Մյուս առավոտ Մազբանդը փողոց է ելնում, ամբողջ օրը չի կարողանում հացի փող աշխատի, էլի պատահում է էն երեք երիտասարդներին, որոնք խղճալով նրան՝ վեց ոսկի են տալիս ու գնում իրենց բանին: Մազբանդն էս վեց ոսկին ձեռն առած վազում է տուն, որ չկորցնի: Կինը տանը չի լինում, ոսկիները դնում է թեփով լի կճուճի մեջ ու վազում կնոջը գտնելու, աչքալուսանք տալու: Մազբանդի հետևից տուն է մտնում կինը, հետն էլ մի մարդ, որը ձիան համար թեփ է առնում, մի քանի գրոշ է տալիս, թեփը, ոսկին էլ մեջը, լցնում պարկը, շալակն առնում ու յալլա գնում: Իրիկունը մարդը տուն է գալիս, վազում է, որ ոսկիները հանի, տեսնում է ամանը կա, ինքը չկա: Կինը պատմում է թեփի պատմությունը, մարդն էլ ասում է, որ վեց ոսկի է եղել նրա մեջ: Կինը շատ ոտ ու ձեռ է անում:

Մազբանդն ասում է. — Շատ քեզ մի սպանի, հալքաթ մեզ ոռաստ չէր, որ ոռաստ լիներ, չէր կորի, ջրի բերածը ջուն էլ կտանի:

Մյուս օրը բազարում էլի պատահում է էն երեք մարդուն, սրանք խղճում են, երեք ոսկի հանում մեկնում Մազբանդին:

Մազբանդը հրաժարվում է վերցնելուց. — Ախպեր, ինձ տալիս եք, հալալ չի լինում, ձեռիցս գնում է, չեմ ուզում:

— Լավ, որ էդպես է, — ասում է նրանցից մեկը, — առ էս գյուլուլը քեզ: Կտանես ձեր քաղաքում կտաս մի ձկնորսի, ինչ կտա, կտա:

Մազբանդը գյուլուլը վերցնում է, տանում տուն: Տուն հասնելուց կանչում է իր փոքրիկ աղջկանը, գյուլուլը տալիս նրան, թե՛ տար և տուր մեր հարևան ձկնորսին, սա ինչ կտա, կտա:

Ձկնորսը գյուլուլը ստանալով ասում է. — Շատ լավ, առավոտը առաջին թոռս որ գցեմ, ինչ որ դուրս գա՝ ձեզ:

Առավոտը ձկնորսը թոռը գետն է գցում, դուրս է գալիս միայն մի ձուկ: Ձկան պոչը կտրում, նշան է անում ու սկսում իր գործը: Իրիկունը, տուն դառնալուց,

կանչում է Մազբանտի աղջկանը, թե՛ ասսի հորդ, որ ձեր բախտից մենակ էս ձուկն է հանել թողը:

Մազբանտի կինը ձկան փորը մաքրելիս փորից հանում է երեք անգին քար: Էս երբ տեսնում է, մարդն ուրախանում է, իսկույն կանչում ձկնորսին: Մի հատը տալիս նրան, մեկը ինքը վերցնում, մեկն էլ մյուս օրը հանձնում երեք անծանոթներին ու ինքն էլ առոք-փատոք ապրում է մինչև էսօր, կնկանն ասելով.—Ա՛յ կնիկ, սա մեր դամաթն էր, մեզ էլ արժանի եղավ:

Ասում են էն մարդը մինչև հիմա էլ ապրում է, թե որտեղ և ինչ կերպ, էդ էլ չգիտեն:

8.(8) ԿՏՐԻՉ ՏՂԱՆ

Ո՛նում ա, ո՛նում չի մըն թաքավեր ա ո՛նում, աստո՞ծ վեքին լուսավերի: Էտ թաքավերիտ քռասուն տղա յա ունում, աստո՞ծ ընդրանց վեքին լուսավերի: Էտ քռասուն ախպորցը կուճիսի անումը Կտրիչ ա ո՛նում, աստո՞ծ ընդրա վեքին էլ լուսավերի: Կտրիչը մըն աժդահա մառթ ա ո՛նում, ամեն կոռնը մին կյերան. կյնվոխը մեծ, կյեղեցիկ:

Կտրիչը հրըվըններին խոխորցը նհետ խաղ ընելիս տամ ա մըն պռավի տղի կյնվոխ պուկում: Պատավը կյամ ա լաց ը շվան անում, թա կյնվոխտ վեղեն, քու ըրեսնուինը ախպերքը քյացալ են ուրանց հետի կնեկ ճարեն, պիրեն, տոն էլ եկալ ես խոխորցը ըսպանո՛ւմ:

Կտրիչն ասում ա.—Ա՛յ նանի, ես գյուղում չեմ, բա հու՛նց քյինսամ ինձ հետի կնեկ պիրեն:

Պատավն ասալ ա.—Չոռը ցավ քյինաս, քյինսն քու մոր ասի, թող քու հորտ ասի, հորտ ծին նիհ իլ, քյինա քզհետի դոչխություն ըրա, կնեկ պեր: Կտրիչը քյնում ա մորն ասում, մերն էլ մարթին ա ասում:

Թաքավերն ասում ա.—Թող քյինա, իմ իլխիս հենե, մըն ծի եր օսի, նիհ ինի քյինսն:

Մերը կյամ ա ասում.—Կտրիչ, քու հեր ասում ա. «Քյինա իմ իլխաս մըն ծի եր կալ, քյինսն»:

Կտրիչն ասում ա.—Չէ, ես իմ հոր ծին պետքա նստեմ: Ծիյին անումը լսած ա ո՛նում, տեսած չի ո՛նում: Մերը մարթին ասում ա.—Վեր օգում ա, թող նիհ ինի, քյինսն:

Կտրիչը հորը ծին նիհ ա ինում քյնում, մըն ըրկաթի շամփուր մեշկան կալս:

Պըռավին տանը կոխկավը քյինսնիս, պատավն ասում ա.—Հո՛ր ես քյնում, Կտրիչ:

Կտրիչն ասում ա.—Քյունում եմ ինձ հետի կնեկ պիրիմ:

Պատավն ասում ա.—Վեղս կլխիտ, էտ ընջոտած շըմփուրավտ են քյունում կնեկ պիրեն:

Կտրիչն ասում ա.—Բա հի՛նչ անեմ:

Պատավն ասում ա.—Քյինա քու հոր թոր-ասպարը կապի, քյինա:

Ասում ա.—Հո՛ր ա իմ հոր թոր-ասպարը:

Կտրիչը կյամ ա մորն ասում.— Ա՛ մեր, պեր իմ հոր թոր-ասպարը:

Մերն ասում ա.— Ա՛յ վերթի, հու՛նց պիրեն, վեր քու հեր գյիդա, կյնուխտ կկտրի ախր: Էն քու խորթ հերտ ա, քու հալալ հերտ շնտի յա մտալ, էն թոր-ասպարն էլ քու հալալ հորտ ա:

Կտրիչը քյննում ա խորթ հորն ասում.— Թաքավեր, պեր իմ հոր թոր-ասպարը, քյննում են ինձ հետի կնեկյ պիրեն:

Թաքավերն ասում ա.— Բ..տ կեր, շան տղա, թոր-ասպարը չեն տալ:

Կտրիչը վեր մըն հետ բղավում ա, սարում-ծորում հինչքան հեյվան-գազան կա, չիմ տուս են տառնում սրտաճաք իլաժ փախճում՝ էքան գոռի յա ննում Կտրիչին սնար: Ետո Կտրիչը ծեռքը քյուցում ա մըն չինարի ծառ պուկում, վեր տա թաքավերին ըսպանի:

— Թաքավեր, հորս թոր-ասպարը տու, թաշնա կսպանեն:

Թաքավերը վըխիլան ասում ա.— Հենե ընդեղ, քյինն էր կալ, թաքյ ինձ ըսպանե վեչ:

Կտրիչը հորը թոր-ասպարը կապում ա, քյննում:

Պառավին տանը տակաճն անց կնալիս, պառաճն ասում ա.— Մըհեկ վեր հորտ տղան ես, քյինն, ամմա վեր քու ըրեսնուիներ խորթ ախպորցդ պտահես, մըտեղ քոն չինես, միշտ հեռու քոն կինես:

Եր ա կենում, քյննում: Շատ ա քյննում, քիչ, հըսնում ա նորնն ախպորցը:

Ըրեսնուիներ ախպերքն ասում են.— Հոր ես եկալ:

Ասում ա.— Եկալ են ինձ հետի կնեկյ օգեն:

Ասում են.— Հայ, հայ, հես ա իրեք տարի յա մենք կնգան ենք ման կյամ, ճարում չենք, տու՛ ես ճրիլու:

Ետո ասում են. «Մեր հերը նորնն ծին, թոր-ասպարը մեզ տուվակ չի, էտ հունց ա՛, վեր տուվալ ա ըստան՝ մեր խորթ ախպորը»:

Թաքավերը մըն արաբ ա դարկում, թա՛ քյինն իմ ըրեսնուիներ տղորցս ասի, թող Կտրիչին ըշտեղ վեր ա, ըսպանեն:

Արաբը կյամ ա թաքավերին ըրեսնուիներ տղորցն ասում, թա.— Կտրիչին ըսպանեցեք:

Քիշերը չիմուքը մըն ծիրում են եր կյամ, ամմա Կտրիչը պըռավին ըսածին գյորա, ըտանց նհետ քոն չի ննում, քյննում ա մըն սարի կյնուխ պիրցրանում, քոն ինի: Ըրեսնուիներ ախպերքը Արաբին դարկում են, թա քյինն Կտրիչին քթակերը քոն տեղը ճար ածի, թող մեռնի: Կտրիչը քոն չի ննում: Մըն վախտ տեսնում ա մընը կյուղըկյող մուտանում ա նորան, վեր ասում ա. «Է՛յ, տու հուվ էս», արաբը փախճում ա: Մըն քար ա յիրա անում, արաբը փախճում ա:

Կտրիչը եղան քյննում ա, տեսնում ա մըն պերթ, պերթին տիռանը մըն դև, ասում ա.— Իմ վերսս փախալ քու պերթտ մտալ, ինձ տու:

Դևն ասում ա.— Տալ չեն, եկ կովենք:

Կովում են, Կտրիչը դևին ըսպանում ա, տեսնում դև չի, մըն ջաղու պառավ ա դևի խիթիսա կյեցած, ջիքան ըրեսնուիներ պիլանի յա տուս օնում, ըրեսնուիներ օթաղ պննում, տեսնում աման ութաղում մըն ախճիկ: Չիմին մըտանեքը մընդրներան տնու ա օնում, ըխճկորցը մտանիքը քաղում, ետ կյամ ըխճկորցը տամ

նորան խորթ ախպորցը մտանիքը, թա՛ հենն, իմ ըրեսնուիւնը ախպերքը, քյացեք ընդանց կախկը, հնոր մտանի վեր հնոր առի ինի, ընդա կընեկը կտանոնաք:

Ինքը ծին նիի ա նունում, քյնունում: Քյնունում ա վեր դիբա նորան հայրենիքը քյինան, տեսնում ա մըն դև:

Դևը ըրեսնուիւնը ախպորցը պաց ա թողում, Կտրիչին պաց չի թողում, ասում ա.— Ետ տառ, կքյինանս Խաթուն Խանում ըխճկանը ինձ հետի կպիրեն, կթողամ քյինանս քու հայրենիքը, պիրիլ չես, թողալ չեմ:

Կտրիչը ետ ա տառնում, քյնունում: Քյունում ա, քյունում, շատընը քիչը աստոճ գլիդա, հըսնում ա մըն ծովի, տեսնում ա էտ ծովիտ կոխկին մըն հիլիվեր կաղնած:

Հիլիվերը Կտրիչին ասում ա.— Հո՛ր ես քյնունում:

Ասում ա.— Քյնունում եմ Խաթուն Խանումին պիրեմ:

Ասում ա.— Հու՛ր հետի:

Ասում ա.— Սև դևին հետի:

Ասում ա.— Ես էլ եմ եկալ, վեր Խաթուն Խանումին տանեմ, կրացալ չեմ, հիլիվիրալ եմ, մըհեկ էլ տող ես քյնունում, խնթում եմ ինձ հետի խոնգ պիրես, վեր մոնիլաս ետը խոնգ ծխեն:

Ասում ա.— Լանվ, հիլիվեր, կպիրեմ:

Հիլիվերն ասում ա.— Իրեք ծով պիտի ասկենաս, ամմա քու ծիտ շատ-շատ մընը անց կենա, էրկուսը կըրնալու չի, ափսուզ ես, կմեռնես:

Կտրիչն ասում ա.— Հինչ օգում ա ինի, քյալու եմ:

Հորը ծին մըն ծովն անց ա կենում: Պռաված ա ինում, եր ա ինգյում, ըստա-կում: Կտրիչը մնում ա մտքամիտը: Նստում ա, լնց ինում, լնց, քոն ինում:

Ծովին միչին մըն հրեղեն ծի յա ինում, նորան քուրկներին նհետ տուս ա կյամ ծովին դրաղը ման կյա, քուրկներան մընն ասում ա.— Վայ, վայ, մայրիկ էս խեղճ տղաս ծի չօնի, հու՛նց ա ծովն անց կալու:

Մերն ասում ա.— Իմ յիհարս, մըն էլ ջիլավս հենե էն քարին տակին, թող եր կենա տուս օնի, տինի իմ միշկիս, ըշտեղ օգի, կթոցնեմ, կտանեմ:

Կտրիչի ըրագումը նորան հորն ա տեսնում, հերն ասում ա.— Վերթի, ծովի Ջալալ ծին հետ ա կոխկիտ մեճ քարին տական ընդա յիհար-ջիլավը տոնս կալ, տիր յիրան, ջիլավը ըռեխը քիցի, նստի, ըշտեղ օգես, կտանի հըսցնի:

Կտրիչը եր ա կենում, թեհնց էլ անում: Ծովի Ջալալ ծին երգյինքը ա պիրց-րանում, քշանում, տամ, էրկու ծովը կտրում, անց կենում:

Կտրիչը հըսնում ա մըն քըղաքի: Ծին թողում ա քըղաքին դրաղին, յիհար-ջիլավը մին քարի տակ կյաղում, ինքը նի մտնում քաղաքը:

Քըղաքին միչին թաքավերին խաս բախճա յա նունում, բաղվանչին՝ մըն հի-լիվեր մատթ, ասում ա.— Ա՛յ տղա, մշակույթին կանեն իմ բաղումս:

Կտրիչն ասում ա.— Հա՛, կանեմ:

Ասում ա.— Եկ:

Կտրիչը քյնունում ա բաղվանչուն կոխկը:

Ասում ա.— Ըշտղացի՛ ես:

Ասում ա.— Ղարիբ եմ:

Ասում ա.— Հո՛ր ես եկալ:

Ասում ա. — Եկալ եմ Խաթուն Խանումին տանեմ:

Ասում ա. — Հա՛, լավ ես ըրալ, Խաթուն Խանումը տարին մըն հետ կյամ ա մեր մեծ հրվուգումը լղանում, եթե տու կարաս ընդրա շորերը հնձանին դրաղան եր օնես, քունն ա, եթա չէ, չէ՛. հինչ մարթ օգում ա մուտանա, էքքան սիպտակ ա ընդրա մորթին, իրեսը, վեր շափաղը չիմին աշկերըն օնում ա, հիւշը տանում, եր քիցում, ըտա հետի էլ վեչ մընը կարում չի մուտանա:

— Բա հու՞նց անեմ, — ասում ա Կորիչը:

Հիլիվերն ասում ա. — Հընդստանա երգյիրումը սև վեզ կա, թա կարաս էն վեղան պիրես մըն պատառ աշկերտ քիցես, Խաթուն Խանումի շափաղը քեզ հիւշուզ չի անել, ամնա Հնդստան աշխարը օխտը տարվա ճնհապա յա, դեչանը քյիննա, կիլիվերես:

Կորիչը տո՞նս ա կյամ քըղաքան, ծովի Ջալալի յիհար-ջիլավը քարին տա-կան տուս օնում, թափ տամ, ծին կոխկին կաղնում ա, յիհարում ա, ջիլավը քյոցում, նիհ ունում:

Ծին ասում ա. — Ըշտեղ տանեմ քեզ, Կորիչ:

Կորիչն ասում ա. — Հնդստանա սև վեղին տեղը գյոտում ես:

Ծին ասում ա. — Հա՛, գյոտում եմ:

Կորիչն ասում ա. — Ինձ տար ընդեղ:

Մին աշկը ճալիումը ծովի Ջալալ Կորիչին հըսցընում ա Հընդստանա սև վեղը, Կորիչը մըն հափուռ վեղ ա եր օնում, մըն աշկը ճալիումն էլ ծովի Ջալալը ընդան հըսցնում ա խաս բաղը: Ծին թո՞ղ ա անում, յիհարը եր օնում, ջիլավը տո՞նս օնում, տո՞նում քարին տակին:

Բաղվանչին ասում ա. — Պերի՛ր:

Կորիչն ասում ա. — Հա՛:

Բաղվանչին ասում ա. — Հենե՛, Խաթուն Խանումը շորերը ավազանին կոխ-կին հանալ ա, ինքը նի մըտալ հովուզը, լղանում ա, կարում ես, քյինն:

Կորիչը սև վեղան աշկին ա քյոցում, քյոնում: Խաթուն Խանումին շորերը եր ա օնում:

Խաթուն Խանումն ասում ա. — Ա՛յ տղա, շորերս տու, կյենամ:

Կորիչն ասում ա. — Տալ չեմ:

Խաթուն Խանումն ասում ա. —

*Ա՛յ վրսկըքյաքյուլ տղա,
Աշխարհի բարաբար տղա,
Արևի հավասար տղա,
Շորերս տուր, կյենամ, տո՞նս կյամ:*

Կորիչն ասում ա. — Տալ չեմ:

Խաթուն Խանումն ասում ա. — Ա՛յ քաջ տղա, ես քունն եմ, տու իմը, դե շո-րերս տու, տո՞նս կյամ, էքքան տարի յա քու ճընհապատ ի եշում, եկալ ես, տար:

Կորիչը Խաթուն Խանումի շորերը տամ ա ուրան, Խաթուն Խանումը շորե-րը կյե նում ա, հովազան տո՞նս կյամ: Մըն հոյրումնլազյ ա ինում, մըն կյեղեցկու-հի: Կորիչը ծովի Ջալալին յիհարում ա, նստում, Խաթուն Խանումին թարքյին տո՞նում, բաղվանչուն մնաս պարի ասում, կյամ:

Ծովերն անց ա կենում, հըսնում էն ծովին, ըշտեղ ձորան ծին սատկալ էր, վըսկոնին թաղում ա: Նի են մըտնում վերչի ծովը: Ծովին մեչ տեղին Խաթուն Խանումի ախպերքը ածդահա ծուկների յիրա կյամ են, վեր Կտրիչին ըսպանեն: Խաթուն Խանումն ասում ա. — Կտրիչ, քեզ իմ մտանիս, ծովը քիցի:

Կտրիչը Խաթուն Խանումի մտանին ծովն ա քյոնցում, ծովը չուրանում ա, վեղ տառնում, Խաթուն Խանումի ածդահա ախպերքն էլ քըրանում են: Տիս են կյամ, էն հլիվերին տեսնում մեռած, թաղում են, յիրան խոնգ ծոխ անում, քյոնում: Խաթուն Խանումն ասում ա. — Ա՛յ տղա, տու ինձ քեզ հետի են տանում, թա ուրիշի հետի:

Կտրիչն ասում ա. — Քեզ տանում եմ դևին հետի, վեր թողա քյինսամ իմ հայրենիքը:

Ախճիկն ասում ա. — Բա, էտ իլավ վեչ:

Կտրիչն ասում ա. — Տու վախես վեչ, մինակ ասի ըշտեղ ա Դևին հոքին, հոքին ըսպանեն, քեզ տանեն:

Հըսնում են դևին, Խաթուն Խանումին Կտրիչ տամ ա դևին:

Դևն ասում ա. — Ազադ ես, քյինսն:

Կտրիչը մըն թախ ա կենում:

Խաթուն Խանումը դևին ասում ա. — Դև, դեչանը ասես վեչ հոր ա ու հոքիտ, քեզ կնգոթուն չեմ ընիլու:

Դևն ասում ա. — Իմ հոքիս հեն ա մըն մըրալի փորում, վեր ամեն ըռավետ կյամ ա իխպիրան ճուր խմում:

Խաթուն Խանումը Կտրիչին ասում ա: Ըռավետը Կտրիչը քյոնում ա իխպիրին դրաղին կաղնում, վեր մարալը կյամ ա, ըսպանում ա, ընդա փորան դևի հոքին տիս օնում, քիցում կրակի մեչ, էրում: Դևին ըսպանում ա: Ընդեղանը Խաթուն Խանումին էր ա օնում, կյամ: Կյամ ա ձորան հայրենիքը, տեսնում ուրան խորթ հերը մեռալ ա, ըրեսնուիկը խորթ ախպերքն էլ ուրան մորը քիցալ են մըն պաղվալ, վեչ հաց են տամ, վեչ ճիւր: Տամ ա պըղվալին տուտը կոտրում, տիս պիւրում ձորան մորը: Խորթ ախպերքն էլ փախչում են օրիշ երգյիրնի: Կտրիչը տառնում ա թաքավեր, Խաթուն Խանումը՝ թաքուհի, մերն էլ թաքավորի մեր, ապրում են մինչրի մեկ:

Ընդանք հասան ձորանց մուրազին, տուք էլ հսնիք ծեր մուրազին:

9. (9) ԹԱՔԱՎՈՐԻ ՏՂԱՆ

*Նաղլը-նաղլը հարկա ա,
Ղաշխա քոռակ տակա ա,
Զիզի հարսը քարքյա ա:*

Ինում ա, ինում չի մըն թաքավեր: Էս թաքավերիս ինում ա իրեք տղա: Ուրերեն մըն օրը թաքավերը հիվընդանում ա, տեղի տակ ինգյում, մըռնելի վախտը կյամ ա: Կանչում ա ձորան խընձորը ծեռքին քյացեք քըղաքին միչին մըն պիւր կա, էն պիւրին կըլխան խընձորնին թու ըրեք, խընձորը հիւր մղակ ինգի, ընդա ախճիկը ուզեցեք:

Տղերքը խընձորնին եր են օնում, վեր քյինանն, հերն ասում ա. — Ա՛յ տղերք, ծեզ էրկու քեր օնեք, վեր փըսակվեք, պըծնեք, ծեր քըվորցըն էլ մառթի կտաք, ամնա լսեցեք հա՛, ըռաչի դոնումը հու եկը ծեր քվորցան ուզիլի, ընդան էլ կտաք, հինչ օգում ա ինի:

Հերն ասում ա, մեռնում: Տղերքը առոք-թառոք ուրանց հորը թաղում են, օխտը տամ, քըռասունքը կտրում, ետավ ուրանց խընձորնին եր օնում, քյոնում էն այնլորին կլխին կաղում, տեր Աստոծ ասում, խնձորնին թոլ անում:

Մեծ տղին խընձորը քյոնում ա մեծ վեզիրին տոտնը ինգյում, միշնակ տղինը քյոնում ա քըղաքի ամենահարուստ մառթին տոտնը ինգյում, կուճի տղին խընձորն էլ թոլ ա ունում, քյունում ինգյում հանգիստարանը: Իրեքան ախպերը ուրանց խունձորնեքին ենդան վազ են տամ:

Մեծ տղան տեսնում ա վազիրին ախճիկը ուրանց բըլկոնումը կաղնած, ուրան խընձորը ձեռքին ծիծաղում ա, ասում ա. — Տո՛ւ ես, վեր տո՛ւ ես իմ նշանածս:

Միշնակ տղան էլ քյոնում ա տեսնում ուրան խնձորը քըղաին ամենահարուստ մառթին ըխճկանը ձեռքին, ուրանց բաղումը ման ա կյամ, ասում ա. — Իմ նշանածս տու վեա, վեր տո՛ւ վեա:

Կուճի տղան քյոնում ա հանգիստարանը, տեսնում ուրան խընձորը մըն մեյմունի ձեռքի: Մըն քարի նըստում ա լաց ոնում ուրան բախտին յիրա, օգում ա տեղ թողնի կյա, մընեղ մեռն ա կյամ հորը վասյաթը, եր ա կենում, մեյմունին թընթոյան փըռնում, կյամ տոն, ինքն ուրան բախտին սերտ տինիլով:

Իրեքան ախպերը մորը նաղլ են անում, թա հինչ պըղահեց ուրանց գլխին:

Մերը շատ ա ուրխանում, վեր մեծն ա միշնակ տղորցը լավ ըխճըկեք են ուռուջահ եկալ, ամնա կուճի տղին ասում ա. — Ա՛ վերթի, տո՛ւ էտ մեյմունտ պերալ ես հի՛նչ անի, օրտ ըրտա հետ խավար չես ընիլու, տեղ թողի, թող քյինան, օրիշ օգի:

Կուճի տղան ասում ա. — Չէ՛, ա մեր, իմ հորս վասյաթն ա, լն՛վ ա՛՛ էս ամ փիս ա՛՛ էս ա, իմ բախըին քացի չըմ տալու, ուստուր էլ պըհիլու վեմ:

Հիշքան մոտիկ-պարիկամ, մերը, ախպերքը ասում են մեյմունին տեն ըրա, ճար չի նո՛ւմ, — Չէ՛, — ասում ա, — էս ա վեր կա, պետմա պահեմ:

Կյամ են մեծ տղին հըրսանիքն անում, օտում են, խմում են, պար են կյամ, կուճի ախպերն էլ մեյմունին թողում ա ուրան ութաղումը, հըրսընքին դրաղին նըստում, դըրդըվոտած թմաշա անում:

Մերն ասում ա. — Ա՛ տղա, եկ քու ջահիլ օրըտ խավար մի անիլ, էս ըխճըկորանցս մընին օգի, մեյմունին էլ տեն ըրա քյինան:

Տղան ասում ա. — Չէ՛, այ՛ մեր, հինչ վեր ճըկատիս կյիրած ա, էն էլ պետք ա ինի:

Հըրսընքին կետումը տեսնում ենմըն հուրումալազյ ախճիկ նի մըտավ պար եկը: Էնքան նախշուն ա ինում էտ ախճիկը, վեր շափաղը տըռնեքավը տո՛ւս ա կյամ չոլերին տամ, վեր մառթ ասում ա. «Ա՛յ ախճիկ, վեչ օտեամ վեչ խմես, լըհա թըմաշա անես»: Հըրսընքավերը դեչանը ուրոն անա հըրցընիլը թա էտ հոնր ախճիկն ա, հու վա, ըշտըղացի յա, էտ ախճիկը պար ա կյամ, սազանդարեն կյնլոխ տամ, տո՛ւս կյամ կորչում:

Մերը կուճի տղին ասում ա.—Ա՛յ տղա, քս էն ախճիկն օգի է... քյնցալ ես մեյմունին յախան կտրալ:

Էս խեղճ տղաս պոնգնած-պոնգնած, մըտքըմոլոր կյամ ա տոն, ուրանն մեյմունին կոխկին նըստում, լաց ոնում:

Մեյմունը ըտեղ ասում ա.—Գյուղում են հինչ, թաքավերի տղա, էն ախճիկը վեր մհեկս հըսնքումը պար եկը, ես ի... ես մըն թաքավերի ախճիկ եմ, մեյմունի խըրխա կեցած, եկալ եմ քեզ ճարալ, ամնա քըզանա գիման վեչ մընը գյիդալ չի պիտի, թա հու վեմ, հեսա ասում եմ հսն... միշնակ ախպորըտ հըրսնքավս էլ ես եմ կյալու պար կյամ, ամնա վեչ մինին ասես վեչ, վեր ես մեյմունն եմ, մենակ տու գյիդա, վեր մըն հոքի էլ գյիդաց, էլ իմ տերս չես, փըխճիլու վեմ քյիննմ:

Կուճի տղան շատ ա ուրխանում, ծիծաղում, վեր թհենց պան կա, օրախ-օրախ քյունում ա ախպորը հըրսնքին:

Մըն վախտ մըն դն հըրսընքին տիոնը կաղնում ա, օռոում, թա.—Է՛յ, թաքավերի տղերք, ծեր մեծ քվորն ինձ տվեր օզեմ, տանեմ:

Ախպերքը տուս են կյամ:

Մեծն ա միշնակ ախպերն ասում են.—Քյինն իռաղ իլ, լիա տու իր մնացալ, վեր մեր քվորը քեզ տանք:

Ամնա կուճի ախպերն ասում ա.—Չէ՛, մեր հերը մեզ վապաթ ա ըրալ, թա սիվթա հու վեր կյա մեր քվորցան օզի, տանք: Մեծ քվորն էլ տանի:

Էլլա մեծ ախպերքը ըռազի չեն ոնում, ամնա կուճի ախպերը կուճի քվորն էլ տամ ա առչին, առչը տանում ա:

Կյամ ա միշնակ ախպոր հըրսանիքը: Հըրսընքավերը էլլա թոք ու թոհմահ են անում կուճի տղին, վեր մեյմունին պահում ա:

Մըն վախտ էլլա համան հուրիմալաց պիճիկը վեր նի ա մըտնում պար կյամ, տղորցը մերը կուճի տղին ասում ա.—Ա՛ վերթի, մեյմունին տար կուրցրու, հես ա էս թառլանս օզի:

Մեր ա էլի, սերտը ցավում ա:

Ըտեղ կուճի տղան էլ համփերում չի, մորն ասում ա.—Ա՛ մեր, ըստուծանա թաքուն չի, քըզանա հի՛նչ թաքուն ինի, համան ախճիկը մեյմունն ա, իմ կնեկյս:

Ախճիկը պար ա կյամ, տեղ թողնում, քյունում: Կուճի տղան էլ դիքետան կյամ ա: Մերը մեծ տղորցը ասում ա, իրեքանը խորուրդ են անում, թա եկեք քյինանք էն ըխճկանը խիրխան կյուղանանք, թորենը քիցինք, վեր էլ մեյմուն չինի:

Կուճի տղին կանչում են, ուրանց մըտքինը ասում, համ էլ ասում.—Քիշերս տոտնը միչի դուլան մըցնես վեչ, վեր կյանք կընգանտ խիրխան տանենք: Կուճի ախպերը դաբուլ ա կենում: Կյամ ա մեյմունին կոխկը, շորերը հանում, պըրա-նում:

Մեյմունն էլ ուրան խիրխան հանում ա, նի մըտնում տղին ծոցը, թա.—Թաքավերի տղա, տոտնը պենդ են մըցրալ:

Տղան ասում ա.—Հան, անկեկյ, արխային կաց, պինդ եմ մըցրալ:

Քոն են ոնում: Դե կուճի ախպերը ըշտեղ ա տոտնը մըցրալ, լիա նհենց նը-հետ ա ըրալ: Դիքալոսին մեծ ախպերքը կյամ են ըխճկանը խիրխան կյուղա-նում, տանում քյուցում պլացած թորենը:

Ախճիկը իմաստուն ա ունում, տեղան ծարս ա ունում, թա.— Թաքավերի տղա, քու տոնդ քանդվի վեչ, վեր իմ տոնս քընդեցիր, իմ խիրխասս էրում են, ես քյինացի, տղա ես, ենդաս եկ:

Թաքավերի տղան ունգյնում ա ըտուր վենդին-ծերքին, լնց-ըղաչանք անում, թա.— Տիյեր Աստոծ, տուվեր տու, եկ քյինա միր:

Ախճիկն ասում ա.— Չէ, ես քյիննլու վեմ, ամնա թա օգում ես ինձ ճարես, կյաս վեչ հան... շատ տիժար ա իմ տեղս...,— ախճիկն ասում ա,— վեր թեհնց ա, ըրկաթի տրխնի կյենա, ըրկաթի գավազան ծեռքտ եր օնես, օխտը տարի ման կյաս, ըշտեղ վեր տըրխընիտ պուք կյա, ըրկաթի գավազանն էլ հալվի-մաշվի, ընդեղ էլ ինձ կճարես:

Ասում ա, տոնս կյամ, կորչում: Խեղճ տղան յանդի-յանդի յա կյամ, ըրկաթի տրխնի կյենում, ըրկաթի գավազանը ծեռքն օնում, մըն կուտուր հաց մեշկը կապում, քյնում, քյնում...

Քյնում ա, քյնում, շատ նան քիչը աստոծ գյիդա, հըսնում ա մըն յբանա դոզի, վեչ ջինս, ինքն էլ սոված-ծարսավ, տես ա էշում, տեն ա էշում, տեսնում մըն տեղա մըն ծոխ ա եր ինում: «Դե հինչ կիսի, կիսի»։ ասում ա, քյնում էն ծոխին յիրա: Հըսնում ա մըն տեղ, տեսնում տափին տական ծոխ ա եր ունում, մըն ըրկաթի տոնը կա, տոնը թակում ա, նի մըտնում, տեսնում ուրան քերն ա:

Քերն ախպորը վեր տեսնում ա, տեղան ծոնգ ա ունում, մագերը քանդում ա, թա.— Ա՛յ ախպեր, էտ վեր քամին ա քեզ պերալ էս յըբանա դոզս, հինչ անես, եր կաց փախչի, թաշնա մըհեկ Մեծ Դևը՝ իմ մառթս կյնլու վա, քեզ օտի:

Ախպերը լնց ա ունում, թա.— Ա՛յ քեր, էլ տեղ չօնես քյիննլի, սոված էլ մեռնում եմ, հինչ օգում ա անի քու մառթս:

Էտդարումը մընուրոտուց ա կյամ, տափերը տոնուր են կյամ.— Հսյ, — ասում ա մեծ քերը, — դևը եկ, նի մըտ ըշկափը, տափ ըրա:

Ախպորը, կոխում ա ըշկափին մեչը, ինքը ուրան պանին կենում:

Ոտոռալավ, թնչալավ դևը նի ա մըտում տոն, շելակը եր տոնում, թա.— Ա՛ կնեկ, մարթի վետ ա կյամ, էս հինչ իսան ա իմ տանս:

Կնեկն ասում ա.— Չէ, չէ լիս մըն..., տեսնաս հինչ վետ ա ինգյալ կյուլխտ, նստի հացտ կեր:

— Չէ, — ասում ա դևը, — դուզն ասի, թաշնա եր եմ կնալու ման կյամ ճարեմ, հու վեր էլ ինի օտեմ:

Ճարը կտրած, կնեկն ասում ա.— Ա՛ մառթ, ըստուծանա թաքուն չի, քըզանա հինչ թաքուն ինի, իմ ախպեր եկալ ա:

— Հասամ, ասում ա դևը, — լնվ ա ըրալ, թա մեծ ախպերըտ ինի, ուտիլու վեմ, միշնակն ինի՝ ուտիլու վեմ, կուճինն ինի, աշկիս յիրա տեղ օնի:

Քերը ախպորը ըշկափան տոնս ա օնում, դևը տեսնում ա, վեր կուճի ախպերն ա, վըենդը-ծերքն ա ինգյում, թա.— Պարով ես եկալ, իմ ազիզ հաներ, մըն ասի տեսնամ հինչ քանի յա քեզ պերալ էս վերանա աշխարս՝ իմ դևերի թաքավերությունը:

Թաքավերին տղան նըստում ա կըլխավն անց կըցածը նաղլ անում, թա՝ հալ-դազիյա, սըհենց-սըհենց, քյնում եմ նշանածս ճարեմ:

Դևը կյնլոխը տոնրոնր ա տամ, թա.— Բահո... այ հաներ, տիժար պան ա, ընդեղ քյինացողը ետ չի կյամ, ամմա հինչ կարամ քրզհետի կանեմ, — ուրան յալան մըն դաստա մագ ա պուկում, տան հանորը, թա,— քել ծեռքիտ պահի, հեկի վեր նեղը կինգես, հարկավեր կկյամ, մագս տոնրոնր կտաս, կիկյամ:

Քիշերը քոն ա ունում, ըռավետը պաշարավ-պանավ ճրնհապա ինգյում:

Դևը թաքավերին տղին տանում ա ուրան երգյիրին սահմանը, թա.— Դե քյինա, թաքավերի տղա, էս երգյիրս էլ իմ բաջանաղի վեղն ա, քու կուճի քվոր տոնը, քյինն բաջանաղս էլ քեզ քյնմագ կանի:

Քյնում ա, հունց վեր դևին նհետ ա պտահալ, պտահում ա առչին նհետ էլ: Ըտեղատ էլ քյնում ա, քյնում, շատը քիչը աստոճ գյիդա, տեսում ա մըն արխի դրաղի միրչեմնի յին հրվաքվալ, օգում են արխն անց կենան, ամմա նի յաին տատում ճոնրը տանում ա: Ըստեղ էլ տղի մեխկը կյամ ա, մրհակը կարմինջ ա քյուցում արխին էս դոլաս էն դոլը: Հիշքան միրչեմնը կա, լոխ անց են կենում:

Վեր լոխ անց են կենում, մըն մեժ միրչեմնը ասում ա.— Ա՛յ տղա, տու վեր էտ լըվոթունըտ ըրիր, ես պրծնիլ չեմ, մեր թշնամի միրչեմնը թաքավերը ինձ գոռալ ա՛ վեր էս արխս անց չի կնիք, մեզ կուտուրիլու էր, աստոճ քեզ քյնմագ ինի, վեր մեզ ազաղեցիր, ես էս միրչեմներիս թաքավերն եմ, հինչ էն օգում, վեր տամ քեզ:

Թաքավերին տղան ասում ա.— Տո՛ւ վես գյնդում, հինչ օգում ես, տու:

Միրչեմնը թաքավերը մըն միրչեմնի ճոռնը պուկում ա տամ տղին, թա.— Տիր ծոցումտ, ըշտեղ հարկավեր կյամ, կկանչիս կկյամ:

Թաքավերին տղան միրչեմնին ճոռնը տոնում ա դևին, մըն էլ առչին թուքյին նրհետ, քյնում: Քյնում ա, քյնում, շատը նան քիչը աստոճ գիդյա: Մթեն երգյիրնի յա անց կենում, ծովեր, կյետեր ա կտրում, օխտը տարին թըմամում ա: Մըն պնցրու սար ա ունում, հըսում ա էտ սարիտ, տեսում մըն նիսպոնր, ճոնր ա խմում, եշում տեսում ըրկաթի տրխնին հավվալ-մաշվալ են, ըրկաթի գավագանն էլ մնացալ ա հափռավը մըն. «Ըհը, թա էն ախճիկը սաղ ա, ըստեղ ա ինիլու»: Ըխպրնն ճոնր ա խմում, քոն ինոն: Տու մի սաիլ, թա հնման էն ըխճըկանը հերը աման տարի ամանը կյամ ա էտ սարտ դաջ:

Էտ տղիտ նշանածը ուրնն ըռաչքին ծառայող ըխճըկոցան մընին դարկում ա, թա՛ քյինն ցորտ-ցորտ ճոնր պեր ծեռքերս լիվննամ: Ծառայողը կյամ ա վեր ճոնր լցնի, տեսում ա մըն նախշուն տղա ըխպրին կոխկին քոն իլած: Էնքան կյեղեցիկ ա ինում էտ տղատ, վեր խեղճ ախճիկը մայիլ մնացած եշում ա, ճոնրը մտան թըռնում ա: Տղին նշանածը տեսում ա, վեր դարավաշը ճոնր չի պոնրում, կյամ ա դիքա ախպոնրը, տեսում հնման տղան ըխպիրին դրաղին քոն: Դիմիշ չանում եր կցնի, շոք ա անում, դեչանը նշանածը քոն ա ինում, եր կենում: Վեր աշկերը պննում ա տեսում ուրնն կընեկը կլխանը եր կաղնած, հոնը քյնում ա: Նըշանածը մըն հետ տղին թոշան պաչում ա, հոնը կյամ ա կիլոխը: Եր ա օնում, պոնրում պալատը:

Մըն քանի օր մըտեղ կենում են, տղին ասում ա.— Ա՛յ տղա, իմ հերս մըն ազրայիլ մառթ ա, վեր գյիդա, քեզ էլ, ինձ էլ թիքյա-թիքյա կանի, լաճն էն ա, ասենք իմ հորս, հալքաթ աստոճ մեժ ա, մըն յոն կանի:

Ախճիկը հորն ասում ա, թա սհենց-սհենց, իմ նշանածս եկալ ա ինձ տանի:

Հերը չար թաքավեր ա ինում, վենդը տափին ա կյամ, թա էտ տղիտ պերեք, էս սհաթիս մոտթիլու վեմ: Տղին պիւրում են: Նազիր-վազիրին եշում են, տեսնում մըն հենց կեղեցիկ տղամարթ ա, վեր իշկի հնլա թայը ախշար եկած չի: Խնթրում են թաքավերին, թա՝ թաքավեր, ափսուզ ա էտ տղիտ ըսպանես:

— Եկ մըն քանի պայման կտամ, թա կանես, հենա ախճիկս քեզ կտամ, թա չէ, կյիւլոխտ կկարեմ. էքյոժ իմ դես տոնս ա կյալու մեդան, թա կրացիր մըն դև պիրես իմ դևիս նհետ կոխ կենա յախտի, հեն ա ախճիկս քունս ա, թա չէ, կյիւլոխտ կտրիլու վեմ:

Թաքավերին տղան կյամ ա ուրան օթադը, սոքը-շիվան անում, սաղ քիշերը քոնը տանում չի, մըտածում ա, թա էքյոժ հունց պիտի անի:

Լոսալուսին նշանածը կյամ ա, թա. — Ա՛յ մարթ, բա իշկի քեզ մըն ծանոթ-բարիկամ չօնես:

Ախր տղին մըտան թոած ա ունում ուրան փեսա դեր: Վեր նշանածն ասում ա, մետն ա կյամ: Ծոցան դևին մազը տոնս ա օնում, թափ տամ: Մըն էլ ա տեսնում ուրան մեծ քվոր մարթը՝ դըր հրյաթումը կաղնեց: Դևին եր ա օնում, քյունում թաքավերին տոնը: Ժողովուրթը հըվաքվում ա, դևերը կոխ են կենում, էս տղիս դըր վեր թափ ա տամ, թաքավերին դըր օխտը կյազ տեն ա ինգյում, մեծ կուտուրը անջուկն ա տառնում:

Թաքավերը ըջըղվում ա, մըն աժդահա առչ տոնս օնում, թաքավերին տղան թափ ա տամ առչին մազը, ուրան առչ փեսան կյամ ա, թաքավերին առչին յախտում:

Ըտանա ետը թաքավերը տղին քյուցում ա մըն օթադ, մըն մեշոկ կորեկ, մըն մեշոկ

սորեկ ուրուր խառնում, թա մինչևի ըռավետը էտա էտ կորեկտ սուրեկատ ճուկեցիր, կապրես, էթա չէ, կյիւլոխտ կտրիլու վեմ: Տղան նըստում ա մետքը անում, դէ իշկի կըճոկվի մըն մեշոկ կորեկը մըն մեշոկ սորեկան:

Լանց ա ինում սաղ քիշերը, ծըքըծեքին նշանածը կյամ ա տիռնին ճելսկափն ասում. — Ա՛յ տղա, բա տու մըն ծանոթ-պարիկամ չօնես, վեր կյա քեզ քյունագ անի:

Ըտեղ տղին մետն ա կյամ միրչեմնին ճոռը, տոնում տամ, մըն էլ էն ա տեսնում տոնը լցվեց միրչեմնավ, մընը կորեկն ա եր օնում, մընը սորեկը, ճուկ-ճուկ թուփ անում, ուրուր անա ճոկում: Վեր պըրծընում են, չիման ենդան նի ա մըտում հնման էն միրչեմնը, վերին ճոռը հեն ա տղին ծերքին, էտ էլ տեսնում ա կորկին միչին մըն փոչ սորեկ ա մնացալ, եր ա օնում, տանում քյուցում սորեկին յիրա, թա՝ էս էլ իմ պաժինս: Նոր տղան ճոնատ միրչեմնին ճոռը տամ ա ուրան, միրչեմն թաքավերին շատ շուրիակալ ունում: Միրչեմնին տեղ են թողում, քյունում:

Թաքավերը կյամ ա տեսնում կորեկը սորեկան ճոկած, հընդրած, ճուկ-ճուկ կյիւտած: Մընում ա արմանք-գարմանք կտրած, ամնա շատ փիս, չար թաքավեր ա ունում, ըտանավ աս չի կենում: Պուրում ա մըն մեծ, մինչևի երգիխըր կոկլիկ չինարու տակ շիւշի պոլ անում, մըն ըստաքան լիքը ճիրավ տամ տղին, թա տիր կըլխիտ, նիի իլ չինարին, էթա մըն կնթ կըթացալ ա, վիզըտ կտրիլու վեմ: Չինարուն տակն էլ դէ հիլի ա հափոփ մեչ, մըն կաթ էլ կաթա, յուրուվալու վա:

Մեսը կեռիքն ասուն խեղճ տղան, ըստաքանը ճիրավ սիլա, տոնում կըլխին: Նըշնածին մըն մըտանի յա ունում, շատ փանդավ-հնարքավ, վեր նի յա տամ ըստըրքանին, ճորը միչին սառչում աս, ըստաքանն էլ տղին կլխան կենում: Տղան նիհ աս ունում չինարին: Պիցրանում աս, պիցրանում վեչ ճոնդ օնի, վեչ պուճախ: Շատ վեր պիցրանում աս, ուրան հորը երգիորը յուրովում աս: Օխտը տարի կորած-մուկորած, վեր հորը երգիորը տեսում աս, դահրում աս, լաց ինում: Մըն կաթ ըրտասունք ինգյում աս հիւլուն յիրան:

Չար թաքավերն ասում աս. — Ըհը, ճորը կաթաց, եր կյա, կյնուխը կտրեն:

Ախճիկն ասում աս. — Ա՛ հեր, խընթորում են մըն էտ ճիրիտ համը օնես, տեսնաս աղի յա, թա նալի:

Հերը համն օնում աս, թա աղի յա:

— Ա՛ հեր, — ասում աս ախճիկը, — էտ վեչ թա ըստըքանին ճոր աս, էտ էն տղի ըրտասունքն աս, ուրան հորը աշխարքը տեսալ աս, սերտը օգալ, լաց իլալ:

Տղան եր աս կյամ: Թաքավերն օգում աս մըն պայման էլ ասի, ամնա նագիր-վեգիրին հըվաքովում են, դանչանք-պղատանք անում, թա. — Մեխկն աս, բոլ աս հինչ պայման տուվալ ես, եկ քարը կյոքատ եր ածի, ախճիկտ տու ուրան, շենքավ-շտորքավ տղա յա, ինքն էլ թաքավերի տղա:

Պիւրում են օխտը օր, օխտը քիշեր հըրսանիք անում, ենդան էլ քոասուն օր քյեփ անում, պեները կպոտում, հարսը նան փեսան ճընհապա տունում:

Ընդանք հըսան ուրանց մուրագին, տուք էլ հըսանք ծեր մուրագին:

Ըստուճանա իրեք խինձոր եր ինգի, մընն ըստղին, մընը՝ լտղին, մընն էլ պատին ծական յիշողին:

10. (10) ՈՒՍԿԵ ԽՆՁՈՒՐՈՒՆ ՆԱԳԸԸԸ

Նիս ի նիս չի մին թաքավոր, ադուր պալատու ըորշկին նիս ի մին շետ մոծ իգի: Ադ իգյամը նիս ի մին խունձուրու ծառ, ադ նաս ի լա ոսկե խնձուր:

Մին օր թաքավորը կընչիս ի ուրեն կոշտը ուրա իրիք տըղերանց ու ըսիս. — Իմ սիրտը շետ նաղինջ ի, վխես իմ հոր մեր ոսկե խնձուրնին գղանին:

Մոծ և միչնակ տղերքը ըսես ին. — Ա՛յ հեր, հո՛ կարիլ մեր իգին բեն գըղանի, անղի բեծուր հուր-մար օնի, հոր իսկի ծետը ուրեն թիվերավը կըրիս չի թոչի, մըտն իգին:

Փստիկ տղան ըսես ի. — Չէ՛, ախպերնիրս, դուք սխալվիս իք, մեր հերը դուրդը ըսիս, ադ ծառուն վերան մետիլ ջուկ դարավուլ չի դիրվի:

Թաքավորը ըսիս ի. — Ձիր ախպերը շետ դուզը ըսիս՝ ադ ծառուն վերան դարավուլչին միտալնիք դուք՝ իրիք ախպրտանքըտ:

Թաքավորը տըղերանց վերան նոքաթը դիրիս, հոր միտուլ դարավուլ քաշին: Ըորշկի օրը գինիս ի դարավուլ մոծ տղան: Տղան հոր մթնիս ի, գինես ի իգին, դարվազան դուփուլավ կպես, գնիս իգուն չուք թարափուն ծակը-ծուկը վարավուրդ ըրես. ալ քոլ չմնաս, հոր տակը թմաշ չարի: Ադ օմնինը ըրիլեն հետը գնիս ի խունձուրուն տակին նստես, ակնարը տընգես խունձուրուն վերան: Հոր

կեսքիշերը դռնիս, տըղեյուն քոնը տընիս ի, պըրընես ի, քոն նուս: Մին ալ ակնա-
րը բնիսի տսնիս, հոր խնծուրուն մինը կա վուչ:

Նուս ի թաքավորուն կոշտը, ըսիս.— Ա՛յ հեր, իս սաղ քշերը ակնորուս կո-
պարը թուղ չիմ արալ, հոր ուրուր կային, խնծուրուն տակ մարդու հաք ալ չի
կպած, համա ալու խնծուրուն մինը կա վուչ:

Թաքավորը ըսիս ի.— Գնա, դինջաց:

Էրկունջի քշերը գնիս ի դարավուլ միջնակ տղան թաքավորի: Աս ալ մոծ
ախպուր նման դարվազան կպես ի, իգու չուրք թարափն ալ շոռ նուս, նուս խնծու-
րուն տակին նստիս, ակնարը ցքիս խնծուրուն: Հիբ հոր դռնիս ի կեսքշեր, տղան
տնիս ի, հոր քոնը տնիս ի, գլխը դրիս ի տափուն ու քոն նուս: Մին ալ ակնարը
բնիս ի, տսնիս, հոր կես օրը դիռած:

Գնիս ի թաքավորուն ըսիս.— Ա՛յ հեր, սաղ քշերը իս ակնարս մին վարկեան
ալ կապած չիմ, համա լսացալ ա, տիսալ ըմ, հոր խնծուրուն մինը կա վուչ:

Թաքավորը ըսիս ի.— Գնա՛, գնա՛, դու ալ դինջաց:

Իրիքինջի քշերը գնիս ի փստիկ տղան: Ադ տղան ախպուրցը նման գնիս չի
դես-դեն շոռ նուս, մինակ փկիս ի դըրվազան, նուս խնծուրուն տակին նստես,
նե-աղեղը դրիս կուխկեն: Միս հոր կես քիշերը դռնիս, տղան տսնիս ի, հոր քոնը
տնիս ի, հընիս ի ջիբեն դենակը, ձրքին մին բուրթը կըտրես, վերան աղ ըծիս: Բու-
թը սաստիկ սկսես ի մըմըմալ, անդի հոր տղիյուն քոնը փխչիս ի: Միս հոր սհա-
թը դռնիս ի տըսնըերկուն, մին ալ տսնիս ի, էրգիսքեն մին մոծ սև ամպ գլուրվի-
լավ վերը նուս խնծուրուն վերան: Ամպը հոր հսես ի ծառուն, մանջին դուսը նուս
մին ձիրք խնդիսի հոր խնծուրը կտրի: Տղան նետը դրիս ի աղիղումը ու քշիս նտը
բրախ նաս: Ալբահալ ամպ-մամպ կուրչիս ի, լիսնակը դուսը նուս: Տղան պըրնիս
ի արխային քոն նուս, տըսնիս ի խնծուրը ուրա տեղը:

Հոր լսինիս ի, տղան տըսնիս ի, հոր ծառուն տակին արունը գոլ տված, մին
խոր գնես ի դիբի դին: Տըսնիս ի, հոր արունը վեր դռնիլավ գնես ի:

Տղան գնես ի թաքավորուն կոշտը, ըսիս.— Հայրիկ, աս քշեր իս գուղուն յա-
րալու յըմ արալ, համա սպանված չի, հարկավոր ա, հոր գնիք հիտկը պոնած
գդինիք, տեղը սպանիք:

Թաքավորը ան երկու տղիյուն ալ դիրիս ի փստիկ տղիյուն նետ, նստիս ին
ձիանքը, արունի հետկը պոնես ին, գնիս: Շիտն գնես, թա խոր, աղ գնեցուղը
գիղիս, հսիս ին մին հուրու, հիշտեղ արունը հիտքը պրծնիս ի:

Թաքավորու փստիկ տղան ըսիս ի.— Ա՛յ իմ ախպրտիք, մեր գուղը տըղս ա
մտալ: Վիր գուքաս հուրը, անդուր սպանիք:

Բիրիսին մին հաստ, էրկեն քանդիր, ավալ կպես ին մոծ ախպուրը, կախ-
նաս հուրը, հոր գնի գուղուն սպանի:

Տղան ըսիս ի.— Հոր իս ասիլ իմ՝ վայ էրվալը, ալբիհալ ինձ հուրին հանիլ
իք:

Տղիյուն կախ ըն տվալ, հասալ ա հուրու կիսին, հարալ ի տվալ. «Վայ, ձիգ
մատաղ, վըռվիս իմ, հա, վըռվիսիմ»: Ադուր քաշալ ըն, հանալ: Կպիլ ըն միջնակ
ախպուրը, աղ ալ գիցալ ա հուրու կիսը ու հարայը տվալ. «Վայ, մեռա, հա միեռա,
հետ քշիցիք»: Աստուր ալ ին հանալ: Հրդա նոքաթը հասալ ա փստիկ ախպուրը:

Աղոյր հոր կպիսի քյանդիրավ, տղան ըսիսի.— Հիբ հոր իս ասիլ իմ. «Վայ մեռա, հա մեռա, ինձ հետ քշիցեք», դուք իմ ըռըխին թմաշ միք արիլ, քանդըրը բրախ տվեցեք գնե: Մին ալ հիբ հոր քյանդիրը քաշիմ, հանիլ իք, հինչ հոր վերան կապածն ի:

Թաքավորու փստիկ տղիյուն կպեսին կախնասս հուրումը ու սկսես ի քյանդիրը բրախնասս: Աս խեղճի հա-հարայի նաս՝ վայ մեռալ ըմ, հնեցեք, ախպերնին լսիս չին, անդուր հա վիրն բիրիս: Մին ալ տանիս ին, հոր քանդիրը բռշացալ ա, ուրեմն տղան հասալ ա տափուն:

Տղան հոր հսիսի տափուն, հուշի գենածը նիս: Մի քանի բոպէ անցընուս, տղիյու հուշը նուսի գոխը, վիրինասս վերան նստիս: Հուրումը շետ միթենի նիս: Ձիրքերավը պտռուտիլավ տըսնիս ի, հոր մին տասը ախպուրը վեր դոնիս: Տղեն ծարավ, դանձվածը լա իրիսը, ձիրքարը լվինիս ի, հվընիս, փուրուն վերան պըրնես, մին դոյումջա ջուր խմիս: Խնդիս ի հոր տեղեն վերկա, տանիս ի, հոր հաքարը մինչև ծոնգարը խըռված ըն տափը: Տղան մին իգինքը թափ ընաս, հոր հաքարը հանի, ձիրքը կպեսի հուրուն, ադ տեղը փուլ ընուս, մին ծակը բնվիս: Տղան մտիս ի ադ ծակավը դուրս նուս մին պտղատու իգի: Մին խոր տեղ գնիս ի, տըսնիս ի, հոր ադ իգումը մին էրկու հրկանի տոն: Տղան գնիս ի փալաքաններավը բիցրինիս պակոնը, տանիս ի մին դուրք: Ադ դուրքը բնիս ի, մտիս օթախը, տանիս ի, հոր օթախի մեջտիղը նստած ա մին ախչիկ, ծնկան վիրան մին իրիք գլխանն նառադեվ գոխը դիրած, քոն իկած:

Ախչիկը հոր տանիս ի տղիյուն, ըսիս ի.— Վայ, ախպեր ջան, շուդ արա գնա, թա չէ աս ջանավարը վիրի նալ, քի սպանիլ:

Տղան տանիս ի, հոր ըխըչկա ձիքին մին ուսկէ խնձուր:

Տղան ըսիսի.— Վախի մին, ախչիկ ջան, իս միս աղուր հետա իմ իկյած, հոր սպանիմ:

Ախչիկի ըսիս ի.— Տանիս ին, ան պուճախամը դիրած ա մին խանչալ, ժնգուտած դիյնի մանջին, հոր կարիս խանչալը դիյնի մանջին հանիս, ան վախտը դու կարիլ իս աղուր սպանիս:

Տղան գնես ի պուճախին խանչալը վիր ըռիս, դիյնին ձիք նաս հուրգի մին թեփուր: Հընիս ի թա չէ, նառադեվը ակնարը բնիս ի, վերան նստիս: Տղան ալ ադ ալ խնդիսի լա, ալբահալ խանչալը վերը բիրիս նաս նառադևու գոխը կնթես:

Ախչիկի ըսիս ի.— Վիյ, իս քիգ մատաղ, եք փախչիք գնեք, իս քունն ըմ:

Տղան ըսես ի.— Աս հինչ դուրք ա օթախուն մանջին:

Ախչիկի ըսիս ի.— Վիյ, քի մատաղ, ան օթախը գնիս ուչ, տեղը ըպրիս ի վեց գլխանն նառադևը, հոր փիչն, դու վեր ըս նանիլ:

Տղան ըսիս ի.— «Տըսնիմ հուրդի փիչիլասկան», մըտես ի ան օթախը, տանիս ի, նստած ա մին ախչիկ, ավելի նախշուն, մին վեց գլխանի նառադև գոխը դիրած ըխչկա ծոնգանը, քոն իկած:

Ախչիկի հոր տանիս ի տղիյուն, ըսիս ի.— Ա՛յ տղա, դու շտեղ, աս տեղս շտեղ, շուդ արա, հուրդի հոր իկած ըս, անդի ալ ետ դեռ, գինս՛, թա չէ աս ջանավարը վիր ի նալ, քի սպանիլ:

Տղան ըսիս ի. — Հո՞ր գինեմ, իս միս ադուր հետա ըմ իկած, հոր սըպանիմ:

Ախչիկի ըսիսի. — Ա՛յ տղա, դու հոր խնդիս իս ադուր սըպանիս, ան խանչալը, հոր դիրած ա ան պուճախամը, մետիլ կարիս ժագուտած դիյնի մանչեն խանչալը հնիս:

Տղան նիս հնես ի թա չէ, նատադևը ակնարը բնիս ի, վերան նստես: Տղան ալ միս ադ ի լա խնդիս. Նաս ի խանչալավ գոխները կուտորիս:

Ախչիկի ըսիսի. — Վայ, իս քի դուրբան, եք փախչիք տեղես, իս քունն իմ, դու՛ իմը:

Տղան ըսիս ի. — Չէ՛, դու մին ասա տեսնիմ՝ աս հինչ դուրք ա:

Ախչիկի ըսիս ի. — Վայ, աման, աման դու մղաբուն ըս, ադ դուրքը բենիս ուչ:

Տղան ըսիս ի. — Դու արխային կաց, ադ խունձուրը վիր առ, գնա ան ըռըշկի օթախը, տեղը մին ախչիկ կան, անդուր քշտին հուտաց կաց, մինչև իս գում:

Ախչիկի գնես ի ըռըշկի օթախը, տղան մտես ի իրիքմինջի օթախը, տըսնիս ի, օթախուն մաժտեղը նստած ա մին ախչիկ, հոր հրենակուն ըսիս ի՝ դու դուս մա նուլ, իս դուս իմ նուլ:

Տղեյուն հոր տանիս ի, ըսիս ի. — Ա՛յ տղա, քու հոգուն մատադ, աս հիշտեղ ըս իկած, շուդ արա տեղես գինա՛: Նատադևը աս քիշեր իկալ ա յարալու, հըրդա քոնը իկած, քընըտեղե հոր վիր ի կացալ, նա գըլխըտակին բոթուլը, հոր մանջին անմահական ջուր կան, խմըլացուկա սղանի, իսկ հաքարուն տակին բոթուլու ջուրը հոր խմի, ալքիհալ միռնիլ ի:

Տղան ըսես ի ըխչըկան. — Դու գինա ըռըշկի օթախը, տեղը էրկու ախչիկ կան, անդուց քըշտին կաց մինչ իմ գուլըս:

Ախչիկի գինես ի ան ըռըշկի օթախը, տղան գլխուն տակեն բոթուլը վիրի ըռես դիրիս հաքերուն տակըն, իսկ հաքերուն տակին բոթուլը դիրիս գլխուն տակին ու նատադիվուն յարալու տեղուն յումբուրուղավ կուփիս:

Կուփիս ա թա չէ, արունը շպրտիս ա, նատադևը վիրի կաս, տիղը նստալ, ըսիս. — Այ պարով ըս իկալ դու, թաքավորի տղա, եք մին-մին խմիք:

Նատադևը ձիքը միկնիս ի հըքերուն տակին բոթուլը նաս տղեյուն, գլխուն տակենի ինք ի վիր ըռես, խմես ին: Միս խմես ին թա չէ, նատադևը տեղը հարդակ մըռնիս ի, իսկ թաքավորի տղեյու գոռը տասը դոնում իվիլնիս ի:

Տղան դուս ի նուս, գնես ըռըշկի օթախը, ըխչըկերանց վիր ըռես, գինես հուրը:

Ավալ կպես ի մոժ ըխչկան, ըսես. — Քշիցեք, ադ հոր հանիք, դուրկիս իմ մոժ ախպուրս հետա:

Մաջնակ ախպերի հուտիս ի, ինքի ուրեն ըսիս ի. «Մոժ ախպիր նիլի հինչքան օքուտ բեն ա հա, տանիս իս ադի նախշուն նշենածը ստացալ»:

Քոդը հետ ին ցիքիս, տղան կպիս ի էրկունջի օթախու ըխչըկանը ու ըսիս. — Քշիցեք, աս ալ մաջնակ ախպուրըս նիշենածն ա:

Աս անքամ ալ մոժ ախպերըն ը հուտիս, հոր տըսնիս ի ախպուրը նշենածը ուրան նշենածեն նախշուն ա: Քոդը ալու ցիքիս ին հուրը. հըրդա հուրամը մընահաժ ըն փիստեկ տղան ու փիստեկ աղչիկի:

Տղան խնդիս ի ըխչըկան կապի, հոր հանին, ախչիկի ըսիս ի.—Ա՛յ տղա, էռէջ դու գինսա, էտնէ իս իմ նուլ, թա չէ հո՛ր իս գինեմ, քու ախպարտիքը նախանձութունեն քիզ հանի չին, պահիլ ին հուրամը:

Տըղան ըսես ի.—Չէ՛, իս քիզհենից շուղ գինէ չիմ, բիրդան կարի չիս օքուտ կապիս, վեր իս նանիս, սպանվիլ:

Ախչիկի ըսես ի.—Ա՛յ տղա, իս գինես իմ, համա դու մընըլասկան ըս հուրամը՝ նախանձութընի պատճառալ:

Ախչիկի նաս ի տղեյուն մին անգուզ, էրկու փընդըղ և մի փետու կուտուր, մին մատիտի դդար, էտնէ ըսես ի.—Հոր քի անիի ուչ, դու գինեյիս ադ իզավը մինչև վերչ, էռէջըտ դուսը նուլ մին դուրք, հոր բինվիս ի մին մոճ արոտատեղ, ադ դըրքավը մտելիս թա չէ, դուս ըն նուլ էռէջըտ իրիք ուչխար՝ մինի՛ սև, մինի՛ կարմեր, մյուսը՛ սիպտակ: Ադուք ըսկըլասկան ըն ուրուր վերավ թոչկուտիլի, դու աշխատեր սիպտակի վերավ թոչիլ, հոր նանիս սիպտակ աշխարք: Հոր կրեհաց չիս, կարմերի վերավ թոչի, հանիլ իս կարմեր աշխարք, համա հոր թոչիս սևուն վերավ, նանիլ իս սև աշխարք. ադ տեղան դուս գուլը շետ դիժերցա,—ախչիկի ըսես ի,—իս քի սպասիլ իմ իրիք տարե, իրիք օր, իրիք սհաթ, իկալ իս, իկած չիս, իս մարդու իմ գինեյասկան:

Ադուր խըտտես ին, պըչպըչուտիս, քիշիս ին ըխչկանը, դուս ըն բիրիս հուրեն: Քանդիր կախըն նաս, հոր տղան դուս գու, տղեյուն քիշիս ին մինչև հուրուն կեսը, դենակավ քանդիրը կտրես ին, տղան շրամփ տալիս ա հուրուն տակը:

Տղան հոր վերը նընես օշը տընես ի, մին քիշեր ադի մնաս ի, էտնէ հոր խեղքը տեղընը նուս, կընչիս ի ախպուրցը, տըսնիս ի, սաս-սուս չկան: «Ուրեմըն գեհած ըն, ախչիկի ադուրդը լա ըսես, իս հիմար ըմ լա, լիսած չիմ անդուր» տղան ըսես ի, գեհածը գեցալ ա, ալ հետ չի նուլ, հուրեն դուս ի նուս գինես ըխչկա նիշենց տված տեղարը: Հիբ հոր դուսը նուս արոտատեղը, դուս ըն նուս տղեյուն էռէջը իրեք ուխչար՝ մինը՛ սիպտակ, մինը՛սև, մինն ալ կարմեր և ըսկըսես ին աթըրմա խաղալ: Տղան ինչքան ըշխտես ի, հոր սիպտակի վերավ թըռչի, բեն չի դոնիս, լոքը նաս կարմեր ոըխչարու վերավ, և տըսնիս ի, հոր գինես ի ինքն ալ չիգիդալավ, թա հորը գինես: Մին ալ տըսնիս ի, հաքարը կպալ ըն տափուն: Չուրք թարափի մտեկ ի ըրիս, տըսնիս ի, հոր նած ա կարմեր աշխարք: Տղան տանիս ի, հոր օմեն բեն կարմեր ի: Մին քուչավ գնիս ի, տանիս ի, մին տոն, դուրքը թըկես ի, բնիս ի մի պառավ կնեկ:

Տղան ըսես ի.—Նանի՛ ջան, դարիբ մառդ ըմ, ինձ տեղ չիս նալ մին քիշեր մընամ:

Պառավը ըսիս ի.—Բալա ջան, խասնա չիմ, մառդ Աստծու դոնադուն չէ չի սալի, համեցիք ներս:

Տղան մոիս ի ներս, տանիս ի, հոր պառավը խմուրը ըրես, համա ջիրավ չի ըրես, խըմուրուն վերան թքիսի, հունցիս:

Տղան ըսես ի.—Նանի ջան, ադ խամ թեքավ ըս խմուր ըրիս:

Պառավը ըսես ի.—Է՛, բալա ջան, պա հինչ արիմ, հոր ջուր չոնիմ:

Տղան ըսիս ի.—Խամ՛, ձիր քաղաքամը ջուր չի կամ:

Պառավը ըսիս ի.—Բալա ջան, խա, կա վուչ, համա դե օմեն մառդ կրես չի

ձիք ցիքի: Հետև տասը տարև ի, մին տըսնըէրկու գըլխանէ վիշափ նըստած ա մեր ջրի գուր, մեզ ջուր չի նաս, հու հոր խընդիս ի ջուր տանի, մետիլ մին ախչիկ տա: Մեր քաղաքամը ալ ախչիկ չի մնացալ, ասուր ալ մեր թաքավորը ուրեն մին-ճարը մադար ախչիկի տընըլասկան ա տա անդուր, հոր ջուր վիր առի, թա չէ գորքը ծարավ կուտուրվիլի:

Տղան ըսես ի. — Նանի ջան, ադ գուր հեռամվ ա, կարիլ իս ինձ նիշենց տաս:

Պատավը ըսիս ի. — Իմ տանեն մինչև տեղը հերուր արշին նիլ ի:

Տղան ըսիսի. — Նանի ջան, կոժ օնին, մին էրկունը ինձ տոր, մին էրկունըն ալ դու վիր առ. հըրդա իս քու տոնըտ ջուրավ լիցիլ իմ:

Էրկու կոժ ինքնի վիըռես, էրկունս ալ նաս ի պատավուն, մին քանտ հետ գինես ին բիրիս, ալ պատավուն տանը ամա-չաման չի մնաս լիցվիս ի: Տղան հոր ճընչիս ի գուրն տեղը, արխայինինես ի:

Պատավը խմուրը հոր թեքավը լա արված, դեն ցիքիլի նաս, թագադան ջուրավ խմուր ըրել նաս: Պատավը ըսկես ի հաց իփիլի, տղան մին բոլ պաներ հացը ըտես, պըրընես քոն նուս: Արիվի դուսը նուս, տղան հալա քոն ա: Պատավը տըսնիս ի, հոր թաքավորու ըխչկանը տնես ին տան օղձուն, ալբահալ տղեյուն վիրը կըցընես, ըսես ի, հոր թաքավորու ըխչըկանը տարալ ըն դիրալ գուրն դրա-դեն: Տըղան խանչալը վիրը ըռես, դուս նուս:

Պատավը ըսիս ի. — Օղըլ, հոնրս գինես:

Տղան ըսիս ի. — Թաքավորու ըխչըկանը հարայուն:

Տղան գինես ի գուրն դրաղը, տըսնիս ի, հոր մին ախչիկ ուրենուց մին խոր դեն նստած լես ի: Մին ալ տըսնիս ի, գուրն դուսը իկալ մին տըսնըէրկու գլխանէ վիշափ, դուսը նուս գուրն դուգ դիրի ըխչըկան: Տղան հը ըրիս լոք նաս, իլլիս վիշափու մաշկին, վերը բիրիս խանչալը, իննը գլխը կտըրես քալամու կոնդու նման:

Վիշապը ըսես ի. — Թաքավորի՛ տղա, ինձ սպանի մա, իս տեղեն գինեղ իմ:

Տղան ըսես ի. — Մետիլ գինես մին խեխճ ժողովուրթու գըլխուն դարգա դեռնիս:

Ադ ըսես ի, խանչալավ նաս ան իրիք գլխն ալ կընթես: Էտնէ վիրը ըռես վիշափուն գլխներեն լուգուները հընես, կպես յալախամը, վիշափու ջամդաքը տեղը մին մոժ քարը նիս, դիրիս ի անդուր տակեն, գինես:

Անցը նաս մին խոր վախտ, թաքավորը նագիր-վագիրը նուսի, հոր ըխչկա ուսկոտները տանի թաղին, տըսնիս ին, ախչիկի նստած էրքես ի, կուխկեն ալ վերն դեռած վիշափու գլխնեն:

Վագիրը սես ի. — Ախչի՛, աս հինչ նաղըլ ա:

Ախչիկի ըսես ի. — Մին աժդահա տղա իկալ ա սըպանա, գեցալ:

Նագիր ըսիսի. — Լսեր, իս հինչ ըմ ըսես քի, հըրդա գինըլասկան ըմ մին արաբա բիրիմ, ադ օղձու գըլխնեն լիցիմ մանջը, քիզ հետ մին տեղ գինեք: Համա դու մետիլ հորըտ ասիս, հոր վիշափուն իս իմ ըսպանալ, թա չէ քի սըպանիլ իմ:

Թաքավորը ահածը լա, հոր հու վիշափ ա սպանի, քանտ սաղ ա, նալ ի անդուր իրա կես թաքավորութունը ըխչկան հետը, մեռնուլուց էտնես սաղ թաքավորութունը, չունքի թաքավորը տղա չի լա օնի: Թաքավորը, պալատականնեն

տըսնիս ին, հոր թաքավորու ախշիկի սաղ-սալամաթ արաբու վերան նըստած նուս ի: Ալբալահ պալատը դալմաղալը նընես: Նազիրի արաբան քիշիս ի հայաթը, վիշափա գլոխնեն ըծես տափը, հոր օմնեն մինը մին գոմեշի գլխու դըդար ըն նիս: Ժողովուրթը հըվըքվիս ի թամաշա:

Ան նազիրի, հոր ասած ա՛ ինքնիսի սըպանած վիշափուն, ժողովուրթուն ըսես ի.— Տեսալ ըմ վիշափը տանըլերկու ըռեխն ալ չոած գինես ի դիքի ըխչկան, ախշիկի նալ հարայ տալավ լեսի, ան սահաթամը ինձ վերա մին անդի գոռը իկալ, հոր վիշափա սըպանալ ըմ:

Ադ խըսես վախտը թաքավորի տղան ալ ժողովուրթու մանջիսի նիս, հետը դըռնիս ըսես.— Պա ադ վիշափուն լուգու չիօնի՛:

Նազիրի ըսես ի.— Վիշափը վխելուց լուգուն կոլ ը տվալ:

— Պա ջամդաքը հո՛ր ա:

— Ջամդաքըն ալ ցիքալ ըմ գուր:

Թաքավորու տղան վերը դիրիս ձիքեն յալախը, վիր ըռես մին-մին վիշափու գլոխնեն, օմնեն մինի մանջին մին լուգու դիրիս, ջամդաքըն ալ, ըսեսի, գօլուն դրադը մին մոծ քար կան, անդուր տակին ի:

Ադ հոր թաքավորու ախշիկի տըսնիս ի, ըսես ի.— Հայրիկ ջան, ինձ փրկուդը և վիշափուն սպանուդը աս տղան ա, նազիրը սոտ ը ըսես. ինձ ասալ ա հոր իս ասիմ, թա ինքին ի սըպանալ, թա չէ ինձ սըպանիլի, իս ալ վխելուցս սոտ ըմ ասալ:

Ալբահալ թաքավորը հրամայես ի նազիր-վազիրուն կախ տալ:

Թաքավորը կընչիս ի տըղեյուն ուրէն կոշտը, խըտտես, պըչիս, գըսես.— Տղա ջան, իմ ախշիկիս նաս իմ քի, թաքավորությունըն ալ հետը, հոր դու ազատալ ըս, իմ թաքավորությունը ադի աղետես:

Տըղան ըսիս ի.— Իս շետ շտրիակալմ քիզ հենի: Քու ախշիկիս իս կարի չիմ տանիմ և իրավունք չոնիմ, իս նիշենված ըմ, մինակ հոր դու խնդիս իս ինձ քոմագ արիս, խնդրես իմ, ինձ ձիր աշխարքեն դուս բիրիս սիպտակ աշխարքը:

Թաքավորը ըսես ի.— Աս գուդու ան յանըմը ըպրեսի մին արծիվ, տեղն ալ մին տըսնըհանգ գլխանէ վիշափ կա, ադ վիշափը օմնեն տարե ադ արծիվներու ճտիրուն ըսես ի, հոր կարիս ադ վիշափուն սըպանիս, ադ արծիվնեն քիզ կարիլ ին հանին լուս աշխարք:

Տղան ըսես ի.— Պա հուրդի՛ գինես ան յանը:

Թաքավորը ըսես ի.— Իս կարքադրիլ իմ՝ տանին:

Մուրթիս ին էրկու գոմեշ, տեկ հընես, մանջը փոսկ փիչիս տըռըզացնես, մին կարմունջ շիս, դրիս վերան, տղեյուն տընէս ան յանը: Թաքավորի տղան գինես ի ան ծառը գիդինիս, հիշտեղ հոր արծիվների բունըն ա ու տակեն պըրնես, քոն նուս: Մին ալ բիրդան քոնամը լիսիսի, հոր արծիվներու բալանան ծըվծըվաս ին, ակնարը բինիս ի, տըսնիս, հոր մին տըսնըհինգ գըլխանէ վիշափ իլլիս ի ծառը, անտեղը, շտեղ բունըն ա: Ադ հոր տըսնիսի, տղան խանչալը քիշիս ի, մին տալավ վիշափա տըսնըչուրք գլոխը կընթես ի, մնաս ի մին գլոխը:

Վիշափը ըսես ի.— Տղա ջան, էք ինձ սպանի մեն:

Տղան ըսես ի.— Պա ըսպանիմ ուչ, հի՛նչ արիմ, չէ՛, ձիր քոքի մետիլ կըտըրցանվի:

Ըսես ի նաս, ան վերջին գոլխն ալ կըտրիս ու վեր նընես ծառուն տակեն, քոն նուս:

Արծիվսին նուս ին տոն, տըսնիս ին, հոր ծառուն տակեն մին մարդ պըրասած, ըսես ին. — Միս ասի մեր դարավոր թըշնամին, հոր մեր ճտերուն ըսես ի:

Գնես ին մին մոծ քար վիր ըռես, բիցիրցնիս էրգինքի, հոր անտեղեն ցիքին տղիյուն վերան, սըպանին: Ճտերը ադ տըսնիս ին, դավմադալը ցիքիս ին: Արծիվսեն նուս ին ճտերուն կոշտը, ըսես ին՝ ադ հինչ դավմադալ ա:

Ճտերը ըսես ին. — Բա հինչ արիք, թուղ արիք հոր մեր փրկուդուն սըպանիք: Մին անց կացեք ծառուն ան յանը, տեսեք ան տղան հուրդի ի ջանավարը սըպանած:

Արծիվսեն գինես ին ծառուն ան յանը, տըսնիս ին, հոր մին տըսնըհինգ գլխանե վիշափ կուտուրած, թափած: Արծիվսերը մինը ձեխեն, մինը յաջեն նստես ին տղեյուն կուխկեն, թիվարը բինիս, պըռես տղեյուն գլխուն, հոր արիվի վառի վուչ և թիվարավը քամե ըրիս, հոր տղան անուշ քոն գու: Հոր ըսկըսես ի հրենակը մար մտե, տղան քընըտեղե վիրը նաս, ակնարը բինիս ի, տըսնիսի, հոր մթին ի, ըսիս ի. «Պա, աս արդեն քիշեր ա»: Վիր ի նաս վերան նստիս, բիրդան կըպեսի արծիվուն, արծիվը թիվարը կուտիսի, անմինն ալ, տղան տըսնիսի կուխկերամը արծիվսեր նստուտած:

Արծիվսին ըսես ին. — Ա՛յ տղա, դու մեր դարավոր թշնամուց ազատալ ըս, ասա՛ տըսնիք, ինչ վարձատրութուն տաք քի:

Տղան ըսես ի. — Իս մին բեն ըմ խնդիս ձիգ հենե. ինձ տըրեցեք սպիտակ աշխարը:

Արծիվսին ըսես ին. — Դիժեր բեն ըս խընդիս, համա դե հինչ արած, մետիլ տանիք, մինակ դու բիր միգ հետա մուրթած էրկու գոմեշ, քատասուն ուխչարու դիմակ, ադ տեկարը ջրավ լիցեր, ադ օմենը մեր էրկուսիս մաժտեղը քանդիրնեքավ կապեր միգ վերա, ինքիտ մաժտեղեն նստեր: Մեք թոչիլ իք, հիբ հոր գլուխնես յաջ շոռ տաք, մեր բերանը ցիքիլ իս մին-մին դիմակ, իսկ հոր դիրի ձեխ շոռ տաք, մեր բերաննեն կուխիլ իս տեկի կութը:

Տղան գինես ի թաքավորուն ադ ըսես, թաքավորը հրամայես ի, ադ օմենը տընես ին ան յանը, բիռնիս արծիվսերուն: Տղան գինես ի պառավուն մընաս պարով ըսես, մին խուրջին ուսկե նաս պառավուն, նուս թաքավորուն ալ մնաս պարով ըսես ըխչկան հետ: Գինես, նստես արծիվսերուն վերան ու բիցրինիս էրգինք:

Շես ըն գինես, թա խոր, Աստվածը գիդիլ, շարունակ տղան արծիվսերուն կերակրիսի:

Արծիվսեն տղեյուն հարցանք ըն ըրիս. — Հը՛, աշխարքը հինչու՞ ղըդար ա:

Տըղան ըսեսի. — Մին արտու դդար ա:

Ալու անցը նաս մին քանե սհաթ, հարցանք ըն ըրիս. — Աշխարքը հինչի՞ն ղըդար ա:

Տըղան ըսես ի. — Մին կալու դդար ա:

Անցը նաս ալու մին քանի վախտ, դուշարը հարցանք ըն ըրես. — Աշխարքը հինչի՞ն ղըդարա:

Տղան ըստս ի. — Մին ձվի դդար ա:

Ան վախտը արծիվները ըստս ին. — Մինչև հըրդա մեք բիցրինիս իք լա, հըրդա մետիլ դուզ թոչիք, դու մինակ ասա, հիք հոր տեսնիլ իս աշխարքը մին արտու դըդար ա դէռած:

Խոր ըն գինես, թա շետ, դուշարը հարցանքն ըրես. — Հը՛, տղա՛ ջան, աշխարքը հինչ դըդար ա:

Տղան ըսիսի. — Մին մոծ արտու:

Էտնէ՛ դուշարը ըստս ին. — Հիք հոր տեսնիլ իս աշխարքը մին կալու չափ, մեզ ասիլ իս:

Ալու անցը նաս մին խիլա վախտ, դուշարը հարցանք ըն ըրես. — Աշխարքը հինչի՛ դդար ա:

Տղան ըստս ի. — Մին հավու ձվի դդար ա:

Ղուշարը ըստս ին. — Հրդա մեք վեր իք նուս մին խորը մնաս հոր հասիք տափուն:

Արծիվից մինի գոխը շոռը նաս դիքի յաջ, տղան բեն չի նիս հոր տա, մին ալ շոռ նաս, մին ալ, տղան դենակը ցիքիս ի, ուրեն բուղեն մին մոծ կուտուր մես կտրես, ցիքիս արծիվի բերանը, արծիվները նեստես ին տափուն:

Արծիվը ըստս ի տղեյուն. — Դե՛, գներ տեսնիմ:

Տղան կրես չի գինես, արծիվի ըստս ի. — Շալվարտ հաներ մին տեսնիմ, խանս լընգես իս:

Տղան շալվարը հնես ի, արծիվի տըսնիս ի, հոր մեսը կտրած ա: Ալբալահ արծիվի իրան բերանումը պահած մեսը դիրիս ի տղեյու հաքուն, կպիսի, տեղն ալ չի մահում ըրես: Արծիվեն թոչիս ին, գնիս: Տղան իզինքի թափը նաս, հըղեն պոնես գինես, հըսես ան քաղաքը, հոր իրա թաքավոր հարին ի ըպրես: Գինես ի մինի կոշտի, ըստս, հոր ուրէն վիր առի աշագերդ, մտես ի աղուր կոշտի: Արդեն իրիք տարեն անցը լա կահած:

Մեք հրդա թուղ արիք տղեյուն մնա տեղս, խոսիք ան տեղեն, հիք հոր թաքավորու էրկու մոծ տղան քանդիրի կտրալ ին, իրանց ախպուրը ցիքալ հուրը:

Ուրանց փստեկ ախպոր նիշենածուն ըստս ին՝ հոր թաքավորը հարցանք արի, ասիլ իս, հոր քանդիրի կտրովալ ա, վերը նալ հուրը, սպանվալ, թա չէ՛ քի սպանիլ իք:

Մին քանես օր թաքավորը սուզը ըրես: Թաքավորի կընեկի մեռածը նիս, խնդիս ի փըսակվի փիստեկ տղիյու նիշենածուն վերան: Ախչիկի ըսիս ի, հոր իրիք տարեն հետը կարիլի փսակվի՛ չունգի հոյս օնի, հոր տղան աղ ժամանակամիջոցում նուլ ի:

Իրիք տարեն հոր անցը նաս, մնաս ի իրիք օրը, ախչիկի թաքավորուն ըսիս ի. — Ինձ հետա մին դարյա իս կարիլ նալ, հոր անդուր հուչ մըկրատ նի կպած, հուչ ալ ասուղ:

Թաքավորը կնչիս ի իրա նագիր-վագիրին, ըսիս, հոր մի աստի դարյա կարիլ տա: Աղ քաղաքամն ալ մին փինաչեն դեն չաքմաչի չի նիս, նագիր-վագիրի գինես ի ան փինաչու կոշտը, հրամայես, հոր մին անդի դարյա կարի:

Փինասչին ըսիս ի.—Ա՛յ ջանըմ, ախիբ իս դարգի չիմ, իս դարյան հնորդի կարիմ:

Շագիրդը ըսես ի.—Վախի մեն, վիր առ, իս կարիլ իմ:

Նագիր-վագիրի գինես ի: Քիշերը ուստան հոր քոնը նուս, տըղան ան անգուզը մընդես ի, մանջին դայրան հընես, կախ նաս: Քիշերավ քշան նագիր-վագիրին նուս ի դայրան տանի, ուստան մասս ի մաթալ: Տղան գինես ի ան մին օթախեսն բիրիս նաս նագիր-վագիրին, ան ալ շվվելավ տընես ի նաս թաքավորուն, թաքավորը տընես ի նաս ըխչըկան:

Ախչիկի հոր դայրան տըսնիս ի, արխային ի դոնիս, ինքի ուրեն ըսիս ի. «Ուրեմն իմ նիշենածըս իկածա»: Գինես ի թաքավորուն կոշտը, ըսես, հոր մետիլ ուրեն հետա մին տուփիլ կարիլ տա, հոր հուչ մեխ սի կուփված, հուչ թիլավ կարած:

Թաքավորը ըսիսի.—Պա ադ հո՛ւվը կարիլ:

Ախչիկի ըսիս ի.—Հուվ հոր դայրան կարալ ա:

Նագիր-վագիրուն դուրկիս ի ան փինասչու կոշտը, հոր տուփի կարիլ տա:

Փնասչին ըսիս ի.—Ա՛յ ջանըմ, իս փինասչի մառդ ըմ, իս պա կարիլ ի՛մ ադի չաքմա կարիմ:

Շագիրդը ըսես ի.—Ուստա, վախի մեն, վիր առ, իս կարիլ իմ:

Քիշերը հոր ուստան քոնը նուս, տղան ան էրկու փնդըղը մընդեսի, մանջեն տուփիլեն հնես, դիրիս ի ակուշկումը: Քիշերավ քըշան նագիր-վագիրան նուս ի տուփիլին տընես:

Ախչիկի ադ ալ հոր տըսնիս ի, լափ արխային ի դըոնիս, ըսիս ի թաքավորուն, հոր իմ հըրսընքավըս մետիլ մին անդի ճեշ իփուղ սի, հոր հուչ գիրեկ վառի, հուչ ալ բեն պադրաստի, համա օմմեն հինչ դոնաղներու ըռաշկին սի:

—Ադ հո՛ւվ ա կարիլ,— ըսիս ի:

—Ան, հոր դայրան ու տուփիլին կարալ ա:

Թաքավորը նագիր-վագիրին դուրկիս ի փինասչու կոշտը: Տղան վիրի նաս, նուս նագիր-վագիրի նըհես:

Տղան մտես ի խոհանոցը, անկուրեկ փետը թափ նաս, մին ալ տըսնիս ի, տոնը էրկու արաբ հուտաց ըն կացալ ըորշկին ու ասալ.—Մեր տերը հինչ ի հրամայես:

Տղան ըսիս ի.—Շուդ սեղան բեց ըրեցեք, հոր ըսկըսեն հացկերույթը:

Ջոռնա-ղավալն ալ փիչեն, համա ուրաք իրվան ուչ: Թաքավորը մընասս ի մաթալ. «Ա՛յ բալամ, հուչ գրեկը վառած, հուչ ալ դագղան դիրած գիրեկուն, աս ճեշարը շտեղնն ի»:

Հըրսանեքի հոր պըրծընես ի, ախչիկի ըսես ի.—Ինձ հիտա մին շետ հետաքրքիր նաղըլ արիլ տոր:

Թաքավորը ըսես ի.—Ադ հո՛ւ կարիլ ի:

Ախչիկի ըսես ի.—Ան, հով հոր աս խնջույքը ղեկավարալ ա:

Թաքավորը կընչիս ի փինասչուն, ըսես գու մին նաղըլ ասի: Փինասչին դըրկիս է տըղեյուն:

Տըղան նուս ի թաքավորուն կոշտը, ըսիս. — Թաքավորն ասրած կենա, իս հոր ըսկըսիմ նաղըլը, մետիլ օթախուն դուրքը կապիք, բիլանին տաք իմ ձիքըս. հուչ մինի իրավունք չոնի օթախէն դուս գու, մինչն նաղըլուս պրծանիլի:

Թաքավորը ըսիս ի. — Կատարիցիք ասուր կամքը:

Տղան ըսկըսես ի աս նաղըլ, հոր իս ձիգ պատմալըմ: Իհարկէ, խնդի չիք, հոր իս աս նաղըլը մին ալ թագադան արիմ: Համա հինչ արած, խընդիք ուչ իս մետիլ արիմ, չունքի հոր արիմ ուչ բէն չի դուս նուլ:

Մեր տղան նաղըլը ըրես: Հիք հոր հսեսի ան տեղուն, հոր ախպերքի քանդիրի կըտրես ին, ուրաց ախպուրը ցիքիս հուրը, ախպերքը ըսես ին՝ փուրներս ցվես ի, իրավունք տոր գինէք չուր: Տղան թուղ չի ըրես: Էտնէ տղան նուս ի ան տեղուն, հոր ախպերնեն նուս ին ուրաց հորը, ըսես, թա քանդիրի կտըրվալ ա, ախպերնես նալ ա հուրը, մեք ալ կըրեցալ չիք հանիք, տեղս ալ թաքավորը կըրես չի ուրեն պահի, վիր ը նաս փիստեկ տղետուն խըտտես, ըսկըսես պըչպչուտիլ, ըխչկանը կոռնը պոնես ի նաս փստիկ տղեյուն ու թագադան ըսկըսեն ին հըրսանէքը: Թաքավորը հրամայես ի էրկու մոծ տղերանց բընտարկին, հոր մետիլ հըրսընէքեն հետո կախ տան:

Փստիկ տղան ըսիս ի. — Հայրիկ ջան, իս ադուց ներիս իմ, բանտարկիլ ման, սխալված ըն:

Թաքավորը ըսես ի. — Դուլ ըս գիդիս, հինչ ըրես իս արա, ասուրվանից թաքավորը դուլ ուս:

Թաքավորը գլխեն թագը վիրը ռես, դիրիս փիստիկ տղեյուն գլխուն:

ԻՐԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐ⁸²

1. (11) ՓՈՂ ՈՒՆԵՄ, ՍՈԹԸԹ ԱՆՑ ԿԿԵՆԱ

Մի հարուստ մարթա ըլում: Տըրա մի մադար տղա յա ըլում, համալ շատ փչացած: Հերը վըեր մոնիլի վախտը կյամ ա, գյուդում ա վըեր տղան իրան իլած-չիլածը փչըցնելուվ ա, ինքը սոված մեռնի: Տղին հընգերունքն ալ շատ փչացած են, իրանց հոր ըշխատանքը քուտ ու փուչ անող տղերք են:

Հերը մոնիլան առաջ վասյաթ ա անում. — Ա՛յ վերթի, պանա, վըեր հարստոթունը պրծնի, ալ տըռնետուտ չընգես, կքինաս մեր հցատունը, ճուքան մի քյանդիր կա կախված, ընդանալ քեզ կխեխտես:

Մի ասիր, որ հերը ճուքումը վեսկի յա տինում, վըեր տղան քյանդիրան ծիք տա, թափվիլուվ ա: Տղան խոստանում ա, վըեր հորը խրատը կատարելուվ ա: Ըտրանա եղը հերը մեռնում ա: Տղան ալա էն բաշինա հընգերոցը նհետ շարու-

⁸² 7 (16), 8 (17), 9 (18), 16 (25), 17 (26), 19 (28) հեքիաթները, որոնք տպագրվել են ՀԺՀ VII հատորում, ավելի համապատասխանում են գրույցի ժանրին (Ծ. Կ.):

նակում և ըլած-չիլածը քուռուփուչ անիրը: Էթ տղան տանը ալ պյան չի թողում, խարջում և, տառնում և ամենավերջին աղքատը: Ընդա հրնգերունքը արդեն հաշվի չեն առնում. շտեղ վրեր քեֆ-ուրախություն են ինում, ընդա կանչում չեն: Մի օր ալ մի քանի կոպեկ և ճարում, մի ջիգյար և առնում, վրեր քյինս հնգերոցը նհետ քեֆ անի: Ճընհրպին շները ընդա ծեռնան ջիգյարը խլում են, լյափում: Հնգերոցը պատմում և, վրեր շները ծերքաս ջիգյարը խլալ են, հնգերունքը ասում են՝ շոնը ջիգյարը օտիլ չի: Ընդա թողում չեն իրանց նհետ օտի-խմի: Նա տեսնում և, վրեր արդեն ոչ մի հոգի իրան պյանի տեղ չի տիւնում, իրեսը հլորում և քինում, վրեր ինքը իրան սպանի: Շատ և կոտր ընգյում, հորը վասյաթը մետն և կյալիս: Քյինում և իրանց հացատանը կախված քյանդիրան փոնում և, վրեր իրան կախ տա, բուրդան տիյերան վեսկիյա չում: Տղան մնում և զարմացած: Ըշկերին հվատում չի: Վեսկիքը ուրախացած հվաքում և, ածում մի քսակի մեջ, տանում տոն: Էս տղան ալլա սկսում և հարստանալը: Հնգերոնքը նկատում են, վրեր տրա քեֆը քոք և, օզում են պատճառը գիդան: Մնհեթ առաջվա հնգերոցը դոնախ և կանչում: Ըտրանե հետի լյավ պատրաստություն և քաշում: Լյավ օտում են, խմում, սկսում են շուլուղ անիրը:

Նա ասում և.— Մեր տան շատ դուրդուշում կար, մկները կերան, հիրանց պունումը վեսկի տառավ:

Հնգերունքը էս պանին հվատում են, վրեր մուկը դուրդուշում կուտի, հա, վրեր շոնը ջիգյար կուտի, հվատում չեն իլալ: Էթ հարստացած տղաթ իրան ծառաներին հրամայում և, վրեր էթպիսի հնգերոցը թակիլավ տյուս անեն իրան տանան:

Ուրեմն՝ փող ունես, սոթըթ անց կկենա:

2. (12) ԴՈՒՐԳՅԱՐ ՀԱՍՈՆ

Ըշխարքում ըշխադող մարթիք շատ կան, բայց կոշտ մարթիք՝ քիչ: Մուրադ անումավ մի փողասեր մարթ ալ կար, աշկը՝ ծակ: Ընդա հարըստությանը չափ չկար. տոնը լիքը, կյումը լիքը, լավ ալ վեղեր ունի, բաղեր ունի, համա շատ սկուպոյ և իլում. կերածը հաց և, սոխ, մին ալ պանիր: Վեսկին հվաքում և, ածում սանդոդը, թուփ անում: Մի օր ալ ընդա տղան հիվադանում և:

Պժիշկը կյամ և ստուգում, ասում.— Էնքան սողան և կերալ, վրեր աղիքնին չորացալ և: Խաշ պիտի ուտեցնես, էն վախտը կառոխճանա:

Փողասեր Մուրադը մտածմունքի մեջ և ընգյում: Սանդոդը պյաց և անում, մի վեսկի յոռնում, քինում բազարը: Փողը հափուռումը էնքան հոփա տամ, քրտնքում և: Ետա տննում տնտանկ կյամ տոն:

Կնիկն ասում և.— Ա՛յ մարթ, խաշ եփիլի մեսը առմիր:

— Չէ, առալ չեմ: Այ կնիկ, փողը հափուռումս լյաց և իլում, թա ուրիշի տալ մի: Եք խոխին հետի շփոթ եփեք:

Մերը չուրացած պոեշներին վրեր յեշեց, ասեց.— Ա՛յ մարթ, ծեռքումդ պահալ ես, քրտանքալ և, վրեչ մի լաց ալ կա վեչ: Խուխիթ խխճա, էնքան վրեսկին հոմ համար ես թուփ անում:

Փողասեր Մուրադը նորից և քինում բազարը, ծերքերը տուղտղալով մի վեխճարի կյոխ և առնում, պիրում տոն: Կնեկը խանձ և տամ, քցում ղզղանը, տինում կրակին: Ճյուրը սկսում և հեռ կյալը: Բիրդանն ղըզղանի միջան մի սաս և կյալիս. «Փողասեր Մուրադի վեսկեքը դյուրգար Հասոյին արժան տաննն»: Մուրադը էթ խոսկը վըեր լսում և, տեղան եր և թըռնում, ղզղանը կրկան յոռնում, շպրտում տոանը՝ ջրհորի մեչ, եդավ վազ և տամ սանդուղը խտտում:

Հասոն շատ բարի, ծերքը պյնց, սերտը պյնց, հացավ մարթ և: Մի մարթ չկար, վըեր Հասոյին ճանանչեր վեչ: Նա իրան ըշխաղանքը չքավերներին նհետ և օտում: Ընդա տոնը միշտ մարթավ լիքն և իլում, սեղանը՝ պյնց: Դուզ են ասում, վըեր հում սիրտը պյնց և ըլում, ընդա տոնը երիզնքան և թափվում: Իսկապես վըեր թենց և:

Փողասեր Մուրադը շատ վըեր դատդի մեչ ընգնվ, եր կացավ մի քեթուկ ճարեց, պիրեց մեջը ծակեց, վեսկին անեց մեչը, փակեց: Քյոթուկը շլակում և տանում քցում ծովը, ասում և՝ թող քինա, մինակ Հասովին արժան չտաննն: Ծովի ալիքնին քյոթուկը տանում են: Աշկան վըեր հեռանում և, Մուրադը ետ և տառնում, քյինում տոն: Մի ջննիլ ծուկուն փոնող կաթթը քցում և, համա վըեչ մի ծուկուն կարում չի փոնի: Մթնում և, ծուկն փոնողն ասումա՝ դե վըեր պյան չկա, թողան քինամ Հասոյին տանը հաց օտեն: Էթ վախտիթ նա տեսնում և, վըեր ծովին դրաղին մի քյոթուկ կա եր ընգյած: Ծուկն փոնողն ասում և՝ էս քյոթուկս տանեն ուստա Հասոյին, դուրգյար մարթ և, հարկավեր կկյա: Քյոթուկը յոր և ունում, քցում Հասոյին հայաթը:

Փողասեր Մուրադը դարդի մեչ և:

Կյամ և տոն, կնգանը ասում.— Ա՛յ կընեկ, ինձ հմար պաշար կապի, օգում են քինամ տեսամ դուրգյար Հասոն հինչ մարթ և:

Մուրադը օնքերը վրա տված քյինում և ուստին գյուղը ճարում: Ըտն ուստին տանը լյնվ պաղիվ են անում: Էքսի օրը երա կենում, վըեր քյինա, բիրդան տեսնում և, վըեր իւրանն քյոթուկը հենա Հասոյին հայաթումը: Մուրադը հիւշանն քյընում և: Ճուր են շաղ տամ ետ պիրում: Նա Հասոյին պատմում և, վըեր քյոթուկը իմն և, միչին վեսկիք կան: Լոխ մին-մին պատմում և եղածը: Ուստան կացնավը թխում և վեսկեքը եր են տառնում:

Ուստա Հասոն վեսկեքը տալիս և Մուրադին, բայց Մուրադը օգում չի, ասումա.— Ա՛յ մարթ, տա քեզ հալալ և, վեխճարին կլոխը դիւզ և ասալ, վըեր էթ վեսկեքը Հասոյին տվեք, թող պիժանի աղքաղներին: Եր կալ, Ասու տվածն և:

— Թող քո ասածն ըլի, բայց եկ տոն, թող հարսը քեզ համար հաց թխի, նհետթ տանես:

Ուստան վեսկեքը ածում և խմորին մեչը, հաց են թխում, տինում Մուրադին խուրջինումը: Մուրադը ճընհապա յա ընգնում: Մի կանաչ տեղ նստում և վըեր դինջանա, տեսնում և մի չոբան վեխճար և ըրծցնում:

Չոբանը մուտանում և Մուրադին, ասում.— Ախպեր տղա, թա հաց ունես, մի պատառ տուր օտեն, տեղը քեզ մի վեխճար կտամ:

Մուրադը վեխճարին անումը վըեր լսում և, հիշկա հացը տամ և չոբանին:

Չոբանը տեսնում և վըեր լյնվ հաց և, ասում և.— Տանեն ուստա Հասոյին

կնգանը տամ, ընդանց պարտք եմ, համալ ուրանց հացան կոտեմ, քուշտանամ: Չորանը թեհնց ալ անում ա. հացը տամ ա Հասոյին կնգանը: Հացը որ կտորում են, վեակեքը եր են տաննում: Ուստա Հասոն վեակեքը պժննում ա աղքատներին, ինքը մաշառն ու չաքուչը յոր ունում, քինում գործի:

Դուր են ասում, վրեր սերտը պյնց մառթին տունն ալ պյաց կըլի: Ուստա Հասոն թենց լյնվ մառթ ա ըլալ: Իսկ թա փողասեր Մուրաղը հինչ տաննվ, գյուդում չեմ, թա տյուք գիղաք, ինձ ալ կասեք:

3. (13) ԸՇԽԱՐՔԻ ՏԵՐԸ

Ըլում ա չըլում, մի մարթ, մի կընեկ: Ըտոք շատ սիրավ են ըլում: Շատ դոչաղ մարթ ա ըլում, ինքն ալ շատ գեղեցիկ: Իրնց երգիրին թաքավերին նման ա ըլում: Էթ մարթըրը շատ էր սիրում վերսի քինալը: Հունց վրեր ազաղ ա ինում, ծին նստում ա, պատրոնդաշին քցում, քինում: Մեհետ ալ վըրսըտեղ ա կյալիս, տեսնում ա թաքավերին պալատին ըռաշին ժողովուրթը թուփ տաննձ: Շնտ քինում ա շորերը փոխում, թննցն շորեր հաքնում, թաքավերական մի փափաղ ալ տինում կլխին, ծին նստում, քինում պիղա պալատը: Թաքավերին ծառեքը վրեր տեսնում են, վազ են տամ ըռաշկին չոքում, գյուդում են թնն թաքավերն ա: Տա ծիյան յեր ա կյալիս, հըրցնում թնն՝ էթ հինչ մեյիղ ա:

Ճառեքը ասում են. — Գյիղացալ ենք, թնն տյնվ ես մեռալ, տիրալ ենք դուրսն միջին, վրեր թաղենք:

Էթ մարթըրթ ասում ա. — Տա սոտ մեռալ ա, տարեք մի խոր փոս փորեցեք, քցեցեք մեչը:

Ճառեքը թեհնց ալ անում են. տանում են թաքավերին մի խոր փոս քիցում, գյիղաննվ, թնն տա թաքավերը չի: Էթ օրվանից էթ մարթըրթ տանում ա ըտեղիթ թաքավերը: Տա ժողովըրթին լավ ա պահում: Տրաց վեղեր ա տալիս, վրեր նորնց մհար մշակեն: Ժողովուրթըն ալ ընդանա գոհ են մնում:

Մի օր թագա թաքավերը կընգանը ասում ա. — Տեսնում ես, ա կընեկ, վերսի քինալը մեզ հինչ շինեց: Դե մեկ ապրի սերտըրթ հունց օգում ա: Ըշխարթիս տերը մունք ենք:

4. (14) ԹԱԳԱՎՈՐԸ, ԱՅԳԵՊԱՆՆ ՈՒ ՕՁԸ

Մի թագավոր ունենում է մի մինուճար տղա: Այս թագավորի պալատի մոտ կար մի սիրուն այգի, որն ուներ մի շատ փորձված, աշխարի տեսած այգեպան: Այգու մեջ կար մի կաշկառ, որի մեջ վխտում էին զանազան տեսակի թունավոր օձեր, կարիճներ և այլն:

Մի օր այգեպանը տեսնում է, որ թագավորի տղան եկել է այգին:

Նա երեխայի ձեռքից բռնում է ու տանում թագավորի մոտ ասելով. — Ո՛վ թագավոր, մեր այգու մեջ կան շատ թունավոր օձեր, իսկ քո տղան անվախ ներս է մտնում ու ման գալիս: Կարող է օձերը նրան թունավորեն, խնդրում եմ, այսուհետև թույլ չտաս նրան այգին գալու:

—Լակ, —ասում է թագավորը, — այսուհետև թույլ չեմ տա:

Մի քանի օր հետո թագավորի տղան գալիս է ծածուկ այգին մտնում և իր համար սկսում զբոսնել: Հոգնելուց հետո պատկում է մի ծիրանի ծառի տակ և քնում:

Կաշկառից մի թունավոր օձ է դուրս գալիս և կծում ու թունավորում տղային: Տղան մեռնում է: Այգեպանը միամիտ ման գալիս տեսնում է թագավորի տղան թունավորված, մեռած:

Վերցնում է, տանում թագավորի մոտ ու ասում. — Ո՛վ մեծ թագավոր, ես ասացի, որ տղայիդ մի թողնիր այգին մտնի, հիմա թունամահ է եղել, ո՛վ է պատասխանատու, հա՛, արդեն մեռել է:

— Վնաս չունի, — ասում է թագավորը, — աշխարհն իմ տղին չմնաց, օձին էլ չի մնա:

Ու հրամայում է՝ տանեն տղին թաղելու:

Մի երկու օր հետո այգեպանն այն ծիրանի ծառի տակ, որտեղ թունավորվել էր թագավորի տղան, մի սև օձ և տեսնում է և իսկույն իմանում, որ նա է թագավորի տղին թունավորել, մանավանդ, երբ տեսնում է օձի աչքերն արնակալած ու կատաղի: Բահր վեր է քաշում և օձին սպանում:

Սպանած օձը տանում է թագավորի մոտ, ասելով. — Տե՛ր թագավոր, ահա՛ քո թշնամին, ես քո որդու վրեժն առա:

— Լակ, — ասում է թագավորը, — աշխարհը որդուս չմնաց, օձին չմնաց, քեզ էլ չի մնա:

Մի, երկու օրից հետո թագավորը մի հազվագյուտ ծառ է տնկել տալիս իր այգում, որի նմանը չկար, և այգեպանին պատվիրում է, որ ծառը բուրբուկին չջրի: Ծառը մեկ-երկու օրից թառամել է սկսում:

— Ի՛նչ է հասկանում թագավորը, այս ծառը շատ ընտիրն է, ափսոս է, կչորանա թող ջրեմ, — մտածում է այգեպանը և ծառին ափսոսալով՝ ջուր է կապում տակը:

Ջուրը դեռ տեղ չհասած՝ թագավորը բռնում է այգեպանի օձիքից և ասում. — Ես չափ քեզ, որ չջրես ծառը:

— Ասի՛ր, — վախեցած պատասխանում է այգեպանը:

— Ուրեմն ինչու՞ ես ջրում:

— Թագավոր, ծառը թանկագին է, ես վախեցա, որ չորանա, — կրկին վախեցած պատասխանում է այգեպանը:

— Իմ խոսքն էր թամկ, թե ծառը, — մոնչում է արքան:

— Քո խոսքը, — վստահաբար ասում է այգեպանը:

— Ուրեմն, որ դու չես կատարել իմ խոսքը, ես դրա համար քեզ կախել կտամ, — ասում է արքան և ծառաներին հրամայում կախել անհնազանդ այգեպանին:

Երբ կախադանի թուրը հագցնում էին այգեպանի վիզը, նա ճչաց. — Արքա՛, աշխարհը տղիդ չմնաց, օձին չմնաց, ինձ չմնաց, լավ իմացիր՝ քեզ էլ չի մնա:

5. (15) ՔԱՉԱԼԸ, ԻՐ ՀԱՅՐՆ ՈՒ ԽԱՆԸ

Մի գյուղացու մի քաչալ տղա է լինում, ծույլ, անբան, բայց շատակեր: Մի օր հայրը ծեծում է և գոռով եզներն առաջն անում, ուղարկում վար: Քաչալը գնում է, գութանը լծում ու հենց առաջին ծերը ծրելիս մի ոսկի աղյուս է դուրս գալիս: Քաչալը շատ է ուրախանում, նստում է տոպրակի հացերն ուտում, եզներն արձակում, ոսկի աղյուսը տոպրակի մեջ դնում, առնում գլխատակն ու քնում:

Գյուղից հայրը տեսնում է, որ Քաչալը վար չի անում: Զայրացած գալիս է, Քաչալին արթնացնում, որ ծեծի, Քաչալը հայտնում է հորը, որ ոսկե աղյուս եմ գտել:

Հայրը ոսկին առնում է ու քաչալին ասում. — Էլ քեզ չեմ բանեցնելու, գնա՛ և ազատ քե՛ք արա:

Քաչալը մի քանի օր իր համար ման է գալիս: Մի օր էլ հայրը դարձյալ ծեծում է նրան, թե գնա ու աշխատանք արա: Երբ տանը ոչ ոք չի լինում, Քաչալը գողանում է ոսկու աղյուսը և դնում տոպրակի մեջ՝ ինքն իրեն վճռելով, որ տանի ու տա խանին:

Խանն ապրում էր մոտակա գյուղում: Քաչալը գնում է գյուղամեջ և հայտնում գյուղացիներին, որ ով վաղը առավոտյան գնալու է Խանի մոտ գանգատ, թող գիշերս գնալիս մեր երդով ինձ էլ ձեն տա, ես էլ բան ունեմ ասելու Խանին:

Իրիկունը քաչալը ոսկե աղյուսով պարկը դնում է գլխատակին ու քնում: Երբ մայրը գալիս է հարևանները նրան հայտնում են, որ Քաչալը վաղը գնալու է Խանի մոտ գանգատ: Մայրը գալիս է, ստուգում, տեսնում աղյուսն իր տեղը չէ, ձեռաց

Գլխի է ընկնում, որ Քաչալն է գողացել: Դնում է մի հասարակ կավե աղյուս, որ նույն չափի էր, ինչ ոսկունը, բերում դնում է Քաչալի տոպրակում և զգուշորեն, և նույն զգուշությամբ էլ հանում ոսկե աղյուսն ու թաքցնում:

Լուսադեմին Խանի մոտ գնացողները գալիս են ու կանչում Քաչալին, որ ինքն էլ գա: Քաչալը տոպրակը շալակում է, դրսից շոշափում բեռն ու գնում՝ ճանապարհին պարծենալով, որ իր բեռն ամենից թանկարժեքն է ու Խանին նվեր է տանում:

Երբ Խանի մոտ բոլորն իրենց գանգատն անում պրծնում են, հերթը հասնում է Քաչալին:

— Դու ինչ ունես Քաչալ, — հարցնում է Խանը:

Քաչալը տոպրակը ուսից ցած է իջեցնում ու ասում. — Ո՛վ Խան, քեզ համար մի թանկագին նվեր եմ բերել: Ասա՛ կնոջդ, թող արծաթե սինին բերի, որ դնեմ վրեն:

Խանը զարմանում է, թե ինչ պիտի լինի, որի համար իր կինն ու արծաթի սինին են հարկավոր:

— Ի՛նչ, արծաթի սինու բան ունես, դե բա՛ց:

— Դու ասա՛ թող կինդ բերի, ես կասեմ, — պատասխանում է Քաչալը:

Խանը հրամայում է, կատարեն Քաչալի պատվերը: Երբ Խանի խանումը չաղրեն երեսին, ոսկի սինին ձեռքին մոտենում է Քաչալին, Քաչալը հանդիսա-

վոր կարգով տոպրակից հանում է աղյուսը և դնում արծաթե սինու մեջ: Բոլորը զարմանում են՝ տեսնելով կավե աղյուսը: Քաչալն ինքն էլ է շատ զարմանում, բայց ուշ է:

Խանը բարկանում է և հրամայում Քաչալին բանտարկեն:

Քաչալին մարագն են անում: Պահակը դրսից տեսնում է, որ Քաչալը մատներով զանազան չափումներ է անում: Պահակն այդ մասին հայտնում է Խանին: Խանն իր մոտ է կանչում Քաչալին և հարցնում թե ինչ էր անում և ինչն է նրա գանգատը:

— Խան, ես քո ու իմ խելքն էի չափում, իմը քոնից միշտ մի մատ ավել էր դուրս գալիս:

Բարկանում է Խանը և հրամայում նորից մարագն անեն Քաչալին ու ծխով լցնեն:

Հրամանը կատարվում է:

Ծխից խեղդվելով հայ-հոյ է անում Քաչալը: Խանը հրամայում է իր մոտ բերել:

— Այ տղա՛, — ասում է նա, — դու խելքդ կորցրել էիր, ծուխը խելքդ ետ բերած կլինի, ասա տեսնեմ՝ ինչ էր գանգատդ:

Քաչալը, ծխից կսկծացող աչքերը տրորելով, ասաց. — Խան, իմ գանգատն էն ա, որ ասում եմ դու խան տեղովդ էտ դալաթտ արալ ես, էլ անես ոչ, ծուխը մարդու խելքի չի պերի, ծուխը մարդ կխեղդի, — ասում է Քաչալն ու փախչում:

6. (16) ՀԱՐՈՒՍՏ ԽԱԲԵԲԱՆ ԵՎ ԱՂՔԱՏ ՃՇՏԱԽՈՍԸ

Մի մարդ, որ բավականին հարստություն էր դիզել սրան-նրան խաբելով, մի օր մի ուրիշ մարդու վրա սուտ տեղը տասը փութ գարու պարտք է ցույց տալիս: Էս մարդը որքան փորը գետնին է գցում, թե ոչինչ պարտք չեմ, հարուստը սկսում է գոռգոռալ, մինչև բանը հասնում է դատարան: Խաբեբա հարուստը գտնում է մի աղքատ մարդու, որը շատ ճշմարտախոս էր, ասում, որ՝ դու արի ու դատարանում վկայություն տուր, որ այն մարդն ինձ տասը փութ գարի է պարտ, ես քեզ երկու փութ նրանից կտամ: Աղքատը համաձայնվում է: Երբ դատավարության ժամանակ կանչում են վկա աղքատ ճշմարտախոսին, սա գլուխ է տալիս ու խեղճ դեմքով կանգնում մեջտեղը:

— Լսիր, վկա՛, այս մարդը այս հարուստին ինչ է պարտ, — հարցնում է դատավորը:

— Արդար դատավոր, — խոսում է աղքատը, — այդ մարդը հարուստին քսան փութ ցորեն է տալացուկ:

— Ո՛չ, տասը փութ գարի, — տեղից կանչում է հարուստը:

— Աղա՛, — ասում է ճշմարտախոս վկան, — եթե սուտ է, սուտ է, ինչու տասը փութ գարի ասե՛ք, և դու ինձ երկու փութ տաս, թող քսան փութ ցորեն ասեմ, որ չորս փութն ինձ տաս, քո աչքն էլ բան տեսնի, իմն էլ:

Կեղծիքը պարզվում է ու խաբեբա հարուստն ամոթահար դուրս է գնում:

7. (17) ՉՏԵՍ ՃԱՄՓՈՐԴՆԵՐՆ ՈՒ ԿՐԻԱՆ

Երկու մարդ, որոնք իրենց կյանքում կրիա ու բյուրբյուլ տեսած չկային, միասին մի դամշուտով գնալիս մեկը նկատում է մի ահագին կրիա, բայց չի ճանաչում և ընկերոջը ցույց տալով այն, հարցնում է.— Տո՛ւ, էս ի՞նչ է:

Ընկերն իր ընկերոջ առաջին անգետ չձևանալու համար և իր հեղինակությունը բարձր պահելու համար պատասխանում է.— Տո՛ւ, էս էլ չգիտես ի՞նչ է, բյուրբյուլ է, բյուրբյուլ՛:

— Բյուրբյուլ՛ է, — զարմանում է ընկերը:

— Հա՛, բա:

— Բա ինչո՞ւ փետուրներ չունի:

— Էնդոր համար, որ կամ նոր է մորից ծնվել ու փետուրները չեն բուսել և կամ ծերացել է ու փետուրները թափվել են:

8. (18) ԿԱՌԱՊԱՆՆ ՈՒ ՏԵՐԸ

Մի հարուստ մարդ դուրս գալով իր տնից՝ հայտնում է կառապանին, որ ինձ տար իմ վերջին տունը, որովհետև նա քաղաքում շատ տներ ուներ: Մտքերի մեջ խորասուզված հարուստը տեսնում է, որ կառքը շրիսկոցով կանգ առավ: Ուզում է ցածրանալ, նկատում է, որ իրենք գերեզմանատանն են:

— Ես քեզ չապի՞ տար ինձ իմ ամենավերջին տունը, — բարկացած գոչում է հարուստը:

— Տեր, դու ասացիր տար ինձ իմ ամենավերջին տունը և ես բերի, մի թե սա չէ՞ քո ամենավերջին ու հավերժական տունը:

9. (19) ԱՆՀՅՈՒՐԱՍԵՐ ՀԵՐ ՈՒ ՏՂԱՆ ԵՎ ԽՈՐԱՄԱՆԿ ՀՅՈՒՐԸ

Մի անհյուրընկալ մարդու մոտ մի խորամանկ հյուր կգա, մեկ երկու օր մարդն ու իր տղան կհամբերեն, մի օր էլ մի ընդհանուր ամանում, որից ճաշում էին հայրն ու որդին և հյուրը, որդին հոր խրատով մեկ գդալ կուտի և կասի.— Վայ, էնքան կերա դանա դառա:

Հայրն էլ երկու գդալ կուտի ու կասի.— Որդի՛, ես էլ էնքան կերա, որ եզ դառա:

Խորամանկ հյուրը իսկույն կիմանա բանի էությունը և առանց դադարելու ուտելը կասի.— Ես էլ էնքան պիտի ուտեմ, որ համ եզը ճաքի, համ դանան:

10. (20) ԱՎԵՏԱՐԱՆՆ ՈՒ ՄԱՐԴԸ

Մի մարդ իրենց գյուղի տերտերին շատ անպատվելիս կլինի, քոխվան ինչ կանի, ինչ չի անի, էս մարդը վերջ չի տալ իր արարքներին, կշարունակի պարսավել տերտերին: Մի օր քոխվան եկեղեցու բակում, հասարակության առաջ կսպառնա այս մարդուն և կստիպի, որ սա Ավետարանի վրա երդում ուտի: Երբ

Ավետարանը կտան այդ մարդուն, սա ամենայն ջերմեռանդությամբ ավետարանը համբուրելով կերդվի, որ այլևս տեր հորը չի անպատվի:

Բոլորը երկյուղած Ավետարանի վրա երդվելու սարսափից, որ այն չի կարելի գանց առնի ասել, հավատացած էին, որ էդ մարդը էլ չի շարունակի իր արարքը: Բայց վերջինս հենց որ Ավետարանը հետ կտա, իսկույն կսկսի ավելի ուժեղ և սուր ծաղրով պարսավել տերտերին:

—Տո տնաքանդ, նոր Ավետարանի վրա երդվեցիր, որ էլ չպարսավես տերտերին, հիմա դարձյալ շարունակում ես, Ավետարանը քեզ չարաչար կպատժի,—բարկացած գոռում է Քյոխվան:

—Քյոխվան, քո արևը, այդ Ավետարանը զորություն չունի, թե չէ ամեն օր տեսնում է, որ տերտերը գիշերը հավ ու ճուտ է գողանում և այցելում այրի կանանց, ինչու՞ տերտերին չի պատժում,—պատասխանում է մարդն ու հեռանում:

11. (21) ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ԲԱՆԻՄԱՅ ՄԱՐԴԸ

Մի գյուղում միակ տերտերը կմեռնի և երկար ժամանակ առանց տերտեր կման: Մի ուրիշ գյուղացի՝ հազիվ գրաճանաչ, մի անաշխատասեր ու հիմար մարդ, մի կերպ տերտերական զգեստներ կգտնի և մի հին գիրք էլ ձեռքն առած կգնա այդ գյուղը, որպեսզի տերտերություն անի: Այս մարդուն կհաջողվի տերտեր դառնալ չաղ ծխավարձով և լավ հարգանքով ու կսկսի ժամասացություն, թաղում, հարսանիք և այլ արարողություններ անել: Այսպիսով նա կարգին տնտեսություն կստեղծի և կապրի ապահով:

Մի օր այս գյուղը մի բանիմաց մարդ կգա և հյուր կընկնի տերտերի տանը: Տերտերը մյուս առավոտ միասին եկեղեցի կտանի հյուրին: Բախտավոր տեր հայրը կսկսի իր արարողությունները, բայց որովհետև ոչինչ գրեթե չգիտեր և նախօրոք իմացել էր, որ իր հյուրը կարող է հասարակության մեջ վատ կարծիք հայտնել իր մասին, ժամերգի ժամանակ երգելով հասկացնում է հյուրին, որ ոչինչ չասի՝ ամեն տան վերջում ավելացնելով.—Ինձ հասանելիք տասներկու ջվալ ցորենի կեսը քեզ կտաաաան:

Երբ գործողությունները վերջացնում է տերտերը, նրա բանիմաց հյուրը վեր է կենում և հասարակության մեջ հայտարարում.—Ձեր տերտերը սուրբ է: Ես որ տերտերի միրուքից երկու մազ եմ պոկում, որովհետև ում տան որ լինի սրբի զույգ մազ, միշտ բախտավորության մեջ կապրի,—ասելով մոտենում է և տերտերի մրքից երկու մազ պոկում,—ով ցանկանում է բախտավոր լինի, թող իմ օրինակին հետևի,—կանչելով իջնում է բեմից:

Ժողովուրդը թափվում է և քանդում տերտերի միրուքը: Տեր հայրը ուրախացած այն մտքից, որ ինքը սուրբ է, վազում է տուն: Երբ կինը տեսնում է, որ մարդու երեսին մի մազ էլ չի մնացել, զարմացած բացականչում է.—Ա՛յ մարդ, ո՞ր է միրուքդ:

—Ա՛յ կնիկ, բա չես ասի, ես սուրբ եմ եղել ու մինչև հիմա չեմ իմացել:

Եվ պատմում է մազերի պատմությունը ուրախ-ուրախ:

—Տաաշեն, էդ որ էտենց ա, հիմա երեսիդ երկու մազ էլ չի մնացել, որ ես

պոկեմ ու բախտավորվենք, սաղ միրուքդ քաշել են, — սրտնեղած ասում է կինը:
— Վնաս չունի, վերևի միրուքը քանդել են, բայց ներքևինը մնում է, դու էլ քանդի, սրբի մազը մազ է, որտեղից էլ ուզում է լինի, — պատասխանում է տերտերը:

12. (22) ՀԻՄԱՐ ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ԱՐՁԸ

Մի գյուղի մոտ, ժայռի տակ, մի ճգնելու քարայր է լինում: Մի օր գյուղացիները նկատում են, որ մի արջ եկել է և մտել այդ քարայրի մեջ ու դուրս չի գալիս: Գյուղացիները, որովհետև ներքևից գնալու ոչ մի տեղ չի լինում, վերևից սկսում են հայ-հույ անել՝ արջին քարայրից դուրս հանելու համար: Ինչ անում են, ինչ չեն անում, հնար չի լինում արջին հանելու: Գյուղացիք մտածում են, մտածում և գալիս այն եզրակացության, որ արջը հասկացել է, որ այդ քարայրը ճգնվելու տեղ է, եկել է ճգնվելու:

Գնում են տերտերին բերում և ասում. — Տե՛ր հայր, սրբահոգի արջը ուզում է ճգնի: Արի քեզ թոկով կախ տանք, գնա քարայրի մոտ, արջին օրհնիր, որ հալալ ճգնավոր լինի:

Տերտերը համաձայնվում է, այն պայմանով, որ եթե ներքևից միրուքը շարժի իսկույն հանեն: Ամուր թոկով տերտերին գլուխնիվար կախում են ժայռից: Երբ տերտերը հավասարվում է քարայրին, արջին տեսնելով՝ սկսում է դեպի արջը խաչ հանել և աղոթքներ մրմնջալ: Արջը գայրանում է և տերտերի մրքից բռնում: Տերտերը թոկը շարժում է, իմաց տալով, որ ձգեցեք: Վերևից մարդիկ են քաշում, ներքևից արջն է տերտերի գլուխը խտտում, այնքան ձգում են, որ տերտերի գլուխը պոկ է գալիս և անգլուխ հանում են վերև:

— Ու՛ր է տեր հոր գլուխը, — բացականչում են մարդիկ:

Դես-դեն են ընկնում, բայց չեն գտնում:

— Տղերք, երբ տերտերին կախեցինք, գլուխը վրեն էր, թե ոչ, — հարցնում է ժամհարը:

— Չենք իմանում, վրեն էր թե ոչ, — պատասխանում են հավաքվածները:

Ճարը կտրած՝ մարդիկ մեկին ուղարկում են տերտերի տունը՝ իրիցկնոջից իմանալու:

— Իրիցկին, այսօր տեր հոր գլուխը վրեն է եղել, թե ոչ:

Իրիցկինը պատասխանում է. — Այդքանը միտս չի գալիս, միայն այն եմ հիշում, որ առավոտ տեր հայրը աղոթք անելիս միրուքը տմբտմբում էր:

13. (23) ՍՈՎԱԾ ՀՅՈՒՐԸ ԵՎ ԺԼԱՏ ՏԱՆՏԵՐԸ

Մի մարդ հյուր կնկնի մի ժլատի տուն: Կեսօրվա ճաշը կանցնի, բայց ժլատ տանտերը հյուրին ոչինչ ուտելի բան չի տա:

Երբ իրիկուն կդառնա և հյուրը կտեսնի, որ ոչ ոք չի մտածում իրեն ուտելիք տալու մասին, ճարը կտրած տանտիրոջը կասի. — Եղբայր, երբ որ հացն ուտենք պրծնենք, ես որտե՛ղ պիտի քնեմ:

14. (24) ԳՐԱԶԸ

Մի մարդ թունդ խմած ժամանակ խանին ասում է. — Իսան, ես ամբողջ ծովը կխմեմ:

Իսանը ծաղրում է դրան, իսկ սա համառում է և ասում. — Արի գրագ գանք, արի գրագ գանք:

Իսանը գրագ է գալիս այն պայմանով, որ եթե այդ մարդն ամբողջ ծովը խամի, խանը զրկվի իր հարստությունից՝ հոգուտ այդ մարդու, իսկ եթե ոչ, պետք է նրան կախեն:

Առավոտը, երբ այդ մարդու քեֆովությունն անցնում է և խելքը գլուխը գալիս ու իր դրած պայմանն իմանում, ահից քար է կտրում: Մրա կինը, տեսնելով իր ամուսնու այդ վիճակը, հարցնում է, և մարդը պատմում է իր գլխին եկածը:

— Վնաս չունի, — ասում է կինը, — ես կգամ և խանի պատասխանը կտամ:

Երբ խանը հպարտանալով կանչում է մարդուն և ասում. — Կան խմիր ծովը կան կախ եմ տալիս:

Կինը պատասխանում է. — Իսան, իմ մարդն ասել է, որ միայն ծովը կխմեմ, այդպե՛ս է:

— Այդպե՛ս է, — պատասխանում է խանը:

— Չի ասել, որ գետերն էլ խմեմ, — հարցնում է կինը:

— Ո՛չ, — դարձյալ պատասխանում է խանը:

— Ուրեմն դու պահիր գետերի ընթացքը, որ նրանք ծովը չթափվեն և իմ մարդը կխամի ամբողջ ծովը, — պատասխանում է կինը և հաղթում:

15. (25) ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐ

Մի քաղաքում երկու եղբայրներ էին ապրում, դրանցից մեծը միշտ փոքրին ճշում էր, իսկ փոքրը միայն տխուր արտասանում էր. «Աստված ճշմարտի հետ է»:

Մի օր էլ այդ ասելու համար մեծ եղբայրը նրան ծեծելով դուրս է անում տնից, թե գնա, թող քո ճշմարտությունը քեզ պահի, պահպանի, էլ ոչինչ ինձնից ստանալիք չունես: Փոքր եղբայրը գնում է ասելով՝ Աստված ճշմարտի հետ է:

Գնում է, գնում, հասնում է մի թագավորության հող, տեսնում է մի սիրուն այգի, որոնց ծառերի մի մասն արդեն պտուղով հասում է, մի մասը նոր է ծաղկում, իսկ մի մասն էլ դեռ չի բողբոջել: Որքան աշխատում է մտնել այգին, չի լինում: Տեսնում է, որ մի մեծ առու է մտնում այգին պարսպի տակով: Շորերը հանում է, ինքը մտնում առուն և լողալով անցնում ներս:

Այգին մտնելով՝ նա ուտում է մի քանի անուշահամ պտուղներ և, որովհետև սաստիկ հոգնած էր, մի պատի շվաքում պառկում է և քնում: Այգեպանը՝ մի ծերունի, բահն ուսին, գալիս տեսնում է, մի մարդ քնած իր այգում, շատ է զարմանում, ուզում է բահով տա սպանի, մեկ էլ տեսնում է, որ նա դարիք մարդ է, խղճում է ու արթնացնելով հարցնում. — Ո՞վ ես, այ մարդ, և ինչ ես շինում այստեղ...

—Աստված ճշմարտի հետ է, —ասում է տղան արթնանալով և պատմում իր ուլ լինելը:

Այգեպանը դրան վերցնում է իր օգնական և աշխատացնում այգում: Այդ տղան իրեն շատ լավ է պահում և կարճ ժամանակամիջոցում գրավում է այգեպանի սերն ու համակրանքը:

Մի օր տղան դուրս է գալիս այգուց և տեսնում, որ իրենց այգու մոտ է թագավորի պալատը և թագավորը լվացվում է պատշգամբում, ծառաները ջուր են լցնում նրա ձեռքին:

Տղան մոտենում է թագավորի պատշգամբին և ասում. — Թագավորն ապրած կենա, Աստված ճշմարտի հետ է:

Այս խոսքերը դուր են գալիս թագավորին և սա մի ոսկի է նվիրում այդ տղային ու ասում. — Այսուհետև ամեն օր կգաս և կասես ու մի ոսկի կստանաս:

Տղան ամեն օր գնում է թագավորի մոտ, ասում՝ Աստված ճշմարտի հետ է, և ստանում է մի ոսկի:

Կարճ ժամանակում բավականաչափ հարստանում է: Այգեպանն էլ մեռնելիս իր դրախտային այգին նվիրում է այդ տղային ու տղան ապրում է փառավոր այգով և թագավորի տված ոսկով:

Մեծ եղբայրը մի երկու տարի հետո աղքատանում է և ծայր չքավոր դրությամբ սկսում մուրալ քաղաքներում և գյուղերում: Մի օր էլ հասնում է փոքր եղբոր դուռը և մուրում, բայց փոքր եղբայրը ճանաչում է մեծ եղբորը, խղճում և տանում իր մոտ ու պահում փառավոր:

Մի օր մեծ եղբայրը հարցնում է փոքրին, թե՛ դու ինչպե՞ս ես հարստացել: Փոքրը մանրամասնորեն պատմում է:

Մեծ եղբայրը նախանձից քիչ է մնում պայթի: Մի օր էլ գնում է թագավորի մոտ և ասում. — Տե՛ր թագավոր, այն մարդը, որ ամեն օր գալիս է և քեզ ասում «Աստված ճշմարտի հետ է» ու մի ոսկի առնում քեզնից, վատ մարդ է: Քեզանից բանբասում է ասելով՝ թագավորի բերանից գարշահոտություն է փչում:

— Լավ, — ասում է թագավորը, ես նրա արժանի պատիժը կտամ:

Մյուս օրը, երբ տղան գալիս է ասում «Աստված ճշմարտի հետ է» և սպասում, որ ոսկին ստանա, թագավորը նրան մի ծրար է տալիս և ասում. — Տա՛ր այս ծրարը քաղաքից դուրս իմ աղյուսի գործարանը, այնտեղ քեզ կտան 360 ոսկի մի տարվա համար, իսկ գալիք տարին նորից կգաս:

Հակառակի պես այդ օրը փոքր եղբայրը սոխ ու սխտոր էր կերել ու բերանիցը հոտ էր փչում: Որպեսզի այդ հոտը թագավորը չգզար, բերանը

փակել էր շորով: Այդ տեսնելով՝ թագավորը ավելի հաստատ համոզվեց, որ իր բերանից հոտ է գալիս և նա բերանն ու քիթը կապել է հոտը չգզալու համար:

Փոքր եղբայրը ծրարը ձեռքին ուզում էր գնա աղյուսի գործարանը, երբ պատահեց մեծ եղբայրը:

— Ու՛ր ես գնում, — հարցնում է մեծը:

— Գնում եմ ոսկի ստանալու, — ասում է փոքրը և մանրամասն պատմում թագավորի պատվերը:

— Դու արդեն բավականին հարուստ ես, եղբայր,—ասում է մեծ եղբայրը,—ծրարը տուր ինձ, գնամ, ստանամ այդ ոսկին, ես էլ ապրեմ:

Լավ,—հմաձայնվում է փոքր եղբայրը և ծրարը տալիս մեծին:

Անցնում է մեկ տարի, մեծ եղբայրը չի երևում: Փոքր եղբայրը գնում է թագավորի մոտ, որպեսզի այդ տարվա ոսկին ստանա:

Թագավորը շատ է զարմանում և հարցնում է.— Ու՞ր ես եկել:

— Եկել եմ այս տարվա ոսկին ստանամ,— պատասխանում է տղան:

— Իսկ անցյալ տարվանը ստացել ես:

— Այո՛:

— Մուտ մի՛ խոսիր, ճիշտն ասա, ստացել ես:

— Այո՛,— պատասխանում է փոքր եղբայրը:

— Դու՛ ես ստացել, — հարցնում է թագավորը:

— Ո՛չ, իմ մեծ եղբայրն է ստացել, — ասում է փոքրը:

Թագավորն իր մոտ գրել էր մեծ եղբոր անունը, ազգանունը, հայրանունը, մոր անունը, որտեղացի լինելը և երբ փոքրը նրան պատմում է այդ, նա տեսնում է, որ դրան մատնողը մեծ եղբայրն է եղել, ասում է.— Բարի՛ մարդ, քո եղբայրը դավաճանել է քեզ և ստացել իր պատիժը:

Ու պատմում է, որ այն ծրարում գրված է եղել, որ նամակաբերին այրել քուրայի մեջ:

— Ուրեմը չար եղբայրը ստացավ իր արժանի պատիժը, այսուհետև օրը մեկ ոսկու փոխարեն երկուսը կստանաս ինձնից,— ավելացնում է թագավորը:

— Ճշմարտությունը հաղթող է,— ասում է փոքրը և շնորհակալություն հայտնելով գնում:

16. (26) ՀԻՄԱՐ ՏԵՐՏԵՐԸ

Մի գյուղում մի շատ հիմար տերտեր է լինում: Սա, որպեսզի Նոր Տարվանից հաշվի, թե երբ պետք է Ջատիկը գա, գրպանը լցնում է այնքան հատ լոբի, որքան օր կա, և օրը մեկը դեն է ձգում:

Մի օր պատահամաբ իրիցկիներ տերտերի շորերը թափ տալիս բոլոր լոբին լցնում է թորենը: Որպեսզի տերտերը չկռվի հետը, գնում է և մեծ քանակությամբ լոբի բերում ու լցնում տերտերի գրպանը: Օրեր են անցնում, գալիս է Ջատիկի տոնակատարության օրը, բայց տերտերի գրպանում դեռ շատ լոբի կա:

Մի օր էլ մի պառավ հարցնում է.— Տեր հայր, բա Ջատիկի օրերը չն՞ա:

— Այ պառավ,— պատասխանում է տերտերը,— թե եղանակին ու օրերին եմ նայում, Ջատիկի օրերն են, իսկ թե գրպանիս լոբուն եմ նայում հլա ուշ ա գալու:

17. (27) ՓԵՍԱՆԵՐ ԸՆՏՐԵԼԸ

Մի մարդ մի շատ սիրուն աղջիկ է ունենում, որի ձեռքը շատ ուզողներ են լինում: Այս մարդը չի իմանում, թե աղջիկը ում տա: Երբ տեսնում է, որ էլ հնար չկա, փեսացուները շատ են գոռ անում, մի օր դուրս է գալիս և ասում.— Միրելի՛ փեսացուներ, իմ աղջիկը տալու եմ նրան, ով իմ մի պատվերը կատարի:

Այս ասելուց հետո, նա յուրաքանչյուր փեսացվին մի քար է տալիս ասելով.— Դիր տրեխիդ մեջ՝ ոտիդ տակ, ու գնա սաղ օրը ման եկ, եթե այդ քարը առանց հանելու երեկոյան տուն բերիր, իմ աղջիկը քեզ կտամ:

Բոլոր փեսացուները սրբությանը կատարում են աղջկա դաժան հոր պատվերը, բացի մի քաչալից, որը և ամենափոքրն էր: Սա հենց տեսնում է, որ քարը ոտին վստատում է, հանում է և դեն շարտում, ասելով.— Ա՛հ, չի տալիս, թող չտա, հո ես սաղ օրը դա ոտիս մեջ չեմ պահելու:

Իրիկունը, երբ բոլորը տուն են գալիս, ամեն ոք հանում է ոտքի քարը, որից ոտքերը սարսափելի վերքեր էին ստացել և հանձնում են տիրոջը:

— Դու ինչու՞ չես պահել, — հարցնում է տերը քաչալին:

— Ես հո ոտիցս ձեռ չէի քաշել, որ քարը թակեր ու սրանց ոտքերի պես յարալու աներ, — համարձակորեն պատասխանում է քաչալը:

— Որ էդպես է, աղջիկս քեզ եմ տալիս, տանք, քեզ հալալ լինի: Եթե այս մարդիկ իրենց ոտքերի դաղը չեն իմացել, իմ աղջկանս էլ չեն իմանա:

18. (28) ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ԱԴՔԱՏԸ

Մի թագավոր փողոցում պատահում է մի աղքատի, որն իրենից ողորմություն էր խնդրում: Էս թագավորս աղքատին բերում է իր տունը, հինգ օր ժամանակ տալիս և նրան առաջարկում է հետևյալ հարցերը՝ որոշել՝ շնտ է բարձր արդյոք երկինքը, շնտ է խոր երկրի հիմքերը և ինչ արժի իր՝ թագավորի գինը:

Աղքատն ընկնում է թագավորի ոտները, աղաչում, պաղատում, որ իրեն խղճա ու բաց թողնի, բայց չի լինում, թագավորը մտում է իր վճռին հաստատ: Հինգ օր անընդհատ աղքատը ոչ ուտում է, ոչ խմում կամ քնում, անընդհատ մտածում է, թե ինչ անի, որ ազատվի այդ սարսափելի դրությունից, ինչպես լուծի թագավորի խնդիրները, այլապես պետք է ճաշակի կախաղանի մահացու խրախճանքը: Վերջապես անցնում է հինգ օրը, աղքատին տանում են կախաղանի մոտ:

Գալիս է թագավորը և հարցնում.— Գտանք արդյոք տվածս խնդիրների պատասխանը, թե՛ ուզում ես վիզդ մոմած թոկ գցենք:

— Գտան, տեր իմ, — գլուխ տալով խոսում է աղքատը:

— Ուրեմն ասա՛, խո՛ր է արդյոք երկրի հիմքերը, — հարցնում է արքան:

— Այո, տեր իմ, շատ է խոր:

— Ինչու՞ է խոր:

— Որովհետև հազարավոր տարիներ է ինչ հարյուր հազար, միլիոնավոր մարդիկ են գնացել այնտեղ, և նրանցից ոչ մեկը չի վերադարձել, որովհետև շնտ ու շատ խոր է նրա հիմքերը:

— Լավ, — ասում է արքան, — իսկ բարձր են արդյոք երկնքի բարձունքները:

— Ոչ շատ, — կրկին պատասխանում է աղքատը, — եթե շատ բարձր լիներ, մենք չէինք լսի որոտի ձենը, չէինք տեսնի կայծակի փայլը և անձրևն ու ձյունը մեզ չէր հասնի:

— Լավ, — դարձյալ ասում է թագավորը, — դու պատասխանեցիր իմ երկու հարցերին, այժմ ասա, ինչ արժեմ ես, ինչ է իմ գինը:

— Ձեր գինը, տեր արքա, — գլուխ է տալիս աղքատը, — ձեր գինը երեսուն ռուբլի է:

— Ինչո՞ւ, հիմանք, — մոնչում է արքան կատաղած, — երեսուն ռուբլու մի անասուն չեն տա:

— Տեր, հույները Քրիստոսին ծախեցին երեսունմեկ ռուբլու, դա նրա գինն էր, ես քեզ գնահատում եմ երեսուն, գոնե դու մի ռուբլով ցածր կլինես Աստծու որդու գնից, — պատասխանում է աղքատը և հեռանում:

19. (29) ԹՈՒԿԸ ԿՔԱՇԵՄ

Մի խեղճ մարդ աշխատում էր մի անգութ հարուստի տանը: Յոթ տարի աշխատում է էս մարդը, բայց չար աղան ոչ մի կոպեկ վարձ չի տալիս: Նոքյարս ինչքան աղաչում է, չի լսում:

— Չեմ տա ու չեմ տա, — ասում է տերը, — հացս կերել ես ու հիմա էլ հախ և՛ն ուզում:

Էս նոքյարս լուռ է մնում: Անցնում են օրեր: Մի օր Աղան իր տունը հյուր է հրավիրում մի ուրիշ հարուստի, որն իր առևտուրը վսասում էր: Ուտել-խմելուց հետո թուրը քաշում է և հյուրին սպանում: Հյուրին սպանելուց հետո դնում է մի մեշոկի մեջ և ծառային հրամայում, թե՛ տար, ջուրը գցի: Ծառան մտածում է. «Թե կարողանամ յոթ տարվա հախս ստանամ, էս մոմենտին եմ ստանալու, թե չէ ու չէ»: Վերցնում է մեշոկը, շալակում և գնում դեպի գետը: Մեշոկի բերանից մի հաստ պարան է կապում: Մեշոկը կախում գետը, իսկ պարանի ծայրը կապում մոտիկ ծառից, վերադառնում է տուն և ասում. — Աղա՛, տո՛ր յոթ տարվա վարձս, գնամ:

— Վարձ-մարձ չկա՛, — պատասխանում է աղան:

— Աղա՛, տուր թե չէ կգնամ, թոկը կքաշեմ:

— Էդ ի՞նչ թոկի մասին ես խոսում, գյադա՛:

— Գնանք գետի ափը, քեզ ցույց կտամ:

Գնում են: Ծառան քաշում է թոկը և մեշոկը դուրս է գալիս: Աղայի լեղին ջուր է դառնում փորումը, մեկ ուզում է ինքը կտրի թոկը, մեկ էլ տեսնում է ծառայի ահռելի բազուկներն ու սարսափում: Փողը տալիս է ծառային, թե՛ թոկը կտրի: Երբ օխտը տարվա վարձն առնում է ծառան, թոկը կտրում է և մեռելը գետը տանում:

Մյուս օրը Ծառան գնում է նույն խազեինի մոտ, թե. — Աղա՛, ծառա չե՛ս ընդունիլ ինձ:

— Չե՛, սիրելիս, մեկ անգամ թոկը քաշեցիր, օխտը տարվա վարձդ առար, մի անգամ էլ կքաշես՝ հոգիս կառնես:

20. (30) ՏԵՐՏԵՐԸ

Մի գյուղում մի չար ու անխիղճ տերտեր է լինում, անունը՝ Տեր Միսակ: Էս Տեր Միսակս իրեն հարևան աղքատ Հովսեփի հոգին համարյա հանում է, էլ չենք խոսում գյուղի մյուս այն մարդկանց մասին, որոնք դատ էին գնում Տեր Միսակի ձեռքից:

Մի օր էս Հովսեփս դես է մտածում, դեն է մտածում, թե ինչ անի, որ էդ անիրավ տերտերից ազատվի, վերջը հնարը գտնում է:

Գնում է տերտերի տունը, թե.— Տեր Հայր, բա չես ասի, հանդի մի հոր է բացվել, մեջին ոսկի կա, ասում են՝ ով աստվածապաշտ է, նա միայն կարող է հանել: Հմի գյուղումս աստվածապաշտը, ամենից մեծը դու ես, եկ տանեմ հորը ցույց տամ, ոսկին հանիր, դու քո խղճին, ինձ էլ ինչ կտաս, կտաս:

Տերտերը որ չի լսում ոսկու անունը, աչքերը դառնում են սոված գիլի աչքեր:— Հա, հարուստ մեռնեմ, Հովսեփ, գնանք:

Գնում են, հասնում են հորին, որի մինչև կեսը զարշահոտ ջուր է լինում:

— Դե, Տեր հայր, դու կոացիր, ես քո ոտներից բռնած պահեմ, ոսկին հանիր:

Տերտերն իսկույն փիղոնը դեն է ձգում և կախվում: Հովսեփն էլ պահ էր սպասում, բաց է թողնում տերտերին, մի մեծ սալ քար դնում հորի բերանին ու յալլա, հետ նորից իր տունը:

Մի իրեք օր հետո, ասում է՝ գնամ տեսնեմ մեր տեր Միսակը ինչ հալի է: Վեր է կենում ու գնում: Հենց որ հորի բերնի քարը շուտ է տալիս, միջից մի սատանա է դուրս գալիս: Էս Հովսեփս, որ սատանան չի տեսնում, երկու ոտ ունենում է, երկուսն էլ փոխ է առնում ու պուկ...

Սատանան հետևից ձեն է տալիս.— Մարդ աղբեր, մարդ աղբեր, հլա ոտը կաց, բան եմ ասում:

Էս Հովսեփս մին մտածում է, թե սատանան ինչ պիտի իրեն ասի, որ կանգ առնի, մին էլ ասում է՝ լավ, սպասեմ, տեսնեմ ինչ կասի: Կանգնում է:

— Ես քո հոգուն մեռնեմ, մարդ աղբեր, — բացականչում է սատանան, ախր էդ որտեղից դուս ընկար ու ինձ ազատեցիր էս չար տերտերի ձեռքից:

Էս որ լսում է, Հովսեփն արմանք-զարմանք է կտրում, ասում է.— Մի՞թե տերտերը կենդանի է դեռ:

— Էլ մի ասիր, մարդ աղբեր, ինձ էս օրը զցեց, որ էլ ինչ ասեմ, իմ ընկերներին կոտորեց, ինձ էլ կսպաներ, եթե դու չհասնեիր: Հմի, աղբեր, ինչ լավություն ես ուզում քեզ անեմ, ասա՛:

Հովսեփը երկար մտածում է, թե ինչ խնդրի սատանայից, չի գտնում, ասում է.— Սատանա՛ եղբայր, ինչ խնդրեմ քեզվից, դու սատանա, ես մարդ, ինչ էլ որ կուզես, արա:

— Լավ, — ասում է սատանան, — ես կմնամ և կկախարդեմ թագավորի աղջկան, դու կգաս և աղջկանը բժշկելու անունով նրան մի թաս ջուր կխամեցնես, ես կհեռանամ և դու մեծամեծ նվերներ կստանաս թագավորից:

— Թող այդպես լինի:

Մյուս օրը քաղաքում լուր է տարածվում, որ թագավորի արմաղ-շարմաղ, մեր ու մադար մի աղջիկը կախարդվել է, ով որ նրան ազատի՝ քաշովը մին ոսկի: Լուրը դմբդմբալով գնում, հասնում է Հովսեփին: Սա վեր է կենում, չուխի փեշերը հավաքում, գնում թագավորի պալատի դռանը նստում: Պահապաններն ուզում են սրան քշեն, չի լինում, էս Հովսեփի համառում է, թե պիտի թույլ տաք, որ ես գնամ ու թագավորի աղջկանն ազատեմ:

— Հազար փիլիսոփա, լոխման հեքիմ են թափվել, բան չեն շինում, դո՞ ես ազատողը, քոսո՞ւ շուն, գնամ, թե չէ վզակոթիդ կտանք, — հրամայում է դոնապանը ու ներս չի թողնում Հովսեփին:

Էստեղ մի խելոք պալատական է լինում, հրամայում է պահապանին, որ ներս թողնի այդ գյուղացուն: Հովսեփին տանում են թագավորի մոտ:

— Հը, կարաս աղջկաս լավացնեն:

— Հրամանդ, Տեր արքա:

— Իսկ եթե չարիր, այ, տեսնո՞ւ ես կախաղանը, քեզ կախ կտամ:

— Թող այդպես լինի, — ասում է Հովսեփը համարձակ, և պալատականների առաջնորդությամբ ներս է մտնում աղջկա ննջարանը:

Տեսնում է՝ ոսկե մահճակալի մեջ պսոկել է մի արմանք-գարմանք հուրիփերի: Հրամայում է, որ մի աման սառը ջուր բերեն: Ջուրը բերում են և թերհավատ նայում Հովսեփին: Էս քաջ Հովսեփի ջրից որ մի երկու կաթիլ չի խմացնում աղջկանը, աղջիկը իսկույն նստում է տեղն ու ժպտալով ասում. — Օ՛հ, ինչ շատ եմ քնել:

Թագավորի ուրախությունն աշխարհով մին է լինում: Հովսեփին մի քաջ ոսկի է տալիս ու ճամպու դնում:

Մյուս գիշեր Սատանան գալիս է Հովսեփի տունը, թե. — Հովսեփ ախպեր, այս անգամ էլ թագավորի կնկանն եմ կախարդելու, ամնա չգաս հս, դուրս չեմ գալու նրանից, ինչ էլ անես, քո գլուխը կտրելու են:

Ահից սարսափած Հովսեփն ուզում է սատանայի ոտերն ընկնի, որ էդ բանը չանի, բայց էլ ո՞վ կտա սատանա, իսկույն թողնում է, գնում և թագուհուն կախարդում:

Առավոտը թագավորի վեզիրները Հովսեփի դուռը կտրում են. — Ե՛լ, Հովսեփ, թագավորը կանչում է:

Հովսեփն ուզում ա «չեմ գալիս» ասի, բայց վեզիրը նրա վզակոթին դնում է ու առաջ անում: Ծնկները թուլացած, մահվան սարսափը հոգում էս Հովսեփի հասնում է պալատ:

— Դե՛, փրկի՛ր կնոջս, Հովսեփ, կամ գնա դեպի կախաղան, — կանչում է թագավորը:

Հովսեփը մոտենում է թագուհու ննջարանին, դուռը քիչ բաց է անում և վախեցած բացականչում. — Սատանա եղբայր... Տեր Միսակը հորից դուրս է եկել և դեպի քեզ է գալիս: Փախի՛ր, ուր կաս...

Սատանի լեղին ջուր է դառնում, թագուհու փորից դուրս է գալիս ու փախչում:

21. (31) ԿՈՒՅՐԵՐՆ ՈՒ ԱՌՈՂՋԸ

Մի կոյր մարդ փայտը ծեռին ճանապարհին կնալիս ա լինում: Մի ուրիշ մարդ էլ տեսավ, որ մի կոյր մարդ ճանապարհով կնում ա, ասաց. «Մի ես սրան փորձելու եմ, տեսնեմ՝ իսկապես կոյր է, թե՛ չէ»: Իբր էլ իրան նմանեցրեց կոյրի, էկավ, հանկարծ կպչավ կոյրին:

Էդ կոյրը թե. — Ա՛յ մարդ, խո տու քո չնս: Ես աչքեր չունեմ, տու ընչի՞ ես կալիս, կպչում:

Թե. — Ա՛յ մարդ, ես քեզանից քո եմ: Տու էլ է՞ս քո:

Թե. — Հա՛, քո եմ:

Առողջ մարդն ասըմ ա. — Թե որ քո ես, ես էսօր առուտուր եմ արել, չեմ իմանում ինձ խաբել են, թե՛ չէ, մի տես էդ փողը ինչքան կըլնի:

Ասըմ ա. — Հա՛, սաղ վախտս ես հայտնի մասնագետ եմ էդ պանին: Տու՛ր, տուր փողերդ, ես իմանամ:

Էդ կոյր մարդը փողերը վերցնում, ճանապարհից տուրս ա կյալիս հակառակ կողմը, իբր թե որ կոյրը տրան չտրսնա:

Առողջ մարդ տըսնում ա, այ մարդ փողը վերցրեց, թաք կացավ:

Ասում ա. — Այ մարդ, պա ի՛նչ էղավ փողս, տու՛ր:

Ծեն չի տալիս: Քարը վերցնում ասում ա. — Տեր աստված, աչքի լուս չունեմ, էնպես եմ տալիս, ուղիղ ոտին կպչես:

Մի քար տալիս ա կոյրի ոտին: Կոյրը տըսնում ա, որ քարը կպավ ոտին, ասըմ ա. «տեղս փոխեմ», փոխըմ ա մի ուրիշ տեղ:

Էս մարդն տըսնըմ ա, որ տեղից տեղափոխվավ, էլի կանչըմ ա, ասըմ ա. — Ա՛յ մարդ, պա էս փողը ինչ էլավ, ու՛ր ես:

Էլի ծեն չի տալիս: Ասըմ ա. «Մի քար եմ վերցնըմ, տեր աստված, ուղիղ կպչի մեջքին»: Մի քար տալիս ա էս կոյրի մեջքին: Կոյրը տեսնըմ ա՛ չէ, թայրը չկա: Երբորդ անգամ տեղը փոխելուն առողջ մարդն ասըմ ա. «Տեր աստված, էս քարս էս անգամ ուղիղ կլիսին»:

Հենց կլիսի անուն ա տալիս, ասըմ ա. «Ա՛յ մարդ, կտա կմեռներ»:

Ասըմ ա. — Սպասի՛ր, սպասի՛ր, իմացամ, էկամ:

Կյալիս ա մոտ, ասըմ ա. — Դե տուր փողն:

Ասըմ ա. — Հիմա:

Կոյրը կնըմ ա: Էս մարդն էլ սրա հետևից կնում ա, ասըմ ա. «Մի ես սրան փորձեմ, տըսնամ՝ ու՛ր ա կնում»: Էս կոյրը կնում ա, իրա փողը լցնում ա մի կճուճի մեջ, մի պատի մեջ տընում: Էդ առողջ մարդը կնում ա, սրա փողը գաղտնի վերցնում ա, թաքնվում ա: Կոյրը տուս ա կյալիս, տըսնում՝ փողը չկա: Իրա ընկերներն էլ ընդե կաղնած են ըլնում, ճանաչում են մեկմեկու:

Ասում են. — Ընչի՞ ես էղպես դիլխոր:

Ասըմ ա. — Չես ասում, փողս կողացան:

— Պա, ինչպե՛ս կողացան, որտե՞ղ ես տրե:

Ասըմ ա. — Փողս տրել եմ պատի մեջ:

—Ա՛յ հիմար, —ասըմ ա, —փողը չեն տնի, է՛, պատի մեջ: Տեսնո՞ւմ ես էդ ծե-
ռիս փայտն, իմ ամբողջ փողս լցել եմ էդ փայտի մեջ, քցել եմ տեն: Ով էլ քսնի,
իրանք են խնտրում թե. «Կույր ախպեր, առ փետդ վերցրու», քսնում էն, պիրում,
տալիս ինձ:

Էսենց ասելու, էս առողջ մարդը ծեռը քցում ա էս փայտը քաշում ա ու ետ
թաքնվում:

—Վայ՛, փայտս, փայտս:

Էդ էլ տարավ:

Էն կողմից մի կույր մարդ ա կյալիս, ասըմ ա. —Ի՞նչ էք էտենց լաց ընում:

Ասըմ ա. —Ա՛յ մարդ, փողերս տարան:

—Պա ճնց:

Էն ասըմ ա. —Իմ կուճուճով պատից տարան:

Էն ասըմ ա. —Ծեռիս փետը տարան:

Ասըմ ա. —Տուք ինչքան ախմախ մարդիկ էք, փողը որտեղ էք թաքցնում:
Ա՛, փողն էսենց տեղ կտնեն: Տըսնում էք էս պենջակն , —ասըմ ա, —խին պեն-
ջակ ա, փողը լցել եմ էս պինջակիս վերան, քցես էլ դեն թամաշ արող չի լինի: Ես
իմ փողս էդ պենջակի մեջ եմ պահում:

Էս առողջ մարդը, որ էդ պաները լսում ա կողքից, կնում ա, մե՛ քիչ ճրալի
մեղր ա առնում, պերում, քցում էդ մարդու վրա: Մեղուները էդ մեղրի խոտին
լցվում են էդ մարդու վրա: Էդ մարդը վրայից պենջակը քցում ա, փախչում: Էս
առողջ մարդը սրա պենջակն էլ ա վերցնում, տանում: Ասըմ ա. «Տյուք ծեր կույր
տեղով ինձ ուզըմ իք խաբի: Դե հիմի կնացեք, որտե՛ ծերն ասեք, ընդե՛ էլ իմը
ասեք»:

22. (32) ՔԱՄԻՐՆ ՈՒ ԶՈՌԵՆ

Աշխարքըմըս ապրիլիս ա ինըմ մին քնսիր մարթ, համա ինքը չփլատ, տաշ-
տը տնրտնակ: Իշքան չարալաշմիշ ա ինըմ, իշքան ախշադըմ ա, էլի խախալի
կլմխը կարըմ չի թնն պնն քցի: Էտ էլ հնկնն հեչ մին օր էլ կնիկը վեր ա ընգնըմ,
հոքին տալիս:

Ննչնրը ոչ մինին էլ ա կանգնտվըմ չի, կրակը ջանն առած չիմմի սիրտն էլ
շահըմ ա, խըղճմտանքին հակառակ պնն չի անըմ, խափըմ չի: Հննննշա բուգու-
նին որ տնրտնակ ծեռքով տուն ա կնլիս, խոխեքը իրանց հոր սիրտը շահիլի
մհար սոված փորով երք են ասըմ ու էտ երքը զնգընգըմ ա զանգակի մնան:
Պայց էտ պննը գոռբա հըրեվանին տուր չի կալիս:

Մին օր էլ էս գոռբեն կնլիս ա քնսիրի կուշտըն ու ասըմ ա. —Քանի՛ խոխա
ունես:

—Օխտը:

—Մինին թնն տա ինձ, քեզ էն դոնըր փող կտամ, որ կլիանաս:

Միֆտըմը քնսիրը ռազի ա ինըմ, համա եդո փըշմննըմ ա, գիդըմ չի թնն որ
մինին տա: Մինին սիրիլիս ա ինըմ աշկապնցության, մինին՝ խեղքի, էն մինին՝
դոչադության, չորսինջինին՝ երք ասիլի, հինգինջինին՝ պար կնլի, վեցինջինին՝

ավանդանյալը թանձր պահիլի մըհար, վերջինին էլ ընդրա մըհար, որ առանցի մեր ա մեծացած ինըմ: Խոխոցիցը ոչ մինը ոագի չի ինըմ, թա քինն գոռքի կուշտը: Ղաբուլ են ինըմ մասն սոված, թնքճն հորների կշտիցը քիննն ոչ, ախպերներիցը ճոկվեն ոչ:

— Լնվ, որ ըտենց ա, — ասըմ ա գոռքեն, — եկ քեզ խելաք փող տամ, թնքճն երքեր ոչ:

Էս անքամ քնսիբը դաբուլ ա ինըմ: Յաշըմը էն դղար փող իշքան գոռքեն էր տուվել, ոչ տեսել էր, ոչ լսել: Ջոռքեն հենց որ ռեհելը քաշըմ ա, խոխոցիցը մինը ըսկսըմ ա երքիլը: Էնքան լնվ ա երքըմ, ընդենց էշխով ու սրտալի, էն դնդնր համով-հոտով, որ քնսիբի սիրտը լըցվում ա, շոռ ա կնլիս:

Փողը վեր ոնըմ, տանըմ տալիս գոռքին ու ասըմ. — Փողըտ վեր կալ, ադս, իշքան փիքըր են անըմ, երքը փողով առնիլի ապրանք չի: Առանց երգ մարթը ճնց կապրի:

23. (33) ԻՄԱՍՏՈՒՆ ԹԱՔԱՎՈՐԸ

Նիս ի նիս չի մին թաքավորը ը նիս: Ան թաքավորը շետ խելուք մարդ ը նիս: Ուրեն ննգիր-վնգիրներուն հըվըտիս չի լն: Ամեսը մին դժնն, թաքուն պալատեն դնու ը լննն, մըտես խալխուն մանջի դնրվիշն շնրթերնվ: Գինես ի լն չայխանաներամը նըստես, մին չայնիկ չայ բիրիլ ննս, կամաց-կամաց խմես չայի, անգունդ դիրիս, թն խալխը հինչ խըսես: Լսիս ի լն հնրդի ի մինի ուրեն ուշանց ննս, մինի ննգիր-վնգիրներուն կամ թաքավորուն, դուլուղչիներուն: Էտեն ննս իլն պալատ, հրաման ննս՝ աս ինչ ննգիրին ցիքիլ դուսադ, ան հինչ վնգիրուն նըշանակիլ, ան ինչ դուլուղչուն վնգիր նըշանակիլ: Խալխը մընաս ի լն դիշված, թն՝ այ ջանըմ, նս մեր թաքավորը իսկական իմաստուն ա, հոր նդ սիրիկաներուն պըտըժիս ի, օքուտ դուլուղչիներուն ալ էտեջ ի քիշիս:

Օմմեն քիշերավ ննս ին լն թաքավորուն կոշտը ինրեն ննգիր-վնգիրնեն, գորքու գլխավորը, ըսես. — Թաքավորն ապրած կենսա, երգիրի դըրությունը շետ օքուտ ա, խալխը գոհ ա քիննի:

Մին օր ալ թաքավորը պալատեն դնու ը ննս, գինես մին չայխանամ նըստես, չայ բիրիլ ննս, կամաց-կամաց խըմես, լիսիս, թն խալխը հինչ ի խըսես: Մին ալ լիսիս ի, թն հուրդի մին յանամ նըստուտած խոջաները ըսես ին. «Ա՛յ ջանըմ, նս հինչ խայտառակ դըրություն ա: Ան անիրավ ավագակնեն մեր հոքին հանալ ըն, կրես չիք հաքըներըս դնու դիրիք, նընննն թըլընես ին, սըպանես, իզան նըման մուրթիս ին: Մեր թաքավորը հեչ վեջուն վեր չի, հուրըս նդի թաքավորու գլխուն»:

Ան հոր թաքավորը լիսիս ի, ըսես ի. «Մետիլ գինեմ օրիշ քաղաքներն ալ շոռ գում, տեսնիմ տեղը հինչ ին խըսես»: Ըսես ի ու հըղեն նուս դիրի օրիշ քաղաք: Թաքավորը գինես ի փիադա, սադ օրը հղեն գինես ան քաղաքը, հոր ինքի խընդիս ի գինեն, հալա շետ հետա ա նիս: Թըմաշ ի ըրես, տըսնիս հոր հրենակը մարը մըտես, մըթնավ, ալ կարի չի հասնիլ ան քաղաքուն. հոր հետ դեռնի, ալու քիշերը ալ կարի չի հասնիլ ան քաղաքուն, հոր հետ դեռնի, ալու քիշերը մընալի

չղլամը, հուտանց ը ննս, մըտածես, թն հնորդի արի: Մին ալ տըսնիս ի, հոր կոլխկեն սարու տակեն ծոխ ը նոս: Ան հոր տըսնիս ի, ըսես ի. «Ան, հնորդի իրվնս ի տեղը, չոբանսեն ին, գինեմ անդոնց քիշտին աս քիշեր քն գում, լիսս-նիլ ի, թուղ ըմ արիլ գինել իմ բենուս»:

Թաքավորը հղեն պըմնես ի, գինես: Հոր ըսկըսես ի մըթնիլ, տըսնիս ի ըմըշ-կին մին տոն, չուրք յանըն ալ բոցուր հուրմարավ պատած: Հըսես ի տան, շոռ ը նոս դիրվնգան գիդիսիս, տըսնիս ի ըրկաթե չնքունի վերան կախ տըված:

Թաքավորը պըմնես ի չաքունի կուփիս տակըն ըրկաթուն, մին ալ լիսիս ի. — Ան հու՛վ ա:

Թաքավորը տըսնիս ի խոսուողը կնեկ ի, ըսես ի. — Քնուր ջան, դնրիք իմ, քիշերս մսահած ըմ չղլամը, ինձ տեղ տոր մին քիշեր քն գում, ուգուց իմ հղես պըմ-նեմ գինեմ:

Ան կնեկը դուրքը բինիս ը, տըսնիս հոր դնրվիշ ի, թուղը ը ըրես տոն. — Դնրվիշ բաբա, համեցեք, համեցեք, ակներուս վերնն տեղ Օնիս:

Թաքավորը մըտես ի հայաթը, փննքաններավ բիցրինիս, մըտես թթախը: Մըտես ի թն չէ, տըսնիս ի պունախամը մին գնբե վի փըրված: Միս սուս-փուս գնբնն վերնն պըրընիս ի, գնբնի դըրաղը ցիքիս գլխուն, քն նոս. չունքի շետ վըստակած ը նիս: Բիրդնն լիսիս ի չրախկ-չըրախկեք, ձիանաց հաքորու սնս: Մին խոր անց ը ննս, տըսնիս ի մըտալ ըն թթախը իրիք տըղամարդ, օմմեն մինի մին առուծ, իրիքուն օստուն ալ մին-մին խուրջին:

Մըտալ ըն թթախը, խուրջիննեն վեր դիրալ ու ասալ. — Նանի՛ ջան, քոխցած մեռալը ըք, սուփրան ցիքն, հինչ Օնիս բիր:

Թաքավորը տեսալ ա, հոր իրիքին նալ գինված ըն թիփննգնվ, թափան-լավ ու խանչալավ: Նանին բիրիս ի սուփրան ցիքիս, մին մոծ պղնձե սինավ փլա-վը դիրիս ըմըշկեն, վերան ալ ուխչարու մեսը դեգգած: Անոնք նըրննիլ յերաղ-նեն վեր ըն դիրիս, ձիքարնեն լիվին իս ու ըսկըսես ին օտիլի:

Բերդնն տըսնիս ին, հոր թթախու պունախամը մին մարդ ը պըրնած, ըսես ին.

Ան հու՛վ ա տեղը պըրանած:

Պատավը ըսես ի. — Ձիգ մատաղ, մին խեղճ դնրվիշ ի, իկալ ա ասալ՝ դնրիք իմ, մընահած ըմ չղլամը, մին քիշեր տեղ տոր ք՛՛ն գում, ուգուց գինեմ, իս ալ թուղ ըմ արալ: Միս մըտալ ա թթախը թն չէ, նըրննիլ պըրանալ ա տեղը, ք՛՛ն իկյալ: Հնորդի իրվնս ի խեղճը շետ վըստակած ը լն:

Տղերքի ըսես ին. — Նանի՛ ջան հաց, մաց տըվալ ըն օտի:

Պատավը ըսես ի. — Չէ՛, ձիգ դուրբան, ասալ ըմ՝ ճեշ բիրիմ կեր, ասալ ա՛ քոխցած չիմ:

— Դե վիրկացրո՛ւ, թուղ գու հաց օտի:

Պատավը գեցալ ա դնրվիշնն կանչալ, վիրկըցըրալ:

Տըղերքի ասալ ըն. — Ա՛յ տնաշեն, նն խան քոխցած-ծարավ պըրանած ըս ք՛՛ն իկյած, դե եք հաց օտիք:

Դնրվիշի գեցալ ա սուփրան դրաղեն նըստալ, սկսալ օտիլի: Ան տըղերքի դնրվիշնն մին ստաքան գինի ին տըվալ, դնրվիշի խըմալ ա, գոխը կիծացալ

ա, սրբաթխացալ ա, հետ ը դեռալ տրդերաց ասալ.— Զիզ մատաղ, տըսնիս իմ, հոր իրիքիտ ալ կտրիչ տրդաներ իք, խնդրես իմ ասիք, դուք հու՛վ ըք:

Տըղաները ըսես ին.— Դնրվիշ բարա, մեք իրիքիս ալ ախպերներ իք, աս ալ մեր նանին ա:

Դնրվիշի ըսես ի.— Շետ օքուտ: Զիր փեշակը հինչ ի:

Մոծ ախպերի ըսես ի.— Մեք իրիքիս ալ դաչաղ ըք:

Դնրվիշի ըսես ի.— Ղաչաղությունը փեշակ չի:

Մոծ ախպերի ըսես ի.— Իմ փեշակըս ան ի, հոր հինչքան բօցնուր հուրմ նի, իս առանց փննքանի բիցրանիլ իմ:

Մաջնակ ախպերի ըսես ի.— Իս ալ հինչքան հոր պերկ դուփուլ նի, ձիրքիս հոր դիրիմ վերան բենվիլ ի:

Փստեկ ախպերի ասալ ա.— Իս մին մարդու հոր մին ակնը տեսնիմ, հիշտեղ հոր տեսնիմ ննդնուր, ճընանչիլ իմ:

Դնրվիշի ըսես ի.— Զիզ մատաղ, ինձ ձիզ հինգեր չիք վիր առիլ:

Անդուք ըսես ին, հոր մեր հինգերը անպատճառ մետիլ մին փեշակ գիղի:

Դնրվիշի ըսես ի.— Իմ փեշակըս ալ նս ի՛ մին մարդու հոր տանին կախ տալու, հոր ձեխ բեղըս հնդնուրիմ, ննդնուր ազատիլ ին, հոր յաջ բեղըս հնդնուրիմ, կախ ըն նալ:

Տըղերքը ըսես ին.— Ան ալ փեշակ ա, քի վիրիք առիլ մեզ հինգեր: Դե գինեք քօն դուք, ուզուց գինալացկան ըք թաքավորի խննգնան կըտրեք:

Դնրվիշի ըսես ի.— Աղքան թալան հոր դուք բիրիս իք, հինչ իք ըրես:

Տղերքի ըսես ին.— Մեք հարուստներեն վիր իք ըռես, բիժինիս քասիրներուն:

Դնրվիշի ըսես ի.— Շետ օքուտ ըք ըրես, բիժինիս քասիրներուն, — դարվիշի ըսես ի, — շետ օքուտ ըք ըրես, համա մարդ սըպանի մեք:

Տըղերքի ըսես ին հոր, մարդ սպընես ին ան վախտը, հիք թլանվուղը ուրենց նրեհտ կոեվ ը պըռնըվես, խոշավ հոր խնդիս, չի տա, սըպընես ին, թըլընես:

Միուս օրը քըռտեղե վիր ըն նաս, չայ խըմես, հաց ըռես մին խոր դես-դեն շոռ նոսպըրընես, մինչև կեսքիշեր քօն նոս, կեսքիշերուն վիր ին նաս, նըստես ձիանքը, մին ձի ալ ննս դնրվիշին, զինված նստըցնես ձիուն ու քիշիս դիրի թաքավորի քաղաքը: Հոր հըսես ին քաղաքուն, ձիաներուց վեր ըն նոս, մին քօլգա տեղ ձիանցը կըպես, գինես հըսնես քաղաքու հուրմերուն: Թաքավորը տըսնիս ի, հոր մոծ տըղան արթեն հուրմուն գըլխուն ա, անտեղեն քննդիրի նարդիվանը կախ ը ննս, մին-մին բիցրինիս ին հուրմուն վերան, էտնե ննդդիվանը շոռ ննս հայաթուն յանը, վիր նոս, գինես դիրի թաքավորուն պալատը: Միս մին խոր հայաթավը էոեջ ին գինես, շները հըրձակվիս ին ննդուց վերան, դալմաղալ բիցրիցնես: Մին մոծ գամփո շոն ըսես ի. «Մոս ըրեցեք, հինչ իք նուր խըռնըվես, տըսնիս չիք, հոր մեր տարի նի նոս», շները տուս ըն ըրես:

Թաքավորը տըսնիս ի, հոր մաջնակ ախպերի ձիքի դիրալ ա խննգնուն տան դըրքուն դուփուլուն վերան, դուփուլը նըրանիլ բեցվալ ա: Մըտես ին, օմեն մինի մին խուրջին ուսկե լիցցիս, դնս ըն նոս, հայդա նոս ին ձիանքը հետ ըրես, խուրջինսնեց ցիքիս վերաններուն, նըստես, քիշիս նուրանց տոն: Դիրի լուսուն հը-

սես ին տոն, ձիանքը տընես ին թանվանն տըղըվըրիս, նոնս օթախը, լիվինվիս: Պատավ նանին սուփրան ցիքիս ի, փլավը դիրիս քիշտիներուն: Ըտես ին, խըմես, պըրանես քօն նոնս:

Քնիտեղե հոր վիր ին նանս, իրիսնեն լիվինիս, չայ խըմես պըրծընես, դարվիշի ըսես ի. — Տղերք ջան, իս մին խընթիրք օսիմ:

Ախպերնեն ըսես ին. — Ասա, դանրվիշ բաբա:

Դանրվիշի ըսես ի. — Ին ձիգ հենե խընթրես իմ, իս մին-մինակ դանրվիշ իմ, կնեկ չոնիմ, ըրախե չոնիմ, իմ պածիսիս հինչքան հոր նան իք, տըվեցեք, ինձ հեքիք ի, վիյ առիմ գինեմ ինձ հետա դինջ ապրիմ:

Տըղերքի ըսես ին. — Դանրվիշ բաբա, դու քու քեփտ, քու բիրածըտ վիր առքի, գինա:

Դանրվիշոն նանս ին մին ձի, խուրջինը ցիքիս վերանն հղե ցիքիս:

Թաքավորը հըսես ի պալատ, գորքերու գլխավորուն կընչիս կոշտը, ըսես. — Ան քիշեր սիհանթը տըսըրեկուսուն վիր իս առիլ հիգեր նակնը, նոն պալատուս կոշտը:

Քիշերը, սիհանթը տըսըրեկուսուն թաքավորը գորքը քիշիս ի դիրի ան դաչաղներու տոնը: Հոր հըսես ի տանը, դանրվանգանն թկես ի, դոնսը նոնս պատավը՝ նոն հո՞վ ըս:

Թաքավորը ըսես ի. — Նանի ջան, իս նան դանրվիշին իմ, տեղավըս անց ըմ լան նոնս, ասալ ըմ մին տղերանց տեսնիմ: Կանչեր գուն, մին տեսնիմ գինեմ:

Պատավը հոր գինես ի, դանրվանգանն բեց պահած, թաքավորը նըրանիմ մին հերոնը նակար կուխիս ի հայաթը, ըսես. — Միս հոր իրիքին ալ դոնս ըն նոն, դեռնիլ իք վերաններոն, պըռնեղ:

Շես մթեն քիշեր ի նիս: Մին ալ տըսնիս ի տըղերքը իկալ ըն, իրիքին ալ տակեն վարթեկավ: Միս վեր ըն նոնս հայաթ թան չե, նակնընեն վերան ին նանս, իրիքուն ալ պըռնես, ձիքարը քըմակներուն կըպես, բիրիս ցիքիս դուսաղ: Էրկու օր դուսաղամը պըրես ի, իրիք մինջի օրը բուրմիշ ի ըրես, հոր կախաղանը հագըր արին: Ձանոչին դոյուղ ը ըրես, խալխուն ասիլ իս, հոր ան հայտնի դաչաղներուն պըռնած ըն, մետիլ նանիւր կախ տան: Ան հոր խալխը լիսիս ի, հարուստեն շըլխընիս ին, հոր նոնոց հենե ջանընեն ըգաղվալ ա, քանիբեն տըխըվես ին, հոր յեկամուտը կըտըրվալ ա:

Քաղաքուն մեղանամը իրիք կախաղան ըն շինիս: Թաքավորը նըստես ի թախտուն, մեղանը դըրընգաս ի, ասուղ ցիքիլու տեղ չի նիս: Ղաչաղներուն բիրիս ին, թաքավորուն քիշտավը ոնրոն քըմակե տընես ին: Փիստեկ տըղան թաքավորուն հոր տըսնիս ի, նըրանիալ ճընընչիս ի, հոր նոն ոնրանց նըրեստըն ը լան թաքավորուն խանգանն կըտըրես տեղը:

Շես ը դըռնիս դիրի թաքավորուն թան. — Ա՛յ տըղա, ձեխ բեխըտ հոնորե Է...:

Թաքավորը տըսնիս ի, հոր ոնրեն ճընանչալ ա: Իրիքուն ալ տընես ին կախաղաններուն տակը, բիրցիրցընես աթոռներուն վերանն, քանդիրնեն ցիքիս վըզներուն: Միս խընդիս ին, հոր աթոռնեն հաքարներուն տակեն հանին, թաքավորը ձիքի վիրի պըտես, ալ աթոռնեն հընես չին:

Թաքավորը ըսես ի.—Անոց տընեցեք պալատ:

Հիբ հոր բիրիս ին պալատ, թաքավորը ըսես ի.—Անոց բիրիցեք իմ կոշտը:

Անոց հիբ հոր բիրիս ին թաքավորուն կոշտը, թաքավորը ըսես ի.—Ինձ ճընընչիս իք:

Փիստեկ տըղան ըսես ի.—Հա՛, դու մեզ նըրհետ գեցալ ըք թաքավորուն խննգնան կըտրալ:

Թաքավորը ըսես ի.—Լիսիցեք՝ ձիգ հինչ իմ ըլասկան, իս տըսնիս իմ, հոր իրիքիս ալ դոչչաղ տըղերք իք, հոր ինձ խոսկ տաք իմ պալատամըս հավատարիմ դուլլուղ արիք, իս ձիգ պատժի չիմ:

Ղաչաղնեն ըսեսին.—Խծակ ըք ննս:

Թաքավորը մոծ ախպորուն նըշանակես ի ուրան գորքերուն գլխավորը, մաջնակուն՝ խննգնանչի, փիստեկյուն՝ ուրեն թաքավորուօրիսի դաղավորը:

Աստորալ ալ դաչաղներուն վերչ ի ննս:

ԿԵՆԴԱՆԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐ

1. (34) ԱՇԿԻՆ ԼՅՈՒՍԸ

Մի պեցուր չինարու յրա մի արագիլի այնն ա ինում: Ըտեղ մի պառաված արագիլ արթեն հալան ընգյանձ, թևերը թոյննցյանձ, լինն նափնսը գոռով ա քինոնկյանն: Տըրա ճոտը տեսնում ա, վըեր մորը հալը լյննվ չի, ըշկերին կրակը հանգյում ա: Շատա մտածում, թա հինչ անի, վըեր մորը մահա ըզաղի: Մերն ալ օգում չի վըեր ճոտին չըրչարի: Լհա մի խուրմա լի օտի, դաստին ըշկերին լյուսը կկյն տեղը: Բայց մարը ճոտին հեռու տեղ թողում չի վըեր քյինա, ասում ա՝ խոխիս կլխին մի օյին կկյն, աշկա հեռու հարկավեր չի պաց թողած:

—Մամն, վախումիլ, թող թոնեմ:

—Չէ՛, չէ՛, բալաս, տյոն կուճի ես, անփորձ ես, ես ալ հալան ընգյանձ, հո՛վ կկյն քու հրայիթ: Քու պիրած խորմաթ թող մի օր ինձ գյանք տա, բա տրանա եղը. վըեչ մի այնն: Ես գյանքս անց եմ կցրալ, տյոն քու հոքսըդ քաշի:

Արագիլին ճոտը ալ կարում չի էթ խոսքերիթ տիմանա, մորն անա թաքուն տյոնս ա կյալիս երգինքին եշում, թևերը թափ տալիս, թոնում: Ասում ա՝ մերըս ինձ հարյուր տարվա գյանք ա բախշնն, թող ես ալ լիս մի օրվա գյանք բախշեմ իրան:

Սարեր, ծորեր, ծովեր ա անց կենում, հըսնում ա մի մեծ ծմակ: Տեսնում ա ըտեղ լյննվ խուրմա կա: Իսկույն երկու հատ պուք ա տալիս: Բյոնդանն ծմակը մըթնում ա, քամի յա պըցըննում. տյոն մի ասիլ, էթ ծմակիթ տերը քառսուն կըլխանի ընժղանհն յա:

Կյալիս ա ասում.—Տյու հո՛վ ես, վըեր սերտ ես ըրալ իմ ծմակում խուրմա պոկել:

—Մերըս ծանդը հիվանդ ա, խորմա յա հարկավեր, վրեր աշկերը տեսնա: Աշկերին իշերը ցմաքալ ա: Ասալ եմ՝ խորմա տանեմ, մի օր գյանքը էրգյանացնեմ:

Ածդանհան կյոխը տորուր ա տալիս.— Հանն մետս չի կյալիս, վրեր մի կենթանի կյա ըստեղ, մին ալ սաղ-սալամաթ քյինա: Դե գյիդա, վրեր վերչըթ եկալ ա: Համել քեզ բաց եմ թողալու, գյուդում եմ, վրեր մերը լյնվ պանն ա, ինձալ ա մեր պիրալ: Մինակ մի պայմանալ՝ աշկերիթ շիրան պիտի խմեմ:

Ածդանհան էթ ճոտին աշկին շիրան խմում ա, պանց թողում: Վեչ մթեն աշխարհը, վեչ աշկին ցավը, վեչ մի պանն ճոտին առաչը չի կարում թա պահի: Խորմեքը պենդ փոնում ա, թոնում բիդա մոր կոշտը: Շատ վրեր քյինում ա, բուրդան տեմ ա ինգյում մի քերծի: Եր ա կյալիս տափը, դինջանում: Քերծին տական մի կրյա յնն տյոն կյալիս:

Արագիլն ասում ա.— Տյոն հո՛վ ես:

— Ես կրիա եմ...

— Ինձ քյումագ ըրա թոնեմ, քինամ, մերըս մահի յերա յա:

Կրիան ծիծաղում ա.— Մերը հի՛նչ պյանն ա:

— Հի՛նչ ա, քեզ մեր չի պիրալ, մեծըցրալ:

— Ես մերը գյուդում չեմ հի՛նչ պյանն ն: Աշկ եմ պանցալ՝ ծվին քչեպն եմ տեսալ, ինքս եմ ինձ հետի սնունդ ճարալ, կոխս պահալ:

Կրյան իրեսը շոռա տամ, քինում:

Քրծին տական մի դուշ ա տյուս կյալիս, ասում.— Ինձ մերըս ա լյուս աշխարհ պիրալ, մեծըցրալ, էք, ես քեզ քյումագ անեմ, մի տեղ թոնենք:

Արագիլին ճոտը ուրխանում ա: Իրանք միտեղ թըռնում են, դոշը ճոտին պյուրում ա թողում իրանց չինարու պյունումը: Ճոտը խորմեքը տամ ա իրա մորը:

Մերը օտում ա, աշկերը իլրիհալի պանվում ա, ճոտին ասում ա.— Մի աշկերըթ պեց ըրա, եշեմ, քուշտանամ:

Ճոտը աշկերը պաց ա անում:

— Հո՛ր ա քու աշկերթ:

Ղուշը մեջ ա ընգյում, ասում ա.— Աշկերը երկու խորմի սետ փոխալ ա:

Մերը ճոտին խտտում ա, աշկերը քսում աշկերին, իրան աշկի լյուսը տամ ճոտին:

— Մամմ, էթ հի՛նչ ըրեցիր:

— Վեչինչ, ազի՛զ բալա, քու աշկիթ իշերը քեզ տվեցի: Քո աշկիթ շիրան խորմին մեչին էր: Իմ տունըս-տեղըս, էս ծառերըս, սարերս քեզ եմ տալիս: Մոր համար տրանա թանգ պյանն չկա: Եր կալ, ազի՛զ բալա ու ինձանա էրգյան սպրի...

2. (35) ՀԼԻՎԵՐՆ Ա ԼՊԱԶՏՐԱԿԸ

Մի հիլիվեր կնգանը նհետ ապրում էր քոլումը: Ընդեղ քյալամ ա լյնվ վա-
րում, խնձոր, մոշ, տանում ծախում, ուրանց հմար հաց շինում: Մի կյարունքան
օր հիլիվերը քինում ա վրեր քյալամը ճրի, տեսնում ա քյալամը կրծոտած: Հեղը
թխում ա հիլիվերին կըլխին. «Տեսնաս էս հո՞վա սենց ըրալ, տունըս քանդվեց: Վե-
չինչ, հալբաթ մի ծերքս կընգնի»: Հիլիվերը բոստանին մղակումը թալակ ա սար-
քում, վրեր կյողին փոնի: Քշերավը ծեքին էր ա կենում, տեսնում, մի մեծ լը-
պաստրակ ընգյած թալակին մեչը:

Հիլիվերը լպգտրակին ընջկներան փըռնում ա, մի լավ թափ տալիս, ասում
ա. — Ա՛յ ավագակ, տուվս ըլալ իմ քյալամսիս կրծոտում: Դե մհեկ կըլխիթ հենց
հըրսանիք սարքեմ, վրեր գյանքումթ տեսած չիլես:

Լպագտրակը ըսկսում ա լաց ըլիլը. — Պապի՛, այ պապի, ների ինձ, ալ անիլ
չեմ, այնց թող քինամ:

— Խե՛ն պիտի քեզ այնց թողնամ, քեզ կմորթեմ, մեսը կոտիք, մորթիթ ալ
կտանեմ կծախեմ:

Լպագտրակը լաց ա իլում, շատ ա դաչանք անում, բայց հիլիվերը մհալ չի
տիկում:

Հիլիվերը քինում ա կընգանը կոշտը, լպագտրակը նհաշա տալիս, ասում. — Ա՛յ
պատավ, մեր բոստանը փչցնողը էս շիլդիսն ա ըլալ, էս ավագակըս:

Լպագտրակը սկսեց լյնց ընիլը: Պատավը եշեց լպագտրակին, ընդա աղու
ըրտասունքը տեսավ, եղավ ասեց. — Էթքան վրեր վախում ես, խի՛ նում ես տում
խալխին բոստանը, հը՛...

Լպագտրակը ասումա. — Տատի՛, իմ մահաս վախում չեմ: Ես ճտեր ունեմ, ես
վրեր ըլեմ վեչ, ընդանք սոված կոտորվիլում եմ: Ընդաց մհար եմ լնց ըլիմ:

3. (36) ԱՐԱԳԻԼՆ ՈՒ ՍԱԳՐ

Մի անգամ Սագը ոռանձ, փքված պարծենում էր իր շրջապատողների մեջ,
ասելով. — Ո՞վ կա ինձնից ուժեղ. ծովում լողալ գիտեմ, ցամաքում՝ ման գալ, և
օդում թռչել:

Էդ ժամանակ ծառի բարձր կատարին թառած էր Արագիլը:

Երբ լսեց Սագի փքված խոսքերը, ցած իջավ և հարցրեց. — Լսի՛ր, Սագի՛ն
քոյրիկ, ասա՛, դու օդում արծվի պես թռչել գիտե՞ս:

— Ո՛չ, — պատասխանում է Սագը:

— Լավ, ջրում ձկան պես լողալ գիտե՞ս:

— Ո՛չ, — դարձյալ պատասխանում է Սագը:

— Ցամաքում Աղվեսի պես վազել գիտե՞ս:

— Ո՛չ, այդ էլ չգիտեմ:

— Ուրեմն էլ մի՛ պարծենա. ով շատ բաներ իմանալու ձգտի, ոչ մեկին էլ չի
տիրապետի, շատ բաներից քիչ իմացողը, ոչինչ չի իմանա, — ասում է Արագիլն
ու թևին տալիս, թռչում:

4. (37) ԱՅԳԵՊԱՆԸ, ԻՐ ՈՐԴԻՆ ՈՒ ՕՁԸ

Մի այգեպան այգում նստած ճաշում էր և հետն էլ կաթ խմում: Հանկարծ այգին ապրանք է մտնում և նա կաթով կիսատ բաժակը թողնում է ու գնում օտար անասունը դուրս անելու համար: Երբ վերադառնում է, տեսնում է մի սիրուն օձ գլուխը մոտակա կաշկառից երկարացրած՝ բաժակի կիսատ կաթը խմում է: Այգեպանն ուզում է օձին սպանի, բայց մեկ էլ համբերում է, որ օձը կաթը խմի հետո: Երբ օձը կաթը խմում է, մի ոսկի է գցում բաժակն ու իր կաշկառը քաշվում: Էս որ տեսնում է այգեպանը, շատ է զարմանում, և ամեն օր կաթ է դնում օձի բնի առաջ, օձը խմում է և մի ոսկի գցում բաժակը: Այսպիսով օձն ու այգեպանը սիրով բարեկամություն են անում և օձը, որպես տանու հեյվան, ազատ այգում ման է գալիս:

Այգեպանը շատ է հարստանում, բայց այդ գաղտնիքը չի հայտնում ոչ ոքի:

Մի օր էլ հիվանդանում է ու անկողին ընկնում: Նրա մինուճար տղան գալիս է, որ այգին ջրի, տեսնում է մի խումբ օձեր այգում արևի տակ տաքանում են: Մարդ տեսնելուց բոլոր օձերը փախչում են, իսկ այգեպանի բարեկամ օձը մնում է իր համար ման գալու: Տղան բահը քաշում է և օձի պոչը կտրում՝ իմանալով, թե օձը կսատկի: Աշխատանքից հոգնած պառկում է մի խնձորենու շվաքում ու քնում: Օձը գալիս է և թունավորում իր բարեկամ այգեպանի որդուն: Այգեպանը, երբ տեսնում է, որ որդին չեկավ, վեր է կենում ու մի կերպ գալիս այգին, տեսնում է տղան մեռած, իսկ իր բարեկամ օձը բնի մոտ՝ պոչի կտորը ընկած: Իսկույն ճանաչում է, որ դա իր օձի պոչն է: Արտասվելով տանում է և թաղում որդուն:

Անցնում է մի քանի օր: Այս մարդը որոշում է, որ գնա գտնի իր օձին: Գնում է, գնում և մի օր էլ մի օտար այգում մի կաշկառի մոտ գտնում է իր օձին: Օձը տիրոջն է ճանաչում, տերը՝ օձին:

Այգեպանն ուրախացած ասում է. — Եղբայր օձ, ինչու՞ չես գալիս մեր բարեկամությունը շարունակենք:

— Ինչպե՞ս շարունակենք, — պատասխանում է օձը, — քանի որ ես իմ պոչն եմ հիշելու կսկծամ, իսկ դու էլ քո մեռած որդուն ես հիշելու ու վշտանաս:

5. (38) ՖԵՐՄԱՆԱՎՈՐ ՈՒՂՏՆ ՈՒ ԱՂՔԱՏ ՊԱՌԱՎԸ

Շահի գորքերի մեջ գտնվող ուղտերից մեկը պատերազմի ժամանակ մեծ ծառայություններ է անում, ուստի պատերազմը հաջող ավարտելուց հետո Շահը ֆերմանով տալիս է ուղտին, որ նա անարգել կարող է մտնի ու արածի ամեն տեղ:

Մի օր այս ուղտը մտնում է մի այրի պառավի արտ ու արածում: Պառավը վազելվազ գալիս է, որ ուղտը դուրս անի, տեսնում է Շահի ֆերմանավոր ուղտն է, ճարը կտրված հետևը բաց է անում և սկսում ծափ տալ, որ ուղտը իր ծափ տալու ձենից հեռանա:

Ուղտը գլուխը բարձրացնում է և պառավին ասում. — Ո՛վ հիմար պառավ, ես թուր ու թվանքից չեմ վախեցել, հիմի դու քո հետույքդ բաց ես արել, ծափ ես տալիս, որ վախենամ:

6. (39) ԳԱՅԼԸ, ԱՂՎԵՍԸ ԵՎ ՈՒՂՏԸ

Մի ուղտ, աղվես և գայլ միասին ճանապարհ էին գնում: Ճամփին նրանք մի գաթա գտան: Մտածեցին, մտածեցին, թե ով ուտի, ով չուտի գաթան, որովհետև հագիվ մի մարդու բավարարեր: Մտածում են ու որոշում, թե ամեն ոք թող իր տարիքն ասի, ով ամենից մեծը կլինի, նա էլ կուտի:

Գայլն ասում է. — Ես որ ծնվել էի, դեռ աշխարհ չկար:

Աղվեսն ասում է. — Ես մի տղա ունեի, որն է աշխարհս շինել:

Այստեղ ուղտը տեսնում է, որ երկուսն էլ խորամանկություն են բանեցնում և գաթան ձեռքից գնալու է, բռնում է այն, վիզը վեր բարձրացնում և ուտելով ասում. — Իբր թե ուղտը երեխա է:

7. (40) ԷՇԸ, ՁԻՆ ԵՎ ԿՈՎԸ

Մի անգամ էշը, ձին և կովը վիճում են:

Ձին ասում է. — Ես եմ գովական ու պատվելի, մարդիկ ինձ բեռնում են, հեռու տեղեր են գնում և տիրոջս դժվար տեղերից ազատում եմ, ինձնով շատ-շատերն են ուրախանում ու պարծենում:

Կովն ասում է. — Իմ կաթը խմում են, յուղն ու պանիրն ուտում, միաս ուտում, կաշիս էլ հագնում, ես շատ-շատ մարդկանց եմ կերակրում:

Էշը խոսք չի գտնում ասելու: Ձին և կովը նախատելով նայում են նրա վրա, վերջը պայման կապում, որ գնան մի մարդու մոտ գանգատ անեն: Գնում է ձին գանգատ անում մի մարդու, այդ մարդը կոպիտ կերպով դուրս է քշում ձիուն: Գնում է կովը, այս մարդը նույն կարգով դուրս է անում և կովին, իսկ երբ գնում է էշը, սա մեծ հարգանքով ընդունում և ճանապարհում է էշին:

Էշը պարծենալով՝ գալիս է և մեծ-մեծ բրդել սկսում կովի և ձիու առաջ, ասելով. — Այն մարդն ինձ ընդունեց մեծ հարգանքով և պատվասիրությամբ:

— Դե ասա՛, նա էլ քեզ նման էշ է եղել, — միաբերան պատասխանում են ձին ու կովը:

8. (41) ԿԱՔԱՎԸ ԵՎ ԱՂՎԵՍԸ

Մի անգամ աղվեսը տեսնում է մի կաքավի, որ թառած քարին թևի տակն է կտցում, ասում է. — Կաքավ քույրիկ, էն օրը մեզ մոտ մեծ ժողով էր, բոլոր կենդանիներից էլ կային, բոլորը միաբերան ասացին, որ կաքավը շատ լավ շորորալ ու երգել գիտե, դե մին շորորա տեսնեմ՝ ճիշտ են ասում:

Կաքավը սկսեց շորորալ կանաչ խոտերի վրա: Այդ ժամանակ աղվեսը հափ արավ ու բռնեց կաքավին:

Կաքավն աղվեսի բերանից այսպես խոսեց. — Եղբայր աղվես, էն օրը մեր բոլոր թռչունների մոտ մեծ ժողով էր, բոլորը միաբերան ասացին, որ աղվեսը շատ աստվածապաշտ և աղոթասեր է, ճաշից առաջ նախ աղոթում է Աստծուն, որ իրեն ճաշ է տվել, որպես շնորհակալություն, հետո ուտում, մի աղոթիր տեսնեմ ճիշտ են ասում:

Աղվեսը բերանը բաց արավ, որ աղոթի, կաքավը թռավ:

Աղվեսը դառնացած վնգստաց ու կաղկանձելով ասաց.— Ախր ո՞վ ասաց՝ ուտելուց առաջ շնորհակալություն հայտնիր, նախ կեր, հետո աղոթիր կամ շնորհակալություն ասա:

9. (42) ՍԱՐԻՑ ԵԿՈՂ ԹԱՔԱՆ

Աշնանը, երբ քոչը ցածրանում էր, Թաքան, առաջ ընկած, հոտը բերում էր: Մեկը հարցնում է.— Թաքա՛ն ախպեր, ոչխարն ո՞ւմն է:

— Ոչխա՛մբը, իմն է՝ Թաքա բեկի՛նը,— հպարտ, պոզերը ցցած պատասխանում է Թաքան:

Մյուս գարուն, երբ հոտը նորից սար էր բարձրանում, լղարած, փորը տաշտակ դարձրած Թաքան գալիս էր հոտի հետևից հազիվհազ քայլելով:

Նույն մարդը հարցնում է.— Թաքա՛ն ախպեր, ոչխարը քանի՞ հազար է:

— Հե՛չ կարողանում եմ հետևից հասնեմ, որ ասեմ, թե քանի հազար է,— հազիվ կարողանում է պատասխանել Թաքան:

10. (43) ԱՂՎԵՍԸ՝ ԵԿԵՂԵՑԻ ՇԻՆՈՂ

Մի Աղվես մի ճամպով գնում էր, հանկարծ պատահում է մի Արջի, իսկույն մտնում է մի քարի տակ և սկսում հողը ոտքերովը տրորել:

Արջը, երբ հասնում է Աղվեսին ասում է.— Էդ ի՞նչ ես անում, անիրավ:

— Եկեղեցի եմ շինում, Ա՛րջ աղբեր,— պատասխանում է Աղվեսը,— մեղքերս շատ են, ասում եմ՝ մի եկեղեցի շինեմ, որ մի քիչ մեղքերիցս թեթևանամ:

— Հա՛ն, լավ ես անում, ախպեր, ես էլ շատ մեղք ունեմ, թող մի քիչ էլ ես շինեմ, բալքի մեղքերս թեթևանան:

Աղվեսը դուրս է գալիս և Արջն է սկսում քարի տակը եռանդով փորել: Երբ շատ փորում է և մարմնի կեսը մտնում է քարի տակը, քարն ընկնում է Արջի մեջքին:

Աղվեսը ծիծաղելով նայում է Արջի հետույքին, որը գնում գալիս է և ասում.— Եկեղեցի շինողի հետույքին նայեք:

11. (44) ԱՄԵՆԱՌԻԺԵՂԸ

Մեհետ լպագտրակը սառնին վերավը քինում ա, վենը ընգյում ա սառնին դաթը, վեննը փիս ցավում ա:

Լպագտրակը տեղան էր ա կենում, հրցնում.— Ա՛յ սառնը, տրու վրեր թենց վեննիս հուփ ես տվալ, մին ասի տեսնամ՝ աշխարքիս ամենաուժեղը տո՞ւվ նա:

Սառնը ասում ա.— Ես եմ:

Լպագտրակը վազ ա տամ արևին կոշտը, հրցնում.— Արև, արև, ասի տեսնամ՝ աշխարքիս ամենաուժեղը տո՞ւվ նա:

Արևն ասում ա.— Ամենաուժեղը ես եմ:

Լպագտրակը մտածում ա, նորից հրցնում.— Բա վրեր աշխարքիս ամենաու-
ժեղը տո՞ւվ ես, խի՞ յես թխսյերը առաչքթ կտրում, ուրեմն թոխսյը քզանա ուժեղ ա:
Լպագտրակը վագ տալավ քինում ա թոխսային կոշտը, ասում.— Ա՛յ թոխսյ,
ասի տեսնամ՝ աշխարքիս ամենաուժեղը տո՞ւվ է՞ս:

— Հա՛, ամենաուժեղը ես եմ:

Լպագտրակը մտածում ա, մինալ ասում.— Բա վրեր ամենաուժեղը տո՞ւվ
ես, խե՛ յես քամուն ըռաչին փախնում, կորչում: Ուրեմն քամին քեզանա ուժեղ ա:

Լպագտրակը վագ տալավ քինում ա քամուն կոշտը, ասում.— Ա՛յ քամի,
ամենաուժեղը տո՞ւվ է՞ս:

— Թե՛նց ա, վրեր կա, ամենաուժեղը ես եմ:

Լպագտրակը մտածում ա, մինալ ասում.— Տի՛ւ վրեր ամենուժեղն ըլեյիր, է՛ս
պնցնոր սարերը քարուքանդ կանեիր: Ուեմն ամենաուժեղը սարն ա:

Լպագտրակը վագ ա տամ սարին կոշտը, հրցնում.— Հե՛յ, պեցուր սար, ասի
տեսնամ՝ ըշխարքիս ամենաուժեղը տո՞ւվ է՞ս:

— Հա՛, ես եմ, որ կամ:

Լպագտրակը մտածում ա, մինալ ասում.— Թա՛ վրեր ամենաուժեղը տո՞ւ
ըլեյիր, մոկունը ըշխարքիս ամենաուժեղն ա:

Լպագտրակը վագ տալավ քինում ա մոկունին կոշտը, հրցնում.— Ա՛յ մո-
կուն, ասի տեսնամ՝ ըշխարքիս ամենաուժեղը տո՞ւվ է՞ս:

— Ես եմ, հի՛նչ ես օգում:

Լպագտրակը մտածում ա, եղավ ասում.— Թա՛ վրեր ամենաուժեղը տո՞ւ
ըլեյիր, է՛ս վախտը կատվան պիտի փախիր վեչ, ուրեմն ըշխարքիս ամենաուժեղը
կատուն ա:

Լպագտրակը վագ ա տամ կատվին կոշտը, հրցնում.— Ա՛յ կատու, ասի
տեսնամ՝ ըշխարքիս ամենաուժեղը տո՞ւվ է՞ս:

— Ես եմ, հի՛նչ ես օգում:

Լպագտրակը մտածում ա, եղավ ասում.— Բա վրեր ամենաուժեղը տո՞ւվ ես,
խի՞ յես շո՛ն տնալիս ծակերը նումում: Ուրեմն շո՛նը ըշխարքիս ամենաուժեղն ա:

Լպագտրակը վագ տալավ քինում ա շո՛նին կոշտը, հրցնում.— Ա՛յ շո՛ն, ասի
տեսնամ՝ ըշխարքիս ամենաուժեղը տո՞ւվ է՞ս:

— Ես եմ, ես, սրտինթ ասի:

Լպագտրակը մտածում ա, եղավ ասում.— Բա վրեր ամենաուժեղը տո՞ւվ ես,
խի՞ յես մարթին անա սրտաճաք տննում: Ուրեմն ամենաուժեղը մարթն ա:

Լպագտրակը վագ ա տամ մարթին կոշտը, հրցնում.— Ա՛յ մարթ, ասի տես-
նամ՝ ըշխարքիս ամենաուժեղը տո՞ւվ է՞ս:

— Ես եմ, տա հի՛նչի համար ես հրցնում:

Լպագտրակը մտածում ա, եղավ ասում.— Դե՛ վրեր տյուվ ես, եք ի՛նձ հախ-
տի:

Մարթը հրացանը յորա ունում, լպգտրակի վրա կրակում: Վախից լպգտրա-
կի պռոշը ճաքում ա:

Լպագտրակը լաց նիլավ ասում ա.— Իսկապես, վրեր ըշխարքիս ամենաու-
ժեղը տո՞ւվ ես, ալ կրակես վեչ:

12. (45) ՉՈՒՄՆԵՐ Ա ԱՌՅՈՒԾԻՆ ՃՈՏԸ

Բոտա կետի դրաղին քրծեր շատ կան: Լեռների կլխին առյուծը ճոտին նհետ ապրում ա: Տըրանք տես-տեն ուտիլի պաննի ման են կյալիս, համալ վեչ մի պանն չեն ճարում: Բիզարած կյալիս են քրրծին նստում: Ճոտը քերծը եշում ա, տեսնում, ներքին չիմանումը մի բոլուք վեխճար կան:

Ճոտն ասում ա. — Մամմ, տո՛ւ սոված չե՛ս:

— Բա հինչ եմ, — պատասխանում ա մերը:

— Բա հո՛ւմ ենք եշում, հենն ներքին չիմանումը մի բոլուք վեխսար կա, քիսանք քեֆ անենք:

— Բա չոբանը:

— Չոբանը մեզ հինչ պիտի անի, ինքը մի կուճի մարթ, մուք ալ՝ առյուծ:

— Է, ասում ես էլի...

— Դո՛ւզ չեմ ասո՛ւմ:

— Իհարկե դո՛ւզ չես ասում, տո՛ւ մարթին խելքը հաշվի չես առնում:

— Մամմ, ընդ ա խելքը հինչ պիտի անի մեր ուժի կողքին: Ես մինակ ընդ ա կհախթեմ, վեխճարնին թաննուզ պիրեմ:

— Տանտակ-մանտակ պաներ մի ասի, տեղըթ նստի, սուս ըրա, թող քուն իլեմ:

Առյուծը քընավ ա հընցնում, ճոտը կամաց-կամաց կողքան քինում ա, քշանում ա վեխճարին բելուկին կոշտը: Չոբանը տյուս ա կյալիս, տրա առաչը:

— Էս ս՛ մարթը, վըեր մաման ասում ա խելունք ա:

Առյուծի ճոտը օգում ա թա թոնի ընդ ա պըկան կենա, պատառ-պատառ անի:

Չոբանը ծիծղիլավ ասում ա. — Պարի ես եկալ, այ՛ իմ քախծը պարիկամ, եկ, քանի վեխճար օգում ես, քեզ տամ, տար:

Առյուծին ճոտը տեսնում ա, վըեր չոբանը բարի մարթ ա, պատառ-պատառ անիլը մըտան թըրըցնում ա. «Գո՛ւդո՛ւմ չեմ, թն խեյ ա մաման մարթի անա էսքան վախում, շատ լն՛վ, դոնաղասեր մարթ ա: Հինչքան վեխճար օզեմ, տալիս ա»: Տա չոբանին նհետ քինում ա բիդա վեխճարի բելուկը:

Մինալ բո՛ւրդան առյուծի ճոտը ասում ա. — Վեննս թալակի մեչ ա ինգյալ:

Մարթն ասում ա. — Վեչ մի պանն, հալա առաչ քինա:

Մեհետ ալ վըեր վենը փոխում ա, չոբա ոնավըն ընգյում ա թալակին մեչը:

— Վայ, վ՛այ... վայ, — բացականչում ա առյուծին ճոտը:

— Հինչ ա պտահալ, պարիկամ:

— Հինչ վըեր մի պանն թաթերս փըռնալ ա, պաց չի թողում, եկ ինճ ըզադի:

— Աշկիս վըրն, — պատասխանում ա չոբանը ու սկսում մհակավը տուր թե կտաս գագանի կողերին, կլխին, մեշկին:

— Անջուկներիս թխի, անջուկներիս:

— Իսն՛ անջուկներիդ թխեմ:

— Մորըս խորուրթը չլսելու համար...

— Հինչ խորուրթ էր տվալ:

— Խորուրթ էր տվալ, վըեր մարթը ո՛ւրան խելքավն ա արար աշխարին տրոթուն անում:

13. (46) ԱՄԱՆԱՌԻԺԵՂԸ

Մեհետ աղվեսը օգում ա, թա ծուկուն փոնի, սառնը ըռըջի վենսան փոնում ա: Աղվեսն ասում ա. — Ա՛յ սառնը, էթ հինչքան ուժեղ ես:

Սառնը ասում ա. — Չէ՛, թոռը ինձանա ուժեղ ա, հունց վըեր թոռ ա կյալիս, ես հալվում եմ:

Թոռը ասում ա. — Չէ՛, վեղը ինձանա ուժեղ ա, իմ ճուրղս քաշում ա տանում:

Վեղն ասում ա. — Ծմակն ինձանա ուժեղ ա, ուրան տակոին խրում ա ջանիս մեչը:

Ծմակն ասումա. — Իմ ուժս հի՛նչ ա, կրակն ինձանա ուժեղ ա, իսկույն ինձ կերի:

Կրակն ասում ա. — Չէ՛, քամին ինձանա ուժեղ ա, ինձ իսկույն կինգցնի:

Քամին ասում ա. — Դի՛ուզ ա, ես կրակն ալ կինգցնեմ, ծառն ալ պարան կտամ, համ ալ խոտը ինձ տըմննում ա, է՛ն վախտը խոտը ինձանա ուժեղ ա:

Խոտն ասում ա. — Ինձ հի՛նչ ուժ ունեմ, վեխճարը ինձանա ուժեղ ա, կարող ա մի թռպեում ինձ օտի:

Վեխճարն ասում ա. — Չէ՛, լավ չեք գյուղում, ամանաուժեղը կելն ա:

Կելը վըեր լում ա, ասում ա. — Չէ՛, ամանաուժեղը մարթն ա: Նա կարող ա աղվեսին ալ, սառնին ալ, թոռին ալ, վեղին ալ, ծմակին ալ, կրակին ալ, քամուն ալ, խոտին ալ, վեխճարին ալ, ինձ ալ հախտի:

Ըստեղ հիշկանուքն ալ դայիլ են կենում, վըեր ամանաուժեղը մարթն ա:

14. (47) ԱՂՔԱՏՆ ՈՒ ԱՐՁԸ

Լինում է, չի լինում, մի աղքատ մարդ է լինում: Էս մարդը մի սեյրակ արտ է ունենում. ամեն օր գնում է, հնձում, հնձում, չի վերջացնում:

Մի իրիկուն էլ կնկանն ասում է. — Ա՛յ կնիկ, մի մթել տուր, գնամ արտի մոտ քնեմ, գնալ գալու փոխարեն, բալքի մի բան էլ ավել հնձեմ արտը, շուտ պոժընեմ:

Կինը մթել է տալիս, մարդը վերցնում է, գնում: Ճամպին, աչքը բարին տեսնի, պատահում է մի արջի: Էս մարդը տեսնում է, որ արջը մտադիր է իրեն ուտի, քաղցր լեզվով կանչում է. — Բարի իրիկուն, անջ ախպեր, ու՛ր ես գնում:

— Ման եմ գալի, — պատասխանում է արջը:

— Ա՛րջ ախպեր, — էս գիշեր արտումս մենակ եմ, կգամ մի քիչ գրից անենք:

— Ինչու՞ չէ, կգամ, — պատասխանում է արջը և մտածում, որ գիշերս լավ ճաշ ունի և գնում է:

Էս մարդու սիրտը ահ է ընկնում: Երբ արջն իրենից հեռանում է, վագում է գյուղ:

Կինը հարցնում է. — Ա՛յ մարդ, բա ինչո՞ւ եկար:

Մարդը նստում է շենքի գերանին, շունչը հետ է բերում ու պատմում գլխին եկածը՝ էսպես արջից փախա:

— Ա՛յ մարդ, — խոսում է կինը, որ էդպես է, էդ արջը առավոտը գալու է՝ քեզ վրա խիստ բարկացած, որ գա, կասես՝ անջ ախպեր, թագավորի մարդիկ իրի-

կունը եկել էին և քեզ էին ման գալիս, որ սպանեն: Ինձնից հարցրին, ասի՝ չեմ տեսել, վախեցա արտում մնամ, դու գաս և քեզ բռնեն ու տանեն: Հետո էլ մի ջվալ վեր առ հետդ, որ հասնես էստեղ, ասա՝ հիմի էլ թագավորի մարդիկը գալիս են, դիր ջվալը, մնացածը դու գիտես:

Էսպես կինը հալում, լցնում է մարդու գլուխը, ջվալը դռան տակը դնում ու ճամպում արտը:

Մարդն էլ արտը, արջն էլ արտը, բարկանում, թքոտում է արջը, թե ինչու ինձ խաբել ես: Էս մարդն էլ կնկա ասածները մեկ-մեկ ասում է: Էս որ լսում է, արջի սիրտը դող է ընկնում, աղաչում է մարդուն, թե մի բան արա:

—Արի մտիր ջվալս, ես բերանը պինդ փակեմ, ոչ ոք չի իմանա ինչ կա:

Արջը մտնում է ջվալը, էս մարդը բերանը փակում է, մի փետ վերցնում, էսքան տալիս, որ արջին սպանում է: Ջվալը բաց է անում, արջի մորթին հանում, ճրագուն լցնում մորթու մեջ, շալակն առնում, ուրախ-ուրախ գալիս տուն:

15. (48) ՎՌԱԶ ԿՈՌԾԻ ՎԵՐՁԸ ԷՍ Ա

Առչն ու աղվեսը հրնգերացան, մին օրավար հող վեկալան, որ ինչ ա ուրանց էլ արտ ինի, վար ու ցանքս ինի: Ամսան ինչը տեղը-տեղին էր. սերմնացու էլ ճարան, արտն էլ վարեցին, սերմը հողը քցեցին: Լնվ էր, կնրունքն էլ անձրևային էր, արտը փոթամիջ իլավ, պըրցրացավ, տնոնվ մարթաբոյ:

Եկավ հնձիլի վախտի: Արչը թա՝ աղվեն ախպեր, քինանք արտը հրնձենք, աղվեսն էլ թա՝ հալա վախտը չի, հալա խակ ա: Վերչը առչը համոզեց աղվեսին, քինանցին, կըպան վնրի տակիցը, խելնք հրնձեցին, համա որ շոքը շատ նեղավ, առչ ախպես տառավ թա. — Կուճի՛ ախպեր, շոք ա, տու լղար-մըղար էս, համ էլ ոննաթիթես, կուլեն վե կալ վագ տու ճըրի, ես համ քու տեղակ, համ էլ իմ տեղակ կըհնձեմ, մեննկ վոագ քինն, վոագ եկ:

Քուն ինչ հուզեր, աշկի լիս: Աղվեսը կուլեն առավ, քինանց: Հըսավ նվապոյին, վրն ընգավ, մին դոյընջան ճոյր խմեց, թեք ընգավ՝ մին քիչ դինջանա, քունը տարավ:

Օրը չեշտ տնոնվ, աղվեսը կար ոչ, եկավ քսօրահացի վախտը, աղվեսը կար ոչ: Առչը հան սոված էր, հան ծարավ: Նստավ մին պատառ հաց կերավ, համա ծարավ էր, թիքեն կոլ չէր քինըմ: Ճարը կըտրված, աշկը աղվեսի ճրնապին, էլի ըսկսեց հրնձիլը: Վերչը աղվեսը իրևաց:

Առչը թընթորաց. — Ա՛ տնաշեն, բա քեզ ասեցի ոչ՝ վոագ քինա, վոագ եկ, ախըր ծարավ սատկեցի է, կոնե միի մի քիչ թնյդի եկ:

Աղվեսը ուզավ անդըմնին թայդի քըցի, բոյոյնըմիջ իլավ, կուլեն վե ընգավ կոտըրվեց:

— Վնյ, քու վիզը կոտրվեր, հա՛, — կոնանց արչը:

Աղվեսն էլ թա. — Ա՛րչ ախպեր, ես ինչ անեմ, հարիր անգամ աս ել եմ՝ վոագիլ մի, վոագ կոռծի ախըրն էս ա...

ԱՌԱԿՆԵՐ

1. (49) ՈՒՂՏՆ ՈՒ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԸ

Մի ուղտ դաշտում արածում էր կարճ խոտ, այնինչ նրանից քիչ հեռու փոված էր թարմ ու երկար խոտ:

Մի ճամպորդ տեսավ այս ու հարցրեց.— Այ ո՛ղտ, էն կողմին երկար ու լավ խոտ կա, ինչո՞ւ էն թողած էտ կարճ ու կոխտովածն էս արածում:

Ուղտը գլուխը բարձրացրեց և պատասխանեց.— Ո՛վ մարդ, այժմ իմ վիզը սրան է հասնում, ես սա եմ արածում, երկարին դեռ չի հասնում, երբ որ հասնի, նա կարածեմ:

2. (50) ՈՒՂՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Մի մարդ, որ կյանքում ուղտ չէր տեսել, մի անգամ պատահեց մի ծեր ուղտի: Նայեց-նայեց, հիացավ ու շատ զարմացավ, ապա դառնալով նրան ասաց.— Ո՛վ ուղտ, ինչու վիզդ այդքան ծուռ է:

Ուղտը մի դժկամ հայացք ձգեց մարդուն և պատասխանեց.— Միամի՛տ մարդ, որտեղս է ուղիդ, որ վիզս ծուռ չլինի:

3. (51) ՈՒՂՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Մի մարդ տեսնելով ուղտի մարմնի անախորժ ծամածռությունը՝ կհարցնի.— Ո՛վ ուղտ, ինչու՞ է քո մարմինն այդքան անհավասար, այդքան կոտրտված ու ծուռումուռ:

— Որովհետև ծնվելիս բարձր տեղից եմ վայր ընկնում և կոտրատվում,— կպատասխանի ուղտը:

4. (52) ԿԱԾՔԱՐԸ

Մին մարթ կածքարեն տնագ ա անում, ասում ա.— Մըթոմ հու՛ր ես հարկավեր, մաչդ կրակավ լիզը, կարում չես թա քիշերը լուս տաս: Ըղըքարեն մընչանք էլ չկաս, սաղ օրը փլըստրատե յա տամ:

Կծաքարն ասում ա.— Ես մեղավեր չեմ: Ինձ հուվա միհալ քըցում: Հուվա՛մ ինձ ծերքը յօր օնում, վեր լյուս տամ:

Մարթն ասում ա.— Պա մըհենգ հի՛նչ անինք:

Կծաքարն ասում ա.— Ինձ շըտըրշոտի ըրեք, վեր մաչիս կրակը հանգի վեչ:

Մարթը մըտքեն դոնն ա ընգնում, ասում ա.— Դե ասե էն մեր Տաթևին տերտերը դյուզ ա անում, վեր ասում ա. «մարթիս մաչին ըստծու կրակ կա, տուրուր բղիս տալ, վեր հանգի վուչ»:

Էս առակս հինչ ա նշանց տամ, վեր ըստուծու ստեղծած աման ինսան ուրան մաչին կայծ օնե: Մարթ կա էտ կայծը կրակ ա տառնում, մարթ կա հանգում ա պրծնում: Էտ էլ բախտի պան ա:

5. (53) ԹԱՄԲԱԼ ՈՒ ՂՈՉԱՂ ԿՆԱՆԵՔԸ

Էրկու վերսկան հրնգեր ծմակավը քյունում են վերսի: Վեր ծրավում են, հը-լըհարցում են անում, քյունում են դըբա ախպուրը, էրկու ախճիզ ա ջիում ըխպ-րին կըլխեն: Էտ ըխճըկերքըտ աման մընը մըն ըմանում մըծնըփրթոշ են օտում: Վըրերսկաններան մընը ասում ա.

— Բալան կըծեն, մըն կուտուր ճուր տվեք խմենք:

Ըխճըկորցան մընը եխտուտ մըծնըթաթախ ամանը ճրավ լցնում ա, տալիս ա վըրերսկաններին: Էն մընն էլ ամանը մըն քանի հետ լվանում ա, ճրավ լցնում, նոր տամ էդ մարթին:

Վըրերսկաններան մընը ամանը թամուզ լվընողեն ասում ա.

— Տու անիս, տու օտիս:

Ամնա էն յեխտուտ ամանավ ճյուր տվողեն ասում ա. — Հու վեր անե՛ տու օնիս:

Վեր պատառ քյունում են հրնգերը հնգերին հըրցընում ա, թա խե տի ապից:

Ստա էլ պաղասխանում ա. — Էն թամուզ, դոչաղ կընեկը հունց էլ վեր ինի ուրան կոխը պրեկու ա, էն մընը թամբալ ա, անփեշ, ըտրա հետի տի ըսեցի, վեր կարի կոխը պահի:

6. (54) ՎԵՐՉԸ ԸՆԻ ՊԱՐԻ

Մըն մարթ հանդումը վար ընեիս ա ինում: Գափրիել հլիշտրակը մուտանում ա, թա. — Աման մարթ յա էս կլխան ա ինում բախտավեր, յա՛ էն: Տու վերն ես օգում:

Էս մարթըս ասում ա, ես քե մատաղ, մըն սպասե, քինամ մեր կնգանը հըրց-նեմ, տեսնամ հինչ ա ասում:

Կնեկն էլ, վեր սկանում ա, ասում ա. — Այ մարդ, պել նա, կիժ նա, նաղդը թո-դած, նիայաին հետան չենք ընգնելու: Հու մեռած, հու՛ սաղ, քինա էտ հլիշտրա-կին ասա, հինչ տալի յես՝ մըհենգ տո:

Էս մարթըս առոք-փառոք ապրում ա, վեշ մին պանի կարոտ չի քաշում: Խորցը փըսակում ա, տներ շինում տինում մեջին: Ամնա վեր ինքն ու ուրան կնեկը մըծա-նում են, ժառանգնեն ուրանց տըրոթուն չեն անում, հուգսուրնեն քաշում չեն: Օրե-րան մըն օր մըրթըկնեգ ծանդը հիվընդանում են, մընը ինում չի, վեր պոռշներին ճյուր տինի: Մարթը տնքամ ա կնգանը տամ, կնեգը տնքամ ա, մարթին տամ: Եր-կուսավ լաց են ինում, թա էս հինչ դալլաթ ըրեցին, վեր բախտը էս կլխան ուզեցին:

Առակս հինչա սուվըրցընում, վեր մարդ ջահիլ վախտը կըկարե տըժրոթուն-ներին տինանա, չունքի ջահիլ վախտը ջանը պենդ ա, ամնա մեծ վախտը տիժեր ա: Մարդը պետք ա մըծոց բախտավեր ինի, հանցու վերջը պարի ինի:

7. (55) ՀԼԻՎԵՐԸ

Մին կընեգ աման օր մարթին նըհետ կըռեվ ա անում, ասում ա. — Քու հար քեթը կոխում ա աման տեղ, տեղի-անտեղի խոսում ա, ինձ կըզնըվցընում ա, յա տանան տուս քցի, յա տար քցի կյումը, յա թա չե քեզ կնգոթուն չեմ ընելու, տյուս եմ կյալու, քինական եմ իմ հարանց տոնը:

Էս խեղճ մարթը գյուղում չի թա կյոխը վեր մըն քարին տա:

Ուրուգյունը տղան հորը տանում ա քցում կյումը: Ասում ա ապեր սաս չանես, վեշ մըն պանում խառնվես վեչ, թա չէ քեզ տաղատ էլ էն տյուս քըցելու:

Օրը մթնումա, ամնա էշը հանդան տոն չի կյամ: Էս հարը տանջվում ա, օգում ա թա կանչի, վախում ա ուրան կյուման էլ տյուս անեն: Սկանում ա, վեր մըրթըկնեգ ասում են, խոսում, ծիծաղում: Էս հարը, ճարը կտրած, սկսում ա էշի մնան գոռալ: Տղան սկանում ա հոր գոռոցը, կլոխ ա ինգնում, վեր ուրանց էշը կորալ ա:

Հալբաթ ըտրա մհարըն ասալ.—Վեր ջահիլնեն մեծին լսեն, վընդըրնին քարին նի չի կյալ:

8. (56) ՆՐԱՆՑ ՇԱՆԻՆ ՕՁՈՒՄ ՉԸՄ

Մօլլա-Մանրանդինը (Նասրեդինը) օգում ա կյետաՎն անց կենա, կարում չի: Շատ ժողովուրթ ըն իննում անց կենալիս, մօլլան ասում ա՝ ամնագյա մին շնհի տվեք, ծըեգ լօխճին անցկըցնեն: Տրանք թա՝ լնվ, վըեր անց կըցնես կյետին էն դօլը, լօխ ամնագյա մին շահի (հինգ կոպեկ) կըտանք: Անց կենալի հետի լօխ կոտնըփոնօկ ըրած ըն իննում, մօլլան ինգյնում ա տրանց մեջը, կոտնըրնեքան փոնում, նրանց սուրաՎն ինքյն էլ օգում անց կենա: Վըեր հսնում են կյետին վարար տըեղը, մին քանի հօքու կյետը քշում ա: Ժողովուրթն ասում ըն մօլլա քշից, կյետը քշից տարալ: Մօլլան թե՝ հունց անեն, քշում ա քշի, նրանց շնհին օգում չըմ:

9. (57) ԻՄ ԿՆԳԱՆԱՍ ԼԱՎԸ ԿԱ ՎԵՉ

Մին մարթու կնեցյ շատ լնչնն ա ինում: Մարթը մին օր ասում ա՝ քյինիլու յեմ աշխարքս շոռ կյամ, տըեսնամ իմ կնգանաս լնչնն կնեկ կմ, թե չէ: Քյինում ա շատ տըեղեր շոռ կյամ, մին հեռու շենում դօնաղ ինգյում: Էքյսը վըեր յեր ա կենում, թե հղե ինի քյինի, հըլյաթան յեշում ա, տըեսնում էտ տանը կնեգը մարթին իրեսնըյեր իլնվ, կովալ-դըվալ դարկեց գործի, ներքե ութաղան սիրականը տյուս կալալ, պիցըրցրալ տիյեր: Էտ մարթը վըեր տա տըեսնում ա, ասում ա՝ էլլա փառք իմ կնգանս, նրանա լնվը կա վեչ:

10. (58) ԻՆՉՊԵՆ ԷՐ ԾԱՂԿԱՆՈՑԸ

Մի թագավոր վեգիրին ուղարկում է երկիրը շրջելու, իմանալու համար, թե ինչ կա-չկա իր երկրում: Վեգիրն անցնում է բոլոր կողմերը, վերադառնում պալատ: Երբ թագավորը հարցնում է թե ինչ կա չկա, վեգիրն ասում է ամեն ինչ լալ է, դրախտ է ամբողջ երկիրը: Թագավորը վեգիրին ծաղկանցում փակում է ու մի օր սոված պահում: Օրը մթնելուց հետո թագավորը վեգիրին հարցնում է.—Ինչպես էր ծաղկանցը:

Վեգիրն ասում է.

—Ծաղկանցը ճրն է, դժոխք էր:

Երկրորդ օրը թագավորը վեգիրին լալ կերցընում է, նորից ծաղկանցում

պահում, էլի հարցնում, թե ինչպես էր ծաղկանոցը, վեզիրն ասում է՝ իսկական դրախտ էր: Թագավորը հարցնում է, թե էդ ինչպես է, որ երեկ դժոխք էր, էսօր՝ դրախտ:

Վեզիրն ասում է. — Էսօր ծաղիկների հետ էի կովում, երեկ՝ աղիքների:

11. (59) ԿՆԵԳՅՍ ԲԱՐՈՒԹ Ա

Մին կնեգյ էգանա մարթին նհետ կրոեվ ա տամ, ասում ա ինձ տար իմ հերանց տոն: Մարթը ասում ա, հանդը վըրելի վախտըն ա, հու՛վ ա իմ քյունագըս, հուվա հետասա հաց պիրելու:

Կնեգը, թա. — Տանում ես տար, տանում չես, ես ըռավետը յեր եմ կենալու նոփըրներեն նհետ հղե ինիմ: Էս մարդը ճարը կտրած, պան ու կործ թողած, էքայը օրը կնգանը յօր ա օնում, ճընսապա ընգնում: Մայիս օր ա ինում, կյետերը վըրարած: Հըղեցը անց ա կենում մին մեծ կյետի մեջավ: Էս մարթը կնգանը ասում ա, վեր լյավ կինի ետ տառնան կյան տոն: Կնեգը սկսում ա ղըլմըղալ անելը, թա ես ետ տառնողը չեմ:

Ճյուրը նի մըննելը բաստ, կյետը էս կողքը հաստ, ուրան ըսածի կնգանը քշում ա, տանում: Մարթը եշում ա տեսնում, վեր նոփըրներեն կյետնըվըեր քյինիլայավ շոռ են կյամ, վըեր կնգանը քթենան, ասում ա՝ կյետնը յեր քյինսացիքյ, կյետնը յեր քյինսացիքյ: Նոփըրներեն ասում ըն հունց կարօղ ա կյետը կլխը յեր քշի: Մարթն ասում ա՝ իմ կնգանս կըքշի, նա բարութ ա:

12. (60) ԱՂՎԵՄՆ ՈՒ ՈՐՑԱԿԸ

Մին անքամ աղվետը մին որցակ ճանգեց հու փախավ: Ով տեսավ՝ հարայ տվավ:

— Աճն, հըսեք, հեյ, աղվետը մուքելենց որցակը տարավ:

— Աղա՛ աղվես, — ասավ որցակը, — տո՛ւ խի՛ չես ջուղար տալիս: Ասա՛ ախմախնի, ծեր ի՛նչ կոռճն ա:

Աղվեսն ուզեց պերանը պնց անի, որցակը տուս թռավ հո պու՛կ...

Վանյ-վանյ, — ասավ աղվետը, — լնմվն էն էր, առանց հնքո՛ւ մնի, քանց սըհենց, օրը ցիրեկով խախկ ու խայտատակ ինի:

Տենց էտ սհաթին միսը դնիներն վրա պերավ հու աղվեսի երգեն հարուն տակոիկիցը կտրավ:

Լըղաճաք իլած աղվետը ծըլկիլով ասավ. — Էս ինչ անհասկ ժողովուրթի ռաստ եկա, ես հնննք արամ, ըստանք դիգաննկ գիղանցին:

13. (61) ԿԵԼԻ ԱՇԿԻՑԸ ՍԸՎՈՐԱ

Ասլանը, կելն ու աղվետը հընգերանըմ են, մին ռխճար են ճարըմ, տալիս կելին, որ պըժմնի իրեքի մեջ: Անխելք հեյվանն էլ չիմ եղալի թիքեքը ճուլըմ ա նոտն մհար, մնացածը տամ ա հընգերոնցը:

Ասլանը էս որ տենըմ ա, մին նհենց յումբրուղ ա տալիս կելի կլխին, որ աշկերը պիունիցը տոս են թըռնըմ, քոռանըմ ա: Էս անքամ էլ ասլանը աղվեսին ա թափշուր անըմ, որ միսը ճոթ անի:

Աղվեսը տըմնկը հու մնացած եղալի թիքեքը տամ ա ասլանին, ճիւղը, ոսկոռնին վեր ունըմ ուրմն:

Ասլանը հըրցնըմ ա. — Սըհենց հալալ ճոթ անիլը ըշտեղսն են սըվորել:

Աղվեսն ասըմ ա. — Կելի աշկերիցը:

ՋՐՈՒՅՑՆԵՐ

1. (62) ՀԱՅՐ ՈՒ ՈՐԴԻ

Մի մարդ իր տղայի հետ կգնան արտը հնձելու: Մինչև կեսօր նստելով, վեր կենալով շատ քիչ հունձ կանեն: Կեսօրին տնից հաց կուգա, մեր մշակները հետ կդառնան և կսկսեն ուտել բերած փլով, տոլմա, խաշլամա, հետն էլ կուլայի մեջ սառը գինի կըմպեն:

Երբ բոլոր հացը կուտեն, կպրծնեն, տղան կասի. — Հայրիկ, էս որքան հաց կերանք, ամա ինչ ուտող ենք է:

— Հա՛, — կպատասխանի հայրը, — դե ես առյուծ, դու էլ առյուծի ձագ, ինչու չեք ուտի: Քիչ-միչ աշխատելուց հետո, արևը դեռ մայր չմտած, աշխատանքը կթողնեն:

Տղան կնայի, կտեսնի, որ ըսկի բան չեն արել, կասի. — Հայրիկ, ինչ քիչ ենք հնձել է:

— Հա՛, որդիս, — կպատասխանի հայրը, — դե ես ծեր մարդ, դու էլ դեռ երեխա, հագիվ էդքանն անեիք:

2. (63) ԼՈՂԱՅՈՂ ԾԵՐՈՒՆԻՆ ԵՎ ԱՂՋԻԿՆԵՐԸ

Մի պատկառելի ծերունի լողում էր գետում, երբ մի խումբ աղջիկներ և կանայք գետի ափով գնում էին: Ծերունին ամոթից ծածկվելու համար մտավ մի քարի տակ, աղջիկները զվարճանալու համար սկսեցին քարեր տեղալ ծերունու շուրջը, որ սա դուրս գա և իրենք ծիծաղեն:

Ծերունին քարի տակից կանչում է. — Մի՛ քարկոծիք ինձ, բարի՛ արարածներ, եթե տարիքով կանայք եք, արդեն տեսել պրծել եք, եթե հարսներ եք, ամեն օր տեսնում եք, իսկ եթե աղջիկներ եք, մի՛ շտապեք, շուտով կտեսնեք:

3. (64) ՊԵԼԸ ԵՎ ԿՈՒԺԸ

Մի գյուղում մի խենթ է լինում, այնքան սրա ետևից պել, պել են կանչում, որ սա ստիպված հեռանում է գյուղից, որ իրեն այլևս պել, պել, չկանչեն: Սա մի ուրիշ գյուղի հանդով անցնելիս սաստիկ ծարավում է և, որովհետև աղբյուր չի

գտնում, մոտենում է հնձվորներին ու ջուր խնդրում: Հնձվորները քիչ հեռվում ցույց են տալիս ջրի կույան և ասում՝ գնա՛ և խմի՛ր:

Խենթը երբ կույան գլխին է քաշում, կուժը կլթկլթում է հնչելով՝ պըլ, պըլ, պըլ: Մարդը սարսափած կուժը ցած է դնում և հետ փախչում նորից իրենց գյուղը, ասելով. «Եթե կուժն էլ իմ պլույթունը գիտե, էլ ճուր գնամ, լավ է դառնամ մեր գյուղը»:

4. (65) ՏԵՐՏԵՐԻ ԿԱՄՔԸ

Մի ժլատ տերտեր է լինում: Սա ունենում է նույնպիսի ժլատ մի տղա: Մի օր էս տերտերի տղան գնում է և մի բատրակ վարձում շատ էժան գնով: Երբ գալիս է տուն, ասում է հորը. — Տեր հայր, մի բատրակ եմ բռնել շատ էժան վարձով՝ հացը իրենից, տարեկան տալու ենք երկու մանեթ:

— Որ էտենց էր, այ՛ որդի, — պատասխանում է տերտերը, — ինչու՞ չես խոսացել, որ մեր ուտելու հացն էլ նա տար:

5. (66) ԷՇՆ ՈՒ ՏԵՐԸ

Մի հիմար մարդ էշն առաջ արած գնում էր մի գյուղ: Երբ հասան մի մեծ գետի, մարդը իշին գոռով հրելով զցեց գետը, որ անցնի: Գետը իշին քշեց ու տարավ: Տերը նրա հետևից գետը շարտեց մեկ ուրլի արծաթ փող:

Ճամփորդի մեկն ականատես լինելով այս արարքին, զարմացած հարցրեց. — Բարեկամ, էշդ գետը տարավ, իսկ էդ փողը ինչու՞ զցեցիր նրա հետևից:

— Իմ էշը, եղբայր, — պատասխանում է իշատերը, — շատ հավատացյալ ու բարեսիրտ էշ էր, էն մանեթը զցեցի ի փրկություն էշիս սուրբ հոգու:

6. (67) ՄԱՐԳԻ ՈՒ ԿԻՆ

Մի մարդ օտարություն կգնա աշխատանք անելու: Վեց տարի հետո օրախոյությունից տուն կգա, կտեսնի, իրենց տանը երեք տղա երեխաներ կան, կնոջը կհարցնի. — Ա՛յ կնիկ, էս ո՞ւմ երեխաներն են:

— Ինչպե՛ս թե ումը: Մերն են, — կպատասխանի կինը հանգիստ տոնով:

— Ա՛յ կնիկ, էս վեց տարի է բացակա եմ, ումնից են սրանք:

— Մեկը դեա քո ժամանակից էր մնացել, մյուսը քեզ հետ երագումն ապրեցի, էն օրից մնաց:

— Բա երրորդը, — զարմացած կհարցնի մարդը:

— Երրորդը, — կպատասխանի կինը, — դու՛ լինես, են ջուխտիդ արև, թե երրորդի մասին հարցնես:

7. (68) ՄԱԿԻՉԸ

Մակիչն իրենց գյուղի ամենախմաստուն մարդն էր: Է, չէք հավատում, դե լավ, ականջ արեք պատմեմ Մակիչի իմաստուն արարքներից մեկը:

Մի օր գյուղացիք հանդում մի նապաստակ են բռնում: Նապաստակը գյուղ են բերում, որ տանեն պահեն, աճեցնեն: Բա որտեղ պահենք, որտեղ չպահենք, միտք են անում գյուղացիք և հնարը չեն գտնում: Ո՞վ կլիմանա, ո՞վ չի իմանա, Մակիչը կլիմանա, նրանից էլ ո՞վ կա խելոք: Գնում են, Մակիչին բերում:

—Տո, ախմախմներ, — բարկանում է Մակիչը, էդ էլ չգիտեք, բա որ ես չլինեմ, ձեր հալն ի՞նչ կլինի, — գոռում է նա ու կարգադրում նապաստակին բաց թողնել փլեկ մարագի մեջ ու դռան տեղ երկու լուծ խաչաձև օգեն, որ նապաստակը դուրս չգա:

Էդպես էլ անում են: Մյուս օրը գալիս են տեսնեն նապաստակը այնտեղ է, թե ոչ, տեսնում են նապաստակ չկա, էլ ո՞վ կտա նապաստակ, ծլկել է: Բա ինչպես փախած կլինի նապաստակը, ինչպես փախած չի լինի, շատ են մտածում գյուղացիք, վերջն էլի հնար չգտնելով գնում Մակիչին են բերում՝ բա չես ասիլ, Մակիչ, էպես-էպես:

—Վայ, ձեր տունը չքանդվի, — երկար գննելուց հետո պատասխանում է Մակիչը, — էդ էլ չեք հասկացել, այ այս լծերի ծակերը, սամիների ծակերովս է դուրս փախել նապաստակը, պետք է այդ ծակերն ամրացնեիք:

8. (69) ՇԱՏԱԿԵՐ ՃԱՄՓՈՐԴԻՆ ՈՒ ԱՂՔԱՏ ԱՅՐԻՆ

Մի աղքատ պառավ քիչ խմոր արած օջախին սաջի վրա հաց էր թխում, երբ ներս մտավ մի ճանապարհորդ և պառավից հաց խնդրեց: Պառավը սիրով նրան հրավիրեց հացի:

Անձանոթ ճանապարհորդը նստում է և պառավն ինչքան հաց է թխում, սա ազահաբար ուտում է:

Պառավը տեսնում է, որ հնար չկա, հացերը բոլորը կուտի ազահ հյուրը, հարցնում է. — Եղբայր, հարցնելն ամոթ չըլինի, ու՞ր ես գնում:

—Տառի՛, էս ա մի հինգ ամիս է, ինչ ախորժակս փակվել է, գնում եմ Սուրբ Կարապետ ուխտի, որ ախորժակս բացվի, — պատասխանում է ճամփորտը:

—Այն ժամանակ, եղբայրս, — գոչում է պառավը, — վերադառնալուց մեր գյուղովը չգաս, թե չէ գյուղում սով կօգես:

9. (70) ԱՂՔԱՏԻ ՈՒ ՀԱՐՈՒՍՏԻ ԿՌԻՎԸ

Մի հարուստ և մի աղքատ մարդ իրար հետ կովելիս հարուստը ջղայնաբար ասաց. — Ա՛ շան տղա, դու է՛ն չես, որ քո հերը սոված մեռավ:

—Շան տղան դու ես, — պատասխանում է աղքատը, — յանի հաց կար, իմ հերը չկերամվ:

10. (71) ԵՐԵՑՆ ՈՒ ԿԱՏԱԿԱՐԱՆԸ

Մի երեց իր մոտ է կանչում մի հայտնի կատակ ասող մարդու և խնդրում է, որ բաներ ասի ու իրենք ծիծաղեն: Երեցի մոտ են լինում նաև շատ գյուղացիներ:

— Ա՛ տեր, — սկսում է կատակաբանը, — մի օր մեր էշը առա ու գնացի խոտ բերելու: Չոր խոտ էր, իշին բեռնեցի ու քշեցի: Ճամփին ուզեցի, որ պապիրոս վառեմ, քամին չթողաց, էշի բեռան մոտ կուչ եկա ու երբ լուցկին վառեցի, խոտը բռնեց: Եվ, ա՛ տեր, էշին խոտը էրեց, փալանը էրեց, անջուկնին էրեց, գլուխը էրեց, ոտները էրեց, մի խոսքով սաղ էշը էրեց:

11. (72) ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ԱՌԱԿ ԱՍՈՂԸ

— Ա տեր, աշխարհական հագուստներով տերտերին ինչպես կարելի է ճանաչել մարդկանց մեջ, որ սա տերտեր է, — հարցնում է մի առակ ասող մարդ, մի տերտերի:

— Որդի՛ս, — պատասխանում է տերտերը, — կճանաչեն միրուքովը, համ էլ տերտերը միշտ ժողովուրդի առաջից կգնա:

— Հա էլի տեր հայր, — պատասխանում է առակասացը, — ինչպես որ ոչ խարի մեջ էձը:

12. (73) ՀԱՅՐԱՐԺԱՆ ՈՐԳԻՆ

Մի տղա օտարության մեջ լուր է ստանում, որ իր հարազատ հայրը մահացել է: Որդին հոր մահվան վրա շատ ողբ է անում: Ընկերները նրան մխիթարելու հետ կհորդորեն, որ աչքերը քիչ կուրացնի, էլ լաց չլինի:

— Ինչպե՛ս լաց չլինեմ, — կպատասխանի տղան, — ավար իմ հերը մի ուրիշ մարդ էր, հալալ մի ոտը թեթև ուլախ էր:

13. (74) ՇԱՏԱԿԵՐ ՀՅՈՒՐԸ⁸³

Մի մարդ հյուր է գնում մի ուրիշին լավ հոագ է լինում, կուշտ ու կուտ ուտում է, վրեն սառը ջուր խմում և բացականչում. — Ախպեր ջան, լավ կլինի միշտ հոսպ ցանենք:

Գիշերը փորը շատ է քոռաղ տալիս: Շատ որ ներս ու դուրս է անում, տանտերը հետևելիս է լինում, կանչում է. — Ղոնախ օխպեր, ինչ օրի ես:

— Էհ, մի հարցնի, սև օր եմ, լավ կլինի էլ հոսպ չցանեք:

14. (75) ՀՅՈՒՐԸՆԿԱԼ ՄԱՐԳՆ ՈՒ ԿԻՆԸ ԵՎ ԱԶՔԱԾԱԿ ՀՅՈՒՐԸ

Մի աներես մարդ հյուր կգնա մի հյուրասեր մարդու տուն, որի կինը ևս մարդու նման կհյուրասիրեն հյուրին ինչով կարող են: Էս անիրավ հյուրըս տես-

⁸³ Վերնագիրը տրվել է ըստ գրույցի բովանդակության (Ծ. Կ.):

նում է, որ իրեն լավ են պատվում, մտածում է. «Մի առ ժամանակ էստեղ կապրեմ, չէ՛ որ այստեղ մեր տնից լավ է»:

Կանցնի մի քանի շաբաթ, հյուրը չի գնալ և ավելի կայնդացնի տեղը: Մի օր էլ մարդ ու կնիկ կմտածեն, կմտածեն, թե ինչ անեն, որ ազատվեն այդ աներեսի ձեռքից:

Մարդը կասի.— Ա՛յ կնիկ, արի երեկոյան քեզ սուտ ծեծեմ, թող հյուրը մեջ ընկնի ես մի բան կասեմ:

Այդպես էլ անում են: Երբ մարդը սկսում է կնոջը ծեծել, հյուրը մեջ է ընկնում, որ թույլ չտա:

—Թո՛ղ, ազի՞զ հյուր, դու լինես էն ճանապարհը, որ վաղը գնալու ես, թող որ սրան սպանելու եմ:

—Դու լինես էն տաշտի հացը, որ ձեզ հետ միասին ուտելու եմ, տանտե՛ր, ծեծի՛ր կնոջդ, — աներեսաբար պատասխանում է հյուրը:

15. (76) ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ԱՆԵԾՔԸ

Մի մարդ, որ շատ սրամիտ էր, ձեռ է առնում մի տերտերի: Տերտերը երեսը շուռ է տալիս և սկսում անիծել էդ մարդուն:

—Տեր հայրը ի՞նչ է անում, Մեսի՛, — հարցնում է առակախոսը իր մոտ կանգնած գյուղացուն:

—Չես տեսնո՞ւմ, նա քեզ անիծում է, մի՞ թե չես վախենում, — զարհուրած ասում է գյուղացին:

—Մեսի՛, դո՛ւ, իմ արև, յա՛ տերտերի անեծքները, յա՛ մեր Բողար շան հաչոցը, նա էլ շատ հաչում է կտրի ծերին կանգնած, ամմա նրա հաչոցից ո՞վ ա վախեցողը, — պատասխանում է առակախոսը:

16 .(77) ՀՅՈՒՐԻ ՀԱՐԳԱՆՔԸ

Մի մարդ հյուր է ընկնում մի այրի կնոջ տուն, որը ունենում է տաս տարեկան մի միսուճար աղջիկ: Կինը հյուրին պատվելու համար մի մեծ աման դոշաբ է դնում առաջը, իսկ ինքը դուրս գնում՝ աղջկանը թողնելով հյուրի մոտ:

Հյուրը շատ է զարմանում, թե՛ իրեն տես որքան է այրին հարգում, որ ամանը լի է դոշաբ տալիս:

Երբ կուշտ ու կուտ ուտում է, աղջիկն ասում է. —Քեո՛ի, կուզե՛ս էլի լցնեմ, բերեմ կեր:

—Ինչո՞ւ աղջիկս, ձեր դոշաբը որքան է, որ այդպես անխնա բանեցնում ես, — զարմացած հարցնում է հյուրը:

—Մի կունդի ունենք, բայց մենք չենք ուտում, որովհետև մեջը մուկ է ընկել, — պատասխանում է միամիտ աղջիկը:

—Վսյ՛, ձեր տունը չքանդվի՛, — գոչում է հյուրը և գավաթը գետնով տալիս, փշրում:

—Քեռի՛, — լացակումած ասում է աղջիկը, — ինչու կոտրեցիր գավաթը, չե՛ որ նրանում էինք կերակրում մեր կատվին, իսկ հիմա ինչու՞մ պիտի կերակրենք:

17 .(78) ՄՈԼԼԱՆ ՈՒ ՀՈՎԻՎԸ

Մի հովվի հավատարիմ շունը մի փոքր քաղաքի մոտով անցնելիս կորչում է: Հովիվը ողջ քաղաքը ման է գալիս, չի գտնում: Մին էլ տեսնում է, որ մոլլան մեչիտի գլուխը բարձրացած կանչում է հավատացյալներին դեպի մարգարեի տաճարը: Հովիվը մտածում է, որ սա քաղաքի ամենաբարձր կետն է, ես էլ գնամ ու կանչեմ, գուցե շուտ գա՛ ճանաչելով իմ ձայնը:

Վեր է բարձրանում ու մոլլի հետևից սկսում է շանը կանչել: Մոլլան զարմացած հետ է նայում, տեսնում մի աժդահա հովիվ միակն ուսին շանն է ձեն տալիս:

Բարկանում է ու զոչում. — Սա մարգարեի տաճարն է, շու՛ն, ինչ գործ ունես դու, և քո շունն այստեղ ինչ է անում, որ կանչում ես:

— Մոլլա՛, — պատասխանում է հովիվը, — իմ շունը մարգարեին էլ է ճանաչում, դեռ ուրիշներին էլ, նա էլ սիրում է մարգարեին, թող կանչեմ նա էլ գա այստեղ ու տանեմ հետս:

18.(79) ՕՁԻ ԹՈՒՅՆԸ

Մի հայտնի պժիշկ կար, որ երկրի երեսին դրանից իմացող մարդ չկար: Ինչ հիվանդություններ էր եղել, բուժել էր: Մի մարդ էլ շատ հարուստ էր, հիվանդ էր: Մտածեց, ասեց. «Ես մեռնելու եմ, հարստությունս մնալու ա: Ասըմ են՝ էս ինչ մարդը շատ լավ բժիշկ ա, կնալու եմ նրա մոտ պուժվելու»:

Եկավ բժշկի մոտ, թե. — Պժիշկ ջան, ընձի օգնի, փրկի, այբ ես մեռնում եմ:

Մշտիկ տվեց բժիշկը, ասաց. — Քեզ փրկություն չունես, տու կմահանաս:

— Պա, ինձ ի՞նչ միջոց:

Ասըմ ա. — Ոչ մի միջոց: Էն դեղը, որ քեզ պիտի տամ, էն դեղը ինձ մոտ չկա, չի ճարվում:

Ծառային հրամայեց, ասաց. — Դե որ պժշկություն չկա, արի, տու ինձ էս քշեր տար իմ ոչխարի արխաջը, թող քշերը վերջին անգամ իմ ոչխարների մոտ քնեմ, որ մեռնելու եմ:

Կնաց, քշերը քնավ ոչխարների մոտ:

Հրամայեց չորաններին, ասեց. — Չորաններ, ինձ էս քշեր սև ոչխարի կաթ կեփեք, մածուն կմերեք, որ ես ուտեմ, մեռնելու եմ:

Սրանք վերցրին սև ոչխարի կաթից կտրին, մեկ կազան մածուն պերին, տրին տրա կողքին: Էդ մարդն էլ հիվանդ պառկած ա, ծառաս էլ կողքին ա: Կշերվա մի ժամանակ ծառան զարթուն էր, տեսավ, որ մի օձ էկավ, մածունը կերավ, էլի հետ տվեց ամանի մեջ: Ծառան էս պանը տեսավ, մտածեց. «Լավ էլավ, թույնավորվեց, թող իմ աղան ուտի, մեռնի: Ինչ ա, ես էլ հետը տանջվում եմ»:

Լուսացավ: Էս մարդը վեր կացավ, թե. — Մածունը պերեք, պատրաստ ա, ուտեմ:

Էդ հիվանդ մարդը մածունը կերավ ախորժակով, ամանն էլ լիզեց, վեր կացավ, կնացին:

Ա՛յ մարդ, մի տաս, քսան օր անցավ, առողջացավ էդ մարդը:

Գնաց բժշկի մոտ, թե. — Բժիշկ, ինձ ճանաչո՞ւմ ես:

— Ճանաչում եմ:

— Էդ ինձ ժամանակ իր տվիր, որ շատ կարճ ժամանակում կմեռնեմ:

Ասում ա. — Այո՛, պա ես որտեղից պերեի էն օձի թույնը ուտեիր, որ պոժվեիր: Էդ դեղն ինձ մոտ չկար: Տու օձի թույն ես կերել, ազատվել:

Էդ մարդը զարմանում ա, թե. — Չէ, ես թույն չեմ կերել:

— Չի կարող պատահի: Ես էնպես բժիշկ եմ, որ իմ գիտությունը բոլոր տեղ տարածված է: Տու օձի թույն ես կերել:

Էկավ, ապացուցվեց, պարզվեց, որ իսկապես ծառան վիզն ա առնել, հաստատեց, որ էդ մարդը օձի թույն էր կերել:

19. (80) ԲԺԻՇԿՆ ՈՒ ՀԻՎԱՆԴԸ

Մի մարդ հիվանդ ա ըլլմ, գնրմ ա բժշկի մոտը:

Բժիշկը ասրմ ա. — Տու երկար չես ապրի:

Էդ թողնրմ ա քյոռ ու փոշման կյամ ա իրա տունը: Կյամ ա իրա տունը, տըսնրմ ա՛ հուս քյալամը կա: Էդ քյալամը ուտրմ ա, ասրմ ա. «Դը մեռնելու եմ, մեռնելու եմ, ջհանդամը, է, քյալամիցը մե ուժեղ ուտեմ, աչքս վրեն չմնա»:

Ուժեղ ուտրմ ա, որ մահանա, հակառակը՝ լավանրմ ա: Մի տարուց հետո վեր ա կենրմ, քինրմ ա բժշկի մոտը, ասրրմ ա. — Բարև:

— Բարև:

— Բա, տու ես ինձ ասալ, որ կարճ ա քու գյանքը: Հիմա էկել եմ, ինչ ես ասրմ:

Ասավ. — Ինչն ա պատճառը, որ տու լավացել ես:

Թե. — Գնացիմ, տեսամ՝ մեր տունը խում քյալամ շատ կար: Ուժեղ կերամ էդ քյալամից, ասեցիմ. «Դե որ մահանալու եմ, ջհանդամը, էս քյալամիցը մե ուժեղ ուտեմ, աչքս վրեն չմնա, ընդհակառակը՝ լավացամ»:

Դե, — ասրմ ա, — պեր քեզ ապելացի անեմ տըսնեմ հի՛նչն ա պատճառը, որ տու լավացել ես:

Ապելացի ա անրմ էդ մարդին, որ ուստուգա, մարդին թողնրմ ա տանակի տակը, մահանրմ ա:

20. (81) ՄՈՒՂԴՈՒՍՈՒՆՑ ՄԱԴՈՒ ԳԵՂԱԿԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ

(ժողովրդական բժշկություն, Կապանի բարբառով)

Մարում հունձ անելիս Ամալյան բերանը բռնած գնում ա Մուղդուսունց Մադու մոտ. — Մադի ամի, կեռեքս հանե:

— Ախչի՛, ռեխո կախ ըս քցա եկա, մանգեղավ ըմ հանելո՛: Յետ տեռ, քյինի տոն, ամբարեն տակեն մի քյարփաթուն կա, յեկա պեր:

Անալյան մի ժամից բերեց ժանգոտ արցանը:

— Դե տու ռեխդ տեն հլորե, տեսնամ՝ հինչ ըմ անում:

Սեփական միջոցներով արցանը թրջեց-ախտահանեց, հենց որ թշնոցը կտրեց շուռ եկավ Անալյային. — Դե, ա՛ խոխա, աշկերդ հոփ կալ, ռեխդ պեց, ծերքերդ ալ փեշադ պենդ փոնե, վեր կլոխդ տուրուն չտաս, քարփաթունը պատա ժանգոտ ա, յեշի սերտդ խառնե վեչ:

Մուղդուսունց Մադին ձախ ձեռքով բռնեց մազերից ու մեծ արցանը հազիվ տեղավորելով Անալյայի բերանում՝ ցավող ատամը բռնեց, ձախ ձեռքը ետ քաշեց, այ ձեռքը առաջ քաշեց ու ատամը օդում մնաց արցանի բերանում:

— Դե, մալադեց, ծպտուն ալ չըս հանա, կա տիր հափոռումըդ, քյինի փլըրթավե ծորը, ասե. «Քյինի-քյինի շան կեռեք, յեկ-յեկ կյուլի կեռեք»:

Էրկու ժամ ռեխդ քեզ կպահիս, թանավ ալ չօտիս: Հետո էշի փալանի միջան մի կուտուր պեմբակ տուս կտաս, յեշիս վեչ թա ադե ա, կտնիս կեռեքատեղը, վեր համ արունը կտրե, համ ալ թարախակալե վեչ: Դե, հայդե բիդի տոն:

— Մադի՛ ամի, ատամը ինքը ուրան ա՛ փսելու:

— Չէ՛, բալա՛, ինքը ուրան պեն չի նում էս աշխարքում, վեր քյինիս կյառները պահիս, հանց ընելու վրն, վեր կեռեքդ տուս ա կյալու:

21. (82) ՔԱՌԱՍՈՒՆ ԸՄԿԵՍՈՒՐ

Մին հետի Մելիք Ջհանգիրը կանչիլ ա տվալ իւրանն մհալան քոասուն հրթնտեր պառավ կնեկ, դունուդատանը ջնրգին նստցնիլ ա տվալ, ասալ թող գրաց անեն մինչև լոխունքը կը հվաքվեն:

Հենց վեր խննքնը տարան թա քոասուն կնանիքը եկալ են, հեն են՝ ծլըպատակ նստոտած, Մելիք Ջհանգիրը էն դալին բեղերը հլնրիլնվ նի մտավ դունադատոն, լոխնին պարի օր ասեց, համել աշկին տակավը մուշտարու աշկավ լոխնին տնդրդեց:

Քոասուն կնանիքը մին-մինի ենդա, Աստրծու պարին, Աստրծու պարին ըսեցին:

Մելիքը հրցրուց. — Տիւք գյուղում է՞ք, թա՛ ծեզ հինչի հետի եմ կանչալ:

Ընդրանք էլ թա՛ն. — Շտեղան ենք գյնդում, տու կանչալ ես Ադա Մելիք, մենք էլ եկալ ենք:

— Դե վեր գյուղում չեք ես ասեմ, ես կանչալ եմ էն կնանուցը, որոնք իւրաննց հրթնտերին նհետ սերավ են, ջան են ասում, ջան լսում, իւրնոր ըրևալ իւրթում օտում, հու վեր ծզանա իւրանն հարթնին նհետ բարիշ չի, սաղ օրը կոեվ են անում իւրնոր մես օտում, յա էլ խոռվ են իւրնոր անա, թող երկենան քընան իւրաննց տնեռը:

Մելիքին էս խոսկին յրանն, էտ կնանիքը մին-մինի ենդա, տղրներան եր կցան, տոնու տնունն քյննցին, մնաց միննկ մին պառավ կնեկ, իւրանն տեղը նստած:

Մելիքը տեսավ վեր քոասուն կնանոցան մինը նա մնացալ, մուտացալ ընդրան, հրցրաց. — Շարմադ աքեր, մին ասի տեսնամ, էտ քու հարթնը հիշքան

լնվըն ն, վեր ընդրա նհետ սերավ ես կենում, ղլմըղալ չեք անում, ուրոնր մես չեք օտում:

—Աղա Մելիք, էտ հուվմ ասալ քեզ, վեր ես հարթնիս նհետ սերավ եմ, ես քե մատաղ, բոյիտ դուրբան, մին ասի տեսնամ, կեծակը ընդրա ջիգյնրնն կենա, գյնլլնխորավ ինի, յա էլ աշկերը եր տնննն, վենդին տակը տառնա, քուռանա տակերը տփտըփիլնվ ման կյն, ես տեսնամ, Աստուծ ընդրան քու տա, դենգեր չի տա, վեր ջանը քորի, ընդրա գյնըղննը կոտրի, ումբուրը թաղեմ, խորզնրհատ ինի, բա ես ընդրա նհետ սերավ եմ, վեր ասում ես, տվալ ա օմբաս կոտրալ կարում չեմ թն տեղաս տոնրոնր կյնմ, թնչնն լոխճան կանուխ ես կը քյնի ըստեղան, բա ես հարթնիս նհետ սերավ եմ, վեչ ինի ընդրհենց հարթնը:

Մելիք Ջիանգիրը էս վեր լսեց, ծափ տվալ, էրկու գյնդն կանչեց թափշուր ըրավ, վեր Շարմաղ աքուրը կոնըտկերան փոնեն տանեն ուրննց տոն:

Ըթրհենց էլ ըրին:

22. (83) ԹԱՄԱՄԸ ՔՅՆԱՑ ՍԱՆԱՏՈՒԻԱ

Թամամը ուրնն հարթին նհետ կոել էր անում, թնթորում, թն.— Երկաց քյնննք ժողով:

Հարթնը դայիլ չեր, չեմըչում էր անում, օգում չեր քինն, ասում էր.— Հիվանդ եմ, կոխտում շատ ըշխըղիլան քամակս բուշացալ ա, կարամ չեմ պահեմ, շնուշնու թնլ եմ անում, համութ ա, ժողովումը պնց կինգի, խայտառակ կինեմ, չէ, նանի լնվը էն ն, վեր ես կյամ վեչ, տու քյնա ասի հարթնըս հիվանդ ա կարաց վեչ կյն:

Սկեսուրը գոռեց, թն.— Վեչինչ, վախիլ մի, եկ քինննք իմ քյշտին կսստես, վեր թենց պան պտահի, կասեմ ես ըրի, հիվանդ եմ, համ էլ պոավալ եմ, կարում չեմ քամակս պահեմ:

Թամամը հարթին կակուղ դամարը փոնեց, երկցան, քյննցին կոխտոլի ժողովին:

Նախագայի խուսիլի վախտին Թամամին հարթնը մին պենդ պնց թողեց, վնլ ըրավ, համ էլ տեղան եր թռավ:

Նախագան գրմացած հրցըրաց թն.— Էտ հու՞վեր, բա հմանչում չի:

Թամամը տեղան երկացավ թն.— Նախագա ջան, ես քե մատաղ, էս դնննում բախշի, ես ըրի, կոխտումը շատ ըշխըղիլան քամակս թնլննցնլ ա, հիվանդ եմ, հի՞նչ անեմ, կարում չեմ դըբետոս պահեմ, հեմ էլ պըռավալ եմ, բա ես կոզնմ խայտառակ ինեմ:

Նախագահ քմծիծաղ տվալ, էնդան էլ ասեց.— Թամամ բիբի, վեր թենց ա, ժողովը պրծնիլնն ետը կըկյնս իմ կոխկը, Աբաս թուման ի սանատորի մին պուտովկա եմ ստացալ, քեզ տամ քյնն մին ամիս պժիշկվի, լնվ էլ դինջնցի եկ:

Թամամին հարթնը էս վեր լսեց, տեղան ծլոնգ իլնվ, թն.— Աշկս լնու, հու շատ կործ անի, հնր քամակը թնլննն, վըռվըռա, հնր դարկեն դինջիննլի, պժիշկվիլի: Ըշխարքումս դնուգ պնն չի կա:

23. (84) ԽԱՍՓՈՒՇ ԱԴԵՐԸ

Մին շենում ադերը մեռալ էր, շենը մնացալ էր ըռնց ադեր, վեչ հըրասանիք ին կարում անեն, ոչ խոխա կնքում, վեչ տոն օրթնում, վեչ էլ մեռալ ին կարամ թաղեն:

Սնար էր էր իլնլ, վեր փչան շենումը ադեր չի կա, ուրննց մեռալնին կարամ չեն թաղեն:

Մին խասփուշ ըդերի շիրեր կեցալ, փնրննչան քցեց ուտերալը, քիննց էտ շենը, քոխսլին կոխկը, ասեց, — Ես ադեր եմ, օգում եմ ծեր շենումը ըդըրոթուն անեմ, ծեր ժողովուրթին ծառան տառնամ, թա դարբու եք, ժնմին պլննիքը ինձ տվեք, քննմ Աստծու տոնը ավադ անեմ:

Քոխսլան ժնմին պլննիքը տվալ էտ սուտլիկ ադերին, ինք քննց շենին մծըմեծացը նհետ մալը հաթի: Որոշեցին էտ ադերին փորցեն:

Մին սաղ-սալամաթ մարթի փթըթեցին մին մեզննրի մեչ, մին քոհնա դաթու մեչ պըրնցրին, տարան ժամ, ըդերին ըսեցին. «Էս մեռալը էքուց պետկա թաղենք, թող ժնմումը կենա»: Մեռալը տրնն ժամին մեչ տեղը, Ադերը տոնը կապեց, քննց տոն:

Էքսի ըռավետը ծեքը ծեքին Ադերը եկը ժնմ, տոնը պնցնվ, օգեց թաղման ռեպետից անի, սվերի, վեր շիննցնոց կոխկին շիլ չի ընգի, խայտառակ չինի: Մին էրկու հետ էտ սոտ մեռալին չորս դուալը շոռ տվալ, շրական կաթաց, մին էլ եշեց, տեսալ էտ մեռալը տոնըր ա կյնմ, գրմացալ, մեկումը ասեց, «Էս շինին ժողովուրթը հինչ անխեղձ ժողովուրթ ա՛, թողացալ չեն, թն էտ խեղձ մարթը կարքին մեռնի, պերնլ են տրնլ ժնմումը»: Կըվնզննը էր կալալ, տարավ-պերնլ նհենց էր պերնլ մեռնլին քյնլլին միչին, վեր էտ խեղձ մարթը դութուն միչին թփըռեփին ըրալ, կարաց վեչ թն կլոխը պըցըրնի մին պնն ասի: Սուտլիկ Ադերը էնքան ըտրա կլոխը կըվնզննվը էր թակեց, վեր խեղձ բեչնրնն հոքին տվալ:

Ադերը քափը քրտինքին միչին կորալ էր, վեր ժնմին տոնը պնց ըրալ, ժողովուրթը նի տնննն հինչ տեսան, էտ կտաղած ադերը սաղ սալամաթ մարթին կըվնզննվը էր թկիլնլ սպանալ էր:

Ադերը մին թնհմնթ էլ կարթաց էտ շինին մարթկանց կլխին, թն. — Տնք էտ հինչ ժողովուրթ էք հնլնէտ մարթը պերնլ, տրնլ ժնմումը, քիչ մնաց իմ հոքիս էլ տոնս կյնը մինչն ընդրա հոքին դրկեցի արքնյնթն:

Շենին ժողովուրթը վեր տեսալ կիժ ադերին ըրարմունքը, յրա տնննն, վենդի տակ տվին, էտ ընդերին էնքան կոխճան տվին, վեր ընդրա հոքին էլ դրկեցին սժոխկը:

ՄՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. (85) ԶԱՆԳԵԶՈՒՐ

Զանգեզուր անունն, ըստ Հայր Ալիշանի, ծագել է Զագեձոր անվան աղավաղումից, իսկ սա՝ Զագ նահապետի անունից: Հավանական համարելով առաջին ենթադրությունը՝ կարծում ենք, որ Զագեձոր խոսքն էլ առաջացել է ոչ թե Զագ նահապետի, այլ՝ «Ծակերի ձոր» անունից, որովհետև հենց այժմ էլ Գորիսից փոքր-ինչ բարձր գտնվող ձորը, ուր եղել է ամենափին բնակությունը, կոչվում է «Ծակերի ձոր»՝ այդտեղ գտնվող բազմաթիվ «Ծակեր» արհեստական քարայրի պատճառով:

Մի ավանդություն էլ ասում է, թե Նոր Գորիսից մի վերստ դեպի հյուսիս գտնվող վանքում երբեմն մի այնպիսի մեծ գանգ է եղել, որի ձայնը շատ հեռուն լավելիս է եղել, ուստի և ժողովուրդը սովորել է ասել. «Զանգը-զոռ», այսինքն՝ գանգը զորավոր, և իբր թե դրանից էլ առաջացել է Զանգեզուր անունը:

2. (86) ԶԱՆԳԵԶՈՒՐ

Ա.

Երբ Լենկ-Թեմուրը գալիս հասնում է Արաքսի ափը, դեռ գետը չանցած, նրան ներկայանում է Մեհրի անունով մի իշխան և ասում. Լենկ-Թեմուրն ապրած կենա, եկել եմ քեզ ծառայել: Թեմուրի հարցին, թե՛ ինչո՞վ նա կարող է ծառայել իրեն, իշխանը պատասխանում է. քանի Խոտ գյուղի գլխին գտնվող վանքի մեծ գանգը կա, դու չես կարող գրավել այս երկիրը, թշնամուն հեռվից տեսնելուն պես, տալիս են այդ գանգը և ժողովրդին հանում նրա դեմ: Լենկ-Թեմուրը մի քիչ մտածելուց հետո, ասում է. գնա՛, էդ գանգը վառի, փչացրու, ես քեզ շատ ոսկի ու իշխանություն կտամ: Դավաճանը գնում է, իր նման մի քանի ուրիշների հետ՝ գիշերով գանգի տակ կրակ են վառում և կտրում նրա ձայնը: Լենկ-Թեմուրը զորքով անցնում է Արաքսը: Իմանալով այդ մասին, վանահայրը կանչում է գանգահարին և կարգադրում շտապ գանգը տալ: Զանգահարը ինչքան փորձում է՝ գանգը ձայն չի հանում: Վազում է վանահոր մոտ և ասում. Ամեն բան գուր է, գանգը ձայն չի տալիս... Լենկ-Թեմուրը գիշերով գալիս գրավում է ամբողջ երկիրը: Գյուղերում մարդիկ զարմանքով հարցնում են իրար. «Բա ինչո՞ գանգը չտվին»: Ոմանք էլ պատասխանում են. «Զանգը զո՛ր է, գանգը զո՛ր է...»: Դրանից հետո գավառի անունը մնում է Զանգեզուր:

Բ. (87)

Որոտանի ձորում շատ գյուղեր են եղել, ամեն գյուղում էլ մեկ-երկու եկեղեցի: Առավոտները, որ գանգերը տվել են, ձորը լցվել է նրանց ձայնով: Լսողներն ասել են. Զանգի ձոր է, Զանգի ձոր է: Դրանից հետո գավառի անունը դրել են Զանգեձոր, որը բերանից-բերան դարձել է Զանգեզուր:

Գ. (88)

Տաթևի վանքը կառուցելուց հետո, զանգակատանը մի մեծ զանգ են կախել: Սրա ձայնն այնքան ուժեղ է եղել, որ երբ դողանջել է, լավել է ամբողջ գավառի լեռներում ու ձորերում: Ժողովուրդն ասել է. Էս ինչ գոռ զանգ է, զանգը գոռ է, որից և առաջ է եկել Զանգըգոռ կամ Զանգեգոր անունը:

Դ. (89)

Նոր Գորիսի մոտ գտնվող վանքում ժամանակին եղել է մի շատ մեծ զանգ: Երբ տվել են այդ զանգը, ձայնը լավել է հեռուներում: Ժողովուրդն ասել է. «Զանգը գորավոր ա, զանգը գոռ ա». դրանից էլ առաջ է եկել Զանգեգոր անունը:

Ե. (100)

Սյունյաց երկրի քարանձավներին տեղացիներն առաջ ծակեր են ասել, իսկ ձորերին էլ՝ ծակերի ձոր: Այստեղից էլ գավառի անունը մնացել է Ծակերի ձոր, որը հետո դարձել է Զանգեձոր, Զանգեգոր:

Զ. (101)

Զանգեգորի ձորերում տեսակ-տեսակ գույնզգույն և շատ ծաղիկներ են եղել: Դրա համար էլ գավառի անունը դրել են՝ Ծաղիկների ձոր, Ծաղկաց ձոր, որը հետո դարձել է Զանգեգոր:

3. (102) ՏԱԹ-Ա

Ճարտարապետը ավարտելով Տաթևի վանքի շինությունը՝ բարձրացել է գմբեթի վրա, դրել է խաչը և հետո խնդրելով ներքևում եղող բանվորներից երկու տախտակ՝ բռնել է ձեռներում, համբուրել և ասել. «Հոգին սուրբ տա թև»: Անմիջապես տախտակները թևերի են փոխարկվել, և նա թռել, աներևութացել է: Այս պատճառով էլ վանքի անունը մնացել է Տա թև-Տաթև:

4. (103) ՏԱԹ-ԵՎ

Սրա կառուցումն ավարտելուց հետո, քարագործ Վարպետը, դիմելով ցածրում գտնվող բանվորներին, երկու տաշեղ է պահանջում: Ստանալով տաշեղները՝ վարպետը համբուրում է դրանք և ասում. «Հոգին սուրբ տա թև»: Խոսքը բերանին, նրա ուսերին թևեր են բուսնում: Վարպետը թռչում, գնում է անհայտ ուղղությամբ: Բանվորներն առանց վարպետի չեն կարողանում հանել վանքի փայտյա սկալաները: Ժամանակ անց, լսելով որ նա Պոլսում է գտնվում, վանքի շրջակայքի բնակիչները մարդ են ուղարկում վարպետի մոտ և խնդրում, որ նա գա և հանի վանքի սկալաները: Սակայն վարպետը չի վերադառնում, միայն հայտնում է հանելու եղանակը:

Վարպետի ասած խոսքից՝ «Հոգին սուրբ տա թև», վանքը կոչվում է Տաթև:

5. (104) ՆԱԽԿՈՐՁԱՆ

Բաբիկը, անցնելով Երասխ գետը, կառուցում է մի գյուղաքաղաք և անունը կոչում Նախկորզան, որ նշանակում է «նախ այն կորզելով իրեն վերցրեց իր հայրենիքից»:

6. (105) ՄԱՐԱՆԴ

Մեր Հայոց աշխարհի ավերումից և սուրբ Վարդանանց պատերազմի ավարտից հետո պարսկական սուրը քսաներեք տարի չդադարեց արամյան սերունդը կոտորելուց, քանի որ Հազկերտից հետո թագավորեց անիծյալ արյունարբու Պերոզը՝ քսաներկու տարի, որը խստացրեց մեր Հայոց աշխարհի անողորմ կոտորումն ու գերումը, այրումն ու քանդումը:

Կեսգիշերին մի պարսիկ, որ զորքի դետքն էր, տեսավ երկինքը բացված և ուժեղ լույս սփռված սպանվածների վրա ու մի ոսկեղեն կառք խիստ բարձր՝ վրան նստած մի կին՝ թագավորական ծիրանի զգեստներով, հրեշտակների հսկայական զորախմբերով շրջապատված: Նա նայում էր կոտորածին, ողբագին լալիս ու գգվում ընկածներին մեկ առ մեկ: Եվ այն պարսիկը զարհուրելով կամեցավ իմաց տալ իրենց զորքին, բայց ուռքերն ու լեզուն կապվեցին: Այս մեկը սրբերի զորախմբից մոտեցավ նրան, և նա հարցրեց՝ այս ո՞վ է: Իսկ հրեշտակն ասաց. «Դա երկնային թագավորի մայրն է՝ որ իջել է նահատակների ու իր որդու սիրելիների մոտ և ուզում է մեկ առ մեկ փառաբանել նրանց»: Այդ տեսարանը մնաց մինչև առավոտ ու աներևութացավ:

Իսկ երբ լույսը բացվեց, զորքը կամեցավ այդտեղից հեռանալ, այն մարդուն գտան թուլացած, ընկած: Նրան հարցրին պատճառը, բայց նա ուրիշ բան չէր կարողանում պատասխանել, միայն մատով ցույց էր տալիս ու լեզվով ասում. «Մայր անդ այ, մայր անդ այ», որի համար էլ մինչև այժմ այն տեղի անունը Մարանդ է կոչվում:

7. (106) ԳՈՐԻՍ

Կյորես անունը ծագում ա գյավուրստան թուրքերեն խոսքից: Հին ժամանակումը Կյորիսից տիե եղել են վեղի միջի շինած տներ: Թուրքերը էտ տընըտեղերիտ ասալ են «Գյավուրիստան», այսինքն՝ գյավուրիների՝ հայ քրիստոնյաների տեղ: Էտ անունիցըտ էլ առաջացալ ա Գյավրուս, Գյորուս, Կյորես, Գորիս:

8. (107) ՔԱՀԱՆՅԻ ԱՌՈՒ ԿԱՄ ՔԵՇԻՇ ԱՐՂ

Տաթևի վանքը կառուցում է մի անվանի վարպետ: Մի կրոնավոր էլ որոշում է վանքի համար ջուր բերել: Նրանք գրազ են գալիս, թե ով ավելի շուտ կավարտի: Առուն փորելիս վարդապետը հանդիպում է մի հսկայական քարի, որն անհնար է լինում տեղից տեղ շարժել: Աղոթում է և քարը կտոր-կտոր է լինում: Տղան զարմանում է հոր չար աչքի վրա, և կրոնավորի մի աչքը կուրանում է: Շարունա-

կում են աշխատանքը, բայց այս անգամ էլ կանգ են առնում մի մեծ վիհի առաջ: Ինչ անել: Իսկ վարպետն արդեն հասնում է աշխատանքի ավարտին: Կրոնավորը որոշում է խաբել նրան: Վիհի հակառակ կողմից կախ է տալիս մի մեծ սպիտակ սավան, որը քանու տակ ծածանվում է ալիքաձև և հեռվից թափվող ջրի պատրանք է ստեղծում: Վարպետը դնում է գմբեթի վերջին քարը. վեր նայելով հանկարծ նկատում է հեռվում երևացող սպիտակ ալիքները և կարծում է, թե գրագը տանուլ է տվել: Իրեն ցած է նետում գմբեթից և ջարդ ու փշուր լինում: Վարպետին թաղում են վանքի մոտ: Մինչև այսօր էլ ցույց են տալիս նրա գերեզմանը: Խաբեբա կրոնավորի անունով վանքի առուն կոչվում է Քահանայի առու (Քեշիշ արդ):

9. (108) ՇԱՔԱՐԱՋՈՒՐ⁸⁴

Մի հովիվ ունենում է Շուշան անունով մի աղջիկ, որի նմանը չկար աշխարհում: Նա որ ծիծաղում էր՝ սարերում շուշաններ էին բացվում, իսկ այս առուն Շուշանի արտասուքներից է գոյացել: Ջրի քաղցրության համար առուն կոչվել է Շաքարաջուր:

10. (109) ՇԸՌՌԱՆ⁸⁵

Այս ջրվեժը աղմուկ հանելով ցած է թափվում մեծ բարձրությունից: Տեղական բնակչությունը ջրի հանած բարձր շրոռոցի համար ջրվեժը կոչել է Շրոռան:

11. (110) ՇԱՔԻ⁸⁶

Թշնամիները Գեղարքունիքի գավառից 93 կույս աղջիկ են ուղարկում Մուղանում բանակ դրած իրենց առաջնորդին: Երբ գերի աղջիկների քարավանը հասնում է այստեղ, դիմելով իրենց առևանգիչներին, նրանք ասում են. «Մենք երկար ճանապարհին շատ փոռտովել ու կեղտոտվել ենք, թույլ տվեք գետում լողանանք, նոր ներկայանանք ձեր մեծին»: Առևանգիչները համաձայնում են: Աղջիկները մերկանալով նետվում են Որոտանի ալիքների մեջ և սուզվելով անհետանում: Միայն Շաքե անունով մի կապուտաչյա աղջիկ Որոտանը թափվող գետակի միջով փախչելով, փորձում է ազատվել: Թշնամիները հասնում են նրա ետևից, սակայն նույն վայրկյանին գետակի մեջ հրաշքով մի ժայռ է խոյանում, և ջուրը նրա վրայով գահավիժելով, իր ճերմակ փրփուրների տակ թաքցնում է Շաքեին: Դրանից հետո այդ ջրվեժն ու նրա մոտ գտնվող գյուղը կոչում են Շաքեի անունով:

⁸⁴ Սկիզբ է առնում Գորիսի Էշա մեղան և Չրոշըն կոչվող հանդերից բխող աղբյուրներից և թափվում Վարարակ գետը (Ծ. Բ.):

⁸⁵ Գտնվում է Զանգեզուրի Քարահունջ գյուղի հյուսիսային կողմում (Ծ. Կ.):

⁸⁶ Գտնվում է Միսիանի կիրճում, որտեղ Շաքի գետակը խառնվում է Որոտան գետին (Ծ. Կ.):

12. (111) ԿԱՔԱՎԻ ԱՂԲՅՈՒՐ⁸⁷

Մի որսկան այստեղ կաքավի բուն է գտնում՝ ձագերը միջին: Սատանայի թելադրանքով նա քանդում է բունը և ոչնչացնում կաքավի ձագերին: Մայր կաքավը տեսնելով ավերված բունն ու ոչնչացված ձագերին, սկսում է սուգ ու լաց անել: Նրա արտասուքներից աղբյուր է գոյանում, ինքն էլ շատ չանցած անշնչանում է: Բարեխիղճ մարդիկ թաղում են կաքավին, քար զգում գերեզմանին, քարի տակից նով անցկացնում, որից սկսում է հոսել այս սատը աղբյուրը: Աղբյուրի անունն էլ մնում է Կաքավի աղբյուր:

13. (112) ԱԳՌԱՎԻ ԱՂԲՅՈՒՐ⁸⁸

Գրիգոր Տաթևացին երեխա ժամանակ արածեցնելիս է եղել Տաթևի վանքի գառները: Մի օր աղբյուրից ջուր խմելիս օձը ուզում է խայթել նրան: Տեսնելով այդ, ագռավը նետում է իրեն աղբյուրի մեջ: Օձը Գրիգորի փոխարեն խայթում է ագռավին: Տաթևի վանահայրը օրհնում է անձնագոհ ագռավին և թաղել է տալիս նրան աղբյուրի կողքին, որի անունը դրանից հետո տեղացիները Ագռավի աղբյուր են դնում:

14. (113) ՋՐՈՎ ԹՈՆԻՐԸ⁸⁹

Մըն (մի) հացթոխ ա իլալ: Մըն օր մինակ հաց թխելիս, մըն օգուղ եկալ ա, հաց օգալ: Խեղճ հարսը մըն հաց ա տուվալ օգուղին: Օգուղը դանչանք ա ըրալ, թա՛ մնհետ էլ թող թոշատ պաչեն: Հարսը, հախ Ասու, մեխկն ա եկալ, թուղացալ ա: Օգուղը պչիլիս, ըսկեսուրը նի ա մտալ տուն: Հարսը հմնչիլան ինգյալ ա թորենը: Ամնա Ըսու ծեռքին ա իլալ, թորենը ճիրավ լցվալ ա, հարսն էլ մըն կյոթթունկ ա տառալ, մնացալ գյոլումը: Համան էտ տեղիտ են ասում Թորնատալի: Շատ թորեննի կա՛ վերը ճրավ, վերն՝ անճուր:

15. (114) ՍԵՎ ԼԻՃ ԿԱՄ ՂԱՐԱ-ԳՅՈՒՐ⁹⁰

Ա.

Ժամանակին քառասուն գլխանի մի վիշապ եկել, խմել է այս լճի (Ղարագյոլ) ջրի կեսը, հետո պառկել, որ հանգստանա, մյուս կեսն էլ խմի, ցամաքեցնի: Աստծու հրամանով՝ սարերը մոտեցել են, վերցրել այդ լիճը, բարձրացրել, հասցրել մինչև երկինք, ազատելով վիշապից: Վիշապն այլևս չի կարողացել վերև բարձրանալ ջուր խմելու. ծարավել է, ճաքճքել, տրաքել, ցրիվ եկել չորս կողմը:

⁸⁷ Գտնվում է Գորիսի Քարահունջ գյուղի դիմաց (Ծ. Կ.):

⁸⁸ Գտնվում է Տաթևից Շինուհայր (Շընհեր) տանող ճանապարհին (Ծ. Կ.):

⁸⁹ Գտնվում է Գորիսից հարավ արևմուտք, երկու կիլոմետրի վրա, Մանիշակի կոչվող ձորի աջ կողմում: Բարձր բլուր է շրջապատված այգիներով (Ծ. Բ.):

⁹⁰ Գտնվում է Գորիս քաղաքից վերև Իշխլու (Իշխանասար) կոչված սարերի մեջ (Ծ. Կ.):

Բ. (115)

Այստեղ ապրում են ջրի խոզեր, շներ, ձիեր և մեծ-մեծ ձկներ: Սև լճում ապրում է նաև մի գեղեցիկ աղջիկ: Երբ արև է լինում նա դուրս է գալիս ջրի երեսը և խաղում է ալիքների հետ: Այս աղջիկն է, որ կաչելով լճի մեջ ընկած կենդանու ոտից, չի թողնում, որ նա դուրս գա ջրից:

16. (116) ԼԾԵՆ

Ասում են, թե երբ մոնղոլները Չար-Ղաթայի առաջնորդությամբ հասել են այս կողմերը, տեղացիները լեռների կատարներից քարե կարկուտ են թափել ձորում գտնվող թշամու վրա: Ժողովրդին խրախուսելու համար մենաստանում ապրող Ներսես քերթողը շարունակ կրկնել է՝ «Լցն, լցն...», և ինքն էլ քարեր է գլորել վերևից. Հետևելով Ներսես քերթողին՝ գյուղացիները եզներ են լծել քարքաշաններիին, քարե կույտեր են բերել, քարե հեղեղ են տեղացել թշամու վրա և չեն թողել, որ նա ոտք դնի գյուղը տանող արահետին: Իսկ Ներսես քերթողը շարունակել է կրկնել՝ «Լցն, լցն...»: Դրանից էլ, ասում են, գյուղի անունը մնացել է Լծեն:

17. (117) ՍՎԱՐԱՆՑ

Պատմում են, որ երբ Լենկ-Թեմուրն ուզում է նվաճել Հայաստանը, մի ծեր զինվոր նրան ասում է. «Ուր ուզում ես գնա, միայն Սյունիք չմտնես»:

— Ինչու՞, — զարմանում է Լենկ-Թեմուրը:

— Այստեղ ճամփա ու կածան բոլորը դեպի ժայռ են տանում, — պատասխանում է ծեր զինվորը: Նրանց տներն էլ քերծում են, բերդերը՝ ժայռերի գլխին, վանքերը նրանցից էլ բարձր: Ամպերը ցածր են նրանց օջախներից: Նրանց ոչ նետ կհասնի, ոչ սուր ու թուր:

— Լավ, — ասում է Լենկ-Թեմուրը, ես ամենից առաջ նրանց կնվաճեմ:

Եվ հարձակվում է Սյունիքի վրա: Կռվում է մեկ օր, հինգ օր, տասն օր... Սյունեցիները չեն հանձնվում: Ցերեկը ծուխ է բարձրանում նրանց օջախներից, գիշերը վառվում են նրանց կրակները: Լենկ-Թեմուրը խոստումներ է շոայում, երդումներ անում: Սյունեցիները չեն հանձնվում: Միայն մի գյուղի մարդիկ ուզում են հանձնվել: Լենկ-Թեմուրը խոստանում է նրանց սրի չքաշել: Գյուղի վարդապետը չի թողնում հանձնվեն: Ինչ անում, չի անում՝ չեն լսում: Հանձնվում են: Լենկ Թեմուրը նրանց քշում է մի դաշտ, ասում. «Ես խոստացա ձեզ սրի չքաշել: Ես խոսքիս տերն եմ: Բայց ես երդվել եմ ձեզ կենդանի չթողնել»: Եվ հրամայում է մի խանդակ (փոս) փորեն, թաղեն կենդանի: Այդպես էլ անում են: Վարդապետը լսում է այդ մասին, վերցնում է ծխամատյանը, գյուղի հին անունը ջնջում, տեղը գրում՝ Սև արանց շեն, այսինքն՝ սև մարդկանց, սևերես արարածների գյուղ: Եվ այդ օրվանից գյուղի հին անունը մոռացվում է, մնում է Սև արանց, որ հետագայում դառնում է Սվարանց:

18. (118) ՂՈՇՈՒՆ-ԴԱՇ⁹¹

Այս քարակոյտերի տակ թաղված են գորավարների, իսկ ուղղահայաց քարերի տակ՝ զինվորների դիակները: Դրա համար էլ այդ գերեզմանները կոչվում են Ղոշուն-Դաշ (Զորքի քար):

19. (119) ԲՈԼՈՒ ԿԱԼԸ⁹²

Դավիթ Բեկն ունեցել է Բոլի անունով մի հաղթանդամ և ուժեղ թիկնապահ: Նա գրպանում մեծ-մեծ քարեր է պահել, որոնցով սպանել է իրեն զայրացնողներին: Միայն Դավիթ Բեկին նա ծառայել է հլու-հնազանդ, կատարել նրա բոլոր ասածները: Երբ Բոլին Շահեր գյուղի բերդի գլխից քար է նետել, քարը հասել է մինչև Որոտան գետի ափը: Ամեն անգամ, երբ գետը 10-15 փթանոց քարեր է բերել իր հետ, Բոլին մեն-մենակ գրկել է այդ քարերը, բարձրացրել մինչև գյուղ և իրար վրա դնելով կալ է սարքել: Այդ կալն է ահա, որ կոչվում է Բոլու կալ:

20. (120) ԴԱՏ-ՄԵԼԻՔ⁹³

Ա.

Խնածախ գիւղի իշխան Մելիք Հայկազը չարասիրտ ու խստաբարո մարդ է եղել: Նա հանցավոր գյուղացիներին դրել է կողովի մեջ, փակել բերանը և գորել է մոտակա բարձր լեռան գագաթից: Գորվող գյուղացիների «դատ-մելիք» բացականչությունից լեռը ստացել է Դատ-Մելիք անունը:

Բ. (121)

Զանգեզուրում մի մելիք է լինում: Օր ու արև չի տալիս գյուղացիներին: Մի պատրվակ է փնտրում, որ դատ ու դատաստան տեսնի նրանց հետ: Դատն էլ անում է մի սարի գլխի, տեղն ու տեղն էլ պատժում: Մեղավորներին դնում են քթոցի մեջ, սարի գլխից գլորում ցած: Մի օր, երբ մելիքն էլի նստում է դատի, գյուղացիները կանչում են. «Դանդ ենք մելիք, դանդ, դանդ» ու հարձակվում են մելիքի ու նրա մարդկանց վրա: Որին սպանում են, որին էլ քշում սարերից դենը, կորցնում: Եվ ազատվում են մելիքից: Սարի անունն էլ մարդ կա՝ Դատ մելիք է ասում, այսինքն՝ որ մելիքն այնտեղ է դատ ու դատաստան արել, մարդ էլ կա՝ Դադ մելիք է ասում, այսինքն՝ որ մելիքից զզված, դադ եղած գյուղացիներն են նրան քշել այդ սարից:

⁹¹ Գտնվում են Միսիանի Ղարաքիլիսա գյուղի մոտ (Ծ. Կ.):

⁹² Գտնվում է Գորիսի շրջանի Շինուհայր գյուղում (Ծ. Կ.):

⁹³ Գտնվում է Գորիսի շրջանի Խնածախ գյուղի մոտ (Ծ. Բ.):

21. (122) ՆՎԱԳԱԾՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՀԱՅԻՐԸ

Էն ժամանակէն, որ Սուղումուն իմաստունը քարոզայ ա թա՛ արդար կացնք, օրենքը նշանց ա տրվալ՝ թամուզ ուրաց վարուցանքը թողալ ըն, տրվալ տաղերեն, ճրքնըվըրոթուն ըրալ: Աստվածոթունը ելալ ա մտածալ, տեսալ, որ ընտի, որ ըդուք ըն տրվալ սըրերեն, աշխարքես մարդն իվիլնալու չի, խարաբեքը լըցվոլու չի: Հրամայալ ա՛ Հոբեթն ան Սոբեթը մըն գոտնան ա եր կալալ, մընն ալ նաղարան, տյուս ըն եկալ մըն պեցուր սարու կլոխ: Հոբեթը տասներկու նամդա ա փչալ, Սոբեթն ալ նաղարեն թխալ ա: Էդ տասներկու նամդադ Էդ ժամանակեդ ինսանեն տուր ա եկալ, Ըստըծանա ըլալ, թարգ ըն ըրալ ճրքնըվըրոթունը, եկալ աշխարհք: Էդ ժըմընակաց ա գոտնան տուր եկած ինսանեն, հիբ որ փչում ըն, ըշտեդ ալ որ ընի, օգում ա տյուս կյա թըմաշա:

22. (123) ԴԱՐԲՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՀԱՅԻՐԸ

Դամրչուց կըլխավորը, ավալի սըվթա դամրչին Դավիթ մարգարեն ըլալ: Ինքը արդար ըլալ, արկաթը ծեռուք փրոնել ըլալ, կրակումը տըքըցնել, տնիլ ծնգանը երան թակել, ալ ոչ գյազ ըլալ, որ զընդան: Դավիթ մարգարեն մըն շագիրդ ըլալ պահում, մըն օր ինքը դյուքանան տյուս ա կյալիս, շագիրդը մնալիս ա մենակ: Մըն վախտ մըն շոն կյալիս ըստի կողքին նստում, ըռըշկի ոնները մկրատու մնան տընում իրուր երա, կլոխն ալ դնում ոններեն երան: Շագիրդը միտք ա անում, միտք անում, եր օնում են թահրավը ըրկաթու անա մըն գյազ շինում, մըն ալ մըն զընդան, գյազավը արկաթը փոնում տըքըցնում, հանում զընդանեն երան թակում: Դավիթ մարգարան կյալիս ա ծեռքը մեկնում, որ արկաթը հանե, ձեռքն Էրում ա, մըն ալ ա մեկնում, ալըհան Էրում ա, մնալիս ա սառած: Շագիրդին հըրցնում ա, թա՛ Էս խն՛ ըստի ա, շագիրդը նշանց ա տալիս գյազն ան զընդանը: Դավիթ մարգարան թողում ա տակը՝ տակ, կըլոխը՝ կլոխ, տյուս կյալիս քինում: Մհենգ գյազն ան զընդանը Էն վըխտան ա մնացած:

23. (124) ՆԱԽԿԻՆ ՀՅՈՒՄՆ

Ավալի այամեն դուլգյարը հինչ-որ տաշել ըլալ, տաշեղը ոսկի ըլալ տեռնալ, ըրուգունը հըվաքել ըլալ փեշկը տանել տոն ածել սանդուղը: Մըն օր տաշեղը փեշկումը քինիլիս Քրիստոս ջըհում ա, թա՛ ո՛ւստա, Էդ հինչ ա, թա՛ դե ըսկի՛, տաշեղ ա, տանում ըմ տընիք կրակեն Էրիք: Թա՛ չԷ՛, ախեր տաշեղու մնան չի, թա՛ չԷ՛, տաշեղ ա: Քրիստոս թա՛ բա՛լում, դե որ տու ինձ խաբալ ըս, քու խեր-բարաքյաթը լիա տաշեղումը մնա՛ անիս-անիս, տերտակ նստիս: Ուստան կյալիս ա տոն, սանդուղը պենում, որ ոսկեն ածե, տեսնում ա տաշեղ ա: Մհենգ Էդ օրաց տեսն ա տյուլգարեն աչքը լիանեն կընի տըշեղեն երան, ինքն ակ քիշեր-ցերեկ կանե, համա դե ոչ մաղեն տակեն կընի, ոչ մաղեն կըլխեն:

24. (125) ԷՇ

Աստված մի օր կանչում է կենդանիներին, որ խելք բաժանի: Ամեն կենդանի գալիս է բաժինը վերցնում: Բոլորից վերջը ներկայանում է էշը: Աստված տալիս է նրան իր մոտ մնացած մի փոքր կտոր խելքը:

Էշն ասում է. — Բա ես էս փոքր կտոր խելքով ինչ պիտի անեմ:

Վնաս չունի, — ասում է Աստված, — վաղը շուտ կգաս, ականջներ եմ բաժանելու:

Էշը հետևյալ օրը բոլորից շուտ է ներկայանում: Աստված մեծ-մեծ ականջներ է տալիս նրան: Դրա համար էլ էշի խելքը փոքր է, ականջները՝ մեծ:

(Գորիսի բարբառով) (126)

Աստոծ մըն օր կանչում ա զիմ հեյվաններին, վեր խելքը պիժանի: Աման հեյվան կյամ ա ուրան փայը ինք օնում, քյունում: Չիման վերջին կյամ ա էշը: Ըստըծու կոխկին էլ մըն թեքա լափ խրեկ խելք ա ինում, տամ ա իշին:

Էշն ասում ա. — Աստոծ, բա ես էս թիքյա խելքավս հոնց անեմ, շատ ա խրեկ:

Աստոծ ասում ա. — Վընաս չոնի, էքուց շուտ կիկյաս, ոնջուկնին եմ պիժիսիլու:

Էշը էքսի օրը շուտ ա կյամ, մեծ-մեծ ընջուկնի յա տամ, Աստոծ էշին: Ըտա հետի էլ իշին խելքը պակաս ա, ոնջուկնին մեծ-մեծ:

25. (127) ԿԱՏՈՒ

Կատուն Ըստըծու յայլուխն ա իլալ: Մըն օր Աստոծ ասալ ա. «Ա՛ կատու-յայլուխ, հինչ ես օգում, վեր քըզ հետի ինի»: Կատուն ասալ ա. «Ես օգում եմ, վըեր տընեթումը զիմ մարթ, խոխա, կնեկ կուտորվեմ, մընան մըն թաք պառավ, քու կընանեքը, վեր ոնդուք ճաշ ուտելիս ես ուրանց փայն օտեմ, տեսնան վեչ»: Ըտա հետի էլ Աստոծ ըջըղվալ ա, կատվին դրախտան տուս ըրալ, քիցալ երգիրը, համ էլ ասալ, թա՛ աման երկենող թող կլխին տա, փիշտ անի:

Հիշ գիդամ, համ էլ ասում են, թա Աստոծ մըն-մըն կատվին տանում ա էլլա քեթը սուրփում:

26. (128) ՉՂՋԻԿԸ

Չղջիկը վըեր մեղան ա կյալիս, հիշկա դուշերը մնում են զարմացած:

Չարդն ասում ա. — Ղուշի նման չի, բայց թևեր ոնի, — քիսում ա հրցնում, — հինչ էակ ես, քույրիկ:

— Ես քեզ նման դուշ եմ: Օգում ես էս սհաթըս թոնեմ բիդա երգիկքը:

Չղջիկը թոնում ա, մին ալ եր կյալիս ասում ա. — Հը՛, դո՛շ եմ, թան՛ չէ:

— Հա՛, տեսնում եմ, վըեր դուշ ես, — հաստատում ա չարդը, — դե վըեր դուշ ես, պիտի դուշերին թաքավերին հարկ տաս:

— Ես վրէշ մի հարկ տալ չեմ:

— Էն վախտը պիտի արծիվի ջողաբը տաս, — ծիտն ասում ա, — արծիվին վրեր հարկ չտաս, քեզ ընդունիլ չի մեր ցեղումը:

Չղջիկը տեսնում ա, վրեր թհենց ա, դուշերին անա հեռանում ա, քինում ա մկներին կոշտը:

Չղջիկն ասում ա. — Ես ծեր ախպերն եմ, դուշ չեմ:

Մի մոկուն ասում ա. — Թա վրեր մոկուն ես, մեր քշտին կարք կա. պետք ա մեր ցեղապետին հարկ տաս:

— Ես վրէշ մի հարկ տալ չեմ:

— Էն վախտը մեր մեծին ջողաբը պիտի տաս:

— Ինձ մեծ ու կուճի չի հարկավեր. կքինամ ինձ հետի ազադ ապրեմ:

Չղջիկը թնում ա քինում նումուտում պատին ծակը: Տիրեկը վախենում ա վրեր տյուս կյա, հունց վրեր իրիքնակը մեր ա մտնում, տյուս ա կյալիս: Թհենց ալ չղջիկը երթվալ ա, վրեր յաշումը վրէշ մինին հարկ չտա:

27. (129) ՉՂՋԻԿԸ

Մըկան թագավորը հոքմ ա ըրալ ալակոչկոչեն, ասալ. «Ա՛ հեյվան, տու որ մոկն ըս, պա ըշտնդ ըս կեդված, իսն չիս թավջի տամ»: Ալակոչկոչը եր ա կալալ թները պեց ըրալ, թա՛ ես իսն ըմ թավջի տալիս քեզ, մահում ես քեզ պըրտական ըմ, տեսնում չիս ըստութեր, ես դուշ ըմ, ես ըշտնդու մոկն ըմ:

Մկան թագավորը պիրում ա կիրում դուշին թագավորեն, թա՛ էս տեսակ մըն դուշ կա, իսն տու ընդունա թավջի չիս ինք օնում, ըռընց թավջի պըճըխտը-կերումը կեողուլակացած: Ղուշին թագավորը էս որ լսում ա, հոքմ ա անում, ալակոչկոչեն տանում ուրան կոշտը, թա ա դուշ, թա՛ որ դուշ ըս, մեր օրենքը իսն ըս կըրցնում, իսն չիս մեզ թավջի տալիս: Ալակոչկոչը կեռեքնին պեց ա անում, թա՛ ես մոկն ըմ, ես ըշտեղու դուշ ըմ, դուշին պա կեռեք կընի՛: Ղուշին թագավորը մնալիս ա մհաթալ, կըլխիվեր ելիլիս:

Էս թահրավը ալակոչկոչը ճոխտեն ալ խաբում ա, դյոչանը մհենգ ալ հարամ ընդի ջանը դինջ, մաղափ ապրում ա:

28. (130) ԿԱՉԱՂԱԿ

Կաչաղակը մարդուն բարեկամ է եղել, հասկացել է նրա լեզուն: Նա վաղօրոք իմացել է, թե ինչ է կատարվելու (տունը հյուր է գալու, դարիքից լուր է ստացվելու) և այդ մասին հայտնել է մարդուն: Մի անգամ կաչաղակն անգիտությամբ հանում է երեխայի աչքը: Մարդը գայրանալով տանից դուրս է անում կաչաղակին: Սա ընկնում է չոլերը, բայց չի մոռանում իր հին բարեկամությունը: Նորություն իմանալիս գալիս, նստում է մարդու տան պատին կամ ծառի ճյուղին և այնքան չըռթ-չըռթում, մինչև որ մեկը դուրս է գալիս տանից և շնորհակալություն է հայտնում կաչաղակին նրա բերած նոր լուրի համար, որից հետո կաչաղակը թռչում գնում է:

ՔՉԵՂԱԿԸ (131) **(Գորիսի բարբառով)**

Մըն վըխտի քչեղակը մատթին հինգեր ա իլալ, մատթի լուգու ա գիդացալ: Մատթն ա քչեղակը լավ ըխպերություն ընիլիս են իլալ: Հունց ա իլալ, քչեղակը մատթին խուխին աշկը չգիդալավ տուս ա կալալ: Հսմ, մըտաս ինգյավ, վեր ասեն, քչեղակը համան հինչ գիդալիս ա իլալ, մըն օր, էրկու օր առմ մարթին հայտնալ ա, թա՛ էս հինչ պանը ըսենց ա ինիլու, յա տոնը մատթ ա կյալու, յա զըրիբա խաբար ա կյալու: Քյասմա ասած, աման հինչ գիդացալ ա, համ էլ մատթին խաբար տուվալ: Հենա վեր անգիդոթկու մատթին խուխին աշկը տուս ա կալալ, մատն ըջըղվալ ա, քըչըղակին թակալ, տանան տուս ըրալ: Քչեղակը ինգյավ ա չոլերը, ամմա մինչևի մըհեկ էլ, վեր մատթին տանը մըն թագա խաբար ա կյալիս ունում, քչեղակը ինսափը կուրցըրալ չի, կյամ ա մատթին տանը պատին, յա ծառին ճըղինն եր կյամ, չըթաչըթում, դեզանը մընը տանան տուս ա կյամ, ասում. «Հսմ, գիդացինք, ա քչեղակ, խեր ինես»: Ընդանա ետը քչեղակը թըռնում ա, քյունում:

29. (132) ՉԸՓԸՐԾԱԿԻ

Ղուշին թագավորը մըն հետ հոքմ ա ըրալ, թա՛ դուշերեն որը որ շուտ կյա ուրան կոշտ հըսնե, չին ա տալու:

Ղըրըղուշը էս որ լալ ա, հղե ա ընգալ:

Մըն չըփըրծակե, դե չըփըրծակեն մըն կուզտի, անպետք դուշ ա, նեստա ա կացալ դըրըղուշին հաքվան, մտալ թենն տակը:

Ղըրըղուշը որ տեղ ա հըսալ, վեր ա եկալ, որ մընխըրեգ դինջանա, իրես-միրես լըվանա, քինի դուշերեն թագավորեն առաջը: Ինքը-ինքն ալ միտք ըլալ անում, թա՛ ալ հո՛ կկարե ուրանանա շուտ տեղ հըսնե, արխային ըլալ: Համա էն, որ չըփըրծակեն տեղ հըսնելի բաշտան դըրըղուշին հաքվան պուք ա եկալ, քեցալ թագավորեն ըմըշկին ոնը կացալ: Թագավորը ըտուր երկու չին ա տալիս, որ էն կուզտի տեղավը ըտի մեծ հընար ա նշանց տվալ:

Մհենգ չըփըրծակուն ճեխտ ըսերեն ալ սիպտակ նշան կա. էդ դուշին թագավորեն տված երկու չինն ա:

30. (133) ՀԱՎ

Մըն հետ հինչ-որ դուշ-դանադ կան, թուփ ըն կյալիս, մըսըլիաթ անում, թա՛ թա՛ որ Աստված աճողե, էգուց կթոնիք քինիք փըլան տեղը: Հավը եր ա օնում, թա՛ Աստըծեն գյորա հինչ կան, օգում ա աճողե, օգում ա՛ աճողե ոչ, ես թըռնելու ըմ, քինիմ:

Քըշըհանը օման եր ըն կենում, թըրնեն թափ տալիս, թըռնում, քինում, համա էն, որ հավը հարչանք չալիշ ա կյալիս, թըվերեն անում, կարում չի տափան պըրցրանա: Աստված ընդուր ուրան հըմբարդությունեն հետե ըտի պատժալ ա: Մհենգ էն օրաց տեսն ալ հավը ալ կարում չի թըռնե, թա՛ չէ ավալ նման դուշու ման ինքն ալ ըլալ թոնում:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. (134) ԳԱՎԱԶԱՆ-ՍՅՈՒՆ

Ա.

Առաջները, արեղային վարդապետական գավազան տալու ժամանակ, եպիսկոպոսը պատարագելուց հետո հանդիսավոր կերպով դուրս էր գալիս տաճարից և երեք անգամ խունկ ծխում այս գավազան-սյան առաջ: Եթե արեղան արժանի էր վարդապետական գավազանի՝ գավազան-սյունը շարժվում էր, իսկ եթե ոչ՝ մնում էր անշարժ: Դրա համեմատ էլ վարվում էր եպիսկոպոսը:

Բ. (135)

Լանկթամուրը կամենալով այս սյուն-գավազանը հիմնովին կործանել՝ հրամայել է տասն գույգ գումեշ լծել, և նրանց լծերից գութանի փոկով կապել սյուն-գավազանը: Երբ գումեշները սկսել են քաշել՝ փոկը կտրվել է, բոլոր գումեշները ձորն են թափվել, իսկ սյանը ոչ մի վնաս չի հասել: Այս «կաղ դևը» հրամայել է, որ վանքի մեջ էլ փայտ դարսեն, վառեն, որպեսզի վանքն էլ այրվի: Կրակը վառել են զանգակատան տակ, և ահա՛ թե ինչու այդ օրից սկսած Տաթևի զանգակները այլ ևս լավ ձայ չեն հանում⁹⁴:

2. (136) ՀՈՎՀԱՆ ՈՐՈՏՆԵՑՈՒ ԳԵՐԵԶՄԱՆԸ

Հովհան Որոտնեցին կամենալով իր գերեզմանը անհայտ պահել՝ մեռնելիս պատվիրել է, որ իր կողքին կաթսայով կաթ, մյուսին գինի թաղեն: Ուստի և այժմ, երբ Սողոմոնի են նայում՝ որպեսզի նրա գերեզմանը գտնեն, տեսնում են, որ նա թաղված է Կարմիր ու Սպիտակ ծովերի մեջ և չեն կարողանում գտնել:

(Գորիսի բարբառով) (137)

Մինչևի մրհեկ էլ Օհան Որոտնեցու կերեզմանին տեղը գյուղող չկա: Ասում են, Որոտնեցին թաղված ա Սևնա Միպտակ ծովերին դաթումը: Սևնա Միպտակ ծովերն էլ մեծ են, ուրուրանա հեռու, հո՛ գիտա, թա ըշտեղ են:

Էտ էլ ընտրա հետի են ասում, վեր Օհան Որոտնեցին մոնիլից առաջ վա-սյաթ ա ըրալ, վեր ուրան կերեզմանումը մըն կուպրուն կարմիր կինի տինեն կըլ-խըտակին, մըն կուպրուն էլ սիպտակ կինի տինեն վընտերին տակին:

Թըհենց էլ ըրալ են, ըտա հետի էլ ասում են, թա Օհան Որոտնեցին հենա Սրնա Միպտակ ծովերին միջին թաղած: Ինքը ուզացալ չի, վեր ուրան կերեզմանին տեղը գիղան, վըխժալ ա, թա հայերը կկյան վըսկըռնին կիրիզմանան տուս օնեն:

⁹⁴ Արքայիկն այս տարբերակը վերցրել է Լեոյի «Իմ հիշատակարանը» (եր. 135) գրքից (Ծ. Կ.):

3. (138) ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ԱՌԱՔՅԱԼ

Բարդուղիմեոս առաքյալը Պարսկաստանից վերադառնալիս իր աշակերտների հետ գալիս է Ատրպատականով և անցնելով Երասխ գետը՝ մտնում է Սիսականի սահմանները, սկսում քարոզել Որդվատ գյուղում, Արևիք գավառում, Բաղքում և Գողթնում: Այս սուրբ առաքյալը կառուցում է եկեղեցի Գողթնի արևմտյան ծայրամասում, մի ժայռի վրա, իրենց կացարանի գրաված տեղում: Նրա անունը կոչեցին Տյառնընդառաջ և այնտեղ մեծամեծ հրաշքներ գործեցին: Քանի որ Որդվատ գյուղում վսասակար է ջուրը, որ ամեն տարի ոռոգում էր բոլոր բոլոր դաշտերն ու այգիները, աղոթեցին ու հանկարծակի խափանեցին այդ ջուրը, որի տեղը դեռ մինչև այսօր երևում է:

4. (139) ՇԱՂԱՏԻ ԵԿԵՂԵՑԻ

Գովելի և քաջ երիտասարդ Բաբիկը, որ իր հայրենի ժաանգությանը տեր դառնալուց հետո եկնում է որս անելու Սյունյաց որսատուն ու որսատատ վայրերի լեռներում, ուրախանալու և զվարճանալու սովոր տեսարաններով՝ խնջույքներով ու խրախճանքներով, նաև տեսնելու գավառների որպիսությունը՝ իր իշխանության առաջին տարում: Եվ նա, այդպես առաջ անցնելով, տեսավ այս սիրելի աշխարհը ողորմելի տեսքով՝ մարդ ու անասունից թափուր, գեղեցիկ և հարմարավոր ավաններն ու շեները, գյուղերն ու ագարակները հիմնակործան արված, ամբողջը ոչնչացված ու ավերակ դարձված:

Այս ողբալի պատկերները տեսնելուց հետո անցնում է Ծղուկ գավառը, հասնում է Շաղատ բնակելի ավանը, դիմում է դեպի արևելյան կողմի հանդիպակաց մի բլուրը: Հենց այդ ժամանակ բլրից մի եղջերու է դուրս գալիս և խուճապի մատնվելով փախչում է՝ իրեն զցելով եկեղեցաբլուրը: Բաբիկը, արագաքայլ ձիով հետապնդելով, եղջերուի հետևից բարձրանում է եկեղեցաբլուրը: Եվ այն ժամանակ ձիու ոտքերը խրվում են բլրի մեջ, իսկ եղջերուն բլրում աներևութանում է: Սյունյաց տեր Բաբիկը, ձիուց իջնելով եկեղեցաբլրի վրա, հրամայում է բազմությանը ձիու խրված ոտքեր դուրս քաշել բլրից: Եվ երբ Սյունյաց տեր Բաբիկի շքախմբի բազմությունը ուժգնորեն դուրս է քաշում, կրկին սաստիկ զարմանք ու ահ է համակում ամբողջ բազմությանը, որովհետև ձիու ոտնատեղերից անուշահոտություն է բուրում և գրեթե ամբողջ գավառաձորը լցնում: Սյունյաց տեր Բաբիկը հրամայում է բազմությանը՝ քանդել բլրի հողը: Եվ քանդելով հողը՝ նրա տակ տեսնում են քարակուփ չքնադաշեն եկեղեցի, որպիսի հրաշալի ճարտարապետական կառուցվածք ուրիշ ոչ մի տեղ չկար. գմբեթն ու խորանները քառակողմ էին, միահարկ, մեկ ընդհանուր տանիքով և ոչ թե առանձին, ինչպես ուրիշ քարակերտ եկեղեցիներն են:

Եվ բացելով Ստեփանոս Նախավկայի սուրբ եկեղեցու դռները՝ տեսնում են բազմաքանակ ոսկե ու արծաթե խաչեր, բազում պատվիրանագրքեր, Սյունիքի բոլոր եկեղեցիների ուրիշ սպասքներ՝ յուրաքանչյուրը իր գյուղաքաղաքի գրությամբ, ինչպես նաև սուրբ ու պատվական նահատակների անթիվ և անհամար նշխարները, որոնք մնացել էին եկեղեցու պատերի մեջ:

Շաղատի եկեղեցու այս հայտնությունը և սրբությունների գյուտը եղան Հո-
ռի ամսի մեկի օրը: Եվ այն ժամանակ ամեն տարի Սյունյաց տերն ու եպիսկոպո-
սը հանդես գումարելով՝ տոնախմբությամբ նշում էին սուրբ եկեղեցու երևման
օրը՝ որպես ամբողջ Սյունյաց աշխարհի մայր եկեղեցու օր:

5. (140) ԿԱՊԱՆԻ ԱՎԵՐՈՒՄՆ ՈՒ ԲԱՂԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Այն տարում, երբ հայոց հինգ հարյուր հիսուներկու թվականն էր (1103թ.),
եղավ Կապան գավառի և Բաղաց ամուր աշխարհի ավերման ու նրանց թագա-
վորների և իշխանների տիրապետության վերացման սկիզբը, որի մասին կար-
դացիինք ու իմացանք Սյունյաց եպիսկոպոս Տեր-Ստեփանոսի թղթից, որ գրել էր
հոյակապ Ասի քաղաքում՝ Մխիթար քահանայի՝ քաղաքի ավագ երեցի և սուրբ
կաթողիկեի փակակալի խնդրանքով:

Մեծ կոտորածի պատճառն էլ այս էր. Մենեքերիմ թագավորը գնում է Պարս-
կաստանի մայրաքաղաք Սպահան՝ Մելիքշահ սուլթանին տեսակցության: Հան-
դիպելով նրան՝ բարձրագույն փառքով մեծարվում է ու նստեցվում վերևի տե-
ղում: Սուլթանը խիստ սիրված մի ծառա ուներ՝ Չորթման անունով, որը նրա
մոտ մատովակություն էր անում: Ճաշի ժամանակ սա գինով խիստ նեղում է
Մենեքերիմ թագավորին, որը թեև շատ պարզներ է խոստանում նրան, բայց
նա ուշադրություն չի դարձնում: Ապա խոստանում է Չորթմանին տալ իր դուստ-
րը, որի համար, իրենց սովորության համաձայն, Չորթմանը հանգույց է դնում
Մենեքերիմի գոտու վրա՝ որպես նշան այդ խոստման, ու տանում, ցույց է տալիս
սուլթանին: Դրանից հետո կատակով ասված այն խոսքերը Չորթմանը խորա-
մանկությամբ պահում էր իր մտքում՝ խժողություն առաջ բերելու նպատակով:
Ապա հասնելով բարձր դիրքի և իշխանության՝ Մենեքերիմից պահանջում է
խոստացած աղջիկը: Իսկ նա խիստ խոսքերով է պատասխանում՝ ծաղրելով
նրա պահանջը: Այն ժամանակ, երբ Չորթմանն իմանում է թագավորի կարծիքը,
ըստ որի իր պահանջի կատարումն անհնարին էր, սկսում է դաժան հալածանք-
ներով ու տեսակ-տեսակ նեղություններով կեղեքել և ավերել նրա ամբողջ տե-
րությունը:

Ահա հենց սա եղավ այս աշխարհի ավերման սիզբը, և այդ թագավորությունն
օրըստօրե սկսեց թուլանալ ու ապա վերացավ: Այն ուներ իրեն ենթակա քառուսե-
ներեք բերդ, որոնցից տասներկուսն անվանի էին, քառասունութ վանք, հազար
ութ գյուղ, մայրաքաղաքն էլ Կապանն էր: Դա Բաղքի թագավորությունն էր:

6. (141) ՎԱՐԹԵՐԸ ՊՈՒՔ ՉԻ ՏԱՔ

Լենկ-Թեմուրը ուրան գորքավը կյամա հըսնում պարսիկներին երգիրը:
Ջորք, հինչ գո֊րք, թիվ կա ըստղերին, թիվ չկա Լենկ-Թեմուրին գորքին: Պար-
սիկ մեծ բանաստեղծ Հաֆեզը աղ ու հացավ և հպատակության խնդրանքավ
տյուս ա կյամ Լենկ-Թեմուրին առաջը:

Լենկ-Թեմուրը ասում ա .— Տու հույ՛ նս:

— Ես Հաֆիզն եմ:

— Ես հունց գիդանմ, վեր տո՛ւ Հաֆիզն ես:

Հաֆիզն ասում ա. — Կանչի թոռանըս, հըլըհարցում ըրա, իմ կիրածնես անկյիր գյուղում ա, քըզետե կասե՛ս»:

Հաֆեզի թոռնիկը՝ շատ փոքրիկ ու սիրուն մի աղջնակ, կանգնում է և հուզմունքով սկսում արտասանել. «Վարթերը պուք չի տաք...»:

Լենկ Թեմուրը եշում ա, եշում, սերտը կըկըղում ա, ասում ա. — Լյավ Հաֆիզ, ես ծեր քըղաքեն վասս չեմ տալ: Թ՛ ես էս ըշխարքես մեծ տերն ու տիրակալն եմ, տո՛ւ էլ մեծ բանաստեղծն ես, Շիրազը քեզ եմ բաշխում:

7. (142) ԽԱԶԱԼ ԿԱՊԻ ԱՂԲՅՈՒՐԸ⁹⁵

Սա գուլալ ու հորդ մի աղբյուր է, մոտը կա «Թաք ծառ» կոչված մի չինարի, որ սուրբ է համարվում: Իշխանասարի ստորոտները գնացող տափաստանի քոչվորները իրենց քոչերով, աղբյուրի ջրի հույսով, միշտ եկել են այս կողմերը՝ չորացրել արոտները և թալանել շրջակա բնակիչներին: Քոչվորների ոտքն իրենց կողմերից կտրելու համար՝ Խոտ, Շինուհայր և Քարահունջ գյուղերի բնակիչները հավաքել են իրենց ոչխարների մի տարվա խուզած բուրդը և նրանով խցել են աղբյուրի ակը: Ջրկվելով ջրից տափաստանից՝ քոչվորները այլևս չեն եկել այս կողմերը և ժողովուրդն ազատվել է նրանց ասպատակությունից:

8. (143) ՅԱՅՋԻ⁹⁶

Թշնամիների հարձակման ժամանակ Որոտանի ձորի բնակիչները ամրանում են Լծեն գյուղի ժայռերում: Երկար ամիսներ տևող պաշարման ընթացքում սպառվում է պաշարվածների աղը: Մի երիտասարդ որսորդ հանձն է առնում գնալ Շենհեր՝ աղի: Անտառի մեջ հանդիպում է Յայջիկ անունով կիսավայրենի մի աղջկա, որը տեսնելով որսորդին՝ փախչում է: Աղը Լծեն հասցնելուց հետո, որսորդը նորից գնում է Յայջիկի հետևից: Գտնելով նրան ամուսնանում է հետը և կիրճի խորքից բարձրանալով լեռան կատարը, տուն է հիմնում, ընտանիք կազմում: Ժամանակ անց, որսորդը նեղվելով թշնամիներից, գերդաստանով իջնում է ձորը, թաքնվում անմատչելի տեղերում և այնտեղ գյուղ հիմնում, որը անտառաբնակ աղջկա անունով կոչվում է Յայջի:

9. (144) ԴԱՎԻԹ-ԲԵԿԻ ԳԵՐԵԶՄԱՆ⁹⁷

Երբ Դավիթ-բեկը հիվանդանում ու մեռնում է, Տաթևի վանքից հատուկ նրա համար գալիս է ծերունի Հովակիմ եպիսկոպոսը (Պապ կոչված) և մեծ հան-

⁹⁵ Խոտ գյուղի ճանապարհին (Ծ. Կ.):

⁹⁶ Գորիսի շրջանի այժմյան Հարժիս գյուղը (Ծ. Կ.):

⁹⁷ Գտնվում է Ղափանի Հալիձոր գյուղի եկեղեցու գավթում (Ծ. Կ.):

դիսով թաղում նրան Հալիձորի եկեղեցու գավթում: Ասում են, թե Դավիթ-բեկի գերեզմանին միայն մի ծաղիկ կա քանդակված և այն էլ՝ երեսով դեպի հորը, որպեսզի թշնամիները չկարողանան ճանաչել և ոսկորները հանել:

10. (145) ՇՈՒՆ-ՖՐԱՆԳՅՈՒԼԻ ԳԵՐԵԶՄԱՆ⁹⁸

Մելիք-Ֆրանգյուլը, որ հայտնի է Շուն-Ֆրանգյուլ անունով, իբրև ուրացող ու դավաճան, մահվանից հետո թաղվում է հասարակաց գերեզմանոցից հեռու, առանձին: Անցորդները մինչև այսօր էլ իրենց պարտքն են համարում մոտենալ նրա գերեզմանին և թքել վրան:

11. (146) ԱՆՁՆԱԶՈՇ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ⁹⁹

Նախիջևանի խանի զինվորները երկու խմբի բաժանված հարձակվում են Քարաշեն և Քարահունջ գյուղերի վրա: Քարաշենը շուտով անձնատուր է լինում: Ասպատակողները թալանում են գյուղը և գերի տանում երիտասարդներին: Քարահունջը պաշտպանվում է. գյուղացիք ապաստանում են եկեղեցում և սեղանի վեմ քարով ծածկում են դուռը: Խանի զինվորները փորձում են քանդել եկեղեցին, բայց չեն կարողանում: Բերում են դաշտում բռնված երկու քարահունջեցի եղբայրների, որոնց հայրը նույնպես գտնվում էր եկեղեցում, և ստիպում են նրանց աղաչել իրենց հորը, որպեսզի նա բաց անի եկեղեցու դուռը՝ խոստանալով խնայել թե՛ եղբայրների և թե՛ նրանց հոր կյանքը: Եղբայրները թուրքերեն լեզվով աղաչում են հորը բաց անել դուռը, իսկ հայերեն՝ հակառակն են պնդում: Տեսնելով, որ եկեղեցու դուռը չի բացվում, խանի հրոսակները իրենց սրերը դնում են եղբայրների վզին և կանչում են նրանց հորը, որ ազատի զավակներին: Սակայն, հայրը ևս չի բացում եկեղեցու դուռը և, արցունքներ թափելով, զոհաբերում է հարազատ զավակներին:

12. (147) ԱՂՈՒԳԻԻ ՄԱՀԱՐՁԱՆԸ¹⁰⁰

Պատմում են, որ ժամանակին պարսից մարզպանը իր մոտ է կանչում Սյունյաց երեք իշխանների, որպեսզի ձերբակալի նրանց: Կռահելով մարզպանի միտքը՝ իշխանները չեն ներկայանում: Պարսից մարզպանը մեծ զորքով հասնում է Աղուղի: Հայերը հաղթում են, բայց կովի դաշտում ընկնում են Սյունյաց երեք քաջ իշխանները: Նրանց հիշատակը հավերժացնելու համար աղուղցիները մի դամբարան են կառուցում, ուր ամփոփում են զոհված իշխանների աճյունները, իսկ դամբարանի վրա էլ կանգնեցնում են աշտարակաձև մի գեղեցիկ մահարձան:

⁹⁸ Գտնվում է Ղափանում (Ծ. Կ.):

⁹⁹ Գտնվում է Գորիսի շրջանի Քարահունջ գյուղի եկեղեցու դռանը (Ծ. Կ.):

¹⁰⁰ Գտնվում է Սիսիանի Աղուղի գյուղի մոտ:

13. (148) ԴԱՎԻԹ ԲԵԿ

Ա.

Մելիք Փռանգյուլը մին ջահել, սիրուն աղջիկ և ունենում, էտ աղջկանտ հեռը տամ ա Մեհտի Ղուլի խանին, որ խանին աչքը ուրան վրա քաղցր ինի:

Խաբարը (լուր) գնում ա հասնում Դավիթ Բեկին: Ասում են Դավիթ Բեկ, բա ասիլ չես, թե էտ մոտտատ Մելիք Փռանգյուլը իրան գյոզալ աղջիկը տվել ա քավթառ Մեհտի Ղուլի խանին:

Դավիթ Բեկը ոտը տափով ա տալիս, ձին նիհ ա ելնում, իրան թիկնապահների հետ գալիս ա Արծրվանիկ, որ իրան աչքովը տեսնա, անկաճովը լըսի:

Գալիս ա Մելիք Փռանգյուլի դռանը վեր ա գալիս, կանչում Փռանգյուլին տանից դուրս, ասում. — Աղջիկտ ո՞ր ա.

Դե՛, բանը բանից անցկացած ա լինում, կարա՛մ էլ Փռանգյուլը ասի՛ չէ: Ընկնում ա Դավիթ Բեկի ոտները, թե՛ մի դալաթ ա արել եմ, էս անգամ ինձ բախշի:

Դավիթ Բեկն ասում ա. — Որ հիմի աղջկանդ ես ծախել, էքուց էլ հավատդ կը ծախես, էլ օր էլ՝ ինձ:

Հրամայում ա՛ Մելիք Փռանգյուլին կապում են մի գիժ ձիու պոչից ու բաց թողնում...

Բ. (149)

Դավիթ Բեկը պաշարված է եղել Հալիճորի բերդում. պարսից շահը հազար ու մի հնար է մտածել ու չի կարողացել բերդը գրավի: Չորս ձիու քառասուն օր ծարավ է պահել, հետո բաց թողել բերդի կողմերը ման գան. ասել է՝ որտեղ որ խրխնջան, ոտները գետնին խփեն, քանդեն, ուրեմն իմացեք, որ ջուրն էս տեղից էլ գետնի տակով գնում է բերդի կողմը: Էդպես էլ արել են: Ձիերը երբ որ լսել են գետնի տակից փողրակների միջով վազող ջրի ձենը, խրխնջացել են ու սկսել ոտներով քանդել գետինը: Բաց են արել ձիերի քանդած տեղը, ջարդել թրծած փողրակները, ջուրը կտրել և Դավիթ Բեկի գորքերին ծարավ թողել:

Գ. (150)

Դավիթ Բեկը, որ կռիվ է գնում Օրդուվարի վրա, հաղթելուց հետո հրամայում է, որ իր զինվորները թալանեն բոլոր հարուստ մահմեդականներին: Դե՛ թալան է էլի, մի երկու անխիղճ զինվորներ մի խեղճի էլ են թալանում: Տավարը, ոչխարը որ բերում են բեկի առաջը, բեկը նայում է տեսնում, մի լղար կով էլ կա, կեղտոտ քնձոտած, ասում է՛ էս կովը հարուստի չի, ո՞ր խեղճին էք թալանել, ասացե՛ք: Վախից վիզ չեն առնում, Դավիթ Բեկը Դալի Քեշիշին (Տեր-Ավետիս) հրամայում է, որ կովատիրոջը ճարեն: Կովը քաղաքումը ման են ածում, որ տերը հայտնվի: Դուրս է գալիս մի աղքատ թուրք, յոթ երեխայի տեր, անունն էլ՝ Ալի: Նրան բերում են բեկի կողքը: Դավիթ Բեկը հրամայում է պինդ թակել կովը խլողներին և ասում է. «Ով որ սրանից հետո դիպչի աղքատի ունեցած-չունեցածին, գլուխը կը կտրեն»: Հետո էլ Ալուն ձի, կով, ոչխար փող-բան է տալիս, թե՛

գնա, քեզ համար ապրի: Ալին օրհնում է Դավիթ Բեկին և ուրախ-ուրախ հեռանում: Ասում են, թե դրանից հետո Դավիթ բեկի մարդիկը ձեռք չեն տալիս աղքատներին, ուզում է հայ լինի, թուրք, թե՛ ղզլբաշ:

14. (151) ՏԱՎԻԹ ԲԵԳԻՆ ՆԱՂԼԸ

Մեհտի Ղուլի խանը Զանգազուրումը նստած խանությունը ընկիլիս և իննում: Մըն օր Իրանին դուրան մը մոլլա յա կյամ, թա՛ «Մեհտի Ղուլի խանն ապրած կենա, ինձ մըն իրավունք տո, քինամ սաղ Ղարաբաղին, մըն էլ Զանգազուրին շիներքումը մեշխտնի շինեմ, եղցեքն էլ քանդեմ»: Խանը համ իրավունք և տամ, համ էլ մըն իրեք դաշաղ, թա՛ քինա:

Մոլլան իննցյում և շեներքը, վեր ուրան ասածն անի, աման տեղ էլ ասում և. «Քրիստոսն Աստված չի, Աստոծը Փեղամբարն և»:

Ղըփանին Տավիթ Բեգը էս պանս լըսում և, շատ և ըջըղվում, իւրան քրոասուն դալուներին միջին մըն Թնուլի Արզուման և իննում:

Ասում և. — Արզուման, յեր կաց քինա էն մոլլին ճարի պեր իմ կոխկս:

Տավիթ Բեգն էլ ուրան սաղաթնին և իննում, Արզումանը մըն քանի հոքի նըհետը յեր և օնում, քյունում: Ըստեղ-ընդեղ, իստոնրանա, ինդոնրանա հըրցընիլավ, Ղըփանան դիբա Բնրգոնշաթ քինացող մըն ճընհապա կա, էն ճընհըպին յիրան էլ մըն Ցեխի ծոր անումավ դիք կա, էս դիքումս Թնուլի Արզումանը մոլլին ճարում և, էն դըզըղներին կուտորում և, մոլլին պոնրում Տավիթ Բեգին կոխկը:

Տավիթ Բեգը, վեր պանին տըղըկանում և, ասում և. — Ա՛ մոլլա, ըշխարքումս քանի՞ աստոծ կա:

Մոլլան ասում և. — Թաք մընը՝ Փեղամբարը:

Տավիթ Բեգը խանչալը տուս և օնում, թա՛ սաստ կտրի՛, անհավանտ, թաշնա փորտ յեր կածեմ, ըշխարքումս Քրիստոսն և աստոծ, Քրիստոսն և աստոծ: Ենդան էլ հրամայում և մոլլին, թա իրեք հետ կրկնի՛ Քրիստոսն և աստոծ:

Մոլլին ճարը կտրում և, իրեք հետ իւրոնր յիրա ասում և. — Քրիստոսն և աստոծ, Քրիստոսն և աստոծ, Քրիստոսն և աստոծ:

Ենդան էլ Տավիթ Բեգն ասում և. «Մըհեկա տենը թըհենց կասես», համ էլ հրամայում և, մոլլին ոնջակին մընը կըտրում են, մըն թղտի մեշ փըթաթում, ծեռքը տամ, թատե ինամ, էլ էս դուլերիս յուրովաս վեշ:

Մոլլան կյամ և Մեհտի Ղուլի խանին նաղլն ասում, թա՛ սըհենց, սըհենց:

Մեհտի Ղուլի խանը հըրցընում և, թա՛ յանի տու քու պիրանովը ըսեցիր Քրիստոսն աստոծ ան:

Մոլլան ասում և. — Հան, Մեհտի Ղուլի խան, իրեք հետ ըսեցի:

Մեհտի Ղուլի խանն ասում և. — Չոռ ու ցավ ըրիր, բա տու հոնց էտ պանըտ ըսեցիր:

Մոլլան ասում և. — Խանին կյուոխն ապրի, վեր տու Քրիստոսին, լըհա ուրան էլ՝ Տավիթ Բեգին էլ կասիս, վոր աստոծ և:

15. (152) ՄԽԻԹԱՐ ՍՊԱՐԱՊԵՏԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դադալունց պեռթը Տավիթ Բեզն ա շինալ: Շատ լավ պեռթ ա իլալ, տեղն էլ շատ պենդոտ, վեր աշխարք էլ ուրուր կյա, կարալ չէր էն պեռթին քար աներ: Տավիթ Բեզը նեղն ինգյած վախտը Հալուծորա պեռթը թողեր, կյար դադալունց պեռթունը կենար:

Հենա վեր Տավիթ Բեզը մեռնում ա, ուրան տեղակալը տառնում ա Մխիթար Սպարապետը, ամնա էս Տավիթ Բեզին վեչ խելքն ա ունենում, վեչ էլ քաջությունը: Ջանգյազուրի մելիքները ցրվում են, Նախճավանի Միրզալի փաշան կյալիս ա Ջանգյուզուրը վեր օնում, ինքն էլ Տըթևու վանքումն ա նստում:

Մըն տարի, տարուկես անց ա կենում, ամնա փաշան կարում չի Մխիթար ըՍպարապետին փըռնի: Վրջը հայտարարություն ա տամ, թա՛ հու վեր Մխիթար Սպարապետին կյուլխը պիրի, ընդան համ քաշավը մըն վեսկի կտամ, համ էլ կնշանակեմ Խնձորեսկու մելիք:

Մխիթար ըՍպարապետին մըն անխիղճ, անկեռիք թիգնապահ ա ինում: Քիշերը ըսպարապետին քոն իլած վախտը խանչալը սուրմիշ ա անում, ըսպարապետին կյուլխը կտրում, քիցում մըն միշոկի մեջ, տանում Տաթև, տամ Միրզալի փաշին, թա՛ փաշան ապրած կենա, Մխիթար ըՍպարապետին կյուլխը պերալ են:

Փաշան ասում ա.—Հա՛, պերալ ես, շատ լավ ես ըրալ, ապրես, վարձտ կստանաս:

Ետո կանչում ա տահիճին, թա՛ տարեք էս ավագակին կյուլխը կտրեցեք, սա վեր ուրան հայ քրիստոնյա խազայինին կյուլխը կտրալ ա, մերը կկտրի, լըհա կկտրի:

Տահիճնին տանում են էտ դավաճանիտ սպանում, լեշը Տըթևու քերծավը քյուցում տակը: Մխիթար ըՍպարապետին մարմինն էլ տանում են Խնձորեսկու անապատումը թաղում: Մեծ քար կա քիցած յիրան, քարին յիրան կիրած ա¹⁰¹.

«Այս է տապան ի հանգստյա,
Իջեալ մարմնով ի գերեզմայա,
Սա Մխիթար, մեծ անունվ,
Սորա ուներ իշխանություն:
Ով որ առնի ըզսա հիշման,
Արքայության լինի արժան...»

¹⁰¹ Մխիթար Սպարապետի գերեզմանաքարին գրած վերոգրյալ տապանագիրը անձամբ կարդացել, ստուգել են ինքս (Ծ. Բ.):

ԿՐՈՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. (153) ՔՐԻՍՏՈՍ՝ ՆԵՐԿԱՐԱՐԻ ԱՇԱԿԵՐՏ

Քրիստոս քեցալ ա մըն ներկարարու դունլոդ արալ: Մընհետ ըրուգունը, որ գանգը տվալ ըն, ուստան քեցալ ա ժամ, Քրիստոսեն ալ ասալ՝ թիլը լըվանա, թակե-թակե դոչկանը ուրան կյալը: Դոչանը ժըմըտեղիա կյալը, Քրիստոս լվանում ա, տանումնի տալիս կըրասեն մաչը, կըրըսխատնալ խատնում: Ուստան կյալիս ա, թա՛ պա հինչ ըս ըրալ թիլը, թա՛ տարալ ըմ նի տվալ կըրասեն մաչը: Կըզնըվում ա, քինում կըրըսխատնին եր օնում, հետան ընգնում, քմական որ պահ ա տալիս, քինում ա վեղումը դարիս ընում: Քրիստոս խաչակնքում ա, կըրըսխատնին կընանչում ա: Ուստան վանչ-վանչ ընելալ քինում ա, թա՛ թիլս խարաբ ա տեռալ: Որ կըրասան տյուս տա, տեսնում ա, որ թիլերը օման ալ ուրան օգածը ըռանգավը ներկված ըն՝ կյարմուրը ճոկ, տեղենը ճոկ, կանաչը ճոկ: Ուստան կլխու ա ընգնում, որ էն Քրիստոս ըլալ, թա՛ ես մեղայ Աստծու, էն Քրիստոս ըլալ, ես ճընընչեցալ չիմ: Մըն կըլխեն ա թխում, մըն ծընգանը, ալ ըշտեղ, պենը պենան ընցած ա ընում. ալ Քրիստոս ա ետ տըռնալոմ:

2. (154) ՔՐԻՍՏՈՍ՝ ԴՈՒԼԳԱՐԻ ԱՇԱԿԵՐՏ

Նըրկարարեն կշտան Քրիստոս ահետս քինում ա դուլգարու մոտ, դուլգարեն մըն ժուկ ծառայում ա: Մըն հետ սրահ ըն ըրալ շինում: Ուստան ըրուգունը ժամու վախտ մըն կերան ա նշանց տալիս, երան խազում, թա՛ ըստեղան կտրե, ալ օրիշ պեն չիս անել: Քրիստոս գիդալալ ըստեն ասած տեղը թողում ա, կարճ կտրում, հանց անում, որ հըսնե, ոչ. դե ալլըհան ուրան ձեռքալս ա ընցնոյո: Ուստան ժըմըտեղան կյալիս ա տեսնում, որ ուրան ասած տեղան թողած ա, հանց կտրած, որ ալ ամալ կիվոդ չի: Կզնվում ա, թա՛ հիմար, ես ըստեղաս ըմ ըլալ ասած, որ կտրալ ըս կըրճըցրալ: Թա՛ դե ո՛ստա, հինչ կան որ, կարուղըք ըրգընցնիք, մեր ձեռքեն չի՛, համ մըն խրեզ ծիք կտաք: Ուստան ծըծաղում ա, ուրան մաչին ասում՝ էս առնի հիմար ա, մահլըմ փաղը ծիք տալալ կըրգընանամ: Քրիստոս թա՛ ո՛ստա, տու ձեռքդ տեղաղ երա հարե կերանեն, ես քաշիմ, ըրգընանա: Ուստան Քրիստոսեն հիմարու տեղ տինալալ, ձեռքերը երա ա հարում: Քրիստոս ձեռքը քցում ա, ծիք տալիս, ըրգընցնում, տանում ուրան տեղը ո՛նը անում: Որ պըծում ա, աներևութ ա տեռնում: Ուստան մնալիս ա «ամխ» քըշիլիս, թա՛ պա էն Քրիստոս ըլալ, ես ճընընչեցալ չիմ: Շատ ա փըշմանում, համադե հինչ կարուղ ըլալ անե:

3. (155) ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց Աբգար թագավորը պիրալ ա ուրան ճոխտ աչքերը տյուս օնել տըվալ, թա որ տյուզ տիվան անե՛ հարուստն ան քյասիբը, բյագն ան ըրըհաթը ճոկե ոչ: Քրիստոս աշխարիք շոռ կյալիս վախտը թա՛ թա եկ քինիմ մըն փորձիմ հունց ա

շար կտրում: Կյալիս ա մըն պըռաՎու դոնադ ընգնում: Քըշըհանը հդե ընգնելիս տեղը, էդ պըռաՎեն մըն վերթն ա ընում, խաչակնքում ա, կավը թողում ա, վազ տալիս ընգնում ճորուն տակը, հետան եր ա օնում, որ քինի: Պառավը հարչանք հայ-հայ ա անում, թա՛ իմ վերթն ա, ըշտեղ ես տանում: Քրիստոս եշում չի, թա՛ քու կվենն ա, եր կալ տար քցի կվեղ տակը, խե ա ճորուս հետան կյալիս: Ճոխտն ալ քինում ըն Աբգար թագավորեն կոշտը կենգատ: Պառավն ասում ա. «Տեր, մուք կենգատ օնիք: Էս մարթս եկալ ա իմ տանս դոնադ ընգալ, միենգ իմ վերթս եր ա կալած քղած ուրան ճորուն տակը տանում, թա՛ իմ ճորունն ա»: Քրիստոս ասում ա. «Իմն ա, որ ընդրանը ընի, կըվեն տակեն կկենա, ճորուս ետան կյալ չի»: Թագավորը միտք ա անում, ալ խոսում չի: Քրիստոս ասում ա. «Մըն օրիշ պեն կան, ընդրա ըմ մետք անում, ծեգանից առաջ մըն կնգատավոր եկալ ա, ասալ՝ թա ծավեն դրադեն կյարի ըմ վարած, ծըկները տյուս ըն կյալիս օման քիշեր, օտում»: Քրիստոս թա՛ Պա ծունկը կյարի: Թագավորը թա՛ Պա ճորեն վերթ: Քրիստոս խաչակնքում ա, վերթը մորը տակն ա ընգնում, ման ալ եր ա օնում, մըն ալ խաչակնքում ա, թագավորեն աչքերը սըղանում ըն, ինքն ալ անհայտանում ա: Աբգար թագավորը թա՛ երանի՛ քեզ, այ պառավ, էս Քրիստոս ըլալ, տու տեսալ ըս, մըղափուն, որ ես հիմարոթուն եմ ըրալ աչքերս հանալ, ընտուր տեսությունան գրկվալ:

4. (156) ՔՐԻՍՏՈՍ ՕՐՀՆՈՒՄ Է ԵՌՆՁԻ ԱՐՄԱՏԸ

Մայրան Աստվածածինը մըն հետ ըղանձատ ա օտում, Քրիստոս ալ հալում հեն ա ընում խտտեն. մարդ ալ, որ ըղանձատ օտե կաթնը շան կըքացցրանա: Քրիստոս մտնում ա մորը գյուրգը ծեծ օտում, թա՛ Նանն, էս հինչ ըս ըլալ կերած, որ կաթնըդ էսչուքեն քաղցր ա: Էն ալ օգում չի դյուզ ասե, թա՛ դե եոնջա ըմ կերած: Քրիստոս թա՛ դե որ ըտի ա.

Թող մըն տարե վարին,

Օխտը տարե հարին:

Մարը վըշմանում ա, որ խաբալ ա, թա՛ եոնջա չիմ ըլալ կերած է, ըղանձատ ըմ ըլալ կերած: Թա՛ ալ ընցած ա, հինչ ասալ ըմ, ասալ ըմ:

Ըտուր հետե ա, որ եոնջան մըն վարում ըս, օխտ տարե հարվում ա:

5. (157) ՍՈՂՈՄՈՆ ԻՄԱՍՏՈՒՆ

Սողումունն իմաստունը ինքը շատ մեծ իմաստում ըլալ, շատ ալ մեծ քարոզող: Քեցալ ա Փարավոն թագավորեն աղջիկն օգալ, ասալ ա՛ տալ չիմ, տու հու՛վ ըս, որ տամ, մըն բուդալա տղա ըս, տու կըկարիս որ ինձ նհետ կոեվ տաս, թա կարիս, աղչիգս կըտամ: Ասալ ա՛ ինձ օխտն օր մոխլաթ տոր, պատրաստոթուն տեսնամ, քեզ նհետ կոն տամ: Սողումունն իմաստունը ետ ա տեռալ, քեցալ տափեն տակեն հինչ որ շոռ կիվող կոն՝ մչերմը, մոկնը, պղուճ, ըտուց թագավորունն հրամայալ, թա՛ Փարավոն թագավորեն դոշունեն ամբարեն պիրիպասը հանց կքաշիք, որ դատ չմսա: Ըտրանք դոշանը օխտն օր թմամիլը թագավորեն ըմբարումը հինչ որ այլեր, պիրիպաս ըլալ, քաշալ ըն տափեն տակը: Փարավոն թագա-

վորեն երակացունեն քեցալ ըն տեսալ ըմբարումը ո՛չ այլեր կան, ո՛չ ցորեն, թամուզ պրծած ա: Օխտն օրը որ թըմամում ա, Սըղումուն իմաստունը հրամայում ա, թա՛ քու դոշունդ ալ եր կալ, եկ փյան դյուզը, որ իմ դոշունս ալ ա կյալու ընտեղ: Փարավոն թագավորի դուշունը կյալիս ա էն տյուզումը սանգյար տալիս, որ էգուց Սողումուն իմաստունեն դոշունս ալ կյա: Ըրուզունը իրիթնակը մըրմուրեն Սողումուն իմաստունը հրամայում ա ծովեն թոխպերեն կյալիս ըն երգինքին իրեսը փըռնում, հանց որ քամե չի խաղ անե, ետնա ալ հրամայում ա մոծակեն թագավորեն, մըն աման գըհար ալ տնում ընտեղ, մոծակեն օման կյալիս ըն դընդընգեն էն գըհարավը ճրում, քինում երա տալիս Փարավոն թագավորեն դոշունեն: Դոշանը լյուս էնքան կծոտում ըն, որ լափ օռչում ըն, իրեսնեն տընդըռնում, աչքեն քըռանում, ալ գուրուր տեսնում չին, ընգնում ըն մինմինու կըտորում: Պրծտողը քինում ա թագավորեն կոշտը, թա՛ հանց հրաշակործություն ա ըրալ, հանց փանդ եկալ, օյին հանալ, որ մուք մինմինու կըտորալ ըք, համա ուրուն դոշունեն որ մընին քեթը ըրնալ չի: Ըտեղ Փարավոն թագավորը տեսնում ա, որ առանց դոշունի հաղթալ ա, ամբարը կրալ, թողալ լյութ, ըռա ա կյալիս, թողթ կիրում, թա՛ ասե կյա աղջիկս տամ: Սողումուն իմաստունը ախջիզն օգում ա, եր օնում, քինում: Էդ ախջիկն ալ կռապաշտ ա ինում: Կնգանը թողում ա տան, ինքը քինում երգիր քարոզելի: Կյալիս ա տեսնում, որ կնեզը շատ մալուր ա. «Խն՛ ըս մալուր, տյուզնը չիս, ծարավ չիս»: Ասում ա. «Տու քինում ըս աշխարիք շոռ կյալիս, ես մնալիս եմ ըստեղ մինակ, ինձ հետե մըն հանց օթախ շինի, որ թոռնը եշիմ ըրևա», թա՛ պա հինջանվ բըհամ կըկյա: Կնեզը եր ա օնում, թա՛ դուշերը պիր հըվաքե, ընտրանց թեփոռներան չաթան շինի, օթախեն դրավը քաշի, որ թոռնը եշիմ՝ ըրևա: Սողումուն իմաստունը հրամայում ա, դուշերը հըվաքվում ըն: Յափալաղը կյալիս չի, դուշերեն թագավորը մարդ ա դարկում պիրիլ տալիս: Կյալիս ա, թա՛ տու խն՛ ըս էսքան հեյվանու մեղք ընգնում. հինչ ա բոլ, ծովեն դրաղեն դամիշը, ոչխարեն ալ պուրթը: Պիրում ա ահետո դամիշա չաթան շինիլ տալիս, պրթա ալ քեչա օբա շինում, քցում երան, թա՛ թոռնը օգում ըս, եշի՛ ըրևա: Քեչա-չաթանը էդ օրաց ա ադաթ ընգած:

Ալըհան քինում ա երգիր քարոզելի, կյամ ա տեսնում կնեզը տխուր:

Ասում ա. — Մհն՛նգ խե տխուր ըս:

Թա. — Հունց չի ընիմ տխուր, տու Աստված օնիս, պաշտում ըս, ես Աստված չոնիմ պաշտիմ:

Քինում ա մըն սանդուղ շինում, պիրում տընում պուճախումը, թա՛ էս ալ քու Աստվածը տեռնա, երգըպագոթուն տոր:

Մին ալ քինում մհալումը քարոզելի, կյալիս ա տեսնում կնեզը ալըհան տխուր, ասում ա. — Մհն՛նգ խե տխուր ըս, հեն ա, դու ալ Աստված օնիս:

Թա. — Դե իմ Աստվածս ասում ա՛ շատ ալ տու երգիրպագոթուն ըս տալիս, որ քու մարդը երգիրպագոթուն չի տալիս, հինչո՛ւ՝ ա պետք:

Սողումուն իմաստունն ալ թա՛ ես Աստված օնիմ, ես օրիշ Աստծու երգրպագոթուն չիմ տալ:

Ելում ա տեսնում կնեզը դահի բեթահը տխրվալ ա, ասում ա. — Էն վախտը, որ քինիմ ծիս պիրիմ եր ընիմ, դասիդ դամչիս վեր եմ քցուլու, որ կռանամ եր օնիմ, գիտաց, որ քու կուռքեղ ըմ երգըրպագոթուն տալիս:

Քինում ա ծին քաշում, պիրում, իրեսը տիրի կուռքն անում, դամչին վեր քցում, կռանում ա, որ եր օնե, ըտտունավ հանց ա օգում ըլլա կնգանը խաթըր խոշ անե, բիրդան հոգավ-մարմնավ կորչում ա: Մհենգ էս սիաթս ալ Մուդումուն իմաստունեն տեղը մահլում չի, գիդացվալ չի՝ քամե ա տեռալ, հինչ ա տեռալ:

6. (158) ՀՈՎՀԱՆ ՈՐՈՏՆԵՑԻ

Միսիանում եղել են կռապաշտներ, որ շատ նեղություններ են տալիս եղել հայերին: Սրանք տակտակները ծակել, անց են կացրել հայերի վզները և երկու կողմից մի-մի մարդ նստելով՝ ման են եկել: Մի օր մի որբևայրի կին գնացել է ջրաղաց աղուն աղալու, երբ այդ կռապաշտներից մինը բռնել է նրան և կամեցել անպատվել: Սա ճողոպրել է նրա ձեռքից և փախել գանգատվել է Հովհան Ռոտունեցուն: Սա իսկույն ձին հեծել, գնացել է պարսից Շամ շահից գորք խնդրել, որ այս անօրեններին կոտորի: Երբ գորքը ստացած վերադարձել է՝ գետն անցնելիս դիտել է, և որ զինվորի սովերը երևացել է ջրի մեջ՝ նրան վերցրել է իր հետ, իսկ որինը չի երևացել՝ վերադարձրել է: Ապա սրանց միջոցով կոտորել և դուրս է քշել կռապաշտներին Միսիանից: Նրանց մեծամեծերին էլ բռնել, ձգել է կաթսաների մեջ, եփել և թափել քարերի տակ: Հետո, երբ կամեցել է գորքը վերադարձնել՝ շահը նվիրել է նրան, ուստի և նա բնակեցրել է նրանց Միսիանում: Ահա այս գորքերից են առաջացել Միսիանի այժմյան պարսիկները:

7. (159) ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ

Մի անգամ, երբ Գրիգոր Տաթևացին սովորելիս է լինում Տաթևի վանքում՝ վանահայրը հրամայում է նրան, որ մի փարչով ջուր բերի: Գրիգորը փոխանակ բերելով՝ ցույց է տալիս բերանն ու ականջները՝ կամենալով հասկացնել, որ բերանն ասաց, թող ականջը չլսի. իր նման սրբին չի կարելի հրամայել: Երբ վանահայրը չհասկանալով կրկնում է իր հրամանը՝ Գրիգորը նույնը հրամայում է իր աշակակերտակիցներից մեկին, և երբ սա չի կատարում՝ անհծում է նրան, ասելով՝ գետինն անցնես: Իսկույն երեխան կիտով չափ մտնում է գետնի մեջ: Վանահայրը անմիջապես միջամտում է և խնդրում Գրիգորին, որ հանի: Սա էլ կատարում է նրա խնդիրը: Վանահայրը զարմացած գրում է կաթողիկոսին Գրիգորի սրբության մասին և սա հրամայում է, որ անմիջապես ուղարկեն իր մոտ: Սակայն Գրիգորը չի գնում: Վերջապես կաթողիկոսը երկու վարդապետ է ուղարկում, որ տանեն: Գրիգորը սրանց ներկայությամբ կշռում է Զ ֆունտ կրակ, դնում է մի ֆունտ բամբակի մեջ, փաթաթում է մի թղթի մեջ և տալիս նրանց և ասում. «Տարե՛ք այս կաթողիկոսին և այնտեղ կշռե՛ք, եթե իրենց քաշերից միքիչ կորցնեն՝ ես ինքս ինձ ու ինձ կգամ»: Վարդապետները վերցնում գնում են և կաթողիկոսի ներկայությամբ կշռում են: Երբ քաշը բոլորովին նույնն է լինում՝ կաթողիկոսը բացականչում է. «Նա արդեն երկինք ու գետինք կշռել է, նա անչափ իմաստում ու արդար է»:

8. (160) ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՉԱՓԱՅՏԻ ՄԱՍՈՒՆՔԸ

Արցախից Սյունիք են բերում աստվածընկալ խաչի հրաշագործ նշանը, որի մեծամեծ հրաշքների ու զարմանալի սքանչելագործությունների համբավը տարածված էր մբողջ աշխարհում: Նա կենսակիր այն փայտից էր, որն իր վրա կրում էր աստվածային կողերից հոսած արյան ներկված հետքը և ամրացված էր ոսկու մեջ՝ փոքրիկ տուփով: Այն տոհմով սերնդեսերունդ պահում էին Դլեն իշխանի թոռները. Դա այն տոհմն էր, որ Տաթևում ունի եկեղեցի և բազմամարդ միաբանություն:

Անձանոթ աշխարհից մի ճգնավոր, որ աղոթքի առիթով շրջագայում էր, մի ձմռան ընկավ Դլենի գյուղը: Նա իր պարկի մեջ ուներ աստվածային այդ անկշռելի գանձը: Իջևանելով գյուղի քահանայի տանը՝ պարկը տալիս է տանտիրուհուն ու ասում. «Սա մաքուր տեղ դիր մինչև գնալս»: Դա հայտնության ճրագալույցի օրն էր: Քահանայի փոքր տղան զիշերը մեռել էր, բայց տոնի պատճառով դուրս չէին հանել: Տանտիրուհին ճգնավորի պարկը տանում-դնում է վախճանվածի սնարի մոտ: Երեկոյան պաշտամունքային արարողության վերջանալուց հետո, երբ մի փոքր ննջել էին, կենսատու փայտը վերակենդանացրեց մանկանը, որն սկսեց ձայն տալ մորը: Մայրը քնից արթնանալով զարհուրեց. արթնացրեց քահանային: Նրանք գնացին ներքնատունը, տեսան, որ երակենդանացել ու նստած պարկի հետ խաղ է անում: Երկար ժամանակ զարհուրած ու ապշած էին. չգիտեին, թե ինչ բան է դա:

Ապա ճգնավորն իմանում է եղելությունը, և երբ դեռ հյուրընկալողները այսպիսի ընդարմացած վիճակում էին, ծածուկ կերպով վերցնում է պարկն ու փախչում-գնում է: Քահան ու կինն սթափվելով հասկանում են, թե ինչ է կատարվել: Գնում են գյուղապետի մոտ ու ճիշ բարձրացնելով պատմում տեղի ունեցած հրաշքի մասին: Աղաղակն ընկնում է գյուղը, և բոլորը գալիս են մանկանը տեսնելու: Դլենը վեր է կենում, ծառաներով ու շինականներով ընկնում ճգնավորի ետևից՝ ընթանալով դեպի Ադունո գետի կողմը: Ճգնավորն իմանալով, որ իրեն հետապնդում են, տուփից հանում է փայտի շատ փոքրիկ մասը, դնում իր կրած կնգուղի ծավվածքը, իսկ տուփը գցում է մացառախիտ անտառի մի սալորի թփի մեջ և հեռանում է: Հետապնդող մարդիկ գալիս, հասնում են այնտեղ, համատարած ձյան ու սառույցի մեջ տեսնում տուփը հանկարծակի փթթած գեղեցիկ ծաղիկներով և պատած կանաչած սաղարթներով՝ աննման հոտ բուրելով: Մեծապես հիանում են՝ կարծելով այնտեղ է պահած խաչը:

Երբ տեղը գննեցին, թփի մեջ գտան տուփը՝ դատարկ, շարունակեցին հետապնդել ճգնավորին, որին հասան Ադունո գետի եզրին: Ճգնավորը ետ դարձավ և տեսավ նրանց. Մոքում զայրացավ, կնգուղից հանեց փայտը և գցեց գետը: Այն մարդիկ ճգնավորին բռնելով սաստկապես տանջեցին. Պահանջում էին փայտն իրենց տալ: Բացելով պարկը՝ ոչինչ չգտան այնտեղ: Վրայի կուպիտ քուրձն էլ հանեցին, բայց բայց փնտրածը չէր երևում: Ապա նայեցին գետին, տեսան հսկայական ջուրը երկու կողմից ճեղքված, մասունքն էլ՝ ցամաքած տեղում, որից բորբոքված բոց էր ցուլանում դեպի վեր և զարմանալի բույր էր թանձր ծխի

նման տարածվում շրջակայքում: Այն մարդիկ համակվեցին ահով ու խնդոթամբ. դողում ու թռչկոտելով ցնծում էին՝ անգին ու անհամեմատելի մարգարտի գյուտից: Մտնելով ջուրը՝ վերցրին փրկական փայտը և դնելով տուփի մեջ՝ բերեցին: Իսկ ճգնավորը գնում էր նրանց ետևից՝ ողբալով ու ու կուրծքը ծեծելով, մինչև որ հուսահատվեց, դառնորեն անիծեց Դլենի տունն ու անցավ գնաց:

Եվ այդ օրվանից ի վեր մասունքը դարձավ այդ տոհմի սեփականությունը՝ նվերներով մեծարվելով իշխանների ու ժողովրդի կողմից: Հետո աստվածասեր և բարեպաշտ իշխան Ջալալը շինում է Գիշերաձոր անունով մի եկեղեցի և արծաթե պահարան պատրաստելով՝ հիշյալ մասունքը հաստատում է այնտեղ:

9. (161) ԵՐԻՑԱԿ ՄԵՏՐՈՊՈԼԻՏ

Ավանդաբար գրույց է պատմվում Երիցակի մասին, թե գնալով Երուսաղեմ սուրբ քաղաքը և այնտեղ մնալով մինչև սուրբ Հայտնության մեծ ճրագալույցի օրը, Բեթղեհեմում գտնվող սուրբ քաղաքի դռանը մտաբերում է իր սուրբ մենաստանն ու կրոնավոր եղբայրներին, սաստիկ կարոտից դառնապես լալիս է և ցանկանում նույն ժամին լինել իր կողակից եղբայրների հետ: Մի կախարդ կին դա լսելով, թերևս Սուրբ Հոգու ազդմամբ, հարցնում է այդ հորն ու ասում. «Ինձ ասա՛ ինչի՞ համար ես դառնագին արտասվում»: Եվ նա հայտնում է պատճառը: Ապա կինը խնդրում է նրան. «Ով Աստծու սուրբ, Քրիստոսից ներում խնդրիր իմ անչափելի հանցանքների համար, և հենց այս պահին քեզ ցույց կտամ քո փափագածը»: Հայրը այս լսում է և, Աստծու գթառատությունից համարձակություն առած ու կարոտից հարկադրված, համաձայնվում է կատարել նրա խնդրանքը: Եվ կինը մի ինչ-որ անոթ է պատրաստում՝ ջրով լի, իր կախարդանքով այն հարմարեցնում է ու սրբին նստեցնում վրան, որը և իսկույն հայտնվում է Երիցավանքում, եկեղեցու դռանը, երբ չէր վերջացել փրկական արարողությունը: Ապա Երիցակն իմաց չտվեց ու չերևաց կրոնավորներին, մինչև որ հավաքվեցին ճաշի: Եվ այն ժամանակ ծանոթություն տալով ողջունեց բոլորին ու անհավատալի բաներ պատմեց նրանց. ցույց տվեց հետը բերած նշանները, այսինքն՝ կանաչներ, նարինջներ ու թուրինջներ և դրանցով հավաստեց իր խոսքը: Ճաշելուց հետո վեր կացան, գնացին եկեղեցու դուռը և այն գիշեր ժամերգության արարողությամբ գթություն խնդրեցին այն կնոջ համար: Մարդասեր աստվածը լսելով՝ ներում շնորհեց նրան և սուրբ հորը հայտնեց տեսիլքով:

10. (162) ՏԻՐՈՏ ՔԱՀԱՆԱ

Շաղատի եկեղեցու վանական Տիրոտ քահանան, որը առաքինի վարքով և հրաշագործ հավատքով էր, խոսքի իշխանություն ուներ մարդկանց, կենդանիների ու տարերքների վրա և իրեն էր հպատակեցնում նաև չարին: Նրա մասին պատմում են հետևյալը. գետի մի կողմում մի ջրաղաց կար: Երանելի Տիրոտը, ջրառատ տեղերով, միշտ խաչակնքվելով, աներկյուղ անցնում էր գետը: Օրերից մի օր տեսավ ցանկալի ու գեղեցկատես մի ջահել էշ և իր մտքում ասաց. «Գնամ,

այն իշով անցնեն գետը»: Եվ նստեց էշն ու մտավ գետը: Գետի մեջ էշը նրան դառնալով փայլատակումով ցույց տվեց իր երկաթե ատամները և ասաց. «Դու իշի այսպիսի ատամներ տեսնո՞ւ ես»: Իսկ նա, պատյանից հանելով իր փոքրիկ դանակը, ցույց տվեց և ասաց. «Իսկ դու իշի այսպիսի մտրակ տեսնո՞ւ ես. ինձ անցկացրո՞ւ գետը, եթե ոչ՝ կխփեմ, կվիրավորեմ քեզ»: Եվ սրբին անցկացնելով գետը՝ չար սատանան աներևութացավ:

11. (163) ՏԱԹԵՎԻ ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻՆ

Սյունյաց Սողոմոն մետրոպոլիտի վախճանից հետո տեղի իշխանների ու հոգևորականների կողմից եպիսկոպոս ընտրվեց Հովհաննեսը, ով ձեռնադրվելով

նստեց սյունյաց մետրոպոլիտության աթոռին: Այս երանելին տեսավ, որ եկեղեցին նեղ էր, անշուք ու երկար ժամանակներից հնացած, երկարաշարժից էլ խարխլված: Եվ քանի որ անպատշաճ էր այնպիսի մեծ կենտրոնական աթոռանիստի սուրբ հայրապետանոցի աշխարհագումար ժողովարանի համար կաթողիկե եկեղեցուց գուրկ լինելը, այդ պատճառով ներքնապես շարունակ մտատանջվում էր և հնար չէր գտնում, որովհետև մի կողմից չէր համարձակվում քանդել առաջին սրբերի հիմնադրած տաճարը, իսկ մյուս կողմից՝ թվում էր, թե անմատչելի է անհրաժեշտ հսկայական ծախսի կատարումը: Ապա երագի մեջ հրեշտակից հրաման ստացավ՝ հինը մի կողմ թողնել և նոր եկեղեցու շինարարություն սկսել: Եվ այն տեսիլը կրկնվեց ու երրորդվեց, մինչև որ հրեշտակը լրիվ հավաստի դարձրեց իրողությունը, որ խաբուսիկ երևույթ չկարծվեր, իր գավազանով էլ սահմանագծեց տեղը ու հրամայեց կառուցել եկեղեցին գլխավոր առաքյալներ Վեմ-Պետրոսի ու Պողոսի անունով: Գործի համար քաջալերեց ասելով. «Դա մարդու կողմից չի կատարվում, այլ Տերն է ուզում իր փառքի համար տուն կանգնեցնել»:

Եվ այսպես կառուցեցին եկեղեցին՝ երկնականարի նման գմբեթահարկ, որպես հրեշտակների զբոսարան և մարդկանց քավարան՝ տաշած վեմերով ու քերած քարերով, որմնադրական արհեստով հարմարեցված, տեսնողների աչքերը շլացնող: Երբ Տեր Հովհաննես եպիսկոպոսն ավարտեց եկեղեցու և մյուս կառույցների շինարարությունը, հետամուտ եղավ աշխարհախումբ հանդեսին՝ կատարելու մեծ և աստվածահրաշ տաճարի նավակատիքը: Եվ գիշերային արարողության ժամանակ եպիսկոպոս Հովհաննեսը նրանցից տեսիլքով տեսավ Պետրոսին՝ ձեռքին երկաթե բանալի, և Պողոսին՝ գրկում առաքելական գիրքը, որոնք մտնելով եկեղեցին՝ պատրաստում էին աթոռը երկնային թագավորի համար և բանալին ու գիրքը տվեցին եպիսկոպոսին և ասացին. «Տերը հաճեցավ բնակվել սրա մեջ, և մենք նրա համար հանգստյան տեղ ենք պատրաստում. հենց մեզ էլ հրամայվեց այստեղ մնալ մինչև մեր թագավորի հաջորդ գալուստը. դա արքայության բանալին է, թող մնա այս եկեղեցու մեջ, որովհետև այստեղ է բացվելու դրախտի դուռը բոլոր այն մեղավորների համար, որոնք հավատով դիմելու են սրան. այս գիրքը ևս թող մնա սրա մեջ, որովհետև այստեղից

բխելու են վարդապետական շնորհը և սուրբ հեղինակների ողջամիտ քարոզները, այնտեղ կմնա մաքուր ու անխառն»:

Այս տեսնելով ու սթափվելով՝ մեծ գոհունակությամբ դեպի երկինք փառաբանություն առաքեց, բայց ոչ որքի ոչինչ չհայտնեց: Ապա առավոտը բացվելիս հայրապետները և բոլոր եպիսկոպոսները զգեստավորվելով բեմ բարձրացան ու կատարելով հոգևոր օրհնությունը՝ օձեցին եկեղեցին աստվածաստեղծ յուրով: Եվ այսպես կատարելով օրհնությունը՝ ութ օր նավակատիք արեցին ի փառս Աստծու:

12. (164) ԿՆԵՎԱՆՔ

Կնեվանքի է մասին պատմում էին հետևյալը. նախրապան մանուկները արածեցնում էին եզների նախիրը և սկսեցին խաղալ: Կտրելով մի կնյուն՝ խաչ պատրաստեցին ու դրեցին մի քարի վրա և սկսեցին երկրպագել ու ասել. «Ինչ որ երեցն ասում ու կարդում է, այն թող քո նկատմամբ լինի. այս եզներից երեքը թող քեզ մատաղ լինեն»:

Ինչ որ նրանք խաղի ընթացքում արտահայտեցին, Հոգի Աստվածն իջնելով նույնությամբ տնօրինեց: Եվ երբ երեկոյացավ, մանուկներն ուզեցին տուն գնալ: Թեև շատ ջանացին, բայց չկարողացան այն նվիրած մատաղացուները տեղից վեր հանել: Գնացին ու իմաց արեցին նրանց տերերին: Նրանք էլ գալով չկարողացան տեղներից շարժել: Մանուկներից պատճառը հարցրին, և նրանք խոստովանեցին ուղիղը: Այնուհետև քահանաներ կանչեցին ու խաչն օրհնել տվեցին: Եզները մորթեցին ու պատվեցին կնյունի տեղը: Այս մասին տեղեկացրին Սյունյաց իշխաններին, որոնք եկան տեսնելու: Հրամայեցին այնտեղ եկեղեցի շինել: Եվ այն հաստատեցին կրոնավորների տուն: Բայց եկեղեցու մեջ, կնյունի տեղում, մի փոքրիկ փոս թողեցին: Եվ դեռ անշեն ժամանակից այդ փոսից ձեթ էր բխում, իսկ դա այնքան էր, որ ուրիշ ձեթի կարիք չէր զգացվում, և եկեղեցու կանթեղները նրանով էին սնվում:

13. (165) ԱՌՎՈՒՅՑ

Մայրան Աստվածածինը մըն հետ ըղանձատ ա օտում: Քրիստոս ալ հալում հեն ա ընում խտտեն: Մարդ ալ, որ ըղանձատ օտե, կաթնը շատ կքղցրանա, Քրիստոս մտնում ա մորը գյուրգը ծեծ օտում, թա. «Նանե, էս հինչ ըս ըլալ կերած, որ կաթնդ էսչուքեն քաղցր ա»: Էն էլ օգում չի դյուզ ասե, թա. «Դե յանջա ըմ կերած»: Քրիստոս թա. «Դե որ ըտի ա՛ թող մըն տարե վարին, օխտը տարե հարին»: Մարը փշմանում ա, որ խաբալ ա, թա. յոնջա չիմ ըլալ կերած է, ըղանձատ ըմ ըլալ կերած: Թա՛ ալ ընցած ա, հինչ ասալ ըմ, ասալ ըմ: Ըտուր հետե ա, որ յոնջան մըն հետ որ վարում ըս, օխտը տարե հարվում ա:

14. ԿԱՏՈՒ

Ա. (166)

Հիսուսը մի գյուղում մեծ մկներ է տեսնում, որոնք շատ վնաս էին տալիս բնակիչներին: Գյուղացիները խնդրում են նրան ազատել իրենց այդ չարիքից: Հիսուսը ծալծելով թաշկինակը նետում է մկների վրա: Թաշկինակն իսկույն կատու է դառնում և խեղդում է բոլոր մկներին: Ասում են, թե կատուն Քրիստոսի թաշկինակն է, դրա համար էլ նրան չի կարելի սպանել:

Բ. (167)

Կատուն ըստծու յայլուխն ա: Մըն օր աստոծ ասալ ա. «Ա՛ կատու-յայլուխ, հի՛նչ ես օգում, վեր քրզ հետի ինի»: Կատուն ասալ ա. «Ես օգում եմ, վեր տներումը չիմ մարթ-խոխա, կնեկ կուտորվեն, մասն մըն թաք պատալ, քոռ կնանիք, վեր ունդունք ճաշ ուտելիս՝ ես ուրանց փայն օտեմ, տեսնան վեչ»: Ըտա հետի էլ Աստոծ ըջըղվալ ա, կատվին դրախտան տուս ըրալ, քիցալ երգիրը. համ էլ ասալ, որ աման եր կենող կլխին տա, փիշտ անի:

ՎԱՐՔԱԲԱՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. (168) ԵՐԻՑԱԿ ՄԵՏՐՈՊՈԼԻՏ

Այս Երիցակը նախ երկար տարիներ ապրել էր Բաղք գավառում, մի քարանձավ տեղում՝ ապա գնացել էր երանելի Գյուտի վանքը և այնտեղ անտանելի ճգնությամբ անցկացրել շատ օրեր:

Մուշե եպիսկոպոսի մահից հետո ժողովրդի խնդրանքով Երիցկավանքի սուրբ վանահայր, խարանազգեստ ու խստակրոն ճգնավոր Երեցին հարկադրելով՝ բերում, նշանակում են Սյունիքի եպիսկոպոս:

Երանելի Մուշե հայրապետը մտնելով վանքը՝ ողջունում է եկեղեցին ու այնտեղ բազմելով պատգամավոր է ուղարկում այրու որդուն և մեկ ուրիշին՝ Արագածոտնի Հովհաննավանքից, որը սարկավագապետ էր և հայրապետի գրագիրը: Նույնպես գնում են նաև իշխաններ ու այլ պատվիրակություններ, բայց չեն կարողանում համոզել Երիցակին: Այնուհետև կաթողիկոսն ինքն է գնում հայր Երիցակի մոտ, նրա սրահը և բարկությանը լցված ու գայրանալով խաչակնքում է և ասում. «Ինչո՞ւ ես այդպես համառած մնում, քո մեջ դե կա, Աստված թող սաստի ու հալածի չարին»: Այն ժամանակ սրբի խոսքերից թանձր ծուխ բարձրացավ որպես փոթորիկ և շենքից վերացավ: Ապա եկան սպիտակ աղավախների երամներ, իջան սրահի տանիքին: Եվ աղավախներից մեկը պանալով եկավ, իջավ կաթողիկոսի վրա, նրա վրայից էլ բարձրանալով՝ իջավ Երիցակի վրա ու շրջում էր նրա խոշոր կնգուղի վրա, բարակ ձայնով մարդու պես ասում. «Արժա-

նի է, արժանի է»: Իսկ բազմությունն այդ տեսնելով միաբերան ուժեղ ձայնով գոչում էր. «Արժանի է, արժանի է»: Սուրբ հայրն այս տեսնելով էլ չհամարձակվեց հակաճանդել, այլ ծնկի գալով կաթողիկոսի առաջ՝ արտասովաթոր աղերսանքով ասաց. «Թող լինի քո՝ տիրոջդ, կամքը և ոչ թե իմը»: Ապա կաթողիկոսը, նրա ձեռքից բռնած, տանում է եկեղեցին և հանելով բեմի վրա՝ օծում Սյունիքի մետրոպոլիտ ու բերում, նստեցնում է աթոռին: Իսկ ինքը մեծարանքներով ու անսահման շքեղությամբ հրաժեշտ է տալիս բոլորին, գնում է հայրապետական աթոռը, Դվին կենտրոնական քաղաքը՝ բազում փառք ու շնորհակալություն հղելով: Երանելի Երիցակն էլ, աթոռին մնալով մեկ տարի, փոխադրվում է վերին Երուսաղեմ, որտեղ սրբերի բազմությունն է, որոնց քաղաքապետը բոլորի աստված Հիսուս Քրիստոսն է:

2. (169) ՀԱՅՐ ԳՅՈՒՏ ԵՎ ՔՐԻՍՏՈՍԱՍԵՐ

Գողթան գավառում կար մի բարեպաշտ իշխան՝ Շաբիթա անունով: Նա ուներ երկու թոռ՝ իր որդիների որդիները, որոնց անուններն էին Վասակ և Շապուհ: Սատանան նրանց միջև կոխվ ու նախանձ առաջացրեց՝ իրենց հայրենական ժառանգության բաժնի համար: Եվ կովեցին Որդվատ գեղեցիկ գյուղի համար: Զորքերով միմյանց դեմ ճակատամարտելիս Վասակը մերձիմահ սրահարեց եղբորը: Ապա գոջալով եղբայրական խղճմտանքով՝ գնաց նրա մոտ, ընկավ վրան, լաց եղավ ասատկազին՝ աղիողորմ ողբով հառաչելով, և ուխտեց Աստծուն, որ եթե եղբայրը բուժվի, ինքը կհրաժարվի աշխարհիկ բոլոր բաներից: Եվ եղբայրը բուժվեց: Այն ժամանակ Վասակը իր հոգու ազատության համար անսպասելիորեն մեջտեղից անհետացավ, թաքնվեց ընտանիքից, ելավ ու գնաց Բաղաց կողմերը:

Իսկ Վասակի տնեցիները չգիտենալով, թե նրան ո՞ր համիշտակեց Հոգին, մարդիկ էին ուղարկում Հայաստան, Բյուզանդիա, Պարսկաստան, սաստիկ սգում ու ողբում էին, բայց հետքը չիմացան:

Ապա մի օր էլ, երբ այդ սուրբ հայրը ազատվեց երեկոյան աղոթքից և ուզում էր հանգստանալ, երգ ու պարի ձայներ լսվեցին: Դրանից զայրացած ասաց. «Չկարողացա այնքան փախչել աշխարհից, որ նրա ձայները չլսեի»: Նույն ժամին վեր կացավ, այնտեղից հեռացավ: Եվ ընկնելով դաշտը՝ հրեշտակի առաջնորդությամբ գնաց մինչև արեգակի ծագելը: Հասնելով Երասխի ափը՝ մի ձորակ գտավ՝ մեջը մի մեծ ժայռ, իսկ ներքևում՝ փոքրիկ մենարան, որտեղ բնակություն հաստատեց տաաը տարի: Նրա կերակուրն էին ընդելենն ու ծառապտուղները, որովհետև երկիրը ամառ ու ձմեռ Եգիպտոսի պես էր: Ապա ըստ այն ասցվածքի, թե. «Ճրագը չի վառվում ու դրվում ծածկոցի տակ»՝ տերը կամեցավ հայտնի դարձնել իր սուրբ ծառա Գյուտին, որ առաջ Վասակ էր կոչվում: Պարսից արքայի որդին որսի ելավ մերձակա լեռը, որ նայում է Մուղանի դաշտին: Նրա առաջ երևաց մի որսի կենդանի՝ եղջյուրների մեջ լուսեղեն խաչ: Եվ երիտասարդին զորախմբից Եվստաթեի նման բաժանվելով՝ եկավ, բերեց մինչև Երասխի եզրը, Քարավազ կոչված տեղը, որը ջուրը երեք մասի է ճեղքում: Խաչը

լուսեղեն մարդու կերպարանք առավ ու վազեց գետի մեջ. Երիտասարդը դա տեսնելով՝ լույսից շլացած աչքերով ընկավ գետն ու երկու ծառաների հետ անցավ: Եղջերուն, (նրանց) առաջնորդելով մինչև ժայռի ստորոտը, այնտեղից աներևութացավ: Այնուհետև վերև նայելով տեսան մի արջ՝ ահավոր կերպարանքով նստած, մի թաթը սրբի ձեռքում, որի վերքը բուժում էր (սուրբը): Այն ժամանակ երիտասարդը խիստ վախեցավ: Եվ քանի որ սուրբ հայրը երագում իմացել էր նրա գալը, ձայնեց. «Մի վախենա, եկ ինձ մոտ»: Իսկ նա ասաց. «Դու ինչ ես»: Պատասխանեց. «Քեզ նման մարդ եմ»: Երիտասարդն ասաց. «Այդ ինչ եմ քեզ հետ»: Գյուտն ասաց. «Իմ շներն են»: Իսկ նա ասաց. «Դրանց հրամայիր հեռանալ»: Եվ հրամայեց: Ինքը՝ Գյուտը, վեր կացավ, ժայռից իջավ, քարոզեց Ավետարանը, ուսուցանեց Քրիստոսի հավատը: Երիտասարդը շատ սիրեց և խնդրեց մկրտել իրեն: Եվ սուրբը, Տիրոջից իսկույն հրաման ստանալով, մկրտեց երիտասարդին ու երկու ծառաներին: Երիտասարդի անունը դրեց Քրիստոսասեր: Եվ բազում օրեր ճգնակեցությանը մնալով Քրիստոսասերն ասում է. «Հայր, փափագում եմ եկեղեցուն և նրա լուսավոր կարգ ու կանոնին, ուզում եմ տեսնել: Լավ չէ, որ մենք միայնակ բնակվենք այս ժայռում: Թույլ տուր, որ ես գնամ, արծաթ բերեմ, եկեղեցի կառուցեմ, միաբանություն հիմնեմ, որ կրոնավորներ հավաքվեն»: Եվ թույլ տվեց նրան գնալ: Նա գնաց ու շատ արծաթ բերեց: Արհեստավորներ կանչեցին, եկեղեցի կառուցեցին և հավաքեցին բազմաթիվ կրոնավորների:

3. (170) ԱՏԵՓԱՆՈՍ ԱՅՈՒՆԵՑԻ

Ստեփանոսը այունն էր երկնքի և խարիսխը՝ հավատքի, սուրբ եկեղեցու անխախտելի վեմն ու անվախ պաշտպանը, մարդն էր երկնային և հրեշտակը՝ երկրային, հավիտյան մեռածը և միշտ կենդանին, հրեշտակներին հիացնողը և քերովբեներին զարմացնողը, որի գովչությունների փունջը իմ տհաս ու թերավարժ միտքը խոսքերով չպիտի աղավաղի, այլ միայն զրույցներին պիտի ապավինի: Սա Հայաստանի մեծ մայրաքաղաք Դվինի ավագ քահանայի որդին էր: Դաստիարակվում և ուսմամբ զարգանում էր հայոց կաթողիկոսարանում:

Եվ որոշ տարիներ անց, երբ ներքուստ գործնականապես բավարարվեց, այլևս պատշաճ չհամարեց անգիտության խավարի տակ մնալ, այլ ձգտում էր հասնել աստվածային իմաստնական գիտության և կրթության, քանի որ նպատակահարմար չէր երկրագործության ակոսը միակողմանի լծով քաշել, այլ լծվել երկուսին, այսինքն՝ տեսականին և գործնականին, որպեսզի ամբողջը պատշաճավոր լիներ: Դրա համար դուրս գալով այն մենաստանից՝ շտապով դիմում է դեպի գիտությունների աղբյուրը՝ Սյունյաց վարդապետարանը, որը Հայաստանի բոլոր գիտունների գլխավոր տեղն էր, որտեղ գտնվող դպրոցները ծաղկած էին: Չէ՞ որ ինչպես արթնական դպրոցներն էին հռոմեականների ու հունականների մեջ փարթամացած և գիտությունների մայր հռչակված իսպանացիների աշխարհում՝ լատինական ու հունական դպրությանը մասնաճյուղի պես էլ սրանք՝ Թորգոմյան տանը՝ մեր Հայոց աշխարհում:

Իսկ երանելի Ստեփանոսը եպիսկոպոսության պաշտոնում մնաց մեկ տարի, որը ոմանք ութ տարի են ասում: Նա ամառը շրջում էր իր իշխանության ընդարձակ վիճակի տասներկու գավառներում և քարոզում ճշմարիտ գաղափարները: Հոգևոր ծառայության անհրաժեշտությամբ եղավ նաև Եդեգյաց ձորի բարերեր գավառում, Մոզ ավանում, որտեղ բնակվում էր մի անբարոյական կին՝ համակված հիմար ախտով: Եպիսկոպոսը նրան մինչ այդ երեք անգամ զգուշացրել էր ըստ տիրոջ հրամանի, բայց նա չէր գղջացել: Այդ պատճառով այլևս անգամ սուրբը սաստիկ գայրանում է և մեծ պատժի վճիռ կայացնում: Մաստիկ շոգի պատճառով ինքը դուրս է գալիս գյուղից ու գնում Ավագ ակն կոչված քաղցրահամ աղբյուրի ակունքում զովանալու: Կարգադրում է իր վրանը խփել, ինքն էլ հանգստանալու մահիճը դնում է մի ոտենու վրա: Եվ առանձին ելնելով ու երկար ժամանակ աղոթելով՝ ննջում է այնտեղ: Իսկ անպատկառ կինը, ցանկության կատաղի բովից դրդված, հետը վերցնում է իր սիրեկանին, գալիս է սպանելու սրբին, որ իրենք համարձակ գործեն: Մոտենալով ծառին՝ սիրեկանին բարձրացնում է վեր, սուրը տալիս ձեռքը, որ սրբին սպանի: Մարդը բարձրանալով տեսնում է, որ սուրբը քնած է, և շունչը բոցի նման վեր է ցոլանում ու ճախր առնելով կրկին իջնում է. միի հրեշտակ էլ կանգնած նրա գլխավերևում, թևերով հով էր անում: Այդ տեսնելով՝ մարդը կարկամում է, թուլանում. Նրա մարմնի ամբողջ կազմվածքը ցնցվում է. նա մեծ սոսկումով դողում է: Եվ այնքան է ուշքի գալիս, որ մի կերպ իջնում է ծառից ու պատմում կնոջը: Կինը նրան կրկին հորդորում է պոռնկական քաղցր-մեղր խոսքերով դրդում և քաջալերում է ու նորից ուղարկում: Եվ նա առաջինից ավել հրաշափառ տեսարան է տեսնում ու դարձյալ սաստկապես թուլանում, անզգա մարմնով, մեռելի նման ընկնում է ծառից: Ապա կինը, մարդուն տեսնելով խիստ պատուհասի մեջ ընկած, գղջալու փոխարեն առավել ևս չարանում է, և, սրված սատանայից, վերցնում մերկացած սուրը ու բարձրանում ծառը, սուրը խփելով սրբի փորին՝ անբիժ արյունը թափում է փայտե մահճի վրա, ինչպես իր տիրոջ արյունը մահվան փայտեղեն սարքի վրա՝ աստվածային օրենքների նկատմամբ (աստված) սաստիկ նախանձի պատճառով: (Սա հիշեցնում է) Հեղիասին և Հովհաննեսին, որոնցից մեկը քառասուն օր փախստական եղավ Աքաաբի Հեզաբել կնոջից, իսկ մյուսը գլխատվեց Հերովդիայի դստեր կողմից: Ապա առավոտյան սպասավորներն իմանալով՝ շատ լաց ու կոծով վերցնում են սրբի մարմինը, տանում Սիոն կոչված լեռան վրայի մենաստանը, որն այն ժամանակ ճգնավոր մարդկանցով ծաղկում էր Եգիպտոսի Սինայից ու Սկյութիայից ավելի: Արկազան գյուղի բնակիչները, դեպքի մասին իմանալով, իրենց տանուտերի հետ ընդառաջ են գալիս և սպասավորներին համոզում (հանգուցյալին) ամփոփել այն սենյակում, որը կառուցվել էր քաջ զորավար սուրբ Քրիստափորի անունով: Եվ տանում ու դնում են այն սենյակում: Իսկ աստծու երանյալ Նու ճգնավորը, որը շատ տարիներ բնակվում էր Սիոն սուրբ լեռան վրա և ամբողջ վաքքով հրեշտակացել էր, երագում տեսնում է, որ այն առավոտյան երկինքը բացվել էր ու հրեշտակների բազմությունը խմբերով դուրս էր գալիս սուրբ Ստեփանոսի առաջ և փարվելով նրա մաքուր ու արյունաներկ ոգուն՝ բարձրաձայն գոչում էին. «Բարի և հավատարիմ ծառա, էկ, մտի՛ր քո տի-

րոջ ուրախության մեջ»: Եվ այսպես մեծամեծ գովեստներով տարան, հասցրին աստծու ահեղ աթոռին, որի վրա մարմնական տեսքով նստում էր Քրիստոսը՝ աստծու որդին:

Ապա սուրբը երկրպագելով մոտեցավ Աստծուն ու նրան ցույց տվեց սպիտակ նափորտով փաթաթված արյամբ լի իր գորգը և ասաց. «Քոնն են վրեժխնդրությունը և արդարադատությունը»: Եվ առաքյալներն ու հայրապետները նրան յնպես համբուրելով տարան և դրեցին իրենց կայանը՝ մինչև հատուցման օրը:

Իսկ տիրասպան կինը ավելի ուշ սգավոր դարձավ, մերկանում և քարեր վերցրած ծեծում էր կուրծքը: Այնքան խփեց, որ արյան առվակ էր հոսում: Մեծ ողբով, դառն աղաղակով ճչում էր ու դատապարտում իր չարագործությունները: Եվ գալով վանքի դիմաց, դեպի արևմուտք՝ ձորակի այն կողմում հողը փորելով՝ մինչև ստինքները թաղվեց. ամառ ու ձմեռ տոթակեզ և ցրտահար լինելով՝ վայում ու ողբում էր գիշեր-ցերեկ, խոստովանում իր մեղքերը: Այդպիսով շարժվում է հայրապետի գութը, որը տիրոջից ներում է խնդրում նրա համար: Մի օր էլ Պատարագի ժամին սրբի տապանից լսվում է ահեղ գոչյուն. «Թող ներվեն քո մեղքերը, ո՛վ կին»: Եվ դա լսելով բոլորը մեծ մարդասիրության ու անհիշաչար բարերարության համար փառք էին տալիս և գոհունակություն հայտնում Աստծուն: Իսկ կինը թեև ներում ստացավ, բայց տեղից դուրս չեկավ, այլ, մնալով այնտեղ, վախճանվեց և թաղվեց իր ապաշխարհության փոսի մեջ. ու վանքի դիմաց այդպես էլ մնում է:

4. (171) ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

Աղվանքի գահերեց իշխան Վարազ Տրդատը մի դուստր ուներ՝ Շահանդուխտ անունով: Նրա կերպարանքն արտասովոր էր ու հրաշալի. չքնաղ գեղեցկությունը զարմանք էր պատճառում տեսնողներին: Ոչ ոքի չէր թվում, թե նա նյութեղեն է. այլ կարծես թե կերպարանափոխված էր լուսատար օդից ու նրբանուրբ շողերից: Նրան հարս խնդրեցին Թորգոմյան տնից: Եվ նա դուրս ելավ իր աշխարհից, հայրենի տնից, գնաց կին դառնալու հայ իշխանին: Մտնելով Բաղաց աշխարհը՝ անցնում էր ապահով տեղանքի ճանապարհով, մի ապառաժոտ վայրով, որտեղ մի քարաժայռի փլվածք էր՝ ահռելի խորությամբ, որն անդունդի նման ուղղված էր դեպի Տաթևի մեծ հայրապետանոցի կողմը: Հենց այնտեղ թաքնված, ծվարած էին սուտերամերկ զորքի լեզիոնախումբ ջոկատներ, որոնք Շահանդուխտի սքանչելի գեղեցկության պատճառով եկել էին Պարսկաստանից, հսկում էին ճանապարհների անցքերն ու կիրճերը, որ հափշտակեն այդ աղջկան:

Ողևորներն այդ բանին իրագեկ չէին: Զինված խմբերը հանկարծակի հարձակվեցին նրանց վրա և սրերը քաշած սկսեցին անխնա կոտորել այս քրիստոնյաներին: Ապա խորահավատ օրիորդն այս տեսնելով՝ հասկացավ պատճառը և, տերունական խաչով երեսին խաչ հանելով, ձին մտրակեց ու թռավ քարաժայռի փլվածք: Այս տեղեկությունը մի հնացած նամակում Շահանդուխտի ձեռքով էր գրված այսպես. «Ես՝ Քրիստոսի մեղավոր աղախին Շահանդուխտս, Վարազ

Տրդատի դուստրս, Թորգոմյան տունը հարս էի գնում. Հասա Բաղքի սահմանները, այս քարաժայռի գլուխը, որտեղով ճանապարհն է անցնում: Ահա (այստեղ) ինձ հանկարծակի հանդիպեցին իսմայելցիները, որոնք իմ հոչակված գեղեցկության պատճառով կամենում էին ինձ հավիշտակել: Նրանք սրերը քաշած կոտորեցին ինձ հետ եղած հեծելագունդը: Եվ ես լավ համարեցի գայլաբարո այլազգիների ձեռքով կորչելու փոխարեն գահավիժումով մեռնել իմ Քրիստոսի համար: Եվ հիշելով սուրբ Աստվածածնին ու սուրբ Հռիփսիմեին՝ ինձ հանձնեցի Սուրբ Երրորդությանը. ողորմելի անձս խաչակնքեցի սուրբ խաչով և ձիու սանձը ետ դարձնելով՝ թռա քարաժայռից: Քամու ուժգին հոսանքով, աներևույթ զորությամբ, կարծես թե կառքով իջա այս ձորի խորխորատը, ձիս էլ հետս՝ անվնաս: Այնտեղ դադար առնելով՝ մեծ հիացումով խիստ գոհունակություն վերաանաքեցի ինձ այդպես փրկողին և այս անդորր տեղում իմ անձը նվիրեցի Քրիստոսին. ուխտեցի այլևս այստեղից դուրս չգալ մինչև կյանքիս վերջը: Իսկ իսմայելացիներն այս տեսնելով մեծ զարմանքով անվնաս թողեցին մի մատուռ ու մի խցիկ, որտեղ ճգնեցի կյանքիս մնացած ամբողջ ժամանակամիջոցում: Թեև ծնողներս ու հարսնածու իշխանները շատ թախանձեցին, բայց ես տեղիցս չշարժվեցի: Հրավիրելով Սյունյաց երանելի եպիսկոպոսին՝ ենթարկվեցի նրան և իմ ամբողջ ունեցվածքը տվեցի նրա ձեռքը՝ կես մասը բաժանելու կարիքավորներին, կեսն էլ տալու Տաթևի սուրբ եկեղեցուն: Նաև սուրբ եկեղեցուն ավանդեցի այս տեղերը՝ ամբողջ ձորով հանդերձ, որ ընկած են Շահերի սահմանից վեր, մինչև Գինական գետը»:

Նա մնալով այնտեղ իր մոտ է հավաքում ուրիշ կույսերի և տառապալից ճգնությամբ ապրելով երեսուն տարի՝ մեռնում է: Եպիսկոպոսը գնալով թաղում է նույն տեղում սրբի երանելի մարմինը:

ՍՐԲԱՎԱՅՐԵՐ

1. (172) ՊԱՆՏԱԼԵՈՆ ԲԺՇԿԻ ՄԱՏՈՒՌԸ

Ղարազշալախ հայաբնակ գյուղի արևելյան կողմում՝ բարձրացող բլրակի վրա, գտնվում է Պանտալեոն բժշկի մատուռը, որ նույնպես մեծ ուխտատեղի է: Սա մի հասարակ, բավական մեծ մատուռ է, որի մեջ գտնվում է Պանտալեոն բժշկի գերեզմանը: Սրա տապանաքարը սկզբում մի հասարակ կոճղ է եղել, բայց հետո շուշեցի Թ. Թամիրյանի ծախքով քար է ձգված: Այս մատրան մոտ գտնվում է մի ուրիշ, շատ փոքրիկ մատուռ ևս, որի մեջ նույնպես մի գերեզման կա: Ոչ մի արձանագրություն չկա, միայն ժողովուրդն ասում է, թե այդ գերեզմանը «Շահգաղիին» է:

Ժողովուրդը Պանտալեոն բժշկին պարոն Պիժ է կոչում և մեծ հավատով վերաբերվում:

2. (173) ԼՈՐ¹⁰²

Ասում են, թե երբ հայոց Լորիկ իշխանը թշնամու դեմ հերոսաբար կռվելով գոհվում է, նրան թաղում են գյուղից ոչ հեռու և վրան մատուռ կառուցում, իսկ գյուղին էլ տալիս են իշխանի անունը՝ Լոր: Մինչև հիմա էլ կանգուն է Լորիկ իշխանի մատուռը:

3. (174) ԵԶՆԱԽԱԶԻ ՄԱՏՈՒՌ

Ժամանակին այս ձորերում ու բլուրներում խիտ անտառներ են եղել: Մի որսորդ հալածել է եղնիկներին, որոնք, գալով այստեղ, իսկույն աներևութացել են: Որսորդը սուրբ է համարել այս հողը և դադարել է այլևս որս անելուց: Նա ճգնավոր է դարձել և կառուցել մի մատուռ, որին տեղացիները Եզնախաչի մատուռ անունն են տվել:

4. (175) ՍՈՒՐԲ ՎԱՐԳԱՆ¹⁰³

Այստեղի բնակիչները, երբ գաղթելիս են լինում Պարսկաստանից, հետները տոպրակով հող են բերում Վարդան գորավարի գերեզմանի վրայից և այդ հողի վրա նոր բնակավայրում վանք են շինում՝ անունը Սուրբ Վարդան դնելով:

5. (176) ԱԳՌԱՎԱԽԱԶ

Ծիծեռնավանքը կառուցող բանվորներին կերակուր եփելու համար մի մեծ կաթսա են տանում մոտակա գետը և ջրով լեցնելով դնում են կրակի վրա: Ջրի հետ մի օձ է ընկնում կաթսայի մեջ և մնում աննկատելի: Երբ գալիս է ճաշելու ժամը, մի ագռավ կռկռալով սկսում է պտտվել կաթսայի վրա: Բանվորները ուշադրություն չեն դարձնում և նստում են ճաշի: Հանկարծ ագռավը ծղրտալով նետվում է կաթսայի մեջ: Պղծված համարելով կերակուրը, բանվորները թափում են այն: Մեծ է լինում նրանց զարմանքն ու հիացումը, երբ կերակրի մեջ նկատում են օձի մարմնի մասերը: Նրանք երախտագիտությամբ պատանքում են ագռավի մարմինը և հանդեսով թաղում վանքի արևմտյան պատի մոտ, վրան էլ խաչի նման մի մեծ քար կանգնեցնում, որը կոչվում է Ագռավախաչ¹⁰⁴, իսկ օձի պատկերը նկարում են վանքի պուրներից մեկի վրա:

¹⁰² Գտնվում է Միսիանի շրջանում (Ծ. Կ.):

¹⁰³ Գտնվում է Միսիանի Շոռոթ գյուղի մոտ (Ծ. Կ.):

¹⁰⁴ Գտնվում է Տաթև գյուղից հյուսիս-արևելք: Բանահավաքն ունի հետևյալ ծանոթագրությունը. «Մինչև այժմ էլ այդ ագռավը պաշտում է, և երբ երեխաները շուտ չեն սկսում քայլել, չեն «տղընորում», տանում են այդ քարի մօտ, քարի առաջ մոմ վառում, մի մեխ կամ մի ձու դնում քարի տակ և երեխայի ոտներին ջուր են ածում, հալատալով, որ այսպիսով նա շուտով կսկսի քայլել»:

ԶՎԱՐՃԱՊԱՏՈՒՄՆԵՐ

1. (177) ՄԱՆԳԱՊԱՐՏԵԶ

Պապիկը, խուխին ծերքան փոնած, տանում ա մանգապարտեզ: Խոխան շատ ա ուրախ, չորս դուլին եշիլավ քյինում ա: Զրոսայգավը վրեր անցա կենում, տենումա վրեր ալ արև չկա, պատառ վրեր քյինում են, ալլա արևը տոնս ն կյնլիս:

Խոխան ասում ա.— Պապիկ, պապիկ, եշի, արևը մեզ նհետ կյալիս ա մանգապարտեզ:

2. (178) ՊԱԴԱՍԽԱՆ

Պապիկը թոռնիկի նհետ քինում են քուր: Ճրնհապահընգյեր պապիկը թոռնիկին պատմումա թունավոր սնգների մասին: Տրանա ետը պատմում ա քուումը ապրող գիշատիչ կենթանիների մասին: Եդավ թոռնիկին անա հըրցնումա.— Հինչ կանես, վրեր ըռչաթ մի կել տյոնս կյն:

— Թունավոր սնգունը կքցեմ կյելին վրնն:

3. (179) ՆԱԼԵՐԸ

Մեհետ մի մառթ չորս նալա ճարում: Տա ուրախանում ա, ըշխարքավը մին տննում: Կյալիս ա տոն, կընգանը պատմում, վրեր չորս նալ ա ճարալ:

— Մնում ա վրեր մի ծի առնեմ, աման օր ծիյավ քյինամ հանդը:

Կնեկն ասում ա.— Այ մարթ, էթ լյավ տնննվ, ծին նիի կիլեմ, շոտ-շոտ կքինամ իմ հերանց տոն, կյամ:

Մարթը կըգնվում ա, ասում ա.— Շան ախճիկ, ծին նիիլ ես իլում շուտ-շուտ քյինում հերանց տոն, բա վրեր քրտինքի, բա վրեր բուրդան դուլանաստի, հոմ ա ջողաբը տալու:

— Ես եմ գյուղում, մեր ծին, հինչ կանեմ, կանեմ:

Մարթը ըստեղ կնգանը մի լյավ թակում ա, ճոնր անում:

4. (180) ԿՅՈՂԸ

Մեհետ մի կյող նում ա տում մի հայաթ, վրեր կյողություն անի: Մի ախճիկ տյոնս ա կյամ տրա առաչը:

— Ախպեր, էթ հոմ եք օգում:

Կյողը չաշմիշա իլում, գիղում չի թն ըխճըկանը հինչ ասի:

Ետ ա տառնում, թա.— Աչո՛, պապադ տաննս ս:

— Հա:

— Պապիթ անումը հինչ ա:

— Մեխակ ա:

- Մամաթ տանն ան:
- Հա:
- Բա մամութ անումը հինչ ա:
- Նարգիզ ա:
- Բա քու անումըդ հինչ ա:
- Վարթիկ:

Էթ մարթըթ գարմացած ինքն իրան ասում ա. — Էս շտեղ եկի, եկալ եմ ապրանք կյուղանամ, թամ ծաղիկ փնջեմ:

5. (181) ՏՈՒՔ ՈՒՇԱՑԱԼ ԸՔ

Կինոսին կընեկը գանգ ա տամ «շտապ օգնություն», թան . — Շնուտ ըրեք, եկեք, մարթս տաքության մեչ էրվում ա, տաքությունը հասալ ա իծուն աստիճանի:

Շտապ օգնության պժիշկն ասում ա. — Տիւք ուշացալըք, քույրիկ, տա արտեն մեր գործը չի, գանգ տվեցեք պաժառնիկներին:

6. (182) ՀԱԶԱՆ ՇՈՆԸ

Կինոսը քինումա մին օրիշ շեն: Մուտանում ա ուրանց պարիկամին դըվրգին, մի շոն վրան հաչումա, Կինոսը ըտաղաթ փախչումա:

Մի կնեկ հետևան կանչում ա. — Ախպեր, խեյրս փախճում: Էն առածը լսալ չըս, վըեր հաչան շոնը կծող չի ընում:

- Առածը ես լսվ ըմ գիտում, պա շոնն ալ ան գիտում:

7. (183) ԹԱԶԱ ԿՆԵԿԸ

Կինոսին կնեկը մեռնումա: Մի քանի տարան եղը Կինոսը փասկվումա ուրան կնգանը քվորը վըրան:

- Փարսին ասում ա. — Կինոն, օրիշ կընեկ չես ճարալ, վըեր քենութ ես օգալ:
- Իմ տարիքի տղամարթը նոր գոքանչի նհետ կարա« չի կլոխ տընի:

8. (184) ԱՆԳԻՆԱ

Կինոսը շուտ-շուտ հիվանդանում ըլալ:

Պժիշկը լալ քննիլան եղը ասում ա. — Ես հաստատ համոզված եմ, վըեր քու հիվանդության պատճառը անգիանան ա:

— Պժիշկ ջան, դուզ ըս ասում, համա ըխճըկանս անումը Անգինա չի, Անժե-լայա:

9. (185) ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Կինոսը տղին փսակում ա: Հին աղաթավը հարսը պիտի սկեսուրին, մին ալ պատրոնին վեններնին լվաննր: Դրա փոխը պատրոնը պիտի մի թնգանոց նվեր տա:

Երփ վրեր հարսը ընդա վենները լվանում ա, Կինոսը տեսնում ա, վրեր մի տալի պանն չկա, ասում ա. — Հարս ջան, չնեղանաս, վրեր միենոց մին թնգանոց պեն չոնիմ տալու: Տե վրեչ մի պեն, մի քանի օրան եղը էշը ծնելուվա, քուռակը կնվիրեն քեզ:

Հարսն ասում ա. — Ապեր, իտի պեներ ասում իլ, տու ինձ հետե հան էշ ըս, հան քուռակ:

10. (186) ՔԵԹ ԾԻՔ ՏԱԼՈՒ ԱՄԵՍ Ա

Կինոսը ավթոյով քինում ա բիդի Գեղանուշ: Տեսնում ա կոխկին նստած մի մարթ շուշուտ քիթը սրփում ա:

Չափը վրեր անցա կրնում, Կինոսին ասում ա. — Ծիք տոր, ծիք տոր, պարիկամ, քեթ ծիք տալու ամես ա:

11. (187) ԿՅՈՒՄԱՇԸ

Կինոսը մի կթնատու կյումաշ ա առնում: Մին օր հանդան պոնչալավ կյալիս ա:

Կինոսն ասում ա. — Ջան, Սևուկ ջան, թայդի ենք: Եթե ուժումըս ըլեր, կոքնիթ վեսկի կքցեյի:

12. (188) ՎԵՐՆ Ա ԼԱՎ

Մեհետ Կինոսին անա հրցնում ըն. — Էս աշխարըս ա լնվ, թա էն աշխարհը: Կինոսն ասում ա. — Էն աշխարհը:

— Պա խն:

— Ընդա հետե վրեր քեցողները ալ ետ չըն կնվիս:

13. (189) ԱՌՈՒՏՈՒՐ

Կինոսը հայտարարություն ա տալիս, թա՛ տոնս ծախում ըմ: Հիբ վրեր առող մուշտարիյա կյալիս, ասում ա. — Ա՛յ հընգեր, խեյես էթքան թանոց ասում:

Կինոսն ասում ա. — Ես մինակ տոնը չեմ ծախում, նետը լնվ հրեվանալ ըմ ծախում:

14. (190) ՀԱՎԻՆ ՄԱՌԹԸ

Կինոսը քինում ա շուկա, վրեր վերցակ առնի: Տեսնում ա վերցակ ծախողը ոռուսու կնեզ ա: Կինոսը գիդում չէր ոռուսերեր վերցակին հինչըն ասում: Մի պա-

տար մտածելան եղը ծախողեն անա հրըցնում ա.— Մեստրա ջան, հավեն մառ-
թը քանիյա:

15. (191) ՀԱՅԿԵՐՈՒՅԹ

Կինոսը տղին նհետ քինում ա քաղաք:

Քաղաքումը շատ վրեր մանըն կյալիս, տղան ասում ա.— Պապս, սովալըմ,
մի պեն ինքկալ, օտինք:

Կինոսն ասում ա.— Եք բուկի առնիք, հացալ օտինք:

16. (192) ՊԵՏԸ

Մեհետ Կինոսին թնութունը պրծնում ա, քինում ա պետին կոշտը ասում.— Ավ-
րորա օնին:

— Չոնիմ, — պատասխան ա տալիս պետը:

— Կազբեկալ չոնին, — նորից դիմում ա Կինոսը:

— Չոնիմ, չէ:

— Դե տու ալ հինչ պետ ըս:

17. (193) ԱՉԻ ԱՇԿԸ

Մի մարթու անչի աշկը խարաք ա տեռնում: Էթ մարթըթ քինում ա պժշկին
կոշտը, վրեր աշկը փոխել տա: Պժիշկը աշկը տուս ա օնում, տինում սեղանին
յրան: Մինչ աշկին տեղը թմզիլը կատուն աշկը կյուղանում ա, կոլ տամ: Պժիշկը
փոռնում ա կատվին աշկը հանում, տինում էթ հիվանդիթ աշկին տեղը: Տրան լա-
վացնում ա, տուս կիրում տոն: Մի առ ժամանակ անց պժիշկը պտահում ա հի-
վանդին:

Պժիշկն ասում ա.— Աշկըթ հունց ան:

— Լավ ա, համալ մի թերություն ունի:

— Հինչ թերություն ա:

— Վրեր շոնըմ տեսնում, վախում ըմ:

— Ա՛յ ախպեր, տուվ ալ վրեր շոն ըս տեսնում, անչի աշկըթ փակե:

18. (194) ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ԱՂՔԱԴԸ

Մի աղքաղ մարթ ա ընում: Տրա մինուճար տղան մեռնում ա: Տերտերը կյամ
ա աղոթք անում պրծնում, տանում են թաղում: Թաղուման եղը տերտերը հախն
օգում ա: Աղքատին փող չի ինում, վրեր տա:

Տերտերը ստիպում ա, թա.— Շտաղան օգում ըս ճարե, տո՛:

Աղքաղը վրեր նեղվում ա, ասում ա.— Տեր հայր, խե՛յ ես ինձ չըրչարում: Քու
տղաթ ալ վրեր մեռնի, ես ծրի կթաղեմ, ալ ուրո՛ւր պարտք չեք ըլի:

19. (195) ՊԺԻՇԿԻՆ ՔՇՏԻՆ

Մի կրնեսկ նորան գեղեցիկ ըխճըկանը նհետ քինում ա պժիշկին կոշտը:
— Շորերը՞ հանի,— առաջարկում ա ըխճկանը:
Մերն ասում ա. — Պժիշկ ջան, հիվանդը ես եմ:
— Հա, ներիր: Խնթրում եմ ցույց տալ լիւզը՞:

20. (196) ԻՎԱՆԸ

Իվանը վրէշ փեշակ ուներ, վրէշ ալ լուգուվա գիդում: Բայց գյուղան իրես ա թեքում, քինում քաղաք: Գյուղացիք ընդա մորը թոմննթ են տալիս, թնն՝ խնյա թոնդալ, վրեր քինի քաղաք, իսկ գյուղումը ընդա հետի կործ շատ կար: Բայց Անուշ աքերը հպարտորեն էր խոսում Իվանի մասին: Մեհետ կնանիքը հրցնում են, թա Բաքվում Իվանը հինչ ա անում, հինչ փեշակավ ա:

Անուշն ասում ա. — Իվանին ջանին մատաղ, Բաքվի տարնա, մի մեծ մեղալալ կախն տված դիշնն:

- Ախր պաշտոնեն անումը հինչ ա:
- Վակզալումը համբալ ա, ջանեն մատաղ:

21. (197) ՀԱՄՓԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՅԱՆՔ Ա

Մի թաքավեր սիրահարվում ա ուրան ծառաներան մինին կնգանը վրա: Էթ կնեկը՞ շատ կեղեցիկ և իմաստուն կնեգ ա ինում: Սա թաքավերին մերժում ա: Թաքավերը որոշում ա տրա մատթին սպանիլ տա, վեր կարա կնգանը ծերքը քցի: Ծառային հրաման ա տալիս, վրեր մին օրումը հենց հիլի շինի, վրեր նորան պալատը մեչին ըրվա: Ծառան կլոխը կախ տված, քեֆը փիս քինում ա տոն, կնգանը աման պեն պատմում ա:

Կնեգը հանգստացնում ա. — Հուսահատվիս վեշ, համփերի, մեր պապերն ասալ ըն, վրեր համփերությունը գյանք ա: Մինչև լիւս ժամանակ շատ կան, ըռավոտը աման պեն կպարզվի:

Քշերավը ծնքը-ծնքին թաքավերին պալատան ծառային կանչում են, թնն՝ թաքավերը մեռել ա, եք մի դագաղ պատրաստի: Ըտաք վրեր լսում են, մնում են երքաշված:

Կնեկն ասում ա. — Ա՛յ մարթ, չասեցի՞՛ համփերությունը գյանք ա:

22. (198) ՀՆԳԵՐԸ

Մեհետ էրկու հնգեր քինում են քուր, վրեր հաղարճ քաղեն: Իննց մհար լավ օտում են, զամբյուղնին լցնում, մի ծառի տակի քոն ըլում: Վրեր զարթնում են, մթենը ընգած ա իլում:

Մի հնգեր ասում ա. — Շուտ անեք, քինանք տոն:

Էն մի հնգերն ասում ա. — Վախում ես, չէ՞: Էս բոպեյիս վրեր մի արչ տոնս կյա, հինչ կանես:

- Վրագ կպիրցրանամ ծառը:
- Բա վրեր արչն ալ պիրցրանա:
- Նիհ կլեմ ճողնին պտոկը:
- Բա վրեր արչն ալ նիհինի ճողնին պտոկը:
- Տիւ իմ հնգերն էս, թա արչին:

23. (199) ՄԱԴՐԱՍԵՑԻՆ

Մի մարթ օգում չի մադրասեցու իրես տեսնա: Հենց տեղեր ա քինում, վրեր մադրասեցու պտահի վեչ: Մի անգամ էթ մարթըթ բգարան մի ծմերուկ ա առնում, քինում իւրանց պարիկամին տոնը: Ըտնք հաց են օտում պրծում, եղավ ծմերուկը կտրում են, վրեր օտեն, միչան մի մադրասեցիյա տուս կյալիս: Էթ մարթըթ մադրասեցուն տեսնելուն պես թողում ա ըտաղաթ փախշում:

24. (200) ՍԱՐՅԱԿԻՆ ԽՐԱՍԸ

Մի սարյակ իրեք հատ նախշուն ճոտ ուներ: Ըտաց անա երկուսն ժիր են, մինը պատար թուլ ա ըլում: Մերը մշտական էն երկունին խրատ ա տամ, վրեր բիրդան երկնիսմի չար խոխա կռանա տափան քարը յոռնի, վրեր ծեզ սպանի, զգուշ կըլեք, ըլբիհալի կթողնեք, փախնեք: Ճտերը թենց ալ անում են:

Շափաթը վրեր թմամում ա, թուլ ճոտն ասում ա.— Մամմ, ինձ ալ խրատ տուր, օգում եմ թոնեմ:

Մերն ասում ա.— Վրեր թոնես տափին երկյնլի վախտը ըզգուշ կըլես: Մի չար խոխա կարող ա մուտանա, կռանա տափան քար յոռնի, քեզ սպանի: Իլբիհալը պիտի թոնես, փախնես:

- Մամմ, բա վրեր քարը ծոցում ըլի, էն վախտը...
- Դե էթքանը վրեր գյուղում ես, ալ հինչ խրատ տամ ես քեզ...

25. (201) ՉԵՇՄԱԿԸ

Մի խոխա քշանա քշերավ քինում ա պժիշկին կոշտը:
Խոխան ասում ա.— Պժիշկ, ստամոքսս ցավում ա, հինչ անիմ:

Պժիշկն ասում ա.— Հինչ ես կերալ:

— Մի քանի խակ ծերան եմ կերալ, բնլնմ ընդաննյա:

— Պժիշկը մթքումը ծողրթիթես ա անում, եղավ մի թուխտ հանում, կիրում

«Չեշմակ»:

Տղան թոխտը յոր ա էնում, մնում զարմացած, ասում ա.— Պժիշկ ջան, երևի ինձ հըսկացալ չես, չեշմակը հինչ են անում:

Պժիշկն ասում ա.— Կակոագ քեզ չեշմակ ա հարկավեր, վրեր հսած միթքը խական տարբերես:

26. (202) ՄԱՆԳԵՂ ՇԻՆԻԼԸ

Մեհետ մի գյուղացի քինում ա նալբանդ Պետունց Արշակին կոշտը, վըեր մանգեղ պատվիրի:

Ասում ա.— Արշակ, ինձ հետի մի օրադ պրդրաստի, իմը կոտրալ ա, արտս մնացալ ա առանց հնձիլի:

Նալբանդ Արշակը թա.— Ժամանակ չօնեմ, Հարութ, օրիշ կործ կա ծերքիս:

Հարութն ասում ա.— Ա՛ տնաշեն, օրադ շինիլը հինչ ա, մին արկաթս ծոում ես, մին դոլան՝ սրում, տյանում ա օրադ:

Նալբանդն ասում ա.— Հրեկան, հենա տյու օրադը շինեցիր, երկալ քինա:

27. (203) ԽՈՒՄԱՆ ՀՈՐԸ ԽՐԱՏՈՒՄ Ա

Ըլում ա չըլում, մի շատ հլիվերած մարթ: Էթ մառթիթ ընջկնին առթեն քուացած, ծնգները թուլացած, կարում չի տեղան տուրուր կյա: Քթուրը կարում չի մինչև պերանը տանի: Տրա հարսն ու տղան նեստան զգվում են: Ճըրըրնին կտրած հլիվերին հետի մի կյավաթ են ճարում, առանձին նստցնում, վըեր ուրան հետի հաց օտի: Հունցա ըլում, մի օր կյավաթը ծերքան երա ընգյում, փշրվում: Հարսն ու տղան ըջղված տրա հետի մի փեղի աման են ճարում, վըեր կոտրի վեչ: Օրերան մի օր տրանց հինգ տրեկան խոխան տախտակնիյա հվաքում, պիրում տանը թափում:

Հերն ասում ա.— Ջանիկ, էթ հինչ ես անում:

— Փեղի աման եմ շինում, վըեր հլիվերես, միչին խորագ օտես:

28. (204) ԼԱՎ Ա, ՉԷ՛

Մի հարուստ մառթ, ուրան մադար ըխճկան օգում ա տա ուրան նման մի հարուստ տղի: Մառթ ա քցում դաթը, վըեր կարան մի լավ մուշտարի ճարեն: Մի խորամանկ տղա, էթ պանըթ վըեր կլխիյա ընգյում, եր ա կենում, քինում էթ հարուստիթ կոշտը: Հարուստի ունքամեչը պաց ա ըլում:

Փսացուին կանչում ա կոխկը՝ գրույցի.— Դե պատմի տեսնամ՝ հինչ ունես, հինչ չունես:

— Իրիք հարկանի տոն որ ունենամ, լավ ա չէ:

— Հինչ խոսկ:

— Էրկու հարյուր հատ վեխճար, ըստա հինչ կասես:

— Տա կարքին հարստություն ա:

— Անտառ, մարքագետին, վարելահողեր, լավ ա չէ:

— Սքանչելի:

— Իրեք խանութ ուրաց ծառաներավը, լավ ա չէ:

— Ախպեր, ալ հարց չօնիմ, ախճիկս քեզ փեշքեշ, երկալ տար, ծեզ հետի ապրեցեք:

Ըխճկանը փսակում ա էթ տղիթ նհետ, դարկում ուրանց գյուղը: Մի քանի օրան եղը ախճիկը հերանց ա կյալիս, սկսում լաց նիլը:

Հերն ասում ա. — Հի՛նչ ա պտահալ, ին՛ ըրտասունք ես թափում:

— Բա հի՛նչ անեմ, մարթս աղքատի մեկն ա, նա քեզ խափեց, թե՛ հարուստ եմ:

Հարուստը կանչել ա տալիս փեսային և ամոթանք տալիս, թա՛ խեյես խափալ: Պարզվում ա, վրեր օրվա աղքատն ես:

— Հո չեմ ասալ, վրեր ունեմ, ասել եմ՝ վրեր ունենամ լավ ա չէ՛:

29. (205) ՏՂԱՄԱՐԹԻՆ ԽՈՍԿԸ ՄԻՆ ԿԸՆԻ

Մեհետ Կինոսին հրցնում են, թա քանի՞ տրեկան ես:

Կինոսն ասում ա. — Վաժնոն:

Մի քանի տարան էդը ալա հրցնում են, թա. — Կինոն, քանի՞ տրեկան ես,

Կինոսն ասում ա. — Վաժնոն:

Ասում են. — Բա թե՛նց պան կըլի՛:

Կինոսն ասում ա. — Տղամարթին խոսկը մին կընի:

30. (206)

Մեհետ Վարթանիկը նումատում ուրիշի բաղ, նիհ լում խնձորի ծառը, սկսում ա քաղիլը:

Ընկեր Մարգոն տեսնում ա, մուտանում ա, ասում. — Վարթանիկ, հորըթ ասիլով եմ, ուրիշին բաղան խնձոր չեն քաղիլ:

— Ընկեր Մարգո, հերս ալ էն մի ծառին ա:

31. (207)

Ընկեր Մարգոն տեսնումա, վրեր Վարթանիկը պապոռոգա քաշում, ըսկսում ա թո՛հմաթ անիլը, ասում ա. — Նիկոտիսին 2 գրամը ծիյանը սպանում ա:

Վարթանիկն ասումա. — Իսե ծին ալս՝ պապոռոգ քաշում:

32. (208)

Մի կնգան ամբար մի մոկուն ա նիմտնում, ալիըը խարաբ անում: Էթ մարթըթ տերտերին խնթում ա, վրեր մոկնին կյիր անի, վրեր ալ կարա վեչ նիմտի ամբարը: Տերտերը մի փեղ ա տաշում, ամբարի ծակը փակում:

Էթ կնեկըթ ասում ա. — Մերըթ չմեոնի, տերտեր, բա ասում են տերտերի կյիր անիլը սոտ ա, էն մոկունը ին՛ կորավ:

33. (209) ՇԱՆ ՕՐՀՆԱՆՔԸ

Մի գյուղում մի շատ թափառական ու անպետք շուն է լինում: Սա միշտ մտնում է ամեն տուն ու պուճախ և ամանեղենը լիզում այնպես, որ ամեն օր գյուղի տերտերի մոտ տասնյակ ամաններ են բերում, թե՛ Տեր հայր, հարամած է, հալալի՛ր այս ամանները:

Շատ որ տերտերի գահին տանում են, մի օր էլ սա բացականչում է. — Ախպեր, չի լինի էդ շունը բռնեք, բերեմ դուռնս, միանգամից հալալվի, գնա:

34. (210)

Մի մարդ, հին շորի վրա նոր կարկատաններ կարած փողոց է դուրս գալիս: Մի ուրիշը տեսնելով ասում է.

— Ախպեր, ըրխըլըդդ տեղ-տեղ շնորհավոր լինի:

— Օր ու մեջ ապրեն, ախպեր, — պատասխանում է նա:

35. (211) ԳՈՂԵՐԸ

Մի մարդ իրիկունը տանը նստած տեսնում է, գողերը հավաքված, ուզում են սրա տունը թալանեն: Այս մարդը ըսկի տեղիցն էլ ժած չի գալիս: Գողերը մտնում են և ամեն ինչ հավաքում ու դուրս գնում: Տանտերն էլ նրանց հետևից է գնում:

Այս տեսնելով, գողերից մեկը ասում է. — Ա՛յ մարդ, դու ո՞ր ես գալիս:

— Դե իմ տունը քոչում եք ուրիշ տեղ, ես էլ եմ գալիս:

36. (212) ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ

Մելիք Շահնագարին մի վատ տղա է լինում, ինչքան վանք, եկեղեցի են տալիս, որ գրեկ-կարդալ սովորի, չի լինում:

Մելիքը դառնում է Պուղին և ասում. — Ա՛յ տղա, Պուղի՛, որ էդքան խելոք ես, իմ տղին գիր ու կարդալ սովորեցրու:

— Տեր Մելիք, լավն են ա քոյից արչ փոնես պիրես, վեր ես կարդալ սովորեցնեմ, քան քու տղին:

— Եթե այդպես չարիր, քեզ կախել կտամ, — բարկանում է Մելիքը և հրամայում անտառից մի արջի քոթոթ բերեն:

Սյուս օրը որսկանները քոթոթը գյուղ են բերում:

— Դե՛, Պուղի՛, ահա քեզ արջի քոթոթ, եթե մինչև երեք օրը կարդալ չսովորեցրիր, քեզ կախաղան եմ հաննելու:

Պուղին վերցնում է մի հին ավետարան և սկսում է իր «կրթությունը»: Ավետարանի ամեն երիսի մեջ մի չամիչ է դնում և դնում քոթոթի թաթերին, քոթոթը թերթերը հետ է տան և չամիչն ուտում: Էսպես սովորեցնում է, մինչև որ արջն արդեն արագ սկսում է թերթել գիրքը: Սյուս օրը արջը հետևը քցած, շղթան ձեռքին Պուղին մտնում է Մելիքի ամարաթի բակը:

— Հը՛, սովորեցրե՛լ ես. — բարկությամբ հարցնում է Մելիքը:

— Հրամանքդ, տեր Մելիք, սովորեցրել եմ:

— Դե գիրքը տո՛ր թող կարդա:

Մեծ բազմություն էր հավաքված: Պուղին գիրքը դնում է արջի թաթերին: Արջը սկսում է գիրքը թերթել, որ չամիչն ուտի, այնինչ ոչ մի չամիչ չկար: Բարկությունից քոթոթը սկսում է մրթմրթալ և գիրքը թերթել: Ամբոխը ծիծաղից թուլանում է:

37. (213)

Մի գյուղում ապրում էր մի շատ անխիղճ և անմարդասեր մարդ: Գյուղում մարդ չկար, որ նրա հետ լավ հարաբերություն ունենար:

Մի օր գյուղամիջում հավաքված մարդկանցից մեկն ասաց. — Ա՛յ մարդ, բա դու ըսկի էն դունյի համար չե՞ս մտածում, ախր էդքան մեղքերիդ համար Աստված քեզ դժոխքը կուղարկի:

— Ես որոշել եմ, — պատասխանեց չար մարդը, — մեռնելիս հետս մի փետ և մի քսակ ոսկի տանեմ:

— Ինչի՞ համար:

— Որ դրախտի դռնապաններին կաշառք տամ:

— Ախր նրանք կաշառք չեն ուտում:

— Փետս կքաշեմ, կծեծեմ, ներս կմտնեմ:

— Էդ էլ չի լինի:

— Էդ էլ որ չլինի, հո դժոխքից աղաչում եմ, դժոխքը կգնամ, — պատասխանում է անխիղճ հարուստը:

38. (214)

Մի քաղաքում մի հայտնի դերձակ էր ապրում:

— Արար աշխարհում էսպիսի դերձակ չի լինի, — պարծենալով ասում էին քաղաքացիներն իրար:

— Շատ լավ, — ասում է մի մսագործ, — ես կփորձեմ նրա վարպետությունը:

Մյուս օրը մսագործը կանգնում է դերձակի խանութի առաջ. — Ախպեր, — ասում է նա, — ինձ համար մի արխալուղ կարես:

— Ինչու չէ, կտորը բեր, կարեմ, — մեղմ ժպտալով պատասխանում է դերձակը:

Մյուս առավոտ մսագործը մի ահագին քար շալակած իջեցնում է դերձակի խանութի առաջ, թե՛ ահա՛ կտորս, դե կարի՛:

— Աչքիս վրա, — պատասխանում է դերձակը, — շատ լավ արխալուղացու է, — քարը ոտքով հրելով ասում է նա, — միայն դու գնա ավագից թել բեր, ես արխալուղը կարեմ:

39. (215)

Մելիք Շահնազարի տունը մի առևտրական է գալիս և ասում է. — Մելիքն ապրած կենա, ես գնում եմ Հնդկաստան՝ ակն ու գոհարի առևտրի, եթե քեզ հարկավոր է, փող տուր, քեզ համար էլ բերեմ:

Մելիքը 100 ոսկի է տալիս և պատվիրում, որ սա թանկագին զարդարանքներ բերի կնոջ համար, որովհետև Մելիքը մտադիր էր այդ տարի իր տղուն պսակի, ուզում էր հարսի համար զարդեր ձեռք բերի: Առևտրականը 100 ոսկին գրպանն է դնում ու գլուխ տալով հեռանում:

Մի քանի օրից հետո Մելիքը կարգադրում է Պուղուն, որ սա իր աշխարհի

բոլոր խենթ մարդկանց ցուցակն ասի և իրեն տա: Մյուս օրը Պուղին մի ցուցակ է ներկայացնում, որտեղ ամենից առաջ գրված էր Մելիք Շահնազարի անունը:

— Այ տղա՛, դու գժվել ես, էս ինչո՞ւ ես իմ անունն այստեղ գրել, նա էլ ամենից գլխին:

— Մելիքն ապրած կենա, — պատասխանում է Պուղին, — բա որ քունը չգրեմ, էլ ո՞ւմը գրեմ:

— Ինչո՞ւ, այ գի՛ծ:

— Բա, որ խելոք մարդ լինես, վեր կկենաս քեզ անծանոթ, հեռու աշխարհից եկած մի առևտրականի 100 ոսկի տաս, անտեղի կորցնես:

— Ինչո՞ւ անտեղի, Պուղի:

— Որովհետև նա էլ հետ չի գա:

— Իսկ եթե եկավ, — հարցնում է Մելիքը:

— Այն ժամանակ ես ցուցակից քո անունը կջնջեմ, նրանը կգրեմ, — պատասխանում է Պուղին:

40. (216)

Մի տանը մնացած աղջկան ասում են, թե՛ հրեն, քեզ համար ուզողներ են գալիս: Աղջիկը սկսում է լաց լինել:

— Ինչո՞ւ ես լալիս, աղջի՛:

— Վախենում եմ սուտ լինի, — պատասխանում է նա:

41. (217)

Ուշ աշուն էր: Բանջարանոցում ոչինչ չէր մնացել, մենակ կաղամբն էր հսկայական գլխով:

— Ինչո՞ւ ես այդպես գլուխդ մեծացրել, կաղամբ, — հարցնում է նրան մի գիշեր կեղևը կրծող նապաստակը:

— Որովհետև իմ բոլոր հարևանները՝ ճակնդեղը, վարունգը, կարտոֆիլը և ուրիշները հեռացել, գնացել են, բանջարանոցում մնացել եմ մենակ ես և այնքան միտք եմ արել, որ գլուխս ուռել է, — պատասխանում է կաղամբը:

42. (218)

Մի տերտեր իրիկվա ժամը կարդալիս, մտնը բռնած տիրացուին անընդհատ հրամայում էր, թե. — Ա՛յ տղա, մտնը մոտիկ պահիր, աչքս չի տեսնում:

Շատ որ կշտամբում է, մեկը ծռատակությունից դառնում է, թե. — Ա՛ղեր, խեղճ տիրուցը վեն թոհմաթ անըմ, քըզանըմ չի գաքյա կա, վեր գաքյա ինի, սլսլցնիլավ կկարթաս:

43. (219)

Մի մարդ, որ ծանր խուլ էր, ձիու վրա նստած, մի հին տիկ ձեռին գնալիս պատահեց իրեն ծանոթ մի այլ խուլի:

Էս վերջինս հարցրեց. — Քավեր, հու՛նց ես:

— Տեկ եմ տանում, — պատասխանեց ձիավորը, կարծելով, թե ասում է՝ ինչ ես տանում:

— Քավեր, սանամերը հու՛նց ա, — նորից հարցնում է առաջինը:

— Քմական ջուր ա քցում, քե մատաղ:

44. (220)

Մի այծ մի բարձր ժայռի էր կանգնած, նայում էր իր պոզերին ու հմայվում: Մի գել ժայռի տակին կանգնած բերնի ջուրը գնում էր:

— Ա՛յ, մի ներքև լինեի, էս սուր-սուր պոզերս փորդ խրեի, հան, — կանչում է էծը:

— Որքան կուզեի, էդ պոզերդ փորս մտնեի՛ն, — պատասխանում է գելը:

45. (221)

Մեկը գնում է հեռու աշխարհ, տեսնում է արևը ժպտում է ինչպես իր երկրում, բացականչում է. — Վանհ, էստեղի արևն էլ է մերի նման:

46. (222) ԷՇԸ ՀՈՒ ԿԱՐՈՒՃՈՒՐԸ

Շտեղան շտեղ էշը լսում ա, որ մարթիք մին անմահական խմիշկ են եփում ձորն ամման օրվա եմից՝ կնրոնցը: Կնրին լըցնում են ճրրի մեջ, թըթվըցնում, քըլթըլըցնում, խըմում: Դե ինքը մարթոցիցը ինչո՞վ ա պակաս, որ կարա ոչ կնրոնճոր սարքի:

Մին օր էլ ռեխը լիքը կնրի յա վե ունում, տանում թափում կետը, ինքը շըրադին թավիլ տալիս հու կետի ճրրիցը խըմում:

— Իշքան շատ ես խըմում, էնքան համովանում ա, տու էլ էնքան հովանում ես, էս ինչ լնվ պնն ա էս կնրոնճորը, ոնց խելքըս կըտրել չի սիֆթիցը սըհենց անեմ, — գարմանում ա էշը:

47. (223) ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Պետպատվերի թուղթը ձեռքին Հովանը մտնում ա բժշկի մոտ. — Բժիշկ, ինձ դարկածն կողքդ, թոշակառու մարդ ըմ, փողեն կակ ըմ ասում, պետությունն ալ ինչքան կարե, էնքան ա փող տալու, էս ալ պետպատվերի թողթն ա :

— Էդ թողթը՝ թողթ ա, դրաղ տիր... Ասում ըս փողեն կակ ըս ասում, թոշակառու ըս, լաավ, եկ, եկ պըրանե տեսնամ, այ անբուժելի հիվանդ ...

48. (224) ԱՄԵՐԻԿՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գևորգը Ամերիկայում հանդիպում ա համքաղաքացի Անուշավանին, որ կանաչ քարտով Ամերիկայում է ապրում.—Ա՛յ Անուշավան, էրկու շաբաթ ա Ամերիկայում ըմ, բայց հասկանում չըմ, թա սա հինչ երգիր ա:

—Այ Արշակ, էս քեզ հետե Ըոջածորի կոլլոզը չի է, վեր հասկանաս, թե պահեստան հու հինչքան ա տանում սոցիալիզմեն հետան հսնելի հետե, էս Ամերիկան ա, հես ա հինգ տար ա Կապանա վազ տալավ եկալ ըմ, կլոխս թխս Ամերիկայի պատեն, կաղնա: Թա խելք լալ ա, լալ չի, մհենգ գյուդում չըմ, բայց անխելքությունից շշմած ըմ, թա մարդ հունց կարա ուրան մեջի մարդեն աշկերը կապե, սերտը ճուր տեռած կյա հասնե ստեղ, թա թունավորած հաց ըմ օտում: Դեղ ըմ խմում վեր կարոտեն տմանամ:

49. (225) ԱՐՇԱԿ ՊԱՊԻ ԲՈՂՈՔԸ

Չափարում Արշակ պապին սարից հենց իջնում էր, կնիկն էր սրահում, տաշտի մեջ լողացնում: Ամառվա շոգին չուզեց ջուր տաքացնի, և ջրի ծորակին միացրեց ռետինե խողովակը:

—Ա՛յ կնիկ, էս հոնց ըս լողըցընում, հանցա մոզի լվանաս: Էն ջահիլ վախտերը էրկու ծերքավ սաղ տեղերս մրկահան ըս լա անում, մհենգ ջան չըս անում թա մեշկա ալ քորիս:

50. (226) ԵՐՐՈՐԴ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՉԿԱ

Մի օր Խաչիկը Մոսկվայից գանգում ա Վաչիկին.—Հոնց ուս, իմ խելունք հընգեր, հոնց ըն գործերդ:

—Խաչիկ ջան, Հայաստանում հինչ գործ, գործ չկա, ես էլ մհենգ ալ դեպուտատ չըմ ըշխադում:

—Բա հինչ ըս ըշխադում, Վաչո ջան, վեր դեպուտատ չըս:

—Խանչո, ստեղ երրորդ ընտրություն կա վեչ. յա դեպուտատ ըս, յա բիդի շոփերություն անիս:

51. (227) ԱՍՕՐՎԱ ԵՐԵՔ ՎԱԽԵՐԸ

Հանդ գյուղի լրատվության պատասխանատուն Վալո պապին է:

—Վալո՛ պապի, մհենգ ամենաշատը հինչից անա ըս վախում.—հարցնում ա հարևանը:

—Մհենգ վախում ըմ առանց վերսի անտառան տոն կյալուց, նոթը կղնալի հետե Սիրիան փրթելուց, Նախնվանի հետե Պիտինի ձենը կտրելուց:

52. (228) ԱԽՊԵՐԱԲԱԺԻՆ

Երբ Սերժիկի հայրը մահացավ, երեք եղբայրները զբաղված էին իրենց գործերով, ուստի Սերժիկը մի 20000 դոլլար ուղարկեց մորը, որ ծախսերը հոգա մինչև իր հասնելը: Երբ Սերժիկը տեղ հասավ, տեսավ, ամեն ինչ էլ կիսատ-պռատ և ու անկազմակերպ:

—Ա՛յ մեր, բա 20000 դոլլար ըմ դարկալ, հերիքա՛մյ չի, վեր էսքան անկազմակերպ աս, կեսատ-պռատ:

—Տղա ջան, հա՛մ, դարկալ էս, բա գյուղում չե՛ն, վեր ախպերներդ քո սրվըրացրածդ անելու ըն: Եկալ ըն, ալ յեշալ չըն է, թա մար աս, հոր թաղում աս անում, մարդը 7000 դոլլար պուք են տուվալ տարալ, ես մնացածավը հինչ հըսցրալ եմ, ըրալ եմ:

53. (229) ՆԱՎՈՂԻՉԻԿ ՄՈՒԿՈՒՉԻ ԱՌՕՐՅԱՅԻՑ

Մուկուչը առաջապահ դիրքում նավոդչիկ էր.—Արա Մարտիկ, մի քիչ ձախ, ձախ փոնի, տհենց լավ աս, դավայ, թխի... Արա՛, էդ հո՛նց տրաքեց... պահո՛... մերու-ցը անա մի քանի հոգի յեր են տառա... Մարտիկ, սկորի դարկե, շո՛տ, սկորի դարկե...

54. (230) ԽՂՃՈՎ ԴԻՐԵԿՏՈՐԸ

Կապանի Կաթի գործարանի տնօրեն Գրիգորյան Ռազմիկը գիշերը գնում աս գործարան ստուգայցի:

Ման աս գալիս, պահակին, չի գտնում, կանչում աս վարորդին.—Մի տես էսորվա պահակն ո՞վ աս, որտե՞ղ աս:

—Ը՛նկեր Գրգորյան, Պիճ Անդոն աս, հեն աս քոն լած ինժինների կրեալոյում:

—Լավ, թա Պիճ Անդոն աս, յեր մա կըցընե, տա վեր գերթուն աս նում, գործարանան մե պեն պկասում աս:

55. (231) ՓԱԴ ՊԻՐՈՂ ԴԻՐԵԿՏՈՐԻ ՎՐԵԺԸ

Անտոնյան Գուրգենը Տաթևում կորոդինացնում էր մարտական խմբերի փոխգործողությունները Կապան-Գորիս ճանապարհին մեքենաների ուղեկցման դժվար օրերին:

Մի օր դպրոցի տնօրենը մոտեցավ.— Ը՛նկեր կամիսար, էդ տղորցը կարալ չե՛ն ասես, ետ տառնալիս փաղան, ճղոնքան պիրեն, էս դպրոցը փակեմ վեչ, կոզի մինիստրը հրաման աս տուվա, վեր իրեք ամես դպրոցնեն փակինք. փող չկա, վեր դպրոցնեն թըքըցընի:

Տղերքը փայտը բերեցին և դպրոցը ուշացումով սկեց աշխատել, բայց մի շաբաթ հետո դիրեկտորը նորից դիմեց.— Ը՛նկեր կամիսար, ինձ ալ մի ջոկատի մեջ քցի, թըքըցընելի հրամանը չկատարելի հետա ինձ մինիստրը գործա ըգատալ աս: Առաջ դիրեկտոր եմ լալ, միենգ տառալ եմ փաղ պիրոդ: Էնքան փաղ պիրեմ, վեր սաղ դպրոցներեն պժենիմ, տեսնամ միենգ հունց կարե, վեր վերականգնե վեչ իմ տեղս...

56. (232) ՄԱՐԴԱՄԻՐԱԿԱՆ ՆԱՀԱՆՁ

Մարտիկը Մուկուչին սադրիչ գրույցի մեջ ներքաշեց.—Արա Մուկուչ, էս Գարաբաղը որ անկախացավ ու անկախ պետություն տառավ, ու մի օր ալ խելքին փչեց ու հարձակվեց Հայաստանի վիրա, հի՛նչ պիտի անենք:

—Հի՛նչ պիտի անենք, Մարտիկ, մեր բանակը մարդասիրական նպատակներով Ախալքալաքով կնահանջի մինչև Բաթումի:

—Իսէ՛ մինչև Բաթումի:

—Բաթումի արդեն ծուկուն չկա, Սևանից ըն տանում: Սևանի սիգան մինչև շտեղ վեր հասնում ա, հայ զինվորը պետք ա պաշտպանի նրա իրավունքները :

57. (233) ՔԹԱՃՅՈՒՂԵՐ

Վաչագան գյուղի միջազգայնագետ Նեսին քաղաքական գրույց ա սկսում Արկադիայի հետ.—Ա՛րա, պա հո՛նց անինք է, վեր էս Ամերիկայի քեթը մի տեղ հանց կոտրինք, վեր ռեխըր ալ էս դուլերքը քսի վեչ:

—Ա, պարապ չըս, տրա քեթան անց կաց, օրիշ պեն մտածե: Տրա քեթը ամեն պետությունում մասնաճյուղ օնե:

58. (234) ՔԹԱՏԵՐԸ

Ավագը տղային ա տալի մանգաղը, աղվեսի թակարդը ու ապսպրում.—Տղաս, քյունում ըս Վըչըքան՝ Արսենաց տոն, ասում ըս՝ պապան դարկալ ա, վեր սարքիս: Մինչև սարքե, տու քաղցր աշկավ յեշում ըս ըխճըզանը, վեր հավան կենաս՝ քյունում ընք օզինք:

Հաջորդ օրը տղան վերադառնում ա:

—Հը, տղա՛, ախճիզը տուր ա յեկա:

—Չէ՛, այ՛ հեր:

—Իսէ՛, հի՛նչը լա ծոռ:

—Քեթը մեծ լա:

—Պահո՞, տու վա պեն ըս ճարա, քեթը մեծ ա: Ա քեզ հի՛նչ, թա ըխճըզանը քեթը մեծ ա, հանց ա տու վըս շոռ տալու, թող քթատերը մտածե, տնաշեն:

59. (235) ԹԱՆ ՉԻ ՏԵՌՆԱԼ

Զինան ինադ ընգած գողանում ա հարևանի հավերը: Տեսնում ա, որ միլիցիան իրա տունն ա գալի, հավերը լցում ա խնոցու մեջ ու սկսում հարել:

Տունը, գոմը խուզարկելուց հետո գալիս կազնում են Զինայի մոտ.—Ա՛յ Զինա, յեկ փեշադ քարերը վեր ածե, էդ խնեցադ մի բաժակ թան տո, մուք թող անիք քյինիք:

—Թանը հի՛նչ ա, վեր տամ վեչ, բայց հալա տեռած չի:

—Ա՛յ Զինա, տու մեղք ըս, քեզ տանջե մա, մին ա, հինչքան հարիս, տա թան տեռնող չի:

—Հասկացալ ըմ, ընկեր լեյտենանտ, տուք վեր օգիք, թան կտեռնա, վեր օգիք վեչ, թան չի տեռնալ:

60. (236) ՊԵԼ ԶԻՆԱՆ

Պել Զինան Խոտանան գյուղը ստեղծվելու օրվանից ա սպրում ու միշտ ալ սպրիլու ա: Խլաթաղցի խնամախոսները մի օր գալիս են խոսքկապի:

Ծնողների հրավերով արդեն նստել էին ճաշի, երբ Զինան ներս մտավ. — Ա՛յ խլըրթըղեցիք, պարով ըք յեկա, կերեք, խմեցեք, վեր յեր կենաք քյինիք, մինակ ինձ կասիք, վեր կյամ տըկըռնեդ քյիրիմ:

61. (237) ՔԱՄՈՒՆ ԸՌԽՈՒՄԸ

Մուղղուսունց Մադուն ՆԿՎԴ-եից ձերբակալել, տանում են Ղափան: Ճանապարհին հանդիպում են գյուղի հանդապահներին:

— Մադի՛ դայի, շտե՛ղ ըս քյունում:

— Շտե՛ղ ըմ քյունում, ա՛ ծեր սև օրը տեսնամ վեչ, քամու ռեխն ընգաց քամուն անա փախշում ըմ:

62. (238) ՄԱՐԴ ՏԵՌՆՈՂ ՉԻ

— Մադի դայի, աշկո լուս նի, էնա Ռափիկը մըծացալ ա, բանական յեկալ ա, քու հայիդ հըսնող կա:

— Ա՛ խրեգ խոսե, մուհալ մը անե, սա մարթ տեռնող չի, մի խուրում խոտ պեր տիր կյումումը, յեկ ծերքան փոնն տար ծեր տոն:

63. (239) ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅՈՒՆ

Հոգերուժական հիվանդանոցի հարցը քննարկվում էր գլխավոր բժշկի մոտ. — Արժվանիկցիների արևը կծեմ, էսքան վախտ կժանոցը ուրաց գյուղում պահալ ըն, վեչ մի հիվանդ պըկասալ ա, վեչ ալ իվիլացա:

64. (240) ՀԻՆԳՆ ՈՒ ԷՐԿՈՒՍԸ

Ձոնիկը դասից մտավ տուն. — Ա՛յ մեր, երգն ու փիզկուլտուրան հինգ ըմ ստացալ:

— Պա քու արևդ կծիմ, յեկ իրեք ծու յըղըծու անիմ, փորդ պընդըցըրու:

— Այ մեր, էն մաթեմատիկայի ու փիզիկայի աշկն ալ հանալ ըմ՝ էրկու ստացա:

65. (241) ՂԸՓԸՆՑՈՑ ԼՈՒՋՈՒՆ

Գորիսից խնամի Բենիկը թոռներին ուղարկում ա Կապան՝ խնամոնց տուն. — Յեշեք, հա՛, խոխեք, փափիլիկ-մափիլիկ, կոկած—մոկած պան սիրող

չըմ, հանկարծ էդ դըփընցոց լուզվավ սվերեք վեչ խոսալը, սվերած ուշունցներն ալ մուռանաք վեչ:

66. (242) ԶՂՈՒՊՈՒՐԻ ԲԱԺԻՆԸ

Առաջածորի դպրոցում լուր ստացվեց, որ Դերաց Պետոյի պաղվալում ճոյուր կա, ու թաղի երեխոցը բաժին չի տվել:

Մըդըքսոնց Մադու տղա Ռաֆիկը կարդոնից բարձրախոս սարքեց ու մոտեցավ դերանց Պետրոսի ցանկապատին. — Խոսում է Երևանը, հայտնի է, որ Դերաց Պետրոսի պաղվալում ճոյուր կա, վեր տաք վեչ խոխորցը, պետոթյունը կյալուվա տանե:

Մի քիչ հետո Դերան Թառլան տատը դուրս եկավ. — Ա՛ խոխաք, ծեզ հետե ճոյուր եմ պահած, տարեք շկոլումը կերեք:

67. (243) ԾԱՆԴԻՐ ՀԻՎԱՆԻ

Մեր գյուղում մենակ մութ օնեինք շուշենե տանձ, մին ալ կրմրենե տանձ: Ես, իմ քուր Ռիտան տանձը թափալ ընք, հըվաքա խուրջինները, վեր տանիք Ղափանում ծախինք, դեղ առնինք պիրինք Հայուն հետե: Կըվարտավ անց կենալիս հորս հընգեր խանութպան Սուրիկը առաջներս կտրեց. — Ա՛ խոխեք, շտեղ ըք քյունում:

— Իմ հեր ծանդը ա, քյունում ընք ճար պիրինք:

— Էդ հինչքան ա ծանդը:

— Հինչ գիղամ, հինչքան ա ծանդը, պըրցըրցըրալ չըմ քըշըցըրա, վեր գիղամ հինչքան ա ծանդը, — ջղայնացավ քյուրս:

68. (244) ՌՈՒՍԵՐԵՆՆ ՌԻ ՀԱՅԵՐԵՆԸ

— Զիվան, գինի լցնեմ:

— Ա չե, կինին խմելի պեն չի, ինձ արաղ լուցրու:

— Ա՛ Զիվան, մին ա տու խմող չըս, հըսկանում չըս՝ հինչն ա խմելի, հինչը՝ չե, տու ինչքան ալ արաղ խմիս, կրելու չըս ռուսական գիտությունների թեկնածու տեռնաս, կինի խմե, վեր գոնե հայերեն գյըղացածդ մոռանաս վեչ:

69. (245) ՄՍՈՎ ՀՈՆՁԸ

Կոլխոզի նախագահը առավոտը գալիս կանգնում ա սրահի դեմից ու ձեն տալի. — Իսանկ ամի, բիդի քյինինք Հավուն արտը, արդեն հըրելի ա:

— Կարել չըմ, նախագահ, տանը մի կտոր մես չկա օտելի:

— Մես չկա, օտիս, խաշիլ կեր:

— Ընկեր նախագահ, շորվան օտում ըմ, մինչև մղակն ա, խաշիլ ըմ օտում, մինչև ծմակն ա, պա հոնց ըմ ետ տեռնալու:

70. (246) ՇԸՔԸՌԱՎԻՃԱԿ

Ի վան Պապիիչը իր ելույթից ոգևորված սկսում ա իրան գերազանցել. — Ընկերներ, մուք մի ժամանակ ընք ապրում, վեր մեր մի վեննը սոցիալիզմում ա , մինը՝ արդեն կոմունիզմում:

— Ի վան Պապիիչ, բա ստի շըքըռած հինչքան ընք մնալու:

71. (247) ՆԵՐՎԱՅԻՆ ԱՂՋԻԿԸ

Սամվելը կուրսի աղջիկներին հրավիրում ա տուն: Հյուրասիրությունից հետո Սամվելի մայրը սիրտը բացում ա հարևանի մոտ. — Ախչի Աշխեն, սիրտս վկայում ա, վեր էդ աղջիկներից էն կարմիր ներկած մազերավ աղջիկն ա նույու իմ հարսնացուն:

— Ա՛յ Արգեն, ինչ իմացար, Սամվելն ա ասա՛լ...

— Չէ՛, Աշխեն, բուրբին նայեցի, մենակ էդ աղջիկն էր ներվերիս վրա ագդում:

72. (248) ԱՄԵՆԱԼԱՎ ՊԱՇՏՊԱՆԸ

Կապանի կապի բաժանմունքի շենքի պատի վրա կախված էր հսկա շախմատային տախտակը, և քննարկվում էր Տիգրան Պետրոսյան — Սպասսկի մենամարտը: Բոլոր տարբերակների քննարկումից շախմատային հասարակությունը պարզեց, որ հաղթողը անվերապահորեն պիտի լինի Տիգրան Պետրոսյանը:

— Էսպես չեղավ, քննարկումը միակողմանի ա, եվրեյ Բորիս Սպասսկու կողմից մտածող չկա, մի թեկնածու առաջարկեք, թող գա դրան պաշտպանի, թե չէ անպաշտպան մարդու վրա հարձակվելը շանտառություն ա:

— Կապանում մի հոգի կարե դապաշտպան նի, կանչեք մսավաճառ թորք Իվամին:

73. (248) ՄՏՔԻ ՈՒԺԸ

— Ահարո՛ն, պետը վեր կանչալ ա, քեցալ ըմ տեսալ: Քեցալ ըմ, հունց վեր պետք ա պատասխանը տրվալ ըմ, ասալ ըմ. «Այ սիրիգա, պա տու հրսկանում չըս, վեր խոխա ըմ պահում, հրմանչում չըս , վեր փողս կտրում ըս»:

— Մուշե՛ղ, պետը լսալ ա՛մ , կրեցալ ըս պեցուր ասիս:

— Չէ՛, Ահարո՛ն, հալա մտքումս ըմ ասալ:

74. (250) ԵՐԴՈՒՄ

Հրայրը մի օր հարցնում ա հորը. — Պանայ, հիմա, որ դաշնակցական ես, երդում տվե՛լ ես:

— Հա՛մ, իհարկե:

— Որ կոմունիստ էիր, էն վախտ էլ է՛ն երդում կերել:

— Հանձն, բալես:

— Պանայ, չնեղենաս, էդ երդումը կարտոշկա յամ, վեր միտտ իփած օտիս, մը հետ՝ խրաված:

75. (251) ԱՌՈՂՋԱՐԱՐ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ

Գալուստանց Լևոնը հիվանդացավ և տեղափոխեցին Երևան: Առավոտը վեր կացավ Հանրապետական հիվանդանոցում և նայեց լուսամուտից դուրս. դիմացը կանչապատ դաշտ էր՝ ջուրը կապած վրան:

— Արա էս հինչ լավ տեղ քք եկա, մարդ յեր կենա լապատկան յոր օնե, քյինի արխ անե , մաշ վարե:

76. (252)

Տղըցի Մարկոսին Արմիկը մի մտախլապատ օր ոտքով Ջրընգանա ծորով գնում է Խնձորեսկ: Խնձորեսկի «Տախտի վող» կոչվող գյուղամիջյան հավաքատեղիում մի խումբ խնձորեսկցիներ գրուցելիս են լինում:

Նրանցից մեկը, նկատելով Արմիկին, սրախտում է. — Էս էշը վըխծալ չի՞, վեր էս եղանակին ճանապարհին կարող ա կուլերի փայ տառնա:

Արմիկը լսում է այս խայթիչ կատակը և պատասխանում. — Ախր էսքան շունը ստեղ, կուլերը հոնց կարողա խաթրիս նիկային (կպչեին):

77. (253)

Տղըցին և Խնձորեսկցին վիճաբանում են.

Տղըցին, թե. — Շոն էք է, շոն:

Խնձորեսկցին հակադարձում է. — Տուք էլ էք շոն, բայց ծեզ էշի տեղ էք տիսում:

78. (254)

Շրջկումի առաջին քարտուղար Քրիստափոր Պետրոսյանը (ծնունդով Կորնիձոր գյուղից) և Տեղ գյուղի կուլվարչության նախագահ Լենո Ջհանգիրյանը ավտոմեքենայով Կորնիձոր գնալու ճանապարհին նկատում են արածող և արտեզորով դեպի Կորնիձոր շարժվող մի խումբ ավանակների:

Առաջին քարտուղարը, թե. — Ջհանգիրյան, էս ծեր գյուղացիք շտղեղ են քիսում:

Ջհանգիրյանը պատասխանում է. — Քիսում են հաներանց:

79. (255)

Տեղ գյուղում ապրել է հսկայական կազմվածքի և մեծ ուժի տեր Փանի անունով մի մարդ:

Համագյուղացիներից մեկը մի օր կատակով դիմում է նրան. — Փանի՛, եկ կոխ փոնենք:

Փանին պատասխանում է. — Կոնկեր եկաք Փանուն կերաք:

80. (256)

Տեղ գյուղի կոլխոզի նախագահ Լենո Ջհանգիրյանի կինը՝ երկարամյա մանկավարժ Մարո Բարխուդարյանը և հարևանուհի Ջաբելը զրուցելիս հարևանուհին հարցնում է. — Ճիշտ է, որ Լենոն ման ա կյալիս:

Մարոն պատասխանում է. — Ախճի՛, շատ էլ լավ ա անում, մեր պիհիրը ուրիշի չափարումը, ծեզ հինչ գոռ:

ՀՈՒՇԱՊԱՏՈՒՄ

1. (257)

(Հիշողություն Նժդեհից)

Շիկահող գյուղը բուլշևիկներից մաքրելուց հետո Նժդեհը հավաքում է խմբապետներին՝ իրավիճակը քննարկելու համար¹⁰⁵: Գյուղի խմբապետը բուլշևիկների ներխուժման փաստը վերլուծելիս նշում է, որ գյուղի պաշտպանական դիրքերը կազմալուծվեցին, քանի որ քայքայումը ներսից կատարվեց և դեր խաղացին շիկահողի բուլշևիկները, մասնավորապես Բագրատը, որն իր սև գործը կատարելուց հետո փախավ Ադրբեջանի ուղղությամբ:

— Կոնկրետ որտեղ է Բագրատը: Եթե նա կրկին Ադրբեջան փախավ, ապա ոռու-ադրբեջանական բանդաների հետ կրկին հայտնվելու է այստեղ, — գայրա-նում է Նժդեհը:

— Գուցե կանչենք մորը՝ նա ինչ-որ բան կիմանա, — ասում է խմբապետը:

— Ի՞նչ կարող է ասել մայրն իր որդու դեմ, թեկուզ նա դավաճան լի-նի, — վրդովվում է Սպարապետը:

— Պետք է փորձել, Սպարապետ, ուրիշ աղբյուր չունենք:

— Լավ, հրավիրեք մորը, — հարմայում է Սպարապետը:

Բագրատի մայրը ներս է մտնում ու շվարում:

— Մայրիկ , ձեր տղան կապ է պահել մեր թշնամու հետ և թուրք-բուլշևիկյան հարձակման վտանգի տակ է դրել Շիկահողը, Լեոնահայաստանը, Հայաստա-նը: Անվտանգության համար շատ կարևոր է իմանալ, թե որտեղ է նա: Եթե մեզ ասես, թե որտեղ է նա, մենք կհասկանանք, թե թշնամու հարվածը որտեղից սպասենք, — բացատրում է Սպարապետը:

— Ախեր, այ բալա, ես հի՛նչ գիդամ, թա Բագրատը շտեղ ա քեցալ, ախեր, Բագրատը չի՛նի, տու նիս, ինձ ասե տեսնամ, քու մար գյուղում ա, թա տու շտեղ րս, վեր ես գիդամ, թա իմ տղաս շտեղ ա:

Սպարապետը ձեռքերը վեր է պարզում ու շուռ գալիս դեպի խմբապետը:

¹⁰⁵ Հուշը բանասացին պատմել է Տեր Սահակը (Ծ.Կ.):

2. (258) ՀՈՐՄ ՎՐԵԺԸ

Հորս արքայությունը հետո Գրետա քույրս թաքուն աստվածություն ուներ դասագրքերում նկարված Լենինի և Ստալինի նկարների հանդեպ, և «սրբագրելով» ջնջում էր նրանց աչքերը: Գաբրիելյան Հրաչուհին, որ ուսուցչուհին էր, գգուշությամբ գնաց Գորիս ու գյուղում թաքնված «վտանգների» մասին հայտնեց միլիցիային:

Գյուղսովետի նախագահ շամսեդի Իսրաֆիլը, որ հորս քերական էր՝ Գրետա քրոջս կանչեց գրասենյակ. — Դու Իսազեն ախճիզն ըս, քեզ բեն ասիմ, դիրի անջուկեդ յրա. միլիցիեն վեր ասիս, քու ամի Սարգիսն ա ասալ, Սարգիսեն Սիբիր դանելով ըն, վեր ասիս, քու մամա Հասմիկն ա ասալ, Հասմիկը Սիբիր տանելով ըն:

Հաջորդ օրը Գրետա քրոջս կանչեցին գրասենյակ, որտեղ երկու կասկածավոր նստած էին Իսրաֆիլի կողքին:

— Ախճիկ ջան, քեզ ոչ մի վատ բան չենք անի, մենակ ասա՝ քեզ ո՞վ ա սովորացրել, որ քու գրքի մեջի նկարած մեր առաջնորդներ Լենինի ու Ստալինի նկարները ճինջիս:

— Իմ դասատուն ընկեր Գաբրիելյանն ա, միշտ ստուգում ա, վեր գրքերը մաքուր նի: Ես գրիպ ըմ լա, փոշտացալ ըմ պեց գիրքի յրոան, նկարները յեխտոտվալ ըն, մաննավ ըս մաքրալ ըմ, ճղճղվալ ա, դասատուն տեսալ ա, ասալ ա՝ հինչքան մաքրալ ըս բոլա, թող տի մա: Տի ա մնացալ ա:

Միլիցիայից եկածները էլ հարց չեն տվել և քերվա Իսրաֆիլը դուրս է եկել Գրետա քրոջս ճանապարհելու:

Երբ հեռացել են գրասենյակից, ասել է. — Բալս, էդ գիրքում լավ բեն չկա, վեր դու սըվերիս, քցի փիչը, թող էրի պըրծընիք դու վա, ես ա, բեդությունն ա:

3. (259) ԱՌԱՋԱՁՈՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

Առաջանոր գյուղը Քրիստոսի հետ միասին պահպանել է նաև տան տղամարդու պաշտամունքը: Էդ շրջանի դատավորները չգիտեին, ու զարմանում էին, որ գյուղում ոչ մի բաժանություն չկար: Իմ մեծ տատ Դումաշը մահամերձ էր, բայց սպասում էր, որ ճամփին գտնվող տեքորն էլ հրաժեշտ տա: Երբ տեքորը դռնից ներս մտավ, տատս անճանաչելիորեն փոխվեց, ասես վերակենդանացավ, վեր կացավ տեղից ու ոտքի կանգնեց, գրկեց տեքորն ու հազիվ շշջաց. — Ներող կինիս, վեր վեններդ կարում չըմ լըվանամ, — ասեց Դումաշ տատս, քիչ-քիչ նվաղեց ու մարեց մահճակալի վրա:

4. (260) ՇԻՇԿԵՐՏԵՑԻ ՀԱՐՈՒԹՈՒՆԸ

Շիշկերտեցի Հարություն կուլակաթափ արեցին ու քշեցին Սիբիր: Սիբիրում ամեն ինչ տանելի էր, բացի նրանից, որ պահակախումբը կալանավորներից առանձին կարտոֆիլ էր խորովում և ուտում: Հարույթը տեսնում էր կրակը, որ խառնում են ու հետո բացում, կարտոֆիլները շարում հավասար շարքով ու տաք

մոխիրը հավասար սվաղում վրան: Հետո, երբ կրակի տակից սկսում էր տեղ-տեղ գոլորշի բարձրանալ, ուրեմն խորովածը պատրաստ ա: Մեկ-մեկ որ ուշաց-նում էին, քիչ էր մնում ինքը թաքստոցից գոռար, որ էթե ուշադիր չըլնեն՝ կար-տոֆիլը կվառվի: Կարտոֆիլի հոտից այլևս մթագնում էր գիտակցությունը և կարոտը դառնում էր անհաղթահարելի: Մի օր Հարութը որոշեց մտնել պահեստ: Երեք ամիս հետախուզելուց հետո, ի վերջո կազմեց գործողությունների ման-րասն ծրագիրը: Հենց ծրագիրը պատրաստ էր՝ հաջորդ օրը սկսեց: Հաջողու-թյամբ ներս մտավ պահեստ, երկու հատ կարտոֆիլ դրեց գրպանն ու շուտ դուրս եկավ, բայց հենց հասավ բարաքի մոտ, որտեղից որտեղ իր հոտն առան պահ-նորդական շներն ու վրա տվեցին: Գողությունը բացահայտվեց: Երկու կարտո-ֆիլները կապեցին աչքերին ու, որպես պատիժ, ծեծեցին, գցեցին խոզերի բունը: Խոզերին տրվող կարտոֆիլի հոտից սկսեց կենդանանալ, և քանի որ կարողա-ցավ մի քանի հատ էլ կարտոֆիլ թոցնել, մի քանի օրից ոտքի կանգնեց: Եկան ստուգեցին, տեսան, որ աչքերի կարտոֆիլը տեղում ա, թույլ տվեցին գնալ բա-րաք: Ընկերները, որ անտեղյակ ու զարմացած էին, ընդառաջ եկան:

— Հարություն, շատ ըն թակա:

— Դուզն ասած ալ հիշում չըմ, թա հինչքան ըն թակա, բայց ես էնքան կար-տոշկա ըմ կերա, վեր հաստատ գյուղում ըմ, կըրելով ըմ, ստաղաս տուս կյամ, վեր կարիմ ալ վեչ, արտես դարդ չի:

5. (261) ԱՐԱՐԱՏԸ (մարտական հուշերից)

Ջանգելանի դիրքերում մարտերը կատաղի բնույթ ստացան, մանավանդ, որ մոջահեդների ջոկատը մարտի մեջ էր մտել և ականանետների աշխատանքը մարտական բարձր վարպետության նշան էր: Դիրքերում գտնվող ջոկատը մո-ջահեդների գրագետ դիպուկահարությամբ բաժանվել էր թիկունքից: Իրավի-ճակը խուճապային էր:

Մանուչարյան Արարատը, որ այդ պահին թիկունքում էր, ի վերջո կապվեց ճակատի հետ. — Դուք նահանջի հնարավորություն չունեք, մոջահեդները փա-կել են թիկունքը և դեպի իրենց են հրավիրում, մտածեք առաջ գնալու մասին, ես ինձ վրա եմ վերցնում զինամթերքի հարցը:

Երկրորդ գծից Արարատը դուրս եկավ՝ ամեն ձեռքին մի-մի արկղ զինամ-թերք. ամեն արկղը 90կգ-ից ավելի: Թումբն իջնելիս մի պահ կորցրեց հավասա-րակշռությունը, չոքեց, ոտքի կանգնեց, ավելի հարմարացրեց արկղերի շրջա-գալար պարանը ու առաջ նետվեց: Ականներից երկուսը մոտ տարածքում պայ-թեցին ու նրան ետ շարտեցին: Բոլորս շունչներս պահած մտքի զորությամբ ետ մղեցինք նրանից բոլոր արկաբեկորները և ինչքան մտքի ուժ ունեինք նրան ոտ-քի կանգնեցրեցինք... նա պահպանեց հավասարակշռությունը, առաջ գնաց, գտավ արկղերը ու զարմանալի թեթև ությամբ բարձրացնելով՝ կարծես մեկ շնչով հասցրեց ճակատային խրամատի մոտ ու փովեց գետնին: Խրամատից դուրս եկան չորս հոգի և վերցնելով ճակատագրական արկղերի շուրջգալար

պարանը՝ փորձեցին բարձրացնել: Չկարողացան, ու դժվարին ծանրությամբ քարշ տվեցին խրամատ: Երբ հաղթահարվեց հակառակորդի հարձակումը և արդեն հարվածային դիրքերը գրավված էին, ջրի երես դուրս եկավ Արարատի արաքը և սկսեցինք մրցել, թե ով կկարողանա հասնել Արարատի ցուցանիշին: Զորամասից ոչ ոք չկարողացավ մենակ բարձրացնել ու տանել գոնե մեկ արկղը: Այն չհաջողվեց նույնիսկ Արարատին:

6. (262) ԱՐՄԵՆԵՐԵՆ

Կապանի քաջարի մարտիկիներից Արմեն Հայրապետյանը թշնամու տարածքի ամեն գաղտնարան թափանցելու ձիրքով էր օժտված: Շատ լավ գիտեր թուրքերեն և ականապատման գործ:

Մոտենում էր թուրքական խրամատին ու հեռվից ձեն տալիս. — Ադա, բուրդա էրմանի վար...

— Յոխ, յոխ, — լսվում էր խրամատից ու տեղորոշվում էր նրանց գտնվելու կետը:

— Հա, սաղ օլսուն¹⁰⁶, — պատասխանում էր Արմենը ու մի փունջ նոնակ նետում ձայնի ուղղությամբ:

¹⁰⁶ Ադա բուրդա էրմանի վար – Տղա, էս կողմերում հայ կա, յոխ-ոչ, սաղ օլսուն-ողջ լինեք (Ծ. Ա.)

2. (264)

Բւ՛, բւ՛... բւ՛... հո՛, հո՛, հո՛..
Կոմն՛շը սարան եկը, ա՛յ բայա
Ջասասան, ա ջեյրան...
Կաքը բարան եկը, է՛, է՛, հե՛յ,
ա հո՛, հո՛, հոոոոո՛ ա՛
Էսօր վա՛րը շուր քինաց...
Հա՛ցն ի՛մ յարա՛ն յեկը...
Ալ հո՛, հոոոոոո՛
Հո n ա՛.... ա՛...

3.(265)

Է՛, է՛, է՛... ա հո՛, հո՛, հո՛
Գարշը մըգրան գիլֆղար,
Ա բայա՛մ, ա բայամ, հո՛, հո n ա
Մընը քոք, մընը լղար, աման է՛.
Հե՛յ, հե՛յ, հե՛յ, հե՛յ,
Քոքը լղարին պկին հրե՛յ...
Ջան ա գուգու՛մ...
ա հո՛, հո՛, հո՛
Լղարը րական բղբղար...
Ա՛, ա՛յ... հայ, ա հայ
այ հո՛, հո՛, հոոա:

4.(266)

Ջան, ա՛, ա՛, ա՛... ա՛... ա՛ն,
ա ջան, ա ջան, ա՛ ջան...
Վերթիվերը նորալ ա՛, ա՛, ա՛յ բայամ...
Լավ օրերը կորալ ա... հո՛, հո՛..
հո n ա...
Քյաքյուղ խոգած րղա...
Եզնը ուր քորալ ա...
Ալ հո՛, հո՛, հո՛
Հո n ա՛...

5.(267)

Էյ՛, էյ՛, էյ՛... ա հո՛, հո՛, հո՛
Գարշը մըրտան զիլֆղայր
ա բալան՛, ա բալամ՛, հո՛, հոո ա
Մընը քոք, մընը լղար, աման էյ՛...
Հե՛յ, հե՛յ, հե՛յ, հե՛յ
Քոքը լրարին պկին հրե՛յ...
Ջան աղ ուզո՛ւմ...
ա հո՛, հո՛, հո՛,
Լղարը տական բղղար...
Ա՛յ, ա՛յ... հայ ա հայ
Ալ հո՛, հո՛, հոո n ա:

6.(268)

Ջան, ա՛, ա՛, ա՛... ա՛... ա՛ն:
Ա ջան, ա ջան, ա ջան...
Վերթիվերը նորալ ա՛ ա՛ այ բալամ...
Լավ օրերը կորալ ա... հո՛, հո՛
Հոո n ա...
Քյաքյուղ խոզած տղա...
Ձեզը ուր քորալ ա...
Ալ հո՛, հո՛, հո՛
Հոո n ա՛...

7.(269)

Հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛ ա...
Էյ, եր հոս վա ըրեղերըր
Արալաաաաաամ, ը հայ...
Ըրաղուր ա բեղերըր...
Ա՛լ հո՛ հո՛ հո՛ հո՛ հո՛ հո՛ ա...
Էյ օշքը, մեթկը տարալ ա
Ա դե, դե, ա դե, դե, ա դե...
Քո ման եկած տեղերըր,
Ա՛ հո՛, հո՛, հո՛... հո՛...
Կյումնը եզը, ջերան եզը,
Ալ հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛
Հո՛, ո՛, ա՛...
Էյ, ծրավալ եմ, ճուր չիկա,
Ա դե, դե, ա դե դե, ա դե, դե

9. (271)

Ա՛լ, հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛...
Նիհի իլա Լաստիհն կալը¹⁰⁷
Ա՛ քալամ, ա քալամ, ջան քալամ
Չերեվաց Շուշվա սարը...
Ալ հո, հո, հո, հո, հո, հո...

Մերըր մեոնի, Փանսահ խան,
Էյ, հէյ, հէյ, էյ, հէյ
Բա հոր ա իմ քալա յարը,
Բալա յարը, քալա յարը ըրըր
Հո, հո, հո, հո, հո, հո, հո, ա՛...
Էյ, պարկերս պարկերաս քաշալ ա,
Ա քալամ, ա ջեյրան, ա խումար,
Սերբս րեղը քաշալ ա,
Ա հո՛ հո՛ հո՛ n n n nnnn,
Քու հար մեոնի, Փանսահ խան,
Իմ յարը իե մաշալ ա, հո, հո՛...

10. (272)

Էյ, հէյ, հէյ, հէյ, հէյ, հ
Ըշրեղան ես կյամ, րոս վերասսս
Ա՛յ հէյ հէյ, ալ հէյ... հէյ,
Ներքի շենն րանջը խալերան,
Ալ հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛,
Կըրորվա ըշխարքիս կորոսարնին,
Ջան ա ջեյրան, ջան ա քալ

Բարքի մեզ ինի են վրդերան...
Ա հե, հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛...
Երգյան օրեր ա, օրեր,
Ա հո հո հո հո հոո,
Խոր-խոր ծորեր ա, ծորեր,
Ա... կան... ալ հոհո,
Ցավերս շար, ճարը՝ քիչ,
Ցավերըս սար ա, ծորեր,
Ա հո հո հո հո ա...

¹⁰⁷ Լաստի կալ-Ջանգեգորի բարձր սարերից մեկն է: Երգն ուղղված է Շուշվա բռնակալ փանան խանի դեմ: (Ծ. Բ.):

11. (273)

Էյ, յուլլախիս կոխկը նախշած ա,
Հո՛ հո՛ հո՛ հո՛ հո՛ հո՛ հո՛ հո՛,
Պարկերս յիրան քաշած ա,
Այ հո՛ հո՛ հո՛ հո՛ հո՛ հո՛ հո՛ n ա:
Էյ, բալամ, ախպերս ոզեց, փում
Ա դե, դե, ա, դե, դե,
Ըսեցի՛ յարիս բախշածս ա,

Ա հո՛ հո՛ հո՛ հո՛ հո՛ հո՛ հո՛հո
Հո n ա...
Բալամ հոսր վեր մին յար չունի,
Ա՛ եզնը, ջան եզնը, ջան եզնը
Սերտը փեղը դաղած ա,
Հո հո հո հո հո հո...

12. (274)

Ծեր ըրա, ակոս ըրա,
Թնին փոս, ակոս ըրա
Հո, հո հո հո հո
Յիլը բոլ, ծերը խոր,
Սար ու ծոր սև փոս ըրա,
Հո հո հո հո հո հո հո:
Թող կաղնի եզնը ցեթի,

ա՛ մշկա փղա,
Թող կաղնի, ամբոլ ցեթի,
ա՛ մարալ եզնը,
Տափը փիլ ըրա, վարի՛, ա՛ ջեյրան,
Քյուլիաթիս հացը ճարի՛,
Հո, հո, հո, հո, հո, հո,
հո հո ո՛...

13. (275)

Չոր չոլը բաղ ա փառալ ,
Ա՛լ, հո՛, ա՛լ, հո, ալ հո՛,
Էյ, թոռ եկած շաղ ա փառալ,
Ա հո՛ հո՛ հո՛ հո՛ ա...
Էյ, բալա, մեր ես շեն օրըս,
Ա՛ եզնը, ջան եզնը, հո՛,

Դոշմանի դնդ ա փառալ,
Ալ հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛ հո՛ n ա.
Էյ, քե մարաղ, կոլխոզ փարի,
Ա՛ փարի, ա փարի, ա փարի,
Մեզ պերիթ բերք ու բարի,
Հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛ հոլլո
Հո լո լո լո լո հո լո ա...

14. (276)

Հո, հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛,
Եր ես եկալ Ոռոշան՛,
Հո՛, հո, հոլ, հոլ, հոլ ,
Միպրակ կոլիթ թոխ նշան,
Ա՛յ, հո՛, հո՛, հո՛, հո՛...
Քե մարաղ, ա՛ նանու փղա,
Հո հո հո հոլ հո՛լ,
Ասի՛ հինչ փամ քեզ նշան,

Ա հո հո հո հո հո n ա...
Էյ, ա բալամ, ա ջեյրան, ա խում
Ախճի, ախճի, ալ ախճի,
Ա հո, հո՛ ա, հո, հո, ա հո,
Աշկերըր չալ-չալ, ախճի...
Քոս նանի մեչալ ըրալ,
Ո հո հո հո հո
Գալաշաղ քեզ ինձ փալ, ախճի,
Ալ հո հո հո հո հո ...

15. (277)

Անումըս, հա, անումըս, ա՛ բալամ,
 Ալ հա հո հո հո հո,
 Էս հինչ ցավ ա ջանումըս,
 Ա հո հո հո հո հո՛:
 Մընեյի ցավ չեմ քաշում,
 Ահա հա հա հա հա հա,
 Կըմըսս էրված անումըս,
 Հո հո հո հո հո հո ա...

Թոռ կըկյա, արև կանի,
 Ա բալամ, ա բալամ, ա բալամ,
 Մուշամբա րերև կանի,
 Հո հո հո հո լո լո լո...
 Ա՛ խումար եզըր, քե մաբադ,
 Ա ջեյրան, ա դուգում, հո հո՛,
 Հոշ-խելքս վերև կանի,
 Հո լո հո լո հո լո լո...

16. (278)

Գյուլին, գյուլին վարանսա,
 Ա ջան հա, ա ջան, հա...
 Լալա, գյուլում վարանսա,
 Էյ, հեյ, Էյ, հեյ, Էյ, հեյ...
 Միչի մարդը հին անի,
 Ա բալամ, ա ջեյրանը,

Փիսը հարուստ գյադան ա,
 Ա հո հո հո հո հո հո հո ա..
 Եր րաս, եր են դալավը,
 Ա մարալ ախճի, ա թառլան ախճի,
 Իջնեմ քո եր կոլավը,
 Հո հո հո հո հո հո ա...

17. (279) ԿԹԵԼՈՒ ԵՐԳ

Վո բիժ, բիժ, բիժ,
 Վո բիժ, բալա բիժ,
 Վո բիժ, դուգում բիժ,
 Վո բիժ, Սոնսա բիժ,
 Վո բիժ, պոզիկ բիժ
 Բիժ, բիժ, բիժ, բալասասաւ:

Վենդ ըրա չաթուն կապեմ,
 Վո բիժ, բալա բիժ,
 Հես ըրա՝ ճուրթ թախեմ...
 Վո բիժ, ծաղիկ բիժ...
 Վո բիժ, բալա բիժ,
 Վո բիժ, վո բիժ,
 Բիժ, բիժ, բիժ, բիժ:

18. (280) ԽՆՈՑՈՒ ԵՐԳ

Ա դնգա, դնդա, դնգհնգաւ,
 Հոյ, աման, իմ յարը...
 Սորմաներդ գնգգնգա,
 Ջան աման իմ յարը,
 Խնեցի րանիւ-պիրեմ,
 Քյանիբար կարաք շինեմ...

Ըրիւրըրիւր շարերը,
 Հոյ, աման իմ յարը,
 Էշիսար ինգյա քարերը,
 Ջան աման իմ յարը...
 Խնեցի րանեւ-պիրեմ,
 Քյանիբար կարաք շինեմ:

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ

1. (281) ՕՐՈՐՈՑԻ ԵՐԳ

Նենի, նենի, բալա, նենի, նենի դուզում,
Քաշվի՛, կորի՛, սև՛ սրբանա,
Իմ՛ դուզոս ապան փանն ա...
Նենի, նենի, բալա, բայ՛, բայ՛, բայ՛ բալամ:

Լալ կանի լալ, լալ կանի,
Չալ կառնը մաբաղ կանի...
Մեսը կոբի, իաշուն իրմի...
Վեսկեռը չարբախ կանի,
Նենի, նենի, բայ, բայ...
Նենի բայ, բայ, բայ...

Նենի բալա, նենի,
Սրբերի ծաղիկ բալա,
Բրդերի վարդեր բալա...
Նենի, բալա, նենի...

Նենի բալա, նենի,
Ծալքի դամաշ բալա...
Տըռնի կյումաշ բալա...
Նենի, նենի դուզում, Է՛յ, Է՛յ, Է՛յ:

Ըսրուծանա նըման ա...
Բայ՛, բայ՛ բալամ բայ՛...
Թոռ կյա փափերը նըման ա,
Բայ բայ դուզիս, բայ՛...
Հոս վեր պերի քըզանա,
Պաչի՛ սերտը հովանա...
Բայ, բայ, բալաս, բայ՛...
Բայ, բայ, դուզիս, բայ՛:

ԵՐԳԵՐ, ԽԱՂԻԿՆԵՐ

1. (282) Պարերգ (խմբով)

Հո՛ւյ, դե՛լ է ջան ես Գորիսի ձորան եւ՛,
Հո՛ւյ, դե՛լե, դե՛լե, դե՛լե, յարըս,
Աման դե՛լե, դե՛լե, դե՛լե յարըս...
Հո՛ւյ, դե՛լե ջան, մեծ բաղին ինձորան եւ՛,
Հո՛ւյ, դե՛լե, դե՛լե, դե՛լե, ջանըս,
Աման դե՛լե, դե՛լե, դե՛լե, յարըս...
Հո՛ւյ, դե՛լե ջան, ինձոր կծեմ թո՛ղ անեմ,
Հո՛ւյ, դե՛լե, դե՛լե, դե՛լե ջանըս...
Աման դե՛լե, դե՛լե, դե՛լե, ջանըս,
Հո՛ւյ, դե՛լե ջան կուճի հարսը կո՛ղ անեմ,
Հո՛ւյ, դե՛լե ե՛ն, դե՛լե, դե՛լե, յարըս,
Աժան դե՛լե, դե՛լե, դե՛լե, յարըս:

2. (283) Պարերգ (մենակ)

Այ հափը կյաս, հափը կյաս,	Ջան, աման իմ յարը,
Այ, աման իմ յարը.	Թա ինձ թողնես, տեն քինաս,
Մեծ դգղանին քափը կյաս,	Այ, աման իմ յարը:
Բոյավըդ մին տափը կյաս,	Ջան, սոնամ իմ յարը,
Ջան, աման իմ յարը,	Ջան, թելլու իմ յարը:

3. (284) Հարսանյաց կատակ-երգ

Հանդերն ի յեր հանդեր ա, ինսամի,
Լոխ ըրծաթի բանդեր ա, ինսամի..
Տանակ պերեք, սերտ ճղեք, ճղեք...
Բուղում-բուղում դարդեր ա, ինսամի...
Խնամին խոշ ա եկան՛, եկան՛,
Տառտակ ա, բոշ ա եկա՛լ, եկա՛լ,
Գիտամ թա մըն ղոշ ա պերա՛լ, պերա՛լ,
Իշկի մըն պղոճ էլ չի պերա՛լ, պերա՛լ...

4. (285) ԿԱՏԱԿ-ԵՐԳ

Աղջիկ

Մեր տյոտնը ճոճոճում ա-սի տղա, դու մի կան-կան՛.
Մեր շունը հրմաչում ա-սի տղա դու մի կան-կան՛.
Մեր որձակը ծկթում ա-սի տղա դու մի կան-կան՛.
Մեր խոխեքը լցմացում են-սի տղա դու մի կան-կան՛.

Մեր ճրաքը փրզվզում ա-ւի փղա դու մի կսւլ-կսւլ.
Մեր կրակը թաւխում ա-ւի փղա դու մի կսւլ-կսւլ.
Մեր պատաւը մըրթմըթում ա-ւի փղա դու մի կսւլ-կսւլ.
Մեր հալիվորը փընքփընքում ա-ւի փղա դու մի կսւլ-կսւլ:

Տղա

Ձեր փյոռնը ճոճոում ա-մին ջամ ջրով կյան-կյան.
Ձեր շունը հըչմաչում ա-մին ճոթ հացով կյան-կյան.
Ձեր որձակը ծկթում ա-մին հափոռ կոտով կյան-կյան.
Ձեր խոխեքը լըցմացում են-մին ջոք չամչով կյան-կյան.
Ձեր ճրաքը փրզվզում ա-մին բժարիկ նոթով կյան-կյան.
Ձեր կրակը թաւխում ա-մին բեռը փայտով կյան-կյան.
Ձեր հալիվորը փընքփընքում ա-մին կոլա գինով կյան-կյան:

Աղջիկ

Մեր ձիանքը խըրինջում են-ւի փղա դու մի կսւլ-կսւլ.
Մեր եզիքը պոմոանչում են-ւի փղա դու մի կսւլ-կսւլ.
Մեր կովերը մըկմըկում են-ւի փղա դու մի կսւլ-կսւլ.
Մեր որթերը կըմկըմում են-ւի փղա դու մի կսւլ-կսւլ.
Մեր գոմաշները դըռընկում են-ւի փղա դու մի կսւլ-կսւլ.
Մեր իշերը զըռզըռում են-ւի փղա դու մի կսւլ-կսւլ.
Մեր նանին ճըղճղում ա-ւի փղա դու մի կսւլ-կսւլ.
Մեր աղբերը կովոում ա-ւի փղա դու մի կսւլ-կսւլ:

Տղա

Ձեր ձիանքը խըրինջում են-մին խութում եռնջաւ կյան-կյան.
Ձեր եզիքը պըռմոանչում են-մին ճովարան փարմանով կյան-կյան.
Ձեր կովերը մըկմըկում են-մին խութում խոտով կյան-կյան.
Ձեր որթերը կըմկըմում են-մին քթիչ կաթնով կյան-կյան.
Ձեր գոմաշները փըռընկում են-մին խութը փոքաւ կյան-կյան.
Ձեր իշերը զըռզըռում են-մին կոշ կարով կյան-կյան.
Ձեր նանին ճըղճղում ա-մին շամախի քթկալով կյան-կյան.
Ձեր աղբերը կըռըռում ա-մին մղայի փափաղով կյան-կյան:

5. (286) ՂԱՐԻՔԻ ԵՐԳ

Ծրավալ եմ, ճութ չիկա,
Կոխկիս մըն ախպոր չկա,
Վախում եմ դարիք մեռնեմ,
Քիշտիս մեր ու քյութ չկա:

Էյ, մեր փոռնին քարը լավ ա,
Մեր կանանչ սարը լավ ա,
Էյ, դարիք օրը սև ինի,
Իր ազիզ քարը լավ ա:

ԽԱՂԻԿՆԵՐ

- 1.(287) Լոխչոս մասին հինչ վար կա,
Ինքը կոզէ լոխ գլիդա,
Իրան մասին հայ թորա,
Հոնց վոր փակած քլիդա:
- 2.(288) Վերքան կսիրես հափոտը,
Էլա կասե բոլ չի փա,
Աշկը ծակ էր քյափոտը,
Սայաղ կաց, քեզ կոլ չի փա:
- 3.(289) Հինչ որ օզե լոխ փոս փո,
Մինը օզե, օխը փոս,
Կենդ մին դյունում իլաթե
Լոխ ըրածը կոխ կփա:
- 4.(290) Յավա լուզին կասե փանը,
Կասն էլ թողե կարճ ինի,
Եթե թողնես նա մըծանս,
Էլ պիելու ճար չինիլ:
- 5.(291) Հոս վրեր մենակ մեծ մըրաքվա,
Օզի լոխչոս մեծն ինի,
Բեմն պերքա էր մըքավը
Երանս մեծն էլ էծն ինի:
- 6.(292) Մարթոս ցավում իրկելը
Մարթոս հետի փիծար չի,
Ամս ցավան փրկելը
Ամեն մարթոս հինսն չի:
- 7.(293) Մարթոս նետեր խոսելիս
Աշկի փակավ նկարե,
— Տեսար նա դինջ ննջելիս
Եաղլըր դասրի կըսարե:
- 8.(294) Ծարավ մարթոն նա մին աման
Իրան փանան ճորարծից,
Ամս քյոչում բղբղումս,—
Լոխ թող գլիդան հասածից:
- 9.(295) Տանըս պարը փրվելի ս,
Յարըս, ասում են, պրվելի ս,
Էլ կարըմ չեմ փիմնննմ
Հոյս-հավարս լրվելի ս:
- 10.(296) Ճոխար աշկըս քոռացել ս,
Շանն ախճիկն ինձ մոռացալ ս,
Եկա թյն որ վնթ քաղեմ,
Ասեցին՝ չորացել ս:
- 11.(297) Ակներըմը պարզ ակ կա,
Մեր բախճըմը մեխակ կա,
Թմողյնն դոշըս եմ ուզըմ,
Ինչ անեմ որ սոխակ կա:
- 12.(298) Տունըս-փեղըս թամամ ս,
Մըննեմ՝ ծոցըր համամ ս,
Շարմաղ-շափաղ ծրծերը
Համ նոտ ս, համ շամամ ս:
- 13.(299) Ախճի, իշքան թյնարն ես,
Սև ու շոշյնն վնթ ունես,
Թմ իմ շայդով պար կկյնս,
Մեր փանն անգիզ հարարն ես:
- 14.(300) Սագ ուզեցի սոր փվան,
Ճոն ուզեցի, մոր փվան,
Կարմիր օրս սևացավ,
Թմն գյանքն էս էր, հոն փվան:
- 15.(301) Ես բաղ եմ, փոն՝ բաղվանչի,
Լննի ու փիար ճընանչի,
Թա որ բաղը բար չի փամ,
Թո բաղվանչին հըմանչի:
- 16.(302) Մեր բաղըմը բար ինի,
Ղոշըն ճողքին թառ ինի,
Ինձ էլ դյնդըն ինչ կանի,
Թմք քե նման յար ինի:

17.(303) Մարթ չկա արտըս վարի,
Հւնարնիք եւ անուշ բարի,
Շարս արդոց եւ հաւսան չիմ,
Քինասցիմ էս տաւարին:

18.(304) Հոքիս էրբմ եւ կրբակրմ,
Հերսիցրս սիրտըս ա ճարբմ,
Ետի եւ ինձ անանին թողած՝
Ուրիշի տնուր թակրմ:

19.(305) Հարհնրտ դումնաջ ա, ալ ա,
Թշերիտ սև-սև իսալ ա,
Ախր խի բոնբոլ լիզոնս
Մինակ քու կշտին լալ ա:

20.(306) Ինչ ոնեւմ՝ քեզ, վեր կալ,
Միրտըս էս ոզրմ, էն էլ առ,
Բոյ ու բուսրտ թւք տեսնամ,
Որ ընգնեմ ոչ քարը-քար:

21.(307)Վւնրթ ա թափրմ փեշիցրտ,
Ճուր ա կաթրմ կծիցրտ,
Թո մին դննւնդ պաս անեւմ,
Կարմիր խնձոր թըշիցրտ:

22.(308) Քամին փչալ, հով արալ,
Միրտըս մարման ծով արալ,
Յարիս խոսկը կարկուտ էր,
Միրտըս թակեց՝ սով արալ:

23.(309) Տալար մասս, կրնանչես,
Արարքիցրտ հրմանչես,
Ետիս րեղ էս ինձ արնրմ,
Կաննեմ ծոցըս՝ ճրնանչես:

24.(310) Տնու ա եկել կանաս խոտը,
Պնցվել պըրի կարմիր կոտը,
Նւնրգիգի փոնչն ինչ եւ անրմ,
Հերիք ա իմ յարի հոտը:

25.(311) Իմ սիրտն ու քու սիրտը մեկ,
Փափաղրտ միշտ պահի թեք,
Մըթընծոռած փըշերով,
Նահանձ աշկից թարնն եկ:

26.(312) Աշկըս քըցա ցորնի թեղին,
Յարիս թննու պրսած բեղին,
Յարիս կինին ուրիշ խմեց,
Իմ պաժինն ա օցի լեղին:

27.(313) Բաղըմը չոր խննուլ կա,
Կեղըմը շար գոնուլ կա,
Դոխարտը քե ինչ անի,
Թն մրսել էս, հազալ կա:

28.(314) Թն տոնը կա, պար կինի
Քե տենողը մնթ կինի,
Ատեր ծառ եւ, բարրտ՝ շար,
Քարով տվող շար կինի:

29.(315) Ճնշի համը, գիդն, աղն ա,
Իմ ծոցը քու սնրին բաղն ա,
Հոր էլ քիննս, շրեղան էլ
Քրտոնքրտ մեր վնթի շաղն ա:

30.(316) Ալ ալա, ալա, ալա,
Դնշիտ վըրին սև իսալ ա,
Ես քեզ միար յար տննն,
Տն ինձ միար մին բալա:

31.(317) Իմ բաղի բարը տն ես,
Իմ սիրած յարը տն էս,
Մրտիս թն քար կա նարած,
Էդ ծանդրը քարը տն ես:

32.(318) Աշոնքն էս հինչ հաղաջ ա,
Չորս դոլ բուտան ու բաղ ա,
Եկիր մար բաղ, խնձոր կեր,
Ջանըս շանիտ մարտաղ ա:

33.(319) Պայմանըդ իված ա, յար,
Ծեր պարը փլած ա, յար,
Բաղ կա՝ բարը օրհիլիս.
Բաղ կա՝ բարը փթած ա, յար:

34.(320) Ենթար իլիմ՝ ծեր տրուանը,
Աշկըս ծոցիս ճոխար նրուանը,
Հիշքան ալ վէ՛ օգիս վէ՛չ ինձ,
Ես ըմ դարուլ ծեր տրուանը:

35.(321) Մըտալ ըմ կերը, խոր ա,
Ղումաշ հըլա՛վնես նոր ա,
Այ անգի, ալ ին՛ ըս կարըմ,
Հըվանողը, սաս, հո՛ր ա:

36.(322) Ազիզ յար, ախ ըս քաշըմ,
Իգուր տեղ փաղ ըս տաշըմ,
Մերտըս հաքուղ մաշին ա,
Նըհախ տեղ հո՛ր ըս մաշըմ:

37.(323) Նոր ըրիսալըդ ա կարալ,
Վըննաթո՛նվնգ ա սնրննլ,
Օխար տարի ման եկալ ,
Մըն բեղընննգն ա ճարալ:

38.(324) Խըվարալ ա կանանչ գյանքըս,
Կորըրվալ ա չնննս, անգըս,
Այ հարալ, հինչ զուլում ար,
Քըվթառ ախճեկ ընգալ ճանգըս:

39.(325) Կնրոնքը եկալ, վաղ ա,
Որիտ տակ կանանչ բաղ ա,
Ել սեյր անենք ամնան օր,
Քանի ջաներնիս սաղ ա:

40.(326) Ղուշ ես, թո՛ի մեր բաղը,
Ասա՛, սիրսնձ, իմ հալը,
Բոլ ա սիրտըս քըրքընես,
Շաղ տասս մընմոտ է՛ս աղը:

Մեր բաղիցը ծեր բաղը,
Աոնն գլե՛լ ա հաղը,
Երքի հեպ իմ պարուլը,
Պերըմ ա թո՛ւշ ծեր թաղը:

Հարգավոր չի երք ու սազը
Հարգավոր չի կինոս թասը
Թնք քըշերը կուշտըս կնս,
Կուրես ոչ իմ հնվնսը:

41.(327) Միրող սիրտը խափիլ չի,
Մուր արտասունք թափիլ չի,
Որ մին պեոն էլ ոսկի տան
Բախար քեզ հեպ կասիլ չի:
Յորենը պընոսվըս չի,
Շո՛րերը վըրուվըս չի,
Էս ինչ զուլում ախշարք ա
Ուգաճս սըրտուվըս չի:

42.(328) Վնթթ, մննիշննկ պնց ա իլե՛լ,
Շեհը տիրե՛լ, թաց ա իլե՛լ,
Դնշմննի խոսքու՛լ ես քինըմ,
Միրտըս լցվե՛լ, լնց ա իլե՛լ:

43.(329) Ուրենք ծնվար ու պրինձ,
Ես քեզ սիրեմ, տուլ է՛լ ինձ,
Գյանքը փափուկ մին պնթց ա,
Մին պնթց վերցնենք էս կլիխց:

44.(330) Քեզ հեպ էլ ճնց խոսամ ես,
Սըրտինըս ճնց ասեմ քեզ,
Չոռըտ ջան ա ինձ միար,
Թնքնն սնսրտ լսեմ ես:

45.(331) Կաքել ըս Գրի, բաղ ըմ ես,
Աշղ ըս Գրի, հաղ ըմ ես,
Սրտես յրա յարա կա,
Հանց գողոնմ ըս սան ըմ ես:

Պնցված վնրթ եմ, կոխիլ մի,
Խսար շնյթով փոխիլ մի,
Թնն Գրու հարսն ես, ես՝ փեւենն,
Գիլարըս կոտրիլ, թողիլ մի:

46.(332) Լըծվալ ըմ, կարըմ չըմ կննմ,
Լըցվալ ըմ, կարըմ չըմ լամ,
Էն օրվանսս, հինչ քեցալ ըս,
Քոս անունըր կարըմ չըմ Գրամ:

53.(339) Ես դնողվնն եմ, դաղիլ մի,
Այրմաղով մաղիլ մի,
Առանցի քեզ գյանք չունեմ,
Ջահիլ-ջահիլ թաղիլ մի:

47.(333) Ամառնընի ես, Գրի՝ կնրոննք,
Աշունք տեռնն, Գրի՝ կնրոննք,
Թոխ ծամերիս ծոնն եր եկամ,
Ծմեռ ըմ ես, Գրի՝ կնրոննք:

54.(340) Հաց ինի, պերան կինի,
Ծառ ինի, կերան կինի,
Բաղը որ անդեր մաս,
Գիդնն, թնն վերնն կինի:

48.(334) Ենտերի մեչին ննն ես,
Շիշմնն շավախի ծառ ես,
Յար, էլ ղնց քոս կոշտը կննմ,
Կրակ ես, մարթ կվառես:

Երգինքը թըխպեց, լննց կինի,
Վնրթ ոս ննրգիզ թաց կինի,
Դավի Գրող որ ինի ոչ,
Գիդնն, թնն բոլ հաց կինի:

49.(335) Ախճի՛, անըմըր Շնշնն,
Առ մրանիս՝ քե նշան,
Եփ արևը մեր մրննի,
Սրնեմ ծոցըր իըշիըշան:

55.(341) Իմ յարը Գրոն ոս Գրիլեյ,
Կնրկըմը նոռ ոս Գրիլեյ,
Էն շիշմնն բոյին դորբան,
Փափաղը ծոռ ոս Գրիլեյ:

50.(336) Ծառի ճոխկը ծոռեցի,
Տակին տեղըս փըռեցի,
Քեզ տեսս չն թիննիս,
Թարուն-թարուն սիրեցի:

56.(342) Ախճի՛, ինչ ես գիդնցեյ,
Թնն մնթնն եմ մընացեյ,
Որ ոտըս միշտ կասս մաս,
Մախմոր դոշըր ես պնցեյ:

51.(337) Իմ գնթննը ճըռըր ոս,
Ճաղացիս քարը փըռըր ոս,
Քե հարս Գրարս, հընգերս
Ակոնվի պես կըռըր ոս:

57.(343) Ախճի՛, քինի կալը տես,
Յորըր ըխարըրին սալը տես,
Ենտով թնն ջիգնըր օնիս,
Եք ոս սըրտես հալը տես:

52.(338) Սիրըրս կանանչ ես քաղըմ,
Սիրըրս անխեղճ ես դաղըմ,
Ես էլ մին մոր բալայեմ,
Սաղ-սաղ ինճ ինճ ես թաղըմ:

58.(344) Տննընտ երին ծնրնն ըմ,
Մեծ բաղի իընճնրան ըմ,
Յարիս տեսնիք, ըսեցաք՝
Ուխտավերի կարոտ խորան ըմ:

ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ԵՐԳԵՐ

1.(345) Կարմիր խառա քիսացու,
Միպրակ կովը մնացու,
Տյու ես իմ հոր հարսնացու,
Ես քու հորը փեացու:

2.(346) Գեյրնին էն դոլը քարքարոյ,
Քաթան շալը ծրլծալոյ,
Աղջիկ կայնի մեկ պաչեմ
Ձեր որթերը փանեմ արոյ:

3.(347) Մին ջաղաց էրկու դոնի,
Պյարց դրեք յարս թիկնի,
Ես դոն մին բաղում պիտիք,
Ես չինարի, դու նոնի:

4.(348) Արևը կամար-կամար,
Կապել ես ոսկա քամար,
Հիտուն օր պաս եմ պահե
Իմ յարի ճամփի համար:

5.(349) Մրայ եմ գեյրը խոր ա,
Ոսկա հալափնին նոր ա,
Ա՛յ նանի, մին ալ կարի,
Ոսկի կոճակնի շարի:

6.(350) Ճաղացի պյոռնը փարթ ա,
Կրորը լիքը մարթ ա,
Յարս պաղան ա կյալի,
Յայլուիը լիքը վարդ ա:

7.(351) Ճաղացին պյոռնը փաշած ա,
Յայլուիը գյոլ քաշած ա,
Մեռնիմ թոխ-թոխ ունքերիպ,
Հենց դալամալ քաշած ա:

8.(352) Գեյր ա գալի լոք փալալ,
Կարմիր ինձոր ծաի փալալ,
Հրես եկել իմ յարը,
Գեոգ ձին փակին լոք փալալ:

9.(353) Քինացել էս, եկալ ես,
Ոններդ ցեխումը պուկալ ես,
Խեղքիդ դուրպան, ա՛յ փղա,
Դեոսը ու դուշման ջոկալ ես:

10.(354) Հալիս կորին ցիլ ոնիմ,
Ջալ ապրեշում թիլ ոնիմ,
Ջահիլ ճիվան սրկավագ,
Ես քեզանից մեյլ ոնիմ:

11.(355) Սարին խոյրը ծեղ-ծեղ,
Ախպեր գնանք մին փեղ,
Որ կյողերը վրա փան,
Գլուխս դնեմ գլխիպ փեղ:

12.(356) Էկեք քինանք էն օխը,
Գյոլպուրադին կիլոխը,
Ամեն ծառան մին փշար
Իմ յարին էոմըրը շար:

13.(357) Էն սարին քեղ ա բուսալ,
Իմ յարին քեի ա բուսալ.
Խապար փարեք իմ նանո
Դիլակը փեղ ա հասալ:

14.(358) Ճաղացիս մեջը մարդ ա,
Կրորը լիքը փարթ ա,
Հրես եկալ իմ յարը,
Գյոլիկը լիքը վարդ ա:

15.(359) Մեր փան փակը նուշ էր,
Իմ յարը թառլան դուշ էր,
Ապեր խապրըրը չմաս՝
Յարս քանց քեզ անուշ էր:

16.(360) Ոչխարն էլալ ա դյուգը,
Ջոկեցեք ալագյոգը,
Իմ հեր քեզ աղջիկ չի փա,
Սրբի էրեսիպ թոգը:

17.(361) Ա՛յ հար արա, հար արա,
Ոսկե քյանքյուլը եր արա.
Իմ հեր քեզ աղջիկ չի փալ՝
Գլխիդ վահարին ճար արա:

18.(362) Շողքը ընկից մեր պարին,
Արքայություն իմ փարին,
Ոգիդ էրվի այ փարի,
Ինձ խի փվար չողախի:

19.(363) Կանգնել ես կանչում ա չես,
Պոյիցդ ամաչում ա չես,
Եկա կշտովդ անց կացա,
Տեր էս, ճնաչում ալ չես:

20.(364) Իմ գյուղումը քաղած ա,
Պանձը սարին կյաղած ա,
Հով վեր իմ գյուղամիս փեղն սախ
Հերը, ախպերը թաղած ա:

21.(365) Քաղքի քարը քյահրըպար,
Իմ բոյ քու բոյ բարաբար,
Խնձոր քցեմ եկ փար,
Դու ալ դառար բեհրբար:

22.(366) Ախպեր ունիմ սարմն ա,
Շվին կյուրկի ծալմն ա,
Ախպեր քու շվիդ ածա,
Քյուրար Լորվա քոլումն ա:

23.(367) Ես մին կանաչ խիար եմ,
Իմ յարին ըխարիարին եմ,
Կաղնալ ես, մին եր եշի,
Տես հինչ մազալլու յար եմ:

24.(368) Էյվանս ցան եմ ածալ,
Պոյալս մին եմ ածալ.
Յար սասցի, յար չրեցի
Յալվաճի ման եմ ածալ:

25.(369) Դուշը ծկըլփայ բաղումը,
Կանաչ խիարը թաղումը,
Ես մին սարքած սուրար պրի,
Իմ յարին օթախումը:

26.(370) Մըհենց նիեր հանդերը,
Թագա արծաթի բյանդերը,
Դանակ պրի սիրտս ճղենք,
Բողում-բողում դյարտերը:

27.(371) Թխալալ ա թոռ չի կյալի,
Մթնել ա փուն չի կյալի,
Տեղ եմ ցկալ, պյարց դրալ,
Աչքերս քուն չի կյալի:

28.(372) Քոլը քոլին թուշումը,
Ծեռնը պիժան կյուշումը
Իմ յարին ըշտեղ փեսար,
Շուշվա դալին թուշումը:

29.(373) Ծարավալ եմ ճյուր պիրեք,
Ըսպահանու հուն պիրեք,
Կըմեռնիմ էս դարիպ փեղը,
Դարիպ դուշս փյուս պիրեք:

30.(374) Տանս փակը սաղ մոշի,
Օխըր փարի յար եշի,
Ա ջան, հար ըպրեճց պան կըլնի՝
Յարն ալ կըրմն ուրիշի:

31.(375) Քամին կանի բոքին փանի,
Ոչխարը թոքին կանի,
Միրի սիրան հանողը,
Հոգին սրանան փանի:

32.(376) Ջրի վրան սազ պըրփի,
Իմ յորդակս դազ պրփի,
Հընչիս ա պեպքը բեկի փղան,
Իմ յարս նախշուն պըրփի:

33.(377) Տանս փակը շորի,
Ճղները եր հորի,
Հրենակ էն քվորը,
Օփարն ախպոր թագ կրհորի:

34.(378) Հոռի ծառին բար չըլի,
Առանց քյոկա յար չըլի,
Ա հեր, ա՛ մեր խոսալ միք,
Խտոնված սրտին ճար չըլի:

35.(379) Կորավս քյոչ ա քինում,
Քյոչ քյոչի մեջ ա քինում,
Հրենակ էն քըվորը՝
Օփարն ախպոր մեջ ա քինում:

36.(380) Սարերին թոխալը պըրի,
Որերին կոխալը պըրի,
Կիր կիրոդ, դալամ ածոդ,
Ծնկանս թոխալը պըրի:

37.(381) Թամքը թամքին վրա,
Յոդոնիկը վանքին վրա,
Իմ ախպոր ըշրե րեասար
Թագավորին թախարին վրա:

38.(382) Ես էն յարին յար պիրի,
Կորկումը խիար պիրի,
Էն յարի շոքած րեդը՝
Մին չինարի ծառ պիրի:

39.(383) Աղջի քնանք մեր բաղը,
Պոկենք շամամի թաղը,
Քոս էրեսիր վարաղը
Հանել ա սրտիս դաղը:

40.(384) Ոչխարն էլամ էն դյուզը,
Եր էլամ ոննի թոզը,
Յար, քոս քթակր վերկալ,
Թափ րամ քյանքյուլիս թոզը:

41.(385) Մթնալ ա մթնաճանանչ,
Ջնինջի քոլը կանաս,
Հրես եկը իմ յարը,
Բեդերը առնակալած:

42.(386) Ծոն դինեմ վիրան, խաշեմ,
Նիհի իլեմ, կրորը եշեմ:
Տեսնամ՝ յարս գալիս ա,
Կոսնամ չարմերը քաշեմ:

43.(387) Այ հավան եմ, հավան եմ,
Մեծ կարպերին խավան եմ,
Էլ գիրս, ալամ գիրս,
Ես էն յարին հավան եմ:

44.(388) Աղջիկ, աղջիկ, համ ոնիս,
Չորս ավանի ծամ ոնիս,
Քոս հեր, քոս մեր շար ապրի,
Ինձ գալի դոս կամ ոնիս:

45.(389) Ա՛յ, յար պիրի, յար պիրի,
Սարին վրա որթ պիրի,
Իմ յարին բերանըմը
Մին կորոր շաքար պիրի:

46.(390) Խնձոր ոնիմ կծած ա,
Մաջը օսկով լցած ա,
Ախպերս օգեց րվի ոչ,
Ազիզ յարիս պաղշած ա:

47.(391) Տանս փակին կա նոնի,
Պյարց պերաք յարս կոնի,
Ես-րյու մին պյաղում պրինք,
Ես չինար իմ, րյու՝ նոնի:

48.(392) Աղջի՛, անըմըր Խանի,
Լեչակր քամին րանի,
Ես-րյու մին պաղում պրինք,
Իմ հեր, քոս հեր՝ ինսամի:

49.(393) Քնացել ես, օրսով եկ,
Յաղլադր խիարավ եկ.
Մեր րյոռունը դալմադալ ա,
Շոռ րո՛ւ, աղբըրավ եկ:

50.(394) Ահալեր հանաքիւր դուրբան,
Ճուխար-ճուխար դանակիւր դուրբան,
Փախիսիւր յան ես րիւրալ,
Արած դիվանիւր դուրբան:

51.(395) Վարթավորը գալիս ա,
Ծաղիկս հնձելիս ա,
Վարթևորս սու աղջիկ,
Սյասս Ժլվլալիս ա:

52.(396) Աղջի՛, աղջի՛, դեր քնս,
Առաջքավր եր քնս.
Խոռոսհարին քամին փշի,
Գյոլգազ շալր եր քնս:

53.(397) Յարս նարած է գերանին
Հարչո շվին բերանին,
Օսկի դայթան եւ գործում,
Դնեւ ջիբին բերանին:

54.(398) Հաց կը թիւեւ կյարի ա,
Յարս ալ սախարի ա,
Սախար քինալիւր մարադ,
Խոսքերըր շարարի ա:

55.(399) Իրիկոնս մթին ա,
Տավարը չոր թրքին ա,
Հրես եկն էն յարը,
Ձեռքը պյոլյոյր մրքին ա:

56.(400) Ճաղացիս րյոռունը րաշած,
Յաղլրիս յոլը քաշած,
Կեռ-կեռ ունքերիւր մարադ,
Ղասիւր դլամավ քաշած:

57.(401) Սարին էն դոլը ձյուն է,
Էս դոլս հավքի բուն է,
Հրես եկն իմ յարը,
Շելակը թավ-թավ հյուն է:

58.(402) Հովրը սարին նման ա,
Տեսնանք՝ իմ յարը րամն ա,
Իմ յարին մի քյանքյոլ ունի՝
Ոսկի թելին նման ա:

59.(403) Ահալեր, անունդ Ոռոշան,
Մեպրակ կոլիւր թոխ նշան,
Յաղլար դարկի անեւ,
Պահեւ քո յարիւր նշան:

60.(404) Թոռ կրգա արև կանի,
Կիշանպահ րերև կանի,
Քորն ախպորը մարադ,
Շըղաթաթախ վար կանի:

61.(405) Զարրախին թան եւ ածալ,
Բոյավըր մըն եւ ածալ,
Խախալ եւ թա՛ք եւ գալոս,
Շաղլախըր փոլ եւ ածալ:

62.(406) Հաց կըթիւեւ յոխս յա,
Յարիս կեցը չոխս յա,
Իմ յարը ինձ հոնց կըթակի,
Ինքը մին մեծ խոխս յա:

63.(407) Ես մին կանանց խիար եւ,
Քո սրտիւր իխրիար եւ,
Գնս՛, գնս՛, եր եշի,
Ես մին ամանաթ յար եւ:

64.(408) Մին յար օնիմ օվջի է,
Մեջքը բարակ դամջի է,
Ձեռնավը բան չի եր գալ,
Լեզվավը թալանջի է:

65.(409) Սարերի թարթանջուկ
թյազա,
Ճավուզ, մեխակ քեզ մյազա,
Ինձ պես նազանի աղջիկ,
Քեզ պես փղին հոնց սազա:

66.(410) Ա՛յ աջ կոան, ձախ կոան,
Կարավր արոան թոան,
Ա՛յ քյաքիկ պոչիկ փղա,
Ես խի՛ եմ մորիդ թոալ:

67.(411) Սանդ կրթակեմ հախ ա,
Չմոշկը ուրնիս լախ ա,
Ա փղա, շար մի խոսա,
Չալ մուկը ունիսար կախ ա:

68.(412) Ա փղա, քինա կալը փես,
Ցորր աղբրի սալը փես,
Կարոն քյոչկա եմ քթալ,
Խփեն վեր կալ համը փես:

69.(413) Կաղնալ էս կորիս միջին,
Քարուլփ թարնիս միջին,
Թե ինձ օզես, եր վազես,
Գյուլլան փա սրտիդ միջին:

70.(414) Գրիս թութոն դեմ կը փամ,
Թութոն շեվերը եր կը փամ,
Հով վեր սերը սիրածան հանի
Սրտին քարփաթոներ կը փամ:

71.(415) Ա՛յ հարար-հարար ինես,
Վրցակի կարար ինես,
Թե ինձ օզես եր վազես,
Ինքր ճութ ու պարսո ինես:

72.(416) Ա՛յ փղա, փավարսձ փղա,
Կոճակնին շարսձ փղա,
Իմ հեր քեզ աղջիկ չի փալ
Սիրտը իշարսձ փղա:

73.(417) Խաղ կասեմ խաղիս գլխին,
Իմ հերանց պյաղին գլին,
Քաչալն իրան փեղ կանի,
Ողը փամ կաղին գլխին:

74.(418) Աղջի՛, աղջի՛ համ օնես,
Ճրիկ-ճրիկ ծամ օնես,
Քո մոր աչքերը վեր դառնա,
Թե ինձ կյալի կամ օնես:

75.(419) Բուրանս քաղ ա դառալ,
Խըյարս թաղ ա դառալ,
Իմ յարս մին խոսք ա սասալ,
Սրտունս փաղ ա փառալ:

76.(420) Սարերին թերթիփ ձունը,
Բաղերին ավլան հունը,
Իմ յարս մին խոսք սսեց,
Կորրեց սրտիս սյունը:

77.(421) Հանդեր ա, հս՛, հանդեր ա,
Չիմ արծաթի քանսեր ա,
Դանսակ բերեք սիրտ ճղեք,
Էս ինչ քղում դարդեր ա:

78.(422) Գեղնը եր կարմինջ եմ քցալ,
Մընը մեջ վարթեր եմ լցալ,
Խարար փարեք իմ յարին,
Չիմ իրան դարդերն եմ լցալ:

79.(423) Մեր փան փակը վար կա
Չալ քչեղակին քար կանեմ,
Վեր իմ սիրածին ինձ փան,
Պելրոթոնս թարգ կանեմ:

80.(424) Ճղացին փյոռնը կանանջ,
Տյոս կուգամ համանջ-ամանջ,
Խորասան եսիր պրի,
Իմ սիրածի նշանսձ:

81.(425) Եշըմ եւ՛ երկում չի,
Ծառերը րերկում չի,
Աչքերս ման եւ՛ ածում,
Էն յարը երկում չի:

82.(426) Մթնել ա րոն չի գալիս,
Թիպել ա, թոռ չի գալիս,
Տեղ եւ՛ ցկալ, պյարձ դրալ՝
Աչքերս քյուն չի գալիս:

83.(427) Իմ ծաղիկս քաղած ա,
Բարձր սարին կյաղած ա,
Ծաղկիս երան մին լյուս կյա
Դյուշմանին աչքը րյուս կյա:

84.(428) Գնացի ճուրը ճրագով,
Մեջքիս րվին ուրաքով,
Իմ հոր իմ մոր ինչ սսեմ,
Ինձ իմ րվին կրակով:

85.(429) Հինչ սնեմ հնչիս դարբաս,
Կորան սագիս փարդաս,
Աշղ չի, աշղ դասուս,
Յարալու յարիս դարդաս:

86.(430) Շողքը րվալ էն պարին,
Մեջքը կորրի իմ րարին,
Հարուստ րեղը րեղ թողեց՝
Ինձ րվեց էս աղքարին:

87.(431) Բոխչա-քահար եւ՛ կապալ,
Աղ ու զհար եւ՛ կապալ,
Ես էն յարին հավան չեմ,
Օժավ վրա էն կապալ:

88.(432) Ա րդա, րվարած րդա,
Կճուկնեն շարած րդա,
Իմ հար քե աղջիկ չի րալ,
Միրրը իշարած րդա:

89.(433) Միպրակ ձիին ջուր կրբամ,
Ղայյանին թութուն կրբամ,
Ամեն մի յարս միբս կյալա,
Սրդիս քյալփաթուն կուբամ:

90.(434) Չափարի պասմա կոխիլ մի,
Շահին դալպ ա, փոխիլ մի,
Իմ հար քեզ աղջիկ չի րա,
Քյունկիլն իմ ա, վախիլ մի:

91.(435) Սարերը ձյուն կալալ ա,
Արև սրալ, հալալ ա,
Ջալում Գյանջեցի աղջիկ,
Դարդերն ինձ կալալ ա:

92.(436) Բուրանը ջրած րեղը,
Ասեղը թելած րեղը,
Խարար րարեք իմ յարին,
Հեն եւ՛ իրան դրած րեղը:

93.(437) Արևը կճացալ ա,
Ղումերը քուշպացալ ա,
Խարար րարեք իմ յարին,
Մուշարիս շարացալ ա:

94.(438) Իմ յարը հոր ա իլալ,
Սարերին քոն ա իլալ,
Թոռ ա եկալ թրչալ չի,
Յափունչին շոռ ա իլալ:

95.(439) Ես Կյորիսի ծորան եւ՛,
Մեծ քաղին ինձորան եւ՛,
Խարար րարեք իմ յարին,
Օլքա-օլքա կորալ եւ՛:

96.(440) Կը կաղնեւ՛ կեղին քարին,
Գիր կըգրեւ՛ Նազլու յարին,
Համ կըգրեւ՛, համ կըճւշեւ՛
Աղոս կորի ըսրեւ՛ց րարին:

97.(441) Կըկաղնեմ տոնա քարին,
Կըեշեմ Բաքվա սարին,
Ա՛յ Բաքվա խազայիններ,
Ողարկեցեք թելլու յարին:

98.(442) Գերն եմ դրալ կաշի,
Աչքս բազար կըեշի,
Չերան իմ յարի կյալը,
Հալալ կեսս կըմաշի:

99.(443) Ես Կյորիսի ձորան եմ,
Մեծ պաղի ինձորան եմ,
Խապար ըրաք էն յարին,
Օլքա-օլքա կորալ եմ:

100.(444) Մեծ արտումը դուշ կընի,
Ցորտ աղբորին թուշ կընի,
Յարը յարին փեանալով,
Գյուլը աչըլմիշ կընի:

101.(445) Կաքաւլը սուլուլ կըրա,
Կընճիթը փոյրոտը կըրա,
Հուր որ մին յար չի ունի,
Օսքերը ուրոտը կըրա:

102.(446) Նալն ու մեխը կրակումը,
Ավլան ճոթը մկրափումը,
Մերը սիրածան հանողին,
Թաքը թխոցի գրասումը:

103.(447) Քարին երա դուշ պտի,
Ցուրտ աղբրին թուշ պտի,
Յար, քի յարը կըտեսնա,
Գյուլն աչըլմիշ կընի:

104.(448) Արևը սարին երան,
Մըմոտնը քարին երան,
Մին թեւալոր դուշ պրի,
Իմ սիրած յարին երան:

105.(449) Քնացել ես եկալ ես,
Տրեհներտը կոկալ ես,
Չեոհր ճպարհին մափաղ,
Գառնը մորան չոկալ ես:

106.(450) Կաղնել ես բախա-բախա,
Ոններհր չմոշկը լախա,
Սև փղա, կարմիր աղջիկ,
Բըռնել էլ ուրոտը յախա:

107.(451) Կայնալ ըս բախա-բախա,
Լեչակիր փոտը կախա,
Սև փղա գյուզգազ աղջիկ
Բըռնել էս ուրոտը յախա:

108.(452) Աղջիկը քնաց կալաւլը,
Պապղի փվալ հալաւլը,
Օզեց որ եր եշի,
Նշանաձն ընկալ կոլաւլը:

109.(453) Գյուլում գյուլում գյուլասար,
Բորդ կըմանեմ հալասար,
Էս շենումը երկու հարս կա,
Մինը քանց մինը յաս ա:

110.(454) Էն յարը հո՞ր ա, տան չի,
Վարած արտը կնանչի,
Էն յարը մին քոտը ունի,
Կընկնի սարերը կըկանչի:

- 579.(1199) Ճրամանը ճրին ճնպին կկոտրի:
- 580.(1200) Ճրին նհետ հանաք չեն անիլ:
- 581.(1201) Ճրի նման թնմուզ ա:
- 582.(1202) Ճուրը ծարավին կտան:
- 583.(1203) Ճուրը պուճուրին, խոսքը՝ մեծին:
- 584.(1204) Մագերը հանցա խոզի մագ ըլի:
- 585.(1205) Մահը մատթի համար ա:
- 586.(1206) Մահը մեծ ու կուճի չի ճընանչում:
- 587.(1207) Մանը տուր, կերածըթ թափի:
- 588.(1208) Մաթ աղուհացը մտան քցիլ չի:
- 589.(1209) Մաթը մաթին անա վախիլ չի, կհըմանչի:
- 590.(1210) Մաթ իլելը տըժար պան ա:
- 591.(1211) Մաթ պիտի հենց կործ փոնի, վըեր եղավ հմանչի վեչ:
- 592.(1212) Մաթի տված հացը տափը չեն քցիլ:
- 593.(1213) Մաթին ուրան ըրարմունքավս են ճընանչում:
- 594.(1214) Մաթին հացավ են ճընանչում:
- 595.(1215) Մարթ խոսկին տերը կըլի:
- 596.(1216) Մարթը էն ա, վըեր կլխին նամուս ունի:
- 597.(1217) Մարթը թքածը ետ չի լուզիլ:
- 598.(1218) Մարթը մարթին հարկավեր ա:
- 599.(1219) Մարթին աշկը մի հափուտ վեղն ա քուշտացում:

- 600.(1220) Մարթին գործաժնե են ճանաչում:
- 601.(1221) Մարթին խոսկալ են փոխում:
- 602.(1222) Մարթին դադիրը մարթը կգլիդա:
- 603.(1223) Մարթին շորավ չեն ճանաչում:
- 604.(1224) Մարթիս ալ մարթ պիտի ըլի:
- 605.(1225) Մարթիս տանը կատուն ալ պիտի նախշուն ըլի:
- 606.(1226) Մարթա կա օտում ա, վրեր ապրի,
մարթ կա ապրում ա, վրեր օտի:
- 607.(1227) Մարթ վեր օզի, սարը սարի վերա կըտինի:
- 608.(1228) Մարթը վրեր խային չիլի, բաղը չփարիլ չի:
- 609.(1229) Մարթի խոսկը միտտ կասեն:
- 610.(1230) Մեծ թիքան ուրան պերանն ա տանում:
- 611.(1231) Մեծ կլխին մեծ փափախ ա հարկավեր:
- 612.(1232) Մեծ դզդանին, մեծ խփիյա հարկավեր:
- 613.(1233) Մեծ մարթը ուրան գործոժնե են ճանաչում:
- 614.(1234) Մեծը իլած տեղը, կուճինը խոսալ չի:
- 615.(1235) Մեծ ըլած տեղը, մեծ-մեծ խոսալ չեն:
- 616.(1236) Մեծի խոսքին չսողը եղի վերջումը կփոշմանի:
- 617.(1237) Մեծի նիտտ մեծ ա, կուճինին նիտտ՝ կուճի:
- 618.(1238) Մեծին անջուկ չունողը շատ կտուժվի:
- 619.(1239) Մեծին խոսկը տափը չեն քիցիլ:
- 620.(1240) Մեծին մեծ կասեն, կուճինին՝ կուճի:
- 621.(1241) Մեղըր արչն ալ ա սիրում:
- 622.(1242) Մեղըր ծախողը մանը կլպզտի:
- 623.(1243) Մեշտեղ օտում ա, դրաղ շոռ կյամ:
- 624.(1244) Մեչ օտում ա, դրաղ ման կյալի:
- 625.(1245) Մեռալը հանգիստան ետ չի տառնում:
- 626.(146) Մեռալին ենան հինչ քան հարայ տաս, ետ չի կյալ:
- 627.(1247) Մեռնողը հով, ապրողը՝ հով:
- 628.(1248) Մերը վենը եր ա կալալ, ախճիկը տիրալ ա տեղը:
- 629.(1249) Մեր քարը տինենք մեր պատին:
- 630.(1250) Մըճանաս, մեծին դադիրը կգլիդաս:
- 631.(1251) Մթեն տեղը քար չեն շարտիլ:
- 632.(1252) Մի ախոռան համ էչն ա օտում, համ՝ ծին:
- 633.(1253) Մի դառողը էրկու տնոսալ:

- 634.(1254) Մի կոպեկ տուր, հոքին առ:
- 635.(1255) Մինը ծախում ա, մինը՝ առնում:
- 636.(1256) Մի պան վըեր ուժթ պատում չի, պրցնումի:
- 637.(1257) Մի վխճարին մի մոռթի կըլի:
- 638.(1258) Մի քսակ ցորեն օնի, օխտը ճղացի տուռ ա քինում:
- 639.(1259) Մի օր ծնվողը, մի օրալ մոնիլուվա:
- 640.(1260) Մին խոսա, երկու լըսի:
- 641.(1261) Մին կեր, մին ալ Աստուն փառք տուր:
- 642.(1262) Մինը գյուղում ես, մինը գյուղում չես:
- 643.(1263) Մինը ծերքավ, մինը՝ լուզվավ ա ըշխաղում:
- 644.(1264) Մինը կեր, մինը մատաղ ըրա:
- 645.(1265) Մինը օտում ա, մինը՝ եշում:
- 646.(1266) Մին տաս, էրկու կոզի:
- 647.(1267) Մին տուր, էրկու հունքկալ:
- 648.(1268) Մինը գյուղում ես, տասնմինը գյուղում չես:
- 649.(1269) Մինչև վըեր աշկավըթ տեսնաս վեչ, հըվատաս վեչ:
- 650.(1270) Մհակը ծերքըթ ոնես, կյող շոնը կգիդա:
- 651.(1271) Մնացալ եմ չորս պատի դաթում:
- 652.(1272) Մոկնը ուրան ծակին քշտին դոչաղ ա:
- 653.(1273) Մոկնին հետի կատվան մեծ գազան չիկա:
- 654.(1274) Մորան ճոկվող կյառնը կյիլի փալ կտառնա:
- 655.(1275) Մորը անցկցած կամրջավը ախճիկն ալ անց կկենա:
- 656.(1276) Մրքատու ծառին փեղ կթխեն:
- 657.(1277) Մուշտարուն աշկը քոռ կինի:
- 658.(1278) Յա ուրան ասած, յա էն պատին:
- 659.(1279) Նալքանդին ծին պեպիկ կինի:
- 660.(1280) Նալերը ճարալ ա, մնում ա ծին:
- 661.(1281) Նախշուտին իրեսին փլավ չեն օտում:
- 662.(1282) Նամուսը տվալ են շանը, կերալ չի:
- 663.(1283) Նիսյա խմողը էրկու հետ ա հնրփում:
- 664.(1284) Շանան ըլածը շոն կինի:
- 665.(1285) Շան նման կլփսջում ա:
- 666.(1286) Շան նման հաչալն ալ ա փեշակ:
- 667.(1287) Շանը ընկջնին կուճի վախտը կկտրեն:

- 668.(1288) Շանը նհետ հնգերություն անողը մհակը պիտի ծերքան եր չի քցի:
- 669.(1289) Շանը ուխը ոսկոռ են քիցալ:
- 670.(1290) Շնն ա, թող կլոխը տա քրերավը:
- 671.(1291) Շաշին հնգերն ալ շնն կինի:
- 672.(1292) Շատ ըրա, քիչ խոսի:
- 673.(1293) Շատ խոսողը սուտ ասող կլի:
- 674.(1294) Շատ օտող մարդը ըշխըդեվեր կինի:
- 675.(1295) Շոն ըլես, կլե ըլես, հնգրմիչի կուճինը չըլես:
- 676.(1296) Շոն ըլես, կլե ըլես, տանը կուճինը չըլես:
- 677.(1297) Շոնը շանը ոտը կոխիլ չի:
- 678.(1298) Շտեղ կրակ անես, ընդեղ ալ ծոխ կլի:
- 679.(1299) Շտեղ կրակ անես, ընդեղ ալ մարթ կլի:
- 680.(1300) Շտեղ վըեր չոր ա, չրաթանը փոնում ա:
- 681.(1301) Շուտ երկենտողը փոշմանիլ չի:
- 682.(1302) Շփոթը մինչև մղակը, խաշիլը՝ մինչև ծմակը:
- 683.(1303) Չիչ քարը թիթև կլի:
- 684.(1304) Չտեսին մի խոխայա ըլալ, հուփ ա տվալ ծին կոտրալ:
- 685.(1305) Պապին ծերքան ուրան թոռն ա փոնում:
- 686.(1306) Պատը անջուկ ունի:
- 687.(1307) Պարտք անիլը հեշտա, տալը՝ տիժար:
- 688.(1308) Պարտքի վըրա պարտք կկյա:
- 689.(1309) Պարտքի տակ մնացող չի:
- 690.(1310) Պարտքի տակ մտող մարթ չի:
- 691.(1311) Պարտք տվողին լուզուն էրգյան կլի:
- 692.(1312) Պարտք տվողին լուզուն էրգյան կլի, պարտքատերինը՝ կարճ:
- 693.(1313) Պերանը ճուր ա ածալ:
- 694.(1314) Պերանըթ քեզանա տիլեր ա, թա տվեր:
- 695.(1315) Պիլոր քարավ տոն չեն շինիլ:
- 696.(1316) Պրանան կթնավետ ա կյամ:
- 697.(1317) Պրանան աղուվա էր տառնում:
- 698.(1318) Պիլոր քարը ծանդը կլի:
- 699.(1319) Ջահիլությունը գեղեցկություն ա:
- 700.(1320) Ջահեղությունը հիւր կտան:

- 701.(1321) Ջանան բեգար մարթ նն:
- 702.(1322) Ջան չունի:
- 703.(1323) Ռեխը լակ-լակ, կլոխը թակ-թակ:
- 704.(1324) Սարին ծաղիկը անուշ կինի:
- 705.(1325) Սարին պտկին թոխպ կինի:
- 706.(1326) Սերը մառթի սեռտ կերի:
- 707.(1327) Սոխ ու հաց, սեռտը՝ պնց:
- 708.(1328) Սողան կտորոզը լաց կինի:
- 709.(1329) Սողանը հինչքան ալ կծովա ըլում, ալլա օտվում ա:
- 710.(1330) Սոված կյելը ուրան ճոտին ալ կոտի:
- 711.(1331) Սոված կյիլի քոնը տանիլ չի:
- 712.(1332) Սոտ ասողի մինն ա:
- 713.(1333) Սոտ ասողի իրեսը սև կըլի:
- 714.(1334) Սոտ ասողին խոսքին հվատալ չեն:
- 715.(1335) Սորանց ախճիկը էքուց մերա տննալու:
- 716.(1336) Սոր կա, էքուց կա վեչ:
- 717.(1337) Սոր հալա կեր, էքուց Աստոծ մեծա:
- 718.(1338) Ստեղ նստումիլ, ընդեղ նստի:
- 719.(1339) Սև կովը կթնատու կըլի:
- 720.(1340) Սև օրին ումբը կարճ կըլի:
- 721.(1341) Սևը լվանալով սպիտակիլ չի:
- 722.(1342) Վեխճար պահողին նեստան վխճարավետ կըլյա:
- 723.(1343) Վեղեմ էն հանաքին կլոխը, վըեր կեսը դորթ չի:
- 724.(1344) Վեղը խաբար ա տանում:
- 725.(1345) Վեղին տակին հարուստ-քյասիք չկա:
- 726.(1346) Վենդավ եկած դոնաղին ծիավ ճնհապա կտինեն:
- 727.(1347) Վենին մինը հեն ա հանգիստումը:
- 728.(1348) Վեննը կոտրած իշին վերջին տերը կյելն ա:
- 729.(1349) Վեչ բոյումը կա, վեչ՝ խելքումը:
- 730.(1350) Վեչ կլխումթ կա, վեչ ջրումթ:
- 731.(1351) Վեչ ինքն ա օտում, վեչ թողում ա մունք օտենք:
- 732.(1352) Վեչ մի պժիշկ քեզ նման դնլնթ ըրալ չի:
- 733.(1353) Վեչ պուրթ ա, վեչ պնմբնկ:
- 734.(1354) Վեչ վարիլիյա, վեչ՝ հնճելի:
- 735.(1355) Վեչ տեսալ եմ, վեչ լիսալ:

- 736.(1356) Վեչ տղայա, վեչ՝ ախճիկ:
- 737.(1357) Վեչ վեն ունի, վեչ՝ կլոխ:
- 738.(1358) Վըեչ տոր, վեչ ալ ենան քինա:
- 739.(1359) Վեչ ուտիլիյա, վեչ թամաշա ընիլի:
- 740.(1360) Վեչ օտում ա, վեչ տեն ա քիցում:
- 741.(1361) Վեսկի հարկավեր չի, վեսկի բախտ ա հարկավեր:
- 742.(1362) Վերսը բնումն են սպանում:
- 743.(1363) Վըեչ առնող ա, վըեչ ծախող:
- 744.(1364) Վըեչ բոյումը կա, վըեչ ռանգումը:
- 745.(1365) Վըեչ խոսում ա, վըեչ՝ օտում:
- 746.(1366) Վըեչ կյալըթ եմ գիդացալ, վեչ քինալըթ:
- 747.(1367) Վըեչ մի պանի խառնվում չի:
- 748.(1368) Վըեչ մի պանի պետկ չի:
- 749.(1369) Վըեր բախտ ըլեր՝ տղա կծավեի:
- 750.(1370) Վըեր մանըթ կտրի, սերթըթ կհեռա:
- 751.(1371) Վըեր ուրան եշես, պիտի սոված մնաս:
- 752.(1372) Վըխկոտի աշկին կատուն քիշերը դև ա իրեվում:
- 753.(1373) Վնըտակի մեռալ ա:
- 754.(1374) Տալիս ես՝ լավ ես, տալիս չես՝ փիս ես:
- 755.(1375) Տա խոխոյթուն չի, ախմախոյթուն ա:
- 756.(1376) Տանակ տաս՝ արին չի կաթալ:
- 757.(1377) Տաննկը վեսկոռին տեմ ա ընգյալ:
- 758.(1378) Տաննկի յարան կողանա, խոսքի յարան՝ չէ:
- 759.(1379) Տանը խոսկուզրուց կըլի:
- 760.(1380) Տանը վըեր մեծ չիլավ, կարք ու կանոն չի իլիլ:
- 761.(1381) Տանը վըեր մեծ չիլավ, ծերքերըթ լվաց էն տանան:
- 762.(1382) Տանը վըեր մեծ չիլավ, էն տոնը տոն չի:
- 763.(1383) Տանձ ուտելիս ծառը տնգողին հիշի:
- 764.(1384) Տանձին պիտի ճիրես, վըեր տանձ օտես:
- 765.(1385) Տառտակ մարթին նհետ կլոխ չեն տնիլ:
- 766.(1386) Տառտակ-մառտակ խոսող ա:
- 767.(1387) Տնտտակ-մնտտակ խոսիլավ փոր չես քուշտըցնի:
- 768.(1388) Տառտակ տանը ախճիկ չեն տալ:
- 769.(1389) Տափլակ քարը ծանդր կինի:
- 770.(1390) Տյու թենց ես, ես՝ սենց:

- 771.(1391) Տյու ծիյավեր, ես՝ փիադա:
- 772.(1392) Տյու հինչ ես, վրեր քեզանսա ըլածը հինչ ըլի:
- 773.(1393) Տյու հով, ես հով:
- 774.(1394) Տյու քեզ համար մտածի:
- 775.(1395) Տյու քինսա քու հընգերըթ ճարի:
- 776.(1396) Տոն տինողը կնեկն ա:
- 777.(1397) Տոնը հով շինի, միչին հով ապրի:
- 778.(1398) Տու քու թշնամիթ ես:
- 779.(1399) Ցիգանին հնգերը ցիգան կըլի:
- 780.(1400) Ցիրեկը իշեղ վառողը, քիշերը առանց լուս կմնա:
- 781.(1401) Յորեն ասում ա, կյարի ծախում:
- 782.(1402) Յորեն չիլած տեղը կյարու հացն ալ ա օտվում:
- 783.(1403) Յորտ ճուրը սարան կըկյա:
- 784.(1404) Ուժըթ գյորա քար եկալ:
- 785.(1405) Ուժը իշին պատում չի, փալանին ա վեր թակում:
- 786.(1406) Ուժ օնի, պայց խեղք չոնի:
- 787.(1407) Ուտիլիս լնվ նն ըլում, տալիս՝ փիս:
- 788.(1408) Ուրան արշինա՛վն ա չափում:
- 789.(1409) Ուրան եշումիլ, իմ խոսկիս անջուկ կալ:
- 790.(1410) Ուրան ծերքավը ուրան տոնը քանդում ա:
- 791.(1411) Ուրան աղվեսի տեղ ա տինում:
- 792.(1412) Ուրան անումը տինում ա ուրիշի վիրա:
- 793.(1413) Ուրան արշինա՛վն ա չափում:
- 794.(1414) Ուրան կլոխն ա պահում:
- 795.(1415) Ուրան մորը սիրողը ուրիշին ալ կսիրի:
- 796.(1416) Ուրան մհար քոն ա ըլում, ուրիշի մհար արագ տեսնում:
- 797.(1417) Ուրիշի դժբախտությունովը ուրխանալ չեն:
- 798.(1418) Ուրիշի խոխան քեզ տղոթուն չանիլ:
- 799.(1419) Ուրիշի ծերքավ օց ա փըռնում:
- 800.(1420) Ուրիշի ծերքի եշողը սոված կըմնա:
- 801.(1421) Ուրիշի հացավ փոր չի քուշտանալ, քոնը ստեղծիր:
- 802.(1422) Ուրիշի հարսը աշկիթ լավ կըրվա:
- 803.(1423) Ուրիշի հետի վեր փորողը, ուրան հետի ա փորում:
- 804.(1424) Ուրիշի պիրանավ խոսումիլ:
- 805.(1425) Ուրիշի վիրա ծիծաղումիլ, վըրեր քեզ վիրա ծիծաղեն վըեչ:

- 806.(1426) Ուրիշի քյանդիրավ վեր չեն նումտիլ:
- 807.(1427) Փայչին խելոք մարթին սիրիլ չի:
- 808.(1428) Փափաղը տղամարդին նամունս ա:
- 809.(1429) Փայ պժնողին պան չի մնաց:
- 810.(1430) Փեշակավ մարթը քոռող չի քաշիլ:
- 811.(1431) Փեշակը թշնանուդ աշկը հանում ա:
- 812.(1432) Փեշակը ոսկիյա:
- 813.(1433) Փեշակըթ ինձ տուր, ես քեզ հաց տամ:
- 814.(1434) Փետը երկու պտոկ ունի:
- 815.(1435) Փիս մարթին լավութուն չեն անիլ:
- 816.(1436) Փոխ կաված հացով փոր չի քուշտանալ:
- 817.(1437) Փողը պրանումը լուզով ա տինում:
- 818.(1438) Քաչալ ախճիկը քվորը ծամերավը խաղ կանի:
- 819.(1439) Քաչալ կլխին սանդորը հինչ անի:
- 820.(1440) Քարան հաց քամող մարթ ա:
- 821.(1441) Քարավ շինած տանը անջուկ ունի:
- 822.(1442) Քարը կյոքաթ եր ածի:
- 823.(1443) Քարը նի կյա կաղ վենին:
- 824.(1444) Քարը քարին կկոտրի:
- 825.(1445) Քարը քարին օտում ա:
- 826.(1446) Քարին հուփ տա, ճուր կկաթա:
- 827.(1447) Քարին մինը պինդ ըլի, մինը՝ կակող:
- 828.(1448) Քարին տակին ալ տինես՝ կապրի:
- 829.(1449) Քեզանս մեծին ալ լըսի, կուճինին ալ:
- 830.(1450) Քեզանս ուժեղին նհետ փոնվումիլ:
- 831.(1451) Քեթը աման տեղ քցիլ չեն:
- 832.(1452) Քթան փոնես, ջանը տյուս կկյա:
- 833.(1453) Քիշերվա կերածը կորած ա:
- 834.(1454) Քիչ խոսի, շատ լսի:
- 835.(1455) Քյասիբը ըլճկանը անումը Վեսկիյա տինում:
- 836.(1456) Քյասիբին աշկը հարուստի ջուբին վիրա կինի:
- 837.(1457) Քյասիբին ասում են շտեղան, հարստին ասում են՝ շընհավեր ըլի:
- 838.(1458) Քյասիբին օրը շան օր ա:
- 839.(1459) Քո դառդաթ խոսա:

- 840.(1460) Քոյան փոնսած առչին ալ են սվրցնում:
- 841.(1461) Քոնը երկացավ, զառթունին վխծցրեց:
- 842.(1462) Քոնը քոն կալիրի:
- 843.(1463) Քոնջուկի տուր:
- 844.(1464) Քոռը Աստուանա դժգոհ ա ինում:
- 845.(1465) Քոռին ըռաչին ճրաք չեն վատիլ:
- 846.(1466) Քոռին հետի յա ցիրեկը, յա քիշերը:
- 847.(1467) Քոռ ծին քիշերնալ կըրածի:
- 848.(1468) Քոս անումըթ տինում ա ուրիշի վրա:
- 849.(1469) Քոս աշկըթ ալ հանող կըլի:
- 850.(1470) Քոս բախտաթ նեղաց:
- 851.(1471) Քոս եղըթ քցի քոս կըլոխըթ:
- 852.(1472) Քոս մեսըթ քեզ, իմ վեսկառըս ինձ:
- 853.(1473) Քոս յեղըթ քեզ, իմ շորին ծերք մի տու:
- 854.(1474) Քոս չոր հացըթ խալխին փլավան լննվ ա:
- 855.(1475) Օխտը լննգնն թանսալ ա օտում:
- 856.(1476) Օղտը հինչքան ալ սաթկած ըլի, կաշին մի իշապետն ա:
- 857.(1477) Օղտին ընջոկումը քոն ա:
- 858.(1478) Օտող-խըմող մարթ ա:
- 859.(1479) Օրեկան մին մեթքը փոխող:
- 860.(1480) Օրը մի խաբար ա պիրում:
- 861.(1481) Օրը մի կիրք ա կարթում:
- 862.(1482) Օրը մի մարթ ա ճարում:
- 863.(1483) Օրը մի շառ ա ասում:
- 864.(1484) Օրը մի շոր ա փոխում:
- 865.(1485) Օրը մինչ իրիգյունը քոն ա:
- 866.(1486) Օրը պեր, օրը կեր:
- 867.(1487) Օրը քինաց, կյանքը քինաց:
- 868.(1488) Օցի խելք ոննի:
- 869.(1489) Օցին նհետ հնգերություն չեն անիլ:
- 870.(1490) Աղվեսին դոդոռը մսին հսալ չի, ասալ ա՛ վետած ա:
- 871.(1491) Աման գուննացու ըռաչի պար չեն կյալ:
- 872.(1492) Աման մարթ իւրնն դատդն ա քաշում:
- 873.(1493) Աման մարթ մի դնրդ ոննի:
- 874.(1494) Աման տնտունկ խոսկ սրտիթ մոտ մի ընթունիլ:

- 875.(1495) Աման մարթի հվատալ չեն:
- 876.(1496) Աման օր կետը քաթա չի պիրիլ:
- 877.(1497) Անդեր իշին կելը կոտի:
- 878.(1498) Անդեր վեխճարը կյըլի փայ կտառնա:
- 879.(1499) Անխելքը երգյան կապրի:
- 880.(1500) Անցկացած պանին ենան չեն ընգիլ:
- 881.(1501) Աշկա ընգեցիր, կորած ես:
- 882.(1502) Աշկը միշտ ուրիշի վրայա:
- 883.(1503) Աշկումը իշեղ չկա:
- 884.(1504) Անջոկըթ կանչի:
- 885.(1505) Անջոկիթ քամակը կտեսնաս:
- 886.(1506) Անջոկը լսիլի համար ա:
- 887.(1507) Առանց խոխա տոնը խարաքա ճաղաց ա:
- 888.(1508) Գիժը խելունքին հավան չի կենալ:
- 889.(1509) Դալաք ես՝ քու կլխիթ ճարը տեն:
- 890.(1510) Դամուրչուն կացին չի նիլ:
- 891.(1511) Դանրդոտ մարթը շատ կխոսա:
- 892.(1512) Եշի՝ քեզ աշկավ չտան:
- 893.(1513) Էշը ընջոկան կաղալ չի:
- 894.(1514) Էշը կերավ, հնքվան խոովեց:
- 895.(1515) Էշը հինչ գիդա՝ նուշը հինչ ան:
- 896.(1516) Ըծերը տուրվըն եկալ:
- 897.(1517) Ըմոան կյողը, ծիմեռն ա տնու կյալիս:
- 898.(1518) Ըրա ինձ հետի, սվերի քեզ հետի:
- 899.(1519) Թանգա հարսը, թանգա ավուլ ա:
- 900.(1520) Թոռ օրը բոստանը ճրիլ չեն:
- 901.(1521) Իրիքնակն ու լուսնյակը քյոր ու ախպեր են:
- 902.(1522) Լանչան կնգանը շառան պրծնիլը տժար ա:
- 903.(1523) Լավա մեհետ տեսնաս, քան թե օխտը հետ լսես:
- 904.(1524) Լավ միրքը վեռթնն ա օտու:
- 905.(1525) Լանցնա ծիծաղը ախպերք են:
- 906.(1526) Լըպագտրակին քացի տվածը փիս կըլի:
- 907.(1527) Լսածիթ հվատումիլ, տեսածիթ հվատա:
- 908.(1528) Լնուզվին միչին վեսկոտ չկա, թորն ասես կիլորվի:
- 909.(1529) Լնուզնն համ աշխարհ կշինի, համ կքանդի:

- 910.(1530) Լուսն օդտ են շինում:
- 911.(1531) Իսալխին աշկը քեզ վրայ ա:
- 912.(1532) Իսաթան նեստան շոշոամ ա:
- 913.(1533) Իսաշիլը մինչև մղակը, շփոթը մինչև ծմակը:
- 914.(1534) Իսելքը հացին նհետը կերել ա:
- 915.(1535) Իսելքը քամին տարալ ա:
- 916.(1536) Իսդեղնին տակոին էրգյան կըլի:
- 917.(1537) Իտխան լաց լիլավ կմծանա:
- 918.(1538) Իտխան ծերքըը ընգածը պերանն ա տանում:
- 919.(1539) Իտրամանկ աղվեսը երկու վենավ ա թալակ ընգում:
- 920.(1540) Իտրթ մերը աշկի կրող կըլի:
- 921.(1541) Իսին խրատը հինչ անի, սնին սապունը հինչ անի:
- 922.(1542) Ծանդըը տեղըթ թիթվցնումիլ:
- 923.(1543) Ծառան ճողնը եր կնգի:
- 924.(1544) Ծառն ուրան պտուղավի ա ճնանչվում:
- 925.(1545) Ծերքաթ թռած ծետը, նորից կյալ չի հափուոթ:
- 926.(1546) Ծիծաղին վեռչը լաց ա:
- 927.(1547) Ծմեռը քարա կակող հինչ ասես օտվում ա:
- 928.(1548) Ծմռան կյողոթունը ամառը կպացվի:
- 929.(1549) Ծոնկնն փոնողին անա ծունավետ կկյա:
- 930.(1550) Կարկուտը քյասիբին սարտն ա թակում:
- 931.(1551) Կաղ մարթի սաղ վենը ուժեղ կըլի:
- 932.(1552) Կարմիր խնծորին մեչը փոչ ա ըլում:
- 933.(1553) Կեշ ախճիկը լավ տղա կոզի:
- 934.(1554) Կետին քարը ծանդը կըլի:
- 935.(1555) Կլոխը տատտակ բրանիյա:
- 936.(1556) Կյետն ընգնողը վեչ մի պանն ն վախիլ չի:
- 937.(1557) Կյողը ուրան շոխկանալ ա վախում:
- 938.(1558) Կյուլի սիրտ կերած մարթ ա:
- 939.(1559) Կյուղութունավ տոն չես պահիլ:
- 940.(1560) Կոշտը մարդը սովածին դաղիորը գիդալ չի:
- 941.(1561) Կոտրած շուշան կոծկվիլ չի:
- 942.(1562) Կորած քյանդիորը միշտ էրգյան ա թվում:
- 943.(1563) Կոնտակերն ա տալիս:
- 944.(1564) Կոնտակին ծմերուկնիյա տնում:

- 945.(1565) Կովուրը հալվա չեն պժանում:
- 946.(1566) Կոքընիս հմբարալ ա:
- 947.(1567) Կրակին նհետ խաղ չեն անիլ:
- 948.(1568) Հային եղի խելքը իմը պետեր:
- 949.(1569) Հայրենիքան քաղծր պանն չկա:
- 950.(1570) Հանաքին վեռչը կոեվա տառնում:
- 951.(1571) Հանցա ուզուն ախմախը ըլի:
- 952.(1572) Հարաղաշ կյառնը լավ պանն ն:
- 953.(1573) Հաց ուտելիս սաղ, գործ անելիս՝ կաղ:
- 954.(1574) Հափոին միչին մագ չի փսնիլ:
- 955.(1575) Հափոութ վեր քոր ա կյալիս, փող ա կյալու:
- 956.(1576) Հըրվանին հարսը աշկիթ լավ կըրևա:
- 957.(1577) Հինչ վըեր վարես, էն ալ կինձես:
- 958.(1578) Հով հինչ անի, ուրան կանի:
- 959.(1579) Հով հինչի գենա ընգի, կըհըսնի:
- 960.(1580) Ղորթ ասողին փափաղը ծակ կըլի:
- 961.(1581) Ղումին վրա ճաղաց չեն շինիլ:
- 962.(1582) Ղուշին թևաժն են ճանաչում, մարթին՝ անունավը:
- 963.(1583) Ճպատը քու թուփաթ կտրի:
- 964.(1584) Մազը էրգյան ա, խելքը՝ կարճ:
- 965.(1585) Մահը տարիքին եշում չի:
- 966.(1586) Մաղին միչին ճուր չի կենալ:
- 967.(1587) Մարթ քթածը ետ չի լուզիլ:
- 968.(1588) Մարթի բոյին եշումիլ, խելքին եշի:
- 969.(1589) Մարթիս ուրան հնգերավը կճանանչեն:
- 970.(1590) Մեղը օգողը ճանջ կպահի:
- 971.(1591) Մեշկը տափավը չի կյալիս:
- 972.(1592) Մեշտեղ օտում ա, դրաղ ման կյալիս:
- 973.(1593) Մեռնող կա, տերտերին աշկը լուս:
- 974.(1594) Մի ախճիկը մի տղի թնուշ կըլի:
- 975.(1595) Մի աշկը լաց, մինը՝ ծիծաղ:
- 976.(1596) Մի լուն մի դավա են շինում:
- 977.(1597) Մի ծու կածի, մի ժամ կկրչկրչա:
- 978.(1598) Մի մոկունը մի կարաս ա մուտատում:
- 979.(1599) Միշտ քոնջոկիյ ա տալիս:

- 980.(1600) Նախշուն իրեսին փլավ չեն օտում:
- 981.(1601) Նամուսը տվալ են շանը, կերալ չի:
- 982.(1602) Նեղ օրին լեն օր ալ կլյն:
- 983.(1603) Շանը պոնին քշտին վեսկոտ կըլի:
- 984.(1604) Շանը վեր համանչ ըլի, շալվար կհաքնի:
- 985.(1605) Շատ խաբարը շուտ կտարածվի:
- 986.(1606) Շառը նեստան շոշոում ա:
- 987.(1607) Շատ անկեռիք մարթ ա:
- 988.(1608) Շատ գործ անողը, շատ ալ օտում ա:
- 989.(1609) Շըհաչոց ա տալիս:
- 990.(1610) Շոխկան վախող ա:
- 991.(1611) Շոն լես, կել լես, հնգերմիջի կուճինը չըլես:
- 992.(1612) Շոնը շանը նհետ ա հնգերութուն անում:
- 993.(1613) Շոնը շանը վենը կոխիլ չի:
- 994.(1614) Շոնը քնաց, շախկան ըոխին:
- 995.(1615) Շոնը ուրիշի տռանը կատուվ ա տառնում:
- 996.(1616) Շոնուտ հիվանդացողին ումբուրը կարճ կընի:
- 997.(1617) Շտեղ կյանք կա, ընդեղ ալ մահ կա:
- 998.(1618) Շտեղ վեր հաց, ընդեղ կաց:
- 999.(1619) Չալ կովան չալ վերթ կըլի:
- 1000.(1620) Պելը հմանչում չի, տերն ա հմանչում:
- 1001.(1621) Պրտոնդ ճրում ծուկուն ա փոնում:
- 1002.(1622) Ջրումը կոպեկ չկա:
- 1003.(1623) Սարին վրա հինչքան վեղ ածես, կպրցրանա:
- 1004.(1624) Սոտերը նեստան շոշոում ա:
- 1005.(1625) Սոր կանք, էքուց կանք վըեչ:
- 1006.(1626) Սրտավ տվածը, ծերքավ տվածան լնվ ա:
- 1007.(1627) Սև դուշը, սև խաբարա պոնում:
- 1008.(1628) Սև շոնը սիփտակիլ չի:
- 1009.(1629) Վար անող խուփը ընջոտիլ չի:
- 1010.(1630) Վեչ ինքն ա օտում, վեչ ուրիշիլ ա տամ:
- 1011.(1631) Վերսը բարումը կսպանեն:
- 1012.(1632) Վերսկանը քըրնաց վերսի, վթեր սոտեր խոսի:
- 1013.(1633) Վխճարին բոլուկը վըեր ետ տաս, կաղը առաջ կընգի:
- 1014.(1634) Տանը վեր մեծ չըլի, միշտ խոսկուզրուց կըլի:

- 1015.(1635) Տնտանակ վեղորին սասը պացուր կըլի:
- 1016.(1636) Տղան օջախին գարթն ա:
- 1017.(1637) Տսփեսան վերտակի փալագ ա:
- 1018.(1638) Տրեխն անեմ ես, տանեն բախշեն քեզ:
- 1019.(1639) Յորնի հաց չլած տեղը, կարա հացնալ ա օտվում:
- 1020.(1640) Ուժը իշին պատում չի, փալանին ա թակում:
- 1021.(1641) Ոնքերան գհար ա կաթում:
- 1022.(1642) Ուրան քթան գիման, վեչ մինին հավան չի:
- 1023.(1643) Ուրիշի հացավ քուշտանա վալ չի:
- 1024.(1644) Փայ պըժտողին փայ չի հսնիլ:
- 1025.(1645) Փանատին լուսը քոռին օքութ չի:
- 1026.(1646) Փեշակը ծերքին մարթը սոված մնալ չի:
- 1027.(1647) Փողատերը ուրան գմն ա պահում:
- 1028.(1648) Փողը ծերքի կեխտ ա, սօր կա, էքուց՝ կա վեչ:
- 1029.(1649) Քամուն պերածը, քամին ալ կտանի:
- 1030.(1650) Քաչալ ես, քու կլխիթ ճարը տես:
- 1031.(1651) Քավթառ շանը քուչի-քուչի չեն անիլ:
- 1032.(1652) Քարակացնալ կարալ չես ծառ կտրես:
- 1033.(1653) Քարին տակին ալ տնես, կլիխը կպահի:
- 1034.(1654) Քարին քացի տալավ ապրում էք:
- 1035.(1655) Քեթը աման տեղ քցում ա:
- 1036.(1656) Քեթը պնցուր ա:
- 1037.(1657) Քենին մհանա, գամքուչը՝ շհանա:
- 1038.(1658) Քթան փոնես, ջանը տոնս կկյա:
- 1039.(1659) Քյանդիրը պրնկած տեղան ա կտրվում:
- 1040.(1670) Քյանդիրին էրգանն ա լավ, խոսկին՝ կարճը:
- 1041.(1671) Քոննա մեռածը ախպերք են:
- 1042.(1672) Քոռը փոնած պննը պաց չի թողալ:
- 1043.(1673) Քցես թորենը, մկլավետ չի կյալ:
- 1044.(1674) Քու մեռալիթ համար յաղին սերտը ցավալ չի:
- 1045.(1675) Քուսուտ էժը ճրին ակնան կխամի:
- 1046.(1676) Օղտ ըլես, կոչ կյալավ ման կյաս:
- 1047.(1677) Օցին գահլան տնխծնն ա քընում, է
ն ալ կյամ ա նրմնն պոնին ըռաչին փսնում:

(Միսիան)

- 1048.(1678) Անկնիկ մարթը, յա անդալան շունը, մին ա:
- 1049.(1679) Աշկը սըրտի պըտըրհանն ա:
- 1050.(1680) Արչը հազար մին մնսնն կասի, չիմ էլ հըսած տանձի մասին:
- 1051.(1681) Գյանքը էն չի, որ ապրել ես, գյանքն էն ա, ինչ արել ես:
- 1052.(1682) Դնմըրչու տանը խաչերկաթ չի ինիլ, պրնտի տանը՝ կուծ:
- 1053.(1683) Դնվնն ծախողը դնվի բալա կարալ չի առնի:
- 1054.(1684) Դնվնն մըն կնպեկ ա, բա հո՛ր ա մըն կնպեկը:
- 1055.(1685) Դնվեն կորցրել ա, նոխտին ա ման կնլիս:
- 1056.(1686) Դո՛ոգ խոսկը եղ ա, տո՛ուս կկն՝ ճըրի իրեսը:
- 1057.(1687) Ետ ընկած կուճի կլխին ծո՛նն ա կնլիս:
- 1058.(1688) Էժան միսը շունն էլ չի ուտըմ:
- 1059.(1689) Էլի էն է՛շն ա, փալանն ա փոխվել:
- 1060.(1690) Էշի բոյը կարճ ա, ասըմ են դողուղ ա:
- 1061.(1691) Էշը թկելավ ծի չի տեռնալ:
- 1062.(1692) Էշը պեռան տակին զըռոալ չի:
- 1063.(1693) Էրկու դոչ մին լնգննից կարալ չեն ճո՛ր խմեն:
- 1064.(1694) Թնմընն մարթ կինի, թնմընն հող կա ոչ:
- 1065.(1695) Ինչ քու դըսմնթն ա, էն էլ կեր:
- 1066.(1696) Իսկական հնգերությունը մաքուր ճոտ ա,
առյուծը՝ կեղծ հընգերություն ա:
- 1067.(1697) Լնցը հու ծիծնողը քիր-ախպեր են:
- 1068.(1698) Խելքը նխպո՛ր ա, ցըմաքըմ չի:
- 1069.(1699) Խելքը ըրխալըղ չի, մաշող չի:
- 1070.(1700) Խոխեն խակ շո՛ր ա ուտըմ, մոր կեռքընին ա առնըմ:
- 1071.(1701) Ծառի որթը ո՛րանից ա:
- 1072.(1702) Ծին որ ինի, փալանն էլ կինի:
- 1073.(1703) Ծմերուկը մինչու կըտրես ոչ, գիդնն չես՝ հըսած ա,
թա՛ խակ, ախճիկն էլ մինչու մարթի չը քինն,
գիդալ չես՝ լա՛վս ա, թա՛ փիսը:
- 1074.(1704) Ծո՛նն հնվն՝ ճոտ չի:
- 1075.(1705) Կատվին վազ տալը մինչու մարաքն ա:
- 1076.(1706) Կելը սովածությունիցը կարըմ չէր պըցրանսար սարը,
ասեցին՝ ջամդաք ա լափել է՛:
- 1077.(1707) Կելն ու ոխճարը կոխկ-կոխկի քիննն չեն:

- 1078.(1708) Կեղ կամ, որ շուն չինի:
- 1079.(1709) Կլիխը կարաց ոչ պահի, փափաղն և պինդ պահում:
- 1080.(1710) Կյոքիս նըստել և, մըրուքս և քանդում:
- 1081.(1711) Կընգա ավաշադաճը տըռնիցը կախ տված գանգանկ և, մարթի կըլխին կկըպնի, կզընգա:
- 1082.(1712) Կովատերը ամման օր մածուն չի ուտում:
- 1083.(1713) Հանգիստ կատուն էլ բեթնրին և ճանգոքում:
- 1084.(1714) Հաժն արագին կորեկ և տենում:
- 1085.(1715) Հնրփննձ մարթին պարև մի տալ:
- 1086.(1716) Հեխտըվողը ծեռը օցին և քըցում:
- 1087.(1717) Հերը տղին մին բաղ փեշքնշ արավ, տղեն հորը մին տանձ էլ և տվավ ոչ:
- 1088.(1718) Դարադուշը ճանջ չի փըռնիլ:
- 1089.(1719) Դուշը կուտով կըփոնեն:
- 1090.(1720) Ծաղաց քինանցողը անրաթաթախ կինի:
- 1091.(1721) Ծըրի վրն նախշ և քաշում:
- 1092.(1722) Ծնորը քինացողն և, շումն և մնացողը:
- 1093.(1723) Մարթի դնշմանն էլ, պարեկամն էլ լնուրն և:
- 1094.(1724) Մարթ հու չի, սեզի խոտ և:
- 1095.(1725) Մին թըշնամին շատ և, հնրնոր պըրեկամը՝ քիչ:
- 1096.(1726) Մին ծնվնրով ճնշ չեն էփիլ:
- 1097.(1727) Մկան ցեթն էլ և ճաղացին փայդա:
- 1098.(1728) Մոկնը ասլան և, հիփ կշտին կատու կա վեչ:
- 1099.(1729) Շունը շան սնսին և վագ տալի:
- 1100.(1730) Ոչ ով գիդնլ չի, թն օցի պննը իշքան և խոր:
- 1101.(1731) Ով ավաշադիլը սիրում չի, նլիրն էլ և ծեռը ծակում:
- 1102.(1732) Ով հնգեր չունի, կեսատ-պոատ մարթ և:
- 1103.(1733) Ով շատ և ծիծաղում, ավամախ և, ով ծիծաղում չի, անբախտ և:
- 1104.(1734) Չաթվին էրգյանն և լյավ, ամա գրուցին՝ կարճը:
- 1105.(1735) Չաթուն շտեղ վեր պիրակում և, ընդեղ էլ կըտըրվում և:
- 1106.(1736) Չալ օցը տեսնողը չալ չաթվից էլ և վախում:
- 1107.(1737) Սերը ճըրով հընցընող կրակիցը չի:
- 1108.(1738) Սոված շոնը փաղից վախենալ չի:
- 1109.(1739) Սովածությունը ամենալնվ ճնշն և, բիզնրննձ ինիլը՝ ամենափափուկ պնրցը:

1110. (1740) Սրտով ուզածը նախշուն ա ինըմ:
1111. (1741) Սև շուն, սիպտակ շուն, մին հաշիվ ա, շուն ա:
1112. (1742) Տաննակն իրա կոթը տաշիլ չի:
1113. (1743) Տանը վեր մեծ չինի, տեղը քոթոնկ կը տինեն:
1114. (1744) Փիս աշկը փիս պաններն ա տենըմ:
1115. (1745) Փողն ու նամուսը մին պարկի մեջ մըննիլ չեն:
1116. (1746) Փորին քացով տվան, կոռոնց՝ վայ մեշկըս:
1117. (1747) Քամի որ չիլավ, ծառը տոյրոյր չի կան:
1118. (1748) Քանի շատ հարս ինի տանը, էնքան ճանշը աղի կինի:
1119. (1749) Քանի ջանտ շուրս ա, աշկըտ տոյս ա, ջանըտ թիլացավ, տունը կքախծրանա:
1120. (1750) Քյասիբ մարթին սերտն ա լեն, հըրուստին՝ տեղը:
1121. (1751) Քոռ մարթին փաննարը հինչ:
1122. (1752) Օցի կաշին ա նախշուն, մարթի՝ սիրտը:

ՕՐՀՆԱՆՔՆԵՐ

1. (1753) Աստված քեզ լավ փեսա տա:
2. (1754) Աստված քեզ տասը երեխա տա:
3. (1755) Բախտավոր լինես:
4. (1756) Երեխեքդ չինարի բոյ քաշեն:
5. (1757) Էս գիշեր լավ երագ տենաս:
6. (1758) Կյանքում ոչ մի չար բան չտեսնես:
7. (1759) Մորտ կաթը քեզ հալալ ըլի:
8. (1760) Մինչև տարին էս լնվ տանը
Մըն հոյրոնմանց հարթըն ինի,
Հարթնիտ ալ մըն կըռըգտտիկ,
Մըն թոլամագ մարթ ինի:
9. (1761) Աշկըտ ցամաք իլի, սուփրատ՝ լիքը:
10. (1762) Ապրուստ-կապուստըտ բոլ ինի, չարը ճընապիցտ թոլ ինի:
11. (1763) Ասու աչը կլխիցըտ անպակաս ինի:
12. (1764) Բիլնգիդ գորութուն, կոռծիտ՝ հաջողութուն:
13. (1765) Գյանքըմըտ ախ չքաշես:
14. (1766) Ըտենց հազար թնգան շիր մաշես:
15. (1767) Թոռներով-ծոռներով նստես հացի:

- 16.(1768) Կլխիցըտ մագ չպակսի, մեշկըտ պինդ ինի:
- 17.(1769) Հորավ-մորավ մրծանաս, օջաղին ճրաքը վառիս:
- 18.(1770) Հուր քինան, ոտիտ տակին ծաղիկ կընանչի:
- 19.(1771) Շան-շաննթից հեռու ինես:
- 20.(1772) Ոչ սով տեսնաս, ո՛չ ցավ, բալա ջան:
- 21.(1773) Չարից հեռու ինես, պարին հաննան քե առաչտորթ ինի:
- 22.(1774) Տանըտ տոնտը պեց իլի, ճաղացիտ աղունն անպակաս:
- 23.(1775) Քու հոր ու մոր կըրեզմանին լոս վեր կնն,
որ քե մանին լոս աշխարք են քցել:
- 24.(1776) Կանաչ-կարմիրդ կապած տեսնամ:
- 25.(1777) Կյանքդ երգան ինի:
- 26.(1778) Դորմի հորդ վեքուն:
- 27.(1779) Շատ սաղ ինես:
- 28.(1780) Օրինվես տու:

ԱՆԵԾՔՆԵՐ

- 1.(1781) Բոյդ թաղեմ:
- 2.(1782) Բոյտ թել չափեմ:
- 3.(1783) Էս քիշեր տրամվայի տակ ընգնես:
- 4.(1784) Կլխստ հողեմ:
- 5.(1785) Տարողիտ տունը մնաս:
- 6.(1786) Քեզ հարս տվողին ինչն ասեմ:
- 7.(1787) Քընես չըլես:
- 8.(1788) Քո հերը թաղեմ, մերն էլ հետը:
- 9.(1789) Հորըտ օրթնանքըն ուրանաս,
Ցավ ու ցեցի տիրանաս,
Վոսի փոշը շիլակես,
Շանը նըհետ թան լակես,
Լոնն նիհինես ժամ քինանս,
Սև իրեսավ տոն քինանս,
Քոսին միչին կըլովես,
Դենգըն չինի վեր քորես:
- 10.(1790) Ախպըրտինքտ կոտորվես:
- 11.(1791) Աշկերըտ պընջվի, ջիզնրըտ սևանա:
- 12.(1792) Աշկըտ ըլլա, մեչը լոն չըլլա:
- 13.(1793) Աշկըտ ճամփին մնա:

- 14.(1794) Աշկիտ լիսը թափա:
- 15.(1795) Աշկիտ գիլեն թափա:
- 16.(1796) Աշկիտ լիսը խըվարի:
- 17.(1797) Բոյիտ թել չափեն:
- 18.(1798) Լիւզոնտ լալ մնա:
- 19.(1799) Լիւզոնտ պերանըմըտ չորանա:
- 20.(1800) Լիւսըտ խվարվի, աշկերըտ տեռնանն ոննիտ տակը:
- 21.(1801) Խողի պաժին չըլլես:
- 22.(1802) Ծայ-ծայ մաղ ըլես, պատեն կախ ըլես:
- 23.(1803) Ծեռիտ կպած ծաղիկը քար ըլի:
- 24.(1804) Ծեռիտ մեջ աղ չըլի:
- 25.(1805) Ծեռներըտ խաչած մնա:
- 26.(1806) Կեծակը քե շամփրի:
- 27.(1807) Կերածըտ քթետ կնն:
- 28.(1808) Դննրիբըտ տուն չըտնննն:
- 29.(1809) Միսըտ քըրքըրվի, թիքն-թիքն տննննն:
- 30.(1810) Շամփուրը դնն անեն, կոխեն սիրտըտ:
- 31.(1811) Շան մնան հաչալով սատկես:
- 32.(1812) Շնննննա, շնննի մնան կնն:
- 33.(1813) Շուն ու կելի փայ ըլլես:
- 34.(1814) Ոչ յաշամիշ իլես, փափակըտ կեսատ մնա:
- 35.(1815) Ոտըտ քարին անի, ճակատըտ՝ պատին:
- 36.(1816) Սատկես, շանսատակ ինես, վրետ սուք անող չինի:
- 37.(1817) Սիրտըտ քըրքըրվի, լիւզոնտ պըպաննձվի, հալլա հան:
- 38.(1818) Վայիտ նըստեն, վայ-վայ անեն:
- 39.(1819) Տաղը տատես տննտննյ նըստես:
- 40.(1820) Տիւնըտ-տեղըտ տեռտակ մնա, պուպուն մաչին պին տինի:
- 41.(1821) Տեղըտ տննտննկ մնա, հան:
- 42.(1822) Տունըտ անճըրաք մնա, օջաղըտ՝ անկրակ:
- 43.(1823) Տունըտ փուլ կնն կըլխիտ:
- 44.(1824) Քեզի տըսնեն՝ ասեղը տընգես, խովը նստես:
- 45.(1825) Քոռանա, տափերը տըփտըփիս:
- 46.(1826) Քըրքըրվես, քըրքըրվես, թներըտ թիլնա:
- 47.(1827) Աըշկահեռ մնա:
- 48.(1828) Ա մըթամեռ:

- 49.(1829) Ա տղամեռ:
 50.(1830) Բողման (Բուղան) քե տանի:
 51.(1831) Գուլլան քե տանի:
 52.(1832) Դիլակդ թերատ մնա:
 53.(1833) Ընըլթաթախ տառնաս:
 54.(1834) Լուգուտ լակվի:
 55.(1835) Խոռկը տանի:
 56.(1836) Սև սելը տանի:
 57.(1837) Վեչ միխթարես:
 58.(1838) Քյափուր մնաս:

ԱՂՈԹՔՆԵՐ

1. ՉԱՐ ԱԶՔԻ Ա. (1839)

Թո՛ւ՛ չա՛ր աչքը,
 Չա՛ր նիաթը,
 Չա՛ր սհաթը.
 «Ա՛ պիղծ, դո՛ւ ես».
 -Ես եմ.
 «Ու՛ր ես գնում».
 — Գնում եմ ծառը.
 «Ծառին ճյուղնը չկա,
 Ճյուղնին տերն չկա,

Ծիծո մարդին լեղին քաղեմ.
 Խորանգին ծովը
 Մայրամ Ասրծո աղոթքովը
 Քրիստոսա հրամանքովը,
 Թո՛ւ՛ չա՛ր աչքը,
 Չա՛ր նիաթը,
 Չա՛ր սհաթը.
 Տեր մեր Հիսուս, Քրիստոս:

Բ. (1840)

«Ա՛ Պողոս»
 — Ես ըմ.
 «Չա՛ր աչքը, չա՛ր սհաթ,
 Հո՛ւր ըս ուրթում»:
 — Ուրթում ըմ ծառը.
 «Ծառուն ճողնը չկան.
 Ճողնուն տերն չկան.
 Իլլիմ մարդու գլոխ,
 Ծածում լեղե.

Նու ընես անդ տոնդ
 Վեզդ մանդի,
 Մաչքդ կտորի,
 Քիցիմ խորոնդուն ծավը,
 Քրիստոսա հարի մեղավը,
 Մեյրամնուն աղոթքավը,
 Քրիստոսա հրամանքավը,
 Հիսուս, Քրիստոս, Ասրուծ:

Գ. (1841)
(Մեղրեցոց բարբառով)

Իրիք-իրիք գեցալ ըն վար.
Իզնի հինչ իլալ` կարիճ.
Ճըպարը հինչ իլալ` օղձ.
Օղձուն փորսավը մին աղ ու մուխեր
Սև քարեն ցիքիմ,
Սև սալեն ցիքիմ,
Հոյս Մարիամ,
Կոյս Մարիամ,
Կամ Աստուծո
Հիսուս, Քրիստոս, Աստուծ:

Դ. (1842)

Լալա լարթամ,
Ճեղն օնե, փիրև չոնե,
Չար մարդին խոսքը չոնե.
Տըղնըհոռե զընդանե,
Պորուրին փորումը,
Չար մարդին խոսքը,
Վըսկեռան մես փյուս կկյա,
Չար մարդոց խոսքը փյուս կկյա:

Ե. (1843)

Լալան լերթ ա,
Լերթ ա լալան,
Ճեղնը չկա,
Ճեղանը փիրև չկա,
Չար մարդկանցը խոսքը չկա,
Պրուրեն փոռնավը,
Ջընդըհորեն փոռնավը,
Վըսկեռեն փյուս կյա մեսը,
Մըսեն փյուս կյա, փյուս,
Չար մարդը, չար աչքը, չար նիսթը,
Չար սըհաթը, թոն չար աչքը:

Զ. (1844)

Չար աչքը չար հղեննի,
Չար աչքը սև սալի,
Կյապուր քար ա,
Չար աչքը
Օղցեն մրրմունջը.
Չար աչքն ալ չար հղեննի,
Չար աչքը չար մարդը:

2. ՍԸՐՏԸՄԱՅԻ

Ա. (1845)

(Մեղրու բարբառով)

Շենին ձորումը մին ծավ կան,	Առանց իփիլու կերալ ըն,
Ծավուն մանջին մին ծառ կան,	Աս մարդը սրտըմամ ա,
Ծառուն վերան մին ծեղ կան,	Կապեղ աման, կրժրգրիս,
Ծեղը առանց մրրթիլու իփալ ըն,	Հիսուս, Քրիստոս, Ասրուծ:

Բ. (1846)

Տեղս ծավ կան,	Անգիրեկ խըրամիլ,
Ծավուն մանջին ծառ կան,	Անբերան օտիլ,
Ծառուն վերան բուն կան,	Մերթմունն դեղը հինջ.
Բունուն մանջին դուշ կան,	Կըժը գրիս, պըղվըպե սսուղ,
Դուշն անդենակ մորթիլ,	ըրկաթե քար:
Անշենփոռ նիշերիլ,	

3. (1847) ՄԻԶԿԱՊԻ (Մեղրիի բարբառով)

Անանիս, Ագարիս
Գեցալ ըն Ագարիս սարը,
Քառասունտօխարը իշավոր,
Քառասունտօխարը ջորավոր,
Քառասունտօխարը ձիավոր
Քառասունտօխարը օղտավոր,
Կորալ ըն կանենչ փրիփլը.
Աս հեյվանս գյուղկապ ա
Էր արեր:

4. (1848) ՄԻՐՏ ՉԱՓԵԼՈՒ

Ճրագ, ճրագ ճշմարիտ,
Անմահական մարգարիտ.
Մեր Կոնը երկաթի ա,
Պարերը պողվարի ա.
Շողարոնը մին ա,
Հիսուս մեջին քնել ա,
Հրես եկավ երեք ծիավեր,
Մեկը՝ Հիսուս, մեկը՝ Քրիստոս,
մեկը՝ Աստուծ:

5. (1849) ՆԱԶԱՐ ԲՌՆԵԼԸ¹¹⁰

Իշուխյուրա ¹¹¹ սարը	Չար աչքին չար փուշ.
և Քամու խաչը,	Հունան Մարգարեն,
Չար աչքին չար փուշ,	Ծառու սուրբ Հովհաննեսը,
Չար սհաթին չար փուշ,	Վառվառ ճգնավորը,
Չար մամենտրին չար փուշ	Սուրբ Գևորգը,
Սուրբ Վարդանեսը և Չրո ¹¹²	Չար աչքին՝ չար փուշ,
Սուրբ Փիրղաղի և Կարմիր վանքը,	Գրիգոր Լուսավորիչը,
Չար աչքին չար փուշ,	Սուրբ ճգնավորը,
Չար սհաթին չար փուշ,	Չար աչքին՝ չար փուշ,
Չար մամենտրին չար փուշ,	Չար սհաթին՝ չար փուշ,
Մարիամ Աստվածածինը,	Չար մամենտրին՝ չար փուշ ¹¹³ :

6. (1850) ՄԻՐՏ ՉԱՓԵԼ

Նույն աղոթքն են ասում վախ բռնելիս, վախ չափելիս: Այդ դեպքում էլ աղոթողը ձեռքին բռնում է կարմիր կտոր, կարելի է նաև կարմիր թել, իր արմունկից մինչև վախեցողի սիրտը չափում երեք անգամ: Աղոթքն ասելիս ամեն անգամ սրբերի անունները տալիս, աղոթողը շարունակ կրկնում է.

Ձեր Հունարից է,
Իմ Հունարից չէ:

¹¹⁰ Նա, ով իբր Նազար է առել և գալիս է Նազարը բռնել տալու, հետը բերում է մեջը աղ լցրած հաց: Աղոթողը ձեռքին բռնում է մի ասեղ և աղոթք՝ մրմնջալով, ձեռքը շարունակ տանում է դեպի իր բերանը և աչք առածի գլխի շուրջը շարժումներ անում և ասում վերոնշյալ աղոթքը (Ծ. Բ.):

¹¹¹ Աղոտի-Վաղոտի գյուղի սարերն են (Ծ. Կ.):

¹¹² Սուրբ է՝ Անգեղակոթի մուտ: Ասացողը հայտնում է, որ Չրո սրբի մուտ է թաղված երեք սուրբ քույրերից մեկը, բայց քույրերի անունները չգիտի, չգիտի նաև, թե որն է այդտեղ թաղված (Ծ. Ա):

¹¹³ Այս աղոթքից հետո ասվում է «Հայր մերը» և վերջացնում (Ծ. Բ.):

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1. (1851)

Էն ո՛վ է, որ առավոտը չորս ոտանի է,
Կեսօրին երկու, իսկ իրիկունը՝ երեք ոտանի:
(մարդը)

2. (1852)

Էն ի՛նչն է, ջահել ժամանակ տեղից շարժվել չի կարողանում,
Իսկ ծերանալուց վազում է քամու պես:
(Պեթի բոյան է)

3. (1853)

Անջուր ջրադաց,
Անկրակ պաղարճ:
(մեղր)

4. (1854)

Պընգըլ-պընգըլ մին շահի,
Կեսը կեր, կեսը պահի:
(մասն)

5. (1855)

Տերև է, ծառ չի,
Իտսում է, մարդ չի,
Կարված է, շոր չի:
(գիրք)

6. (1856)

Էն ի՛նչն է, մեռնում է ծավելու համար:
(սերմերը)

7. (1857)

Թաղում ես ապրում է,
Պահում ես մեռնում է:
(սերմերը)

8. (1858)

Կյումաշը գյուլումը, հաքրան չլումը:
(շերեփ)

9. (1859)

Սև հինեմ, կանաչ գործեմ, դեղին կտրեմ:
(արտը)

10. (1860)

Կարմիր կովը տափին տակին բառաչում ա:
(գինին)

11. (1861)

Առավոտը վեր ես կենում,
Երկու ծակավ նի ես մտնում:
(շալվար)

12. (1862)

Մի տոն, ախջա բիբին միջին քոն:
(հրացան)

13. (1863)

Էն սունան տակին
Մըն թնա տոն:
(ծալք)

14. (1864)

Գիշերն աղքատ,
Ցերեկը՝ հարուստ:
(ծալք)

15. (1865)

Մին նով,
Նովումը՝ ծով,
Ծովումը՝ աղինք,
Պտկին սպիտակ ծաղիկ:
(լամպ)

16. (1866)

Մի կուճի աստված
Ծուն գալիս:
(մաղ)

17. (1867)

Ձին գնաց, թամբը մնաց:
(կամորջ)

18. (1868)

Մինը ունեմ, հանդին ա,
Պոզերը ճողթ թամբին ա,
Մինհետ ա կեթ քինում
Ինքը հաղում, հանդին ա:
(արտ)

19. (1869)

Շող տու, շմալ տու,
Տրկին կճոճ տու:
(դրամ)

20. (1870)
Անջուր ջաղաց,
Անկրակ բաղարջ:
(մեղր)
21. (1871)
Լաք քաշեմ,
Սար գա:
(ուղի)
22. (1872)
Ոսկորի կճուճ
Երկաթե խփի:
(ձիու ամբակ)
23. (1873)
Երկու պատավ,
Իրար խեթ նստած:
(ոչխարի քարերը)
24. (1874)
Ինքը գոլըմը, հնքոն չոլըմը:
(շերեփ)
25. (1875)
Ինքը վեղըմը, մըրոքն օթըմը:
(քող)
26. (1876)
Ոններ չոնի, վագ ա տալիս, հուվ տեսնըմ ա, փախս ա տալիս:
(օձ)
27. (1877)
Խալըղ ա փոխըմ, համա մարթ չի, ծիւ յա ածըմ, համա հավ չի:
(օձ)
28. (1878)
Բըզարըմը մընը առավ պիրավ, տոնը հագար տեռավ:
(նուն)
29. (1879)
Էն հի՛նչ գնքն յա, վեր սև հի՛նըմ ըն, կանաչ կո՛րծըմ ըն, տեղին կըտըմըմ ըն:
(արի)
30. (1880)
Չորս ախպեր ըն, մըն մորա, հնմն շն խոռվ ան մըն-մընա:
(դարվա եղանակները)

31. (1881)

Թոփալ բախճա, չորս դուր չափառ:
(աչք, թարթիչներ)

32. (1882)

Երգեն դավախ, շվաք չունի:
(գետր)

33. (1883)

Էրկու օթաղ մին սին ունեն:
(քիթ)

34. (1884)

Շամփուրը մսից, խորովածն երկաթից ա:
(մատր և մատրանի)

35. (1885)

Նըստեմ տակը, լըցնեմ ծակը:
(երկանք)

36. (1886)

Փոր-փտր թափեցինք, կարմիր կաշին լնփեցինք:
(մաստր)

37. (1887)

Ծին ծիրըմը, քուտակը փորըմը, մին քուտակ էլ քուտակի փորըմը:
(ծիրան և կորիզ)

38. (1888)

Մին ճըվնլ նլիր ունի, մեչին վըրթանակ ա պահըմ:
(փշատր)

39. (1889)

Ճոփն ա ընգընըմ թըռչըվըմ չի, կոխ ես տալիս ճընչըվըմ չի:
(սրվեր)

40. (1890)

Ըռավոտը թն վեր կենաս, էրկու ճնասպով պեդմա քինսնս:
(շալվատր)

41. (1891)

Կոնճի թորեն ա, ոչ սոնդոն ունի, ոչ ծակ, մեչը լիքն ա կրակ:
(սոտ)

42. (1892)

Մին գոլըմ ճոփ կա, ճրի մեչ օց կա, օցի հաքուն՝ ծաղիկ:
(ճրագ, պատրոսյգ)

43. (1893)

Չորս ախպեր են ուրիւր եննա վագ-վագ են անըմ, ուրիւր հըսնում չեն:
(եղանակ)

44. (1894)

Ճիւր ա խմըմ բոլ-բոլ, թոզ ա անըմ չորս դոլ:
(ջրադաս)

45. (1895)

Հավ չի, ածըմ ա, շուն չի, կծըմ ա:
(մորեխ)

46. (1896)

Ուրիւր եննա խոխեքն եկան, արտի մեչին տըրճիկ տվան:
(կարկուտ)

47. (1897)

Էն ինչ խոտ ա, ցանըմ չեմ, համա տարին էրկու անքամ քաղըմ եմ:
(բուրդ)

48. (1898)

Էն ինչն ա, մին կերան են ուսներին տանըմ, ճըտերը եննիցը վըսվըսըմ են:
(մեռել)

49. (1899)

Էն ինչ ա, քշերը քոքանըմ ա, ցիրեկը՝ լըղարըմ:
(անկողին)

50. (1900)

Եփ ծեռ չես տալիս, մեռնըմ ա, փորը ճըղմ ես, սըղանըմ ա:
(կրակ)

51. (1901)

Էն ինչն ա, շատ կուճի ցեղ ա, շըլնկին մին պոտը մեխ ա:
(ոգնի)

52. (1902)

Ռավոտը շիտ՝ մութովիւսին, լոք տամ նըստեմ մորըտ ուսին:
(կուժ)

53. (1903)

Անհախ ճաղաց ա, աղըմ ա, աղըմ, համա պարկը լցվըմ չի:
(քերան)

54. (1904)

Սիպտանկ պանքանկ ա, կարալ չես կիզես, որ շաղ եկավ, կարալ չես տեզես:
(ամպ)

55. (1905)

Փափախ ունի, մեչը դիք, ինքն անկլիմիս հու պեպիկ:
(սունկ)

56. (1906)

Հենգ ախպեր ըն, հենգ տոն,
Մին տրոնսնվ ըն մըննըմ, տոնս կնվիս:
(ձեռնոց)

57. (1907)

Էն հի՞նչ դուռ ա կերանին,
Իրա անըմըն ա պերանին:
(կկու)

58. (1908)

Էրկու ախպեր ըն, մին հորա, մին մորա,
Մին-մինու միս ըն օտըմ, հենց ծնված օրան:
(աղորիք)

59. (1909)

Վեչ առալ եմ, վեչ կի՞ղացալ,
Համա շատ տաք քուրք ըմ կեցալ:
(արջի մորթի)

60. (1910)

Մին ծի ունեմ կաչճըկոթած, համա ոչ ով կարալ չի նինի:
(խոզ)

61. (1911)

Բոյը դավախի չափ, սերմը՝ լիովի:
(կանեփ)

62. (1912)

Համ լնց ա ինըմ, համ էլ քինըմ ա:
(նրահարս)

63. (1913)

Սև էծերը ծունի վրեն ըրածըմ են:
(գրերը)

64. (1914)

Մին էշ ունեմ, մին կոմ, էշը տրդվարվըմ ա, հնքուն՝ չէ:
(գոսլ, բերան)

65. (1915)

Մերը ըրորոցըմը, ախճիկը տղա պերավ:
(մեղվի ձագ տալը)

66. (1916)

Մին չյուման ունեն, ոչ ցանըմ եմ, ոչ ճրըրըմ, համա տարին երկու անքամ հընձըմ եմ:

(*ոչխար*)

67. (1917)

Ճրիցը տոնս ա կննիս, վախըմ ա ճոյրը մննի:

(*աղ*)

68. (1918)

Ըստան ընդան հաց ա տամ, ինքը պերան չունի, որ ուտի:

(*գղալ*)

69. (1919)

Ճըղան վրեն կանանչ կապած, վեր ա ընգնըմ կարմիր հըքած:

(*ինձոր*)

70. (1920)

Ըստան-ընդան ճնն ա տամ, ինքը ճննչի հնարնթ ա:

(*գղալ*)

71. (1921)

Ոններ չունի, փըռնըվըմ չի, թեփոտ ունի, պայց թոնըմ չի:

(*ձուկ*)

72. (1922)

Տասնըհինգ օր թաքավոր ա, տասնհինգ օր՝ նախոշ, վերչի օրը մեռնըմ ա հու սըղանըմ:

(*լուսին*)

73. (1923)

Մար ասեմ, սար չի, քար ասեմ, քարի չի, լող ա տամ նավ չի, ծոյ յա ածըմ հավ չի:

(*կրիս*)

74. (1924)

Ոչ հաչըմ ա, ոչ փախճըմ ա, համա մարթ ա կծըմ:

(*եղինջ*)

75. (1925)

Պապիս քառսուն քուրք ա հըքել, համա էլի մըրսըմ ա:

(*կաղամբ*)

76. (1926)

Տակը ճոյր ա, մեչին՝ ալավ, վըրեն՝ մուր:

(*ճրագ*)

77. (1927)

Էն ինչն ա. մին մատ խոխա յա, մին տուն ա պահըմ:

(*բանալի*)

78. (1928)

Փետրի մեջին հոր կտրան, ապանին մեջը տիրան:
(դաշոյն)

79. (1929)

Էն ի՛շ տուն ա, որ պատիցը մի քար հանես, էլ շինվի չի:
(ձու)

80. (1930)

Ցանըմ չես համա կընանչըմ ա, հնձըմ ես՝ ուտիլ չի ինըմ:
(մազ)

81. (1931)

Սև փնննչով էրգեն տերտեր, մին ոտանի, քիթը՝ կեռ:
(շամփոր)

82. (1932)

Ծառի պըտկին գնլնլի հոր:
(նոռ)

83. (1933)

Սիպունկ օբա, տեղին քոբն:
(ձու)

84. (1934)

Մեզ մըն կով օնինք, պոռոը ծակ ա, պոռտան թն թըմաշա անիս, փորին
փին աշկավըտ կընգնի:
(խնոցի)

85. (1935)

Վեչ օտիլի յա, վեչ խմիլի յա, համա ընդրանա համով պեն չկա:
(քուն)

86. (1936)

Էրկու յաշիկ ա, ծոպերը կախ-կախ:
(աչք)

87. (1937)

Էրկու խոխա, մըն չօխա:
(հատիկ)

88. (1938)

Պատան կախ քննում ա, կնլի:
(դոռը)

89. (1939)

Վեչ երգինք ա, վեչ էլ թոխս, ամիսը մըն ծին ա տամ:
(մաղ)

90. (1940)

Ոսկի բոխշար կննպնուտ ծովի մեջին:
(լուսին)

91. (1941)

Ոտ չունի, վագ ա տալիս, կլիս ունի, մագ չի կալիս:
(օձ)

92. (1942)

Էրկու հոքի, մին պերան, ցորեն, հաճար հում-հում կկնն:
(երկանք)

93. (1943)

Էն ինչն ա, գիդըմ ես կա, համա գիդըմ չես՝ եփ կըկնն:
(մահը)

94. (1944)

Կարմիր կըճնուճ ա, մեջին սիվտակ հնվոնք:
(մասուր)

95. (1945)

Հողի պնունընը կննրունքը թուխս եմ տինըմ, աշունքը ճտեր ա հանըմ:
(կարտոֆիլ)

96. (1946)

Մին պիհրի կլիսի մին շութի յա, շութու մեջին մեռալ. մեիդն ուտըմ են,
դութին տեն քցըմ:
(արևածաղիկ)

97. (1947)

Մին պիհրի վրն սիվտնկ օրա յա:
(սունկ):

98. (1948)

Միվտակ օթաղի մեջին տեղին խանըմն ա նըստել:
(ձու)

99. (1949)

Էրկու դիճ ա, էրկու լավաշ վեր ընգած ընդեղ:
(ականջներ)

100. (1950)

Մին դնստն խոտ, պարիցը կալս, ինչը կինի:
(բեղ)

101. (1951)

Մին արտ ա, էրկու կես, էրկուսն էլ յամուջ տեղ:
(այրեր)

102. (1952)

Ամման մինըս քսան հորթ ունենք, չիմմի ճակատն էլ դաշխսա:
(եղունգեր)

103. (1953)

Միվտանկ կանոն ա, մորթըմ ես, մորթըմ, համա արին չի տոնս կննլիս:
(պանհր)

104. (1954)

Հողից ծավըմ ա, ճրրի մեչ մեռնըմ:
(աղ)

105. (1955)

Նոխստեն ծիք տամ, կկաղնի, պնց թողացի, վազ կտա:
(հլիկ)

106. (1956)

Էն ինչ հավ ա, որ պորտոմլս ա կուտ ուտում:
(երկանք)

107. (1957)

Չորս ախպեր են, շիրերնին մին ջեջիմ ա, մին՝ կարպետ:
(քորսի)

108. (1958)

Էն ինչն ա. լիսը ծնըմ ա, լիսն էլ ըսպանըմ:
(արվեր)

ԽՐԱԽՃԱՆԱԿԱՆՆԵՐ

1. (1959)

Մինը խնձոր էր տանըմ օխտը տուն էն դոլին ապրող իւրն պարեկամին: Առաջին տնվորը էտ խնձորների կեսը վեր կալավ, երգրորթը՝ կեսի կեսը, իրեքինջինը՝ մնացածի կեսը, չորսինջինը՝ մնացածի կեսը, հինգինջինը՝ մնացածի կեսը, վեցինջինն էլ իլածը կես արավ, ընենց որ պարեկամին հրսավ էրկու խնձոր:

(128)

2. (1960)

Մին տղա մոտիկանալով խանութպանին իրեք մանեթ փող ուզեց: Խանութպանը փողը տվավ, հետն էլ թափշուր արավ:

— Բալես, համ հաց կտանես, համ ուտիլիք, քվորըտ նհետ կուտեք, տնաներնիտ հըրըվորեք, էդո տոնս կկնք հաղ անիլի:

Տղեն խանութպանի հալավ տղեն էր, մին նրին ին, համա չիմը գիդըմ ին, որ խանութպանը տղի հերը չէր: Բա ինչն էր:

(մայրը)

3. (1961)

Մին օտարականի տղեքը փիս իւշունցի տվան, էդո հըրցըրան:

— Ասա, տոն ախպեր ոնես:

— Ոնես, — ասավ օտարականը, — համա ափսուզ, որ ախպերըս ախպեր չունի: Ինչ էր ուզըմ ասած ինի:

(որ ինքը կին է)

4. (1962)

Ախպորիցը հըրցըրան, թն քանի քիր ու ախպեր ոնես: Էն էլ ջուղաբ տվավ, թն՝ իշքան քիր ոնի, էնքան էլ՝ ախպեր:

Քիրը հնմին հարցմունքին ջուղաբ տվավ, թն՝ քվերքըս ախպերներիցս էրկու անքամ պակաս են:

Քանի քիր ու քանի ախպեր են:

(3 քոյր, 4 եղբայր)

5. (1963)

Մին միլիցն մին ջննիլ տղի ու մին ախճկա տանըմ էր բերթը: Ճընապին քըշերը վրն հըսավ: Միլիցեն տեսը ելավ, տենը ելավ, տեսավ մին տուն, որը ոչ հերթիկ ոներ, ոչ էլ պըտըրհան, տոնն էլ արկաթով գնմնմ:

Տղի ու ախճկանը դուստաղ արավ էտ տանը, տոնը փակեց, ինքն էլ տունը դարավուլ կաղնեց:

Ռավուտը, եփ տուտը պնցնվ, տեսավ էլ ախճիկ չկա:

Ինչ էր տնտել ախճիկը:

(կին)

6. (1964)

Հերըս փըսակվեց ախճըկանս նհետ, ուրեմն տաննավ իմ փեսեն, ես՝ հորըս հաները, ախճիկըս էլ իմ մերը, քանինչ որ հորըս կնիկն էր:

Կնիկըս մին տղա պերավ, որը հորըս մհար աներծնք էր, ինձ մհար՝ քեռի, քանինչ որ մորըս ախպերն էր:

Հորըս կնիկն էլ տղա պերավ, որն ինձ մհար համ ախպեր էր, համ էլ թոռ, քանինչ որ ախճկանըս տղեն էր: Մհի կնիկըս տանել ա իմ տատը, քանինչ որ մորըս մերն ա, ես ճորն մարթն եմ համ էլ թոռը: Դե քանինչ որ մինի տատի մարթը էտ հանննի պապն ա, ուրեմն ես իմ պապն էլ եմ: Էս ճնց իլավ:

*(փըսակվել ա ըրիքըվերի կնգա նհետ,
էր կնկան էլ առաջվա մարթիցը ախճիկ իլել):*

7. (1965)

Տատը իրեք ծոն ընենց պըժանեց երկու հոր հու երկու որթու մեչ, որ ամանս մինին մին ծու հըսավ:

Ո՞նց պըժանեց:

*(ընտրանք իրեք հոքի ին՝ պապը, տղեն, թոռը:
Պապն ու տղեն երկու հեր: Տղեն ու թոռը՝ երկու որթի):*

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻՆ ՈՒՂԵԿՑՈՂ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

1. (1966) ԱՆՆԱ ԽԱԹՈՒՆ¹¹⁴

Աննա խաթուն, Աննա խաթուն,
Պոզերըդ փյուս կալ փեսնամ,
Քու հար, քու մար են եկալ,
Վեսկե չիկի, արծաթ թոխկա
Քրզերե խալաթ են պիրալ:
Աննա խաթուն, Աննա խաթուն,
Պոզերըդ փյուս կալ
Քոլեն փակեն յեշի,
Էս լոխ պիրալ են քրզերի:
Վեր պոզերըդ փյուս չօնես,
Քու հոր, քու մոր ըսական եմ,
Վեր մին լյավ թակ օրես,
Աննա խաթուն, Աննա խաթուն,
Պոզերըդ փյուս կալ, փեսնամ:

Դեռահաս տղաները հումոր էին անում ասելով՝

Աննա խաթուն, Աննա խաթուն,
Վեր պոզերըդ փյուս չօնես,
Քու հոր, քու մոր ըսական եմ,
Վեր պապիրոզ ես քաշալ:

2. (1967) ՀԻՏԼԵՐՆ ՈՒ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ուրբաթ, շաբաթ, կիրակի,
Հիպլերին փորը փրբաթի
Հիպլերը ընգավ ցեխը
Աշկը նի մըրավ մեխը
Էրկու աշկըն էլ քոռացավ,
Պապերազմը մոռացավ
Հայ, հայ Հիպլեր
Աշկը կապած լենթեր:

¹¹⁴ Երբ երեխաները ցանկացել են տեսնել խեցու միջի խխունջին, երգել են, մեկ-մեկ վախեցրել են կամ խոստումներ տվել, միայն թե դուրս գա խեցու միջից և տնկի իր պոզերը (Ծ. Կ.):

3. (1968)

Նաղլը նաղլը պապսի,
Տաշտա քուռակը տակսի,
Խեզնեմ եթամ Երևան,
Երևանե մի փուշ պերեմ
Փուշը տանեմ տամ պառավին,
Պառավը ինձ մե կատա տա,
Կատան տանեմ տամ չոբանին,
Չոբանը ինձ մի կառ տա,
Կառը տանեմ տամ Աստվածին,
Աստվածը ինձ երկու ախպեր տա:

4. (1969)

Ակուլ դուկուլ Տիգրան,
Հավտե խորեմ Տիգրան
Մե մուկ ունեմ, մե թագի
Պոչեն պոնեմ, հա վագի:

5. (1970)

Ակակ-մակակ շնմուշկա,
Շամ-շնմուշկա բադուշկա
Անգա խըյար, մանգա խըյար,
Գոլոր-մոլոր թըս...

6. (1971) ՄԱՏՆԵՐԻ ՀԱՇԻՎԸ¹¹⁵

Մի մանը, երկու մանըս,
Իրեք, ընդանսն եղը չորս մանըս հենգ:

7. (1972)

Մին, երկու իրեք,
Ծմերուկը պիրեք,
Չորս, հենգ, վեց,
Ծմերուկը կոտրվեց,
Օխտը, օթ, ինը,
Ըսեցեք ծմերուկին գինը,
Տասը, ես քաշեցի վսասը:

¹¹⁵ 10-ը մատը դառնում է հինգ (Ծ. Բ.):

ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿ

1. (1973)

Ծտի ճիտը ճյուղին ծուռ:

2. (1974)

Կյափ կապող Ակուփ ապեր
Ինձ հետի մին կյափ կապի,
Անու՛մը տինեմ կյափ կապող
Ակուփ ապեր:

3. (1975)

Ճորին ծորումը՝ ճուլը ծոռ,
Ծետը ծառին՝ ճիտը ծոռ:

4. (1976)

Ճորուն ճուլը ծորումը ծոռ:

5. (1977)

Չալ ծտին չալ ծտա ճոռ:

6. (1978)

Փոկակապ Ակուփ ապեր,
Ինձ հետի մին փոկ կատի,
Որ անունը դնեմ՝
Փոկակապ Ակուփ ապեր:

7. (1979)

Անա գյուլ եմ,
Հացի գյուլ եմ,
Պանին ուլ եմ,
Իշի ճուլ եմ:

8. (1980)

Կյութնակապ ակուփ ապեր,
Ինձ հետի մըն կյութան կապի,
Անու՛մը տինեմ կյութնակապ
Ակուփ ապեր:

9. (1981)

Ճորին ծորումը՝ ճուլը ծոռ,
Ծետը ծառին՝ ճիտը ծոռ:

10. (1982)

Մեր տան թանավ՝ տոռ,
Ձեր տան թանավ՝ տոռ:

11. (1983)

Մինաս, Մինաս, խմես կինաս,
Թա խեքտ կտրի, տուս կաս շինաս:

12. (1984)

Մոկնը քիցեմ
Ծուկնը կոլ տամ,
Ծոկնը կոլ տամ,
Մոկնը քիցեմ:

13. (1985)

Տանձուն պտկին ծանդր տանձ:

14. (1986)

Թինին թթված թանը թափեց թորենը,
Թ-նթնսը թն՝ թթված թանը խի թափեցիր թորենը:

15. (1987)

Ծիտը ծառին, հավը թատին, ծառի ծիտը թառ չի ինիլ հավի թատին:

16. (1988)

Ծիտը ծըռտեց Ծատուրի ծեռին, ծտի ծեռտի ծանդրությունիցը Ծատուրի
ծագները ծավեցին:

17. (1989)

Ճորին ծիրըմը ճուլը ծուռ:

18. (1990)

Շաման, Շարմաղի շիրին նախշուն շուշան շարի:

19. (1991)

Շամբըմը շուշանը շարվի ա, շաշը շըլանկին շափաղըմ ա:

20. (1992)

Չալ ծտի ճտի ճիտն ա ծուռ:

21. (1993)

Չոլի չորս դոլը չափառ ա, չափառի չորս դոլը չոլ ա:

22. (1994)

Չոդան քաղեմ, սոդան ուտեմ, սոդան քաղեմ, չոդան ուտեմ:

23. (1995)

Քոռը քոռ-քոռ քարին առավ, քարը քոռին քոռնուլ տաննավ:

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

1.(1996)

Ականջացալ – Ձերթի (Ձիթապտղի յուղի) մեջ եփում են անգլիական պղպեղ, մեխակ (гвоздика), փոքր-ինչ քյափիիթի (камфора), մի պճեղ սխտոր և մի ոչխարի լեղի և հովացնելուց հետո կաթեցնում են ականջի մեջ:

Ականջի խշխշոց – Նոր եփած ձվի կեսը տաք-տաք դնում են ականջին: Գլխին տաք ջուր են ածում:

Ամորձիքի ուռուցք (опухоль яич) – Վեց մսխալ շիբը կես մսխալ ձեթով շաղվում և քաթանի վրա քաշած դնում ամորձակալի վրա:

Եգիպտացորենի մազմզուկը (ниточки кукурузы, filametae sfgomatae) սպիրտի մեջ են կախում և քաթանը այս բաղադրության մեջ թաթախելով՝ փաթաթում ամորձակալին:

Այրվածք – Թանաք, մածուն, ցեխ և կամ խլիսք են քսում:

Աչքացալ – Ցավող աչքի մեջ կաթեցնում են աղջիկ երեխա ունեցող կնոջ կաթը կամ բամբակը թաթախում են նույնպիսի մոր կաթի մեջ և դնում ցավող աչքի վրա:

Խունկը մաքուր ամանում վառում են և փոշին խառնելով եղեգնաշաքարի (тростниковый сахар) փոշու հետ, ձգում աչքը: Կոծախտորի (барбарис, berberis vulgaris) արմատը եփում են և ջուրը բորբոքված աչքը ձգում: Երբ աչքի կոպերը կոշտացած են լինում՝ սոխի ջուր են կաթեցնում աչքի մեջ, մեզով լվանում են աչքը, ոչխարի տաք թոք են դնում վրան:

Արամնացալ – Մանրած շաքարը բովում են, հետո բամբակը թաթախում այդ շաքարի և ապա ծիծակի (стручковый перец) մեջ և դնում ցաված ատամին:

Բերանը օղիով ողողում են: Ցավող ատամի վրա մի կտոր սխտոր են դնում և մյուս ծնոտի համապատասխան ատամով սեղմում:

Բարակացալ – Թորախար (чахотка) – Առավոտները հիվանդին խմացնում են մի բաժակ տաք կաթ, հետը մի պուտ գտած և ծեծած սամիթի (укроп) սերմ խառնելով: Լողացնում են տաք ջրում: Շան մսից պատրաստված արգանակ (բուլյոն) են ուտեցնում:

Օրը մի անգամ թեյի գդալով շան գանգից թոնրի վրա չորացնելով պատրաստած փոշի են տալիս, հետը փոքր ինչ կինամոն (корица) և մեխակ խառնելով: Մեղր են տալիս:

Բլիթին, մաշկի կոշոր, մազոլ – Հինան շաղում են եզան լեղիով և դնում մազոլի վրա:

Ընկույզի միջուկը վառում են և դնում մազոլի վրա:

Բկացալ–Կտավատը կաթով եփում և շորով կապում են բկին: Բերանը ջրախառն քացախով ողողում են: Ուտում են թթու, բայց դյուրամարս կերակուրներ:

Դիֆտերիայի ժամանակ հիվանդին տալիս են խմելու նառ-շարաբի (նոան հյութը եփած մինչև թանձրանալը):

Սպիտակ հացի միջուկը կաթի մեջ թաթախում և բկին են կապում:

Գագաթից արյուն են առնում կամ տզրուկ կացնում:

Գլիսացալ–Մազերը խուզում և ձվի սպիտակուցը, շիպով (квасцы, alumen crudum) տրորելով, քաթան շորի վրա քսած կապում են գլխին:

Ոտները տաք ջուր են դնում:

Ճակատից արյուն են առնում:

Բողկի կտորները քացախի մեջ թաթախելով՝ դնում են գլխին և շորով կապում:

Սպանած ազոավը ճեղքում են և դնում գլխին ու շորով կապում:

Գլխի ճարոց (трещина головы)–Մի քիչ խունկ, թարմ կարագ, անասնի դեմք և ձեթ խառնում, եփ տալիս, փոքր ինչ հովացնում և դնում ճաքածի վրա:

Գորդնուկ (бородавка)–Արեթից կոնուսաձև, գորտնուկի մեծության համեմատ, կտրտում են և դնում գորտնուկի վրա ու վառում: Տաքությունից գորտնուկը չորանում և պայթում է, ապա երեք-չորս օրից ոչնչանում:

Թանչք, թութք, մայասիլ (геморрой)–Կտրում են ծծիկները և կովի նոր կարագի հետ մի քիչ սուլումեն (сулема, hydrargyrum bichloratum corrosivum) խառնած բամբակով քում վրան:

Զգուշանում են կաթնեղենից:

Լուծ, կանիճ, փորհարիք (понось)–Մածուն են ուտում և թան խմում:

Խիարուկ, եղունդն (бобонь в пах)–Եփում են տզկահատի (клещевина, գերչակ) մի քանի ծեծած սերմ և մի քիչ ծեծած կտավատ մի բաժակ կովի կաթի մեջ և բոլորը խառնում եփած փիփերթի (малька) հետ և նորից եփում, մինչև որ թանձրանում է, ապա կապում են ուռուցքի վրա, որից նա տաքանում և ծակվում է: Թարախից մաքրելու համար ձվի դեղնուցը տզկահատի ձեթով և գարու ալյուրով շաղում և քաշում են վերքի վրա:

Կողքի ցալ (боль в боку)–Կողքին մի կտոր տաքացրած աղ կամ մի քսակով տաքացրած կորեկ են դնում:

Հազ–Եղեգնաշաքար, ունար, սերկևիլի սերմ և մանուշակի ծաղիկ միասին եփում են և ջուրը քիչ-քիչ խմում:

Չորացրած թուզը թրջում են օդու մեջ, գիշերով դնում ազատ օդում և առավոտները անոթի ժամանակ մի-մի հատ ուտում:

Հարթուխ – Սառն ջրով լվանում են վիզը և քիթը սառը ջուր քաշում:

Բյափիրին (камфора) և շիրը (квасцы) ծեծում, լցնում են օդու կամ սպիրտի մեջ և քիթը քաշում, քրտնելուց հետո եռացրած գինի են խմում:

Մարնաշորթ, մարնաշունչ (ногтоеда) – Երբ մատնաշունչի պատճառով ձեռքը ուռչում է, փիփերթը (мальва, malva rotundifolia L.) եփում են, մեջը հացի միջուկ ձգում և հանում տաք-տաք ուռուցքի վրա կապում, երբ ուռուցքը փափկում է, եղունգի տակը ծակում են, որ շարավը թափի և վրան դնում թոկի քրքրած թելերը՝ նոր կարագ և լվացքի հասարակ, ծեծած սապոն խառնած: Երբեմն էլ այս վերջին դեղին ձվի դեղնուց էլ են խառնում:

Մոլորոր (честотка) – Ընկույզի միջուկը ծեծում, վրան թունդ գինու քացախ են ածում, մի օր պահում և ապա քսում են մոլորոր դուրս տված տեղերը:

Ոսկրացավ (боль в костях) – Հողաճիճուները ձեթի մեջ եփում են, մինչև որ նրանք չորանում և այրվում են և ապա այդ յուղով տրորում ցաված տեղերը:

Մի մեծ շի մեջ ածում են 2 ֆ. չմարած կիր 4 ֆ. անուշադր (վՈՔՈՑՕՐՖ, ammonium chloratum), 2 մսխալ քափուր (камфора, camphora), ապա ավելացնում երկու ֆունտ ջուր, մեղմությամբ ցնցում, հետո քիչ հովացնում, 1/2 ֆ. վուշի ձեթ (льняное масло) խառնում և քսում ցաված տեղերին:

Մաքուր բևեկնախեժով (скипидар, oleum terebinthinae) օծում են ցաված տեղերը:

Բուդի խինտեղն (бузина) կոչված բույսի ծաղիկները այլուրի թեփի հետ եփում են, լցնում տաք լոգարանի (ванна) մեջ և հիվանդին նստեցնում մինչև քրտնելը:

Ջերմ – Չմերուկի, վարունգի, դդմի և տզկահատի (գերչակ, клещевина) սերմերը ծեծում և հյութը խմացնում են:

Հիվանդին կապերտի մեջ դրած ընկղմում են գետի մեջ և ապա պտակեցնում ու տաք ծածկում, որ քրտնի:

Սուսանակ (триперь) – Մի շի 86ն սպիրտի մեջ ածում են 8 մսխալ կոպայի բալասան (копайский бальзам) և 5 մսխալ բորակ (селитра) և օրը երեք անգամ մի-մի օդու բաժակով ընդունում:

Վավաշահար, Տիրամոր վերք, Ֆրանկի յարա (сифилис) – Գլխի մազերը ածելում են, կարագ յուղով տրորում են սուլեմենը (սուլեյմանի, сулема) և բամբակով դնում ախտացած տեղի վրա:

Վարդաջրի (розовая вода, aqua rosarum) մեջ լուծում են մի քիչ հինա և հալվե (сабур, aloe) և սրանով տրորում են գլուխը և քաթանով կապում: Առավոտները շաքարով թեյի կես գդալ ծծումք (сера) են ընդունում:

Սնդիկը հինայի հետ շաղում են վարդաջրով և փոքրիկ գնդակներով չորացնում, հետո այս գնդակներից մի-մի հաստ դնում են անծուխ կրակի վրա և

հիվանդին սավանի մեջ փաթաթված կանգնեցնում այդ կրակի վրա և ծուխ տալիս:

Ընկույզի տերևներ ձգելով լոգարանի (ванна) մեջ՝ մտնում են մեջը:

Հինգ մսխալ շիբ (квасцы), մի ֆունտ կաղնու տերև, մի մսխալ նոսան կեղև միասին եփում են ջրով և բերանը ողողում:

Փայծաղի աճումն (увеличение селезенки) – Շան թիուկրին մեղր են քսում և նրանով խփում փայծաղի եղած տեղին:

Վախեցնում են հիվանդին՝ սրով վրան հարձակվելով:

Փորացավ (боль в животе) – Մի բաժակ օղու մեջ փոքր-ինչ պղպեղ (английский перец) են ձգում և խմեցնում, և կամ դարչինով (корица), կինամոնով (դանճաֆի) և պղպեղով պատրաստած թեյ տալիս:

Փրի ճիճու, կրիզորթն (солитер) – Ուտում են մեղրով ճատվար (цитварное семя, semen sautonica) և կամ դդմի կուտ:

Քարկիչ – Բոկոտն ման գալուց ոտքի վրա առաջանում է կոշտացած մաս, որ սաստիկ ցավ է պատճառում: Նախ խմոր են դնում վրան, որ փափկանա, հետո նավթի ճրագի մեջ մնացած և թանձրացած մասը՝ «ճրագի տակը», քսում են շորի վրա և դնում վրան: Երկու-երեք օրից հետո ասեղով ծակում են, որ շարավը հոսի և առողջանա:

Օճի կծած – Կծած տեղին մածուն են քսում:

Հայտնի կանայք կան, որ ծծում, դուրս են քաշում թույնը:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՂԵՐ¹¹⁶

2. (1997)

Ականջացավ – Մի քանի ձվի դեղնուց մի պղնձե ամանով թեք կերպով դնում են կրակի վրա: Դեղնուցից առաջանում է յուղ, որ ապակյա սրվակի մեջ ածած պահում են, և հարկավոր միջոցում 4–6 կաթիլ ածում են ցավող ականջի մեջ:

Նուրը տաք մոխիրի մեջ խորովում, միջից կիսում և տաք տաք դնում են ցավող ականջի վրա:

Ծխախոտի ծուխը փչում են ականջի մեջ, որ ցավը դադարի:

Ականջի շարավ – Երբ ականջից շարավ է հոսում՝ ասում են ականջը ծնել է: Հին ժամանակներում այդպիսի դեպքերում ականջների մեջ մեռոն էին կաթեցնում:

¹¹⁶ Բանասիավարն ունի հետևյալ ծանոթագրությունը. «Բացի իմ հաւաքածից օգտուել եմ նաև պ. Տեր-Գրիգորեանի իմ խնդրով հաւաքած դեղերից և բժ. պ. Գեղեվանովի "Зангезурский уездъ... въ медицинскомъ отношеніи" աշխատութիւնից» (Ծ.Կ.):

Ամնորություն – Շիրը կոնաձև կտրելով դնում են նստատեղիում:

Այրվածք – Սպիտակ հողը ջրով և դնում են այրված տեղի վրա:

Խորոված կարտոֆիլը մանրելով դնում են այրված տեղի վրա:

Աչքացավ – Եթե աչքը կարմրել, արյունով լցվել է՝ ոչխարի սպիտակ թոքից մի կտոր դնում են աչքի վրա և մի քանի անգամ փոխում:

Կապույտ քարը (медный купорос) այրելով և փոշիացնելով լուծում են ջրի մեջ և կաթեցնում ցավող աչքի մեջ:

Կծու-խոտ բույսի արմատը եփում են և նրա ջրի մեջ բամբակ թաթախում և չորացնում են. Ապա այդ բամբակը թրջում են կնոջ կաթի մեջ և դնում ցավող աչքի վրա:

Խորոված ձուն երկու կտոր անելով՝ շիբի (квасцы) մանրունք են ցանում վրան և բամբակով դնում ցաված աչքի վրա:

Արամնացավ – Փայտե գդալի կոթը տաք մոխրի մեջ սաստիկ տաքացնում և դնում են ցավացող ատամի վրա:

Մեխակը ծեծում, ցանում են բամբակի վրա և դնում ցավող ատամի վրա:

Սխտորը ծեծում են, հետը աղ և խոզի ճարպ խառնում և դնում ատամի վրա:

Եթե երեսն ուռչում է, գարու այլուրից եփած խաշիլը տաք-տաք քաշում են մի շորի վրա և դնում այտին:

Արյունահոսության դեմ գործ են ածում. վառած շորի մոխիր, կենդանիների աղը՝ ջրով կամ մեզով թրջված:

Բարակացավ – Մեծ քանակությամբ իշի կաթ են խմում:

Բերանի բորբոքում – Պղպեղի փոշուց մի թեյի գդալի չափ ածում են մի բաժակ ջրի մեջ և նրանով բերանը ողողում:

Բոր – Սխտորի գլխով տրորում են չորացած բորը:

Գլխացավ – Գինու թունդ քացախով տրորում են գլուխը:

Սխտորը ծեծում են, աղ ցանում, վրան թունդ քացախ ածում և կապում ճակատին:

Թթու դրած վարունգը կիսում դնում են ճակատին:

Գորդնուկ – Օձի կաշու մի կտոր են տալիս ընդունելու:

Երեսին դեղին վերք – Առավելապես փոքր երեխաներին է պատահում: Նոան կճեպը կամ դեղին ներկած բրդի թելը այրում են, մոխիրը ձեթով շաղախում և դրանով օծում վերքը:

Խավարք – Առավելապես փոքր երեխաներին է պատահում. նոան կճեպը կամ դեղին ներկած բրդի թելը այրում են, մոխիրը ձեթով շաղախում և դրանով օծում վերքը:

Խավարցք–Առավելապես երեխաներին է պատահում. կարմրում է գլխի կաշին և ջրակալում. Գ ֆ. լվացքի սապոն, Գ ֆ. սև նավթ, 2 գլուխ սոխ և փոքր-ինչ ոչխարի դմակ խառնում են միասին, եփում և կտավի վրա քսելով կապում գլխին՝ նախապես գլուխը ածիլելով և լվալով:

Խիարուկ (Бобонь в пак)–Կտավատի փոշին կաթով եփում և տաք-տաք կապում են ուռուցքի վրա, և այս բանը կրկնում են՝ մինչև ուռուցքը հասնում է: Այս միջոցին ածիլով ծակում են ուռուցքը, որ շարավը հոսի: Հետո մեղրամոմի, այծի ճարպի և ձեթի հավասարաչափ խառնուրդ են պատրաստում, մեջը ավելացնում են երկու մսխալ քափուրու փոշի և ապա սրանից պատրույզներ շինելով դնում վերքի մեջ՝ որպեսզի բոլոր շարավը ծծի:

Ծաղիկ–Ո՛չ մի դեղ չեն անում, այլ միայն աշխատում են սուրբ մնալ, առագաստ չմտնել, տունը հում միս չբերել, չկովել, չհայհոյել և այլն:

Կարմրուկ–Ո՛չ մի դեղ չեն անում, միայն կոկորդի վրա ուռուցք նկատվելիս՝ կտավատի փոշին կաթով եփում և դնում են վրան:

Կարադած շան կծած–Մի շիշ գինու մեջ 1/4 ֆունտ սխտոր եփելով՝ խմացնում են:

Կարիճի կծած–Դռաբը, որ պատրաստում են խաղողի հյութը եփելով, ջրի մեջ լուծում և տալիս են խմելու:

Կոկորդացավ–Խար-թուրը երկար եփում են, շորի վրա քաշում և կապում:

Կողքի ծակոց (колоть в боках)–Մի բաժակ գինու մեջ ածում են մի բուռ չորացած վարդ և մի թեյի գդալ աղ, որ երկար եփելով քաշում են մի շորի վրա և դնում ցաված տեղի վրա:

Շիրի մանրունքը կաթի մեջ շաղվելով դնում են վերքի վրա:

Հաղլացավ–Ջղային հիվանդին ձեռքից բռնած պար են ածում դիոլ-գուռնայի ներդաշնակությամբ և այս այնքան երկար, մինչև որ հիվանդը բոլորովին անզգայացած վայր է ընկնում:

Սայասիլ–Սափրիչը ածելիով կտրում է դուրս եկած պտուկները և վերքի վրա սուլեյմանու (Folia Sonnae) ածում: Հիվանդները զգուշանում են ոգելից խմիչքներից և թթու կերակուրներից:

Միզարգելություն–Ավելուկը խաշում են և տաք-տաք դնում որովայնի վրա:

Մոլորոր–Հիվանդին փաթաթում են մետաքսե սպիտակ շորի մեջ և շուտ-շուտ վրան սառը ջուր են ածում:

Հոդացավ (ревматизм)–Օղիի մեջ կարմիր պղպեղ (стручковый перец) են ձգում և դրանով տրորում ցավող անդամները:

Ծան կծածի դեմ–բակլան կամ լոբին կիսում և դնում են վերքի մեջ:

Կծող շան մազը վառում և մոխիրը ցանում են կծած տեղի վրա:

Շարավ– Շելսնի բույսի մոխիրը խառնում են գինու հետ և շորի վրա քշելով դնում են շարավոտ վերքերի վրա:

Վերքերի շարավը մաքրելու համար դարա-աղաջ (սև ծառ) կոչված ծառի արմատը երկար եփում են, ապա ջրի մեջ ալյուր խառնում և դնում վերքի վրա:

Ոսկրացավ– Մորենին արմատով հանում, ածում են տաք թոնրի մեջ, որի ափին պառկեցնում են հիվանդին՝ նախապես անկողին ձգելով: Ապա թոնիրը այնպես են ծածկում, որ մորենուց բարձրացրած գոլորշին անցնի անկողնու մեջ և քրտնացնի հիվանդին:

Մորենին եփում են և ջրով լողացնում են հիվանդին:

Ցավող մասերը արջի ճարպով օծում են:

Նոր մորթած այծի մորթու մեջ փաթաթում են 2-3 օր:

Տաք աղյուս կամ տաքացրած աղ են կապում ցաված տեղերին:

Պղպեղը ածում են թունդ օղու մեջ և 2-3 օր պահելուց հետո դրանով տրորում են ցավող մասերը:

Սպիտակ նավթ են քսում:

Ոսկորի կուրվածք– Գյուղական ոսկրաբույժը ուղղում է կոտրված ոսկորը, հետո անվա կտավի մի կտորի վրա մի քանի ձվի դեղնուց և փոշիացրած խունկ քսում և նրանով փաթաթում է կոտրված տեղը: Ապա ուռենու ծառից պատրաստած 4 փոքրիկ տախտակներ դնում է կոտրած ոսկրի շուրջը և թելով կապում: Այսպես մնում է 4–5 օր, ապա նորից քանդում են և նույն դեղը կրկնում:

Հիվանդին լավ սննդում են և հաճախ ոչխարի ոտներից և գլխից պատրաստած խաշ ու գինի տալիս:

Ուռուցք ամորձիների– Կտավատի փոշին կաթով եփում են և շորի վրա քսած կապում ամորձիներին:

Ջարդված (ушиб)– Նոր մորթած այծի մորթով փաթաթում են ջարդված տեղը: Թարմ մսով փաթաթում են:

Գարու թեփը քացախի և ջրի հետ խառնելով՝ քաշում են շորի վրա և կապում ջարդված տեղը:

Ջերմ– Տանու փիպերտից (герань огородная) և բրնձից առանց աղի արգասակ են եփում և ուտեցնում հիվանդին:

Մեծ քանակությամբ ձմերուկ են ուտեցնում, որպեսզի ջերմությունն իջնի և ծարավն անցնի:

Ջրգողություն– Չորացրած վարդը եփելով տալիս են խմելու:

Մրի կուրած– Մի թեյի գդալ պղպեղի փոշին խառնում են նույն չափ մեղրի և մի ձվի դեղնուցի հետ, շաղախում և կտավի վրա քսած կապում են վերքին: Սովորաբար վերքը չեն լվանում, որպեսզի «ջուր չգողանա»:

Ստեպ միզելու դեմ–Ստեպ միզելու հիվանդություն ունեցողին ուտեցնում են խոզի եփած լյարդը կամ խորոված մուկ (ծածուկ խորովելով):

Վախ–Մոր մեզը տալիս են վախեցած երեխային ընդունելու:

Տենդ–Մի քանի ֆունտ շլոր եփում են ջրի մեջ, ապա մզում, կորիզները հանում և դրանցով տրորում են հիվանդի մարմինը և աշխատում դրանով քրտնեցնել:

Քամած մածուն են քսում մարմնին:

Ուռենու կանաչ ճյուղերը ջրի մեջ եփում են և հիվանդին լողացնում այդ ջրով:

Տրիպերի ժամանակ մեծ քանակությամբ ձմերուկ են ուտում, որպեսզի շատ միզեն:

Ցրրի տարած–Փտրած կաթը քացախի հետ խառնելով քսում են շորի վրա և դնում ցրտի տարած մասերի վրա:

Քարի խինան թրջելով դնում են ցրտի տարած տեղը:

Փողոսծություն–Սև թաղիքի կտորը թրջելով դաթրանի (ՎՈջցՅ) մեջ՝ դնում նստատեղի անցքում և ժամը մի քանի անգամ փոխում:

Թերխորով ձուն կխտորի (փպրվՈւսՖվոյ ՏՐպՔՍՌ) փոշու հետ խառնելով ուտեցնում են:

Պինդ եփած ձու են ուտում:

Փորսցավ–Պղպեղը օղիի մեջ ածում, խմում են: Կինեմոնը, պղպեղը և գանճաֆիլը ջրով եփում են և խմում:

Քոս (параш)–Կավը տափակացնում են, վառարանում կարմրացնում և դնում են գլխի քոսերի վրա:

Գոմեշի մածնի մեջ ծծումբի փոշի խառնելով ուտեցնում են, հետո հինգ մաս խոզի ճարպի մեջ լուծում են մի մաս սնդիկ և սրանով օծում քոստի մարմինը և անմիջապես տաք թոնրի մեջ իջեցնում և այնտեղ մի քիչ պահելուց հետո լողացնում:

Քրոփնք բերել–Քրոփնք բերելու համար գործ են ածում մանուշակի ծաղիկներից պատրաստված թեյ կամ նրանից և բրնձից եփած արգանակ: Եվ կամ խունը բույսից պատրաստած թեյ:

Օձի կծած–Մեծ քանակությամբ կովի կաթ են խմացնում:

Վառած աբեթով այրում են կծված տեղը:

Հրաշեկ երկաթով այրում (դադում) են կծած տեղը:

(1998) ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ԳՅՈՒՂԻ ՄԱՍԻՆ

Տեղ գյուղի մասին գյուղում ավանդապատում կա, որ, երբ առաջին բնակիչները, գալիս են այդ տեղանքը նայելու՝ բնակության հարմարավետության նկատառումով, նրանցից մեկի երեխան ձորում խորանում է եղեգնյա շամբուտում և հայտնաբերում մի աղբյուրի ակունք, որը ներկայումս հայտնի է «Շոր աղբյուր» անունով: Երեխան ետ վերադառնալով՝ հորը հայտնում է, որ մի լավ տեղ է գտել և այդտեղից էլ՝ հիմնվող գյուղի անվանումը Տեղ է կոչվել:

Հին գյուղատեղին Գորիս-Ստեփանակերտ մայրուղուց դեպի ձախ գտնվող, ձորի արևահայաց լանջին է հիմնվել՝ քարանձավային, հետագայում աշխարհաշեն տներով, որպիսիք ունեցել են հողե կտուրներ:

20-րդ դարասկզբին գյուղում հատուկենտ տներ են թիթեղյա ծածկ ունեցել, որոնք իրենց նյութական իրավիճակից ելնելով կարող էին այդ շրայությունը իրենց թույլ տալ, օրինակ՝ Մեյրանանց, Նանասունց, Ադորունց տները:

Գյուղի բնակչությունը տարբեր վայերերից է հավաքվել և անգամ 20-րդ դարասկզբին մի քանի ընտանիքներ, օրինակ Աբունց Համբարձումի, Ղարաղշ-լաղեցի Ստեփանի ընտանիքները ներկայիս Բերդաձորից (Կալադարասի) են եկել և հիմնավորվել Տեղ գյուղում: Տողերիս հեղինակի նախնիները 17-րդ դարում Նախիջևանի կողմերից են եկել Տեղ գյուղ: Այսպես՝ Պետի (Պետրոս), Պուղես (Պողոս) և Հրապետ (Հայրապետ) եղբայրները տեղափոխվելով Տեղ գյուղ՝ ճյուղավորվել են 3 տոհմերի՝ Պետունց, Պողոսյան, Հայրապետյան: Անգամ 20-րդ դարի 50–60-ական թվականներին Արավուս գյուղից մի շարք բնակիչներ եկել և հիմնավորվել են Տեղ գյուղում, ընտանիք կազմել և ճյուղավորվել՝ Սուրենը, Լենդրուշը և այլք:

20-րդ դարի 60-ական թվականներից սկսած գյուղի բնակիչները դուրս գալով ձորից՝ տներ են կառուցել՝ հիմնելով նոր թաղամասեր՝ Զերթ, Ծտաշեն, Օղտին խութ, Ցիգանաշեն, Քիմլար, Էրզան խութ՝ Տեղ-Արավուս ճանապարհի վերին և ներքին հատվածներում, դեպի Արցախ ձգվող ճանապարհի աջ մասում և այլն:

Որպես պատմական շինություններ՝ պահպանվել են Մելիք Բարխուդարի ամարաթը, դրա հարևանությամբ եկեղեցին և քարի օթաղը: Ցավոք չեն պահպանվել (քանդվել են) Նանասունց, Ադորունց, Մեյրանանց պատմական բնակելի երկհարկանիները: Բնակելի տներ են կառուցված նաև «Խութվերի ձորի» ձախ և աջ մասերում: Հին գյուղի ձորում են գտնվում երկու հնամենի աղբյուրներ՝ «Շոր ախպուրը» և «Կուճի ախպուրը»:

Տեղ գյուղի շրջակա հանդամասերի, ձորերի և այլ աշխարհագրական վայրերի անվանումները

Գորիս-Քարաշեն ճանապարհատվածի՝ դեպի Խնածախ գնացող խաչմերուկից սկսած՝

1. Ձախ մասում վեր է խոյանում բարձրադիր բլրաշարք, որը Տեղ գյուղի բարբառով կոչվում է «չալեր»: Դրանցից յուրաքանչյուրը գյուղի առան-

ձին տոհմի անունով է կոչվում, օրինակ՝ Նանասունց չալ, Իսունց չալ և այլն:

2. Նշված բլուրների ստորոտում տափարակից բխում է սառը աղբյուր, որը կոչվում է Քյահրիզ: Անվանումը թուրքական է, հայկական տարբերակը՝ սառը ջրհոր: Ի դեպ. Նշված աղբյուրի կողքին 1941–45 թթ.-ի Մեծ Հայրենական պատերազմի մասնակից, երջանկահիշատակ Մուշեղ Մարությանը հուշասեղան է կառուցել՝ ի հիշատակ համագյուղացի, իր մանկության ընկեր Արշակ Թոխունցի, որն անհայտ կորել է Վոլխովի ճակատամարտում:
3. Նշված աղբյուրից դեպի արևելք՝ հարավից-հյուսիս, ձորը կոչվում է Մշնահանդ:
4. Մշնահանդին հաջորդող ձորը Արայուրդն է (անվանումը կազմված է թուրքերեն *apa*-արանք և *gyrd*–կացարան, օջախ բառերից): Այդ ձորը սահմանակից է Խնածախ գյուղի հանդամասին:
5. Արայուրդից հարավ-արևելք ձգվում է Բուլախլար հանդամասը (անվանումը թուրքական է, հայերեն՝ աղբյուրներ): Այդ հանդամասը սահմանակից է Արավուս գյուղի հողահանդակներին:
6. Քյահրիզ աղբյուրից դեպի արևմուտք ձգվում են Բյադին դոլայեք կտրտրված թեքությունները՝ չալերի ներքո, որոնց դիմաց Սանդուն թափան է (Սանդուն բլուրը):
7. Սանդուն թափայից հարավ գտնվող հանդամասը կոչվում է Գյոռուտ: Տերմինը թուրքական է, հայերեն՝ գերեզմանոց: Կա վարկած, որ 1919թ. նոյեմբերին տեղի ունեցած Շպկե սարահարթի ճակատամարտի վայրից հավաքված թշնամու դիականները թաղվել են այդ վայրում:
8. Նշված վայրից հարավ-արևմուտք ձգվում է Շորին ծոր ձորակը, որտեղ կա սրբատեղի, որը կոչվում է Քըմախաց:
9. Շորին ծորից ձախ՝ արտամեջին է գտնվում մի փոքր բլրակ, որը կոչվում է Մըտղըպլուր (Մատաղի բլուր): Շորին ծորը ներքևում հատվում է Խնձորեսկ գյուղի Ջըրնգանա ձորի հետ: Այս ձորի հարևանությամբ հյուսիսից հարավ-արևելք ձգվում է Կուրաթին կետ ձորը, որով հոսում է համանուն գետակը: Գետակից աջ տարածքը պատկանում է Խնձորեսկ գյուղին, իսկ ձախ մասը՝ Տեղ գյուղին: Նշված ձորում մինչև 20-րդ դարի 30-ական թվականները գործել են մի քանի ջրաղացներ, որոնցից նշանավոր է եղել Աբալանց ջրաղացը:

Կուրաթի գետ ձորը վերջանում է նախկինում աղբբեջանաբանակ Վերին Ջիջիմլու գյուղի մոտ: Դեռևս խորհրդային կարգերի ժամանակ Ջիջիմլու գյուղի մերձակայքում նշմարվել է քրիստոնեական քանդված եկեղեցու մնացորդներ, և, ըստ ավանդության, մոնղոլների ու Լենկ-Թեմուրի արշավանքների հետևան-

քով գյուղը հայաթափվել է: Գյուղում հաստատավել են թուրքեր և քրդեր: Հետագայում եկեղեցին քանդվել է և գյուղի վերին սարահարթում եկեղեցու քարերով կառուցվել է մուսավանական զույգ քյումբազներ (գմբեթներ), որոնցից մեկում թաղված է ինչ-որ նվաճող զորապետ: Դրանք գտնվում են Խնձորեսկ գյուղից շուրջ 6 կմ դեպի հարավ:

Տեղ և Կոռնիձոր գյուղերի հողերը հատվում են Տեղ գյուղի հարավում, հիմնականում՝ Օհանին արխաջի և Քչուղին ծորի շրջակա հանդամասերով: Արխաջ թուրքերեն է՝ ոչխարի մակադատեղի:

Օհանին արխաջից աջ Ղալուզամի հարթավայրն է: Տերմինը թուրքերեն է, նշանակում է աղմկոտ դաշտ, արտ:

Տեղանուններով բավական հարուստ է Տեղ գյուղի արևելյան հատվածը: Մշահանդ և Արայուրդ ձորակների միախառնման վայրից սկսվում է Ցուռատափի ձորը: Այդ ձորին զուգահեռ կա մի այլ փոքր ձորակ, որը կոչվում է Պըկլըճկոռ: Նշված ձորի և ձորակի հատման վայրից դեպի ձախ կան երեք տեղանուններ՝ թառ, Ասկարին ձոր և Ասկարին խութ: Ասկարին թառը վերգետնյա քարանձավ է, գետնից շուրջ 2–3 մ բարձրությամբ, որի հետ կապված է անցյալի մի տխուր հուշ. 1930 թվականի ամռանը այս տարածաշրջանի պատուհասել է արտասովոր ջրհեղեղ: Տարբեր վայրերում, ձորերում, ջրաղացներում գտնվող՝ Տեղի շուրջ քսան գյուղացիներ ջրահեղձ են եղել: Ասկարին թառի շրջակայքում գտնվող հողի մշակները, հոտաղներ և հովիվներ հավաքվում են հիշյալ թառում, ջրհեղեղից փրկվելու նպատակով: Նրանց մեջ է լինում նաև Սամսոն Աղաբեկյանը, որն իր ջորիով է լինում: Բարձրանալով թառը՝ բաց չի թողնում ջորու երկաթյա օղապարանը: Կողքին գտնվողները հորդորում են ջորուն ազատ արձակել, սակայն նա, օղապարանը փաթաթելով իր ձեռքին, համատորեն պահում է ջորուն: Ահագնացող հեղեղը նրան դուրս է քաշում վերգետնյա քարանձավից և ալիքների մեջ առնելով՝ ջորու հետ միասին քշում-տանում է: Հետագայում պարզվում է, որ ջորին դուրս է պրծել հեղեղի բերանից, իսկ Սամսոնը խեղդվել է:

Ցուռատափի ձորից քիչ ներքև Օխնախպուր աղբյուրն է, իսկ շուրջ 1 կմ ներքև՝ Քարախպուր աղբյուրը: Քարախպուրի ձորակում գյուղացիները հողամասեր, բոստաններ են ունեցել, որոնցում աճեցրել են կարտոֆիլ, լոբի և դդում: Ներկայումս, բացի հատուկենտ պահպանվող բոստաններից, զգալի մասը լքված է:

Արավուս գյուղ գնացող ճանապարհի աջ մասում Տեղ գյուղի հողատարածքից բխում է մի քաղցրահամ աղբյուր, որը կոչվում է Նաղդալի: Այդ աղբյուրից հիմնականում օգտվում են արավուսցիները: Աղբյուրի ձորը վերջնամասում հատվում է Ադորը բաղի ձորի հետ, որի աջ մասում վեր է խոյանում դաժանատեսիլ Օփա քերծը՝ հսկա և բարձր ժայռը, որի հետ կապված են շատ սրտաճնլիկ պատմություններ. Տեղ գյուղի բնակիչներից ոմանք տարբեր ժամանակներում տարբեր պատճառներով ինքնասպանություն են գործել՝ ցած նետվելով այդ ժայռից: Մասնավորապես 1941–45 թթ.-ի Մեծ հայրենական պատերազմի տարիներին Տեղ գյուղի բնակչուհի Անուշը ստանալով որդու՝ Գրիգոր Հովհաննիսյանի զոհվելու լուրը, լողանում է, հագնում իր ազգային նոր տարազը, և մեկուսի հայտնվելով այդ ժայռի պռնկին՝ իրեն ցած է նետում:

Ձորի ձախ մասում Ադորը բաղն է՝ տերտերի այգին և մի հնամենի շինություն: Այգին և շինությունը ժամանակին հանդիսացել են Տեղ գյուղի եկեղեցու սեփականությունը:

Ադորը բաղի ձորից ձախ՝ գուգահեռ Ղուռուչեն գունեյի ձորն է, որի աջ մասում նշանավոր Խոնուն թառն է: Խոնան երիտասարդ պարմանուհի է եղել, և, ըստ ավանդության, մասնակցել է մոնղոլների դեմ մղված ճակատամարտին և զոհվել այդ վերգետնյա անձավում: Ղուռուչեն գունեյի (գունեյ բառը թուրքերեն է, այդպես է կոչվում ձորի արևելեահյաց կողմը) ձորը ներքնամասում հատվում է Սեյրանանց ձորի հետ: Սեյրանանք Տեղ գյուղի ստեղծարար, նախածեռնող և գործարար տոհմ է եղել: Դեռևս 45 տարի առաջ ձորում պահպանվում էր նրանց երկհարկանի տունը և թօթնու այգին: Խորհրդային կարգերի հաստատումից հետո այդ տոհմը հանիրավի բռնաբռնության կողմից արմատախիլ արվեց: Ոմանց գնդակահարեցին, մնացածներին՝ առանց սեռի խտրականության, արքայազնի Ալթայի երկրամաս և Սիբիր:

Նշված ձորն ավարտվում է՝ հասնելով Մելիքին կամուրջին: Այդ կամուրջը կապում է ՀՀ-Արցախ միջպետական ճանապարհը, որը կառուցվել է դեռևս ցարական իշխանությունների օրոք:

Կամուրջից ներքև սկսվում է Քուչուղին ձորը (քուչուղին ձոր): Բոլոր հիմքերը կան պնդելու, որ հիշյալ ձորը դեռևս վաղ միջնադարում, ընդհուպ մինչև մոնղոլական և լենկթեմուրյան արշավանքները, խիտ բնակեցված է եղել: Այդ են վկայում պատմամշակութային կառույցների մնացորդները և տեղանունները. Օրինակ՝ Հինգ շենատեղ, Կոտրած եղջին, Սըռըեղջին, Խրովը, Ճգնավերը:

Կոտրած եղջին (կիսավեր եկեղեցի) գտնվում էր Դավալքանց բաղի մոտ:

Խրով անվան հետ կապված ավանդապատում կա, ըստ որի Մովսես Խորենացին որոշ ժամանակ ճգնել է և ապրել է այդ քարայրում:

Սըռըեղջի եկեղեցին կառուցված է Քուչուղին ձորի և Կրածորի (գարու ձոր) միախառնման հատույտում՝ լանջի բարձր բազկածալքի վրա՝ հեթանոսական տաճարի հիմքի վրա:

Սըռըեղջու վերևում կա մեծ տափարակ, որը կոչվում է Քարակալ: Այն ներկայումս արտատեղի է: Դեռևս 20-րդ դարի 70-ական թվականներին նշված տափարակի եզրին՝ դեպի քուչուղին ձորը երկու դամբարաններ են հայտնաբերվել և պեղվել պատմական գիտությունների դոկտոր Օնիկ Խնկիկյանի կողմից: Պեղված դամբարանները ծածկված են եղել կրաքարի (շոր քար) սալերով, իսկ հարակից տափարակը կոչվում է քարակալ, ուստի հաստատուն կերպով կարելի է պնդել, որ այդ տարածքը ժամանակին դամբարանադաշտ է եղել:

Քարակալից ձախ Շլորի քոլ (թուփ) հանդամասն է, աջ մասում՝ Կոահետն է:

Ճգնավերը քարայր է, որտեղ անցյալում ոմն ասկետ ճգնավոր է ճգնել, իսկ Հինգ շենատեղից հյուսիս կա մի քարայր, որը կոչվում է Մուղղուսու քրատակ, որտեղ էլ ճգնել է մուղղուսին:

Ի դեպ, Քուչուղին ձորում կան որոշ վայրի կենդանատեսակներ՝ լուսան, վայրի կատու, փորսուղ, եփդնա՝ խոզուկ, սողուններից՝ գյուրգա, հայկական իծ,

լորտու: Կրածորում օձատեսակ կա, որը այժի պես մկկում է, պատահել է, նաև թերզարգացած թևերով օձ:

Տեղ-Կորնիձոր ճանապարհի ձախ և աջ հողահանդակները կոչվում են Երգան խութ (երկար բլուր), շարունակությունը Ճոխտակ հղցն է (ջուխտ ճանապարհ):

Մինչև գյուղի էլեկտրադացի կառուումը, ընդհուպ մինչև 50-ական թվականները, Քչուղին ձորում գործել են մի քանի ջրաղացներ՝ Դրավանց, Նանասունց, Շեզունց:

Տեղ գյուղն ունեցել է նաև դարբինների ամրակոտ բանակ, որոնք հայտնի են եղել ողջ Մյունիքում: Նրանց ծառայություններից օգտվել են անգամ մոտակա թուրք բնակչությունը: Հիշատակվելու արժանի են Հասրաթյանների տոհմից՝ Ղազար Պետոյանը, Մկրտիչը, Սահակը, Աթանեսանց Արմենակը, Էյագյան Հարությունը (Թունանը), Արտավազը, Ունանանց Սերոբը, Ղազուն Սերոբը, Հասրաթյան Պետրոսը, Օսեփը, Ափունց Հարությունը և այլք:

Բրուտներից հայտնի է եղել Բալաչունց Պարոնը:

Քարգործ վարպետներից հայտնի էր Գրիգոր Հայրապետյանը (Բուլկանը), ով տապանաքարերի պատվեր էր ընդունում նաև թուրքերից ու քրդերից:

Թիթեղագործներից հայտնի էին Հուպուպին Սերոբը (Սերոբա Հայրապետյան), նրա եղբայր Հուպուպին Իսակը, Գիլին Վաղոն (Վաղարշակ Հայրապետյան), Սակունց Հովիկը, Ունանանց Սերոբը (Սերոբ Միմոնյան):

Տեղ գյուղն ունեցել է ֆիզիկապես շատ ուժեղ, վառ անհատականություններ.

ա) Խորհրդային կարգերի ժամանակ հայկական և ադրբեջանական ֆերմաները բարձրանում էին Բազարչայ սարը: Թուրք հովիվներից մի ածղահա ահուսարսափի մեջ է պահել հայ սարվորներին՝ բազմիցս ծեծի ենթարկելով մի շարք հայ անասնապահների: Տեղ գյուղացի հովիվ Կիզիրանց (Գզիրանց) Արամը մի օր հանդիպում է այդ ածղահային, որի անունը Էշակ Քյարամ է եղել: Արամը ձեռնամատի է բռնվում թուրքի հետ և իր երկաթյա ձեռքերով այնպես է կաշկանդում թուրքին, որ վերջինս ոչինչ չի կարողանում անել: Գերմարդկային ճիգերով թուրքը դուրս է պրծնում Արամի ձեռքից և դիմում փախուստի: Այդ օրվանից թուրքի անպարտելիության առասպելը հօդս է ցնդում և հայ սարվորները հանգիստ շունչ են քաշում:

բ) Խորհրդային իշխանության ժամանակաշրջանում հայկական անասնապահական ֆերմաները ձմռանը իջնում էին Մուղանի դաշտավայր և անասունների ձմեռումն անցկացնում էին այդտեղ, քանի կլիման մեղմ էր և բարեբեր: Բացառություն չի կազմել նաև Տեղ գյուղի անասնապահական ֆերման: Բայց քանի որ կերը անասուններին լիովին չէր բավարարում, յուրաքանչյուր ֆերմա բեռնատարներով մամլած խոտ և խտացրած կեր էին տանում իրենց ֆերմաներին:

Տեղ գյուղի կուլտնտեսության ավտովարորդ Մաքսել Բալասանյանը (Կածանին Մաքսելը) բեռը տեղ հասցնելով՝ նկատում է, որ գյուղի անասնապահներն ու հովիվները շվարած վիճակում են. մի հսկա թուրք մինչև գոտկատեղը

մերկացած հարայ է տալիս, թե մի արժանավոր հայ հակառակորդ թող դուրս գա իր հետ ըմբշամարտելու, և ոչ ոք տեղից չի շաչժվում: Մաքսելը իջնում է բեռնատարից և զգալով, որ ազգային արժանապատվություն է ոտնակոխ արվում, հայտարարում է, թե ինքը պատրաստ է մրցելու թուրքի հետ: Բացի հայերից ներկա են լինում նաև բազմաթիվ թուրք հովիվներ, կանայք և երեխաներ: Պայմանը մեկն է լինում. պարտվողը պետք է հաղթողի պատվին երկու դոչ (ոչխար) մորթի:

Մաքսելը գրկելով թուրքին՝ չի թողնում, որ նա ուշքի գա և վեր բարձրացնելով՝ գետին է զարկում հակառակորդին՝ թիկունքը հպելով գետնին: Թուրքը ամոթահար բարձրանում է և Մաքսելի հասցեին նետում՝ «նամարդ հայ», սակայն ստիպված է լինում պայմանը կատարել:

գ) Տեղ գյուղացի Դուրունց Ռուբենը բազարչայի սարում կռվի է բռնվում մի ամեհի արջի հետ և հովվական մահակի հուժկու հարվածով գետնին է տապալում արջին, որի արդյունքում արջի փորը թուլանում է:

ՏԵՂ ԳՅՈՒՂԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐԸ

(1999) Շփոթ

Պատրաստում են սև ալյուրից. ալյուրը բովում են այնքան, մինչև դառնում է ոսկեգույն: Բոված ալյուրը մաղում են, վրան ավելացնում սառը ջուր և եփում մինչև պնդանալը: Մատուցելիս ավսեի մեջ լցված շփոթի մեջ փոս են արնում, մեջը լցնում սոխեռած, կողքերին՝ շաքարավազ և տաք-տաք մատուցում:

(2000) Խաշիլ

Ցորենը բովում են, աղում, աղացածը կրկին բովում են կրակի վրա, վրան ավելացնում են ջուր և եփում մինչև պնդանալը: Մատուցում են սոխեռածով ու թանով (հարգի է չոր թանը):

Թանապուր¹¹⁷

(2001) (Եփած թան սոխով և յուղով)

Պինդ մածունից գնդեր են պատրաստում, թողում են արևի տակ, որ չորանա, հետո լցնում են փայտյա տարրայի մեջ (մրթաբա) և տրորում: Տրորված զանգվածի վրա ավելացնում են տաք ջուր և եփում: Եփելու ընթացքում կտրտած գլուխ սոխ են ավելացնում թանին և շարունակում եփել: Վերջում ավելացնում են ուրց, անանուխ, կամ այլ կանաչի՝ ըստ ճաշակի:

¹¹⁷ Սպաս (Ծ. Կ.):

(2002) Պնուս¹¹⁸

Պատրաստում են բոված ցորենի մանր տեսակից. մանր գնդիկներ են անում, թրջում են դռշարով և մատուցում որպես քաղցրավենիք: Օգտագործում են նաև փորագավի ժամանակ:

(2003) Shալ¹¹⁹

(Ձմեռվա համար պահածոյացված միս)

Ջահել խոշոր անասունի միսը ոսկրահան են անում, եփում, հալած յուղ են լցնում վրան, շարում կարասի կամ արծնապատ տարրայի մեջ ու ծածկում: Պահում են սառը տեղում՝ որպես ձմռան պաշար:

(2004) Կունչուլ

Սոխեռածին ավելացնում են չոր հացի կտորներ, վրան լցնում եռացրած ջուր և եփում 15 րոպե: Երբ արդեն պատրաստ է, ձուն կտորում են մեջը, խառնում, ավելացնում են անանուխ ու տաք-տաք մատուցում:

(2005) Ավելուկով տապակա

Մանրացրած ավելուկի վրա ջուր են լցնում և թողնում եռա: Առաջին եփից հետո ջուրը թափում են, որ դառնությունն անցնի, սառը ջրով լվանում, վրան կրկին ջուր լցնում և եփում: Եփած ավելուկը քամում են, լցնում սոխեռածի վրա և տապակում: Մատուցում են սխտորով:

¹¹⁸ Մյուս ազգագրական շրջաններում պատրաստվող փոխինդն է (Ծ. Կ.):

¹¹⁹ Մյուս ազգագրական շրջաններում պատրաստվող դավուրման է (Ծ. Կ.):

ՍՅՈՒՆԻՔԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

Ամփոփում

«Սյունիքի բանահյուսությունը» վերնագրով աշխատանքը ներկայացնում է տարածաշրջանի տպագիր և անտիպ բանահյուսական հարուստ ժառանգությունը: Այն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄ նախարարության Գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 18T-6F194 գիտական թեմայի շրջանակներում:

Սյունիքի (Զանգեզուրի ազգագրական շրջան) մարզից գրառված ժողովրդական բանահյուսությունը բազմաժանր ու բազմաբնույթ է. հեքիաթներ, ավանդություններ, գրույցներ, առած-ասացվածքներ, անեծք-օրհնանքներ, հանելուկներ, հորովելներ, աշխատանքային, օրորոցային, հարսանեկան, սգո երգեր, խաղիկներ, ջանգլուումներ, հուշապատումներ, որոնք պատմել են բանասացներ Հովհաննես Մկրտչյան-Զաքարյանը, Անուշ Լալայանը, Վարսենիկ Մանուկյանը, Գուրգեն Օրոյանը, Գուսան Աշոտը, Աշուղ Աթան և այլք: Անվանի բանահավաքներ Սերո Խանգաղյանի, Միքայել Առաքելյանի, Մուշեղ Գևորգյանի, Զարեհ Տեր-Մինասյանի, Միքայել Ավյանի կողմից գրառված Սյունիքի բանահյուսությունը պահվում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի մշակված (FFII, FFIV, FFV, FFVII, FFVIII, FFXI, FFXII) և չմշակված ֆոնդերում, որոնց մեծ մասն իր արժանի տեղն է գտել ժողովածուում: Ժողովածուի համապատասխան բաժիններում զետեղված են 1967թ. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատողներից կազմված Զանգեզուրի բանահյուսական խմբարշավի գրառած նյութերից, որոնք պահվում են ՀԱԻ FFVII ֆոնդում: Բանահյուսական խմբարշավը գլխավորել է բանագետ Արտաշես Նազիսյանը, որի անդամներն էին Սարգիս Հարությունյանը, Ժենյա Խաչատրյանը, Վեներա Մահակյանը: Աշխատանքը համալրվել է նաև տարբեր ժանրային ժողովածուներում և հնատիպ ամսագրերում լույս տեսած բանահյուսական նյութերով:

2019 թ.-ին թեմատիկ մեր խումբը (ղեկավար՝ Թամար Հայրապետյան, անդամներ՝ Գոհար Մելիքյան, Սիրանուշ Առաքելյան, Ալինա Կիրակոսյան) դաշտային աշխատանքների արդյունքում գրառել է Սյունիքի մարզի շրջանների (Գորիս, Սիսիան, Կապան, Մեղրի) ու համապատասխան բնակավայրերի բանահյուսության ներկա վիճակը, ժամանակի մեջ բանավոր մշակույթի կրած փոփոխությունները (տրանսֆորմացիան), որոնք հնարավորություն կընձեռեն հետագա ուսումնասիրողների համար վերլուծելու բանավոր խոսքի՝ տարածաժամանակային փոփոխություններով պայմանավորված տեղաշարժերի բնականոն գործընթացները:

«Սյունիքի բանահյուսությունը» վերնագրով ամբողջական ու համակարգված աշխատությունը տարբեր ժանրերով և մոտիվային բազմազան զուգահեռներով պատկանում է ժողովրդական ավանդության հնագույն տիպին և վառ երևակայությամբ, էթնոմշակութային ինքնատիպ լուծումներով պատմաճանաչողական մեծ արժեք է ներկայացնում:

«Սյունիքի բանահյուսությունը» ժողովածուն բաղկացած է հետևյալ բաժիններից.

1. Վիպական բանահյուսություն
2. Քնարական բանահյուսություն
3. Բանաձևային-ասույթաբանական բանահյուսություն

Ժողովածուն ունի.

ա) Ներածություն, բ) հիմնական բնագրեր, գ) հավելված I, գիտական տառադարձությամբ նմուշներ դ) հավելված II, ասացողների և բանահավաքների վերաբերյալ տեղեկություններ, ե) ծանոթագրություններ, զ) բառարան, է) բանահյուսական նյութերի ցանկ՝ ըստ ծագման վայրի, բանասացի, գրառողի, ը) հատուկ անունների՝ անձնանունների և տեղանունների ցանկեր, թ) համառոտագրություններ և օգտագործված գրականության ցանկ, ժ) ռուսերեն, անգլերեն ամփոփումներ:

Ներածական մասում պատկերացում է տրվում «Սյունիքի բանահյուսությունը» թեմայի ընտրության, քննվող խնդիրների էության և բովանդակության, ժամանակագրական տարբեր ընդգրկումներով դրանց գրանցման, դասակարգման, անձնագրավորման աշխատանքների կարևորության մասին: Անդրադարձ է կատարվել Գորիսի բարբառի հնչյունական և ձևաբանական առանձնահատկություններին, շարադրվել է պատմաաշխարհագրական համառոտ ակնարկ՝ Մեծ Հայքի իններորդ նահանգի՝ Սյունիք-Զանգեզուրի մասին:

Սյունիքից գրառված հեքիաթների թեմատիկ ու մոտիվային փոխառնչությունները, որպես համաշխարհային բանահյուսական մշակույթի բաղկացուցիչ մաս, ծանոթագրություններում ինդեքսավորվել են ըստ Հանս-Յորգ Ուլթերի «Միջազգային հեքիաթների տիպերը» եռամաս նշացանկի, որով ներկայումս առաջնորդվում են հեքիաթագիտական միջազգային շրջանակները:

Սյունիքի բանահյուսությունը Հայաստանի տարբեր շրջաններից գրառված ազգային երկացանկի բաղկացուցիչ մասն է կազմում:

Իրականացված նախագծի շրջանակներում ժամանակագրական տարբեր ընդգրկումներով, տպագիր և անտիպ ժանրերով հայ բանագիտության մեջ առաջին անգամ համակարգվել է Սյունիքի բանավոր ավանդության՝ վիպական, քնարական, ասույթաբանական ողջ ժառանգությունը, որով էլ Սյունիքի մարզը գիտական հանրությանն է ներկայանում և հանրահռչակվում որպես մեկ ամբողջական բանահյուսական մշակութային տարածք:

FOLKLORE OF SYUNIK

Summary

The “Folklore of Syunik“ presents opulent printed and manuscript folklore heritage of the Syunik region. The work has been implemented with the funding support of the State Committee of Science of the Ministry of Education, Science, Sport and Culture of the Republic of Armenia within the framework of the research project 18T-6F194.

Folklore recorded from the province of Syunik (Zangezur ethnographic region) is multi-genre and diverse: folktales, legends, talks, proverbs, curses, blessings, riddles, horovels, lullabies, labour, wedding and mourning songs, games, rhymes and memoirs, told by storytellers Hovhannes Mkrtchyan-Zakaryan, Anush Lalayan, Varsenik Manukyan, Gurgen Ordyan, Gusan Ashot, Ashugh Atan and others.

Recordings of Syunik Folklore collected by well-known folklorist-collectors Sero Khanzadyan, Mikael Arakelyan, Mushegh Gevorgyan, Zareh Ter-Minasyan, Mikael Avchyan are kept in processed and unprocessed funds of archives of the Institute of Archeology and Ethnography (FFII, FFIV, FFV, FFVII, FFVIII, FFXI, FFXII), hence a considerable part of these materials has been included in the collection. The collection also contains materials from 1967 field-trip compiled by researchers of the Zangezur Folklore Group of the Institute of Archeology and Ethnography NAS, which are kept in the FFVII archive fund of the Institute. Zangezur Folklore Group was led by the folklorist Artashes Nazinyan, the members of the group project were Sargis Harutyunyan, Zhenya Khachatryan, and Venera Sahakyan. The work is also supplemented with folklore materials published in various collections of different genres and in old magazines.

In 2019, our theme group (led by Tamar Hayrapetyan, members: Gohar Melikyan, Siranush Arakelyan, Alina Kirakosyan) recorded the current state of folklore in the province of Syunik (Goris, Sisian, Kapan and Meghri regions). The group focused on the changes (transformations) of the oral culture over time enabling further researchers to carry studies on the collected data, and to analyze time and space variations which are natural for folk narratives.

The collection entitled “Syunik Folklore” is a complete and systematic work presenting various genres and motive parallels of texts of folk tradition and is of great historical and educational value due to original ethno-cultural solutions and cognitive interpretations.

The collection “Folklore of Syunik” comprises the following sections:

1. Epic folklore
2. Lyrical folklore
3. Formula-paremiological folklore

The collection consists of:

a) Introduction, b) main texts, c) appendix I, sample pieces with scientific transliteration d) appendix II, information on storytellers and folklore collectors, e) annotations, f) dictionary, g) list of folklore materials by place of origin, storyteller, collector, h) lists of proper names: personal names and toponyms, i) lists of abbreviations and references, j) summaries in Russian and English.

Introduction reveals the choice of the theme of the collection, the essence and content of the issues under consideration, the importance of recording folklore pieces, classification and documenting with different chronological coverages. Reference has also been made to the phonological and morphologic peculiarities of the Goris dialect, as well as a brief historical-geographical overview on Syunik-Zangezur as the ninth province of Great Armenia has been presented.

The theme and motif interrelations of folktales recorded from Syunik have been indexed in the notes according to Hans-Jorg Uther's classification of "International Fairy Tale Types" presenting Syunik folktales as an integral part of the world folklore culture.

The folklore of Syunik is an integral part of the national repertoire recorded from different regions of Armenia.

Within the framework of the implemented project, the whole heritage of Syunik oral tradition has been assembled and systematized into a collection with epic, lyrical and paremiological repertoires, including recordings, manuscripts and archive materials with different chronological references, thus promoting Syunik folklore and presenting it to the scientific community as a complete cultural area.

ФОЛЬКЛОР СЮНИКА

Резюме

«Фольклор Сюника»- фундаментальная работа, представляющая богатое печатное и рукописное фольклорное наследие региона. Работа была выполнена при финансовой поддержке Государственного комитета по науке МОНСК РА в рамках научного проекта 18Т-6F194.

Фольклор, записанный в Сюнике (Зангезурский этнографический район), разнообразен и представлен почти во всех жанрах: сказки, легенды, сказы, поговорки, проклятия и благословения, загадки, оровелы, колыбельные, свадебные и траурные песни, игры, загадки и воспоминания, рассказанные такими фольклористами как Ованес Мкртчян-Закарян, Ануш Лалаян, Варсеник Манукян, Гурген Ордян, Гусан Ашот, Ашуг Атан и другие.

Сюникский фольклор, записанный известными собирателями фольклора Серо Ханзадяном, Микаэлом Аракеляном, Мушегом Геворгяном, Заре Тер-Минасяном и Микаэлом Авчяном, хранится в обработанных (FFII, FFIV, FFV, FFFVII, FFFVIII, FFFXI, FFFXII) и необработанных архивных фондах Института археологии и этнографии. Большая часть этих материалов нашла достойное место в данном сборнике. В соответствующие разделы сборника включены также материалы, записанные в 1967 г. Зангезурской экспедиционной группой фольклористов Института археологии и этнографии (материалы хранятся в фонде AIF FFFVII). Экспедицией руководил фольклорист Арташес Назинян, членами группы были Саркис Арутюнян, Женя Хачатрян, Венера Саакян. В работу включены также фольклорные материалы, опубликованные в сборниках разных жанров и в первопечатных журналах.

В 2019 году наша тематическая группа (руководитель Тамар Айрапетян, участники: Гоар Меликян, Сирануш Аракелян, Алина Киракосян) зафиксировала современное состояние фольклора в соответствующих населенных пунктах Сюникской области (Горис, Сисиан, Капан, Мегри). Особое внимание было уделено изменениям (трансформациям) устной традиции, что позволит исследователям в дальнейшем анализировать преобразования устного фольклора, которые являются естественными процессами в устной традиции и обусловлены временными и пространственными факторами.

Фундаментальная и систематизированная работа «Фольклор Сюника» содержит в себе произведения разных жанров народной традиции с различными параллелями между мотивами, а своими яркими и самобытными этнокультурными решениями представляет большую историческую и познавательную ценность.

Сборник «Фольклор Сюника» состоит из следующих разделов:

1. Эпический фольклор
2. Лирический фольклор
3. Формульно-паремиологический фольклор

Работа состоит из:

а) введения, б) основных текстов, в) приложения I, тексты с транскрипциями г) приложения II, сведения о сказителях и фольклористах-собирателях, д) примечаний, е) словаря, ж) списка фольклорных материалов по месту происхождения, сказителю и собирателю з) указателей личных имен и наименований местностей (топонимов), и) списков аббревиатур и использованной литературы, к) резюме на русском и английском языках.

Во введении представлены выбор темы «Сюникский фольклор», концептуальные решения и содержание выдвинутых вопросов, необходимость собирания, классификации и документирования фольклорных произведений с разным хронологическим охватом. Дано представление о фонологических и морфологических особенностях горисского диалекта, составлен краткий историко-географический обзор о Сюник-Зангезуре, девятой провинции Великой Армении.

Сказки, записанные из Сюника являются неотъемлемой частью мировой фольклорной культуры. Тематические и мотивные взаимодействия сказок Сюника проиндексированы в соответствии с указателем типов сказок Ханса-Йорга Утера «Международные типы сказок», которым в настоящее время руководствуются в международной фольклористике. Сюникский фольклор - неотъемлемая часть национального репертуара, записанного из разных регионов Армении.

В рамках осуществленного проекта впервые в армянской фольклористике, было систематизировано все устное наследие Сюника – эпическое, лирическое и паремиологическое, с учетом хронологического порядка и всех особенностей, с печатными и рукописными текстами, с чем и Сюникская область предстает перед научной общественностью как одно единое фольклорное культурное пространство.

ՀԱՎԵԼՎԱԾ I

ՀԵՔԻԱԹՆԵՐԻ՝ ՍՅՈՒՆԻՔԻ ԲԱՐԲԱՌԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ

ՔՐՈՒՍՈՒՆ ԸՍԿԷՍՈՒՐ¹²⁰

Մին հետի Մելիք Ջհանգիրը կանչիլ ա տվալ ուրան մըհլան քուստուն հըրթն-տեր պատավ կընէկ, դունուդատանը ջարգին նըստըցնիլ ա տըվալ, ասալ թօ(ղ) գուրուց անեն մինչև լօխունքը կըհըվաքվէն:

Հէնց վեր խաբարը տարան թա քըռաստուն կընանքիքը յեկալ էն, հէն էն ծը-լըպատակ նըստօտած, մելիք Ջհանգիրը էն դալին բեղէրը հըլուրիլավ նի մըտավ դունադատուն, լօխճին պարյօր ասէց, համ էլ աշկին տակալը մուշտարու աշկավ լօխճին տընդըղէց:

Քըռաստուն կընանիքը մին-մինի յենդա, աստըծու պարին, աստըծու պարին ըսէցին:

Մելիքը հըրցըրուց. — Տուք գյուղում էք, թա ծէգ հինչի հետի եմ կանչալ:

Ընդրանք էլ թա. — Շըտեղամն ենք գյուղում, տու կանչալ էս Աղա Մելիք, մեք էլ յեկալ էնք:

— Դէ վեր գյուղում չէք, յես ասէմ, յես կանչալ էմ էն կընանուցը, հուվերք ու-րանց հըրթնէրին նըհետ սէրավ են, ջան էն ասում, ջան լըսում, ուրուր ըրէվավ ուրթում օտում, հու վեր ծըզանա ուրան հարթնին նըհետ բարիշ չի, սաղ օրը կը-ռէվ էն անում ուրուր մէս օտում, յա էլ խըռօվ էն ուրուր անա, թօ(ղ) յերկէնան քի-նան ուրանց տընէրը:

Մելիքին էս խօսկին յըրան, էտ կընանիքը մին-մինի յեղնա, տըղըրնէրան յեր կտան տուս տառան քինացին, մընաց մինակ մին պատավ կընէկ, ուրան տե-ղը նըստած:

Մելիքը տէսավ, վեր քըռաստուն կընանօցան մինը նա մընացալ, մուտացավ ընդըրան, հըրցըրուց. — Շարմաղ աքէր, մին ասի տէսնամ, էտ քու հարթըր հիշ-քան լավըն ա, վեր ընդրան նըհետ սէրավ էս կէնում, դըլմըղալ չէք անում, ուրուր մէս չէք օտում:

— Աղա Մելիք, էտ հու՛ վա ասալ քէգ, վեր յես հարթնիս նըհետ սէրավ էմ, յես քէ մատաղ, բօյիտ դուրբան, մին ասի տէսնամ, կէծակը ընդրա ջիգյարան կէնա, գյուլխօրավ ինի, յա էլ աշկէրը յեր տառնա վենդին տակը տառնա, քուռանա, տափէրը տփտըփիլավ ման կյա, յես տէսնամ աստուծ ընդըրան քօս տա դէնգէր չի տա վեր ջանը քօրի, ընդրա գյարդանը կօտրի, ումբուրը թաղէմ, խըրզըհատ ինի, բա յես ընդըրա նըհետ սէրավ էմ, վեր ասում էս, տըվալ ա օմբաս կօտրալ կարում չէմ թա տեղաս տուրուր կյամ, թաչնա լօխճան կանուխ յես կըքիինի ըստե-ղան, բա յես հարթնիս նըհետ սէրավ էմ, վէչ ինի ընդըհէնց հարթնը:

¹²⁰ Գիտական տառադարձությունը՝ լեզվաբան Ա. Մարգարյանի (Ծ. Կ.):

Մելիք Զիհանգյիրը էս վեր լքսեց, ծափ տըվալ էրկու գյաղա կանչեց, թափ-
շուր ըրալ, վեր Շարմաղ աքօրը կրոնըկերան փրոնէն տանէն ուրանց տուն:
Ըթըհէնց էլ ըրին:

ԽԱՇՓՈՒՇ ԱԴԷՐԸ¹²¹

Մին շէնում ադերը մեռալ էր, շէնը մընացալ էր ըոքնց ադեր, վէչ հըրասանիք
ին կարում անէն, վէչ խօխա կընքում, վէչ տոն օրթնում, վէչ էլ մեռալ ին կարում
թաղէն:

Սասը յեր էր իլալ, վեր փըլան շէնումը ադեր չի կա, ուրանց մեռալնին կա-
րում չէն թաղէն:

Մին խաշփուշ ըդերի շօրեր կեցալ, փարաջան քյիցեց ուտերալը, քյինաց էտ
շէնը, քյօխվին կօխկը, ասեց.— Յէն ադեր էմ, օգում էմ ծեր շէնումը ըդրօթուն
անէմ, ծեր ժըղօվուրթին ծառան տառնամ, թա դաբուլ էք, ժամին պըլանիքը ինձ
տըվէք, քյինամ աստծու տոնը ավաղ անէմ:

Քյօխվան ժամին պըլանիքը տըվալ էտ սուտլիկ ըդերին, ինքը քյինաց շէ-
նին մըծըմէծանցը նըհետ մըլըրհաթի: Վուրուշեցին էտ ըդերին փօրցն:

Մին սաղ-սալամաթ մարթի փըթըթեցին մին մեզարի մէջ, մին քյօհնա դու-
թու մէչ պըրընցըրին, տարան ժամ, ըդերին ըսեցին էս մեռալը էքուց թաղիլ պե-
տէնք, թօ(դ) ժամումը կէնա: Մեռալը տիրան ժամին մէշտեղը, ադերը տուտը
կապեց, քյինաց տոն:

Էքսի ըռավէտը ծէքը-ծէքին ադերը յէկը ժամ, տուտը պացալ, օգեց թաղ-
ման ռէպէտից անի, սըվերի վեր շինացուց կօխկին շիլ չինգյինի, խայտառակ
չինի: Մին էրկու հետ էտ սօտ մեռալին չօրս դօլալը շոռ տըվալ, շըրական կար-
թեց, մին էլ յէշեց, տէսալ էտ մեռալը տուրուր ա կյամ, գըրմացալ, մըտկումը
ասեց. Էս շինին ժըղօվուրթը հի՛նչ անխէղճ ժըղօվուրթ ա, թուղացալ չէն, թա էտ
խէղճ մարթը կարքին մեռնի, պերալ էն տիրալ ժամումը: Կըրավազանը յեր կա-
լալ, տարալ պերալ նըհէնց յէտ պերալ մեռալին քիլին միչին, վեր էտ խէղճ
մարթը դութուն միչին թըփըռէպին ըրալ, կարաց վէչ թա կըլօխը պըցըրցընի,
մին պան ասի: Սուտլիկ ադերը էնքան ըտրա կըլօխը կըրվիզանալը յեր թակեց,
վեր խէղճ բէչարան հօքին տըվալ:

Ադերը քափը-քըթընքին միչին կօրալ էր, վեր ժամին տուտը պաց ըրալ,
ժըղօվուրթը նի տառան, հի՛նչ տէսան, էտ կըրտաղած ադերը սաղ-սալամաթ մար-
թին կըրվիզանալը յեր թըկիլալ ըսպանալ էր:

Ադերը մին թօհմաթ էլ կարթեց շինին մարթկանց կըլխին, թա տուք էտ հի՛նչ
ժըղօվուրթ էք, հալա էտ մարթը կարքին մեռած չէր, շուտ էք ըրալ, պերալ տիրալ
ժամումը, խըրէկ մընաց իմ հօքիս էլ էլ տուս կյար, մինչէվ ընդրա հօքին դըրկեցի
արքատւթուն:

¹²¹ Գիտական տառադարձությունը՝ լեզվաբան Ա. Մարգարյանի:

Շինին ժողովուրթը վեր տէսան կյիժ ըղերին ըրարմունքը, յըրա տառան, վէնդի տակ տըվին էտ ըղերին ըրարմունքը, յըրա տառան, վէնդի տակ տըվին էտ ըղերին, էնքան կօխճան տըվին, վեր ընդըրա հօքին էլ դըրկէցին տըժխօկը:

ՄՕԼԼԱՆ ՈՒ ԿՅՕՂԷՐԸ¹²²

Մօլլան մըն հետ ուրանց տանը նըստած վախտը յէշում ա տէսնում էրկու հատ կյօղ մըտան ուրանց տոնը: Մօլլան ասում ա՝ խուսալու չէմ, տէսնամ ըտրանք հինչ էն անում: Շատ կընալան յէդան մօլլան յէշում ա տէսնում, վեր ուրանց տան իլած-չիլածը չիմ շիլակում էն տանում, ուրան քօն իլածի տեղ ա տինում: Վերչը էն ա տուս կյամ, վեր մուլին տակին դօշակըն էլ էն տուս օնում: Մօլլան էլլա խօսում չի: Կյօղերը վեր տանը վէչ տանը վէչ մի պան չէն թօղնում, չիմ շիլակում էն տանում, մօլլան էլ յէր ա կէնում կընգանը չըխարակը ինքը շիլակում, ընդրանց յէնդան ինգյում: Էտ կյօղերը շատ էն դինջանում. Մօլլան էլ քինում ա ընդըրանց կօխկին յէր կյամ: Դինջինալի վախտին ընդրանք մուլին հըրցընում էն.

—Մօլլա, բա տու էտ թօրն էս քյինում:

Մօլլան էլ ասու ա.

—Հո՛ւ՞ց թա թօրն էս քյինում, բա մեր տոնը քուչուցընում չէք ծէր տոն:

ՈՒՍԿԷ ԽՈՒՆՁՈՒՐՈՒՆ ՆԱՂԸԸ¹²³

Նիս ի նիս չի մին Թաքավոր, ադոնր պալատու ըռըշկին նիս ի մին շետ մոծ իգյի. մո իգյամը նիս ի մին խոնճոնրոն ծառ, մո նմս ի լմ ոսկէ խոնճոնր: Մին օր Թաքավորը կընչիս ի ոնրէն կօշտը ոնրա իրիք տըղէրաց, ըսես. «Իմ սէրտը շետ նադինջ ի, վխէս իմ հոր մեր ոսկէ խոնճոնրէն գղաննիս: Մոծ նէն մաջնակ տղերքը ըսես ին. «Այ հէր, հուվ ա կարիլ մեր իգէն բէն գըղաննի, անդի բէժուր հուր-մար օնի հոր, իսկի ծէտը ոնրէն թիվավը կըրես չի թոչի մըտէ իգյին: Փիստէկ տղան ըսես, ի. «Չէ, ախպերքըս, դուք սխալվէս իք, մեր հերը ոնդոնդը ը ըսես, մո ծառուն վերան մետիլ ջուկ դարավուչի դիրվի»: Թաքավորը ըսես ի. «Ձիր ախպերը շետ դոնգ ի ըսես: Ան ծառուն վերան դարավուչին մետիլ նիք դուք, իրիք ախպերտանքըտ»: Թաքավորը տըղէրանց վերան նօբաթը դիրին, հոր մետիլ դարավուլ քնշին: Ըռըշկի օրը գինէս ի դարավուլ մոծ տղան: Հոր մթնէս ի տղան գինէս ի իգյին, դանրվանն դուփուլավ կըպես, գինէս իգյուն չուրք թարափուն ծակը ծուկը վանրավոնրը ըրես, ալ քօլ չի մընաս, հոր տակը թըմաշա չարի: Ան օմմենը ըրէլէն հետը գինէս ի խոնճոնրոն տակէն նըստես ակնարը տընգէս խոնճոնրոն վերան: Հոր կէս քիշեր մ դըռնիս, տըղէյուն քօնը տընէս ի պըրընէս ի, քօն նմս: Մին ալ ակնարը բինին ի տըսնիս, հոր խոնճոնրոնէրոն

¹²² Գիտական տառադարձությունը՝ լեզվաբան Ա. Մարգարյանի:

¹²³ Գիտական տառադարձությունը՝ Լ. Աղայանի (Ծ. Կ.):

մինը կա վույ: Նոյս ի Թաքավորուն կօշտը, ըսես. «Այ հէր, իս սաղ քիշէրը ակնօրուս կօպարը թուղ չիմ արալ հոր նորոյ կըպի, խոնձորոն տակ մարդու հաք չի կըպած, համա ալու խոնձորներուն մինը վույ: Թաքավորը ըսես ի՛ գիննս դինջաց: Էրկուինջի քիշերը գինես ի դարավու մաջնակ տղան: Ան ան մոճ ախպուրը նման դնրվնգան կըպես, իգոն չուրք թնրնսն ալ շոռ նոյս, նոյս խոնձորոն տակէն նըստես, ակնարը ցիքիս խոնձորոն: Հիք հոր դըռնիս ի կես քիշեր, տղան տընիս ի հոր քօնը տընէս ի, գլօխը դիրէս ի տափուն ու քօն նոյս: Միս ալ ակնարը բինիս ի, տըսնէս օրը կըսօր ը դէռած: Գինէս ի Թաքավորուն ըսես. «Այ հէր, սաղ քիշերի իս ակնարս մին վարկեսն ալ կըպըցըր չիմ, համա լիսացալ ա տեսալ ըմ հոր խոնձորոն մինը կա վույ: Թաքավորը ըսես ի՛ գիննս, գիննս, դու ան դինջաց: Իրիքինջի քիշերը գինէսի փիստէկ տըղան: Ան տըղան ախպերցը նման գինէս չի դես դեն շոռ նոյս. Միսակ փրկէս ի դնրվնգան, նոյս խոնձորոն տակէն նըստես, նետ աղեղը դիրիս կուխկը: Միս հոր կես քիշեր ը դըռնիս, տըղան տըսնիս ի, հոր քօնը տըսնէս ի, հընէս ի ջիբէն դենակը ձիքնս միս բոյթը կըտըրէս, վերնն աղ ըծէս: Բոյթի ըսկըսես ի շետ մըմըռալ, անդի հոր տըղէտուն քօնը փըջիս ի: Միս հոր սհաթը դըռնիս ի տըսնըրկունը, մըն ալ տըսնիս ի էրգինքէն միս մոճ սէվ ամպ գըլուրվիլավ վեր ի նոյս խոնձորոն վերնն: Ամպը հոր հըսես ի ծառուն, մանջէն դոյս ը նոյս միս ձիք , խընդիս ի հոր խոնձորը կըտըրէ, տըղան նետը դիրիս ի աղեղամը, քիշիս, նետը բըրախս ննս: Ալբիհնսլ ամպ մամպ կուրջիս ին, լիսնակը դոյս ը նոյս: Տըղան պըրընէս ի արխային քօն նոյս, տըսնէս ի խոնձորոն ուրն տեղը: Հոր լիսինիս ի տըղան տըսնիս ի, հոր ծառուն տակէն նորոնը գօլ ա տըրված, միս խօր գինես ի դիրի դեն, տըսնիս ի, հոր նորոնը վեր դըռնիլավ գինես ի: Տըղան գինես ի էաքավօրուն կօշտը, ըսես. «Ապն, նս քիշեր իս գոնոն յարալու յըմ արալ, համա սըպանված չի: Հարկավօր ա, հոր գինէք հետկը պըռնած գիդենիք, տեղը սըպանիք: Թաքավորը ան էրկու տղէտուն ալ դիրիս ի փիստէկ տղէտուն նըհետ, նըստես ին ձիանքը, նորոնի հետկը պըռնես ին գինէս: Շետ ըն գինես, թն խօր, նդ գինէցուղըր գիդիլ, հըսես ին միս հուրու, հիշտեղ նորոնը հետկը պըրըծընէս: Թաքավորու փիստէկ տղան ըսես ի. «Ա՛յ իմ ախպերտիք, մեր գոնըր տեղըր ա մըտալ. վեր դուք նս հուրը, ննդոն սըպանիք»: Բիրիս ին միս հաստ, էրկեն քանդիք, նվնս կըպես ին մոճ ախպուրուն, կախս ննս հուրը, հոր գինէ գոնոն սըպանի: Տըղան ըսես ի. «Հիք իս ասիլ իմ վն՛յ էրվալ ըմ, նլբիհնսլ ինձ հուրէն հանիլ իք»: Տղէտուն կախ ըն տվալ, հասալ ա հուրու կէսին, հարայ ը տըրվալ. «Վն՛յ, ձիգ մատաղ, վըռվէս իմ, վըռվէս իմ»: Անոր քնննսլ ըն հանալ: Կըպիլ ին մաջնակ ախպերուն, ննդ ալ գէցալ ա հուրուն կէսը ու հարայ ը տվալ. Հասալ ա հուրու կէսը ու հարայ ը տվալ. «Վն՛յ, մէռա, հետ քիշէցէք»: Ատոնր ալին հընիս: Հըրդա նօրաթըր հասալ ը փիստէկ ախպերը: Անոր հոր կպէս իս քննդիքնսլ ըսես ի. «Հիք հոր իս ասիլ իմ վն՛յ մէռա, հա մէռա, ինձ հետ քիշէցէք, դուք իմ ըռըխուս թըմաշ մէք արիլ, քննդիքի բըրախս տվէցէքգինէ. միս ալ հիք հոր քննդիքը քաշիմ, հանիլ իք հինչ հոր վերան կապած նի»: Թաքավորու փիստէկ տղէտուն կըպես ին կախս ննս հուրըր ու

ըսկըսես ի քյանդիրը բըրախ նաս: Աս խեղճի հա հարայ ի ննս, վայ մեռալ ըմ, հնէցէք, ախպերնէն լիսիս չին, անդոնոր հա վեր ըն բիրիս: Մին ալ տըսնիս ին հոր քյանդիրը բօշացալ ա, ուրեմն տըղան հասալ ա տափուն: Տղան հոր հսէս ի տափուն, հուշի գեհած ը նիս. մի քանէ բոպէ անց անց ը ննս տղէյու հիւշի ննս ի գլօխը, վիր ի նաս վերան նստէս. հուրումը շետ միթէն ի նիս. ձիքը տափը պըտը-ռուտիլավ տըսնիս ի հոր մին տասը ախպուրա վեր դըռնիս: Տղան ծարավ դանձ-ված իրիս ի լա, ձիքարը լիվինիս ի հըվընէս, փուրուն վերան պըրընէս, մին դօյնմջան ջոնր խըմես, խընդիս ի հոր տեղէն վիր կա, տըսնիս ի հաքարը մինչև ծօսգարը խըմված ըն տափը. Տղան մին իգինքի թափ ը ննս, հոր հաքարը հանի, ձիքը կըպես ի հուրուն, անդ տեղը փօլ ը ննս, մին ծակ ը բինվիս: Տըղան մըտես ի անդ ծակավը դոնս ը ննս մին պըտղատու իգյի: Մին խօր տեղ գինես ի տըսնիս ի, հոր անդ իգանը մին էրկու հըրկանի տոն կան. տղան գինես ի փանլըքաններնվը բիցրիսիս պալկօնը, տըսնիս ի մին դուրք: Ադ դուրքը բինիս ի, մտէս օթախը, տըսնիս ի, հոր օթախը մաժտեղը նստած ա մին ախչիկ, ծընգան վերան մին իրիք գըլխանէ նատաղէվ, գլօխը դիրան, քին իկյած: Ախչիկի հոր տըսնիս ի տղէ-յուն, ըսես ի.« Վայ, ախպեր ջան, շոնդ արա գինս, թա չէ սս ջաննվանրի վիր ի ննս, քի սպանիլ»: Տըղան տըսնիս ի ըլսըչկա ձիքէն մին ոսկէ խոնձոն, ըսես ի.« Վախի ման ախչիկ ջան, իս միս անդոնոր հետս իմ իկյած, հոր սըպանիմ»: Ախչի-կի ըսես ի.« Տըսնիս իս ան պուճախամը դիրանն ն մին խանչալ, ժուսգուտած դի-նի մանջին, հոր կարիս խանչալը դիյնի մանջին հանիս, ան վախտը դու կարիլ իս ն դոնր սըպանիս»: Տղան գինես ի պուճախէն խանչալը վեր ըմէս դիյնին գիք նաս հոնրգի մին թեփուր: Հըսնես ի թա չէ նատաղէվը ակնարը բինիս ի, վերան նըստես: Տըղան ալ անդ ի լն խընդիս. անբիհնլ խանչալը վեր ը բիրիս նատաղէ-վու գլօխը կըթնէս: Ախչիկի ըսես, ի.« Վիյ, իս քի մատաղ, էք փախչիք գինէք իս քունըն ըմ: Տղան ըսես ի.« Աս հինչ դուրք ա օթախուն մանջին», ախչիկի ըսես ի.« Վիյ, քի մատաղ, ան օթախը գինես ուչ, տեղը ըպրէս ի վեց կըլխանէ նատաղէ-վը, հոր փիչէ, դու վեր ըս նանիլ»: Տղան ըսես ի.« Տըսնիմ հոնրդի փիչիլասկան, մըտես ի ան օթախը: Տըսնիս ի նստած ա մին ախչիկ ալէլի նախշուն, մին վեց գլխանէ նատաղէվ գլօխը դիրած ըլսչկա ծընգանը քօն իկյած: Ախչիկի հոր տըս-նիս ի տղէյուն, ըսես ի.« Այ տղա, դու շտեղ, սս տեղս շտեղ, շոնդ արա հուրդի հոր իկնն ըս, անդի ալ էտ դէռ, գինս, թա չէ նս ջաննվանրի վիր ի ննս քի սըպանիլ»: Տըղան ըսես ի.« Հոնր գիդէմ, իս միս անդոնոր հետս ըմ իկնն հոր սըպանիմ»:

Ախչիկի ըսես ի.« Այ տղա, դու հոր խնդիս իս անդոնոր սըպանիս, ան խանչալը հոր դիրած ա ան պուճախամը, մետիլ կարիս ժսգուտած դիյնի մանջէն հէնից հանիս»: Տղան միս հնէսի թն չէ, նատաղէվը ակնարը բինիս ի վերան նըստես: Տղան ակ միս անդ ի լն խընդիս. ննս ի խանչալավ գլօխները կուտուրիս:

Ախչիկի ըսես ի.« Վայ, իս քի դուրքան, էք փախչիք տեղէս, իս քունըն իմ, դու իմի»: Տըղան ըսես ի.« Չէ, դու մին սաս տեսնիմ նս հինչ դուրք ա»: Ախչիկի ըսես ի.« Վայ, աման, աման դու մղաբուն ըս, անդ դուրքը բէսնիս ուչ»: Տղան ըսես ի.« Դու արխային կաց, ադ խոնձոնը վիր առ, գնա ան ըմըչկի օթախը, տեղը

մին ախչիկ կան, անդ՞նք քշտին հուտաց կաց, մինչեւ իս գում: Ախչիկի գինես ի ըռըշկի օթախը, տղան մտես ի իրիքմինջի օթախը, տըսնիս ի օթախուն մաժտեղը նըստած ա մին ախչիկ, հոր հրենակուն ըսես ի դու դոն մն նոյ, իս դոն իմ նու: Տղեյուն հոր տըսնիս ի, ըսես ի. «Ա՛յ տղա, քի մատաղ, աս շտեղ ըսիկյանձ, շոնդ արա տեղէս գինա: Նատաղէվը աս քիշեր իկալ ա յարակու, հրդդա ք՞ն ը իկանձ . քընըտեղէն հոր վիր ի կացալ գըլխըտակէն բօթուլը, հոր մանջին անմահական ջոնը կան, խընըլացուկ ա, սըղանի, իսկ հաքարուն տակէն բօթուլու ջոնը հոր խմի, անրիհանլ մեռնիլ ի»: Տըղան ըսես ի ըխչըկան. «Դու գինա ըռըշկի օթախը, տեղը էրկու ախչիկ կան, անդ՞նք քշտի կաց մինչ իմ գոյլըս»: Ախչիկի գինես ի ան ըռըշկի օթախը, տըղան գլխուն տակէն բօթուլը վիրի ըռես դիրիս հաքարուն տակըն, իսկ հաքարուն տակէն բօթուլը դիրիդ ի գլխուն տակէն ու նատաղիվուն յարալու տեղուն յումբուրուղալ կուփիս. Կուփիս ա թան չէ, անոնը շըպըրտիս ան, նատաղէվը վիր ի կաս, տեղը նըստիս, ըսիս. «Այ պարօլ ըս իկալ դու, Թաքալորի տըղա, էք մին մին խըմեք»: Նատաղէվը ձիքը միկնիս ի հըքերուն տակէն բօթուլը ննս տղեյուն, գլխուն տակէնը ինքի վիր ըռես խըմես ին: Միս խմես ին թան չէ, նատաղէվը տեղը հանրանլ մըռնիս ի, իսկ Թաքալորի տղեյու գօռը տասը դ՞նան իվիլնիս ի: Տըղան դոն ի նոն գինես ըռըշկի օթախը, ըխչըկերանց վիր ըռես գինես հուրը: Ավանլ կըպես ի մոձ ըխչկան, ըսես. «Քշիցեք, անդ հոր հանիք դուրկիս իմ մոձ ախպուրս հետա»: Մաջնակ ախպերի հուտիս ի, ինքի ուրէն ըսես ի. «Մոձ ախպեր նիլ ի հինչքան օքուտ բէն ան հա, տըսնիս իս անդի սախշուն նշէնած ը ստացալ»: Քօղը հետ ին քիցիս. տըղան կըպես ի էրկունջի օթախու ըխչըկանը ու ըսես. «Քշիցեք, անս ալ մաջնակ ախպուրըս նիշէնածըն ա»: Ան անքամ ալ մոձ ախպերըն ը հուտիս, հոր տըսնիս ի ախպուրը նիշէնածը ուրան նշէնածէն սախշուն ա: Քօղը անոն ցիքիս ին հուրը. Հըրդա հուրամը մընահած ըն փիստեկ տըղան ու փիստեկ աղչիկի: Տըղան խընդիս ի ըխչըկանկապի հոր հանին, ախչիկի ըսես ի. «Այ տղա, էտջ դու գինա, էտնէ իս իմ նոյ , թան չէ հոր իմ գինես, քու ախպըրտիքը նախանձութունէն քիզ հանի չին, պահիլ ին հուրամը»: Տըղան ըսես ի. «Չէ, իս քիզ հենից շոնդ գինէ չիմ, բիրդան կարիչիս օքուտ կապիս, վեր իս նանիս սըպանվիլ»: Ախչիկի ըսես ի. «Այ տղա, իս գինեսիմ, համա դու մընըլասկան ըս հուրամը, նախանձութընի պատճառալ»: Ախչիկի ննս ի տղեյուն մին անգուզ, էրկու փընդըղ և մի փետու կուտուր, մին մատիտի դըղար. էտնէ վերչ, էտջըտ դոն ը նոյ մին դուրք, հոր բինվիս ի մին մոձ արօտատեղ, անդ դըքքալը մտել իս թան չէ, դոն ըն նոյ էտջըտ իրիք ուխար, մինի սեւ, մինի կարմեր, մյուսը սիպտակ: Անոնք ըսկըսըլասկան ըն ուրոն վերալ թոչկուտիլի, դու աշխատէր սիպտակի վերանլ թոչիլ, հոր նանիս սիպտակ աշխարք. Հոր կըրհաց չիս, կարմերի վերալ թոչի, հասնիլ իս կարմեր աշխարք, համա հոր թոչիս սեվուն վերալ, նանիլ իս սեվ աշխարք. ան տեղան դոն գոյլը շետ դիժեր ան: Ախչիկի ըսես ի. «Իս քի սպասիլ իմ իրիք տարէ, իրիք օր, իրիք սհաթ, իկան չիս իս մարդու յիմ գինէլասկան»: Անոնք խըտտես ին պըչպըչուտիս. քիշիս ին ըխչկանը դոն ըն բիրիս հուրէն, քանդիր կախըն ննս հոր տղան դոն գու, տղեյուն քիշիս

ին մինչև հուրուն կէտը, դէնակալ քանդիրի կըտրէս ին, տըղան շրամի տալիս աս հուրուն տակը: Տըղան հոր վեր ը նընէս օշը տընէս ի, մին քիշէր ադի մընաս ի, էտնէ հոր խէլքը տեղըն ը ննու, կընչիս ի ախպուրցը, տըսնիս ի սնս սնու չկան, ուրէմըն գէհած ըն, ախչիկի ադուրդ ը լն ըսես, իս հիմար ըմ լն լիսնն չիմ անդուր: Տըղան ըսես ի գէհածը գէցալ աս, ալ հետ չի նուլ, հուրեն դնու ի ննու գինես ըխչըկա նիշէնց տըված տեղարը, հիբ հոր դնու ը ննու արօտատեղը, դուս ըն ննու տղէյուն էտէջը իրէքյ ուխչար՝ մինի սիպտակ, իմին սէվ, մինն ալ կարմեր և ըսկըսես ին աթըրմա խաղալ: Տղան հինչկան ըշխըտես ի, հոր սիպտակի վերավ և տըսնիս ի, հոր գինես ի ինքն ալ չի գիդալավ, թնն հոր ը գինես: Մին ալ տըսնիս ի հաքարը կըպալ ըն տափուն: Չուրք թնրննփի մտէկ ի ըրես, տըսնիս ի, հոր նած աս կարմեր աշխարք: Տղան տըսնիս ի, հոր օմէն բէն կարմեր ի: Մին քննննվ գինես ի, տըսնիս ի մին տոն դուրքը թըկես ի, բինիս ի մի պառավ կնէկ: Տըղան ըսես ի. «Նանի ջան, դնրիբ մառդ ըմ, ինն տեղ չիս ննլ մի՛ն քիշէր մընամ: «Պատավը ըսես ի. «Բալա ջան, խասնն չիմ, մառդ աստծու դօնադուն չէ չի ասիլ. համեցիք ներս»: Տըղան մըտես ի ներս, տըսնիս ի, հոր պառավը խըմուր ը ըրես, համա ջիրավ չի ըրես, խըմուրուն վերան թըլես ի, հունցիս: Տղան ըսես ի. «Նանի ջան, ադ խնն թէքավ ըս խըմուր ըրես»: Պատավը ըսես ի. «Է, բալա ջան, պա հինչ արիմ, հոր ջնուր չոնիմ», տըղան տըղան ըսես ի. «Խսմ, ձիբ քաղաքամը ջնուր չի կնն»: Պատավը ըսես ի. «Բալա ջան, խա կա վուչ, համա դէ օմէն մառդ կըես չի ձիքյ ցիքի: Հէսէ տասը տարէվ ի մին տըսնըրկու գըլխանէ վիշափ նըստած աս մեր ջրի գօլը, մեգ ջնուր չի ննս, հու հոր խընդիս ի ջնուր տանի մետիլ մին ախչիկ տա: Մեր քաղաքամը ալ ախչիկ չի մընացալ, ննուր նլ մեր Թաքավորը ուրէն մին ճարը մադար ախչիկի տընըլասկան աս տա ննդուր, հոր ջնուր վիբ առի, թնն չէ գորքը ծարավ կուտուրվիլ ի»:

Տղան ըսես ի. «Նանի ջան, ադ գօլը հէռնվ աս, կարիլ իս ինն նիշէնց տաս»:

Պատավը ըսես ի. «Իմ տանէն մինչև տեղը հէրուր արշին նիլ ի»:

Տըղան ըսես ի. «Նանի ջան կօժ օնիս, մին էրկունը ինփ տօր, մին էրկունըն ալ դու վիբ առ. Հըդրա իս քու տոնըտ ջնուրավ լիցիլ իմ»: Էրկու կօժ ինքին ի վիբոնէս, էրկունս ալ ննս ի պառավուն, մին քանէ հետ գինես ին բիրիս, ալ պառավուն տանը աման չաման չի մնաս լիցվիս ի: Տըղան հոր ճընընչիս ի գօլուն տեղը արխայինիսնէս ի: Պատավը խըմուրը հոր թէքավ ը լն արված, դեն ցիքիլի ննս, թագադան ջնուրնվ խըմուր ըրէլ նաս: Պատավը ըսկըսես ի հաց իփիլի, տըղան մին բօլ պանէր հաց ը ըտես, պըրընէս քօն ննու: Արվի դնու ը ննու, տըղան հալա քօն աս: Պատավը տըսնիս ի հոր Թաքավորու ըխչկանը տնէս ին տան օդուն, նլընննն տղէյուն վիբ ը կըցընէս, ըսես ի հոր Թաքավորու ըխչըկանը տարալ ըն դիրնվ գօլուն դրադէն: Տըղան խանչալը վիբ ը ըռէս դնու ննու: Պատավը ըսես ի. «Օղըլ, հօր ըս գինես», «Թաքավորու ըխչըկանը հարայուն»:

Տըղան գինես ի գօլուն դըրաղը, տըսնիս ի, հոր մին ախչիկ ուրէննուց մին խօր դեն նըստած լէս ի: Մին ալ տըսնիս ի գօլեն դնու ը իկալ մին տըսնըրկու գլխանէ վիշափ, դնու ը ննու գօլէն դնու գիբի ըխչըկան: Տըղան հը ըրես, լօք ննս,

իլլիս վիշափու մաշկին, վերը բիրիս խանչալը, իննը գլօխը կըտրէս քալամու կօնդու նըման: Վիշապը ըսես ի. «Թաքավորի տըղա, ինձ սըպանի մն, իս տեղէն գինէլ իմ»: Տըղան ըսես ի. «Մետիլ գինես մին խէխճ ժողովորթու գըլխուն դնարգն դէռնիս», նո ըսես ի, խանչալավ ննս ան իրիքը գլօխն ալ կընթէս: Էտնէ վիր ը ըռէս վիշափուն գլօխնէրէն լուգուները հընէս, կըպես յալախամը, վիշափու ջնմդնքը տեղը մին մոծ քար ը նիս, դիրիս ի ննդնոր տակէն, գինես: Ան ց ը ննս մին խօր վախտ, Թաքավորը ննգիր-վնգիրը նոս ի, հոր ըխչկա ուսկուտները տանի թաղին, տըսնիս ին ախչիկի նըստած էրքէս ի, կուխկէն ալ վերըն դէռած վիշափու գլօխէն: Վնգիր ըսես ի. «Ախչի, նս հինչ նաղըլ ն»: Ախչիկն ըսես ի. «Մին աժղահա տըղա իկնլ ա սըպանալ գեցալ»: Ննգիր ըսես ի. «Լսէր, իս հինչ ըմ ըսէ քի. Հըղոս գինըլասկան ըմ մին տեղ գինէք: Համա դու մետիլ հորըտ ասիս, հոր վիշափուն իս իմ սըպանալ, թա չէ քի սըպանիլ իմ»: Թաքավորը ահած ը լն, հոր հու վիշափա սըպանի, քանէ սաղ ա ննլ ի ննդնոր իրա կէս Թաքավորութունը ըխչկան հետը, մէռնուլուց էտնէ սաղ Թաքավորութունը, չննքլի Թաքավորը տղա չի լն օնի: Թաքավորը, պալատականնէն տըսնիս ին, հոր Թաքավորու ախչիկի սաղ սալամաթ արաբու վերնն նըստած նոս ի: Ալընլահ պալատը դալմաղալ ը նընէս: Ննգիրի արաբան քիշիս ի հայաթը, վիշափա գլօխնէն ըծէս տափը, հոր օմմեն մինը մին գօմեշի գլխու դըղար ըն նիս: Ժողովորթը կուտ ուն նոս թամաշա. Ան ննգիր հոր ասած ա ինքնին ի սըպանած վիշափուն, ժողովորթուն ըսես ի. «Տեսալ ըմ վիշափը տանըրկու ըռէխն ալ չոածգինես ի դիրի ըխչկան, ախչիկի նալ հարայ տալավ լես ի: Ան սահաթամը ինձ վերն մին անդի գօր ը իկալ, հոր վիշափա սըպանալ ըմ: Ան խըսես վախտը Թաքավորի տղան ալ ժողովորթու մանչին ի նիս, հետ ը դըռնիս ըսես. «Պա նո վիշափուն լուգոն չի օնի»: Ննգիրի ըսես ի. «Վիշափը վխէլուց լուգոն կօլ ը տվալ»:

— Պն ջնմդնքը հօր ա:

— Ջամդաքըն ալ ցիքալ ըմ գօլը:

Թաքավորու տղան վեր ը դիրիս ձիքլէն հալախը, վիր ըռէս մին մին վիշափու գլօխէն օմէն մինի մանչին մին լուգոն դիրիս, ջնմդնքըն ալ, ըսես ի գօլոն դրաղը մին մոծ քար կան ննդնոր տակէն ի: Ան հոր Թաքավորու ախչիկի տըսնիս ի ըսես ի. «Հայրիկ ջան, ինձ փրկուղը և վիշափուն սըպանուղը նս տղան ա, ննգիրը սօտ ը ըսես. Ինձ ասալ ա հոր իս ասիմ, թն ինքին ի սըպանալ, թա չէ ինձ սըպանիլ ի: Իս ալ վխէլուց սօտ ըմ ասալ»: Ալընննլ Թաքավորը հրամայես ի ննգիր-վնգիրուն կախ տալ: Թաքավորը կընչիս ի տըղէտուն նորէն կօշտը, խըտտէս, պըչիս գըսես. «Տըղա ջան, իմ ախչիկիս ննս իմ էի, Թաքավորութունըն ալ հետը, հոր դու ազատալըս իմ Թաքավորութունը նոյի աղտէ»: Տըղանըսես ի. «Իս շետ շնորհակալ ըմ քիգ հէնի: Քու ախչիկտ իս կարի չիմ տանիմ և իրավունք չոնիմ, իս նիշէնված ըմ. Մինակ հոր դու խընդիս իս ինձ քօմնգ արիս, խնդրէս իմ ինձ ձիր աշխարքէն դոս բիրիս սիպտակ աշխարքը»: Թաքավորը ըսես ի. «Աս գուդու ան յանըմը ըպրէս ի մին արծիվ, տեղն ալ մին տըսնըզհանգ

գլխանէ վիշափ կա. Այդ վիշափը օմէն տարէ նոյն արծիփներու ճտերուն ըսես ի, հոր կարիս նոյն վիշափուն սրպանիս, նոյն արծիփսէն քիզ կարիլ ին հանին լիս աշխարք»: Տըղան ըսես ի. «Պա հուրդի գինէն ան յանը»: Թաքավորը ըսես ի. «Իս կարքադրիլ իմ տանին»: Մուրթիս ին էրկու գոմէշ, տէկ հընէս, մանջը փօսկ փիչիս տըռըզացնէս, մին կարմունջ շունի դիրիս վերան տղէյուն տըսնէս ան յանը: Թաքավորը տըղան գինէս ի ան ծառը գիդինիս, հիշտեղ հոր արծիփների բունըն նո տակէն պըրընէս, քօն նոյն: Մին ալ բիրդան քօսամը լիսիս ի, հոր արծիփներու բալանան ծըվօժըվաս ին, ակները բինիս ի տըսնիս հոր մին տըսնը-հինգ գըլխանէ վիշափ իլլիս ի ծառը, անտեղը շտեղ բունըն ա: Այ հոր տըսնիս ի, տըղան խանչալը քիշիս ի, մին տալավ վիշափա տըսսըռչուրք գլօխը կընթոս ի, մընաս ի մին գլօխը: Վիշափը ըսես ի. «Տղա ջան, էք ինձ սրպանի մէն»: Տըղան ըսես ի. «Պասըպանիմ ուզ հինչ արիմ. Չէ ձիր քօքի մետիլ կըտըրցանվի», ըսես ի նոյն ան վերջին գլօխն ալ կըտըրէս, ու վեր նընէս ծառուն տակէն քօն նոյն: Արծիփսէն նոյն ին տոն, տըսնիս ին, հոր ծառուն տակէն մին մարդ պըրանած, ըսես ին. «Միս նսիմ մեր դարավօր թըշնամիս, հոր մեր ճտերուն ըսես ի: Գինէս ին մին մոծ քար վիր ըռէս, բիցիրցնիս յերգիսքի, հոր անտեղէն ցիքին տըղէյուն վերան, սրպանին: Ճտերը նոյն տըսնիս ին, դալմադալը ցիքիս ին: Արծիփսէն նոյն ին ճտերուն կօշտը, ըսես նոյն հինչ դալմադալ ա. ճտերը ըսես ին. «Բա հինչ արիք, թուդ արիք հոր մեր փրկուտուն սրպանիք: Մին անց կացէքծառուն ան յանը տէսէք ան տղան հուրդի ի ջաննավարը սրպանած»: Արծիփսէն գինէս ին ծառուն ան յանը, տըսնիս ին, հոր մին տըսնըհինգ գլխանէ վիշափ կուտուրած, թափած: Արծիփսէրը մինը ձէխէն, մինը յաջէն նըստես ին տղէյուն կուխէն, թիվարը բինիս, պըռէս տղէյուն գլխուն, հոր արիվի վատի վուչ և թիվարավը քամէ ըրես, հոր տըղան անուշ քօն գու: Հոր ըսկըսես ի հրենակը մար մըտէ, տըղան քընըտեղէ վիր ի նոյն, ակնարը բինիսի, տըսնիս ի հոր մթէն ի, ըսես ի. «Պան, աս արդեն քիշեր ա»: Վիր ի նոյն վերան նըստես, բիրդան կըպես ի արծիվուն, արծիվը թիվարը կուտիս ի, անմինն ալ, տըղան տըսնիս ի կուխկերամը արծիփսէր նըստուտած: Արծիփսէն ըսես ին. «Այ տղան, դու մեր դարավօր թըշնամուց ազատալ ըս, ասա տըսնիք ինչ վարձատրութուն տաք քի»: Տըղան ըսես ի. «Իս մին բէն ըմ խընդիս ձիզ հենն. Ինձ տըրէցէք սիպտակ աշխարքը»: Արծիփսէն ըսես ին. «Դի-ժեր բէն ըս խընդիս, համա դէ հինչ արած, մետիլ տանիք: Մինակ դու բիր միզ հետա մուրթած էրկու գոմէշ, քառասուն ուխչարդի դիմակ, ադ տէկարը ջրավ լիցէր, նոյն օմէնը մեր էրկուսիս մաժտեղը քանդիր-ներավ կապեր միզ վերա, ինքիս մաժտեղէն նստեր մէք թոչիլ իք, հիր հոր գլօխնէս յաջ շոռ տաք, մեր բերանը ցիքիլ իս մին-մին դիմակ, իսկ հոր դիրի ձէխ շոռ տաք, մեր բերաննէն կուխիլ իս տէկի կուրթը»:

Տըղան գինէս ի Թաքավորուն նոյն ըսես, Թաքավորը հրամայէս ի, ադ օմէնը տընէս ին ան յանը, բիռնիս արծիփներուն: Տըղան գինէս ի պատավուն, նոյն Թաքավորուն ալ մնաս պարօվ ըսես ըխչկան հետ: Գինէս, նստես արծիփներուն վերան ու բիցրինիս երգիսք: Շետ ըն գինէս, թան խօր, աստված ը գիդիլ, շարու-

նակ տրդան արծիվսէրուն կէրակրէս ի: Արծիվսէն տրդէրուն հարցանք ըն ըրես:

— Հը՛, աշխարքը հինչո՛ւ՛ դըղւնն ւն. Տըղան ըսես ի.

— Մին արտու դղւնն ւն:

Այն անց ը նաս մին քանէ սհաթ, հարցանք ըն ըրես.

— Աշխարքը հինչի՛ դըղար ւն. տրդան ըսես ի.

— Մին կննն դղւնն ւն: Անց ը ննս ննն մին քանի վախտ, դուշարը հարցանք ըն ըրես. — Աշխարքը հինչի՛ դըղար ւն. տրդան ըսես ի.

— Մին ձվի դըղւնն ւն: Ան վախտը արծիվսէրը ըսես ին».

Մինչէվ հըրդա մեք բիցրինիս իք լնն, հըրդա մետիլ դնու թըռչիք. Դու մինակ սաս հիք հոր տէսնիլ իս աշխարքը մին արտու դըղւնն ւն դէռած»: Խօր ըն գի-նէս, թնն շետ, դուշարը հարցանք ըն ըրես.

— Հը՛, տըղա՛ ջան, աշխարքը հինչ դըղւնն ւն. տրդան ըսես ի.

— Մին մոծ արտու: Էտնէ դուշարը ըսես ին. «Հիք հոր տէսնիլ իս աշխարքը մին կննն չափ, մեզ սսիլ իս»: Այն անց ը ննս մին խիլս վախտ, դուշարը հար-ցանք ըն ըրես.

— Աշխարքը հինչի դըղար ւն. տրդան ըսես ի.

— Մին հավու ձվի դըղար ւն: Դուշարը ըսես ին. «Հըրդա մեք վեր իք ննս մին խօր ը մընաս հոր հասիք տափուն, արծիվից մինի գլօխը շոռ ը ննս դիքի յաջ, տղան բէն չի նիս հոր տա, մին ալ շոռ ննս, մին ալ, տըղան դէնակը ցիքիս ի ուրէն բուդէն մին մոծ կուտուր մէս կըտրէս, ցիքիս արծիվի բերանը, արծիվսէ-րը նըստես ին տափուն: Արծիվը ըսես ի տղէրուն. «Դէ գնէր տեսնիմ, տըղան կը-րես չի գիտէ. Արծիվի ըսես ի. «Շավարըտ հանէր մին տեսնիմ խսն լընգես իս: Տըղան շավարը հըրէս ի, արծիվի տընսիս ի, հոր մէսը կըտրած ւն. նըննն արծիվի իրնն բերանումը պահած մէսը դիքիս ի տըղէրու հաքուն, կըպես ի, տե-ղըն ալ չի մահում ըրես:

Արծիվսէն թըռչիս ին գիտես: Տըղան իգինքի թափ ը ննս, հղէն պըռնես գի-նէս, հըսես ան քաղաքը, հոր իրա թաքավոր հարի նի ըպրէս: Գիտես ի մինի կոշ-տի, ըսես հոր ուրէն վիք առի աշագերդ, մտէս ի ադնոր կօշտի: Արդէն իրիք տա-րէն անց ը լնն կահած:

Մեք հըրդա թուղ արիք տղէրուն մընա տեղըս, խոսիք ան տեղէն, հիք հոր Թաքավորու էրկու մոծ տղան քանդիրի կտրալ ըն, իրանց ախպուրը ցիքալ հու-րը: Ուրանց փիստէկ ախպոր նիշէնածուն ըսես ին, հոր Թաքավորը հարցանք արի, սսիլ իս հոր քանդիրի կըտըրվալ ա, վեր, ը նալ հուրը սըպանվալ, թնն չ»է քի սպանիլ իք: Մին քանէ օր Թաքավորը սուգ ը ըրես: Թաքավորի կընէկի մե-ռած ը նիս, խընդիս ի փըսակվի փիստէկ տղէրու նիշէնածուն վերան: Ախչիկի ըսես ի, հոր իրիք տարէն հետը կարիլ ի փըսակվի: Չոնգի հօյս օնի, հոր տը-ղան ադ ժամանակամիջոցում ննիլ ի:

Իրիք տարէն հոր անց ը ննս, մընաս ի իրիք օրը, ախչիկի Թաքավորուն ըսես ի. «Ինձ հետա մին դննյն իս կարիլ նալ, հոր անդնոր հուչ մըկրատ նի կը-պած, հուչ ալ սսուղ»: Թաքավորը կընչիս ի իրա ննգիր-վնգիրին, ըսես հոր մի

անստի դնրյան կարիլ տա: Ան քաղաքամըն ալ մին փինսաչէն դէն չաքմաչի չի նիս, ննգիր-վնգիրի գինես ի ան փինսնչն կօշտը, հրամմայես հոր մին անդի դնրյան կարի: Փինսչին ըսես ի. «Այ ջանըմ, ախիր իս դարգի չիմ, իս դնրյան հնորդի կարիմ»: Շագիրդը ըսես ի. «Վախի մէն, վիր առ, իս կարիլ իմ»: Ննգիր-վնգիրի գինես ի: Քիշերը ուստան հոր քօնը ննու, տըղան ան անգուզը մընդես ի, մանչին դնրյան հընէս, կախ ննս: Քիշերավ քըշան ննգիր-վնգիրին ննու ի դնրյան տանի, ուստան մընաս ի մնթնլ: Տըղան գինես ի ան մին օթախէն բիրիս նաս ննգիր-վնգիրին, ան ալ շվկլավ տըսնէս ի ննս Թաքավորուն, Թաքավորը տըսնէս ի նաս ըխչկան: Ախչիկի հոր դնրյան տըսնիս ի արխային ի դըռնիս, ինքի նորեն ըսես ի՝ ուրէմս իմ նիշէնսաժըս իկյննձ ա: Գինես ի Թաքավորուն կօշտը, ըսես, հոր մետիլ նորն հետա մին տուփիլ կարիլ տա, հոր հուչ մէխ նի կուփված, հուչ թիլավ կարած: Թաքավորը ըսես ի. «Պա նդ հուվ ը կարիլ», ախչիկի ըսես ի. «Հուվ հոր դնրյան կարալ ա»: Ննգիր-վնգիրուն դուրկիս ի ան փինսաչու կօշտը, հոր տուփի կարիլ տա: Փննչին ըսես ի. «Այ ջանըմ, իս փինսնչի մատդ ըմ, իս պա կարիլմ ննդի չնքմն կարիմ»: Քիշերը հոր ուստան քօն ը ննու տըղան ան էրկու փընդըը մընդես ի, մանչէն տուփիլսէն հընէս, դիրիսի ակուշկումը: Քիշերավ քըշան ննգիր-վնգիրան ննու ի տուփիլն տըսնէս: Ախչիկի ննդ նլ հոր տըսնիս ի, լափ արխային ի դըռնիս, ըսես ի Թաքավորուն հոր իմ հըրսընքավըս մետիլ մին անդի ճէշ իփուդ նի, հոր գիրէկ վատի, հուչ ալ բէն պադրաստի, համա օմմեն հինչ դօնաղներու ըռաշկին նի: — Ան հուվ ա կարիլ, — ըսես ի.

— Ան, հոր դնրյան ու տուփիլն կարալ ա: Թաքավորը ննգիր-վնգիրին դուրկիս ի փինսարու կօշտը: Տըղան վիր ի ննս, ննու ննգիր-վնգիրի նըհետ: Տըղան մտէս ի խօհանոցը, ան կուրէկ փետը թափ ննս, մին ալ տըսնիս է տոնը էրկուարաք հուտաց ըն կացալ ըռըշկին ու ասալ. «Մեր տէրը հինչ ի հրամմայես»: Տըղան ըսիս ի. «Շնոդ սէղան բէց ըրէցեք, հոր ըսկըսէն հացկերոյթը»: Ջոտնա դավալն ալ փիչէն, համա նորնք իրվան ուչ: Թաքավորը մընաս ի մաթնլ. «Այ բալամ, հուչ գրէկ ը վատած, հուչ ալ դագգան դիրած գիրէկուն, աս ճէշնրը շտեղէնի»: Հըրսանէքի հոր պըրծընէս ի ախչիկի ըսես ի. «Ինձ հետա մին շետ հետաքրքիր նաղըլ արիլ տօր»: Թաքավորը ըսես ի. «նդ հու կարիլ ի»: Ախչիկի ըսես ի. «Ան հօվ հոր աս խնջոյքը դէկավարալ ա»: Թաքավորը կնչիս ի փինսնչուն, ըսես գու մին նաղըլ ասի: Փինսնչին դըրկիս է տըղէյուն: Տըղան ննու ի Թաքավորուն կոշտը ըսես. «Թաքավորն ապրած կէնա իս հոր ըսկըսիմ նաղըլը, մետիլ օթախուն դուրքը կապիք, բիլննիս տաք իմ ձիքըս. Հուչ մինի իրավունք չօնի օթախէն դնու գու մինչն նաղըլուս պըծանիլի»: Թաքավորը ըսես ի՝ կատարէցեք ննսնր կամըր:

Տըղան ըսկըսես ի նս նաղըլը, հոր իս ձիգ արալ ըմ: «Իհարկէ, խնդի չիք, հոր իս աս նաղըլը մին նլ թնգնդնն արիմ: Համա հինչ արած, խընդիք ուչ իս մետիլ արիմ, չննքի հոր արիմուչ, բէն չի դնու ննլ»: Մեր տըղան նաղըլը ըրես, հիր հոր հըսես ի ան տեղուն, հոր ախպերքի քննդիրի կըտըս ին, նորնց ախպուրը ցիքիս հուրը, ախպերքը ըսես ին՝ փուրնէրս ցըվէս ի, իրավունք տօր գինէք չօլի:

Տրդան թուղ չի ըրես. Էտնէ տրդան նոն ի ան տեղուն, հոր ախապերնեն նոնս ին նորաց հորը, ըսես, թն քանդիրի կըտըրվալ ա, ախապերնէս նալ ա հուրը, մեք ալ կըրեցալ չիք հանիք, տեղըս ալ Թաքավորը կըրես չի նորէն պահի, վիր ը ննս փիստեկ տղեյուն խըտտես, ըսկըսես պըչպչուտիլ, ըխչկանը կօնը պոնէս ի ննս փիստեկ տղեյուն ու թնգնդնն ըսկըսես ին հըրսանէքը: Թաքավորը հրամայես ի էրկու մոծ տղերանց բընտարկին, հոր մետիլ հըրսընէքէն հետո կախ տան: Փիստեկ տղան ըսես ի. «Հայրիկ ջան, իս նոնոց ներիս իմ, բանտարկիլ մնն, սխալված ըն»:

Թաքավորը ըսես ի. «Դուվ ըս գիդիս, հինչ ըրես իս արա, ասուրվանից Թաքավորը դուվ ըս»: Թաքավորը գլխէն թագը վիր ը ըրես, դիրիս փիստեկ տղեյուն գլխուն:

ՀԱՎԵԼՎԱԾ II

ԱՍԱՑՈՂՆԵՐԻ ԵՎ ԲԱՆԱՀԱՎԱՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՍԱՑՈՂՆԵՐ

Գուսան Աթան (Աթա Սուջոյի Սայիլյան) ծնվել է 1852 թվականին Քարաշեն գյուղում (այժմ՝ Սյունիքի մարզ)։ Աշուղական արվեստը սովորել է Ղարաբաղի Ղարաղջլաղ գյուղացի, հայտնի աշուղ Հաթամի մոտ։ Ստեղծագործել է հայերեն և ադրբեջաներեն։ Հորինել է խրատական և երգիծական երգեր, կատարել աշուղական հին երգեր ու ասքեր։ Գուսանություն է արել 1875 թվականից մինչև 1935 թվականը՝ շուրջ 60 տարի։ Գուսան Աթան իր երգերով հանդես է եկել Անդրկովկասում, Թուրքիայում, Իրանում, Սիրիայում։ Նվագել է սագ և ջութակ։ Նրա հորինած երգերից են «Զորավար Անդրանիկ», «Ընծա հավը», «Երգ Կիրովի մասին» (40 տուն), «Մի ողբերգություն», «Նաբաթխանում»։ 1918 թվականին կամավորների զինված ջոկատը հասցրել է Անդրանիկի գործերին։ Գուսան Աթան խոսքաշեն մարդ էր։ Իր խոսքը միշտ համեմուն էր ժողովրդական բառուբանով։ Ս. Խանզադյանը նրանից բավականաչափ բանահյուսական նյութեր է գրառել՝ «Կաքավը և աղվեսը», «Քաչալը, իր հայրն ու խանը», «Թագավորն ու աղքատը», «Կառապանն ու տերը», «Այգեպանը, իր որդին ու օձը» և այլն։ Մահացել է 1942 թվականին։

Գուսան Աշուղ (Աշոտ Հայրապետի Դադայան) ծնվել է 1907 թվականի ապրիլի 25-ին Գորիսում։ Եղել է գառնարած։ Վաղ հասակում զրկվել է մորից։ 1921 թվականին տեղափոխվել է Բաքու, ավագ եղբոր մոտ։ Սովորել է Բաքվի բաներիս դպրոցում։ 1928 թվականին վերադարձել է Զանգեզուր և զբաղվել գուսանությամբ։ 1948 թվականին բնակություն է հաստատել Երևանում։ 1958 թվականից եղել է ԽՍՀՄ գրողների միության անդամ։ 1967 թվականին Գուսան Աշուտին շնորհվել է ՀԽՍՀ ժողովրդական արտիստի կոչում։ Իր ղեկավարած անսամբլով համերգներ է տվել ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս։ Ս. Խանզադյանը Գուսան Աշուտին համարում էր համուռոտով զրուցակից և նրանից գրառել է «Գայլը, աղվեսը և ուղտը», «Հիմար տերտերն ու արջը», «Սոված հյուրը և ժլատ տանտերը» և այլ հեքիաթներ։

Սուլթան-բաջին (Սուլթան Գևորգյան) 1870–1943, գրագիտությունից զուրկ, բայց գեղեցկատես, շնորհալի, համարձակ ու ազդեցիկ կլին էր, ով հաճախ էր աղ ու հացով դիմավորում Գորիս մտնող պատվավոր հյուրերին։ Նա երեխաներ չի ունեցել, բայց խնամել է ավելի քան 17 մանկահասակ որբերի ու չքավորների և հասցրել իրենց նպատակին։ Նա հռչակավոր գորգագործ էր։ Նրա գործած «Անիի ավերակներում նստած սգավոր հայ կինը», «Հայր Աբրահամը զոհաբերում է իր միակ որդի Իսահակին» գորգերի հռչակը Զանգեզուրից շատ հեռու է գնացել, գովաբանվել հե-

ռավոր ամերիկյան մամուլում: Սուլթան-բաջու դիմանկարը գտնվում է Հայաստանի պատմության թանգարանում, տրված է որպես զանգեզուրցի կնոջ հատուկ տիպար: Մահացել է 1943 թվականին Երևանում:

Փեփրոնե Տեր-Մինասյան – ծնվել է 1863 թ., Զանգեզուրի Մեղրի գյուղի Մեծ թաղում: Բանահավաք Զարեհ Տեր-Մինասյանի հորեղբոր աղջիկն է:

Պատմել է հրաշապատում հեքիաթներ: Զարեհ Տեր-Մինասյանը Մեղրի հեքիաթների մի մասը գրի է առել նրանից՝ 1963–1964 թ. Երևանում, վերհիշելով դեռևս մանկության տարիներին Փեփրոնեից լսած հեքիաթները: Դրանցից են՝ «Իրեքը նաղլը», «Իմաստուն թաքավորը», «Չօբանա նաղլը» և այլն:

Փեփրոնե Տեր-Մինասյանը մահացել է 1967 թ., դեկտեմբերի 1-ին, 104 տարեկանում:

ԲԱՆԱՀԱՎԱԹՆԵՐ

Մուշեղ Գևորգյանը ծնվել է 1901թ. հացի փոխ տեր Խաչատուրի և տնային տնտեսուհի Բախչագյուլի ընտանիքում: Նա իրենց բազմանդամ ընտանիքի ինը երեխաներից 6-րդն էր: Մուշեղ Գևորգյանը զինվորական էր: 1927 թ.-ից դասակի հրամանատարի պաշտոնով ծառայել է հին հայկական հրաձգային գնդում: 1967–1969 թվականներին նա կատարել է գրառումներ, վերհիշելով դեռևս 1917–1920 թվականներին լսած նյութերը: Զանգեզուրից գրառել է շուրջ 1600 միավոր բանահյուսական նյութ, մեծ թվով առակներ և անեկդոտներ, ինչպես նաև կազմել է բարբառային բառերի բացատրական բառարան, «Հիշողություններ ժամանակի իրադարձություններից. Անդրանիկ փաշայի գործունեությունը Գորիսում», որը գրառել է ասացող՝ Ասատուր Տեր-Գևորգյանից, ով բանահավաք Մուշեղ Գևորգյանի հորեղբայրն էր և բանասաց Սուլթան Գևորգյանի (Սուլթան-բաջի) ամուսինը:

Սերո Խանգաղյանը ծնվել է 1915 թվականի նոյեմբերի 20-ին (դեկտեմբերի 3) Գորիսում: 1934 թվականին ավարտել է Գորիսի մանկավարժական տեխնիկումը, 1934–1941 թվականներին զբաղվել է ուսուցչությամբ: Աշխատել է Գորիսի շրջանի Տաթև և Խնածախ գյուղերում: Մասնակցել է Հայրենական Մեծ պատերազմին (1941–1945): 1950 թվականից եղել է ԽՍՀՄ գրողների միության անդամ: 1972 թվականից գրական խորհրդական է եղել Հայաստանի խորհրդային գրողների միությունում: 1974 թվականից ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ:

1936–1947 թվականներին թվականներին Գորիսից և շրջանի գյուղերից հավաքել է տարբեր ժանրերի մեծաթիվ բանահյուսական նյութեր, որոնք պահվում են ՀՀ ԳԱԱ ՀԱԻԲԱ-ի արխիվում: Մահացել է 1998 թվականի հունիսի 26-ին Երևանում:

Զարեհ Տեր-Մինասյանը ծնվել է 1884 թ. փետրվարի 2-ին Զանգեզուրի Մեղրի գյուղի Մեծ թաղում: Հայրը գրագետ մարդ էր՝ տիրապետում էր գրաբար և աշխարհաբար լեզուներին: Նա եղել է Տիֆլիսի առաջնորդի գրագիրը:

1890 թ. հայրը նրան ուղարկում է գյուղի դպրոց, իսկ 1893 թ. Բաքու՝ ուսումնառությունը շարունակելու:

1904 թվականին մտնել է զինվորական ծառայության: 1907 թվականին զորացրվել է: 1914 թվականին կրկին զորակոչվել է և կովել է Սարիղամիշի ճակատում: 1916 թվականին վիրավորվել է և բուժվել Թիֆլիսի ռազմական հիվանդանոցում:

Գրի է առել մեծաթիվ բանահյուսական նյութեր: Մեղրի հեքիաթները գրի է առել 1963–1964 թվականներին Երևանում, վերհիշելով հորաքույրների՝ Եղիսաբեթի և Շողակաթի և հորեղբոր աղջկա՝ Փեփրոնե Տեր-Մինասյանի պատմածները:

Արտաշես Նազինյանը ծնվել է 1924 թ. փետրվարի 23-ին ՀՀ Տավուշի մարզի (նախկին Իջևանի շրջան) Աչաջուր գյուղում: 1941 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1941–1942 և 1944–1948 թթ. սովորել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետում:

1942–1944 թթ. զորակոչվել է Խորհրդային բանակ: Վիրավորվելուց հետո զորացրվել է և շարունակել ուսումնասիրությունը Համալսարանում: Արժանացել է «Կարմիր աստղ», Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանների, պարգևատրվել հոբելյանական մեդալներով:

1953 թ. «Սովետահայ գրականությունը և ժողովրդական բանահյուսությունը» թեմայով պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Այն Ա. Նազինյանի առաջին գիտական մենագրությունն էր, որը լույս է տեսել 1954 թ.:

1960–1999 թթ. Ա. Նազինյանը աշխատել է ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում՝ իբրև Բանահյուսության բաժնի վարիչ, որտեղ երկար տարիներ լայնորեն կիրառել է իր փորձն ու իմացությունը, հանդես եկել որպես գիտության հմուտ կազմակերպիչ:

1959 թ. տպագրվում են Հայ ժողովրդական հեքիաթների I և II հատորները՝ Ա. Նազինյանի աշխատասիրությամբ և Հ. Օրբելու ընդհանուր խմբագրությամբ (հետագայում հ. III–XV, 1962–1999) Ա. Նազինյանի ընդհանուր խմբագրությամբ և մասնակցությամբ), որոնք ընդգրկում են Հայաստանի պատմաազգագրական բոլոր շրջաններից հավաքված տպագիր և անտիպ նյութերը: Ա. Նազինյանը մասնակցել է նաև Հայ ժողովրդական հեքիաթների XVI հատորի կազմման աշխատանքներին, որը լույս է տեսել 2009 թ.-ին, իր մահից հետո:

1970–2000 թթ. նա «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի պատասխանատու խմբագիրներից էր: 1970–2000 թթ. նա «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի պատասխանատու խմբագիրներից էր:

1967 թ. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատողներից կազմված Զանգեզուրի բանահյուսական խմբաբաժնի ղեկավարն էր (անդամներ՝ անդամներ՝ Սարգիս Հարությունյան, Ժենյա Խաչատրյան, Վեներա Սահակյան):

Ա. Նազինյանը վախճանվել է 1999 թ. օգոստոսի 2-ին Երևանում:

Արամ Մարգարյանը ծնվել է 1927 թվականին: Ավարտել է Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտը: Արամ Մարգարյանը բանահյուսական նյութեր է գրառել 1948–1972 թվականներին Տաթև, Քաջարան, Ղափան, Խնձորեսկ քնակավայրերից: Հեքիաթների մեծ մասը լսել հորից՝ Արտեմից, բայց գրառել է 1972 թվա-

կանին Բաքվում քրոջ՝ Ծաղկավարդ Գևորգյանի վերապատմությամբ: Արամ Մարգարյանի ֆոնդում պահպանվում են գրառումներ՝ կատարված Բաքվում 1980–1990 թվականներին: Եղել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և Ազգագրության ինստիտուտի հայցորդ: 1996 թվականին պաշտպանել է «Զանգեզուրի բանասիրությունը/ Գորիս-Կապան» թեմայով ատենախոսությունը, ստացել գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Միքայել Առաքելյանը ծնվել է 1926 թ.-ին, Ասկերանի շրջանի Դաշբուլաղ (այժմ՝ Աստղաշեն): գյուղում: Ավարտել է Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտը, եղել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և Ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, բանահավաք: Գրառումներ է կատարել Արցախում և Սյունիքում 1940-ական թվականներից մինչև 80-ականները: Միքայել Առաքելյանը հավաքել է բազմաժանր բանասիրության կյուրեր՝ հեքիաթներ, ավանդություններ, առակներ, անեկդոտներ, հորովելներ և այլն, որոնք գրառել է Ստեփանակերտում, Շուշիում, Ղարաբաղի Ներքին Հռոպթաղ, Տումի, Բադարա, Մեծ Թաղլար, Կարմիր Շուկա, Խնձրիստան, Ղշլաղ գյուղերում, ասացողներ՝ ՄԻշա Ավանեսյանից, Արսեն Պետրոսյանից, Արշակ Բաղդասարյանից, Աստղիկ Առաքելյանից, Գրիգոր Սարգսյանից և այլն: Գրառումներ է կատարել Գորիսի և Սիսիանի Հարժիս, Վերին Շեն, գյուղերում՝ Թևոս Միրզոյանից, Միքայել Փանջունցից, Վարդան Մաշուրյանից, Գուրգեն Աղամյանից, Հարություն Քաթանյանից, որոնք պահպանվում են ՀՀ ԳԱԱ ՀԱԻ FF V ֆոնդում: Մահացել է 1990 թ.-ին:

Վեներա (Արուսյակ) Սահակյանը ծնվել է 1941 թ. Ախուրյանի շրջանի Երազգավորս գյուղում: Ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը, այնուհետև ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ասպիրանտուրան: Բանահավաք, բանագետ է, բանասիրական գիտությունների թեկնածու, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, դոցենտ, մշակույթի վաստակավոր գործիչ: 1967թ. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատողներից կազմված Զանգեզուրի բանասիրության խմբարշավի անդամ:

Սարգիս Հարությունյանը ծնվել է 1928 թ. սեպտեմբերի 22-ին Շիրակի մարզի Ղազանչի գյուղում: 1952 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի արևելյան լեզուների և գրականության բաժինը: Բանասեր-բանագետ, Բանասիրական գիտությունների դոկտոր (1971), ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ (2000) էր: 1959–1960 թվականներին աշխատել է ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում, որպես կրտսեր գիտաշխատող, 1960–1962 թվականներին՝ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կրտսեր, 1962–1972 թվականներին՝ ավագ գիտաշխատող, 1992–2006 թվականներին՝ փոխտնօրեն: 1994 թվականից ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, 1972 թվականից՝ բաժնի վարիչ, 2006 թվականից՝ ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրա-

կան հանդեսի» գլխավոր խմբագիր: Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործիչ էր: 1967թ. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատողներից կազմված Զանգեզուրի բանահյուսական խմբարշավի անդամ:

Երկար տարիներ Սարգիս Հարությունյանը Հանրապետության տարբեր բուհերում դասախոսել է «Հայ ժողովրդական բանահյուսություն», «Հայ առասպելաբանություն» և «Հայ հին գրականություն» առարկաները: Տարիներ շարունակ եղել է գիտական տարբեր խորհուրդների անդամ, ղեկավարել է թեկնածուական ատենախոսություններ, եղել դոկտորական ատենախոսությունների գիտական խորհրդատու, ընդդիմախոսել դոկտորական ու թեկնածուական բազմաթիվ ատենախոսություններ:

Մահացել է 2019 թ. հունվարի 28-ին Երևանում:

Ժենյա Խաչատրյանը ծնվել է 1930 թ. Նոր Բայազետում (այժմ՝ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում): Ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Մասնագիտացել է հայ էթնոպարագիտության հիմնադիր, պատմական գիտությունների դոկտոր Սրբուհի Լիսիցյանի ղեկավարությամբ: Ունի էթնոպարագիտության ասպարեզին վերաբերող տեսական և մեթոդաբանական 120-ից ավելի հոդվածներ, մեկ ժողովածու, երկու մենագրություն և երկու մեթոդական ձեռնարկ: Աշխատանքային գործունեության ընթացքում վերականգնել ու ցուցադրել է տարբեր գավառներին բնորոշ ժողովրդական պարեր (Մուշ-Տարոն, Մասուն, Վասպուրական, Շատախ, Շիրակ, Համշեն, Պարսկահայք, Կարին-Ջավախք և այլն):

Դասախոսություններ է կարդացել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, Կինոյի և թատրոնի պետական ինստիտուտում, Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում, հայ-ռուսական պավոնական համալսարանում՝ վարելով տարագի ու կենցաղի պատմություն, Պարի տեսություն և մեթոդիկա, Տոներ, ծեսեր, սովորություններ դասընթացները:

Աշխատանքային գործունեության ընթացքում գրանցել է Հայ ազգագրությանը, էթնոպարագիտությանը, ժողովրդական թատրոնին, շարժական խաղերին ու հավատալիքներին վերաբերող ծավալուն նյութ:

1967թ. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատողներից կազմված Զանգեզուրի բանահյուսական խմբարշավի անդամ:

Մահացել է 2018 թ. Երևանում:

Միքայել Ավյանը ծնվել է 1919 թ. Սիսիանի շրջանի Ախլաթյան գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է Դիլիջանում, որից հետո աշխատել է Սիսիանի շրջանային թերթում: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, վիրավորվել, ապա զորացրվել որպես պահեստի լեյտենանտ:

Երկար տարիներ աշխատել է իբրև շրջանային կուլտուրայի տան տնօրեն, ապա՝ շրջանային թերթի գրական աշխատող: Երևանի պետական համալսարանի

բանասիրական ֆակուլտետն ավարտելուց հետո աշխատել է ուսուցիչ, ժողկրթ-
բաժնի մեթոդկարինետի վարիչ՝ միաժամանակ խմբագրելով տեղական ռադիոհա-
ղորդումները: Բանահավաքչությամբ սկսել է զբաղվել պատանի հասակից, սա-
կայն հավաքած նյութերի զգալի մասը Հայրենական պատերազմի օրերին ոչնչացել
է գյուղում:

1969 թվականից եղել է ԽՍՀՄ Ժուռնալիստների միության անդամ:

ՄՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ¹²⁴

- V – III հազ. մ. թ. ա. – Ուղտասարի ժայռապատկերները
II հազ. մ. թ. ա. – «Զորաց քարեր» հնավայրը Սիսիանում
II հազ. կեսեր մ. թ. ա. – Գեղամ նահապետի ապրած ժամանակը
II հազ. վերջ մ. թ. ա. – Սիսակ նահապետի ապրած ժամանակը
VIII դար մ. թ. ա. – Սյունիքի միացումը Ուրարտու-Արարատին
VII դարի սկիզբ մ. թ. ա. – Ուրարտական Արգիշտի II թագավորի սյունիքյան արձանագրությունը
680 թ. մ. թ. ա. – Սկյութների ներխուժումը Սյունիք (ըստ Ն. Ադոնցի)
II դար մ. թ. ա. – Արտաշես I Բարի արքայի սյունիքյան սահմանաքարը
301 – Սյունյաց իշխանի մկրտվելը Արածանի գետում
320 – Սյունյաց հոգևոր թեմի հիմնումը
360 – Սյունյաց մետրոպոլիտոսության հռչակումը
IV դարի II կես – Տիգրանի կործանումը Անդոկ Սյունու կողմից
441 – 452 – Վասակ Սյունին հայոց մարզպան
VI դար – Սիսավանի (Սիսիան) Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցումը
624 – Բյուզանդական Հերակլ կայսրը Սյունիքում
735 հուլիսի 21 – Ստեփանոս Սյունեցու սպանությունը Մոզ ավանում
839 – Սյունյաց հոգևոր առաջնորդարանի տեղափոխումը Տաթև
874 – Սյունյաց իշխանուհի Մարիամի հովանավորությամբ Սևանա կղզու եկեղեցիների կառուցումը
IX դարի II կես – Սյունյաց իշխանության վարչական կենտրոնի տեղափոխումը Շաղատից Եղեգիս
885 – 906 – Տաթևի վանքի Պողոս-Պետրոս Մայր եկեղեցու կառուցումը
911 – Վահանավանքի կառուցումը
932 – Ակներ-Ցաքուտ ջրանցքի շինարարությունը
989 – «Էջմիածնի ավետարան» ձեռագրի ծնունդը Բղենո Նորավանքում
970 – 1170 – Սյունիքի թագավորությունը
1103 – Չորթմանի կողմից Կապանի գրավումը
1170 – Սյունյաց թագավորության անկումը
1211 – Սյունիքի ազատագրումը և Օրբելյան իշխանական տան հիմնումը Սյունիքում
1216 – 1223 – Ամադուի Նորավանքի կառուցումը
1251 – Սմբատ Մեծ Օրբելյան իշխանի I ուղևորությունը Կարակորում

¹²⁴ Ըստ Գր. Գրիգորյանի և Ս. Հախվերդյանի «Սյունիքի պատմություն» գրքի, էջ 254–257:

- 1256–Սմբատ Մեծ Օրբելյան իշխանի II ուղևորությունը Կարակորում
XIII դարի II կես–Հոգևոր առաջնորդարանի հաստատումը Ամաղուի Նորավանքում
- 1282–1345–Գլաձորի համալսարանի գործունեությունը
- 1303–Ստեփանոս Օրբելյանի մահը
- 1345–1435–Տաթևի համալսարանի գործունեությունը
- 1386 հունվարի 6–Հովհաննես Որոտնեցու մահը
- 1410–Գրիգոր Տաթևացու մահը
- 1450–Օրբելյան իշխանական տան անկումը
- 1450–Քաշաթաղի մելիքության հանդես գալը
- 1608–1610–Հալիձորի Հարանց անապատի հիմնադրումը
- 1615–1620–Մովսես Տաթևացու (Խոտանացու) գործունեությունը Հարանց Մեծ անապատում
- 1699–Անգեղակոթի ժողովը
- 1711–Իսրայել Օրու մահը Աստրախանում
- 1722–1730–Ազատագրական պայքարը Սյունիքում Դավիթ-Բեկի գլխավորությամբ
- 1727–Հալիձորի ճակատամարտը
- 1736–Աբրահամ Կրետացի կաթողիկոսի այցը Սյունիք
- 1805–Ջանգեզուրի միացումը Ռուսաստանին
- 1822–Ղարաբաղի պրովինցիայի ստեղծումը
- 1828–Մեղրու շրջանի միացումը Ռուսաստանին
- 1840–Շուշիի գավառի ստեղծումը
- 1848–I պղնձաձուլական գործարանի կառուցումը Կապանում
- 1849–1868–Ջանգեզուրը Երևանի նահանգի կազմում
- 1868–Ելիզավետպոլի նահանգի Ջանգեզուր գավառի ստեղծումը
- 1870–Գավառակենտրոն Գորիս քաղաքի հիմնադրումը
- 1881–Մեղրու դպրոցի հիմնումը Բաֆֆու ջանքերով
- 1898–Ջանգեզուրում I ՀԷԿ-ի կառուցումը Վարարակն գետի վրա
- 1903–«Սասուն» տպարանի հիմնումը Գորիսում
- 1909–«Գավառ» թերթի հրատարակությունը
- 1918–Ջանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի ստեղծումը
- 1918 հուլիսի 20–Ջորավար Անդրանիկի մուտքը Ջանգեզուր
- 1919 հունվարի 21–Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը Ջանգեզուրը Հայաստանի կազմում ճանաչելու մասին
- 1919 մարտի 25–Անդրանիկի մեկնումը Ջանգեզուրից
- 1919 մայիս–Շատելվորտի պատվիրակության այցը Ջանգեզուր
- 1919 օգոստոս–Գարեգին Նժդեհի ժամանումը Ջանգեզուր

- 1919 նոյեմբերի 1 – Գններալ Շիխլինսկու բանակի հարձակումը Ջանգեզուրի վրա
- 1919 նոյեմբերի 15 – դեկտեմբերի 1 – Նժդեհի ռազմական գործողությունները Ողջու և Գեղվա ձորերում
- 1920 հուլիսի 3 – Խորհրդային իշխանության ժամանակավոր հաստատումը
- 1920 դեկտեմբերի 25 – Ինքնավար Սյունիքի հռչակումը
- 1921 ապրիլի 27 – Լեռնահայաստանի հռչակումը
- 1921 հունիսի 1 – Լեռնահայաստանի վերանվանումը Հայաստան և նոր կառավարության կազմումը՝ Ս. Վրացյանի գլխավորությամբ
- 1921 հուլիսի 12 – Ջանգեզուրի խորհրդայնացումը
- 1921 օգոստոսի 31 – Ջանգեզուրի և Մեղրու գավառների ստեղծումը
- 1930 սեպտեմբերի 9 – Կապանի, Սիսիանի, Գորիսի և Մեղրու շրջանների ստեղծումը
- 1921–1930 – Գավառային «Կարմիր ռանչպար» թերթի հրատարակումը
- 1927–1932 – Կապան – Մինջևան երկաթուղու կառուցումը
- 1931 ապրիլի 27 – Ուժեղ երկրաշարժ Ջանգեզուրում
- 1936 մայիս – Կապանի պղնձահանքային հարստացուցիչ ֆաբրիկայի գործարկումը
- 1936 – Շաքիի ՀԷԿ-ի գործարկումը
- 1938 – Կապանի հռչակումը քաղաք
- 1951 – Քաջարանի հանքահարստացուցիչ ֆաբրիկայի գործարկումը
- 1962–1970 – ՀԷԿ-երի համակարգի գործարկումը Որոտան գետի վրա
- 1967 – Բուհական մասնաճյուղի բացումը Գորիսում
- 1974 – Սիսիանի՝ քաղաքի կարգավիճակ ստացումը
- 1984 – Մեղրի ավանին քաղաքի կարգավիճակ շնորհումը
- 1988 փետրվարի 22 – Արցախյան շարժման I ցույցը Գորիսում
- 1989 – Սյունյաց հոգևոր թեմի վերաբացումը
- 1990–1993 – Սյունիքը արցախյան պատերազմի թատերաբեմ
- 1993 սեպտեմբեր – հոկտեմբեր – Հարթավայրային Սյունիքի ազատագրումը
- 1993–1995 – «Սյունիք-Ջանգեզուր» հատուկ ծրագրի աշխատակազմի գործունեությունը
- 1995 դեկտեմբերի 4 – ՀՀ Սյունիքի մարզի ստեղծումը Կապան մարզկենտրոնով:

ԾԱՆՈԹ-ԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հրաշապատում հեքիաթներ

1. Թաքավերին իրեք ախճիկը

Տպագրվում է առաջին անգամ:

Գրի է առել Արամ Մարգարյանը 1979 թ.-ին, Բաքվում, Սիսիանի շրջանի Բարձրական գյուղի գյուղացի 63-ամյա Փառանձեն Մովսիսյանից:

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում (այսուհետ՝ ՀԱԻԲԱ):

Համապատասխանում է Աարնե-Թոմփսոն-Ույթերի (այսուհետ՝ ATU) «Միջազգային հեքիաթների տիպերը» նշագանկի ATU 828*** թվահամարին:

2. Լավությունը օցն ալ ա հսկանում

Տպագրվում է առաջին անգամ:

Գրի է առել Արամ Մարգարյանը 1979 թ.-ին, Բաքվում, Գորիսի շրջանի Տանձատափ գյուղի գյուղացի 55-ամյա Լուսիկ Մովսիսյանից:

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ-ում (չմշակված ֆոնդ):

Համապատասխանում է «Միջազգային հեքիաթների տիպերը» նշագանկի ATU-ՀԺՀ 505 թվահամարին:

3. Էս կլիսան, թա էն կլիսան

Տպագրվում է առաջին անգամ:

Գրի է առել Արամ Մարգարյանը 1982 թ.-ին, Անտառաշատում, Կապանի շրջանի Անտառաշատ գյուղի գյուղացի 59-ամյա Անուշավան Մարգարյանից: Բանասացը սովորաբար կրի դավար է և հայտնի որսորդ:

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ-ում (չմշակված ֆոնդ):

Համապատասխանում է «Միջազգային հեքիաթների տիպերը» նշագանկի ATU 938 թվահամարին:

4. Գյաբա կյործողը

Տպագրվում է առաջին անգամ:

Գրի է առել Արամ Մարգարյանը 1979 թ.-ին, Բաքվում, Գորիսի շրջանի Տանձատափ գյուղի գյուղացի 55-ամյա Լուսիկ Մովսիսյանից:

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ-ում (չմշակված ֆոնդ):

5. Մենակյացն ու քամին

Առաջին անգամ տպագրվել է Հայ ժողովրդական հեքիաթների (այսուհետ՝ ՀԺՀ) գիտական հրատարակության VII հատորում (Երևան, 1979, էջ 544):

Գրի է առել Սերո Խանգաղյանը 1938 թ.-ին, Քարաշեն գյուղի գյուղացի Հարություն Մարտյանից:

Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ FF II 4922–4927 ֆոնդում:

Համապատասխանում է «Միջազգային հեքիաթների տիպերը» նշագանկի ATU 841 թվահամարին:

6. Օվջի Օղլին

Տպագրվում է առաջին անգամ:

Գրի է առել Սերո Խանգաղյանը 1940 թ.-ին, Գորիսից, ասացողը՝ անհայտ:

Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ FF II 5030–5035 ֆոնդում:

Համապատասխանում է «Միջազգային հեքիաթների տիպերը» նշացանկի ATU 554 թվահամարին:

7. Մագբանդը

Տպագրվում է առաջին անգամ:

Գրի է առել Սերո Խանգաղյանը 1940 թ.-ին, Խաչիկ Գևորգյանից: Գրառման վայրի մասին տեղեկությունը բացակայում է:

Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ FF II 4690–4699 ֆոնդում:

8. Կարիչ տղան

Առաջին անգամ տպագրվել է ՀԺՀ VII հատորում (էջ 411–416):

Գրի է առել Սերո Խանգաղյանը 1947 թ. հունվարին, Գորիսում: Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Պատմել է Խանածախ գյուղից Գորիս ներգաղթած Անուշ Լալայանը, 63 տարեկան, անգրագետ կոլխոզնիկ, որն այժմ չի աշխատում: Նա լսել է իր հորից՝ Մինասից: Երեխա ժամանակ շատ հեքիաթներ է լսել, սակայն մոռացել է: Հեքիաթը նման է «Սասնա ծռեր» էպոսի տարբերակներից մի քանիսին (Ծովի Ջալալ, Խաթուն Խանում, Ջիու ծովից ելնելը, Խորթ հոր պատմությունը և այլն): Հետաքրքիր է այս հեքիաթը նաև նրանով, որ իր բնույթով ու ծագումով հայկական է, եթե ոչ ամբողջովին, գոնե հիմնականում» (ՀԱԻԲԱ FF II 6099 ֆոնդ):

Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ FF II 6101–6118 ֆոնդում:

Համապատասխանում է «Միջազգային հեքիաթների տիպերը» նշացանկի ATU 552 թվահամարին:

9. Թաքավորի տղան

Առաջին անգամ տպագրվել է ՀԺՀ VII հատորում (էջ 417–424):

Գրի է առել Սերո Խանգաղյանը 1947 թ. հունվարին, Գորիսում: Պատմել է Անուշ Լալայանը: Բանահավաքը վկայում է, որ Ա. Լալայանն այս հեքիաթը մանկության տարիներին լսել է հորից՝ Մինասից:

Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ FF II 6119–6141 ֆոնդում:

10. Ուսկե խնձորուն նաղլը

Առաջին անգամ տպագրվել է ՀԺՀ VII հատորում, Լ. Աղայանի բարբառային տառադարձությամբ (էջ 585–597):

Գրի է առել Զարեհ Տեր-Մինասյանը 1963–1964 թթ.-ին, վերհիշելով հորաքրոջ՝ Եղիսաբերթի՝ իր մանկության տարիներին պատմածը:

Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ FF IV 1929–1954 ֆոնդում:

Իրապատում հեքիաթներ

1. Փող ունես, սոթրթ անց կկենսա

Տպագրվում է առաջին անգամ:

Գրի է առել Արամ Մարգարյանը 1981 թ.-ի աշնանը, Բաքվում, Գորիսի շրջանի Տաթև գյուղի գյուղացի, 75-ամյա Արշալույս Զոհրաբյանից:

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ-ում:

Համապատասխանում է «Միջազգային հեքիաթների տիպերը» նշագանկի ATU 910 անթվահամարին:

2. Գուրգյար Հասուն

Տպագրվում է առաջին անգամ:

Գրի է առել Արամ Մարգարյանը 1981 թ.-ի աշնանը, Բաքվում, 56-ամյա Թեման Չալյանից: Ասացողը մանկագիր է, եղել է հեռուստահաղորդումների հայկական ծրագրի խմբագիր:

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ-ում:

Համապատասխանում է «Միջազգային հեքիաթների տիպերը» նշագանկի ATU 745 A թվահամարին:

3. Ըշխարքի տերը

Տպագրվում է առաջին անգամ:

Գրի է առել Արամ Մարգարյանը 1982 թ.-ին, Քաջարանում, Գորիսի շրջանի Տանձատափ գյուղի գյուղացի 56-ամյա Գրիշա Մկրտչյանից:

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ-ում:

4. Թագավորը, այգեպանն ու օձը

Առաջին անգամ տպագրվել է ՀԺՀ VII հատորում (էջ 501):

Գրի է առել Սերո Խանգաղյանը 1938 թ.-ին, Գորիսի շրջանի Քարաշեն գյուղի գյուղացի Աշուղ Աթայից: Բանասացի մասին կա հետևյալ ծանոթագրությունը. «... բացի այն, որ նշանավոր աշուղ է, նաև նշանավոր առակասաց ու զվարճարան է, անթիվ, անհամար հեքիաթներ, առակներ և այլ նյութեր գիտի»:

Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ FF II 4906–4911 ֆոնդում:

5. Քաչալը, իր հայրն ու Խանը

Առաջին անգամ տպագրվել է ՀԺՀ VII հատորում (էջ 542):

Գրի է առել Սերո Խանգաղյանը 1938 թ.-ին, Գորիսի շրջանի Քարաշեն գյուղի գյուղացի Աշուղ Աթայից:

Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ FF II 4916–4921 ֆոնդում:

6. Հարուստ խաբերան և աղքատ ճշտախոսը

Տպագրվում է առաջին անգամ:

Գրի է առել Սերո Խանգաղյանը 1937 թ.-ին, Գորիսի շրջանի Յայջի (այժմ՝ Հարժիս) գյուղի գյուղացի Մանուկ Դայուց:

Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ FF II 4928–4929 ֆոնդում:

7. Չտես ճամփորդներն ու կրիան

Առաջին անգամ տպագրվել է ՀԺՀ VII հատորում (էջ 540):

Գրի է առել Սերո Խանգաղյանը 1937 թ.-ին, գորիսեցի Մակիչ Մելիք-Հյուսեհյանից:

Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ FF II 4934–4935 ֆոնդում:

8. Կառապանն ու տերը

Առաջին անգամ տպագրվել է ՀԺՀ VII հատորում (էջ 549):

Գրի է առել Սերո Խանգաղյանը 1936 թ.-ին, Քարաշեն գյուղի գյուղացի Աշուղ Աթայից:

Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ FF II 4944–4945 ֆոնդում:

9. Անհյուրասեր հեր ու տղան և խորամանկ հյուրը

Առաջին անգամ տպագրվել է ՀԺՀ VII հատորում (էջ 541):

Գրի է առել Սերո Խանգաղյանը 1938 թ.-ին, Հին Գորիսի բնակիչ 26-ամյա Գուրգեն Օրոյանից:

Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ FF II 4948–4949 ֆոնդում:

10. Ավետարանն ու մարդը

Առաջին անգամ տպագրվել է ՀԺՀ VII հատորում (էջ 555):

Գրի է առել Սերո Խանգաղյանը 1938 թ.-ին, Հին Գորիսի բնակիչ Խիկար Խուրշուդյանից: Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ FF II 4956–4957 ֆոնդում:

11. Տերտերն ու բանինաց մարդը

Տպագրվում է առաջին անգամ:

Գրի է առել Սերո Խանգաղյանը 1938 թ.-ին, 31-ամյա քամանչահար գորիսեցի Աշոտ Դադայանից (Գուսան Աշոտ): Բանասացի մասին կա հետևյալ ծանոթագրությունը. «Սա մի հայտնի առակատղ, զվարճաբան մարդ է, քիչ վտիտ, բայց բարի հոգով, գիտի անհամար հեքիաթներ, առակներ, զվարճախոսություններ և այլն: Պատմելիս վարակում է լսողին և տառու միծաղի ծովը»:

Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ FF II 4958–4961 ֆոնդում:

12. Հիմար տերտերն ու արջը

Առաջին անգամ տպագրվել է ՀԺՀ VII հատորում (էջ 552):

